Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3209

28
L-75

1854

2010

ՀՐԱՀԱՆԳԲ

ԿՐԹՈՒԹԵԱՆ

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵՆԱՑ

ՀՐԱՀԱՆԳՔ
ԿՐԹՈՒԹԵԱՆ
ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵՆԱՑ

ԿԱՐԳԵԱԼ

Ի Ս. ԻԳՆԱՏԻՈՍԷ ԼՈՅՈԼԱՅ

Թարգմանեալ

Ի Հ. ՊԵՏՐՈՍԷ Վ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՅԱՀԱԿԵՐՏԱՅ ՄԽԻԹԱՐԱՅ

ՄԵԾԻ ԱԲԲԱՅԻ

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Publiczna Biblioteka
7/31 1922
Ընդհանուր Գրադարան
Ա. ՍՅԱՍՆԻ ՀՅՈՒՆԻ ԱՆՎԱՆ

Ի Վենետիկ

Ի տպարանի սրբոյն Ղազարու

1854

36659

ՅԻՇԱՏԱԿ

ՄԱՂԱԲԵԱՆ

ՏՈՀՄԻՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ի մեկուսանալ քերովբէից 'ի դրանէ դրախտին, որք բոցեղէն սրով արգելուին երբեմն զմուտս մարդկան 'ի ներքս, զի կամք դանդաղեալք տատամսեալք արտաքոյ։ Այլ զի սովորեալք աստէն 'ի թըշուառութեան կեանս, և տկարացեալք անկեալք 'ի զօրութենէ Հոգւոյն սրբոյ, կարօտիմք ձեռին առաջնորդի։ Յայս առաջնորդութիւն կարդեալ կան ամենայն վարդապետք Եկեղեցւոյ և ամենայն մատեանք հոգևորական կենաց։ Այլ զի մարդիկ դատապարտեալք ուտել զհացն քրտամբք երեսաց, և զբաղեալք 'ի վաստակս բազմածուփս, մինչդեռ յորդորին դառնալ 'ի դրախտն, և հոգք աշխարհիս և պատրանք մեծութեան 'ի վերայ հասեալք՝ հանեն 'ի սրտից զզրկիս յորդորանաց, զբանն Աստուծոյ. և այսպէս բազմադոյնք 'ի մարդկանէ մոռանան իսկ եթէ գուցեն այլ կեանք

բերկրական, կամ դրախտ փափկութեան յոր արժան իցէ մեզ դիմեալ ելանել։

Վասն որոյ՝ թէպէտ և անթիւ են մատեանք՝ հոգևորական կենաց ընթացից վարդապետք, յորոց ընթերցմանէ շահեսցի ոչ սակաւ անձն աստուածասէր՝ ըստ եռանդանն որով ընթեռնուցու, այլ ցանկալի էր յոյժ ամփոփել զնոսին յայնպիսի իմն կարդ, յոր յառեալ ումեք զուշ մտացն՝ կարասցէ, առանց ընդ բանս աձելոյ, անստերիւր ուղիղ աձել զկեանս իւր 'ի վախճանն. լաւ ևս ասել, յոր ակնարկեալ՝ բռնադատեսցի կալ 'ի կատարեալ ուղղութեան, առանց յաձելոյ արտաքոյ 'ի խնդիր այլոց կարևորաց առ 'ի նոյն։ Հաւաքումն իմն այսպիսի պակասէր արդարև յազգին մերում, ևս առաւել առ եկեղեցականս և առ կրօնաւորս ազգիս։ Ահա քեզ, անձն աստուածասէր, նուիրեմ զզրքոյկս զայս զգանձարան հոգւոյ քո, պահանջելով փոխարէն զնուիրումն կենացդ բոլորովին Աստուծոյ, կալով 'ի կոչմանդ յոր կոչեցեալ ես, եթէ ծառայ իցես և եթէ տէր, եթէ ազատ և եթէ ստրուկ։ Եթէ ուշի ուշով յառեսցիս մտաքդ

'ի սոյն խորախորհուրդ, սներկմիտ վստա-
հութեամբ հաւատեմ քեզ, զի լինիցիս
ազատ Ցեռան, և այժմէն իսկ մինչդեռ
աստէն յերկրիս վչտաց դեզերիս, մտցես
'ի դրախտն, և վայելեսցես յերանութեան,
յայնմ՝ որում փափաքեան և մեռաս վայե-
լելոյ յերկինս։ Զի Հրահանգս այս ուսուս-
ցէ քեզ զղիարդն և զորպէսն վարելոյ ըզ-
կեանս քո, ցուցեալ քեզ եթէ ո՞ ի՞նչս դու,
և առ ի՞նչ եկեալ և պանդխտութեամբ
բնակացեալ յերկրի աստ վտարանդու-
թեան։

Ցօրինուած զրոցս է վասն ուխտաւորեայ
կրթութեան, զոր իւրաքանչիւր հաւատա-
ցեալ պարտի առնել ամ ըստ ամէ։ Զսոյն
սովորութիւն կալան յԵւրոպ բազումք 'ի
հաւատացելոց, յորմէ 'ի մեծամեծ օգտու-
թիւնս վայելեցին, և ցայժմ յոյժ յաճա-
խեալ է առ աստուածասաչտս պէտք սո-
բուն. թող զայն՝ զոր առնեն յեկեղեցիս
'ի վեցերորդ եօթնեակ մեծի պահոց, և
կամ յայլ պատշաճ իմն ժամանակ ընդ
մէջ տարւոյն առ հասարակ ամենեցուն
միանգամայն հաւատացելոց բազմութեան.
այլ և առանձին կարողքն պարասիլ 'ի

հոգոց աշխարհի ընդ աւուրս ինչ, առանձնանան ընդ եօթնեակ մի ողջոյն 'ի վանս ուրեք, և կամ 'ի պատշաճ իմն վայր, ընդ առաջնորդութեամբ եկեղեցականի ուրուք, և առնեն զսոյն կրթութիւն։ Ցոյժ ցանկալի է տեսանել և զաղդն մեր լեալ նախանձաւոր այսպիսի առաքինական զործոյ։ Բայց եթէ իցէ դժուարին մատուցանել 'ի զործ յարևելս զսովորութիւն այսպիսի, այլ և նոյնպէս լինիցի օգտակար ընթերցումն օր ըստ օրեայ մոսխոհութեամբ, զմիոյ աւուր բաժին կրթութեանն յեօթն մասունս տրոհեալ 'ի վերայ եօթանց աւուրց եօթնեկին, և զօր ամենայն զմի մասն ընթերցեալ ընդ առաւօտն կամ ընդ երեկս. և յաւուրն կիւրակէի զերիս համառօտութիւնս երից խոկմանց այնր եօթնեկին ակնարկեալ խորախորհուրդ, յորս ամփոփեալ են իմաստք միոյ աւուր կրթութեանն։

Որ ոք սիրէ զանձն և ցանկայ հանգստեան և երանութեան կենաց, և եթէ չունիցի ժամանակ պարապոյ առ 'ի զործ մատուցանել զոր ասացիս, զոնեայ միանգամ ևեթ ընթերցցի առ 'ի փորձ զգիրս

զայս այնու կարդաւ զոր առաջի արարի, մտադիւր խնամով. յետ այնորիկ արասցէ որպիսի ինչ ինքեան պատշաճ և 'ի դէպ դատեսցի 'ի փրկութիւն հոգւոյ իւրոյ։ Բայց առանց ընթեռնլոյ ուրուք ըստ կարգի, և առանց փորձիւ 'ի վերայ հասանելոյ ճշմարտութեան, երբէք չկարասցէ առնել ուղիղ դատաստան. այլ և 'ի մեծ վնաս անձին և այլոց լինիցին բանքն, որ զինչ և կարծել և ասել զզրոցս ինքեան հաճոյ թուեսցի։

Կարգաւորութիւն իմաստից կրթութեանս է սրբոյն Իգնատիոսի Լոյոլայ, և իմաստք ողջոյն կրթութեաննն են նորին սրբոյն Իգնատեայ, յաւելեալ 'ի վերայ բազում ինչ և 'ի կանոնադրոց նորա զորս 'ի թարգմանութեաննն 'ի հայ բան, դատեցաք 'ի դէպ, 'ի կարևոր տեղիս ուրեք համառօտել կամ երկայնել և կամ ըստ դաղափարաց մտաց ընթերցողացն մերազնեայց զիմաստսն պատշաճեցուցանել, զի լինիցին դիւրիմացք, և պտղաբերք բազմարդիւնք 'ի միտս և 'ի սիրտս նոցա։

ՀՐԱՒԷՐ

Ի ՍՈՒՐԲ ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆ

Հրահանգ կրթութեան յաւիտենական կեանցն է 'ի սպառ հեռացումն աւուրքք ինչ 'ի կենակցութենէ մարդկան, և անզբաղութիւն յամենայն հոգոց աշխարհի և 'ի գործոց։ յորում պարապեալ անձին միայնակ յամենամեծ գործ փրկութեան, պատրաստի և Ջանայ ամենայնիւ սրբել զանցեալ կեանս իւր, և բուռն հարկանել զնորոգ կենաց։ Արդ առ գիւրաւ յաջողելոյ քեզ 'ի սոյն՝ առաջի արարիչ պատճառս խրախուսիչս և յուշարարս յորոց խրատեալ և քաջալերեալ կարասցես յայսսիկ ուեթ աւուրս արկանել 'ի գործ զամենայն կարևոր հնարս առ ժողովելոյ 'ի սմանէ զանմահական պտուղս կենաց։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Պատճառք խրախուսիչք 'ի մտադիր փոյր հրահանգաց կրթութեան.

Ա. Աւաւելութիւն հրահանգաց կրթութեան ըստ մեծարու քննչաց են երեք այսոքիկ. Ա. Գերազանցութիւն նորա՝ որով յարգոյ ընծայի: Բ. Օգտութիւն նորա՝ որ զարթուցանէ զանենչ: Գ. Պէաք նորա՝ որ 'ի հաւան զկամն ածէ դիմել առ նա, որ և օգտակարն է և գերազանց ըստ ցուցանելոյ ուղիղ բանին:

Ա. Գերազանց իմն է հրահանգ կրթութեան սրբոյն Կղնաստոսի զի Աստուծոյ ցուցեալ և 'ի Տիրամօրէն ազգեցեալ է: Դարձեալ զի ոչ միայն հաւանեալ հաստատեաց զսոյն առաքելական սուրբ գահն, այլ զի և մեծապէս ներբողեալ յանձն արար հաւատացելոց արկանել 'ի գործ:

Զայսմանէ վկայեն յոլով արք ականաւորք, և մասնաւորն 'ի յորդոր՝ առնել զսոյն եռանդեամբ և մասխոհութեամբ. զի 'ի սմա են բովանդակեալ գանձք անմահականք լիով. և որ խոկայցէ 'ի սոսին անդբաղ, և ժողովեսցէ յանձն զՀմարտութիւնս որ 'ի սմին, ոչ ինչ այլ պակասեսցի նմա 'ի ցանկալեաց յաւիտենական կենաց. զի գտցէ զանձն միացեալ ընդ Աստուծոյ մինչդեռ ատէն դեգերի յաշխարհի:

Բ. Հաւատն զգտակարութիւն այսր առանձնութեան խնամատարքն հոգւոց, փորձն, և

բանն ինքին։ Անթիւ են խնամատարքն 'ի սրբու-
թեան և յիմաստութեան գերահրաշք՝ վկայք
օգտակարութեան սորա. յորոց Կարոլոս Պորրո-
մէոս ասէ. Է իմ մատենագարան մեծ, բայց կա-
րևորքն՝ որ 'ի նմա գրեանոյն խնստութիւնք՝ ամ-
փոփեալ են 'ի փոքրիկ յայս գիրս. յորմէ ուսա-
նիմ այնչափ ինչ՝ զորս ոչ կարէի եթէ և յամե-
նայն իսկ աշխարհի գրեանս յածեալ էի։ Նոյն-
պէս և այլքն ամենեքին 'ի գովել առեալ զսոյն,
ցուցանեն զօգտակարն ընելս սորա։ Կոչն սա Շտե-
մարան աստուածային գիտութեանց. Լրումն տե-
սական վարդապետութեան. Անվկանդ օգնական
առ հասանել 'ի սակաւուն 'ի գերասահման կա-
տարելութիւնս. Աներկեայ դարման փարատիչ
ամենայն ախտից, Զինարան քակիչ դժոխոց.
Սեծագոյնն 'ի բարեաց Աստուծոյ շնորհելոց Ե-
կեղեցւոյ Լուսոյ 'ի յետին յայսոսիկ ժամանակս։

Հաւաստիք ճշմարտութեան վկայութեանցս
նոքին իսկ փորձքն են. զի բազումք պարապեալք
'ի կրթութիւն այսոցիկ հրահանգաց՝ հրաժեշտ
եառուն յաշխարհէ. և այլք հրաժարեալքն՝ յե-
ռանդն և 'ի սէր Աստուծոյ բորբոքեցան, ոչ մի
մի առանձին, այլ խմբովին մենակեացք և կրօնա-
ւորք. և յոլովք աշխարհասէրքն անողոք 'ի խրա-
տուց և 'ի յորդորանաց, գրգռան առ Աստուած
զի սրտիւ։

Կրօնաւորքն Յիսուսեանք խոստովանին լեալ
գրոյս հիմն կրօնի իւրեանց, 'ի հաստատութիւն,
'ի պահպանութիւն և յաճռւմն. և սովաւ կա-
ցեալ ցայսօր անտեղեսալի յամենայն մրրկաց։
Սեծամեծք 'ի սրբոց սովաւ դաւանեն զանձինս

աձեցեալս ի սէրն Աստուծոյ. և անթիւ վիպայք ի Հնդկաստան ի ձեռն սորա զօրացան անպարտելի, և արժանի եղեն պսակաց։

Եւ բանն ինքնին ցուցանէ. զի անձինքն մեկուսացեալք յամենայն զբաղանաց աշխարհի մարմնոյն և մաքք զաւուրս ուրթ անընդհատ, դատարկանան արտիւք ի հոգւոյ, և սկսանի խօսել Աստուած ի սիրտս գաստարկացեալս։ Դարձեալ զի ի խոկալ միօրինակ ընդ այնչափ աւուրս զԱստուծոյ, զյաւիտենական ճշմարտութենէ, միտքն լինին ընդունարան ճշմարտութեան ի խաղաղ միայնութեան. որով չէ ինչ գործ հրաշական նորոգութիւնն վարուց յընկալմէ մատց ի ճշմարտութեանն ծով։

Եթէ այսքան իցեն օգտութիւնք կրթութեանս, որպիսի՞ անհնարին վատթարութիւն, չթօթափել յանձնէ զմեղկութիւն առ արկանելոյ ի գործ զայն ինչ, որով յոլովք ժամանեցին ի սրբութիւն։ Որ եղեն օտարաց բուժիչ, մեզ ընտանեաց լինիցի թոյն մահացու։ Քանի՞ դառն լինիցի մեզ ի ժամ մահուան այս խորհուրդ։ Կոչումն իմ կարգեալ էր առ ժամանելոյ ինձ ի սրբութիւն, և կարէի լինել սուրբ աղդմամբ կրթութեանն, և ես կայի մնացի յանարդ մեղկութեան։ Մերձ եկեալ առ ասուածային լոյսն, առ աղբիւրն շնորհաց, առ հուրն երկնային, կացի ես միշտ խաւարային, ցամաքեալ և ցուրտ։ Ո՜հ. որպիսի՞ լինիցի այս խայթ ի սրտիդ ի մահիճս մահուդ։

Զանհրաժեշտ պէտս այսր սրբոյ առանձնութեան յայտ առնեն ՝ա. Սահման հոգւոյն, յորոյ

ուղղութիւն՝ գեղ իմն է սա առ ձեռն և ազդոյ քան զայլն ամենայն։ Քանզի հարկ առնէ մեզ գնել զատպար առ արմին յայսոսիկ ի սուրբ աւուրս, և հատանել և արմատախիլ առնել զամենայն ընձիւղս չարեաց հոգւոյ մերոյ, զասպըսատամբ կիրս, որք չիցեն տակաւին նուաճեալք։ զբազմութիւն ախտս գեռ անուղղայս, զտոմսորութիւնս չարս՝ յորոց գեռ ևս չիցես մերկացեալ։ Եւ գարձեալ պատրաստել զանձինս առ պաշտամունս գժուարինս յորս կոչեցիմք, առ անձկութիւնս վշտաց՝ յոր մատնիցիմք, առ բաղում փորձութիւնս որք յարձակիցին ի վերայ մեր։ Առ այսոքիւք արկանել զհին անչարժ ամենայն ազգի ազգի առաքինութեանց, զորս պահանջեն ի մէնք սրբութիւն կոչման մերոյ, զեղումն հնորհացն և կամքն Աստուծոյ։ Բ. Սէրն Ուխտի կրօնիս մերոյ, իբր առ մայր մեր, պահանջէ ի մէնք արկանել ի գործ զամենայն Ճգուանս առ բարւոք առնել զկրթութիւնն, որ, ըստ ասելոյ կանոնագրոց, սովին ծնաւ և աճեաց, և սովին միայնակ միջնորդաւ պահպանեսցի։ Արդ որ անհոգանայ, կամ մեղկութեամբ կատարէ զգործս զայս կարևոր և ազգու ձեռնտու ի պահպանութիւն, է ատեցող և անշնորհակալս մեր իւրոյ կրօնի։ Գ. Գուցէ այս կրթութիւն իցէ վերջին վասն քո. թերևս յայսմ ծագեսցի քեզ հնորհն վերջին. գուցէ յայսմ ժամանելոց իցես ի կատարելութիւն. գուցէ սահմանեաց Աստուած և զիրկութիւն այլոց և զգարձ ի ձեռն քո, եթէ զքեզ յարդարեսցես գործի պատկանաւոր առ ի սոյն։ Յանգգնութիւն իցէ այս մեծ, թողուլ

զայսպիսի կարևոր երկմտութիւն յանսատուգութեան։ Եւ այն հաւատի է զի երբեք ոչ ցաւեսցիս ընդ մտադիր փոյթ քո ի սոյն։ Ապա կալ զքեզ յանքոյթն. ապա թէ ոչ՝ երկիր և սարսեաց. քանզի Որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ի նմանէ [1]։

Զայսոսիկ ամենայն է տեսանել յայսոսապէս զանհրաժեշտ պէտք կրթութեան, և առ ըստ կարգի հանելոյ զայն ի գլուխ, կարգեցից ստատնօր զերիս զայսոսիկ ազգմունս, ՝. Ներքին պատրաստութիւն հոգւոյ։ Ը. Արտաքին յարգարումն իրաց կարևորաց ի կրթութիւն։ Գ. Զոր պարտ իցէ սահմանել կարգս անձին յընթացս կրթութեանս։

ԳՕԴՈՒԱԾ Բ

Ազդումն ներքին պատրաստուրեան հոգւոյ.

Ա. Վախճան կրթութեանս ոչ է, որպէս կարծեցին բազումք, պարապել զաւուրս ինչ յաղօթքս, ի խոկմունս և յապաշխարութեան. ի մխիթարութիւն հոգւոյ, և յունկնդրութիւնս խրատուց։ Պէտք կրթութեանց ոչ են վասն այսորիկ, այլ առ ի զարգանալ ի կարևորս մեզ կատարելութիւնս՝ յորոց իցեմք զուրկ. որք են՝ ՝. Ուղ-

---

1 Զայսոսիկ ծանօթութիւնս պարտ է ընթեռնուլ, և մտախոհ լինել ի սոսին աւուրբ յառաջ չև արարեալ սկիզբն կրթութեանն, յառաջ քան զՃաշն կամ յետ Ճաշոյն։

զուլթիւն վարուց։ Բ. Զարդացումն յառաքինութիւնս։ Գ. Լիով ծանօթութիւն և կատարումն կամացն Աստուծոյ, և կոչմանս մերոյ։ Վասն որոյ պարտ է ունել մեզ զդիտումն փոխելոյ յայլ այր 'ի վախճան կրթութեանն, և ելանել յողջակիզ կամացն Աստուծոյ։ Եւ պարտ է հաստատել յայս խորհուրդ ոչ միայն 'ի մուտս անդ կրթութեանն, այլ և յաւուրսն յայնոսիկ կրթութեանն որոշալ ստէպ զսոյն. և բերել մեծաջան յամենայնի յայս վախճան։

Բ. Վասն այսորիկ աւուրբ յառաջ քան զմուտս 'ի կրթութիւն պարտ է պատրաստել զանձն՝ ա. Աղաչելով զԱստուած և ասելով ստէպ. Ուստ ինձ տանել զկամս քո, Աստուած իմ. և փափաքելով ճանաչել զկամս Աստուծոյ 'ի վերայ մեր։ Բ. Ընտրել և ճանաչել զախտաբմամս կիրս անձին յորմէ այլքն շառաւիղքն, որ և խոչընդոտն է յընթացսն կատարելութեան, և գուն գործել արմատախիլ առնել զայն յանձնէ։ Գ. Ընտրեալ առնուլ յառաքինութեանց զկարեւորագոյնն անձին, առ 'ի թեակոխել 'ի նոյն։ Եւ պարտ է ուղղել յերկուս յայսոսիկ զամենայն ճիգն և զվաստակս աւուրցն կրթութեան. զխոկմունսն, զընթերցմունս, զաղօթսն, և զտեսութիւնս։ Խմա զոր ասեմս. մի արկցես 'ի յուշոյ զսոսին զի կարեւորք են յոյժ քեզ։

Գ. Պարտ է սկիզբն առնել կրթութեան՝ ա. Անբերկբայ հաւանութեամբ մտաց եթէ ունիմք պէտս կրթութեանս այսորիկ. և թէ անտի բղխեսցեն մեզ ամենայն բարութիւնք. և թէ բուռն հարկանեմք զգործոյ որ կարեւորն է յոյժ։ Որչափ

առաւել իցեմք հաւանեալք ընդ կարևոր պէտս այսորիկ, այնչափ ևս եռանդագին սրտիւք մատչիմք 'ի նոյն։ Բ. Խոնարհութեամբ, լեալ անվտահ յանձն. զի Աստուած տայ շնորհս խոնարհաց։ Գ. Նուիրելով զանձն ամենայնիւ 'ի կամս Աստուծոյ, յօժարակամ ուսանել և առնել զամենայն զոր հաճեսցի առաջի առնել մեզ. ապաչելով միայն զի բացցէ զաչս մտաց մերոց առ խմանալ զկամս իւր, և տացէ մեզ կամս 'ի գործել զբարին զոր խմանալք։ Եւ ոչ է պարտ սահմանել անձին առնել զայս կամ զայն. այլ կալ անշանաչան 'ի լուսն աղդեցութեանն զոր գործեսցէ Աստուած 'ի սիրտս մեր։ Դ. Լեալ ապաստան յԱստուած, զի որ յօժարեցոյց զմեզ 'ի սոյն, զօրացուսցէ ևս 'ի կատարումն ամենայնին զոր ուսանիցիմք 'ի կրթութեան։ Որ ոք հաստատութեամբ ուխտ ընդ անձին դիցէ առնելոյ զայսոսիկ, աներկրայ վայելեսցէ յարդիւնս կրթութեանն նպաստաւորեալ յԱստուծոյ և զօրացեալ յառաքինութիւնս։

Դ. Պարտ է սկիզբն առնել կալոյ 'ի մեծի զգուշութեան ջանկանելոյ նա և 'ի թեթև ինչ յանցանս, և ոչ յածիլ յարտաքին խորհուրդս յօրէ անտի որ յառաջէ քան զկրթութիւնս. զի այնոքիկ են խոչք շնարհացն Աստուծոյ։ Նոյնպէս և զմիտսն ունել յանձն ժողովեալ։ Դարձեալ վերնպակ մեծ է զբաղիլ յայն որ 'ի զբօսանս. իբր զի սիրտքեսցի անձն տակաւուք՝ որ ունի պարտադել ընդ այնչափ աւուրս 'ի խոկումն յարատև։ Զէ ուրիշ խորհուրդ, և է 'ի միտս կրթութեանն, զի ցուռեալ խորհրդոց մտացն և հիջեալ եռանդան սրտին, անարդիւն լինիցին վաստակքն։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Պատրաստութիւն արտաքին իրաց կարևորաց 'ի կրթութիւն.

Ա. Աւուրբ ինչ յառաջ քան զսկսանել կրթութեանն պարտ է այնպէս 'ի կարգի ունել զամենայն գործս, զի ոչ ինչ հարկ սոսկալեալ յաւուրսն կրթութեան այնպիսեաց միտ դնելոյ. Նաև 'ի սենեկի պարտ է կարգաւորել զամենայն ինչ, բառնալ 'ի բաց և զզրկանս, թողլով առաջի միայն զպատշաճականս կրթութեան:

Բ. Պարտ է ունել առաջի տեսարակս կրկին, յորոց 'ի մին նշանակեսցին աղդմունք կարևորք, և յերկրորդին ուխտք մեաց հանդերձ յորդորական պատճառաւքն. այլ համառօտ ըստ կարի զի մի 'ի գրել անդ ճառօրէն ծախեսցի ժամանակն կարևոր:

Գ. Պարտ է խնդրել շնորհս յԱստուծոյ անդադար և եռանդագին՝ ասելով զսպակ Կուսին և զայլ աղօթս, և սակայ յայց ելեալ սրբոյ հաղորդութեան. և 'ի սրբոց զմանս ընտրեալ 'ի պաշտպան անձին՝ առանձին վասն այնոցիկ աւուրց կրթութեան. և այս ամենայն առ 'ի ժողովել արդիւնս 'ի կրթութենէն:

Դ. Որ մատչի 'ի կրթութիւն, թէ և իցէ խոստուն ոք և կիրթ 'ի վարչութիւն հոգւոց, այլ և այնպէս պարտի ամենայնիւ կալ 'ի բանս կրթչին, և խորհրդով նորա վարել յամենայնի, և յայտ-

նել նմին խորին խոնարհութեամբ զկարիս հոգ-
ւոյ իւրոյ, գիտելով հաւատաւեալ՝ զի ըստ առա-
ւելութեան խոնարհութեան իւրոյ և հպատակու-
թեան առ կրթիչն, առաւել շնորհս 'ի Տեառնէ
ընկալցի։

ՅՕԴՈՒԱԾ Դ

Ազգմունք կարևորք 'ի կրթութեան պահու.

Ա. Յաւուրսն յայնոսիկ կրթութեան պարտ է
ամիսփուռն ունել մտաց հանապազ և անայլայ-
լակ. նախ զգայարանաց աչացն՝ ոչ շրջելով զայնս
ընդ վայր. ականջացն ոչ լինելով հետամուտ հե-
տաքննելն լսոց. լեզուի՝ կալով 'ի խիստ լռու-
թեան։ Երկրորդ, մտացն՝ զատուցեալ յամենայն
օտար խորհրդոց նա ևս 'ի կարևորագունից. 'ի
հոգևորաց անգամ որք արտաքոյ եղեն սահմանե-
լոցն վասն իւրաքանչիւր աւուր, ևս և յայնցանէ
որք անցելոց աւուրցն եղեն կամ ապագայից։ Եր-
րորդ, առանձնութեամբ՝ կալով փակեալ 'ի սե-
նեկին և հրաժարեալ յամենայն զբաղմանց, ևս
և զկնի ճաշու, ոչ յայլ ինչ զբաղեցուցանել ըզ-
միտսն յօրինագրեալ խոկմանց աւուրն. և կամ
պարապել 'ի գործս կարգեալս առ այն վախճան
և այն ևս եթէ չիցէ բազմավաստակ. քանզի և 'ի
վաստակաբեկն լինել մարմնոյն՝ ուշ մտացն տա-
րաբերի։ Գրէր սուրբն Իգնատիոս. Որչափ մե-
կուսացի որ 'ի բարեկամաց և 'ի ծանօթից, և յա-
մենայն հոգոց աշխարհի, այնչափ առաւել զար-

գասցի յառաքինութեան։ Եւ որչափ առաւել դացի հոգին անջատ և մեռացեալ, այնչափ ևս դիւրաւ յաջողեսցի նմա խնդրել և գտանել զաստեղծողն։

Պարտ է զհետ գնալ օրինակի մեծանուն այնր պաշտօնեի կայսեր, որ մինչդեռ կայր ի կրթութեան ի վարժարանին Յիսուսեանց որ ի Սփիրա, հասեալ առ նա գիր ի Փերտինանտոս կայսերէ, ոչ ընդունէր ասելով. Զկարևորաց առեալ խօսել ընդ թագաւորին թագաւորաց, չկարեմ պարապել ի խորհուրդ երկրաւոր թագաւորի։

Բ. Պարտ է մատչել ի խոկմունսն. Ա. Յարգանօք ըստ գրոց մարմնոյն, ևս առաւել յորժամ ոչ մտաւորական ևեթ խոկումն իցէ զոր առնէն այլ և կամքն պաշտիցէ։ Բ. Ըստ ամբողջութեանն՝ ոչինչ հատեալ ի ժամանակէն, ի գէպ ևս է երկարել քան նուազեցուցանել զժամանակն. ևս առաւել ի զգալն տաղտկութիւն և ցամաքութիւն։ Եւ զի խոկումն մի լինիցի իբրև զուսումն, պարտ է առաւել միտ դնել շարժելոյ զկնճռ քան ի բանիցն յաՃախութիւն։ Գ. Եռանդեամբ, բայց և զգուշացեալ չդնել ուխտս ինչ կամ խոստումն յանխորհուրդս ի բորբոք եռանդան, և զի մի ինասեսցի դլուխն՝ կարի նմն ի տաղտկութեան բուռն առնելով անձին յեռանդն և յարտասուս, և կամ ի լնութենէ մխիթարութեանն։ Շատ է ի խոկումն վարել այնու մտագրութեամբ, որով ոք վարի ի հրապարակական բանախօսութիւնս և կամ ընդ պատուաւորի ումեք. զի արդիւնք խոկմանն ոչ է ի բռնազբօսութեան, և ոչ ի շնեթս արտասուաց, այլ ի ծանօթութեան Ճշմարտու-

թեան, և 'ի բնման կամայն, որք զարմանուն 'ի նեղքին լուսոյ հնորհաց։

Վասն որոյ 'ի պահու լիութեան միսիթարութեան արժան է ածել ընդ միտ զերկուս զայսոսիկ, ա. Զի մի դուցէ 'ի հեռանալ միսիթարութեանն պատուղ ինչ ոչ թողուցու. և 'ի պահու անդ միսիթարութեանն միտ դնել առյաստայ ուղղութեան վարուց, և հաստատութեան 'ի բարի խղճս սրտին։ Բ. Պատրաստել զանձն տաղտկութեան և լքման ժամուն, զի մի յանկարծ ըմբռնեսցիս։ Իսկ 'ի ժամու ցամաքութեան և լքման, ա. Հսկել 'ի պահպանութիւն թելադրութեանցն։ Բ. Խոնարհել առաջի Աստուծոյ։ Գ. Յարատեալ 'ի նոյն համբերատար և անվրդով, յիշելով զնոսա տուին Ցեառն, "Բայց եթէ անագանեսցի՝ համբեր նմա, զի որ գալոցն է եկեսցէ և ոչ անագանեսցի,, (Ամբակ. Բ. 3)։

Դ. Յընթերցումն աստուածային գրոց պարտ է ընտրել ոչ միայն զկարևորս և զգաստարս, այլ զայնոսիկ որք զարթուսցեն 'ի միտն զառաջարկութիւնս աւուրն յորս պարապիցի որ։ Եւ այսպէս զընթերցումն պարտ է պատշաճեցուցանել խոհմանց աւուրն. և ընթեռնուլ ոչ ճեպ 'ի ճեպ. այլ ուշի ուշով ժողովելով զշահս օգտի անձին. նոյն և զվարս սրբոց պարտ է առնուլ յընթերցումն ընտրանաւ պատշաճեցուցեալ անձին. այլ և զգոյշ մտադրութեան են պէտք՝ զի մի 'ի քաղցրութիւն վերծանութեանն կորնչիցի ժամանակ խոհմանն, որում անկ է տալ զառաջին տեղին. զի այլքն ամենայն են ստորագրք։ Մանաւանդ եթէ մինչ չև հասեալ ժամու խոհմանն արժան է դա-

դարել յայլոց գործոց, զի աղատացեալ մտացն պարտպեսցի յայն միայնակ։

Դ. Յընթացս կրթութեան՝ պարտ է պարապիլ երկիցս յաւուրն յառանձին քննութիւն կատարելոյ անթերի և յորդեռանդն սիրով զորինադրեալն զամենայն զպարտս աւուրցն կրթութեան։ Դարձեալ կալոյ մտադիր 'ի պահպանութիւն ժամագրութեանց, նոյնպէս և թելադրութեանց սրբոյն Դիոնասիոսի՝ որք յայտոսիկ գլուխս ամփոփին։ Ա. Զեւ մտեալ 'ի քուն որոշել 'ի միասն զժամն յառնելոյ և ածել ընդ միտ զբան խոկմանն առաւօտուն՝ յոր այն ինչ յարուցեալ 'ի մահճացն պարտպեսցի։ Բ. Յերթալն յաղօթս՝ կալ 'ի բացեայ 'ի տեղւոջէն զմի կամ զերկուս քայլս և ածել զԱստուած յանդիման մտացն։ Գ. Ի զարթնուլ ըղձիցն 'ի վերայ միումն 'ի յօդուածոց՝ կառեալ կալ 'ի նոյն առանց լինելոյ 'ի հոգս յանցանել յայլ բան։ Զի ըստ ասելոյ նորա. "Ոչ առատութիւն գիտութեանն, այլ այն ներքին ճաշակ և քաղցրութիւն իրացն պարարէ զհոգին,,։ Դ. Աւարտեալ զնոկուսն՝ քննել եթէ որպէս եղ 'ի գլուխս։ Ե. Մերժել յանձնէ զբերկրական խորհուրդս 'ի նախկին և յերրորդ մասունս կրթութեան, նա թէ և հոգեկանք իցեն, և կալ յայնոսիկ՝ որք սուրբ են տիրութիւն սնուցանիցեն 'ի սրտին. և ունել զսենեակն աղօտալոյս։ Զ. Մի 'ի ծաղր գալ, մի խօսել ընդ ումեք. և մի զանկն յառեալ յոք։ Է. Յաւելուլ յապաշխարութիւնս. որպիսիք են. առնուլ 'ի կիր զնորդ, զնարազն, զձաղկանս, զպահս, զանկողին անհարթ, և այլն. միայն թէ չիցէ վնասակ ծանր

վեստելոյ առողջութեան. և մի պակաս առնել զկարևոր չափ քնոյն։ Կանոնագիրն ասէ՝ եթէ պարտ է զամենայն փոյթ 'ի մէջ առնուլ 'ի կատարումն այսոցիկ թելադրութեանց. զի ըստ աստուածութեան ջանիցն 'ի պահպանութիւն սոցուն, առաւել փութով և առատ կարասցէ ժողովել զարդիւնս հոգեկանս՝ որոց էլեալ կայ 'ի խնդիր։— Զայսոսիկ ջրեսին աղդարարութիւնս պարտ է դրոշմեալս ունել 'ի մտի յընթացս ուղթից աւուրցն կրթութեան. և վասն այսորիկ արժան է ընթեռնուլ յաճախ զսոսին։

ՅՕԴՈՒԱԾ Ե

Ընթացք կրթութեան.

Ա. Ի կրթութեան ասա էն ջորք մասունք. առաջինն է Տարացոյց մաքրական Հանապարհին, յորում վաստակիմք 'ի սրբել զհոգիս պարապելով 'ի ծանօթութիւն անձին և ատելով զմեղս։ Երկրորդ և երրորդն Լուսաւորիչք են մտաց, յորս նկատեալ զառաքինութիւնս տեսան մերոյ Յիսուսի որ 'ի միայնութեան կեանսն և 'ի վարդապետութեան, լուսաւորիմք և մեծապէս քաջալերիմք գնալ զկնի նորա՝ թեւակոխեալ յայնոսիկ առաքինութիւնս։ Չորրորդն է Տարացոյց միութեան, յորում զմտաւ ածեալ զփառս տեսուրն մերոյ Յիսուսի՝ միանամք 'ի սէր սրտիւ ընդ Աստուծոյ, յորում է հանգիստ մեր յաւիտենական։

Յայտմ պարզապէս տեսանի ապահովութիւն

և համառօտութիւն Ճանապարհին՝ ընդ որ ածէ զմեզ կրթութիւնս 'ի գերասիՃան կատարելութիւն, փրկելով զմեզ 'ի մեղաց, և առաջնորդելով մեզ ընդ ձեռն առաքինութեան առ 'ի լինել ընդ Աստուծոյ: Ցեսանես զվախՃանն գերագոյն յոյժ, և զուղին գիտղագոյն:

Բ. Եւ քանզի յածել անդ զմտաւ զգերազանցութիւն վախՃանին մերոյ՝ բաղձամբ անձկանօք ժամանել 'ի նոյն, վասն որոյ առ ըստ կարգի յառաջ խաղալոյ՝ ա. Յառաջին մասին 'ի բաց սրբեմք զխոչս, որք են մեղքն, ատելով զնոսին և խոստովան լինելով: Եւ զի մի դարձեալ 'ի նոյնս շաղկցիմք՝ յիշեմք զմահ, զդատաստան և զդժոխս, և զարհուրեալ դողամբ 'ի միտ բերեալ զդատապարտութիւն հրեշտակաց և զնախահօրն մերոյ: Բ. Աղաչացեալք առ 'ի խոչից և դարձեալք 'ի շնորհս երկնաւոր հօրն մերոյ ընդ որդւոյն անառակի, առ զարգանալոյ 'ի կատարելութեան և առ 'ի ժամանել 'ի վախՃան մեր գտանեմք օգնականութիւն յօրինակն Ցեսուսն մերոյ Յիսուսի, զի չէ ոք այլ առաջնորդ հմուտ իբրև զնա. և է նա Ճանապարհ անստերիւր և հաստատիմ ուղեկից, և յիշեցուցիչ անյողդողդ և հզօր. վասն որոյ առնումք 'ի խոկալ զառաքինութիւնս նորա և զգլխաւոր մասունս անօրէնութեան մարդեղութեան նորա: Գ. Եւ զի ևս քան զևս յորդորիցեմք վերաբերիլ 'ի նմանութիւն նորա յառաւել գերազանց շաւիղս կատարելութեան, առաջի ընծային մեզ երեք համբաւեալ խոկմունք կրկին դրօշից, երից կարգաց մարդոց, և երից աստիճանաց խնարհութեան: Եւ զի կացցուք անյողդողդ

յայս մեծախոհ ընտրութիւն, օրինակաւ չարչարանացն Փրկչատոսի, կապիմք անիզելի յուսոյ սրտից մերոց, յառելոյ զանկն յեւ բարձրագոյն տապիճան սրբութեան կենաց՝ տարեալ մտագիւր ձախողակաց, հալածանաց. յանձն առեալ նա և զկորուստս առաջութեան և զպատուոյ։ Բ. Յետ ամենայնի քաջալերեալք ի փառաց Յետառն մերոյ Յիսուսի յարուցելոյ և արիացեալք ի խոստացելոյ մեզ մեծամեծ վարձուց, առաջնորդիմք քաջայր հաճութեամբ առ սէրն Աստուծոյ և ի ներքին միութիւն ընդ նմա և յանթերի համակամութիւն կամաց մերոց ընդ նորայն, յորում է բովանդակ կատարելութիւն մեր և երջանկութիւն, առ որ կարգեալ է այս սուրբ առանձնութիւն կրթութեան։

Գ. Շատ լեցին ասացեալքս զընթացից կրթութեան, որոց առաջին մասն կոչի ի կանոնագիրս արմատ և հիմն ամենայնի, զորով չէ պարտ զանց առնել. ապա տես եթէ քանի մտագրութեան են մեզ սկսք յայսմ, յորմէ կախեալ կան ցանկալի եղք կրթութեանն ողջոյն։ Պատուղք այսր մասին են երեքին այսպիսի. ա. Անթերի համակամութիւն գնալոյ զհետ կամացն Աստուծոյ, ընդ որ ինքն հաճեսցի ածել առաջնորդել մեզ առ մերն վախճան։ բ. Յաւ սրտառուչ և զկրքն ի վերայ մեզայ, որովք քաջ ի բաց հեռացաք ի վախճանէ ասասի մերմէ։ գ. Ճշմարիտ ծանօթութիւն անձին, այսինքն կրից մերոց որք կալեալ ունին զաչս մեր, և սխրատուր բերմանց, և արմատոց թերութեանցն որք տակաւ յանդգաստից հեռացուցանեն զմեզ ի վախճանէն մերմէ. և են մեզ խոչընդոտն մեծ ի շարժոյս կատարելութեան։

Ա Զ Դ

Յրևարկումն գրոց.

Զյաւելեալ մասունս որ 'ի սահմանեալ ժամուց խոկմանն՝ մարթ է ընթեռնուլ յայլ դիպուզագոյն ժամս։ Ընթերցմունքն ոչ կարծեմ թէ իցեն երկարք, մանաւանդ՝ եթէ և զկնի Ճաշոյն պարապեսցի ոք 'ի նոսին, և կամ փոխանակ վարուց ինչ սրբոց ընթերցցի։ Ժամ մի տացի խոկմանն առանց յապաւելոյ, այլ և կարի իմն մտադրութեան են պէտք։ Զքննութիւն վարուց մարթ է ընթեռնուլ զկնի երեկոյին խոկման և կամ յայլ յաւելեալ ժամս։ Եթէ կամիցիմք գնալ զհետ թեզագրութեան սրբոյ հօրն մերոյ, որ ասէ ոչ ինչ այլ ընթեռնուլ կամ խոկալ արտաքոյ քան զառաջարկեալ ազգմունս աւուրն կրթութեան, հնար է յառեալ կալ 'ի գիրս յայս միայնակ յընթացս ութից այսոցիկ աւուրց։

19926-59
(1005)
20669

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI 1922

ՀՐԱՀԱՆԳԲ

ԿՐԹՈՒԹԵԱՆ

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵՆԱՑ

ՕՐ ԱՌԱՋԻՆ

ԽՈԿՈՒՄՆ Ա.

ՎԱԽՃԱՆ ՄԱՐԴՈՑ

Մասն Ա.

Ստեղծար զու յԱստուծոյ. խորհեաց քաջ. Ո՞է որ ստեղծ զքեզ. Ուստի, Զինչ. և զչափ սիրոյն 'ի ստեղծանել անդ քաջ կշռեա։ ա. Ստեղծ զքեզ, ոչ 'ի հրեշտակաց ոք կամ 'ի զօրութեանց կամ յիշխանութեանց, և ոչ 'ի քերովբէից. այլ նա ինքն Աստուած. Աստուած՝ որ անկարօտն է, որ ինքնաբաւն է և նոյն ինքն երանութիւն։ բ. Յոչնչէ ած զքեզ 'ի զոյ, բովանդակ 'ի զորձ արկեալ վասն քո (զի այսպէս ասացից) զզօրութիւն իւր անբաւ. զի խոիր մեծ է ընդ չէն և ընդ էն։ Արդ առ 'ի չզոյէ ածելոյ զքեզ 'ի զոյ, պէտք եղեն Աստուծոյ արկանել 'ի զորձ զանբաւ զօրութիւն իւր։ գ. Ստեղծ զքեզ 'ի պատկեր իւր, ասպաւորեալ 'ի քեզ զճառագայթ աստուա-

ծութեան իւրոյ 'ի պատկեր սրբոյ Երրորդութեան։ Աստուած որ ամենաբաւականն է՝ ստեղծ զքեզ ոչ քար, ոչ անբան, և ոչ մտաթափ որ. այլ կենդանի բանական, ժառանգորդ յաւիտենական երանութեան։ ղ. Աբար զայս ամենայն 'ի սէր անչափ և յաւիտենական. սիրեաց զքեզ 'ի յաւիտենից 'ի սէր կատարեալ. ընտրեաց զքեզ 'ի բիւրուց, որք կարէին ծառայել նմա առաւել սուրբ սրտիւ։ Եթող զնոսա յոչէութեան իւրեանց և ստեղծ զքեզ իւրով մարդասէր զթովքն՝ յառաջ քան զերևել 'ի քեզ արդեանց, ընտրեաց զքեզ զբազմամեղդ ապախտաւոր, զիրկս ած զքև. մանաւանդ զի իբրև զորդի զգուեաց զքեզ 'ի հայրենի ծոց իւր, պաշտպանեաց և առանձին խնամովք զթասիրեաց։ Աբդ միտ դիր որ ինչ հարկաւ յայսմ ամենայնէ դայ զհետ անժխտելի ճշմարտութիւն։ Ապա ուրեմն և դու պարտիս ծառայել Աստուծոյ։

Այսոքիկ կարողութիւնք հոգւոյդ, պարզեալ այդոքիկ մտաց, զդայարանքդ այդոքիկ, ամենայն անդամք մարմնոյդ, այդ ամենայն տուեալ են քեզ յԱստուծոյ։ Գանձք են դոքին չնորհեալ քեզ առատապէս առ 'ի շահել նոքօք. ապա պարտ է քեզ ծառայել նոքօք Աստուծոյ։ Մարթ էր քեզ ծնանել կաղ, կոյր, համր, ապուշ և մոլոս. և զի ընկալար դու յԱստուծոյ զպարգևս զայսոսիկ բնութեան, ապա պարտիս սոքօք ծառայել Աստուծոյ։ Եւ ո՞, որ

միտս ունիցի և չիցէ աստուածամարտ, յանդգնեսցի ուրանալ երբէք զճշմարտութիւնս զայսոսիկ։

Մասն Բ

Ա. Ստեղծար զու Աստուծոյ զի ծառայեսցես նմա 'ի կեանս յայս, և ժառանգեսցես զնա 'ի հանդերձեալն։ Ծառայել Աստուծոյ. այս է գործ կատարեալ. կատարեալ վախճան մարդոյն։ Կարէր Աստուած թողուլ զմեզ յաւիտեանս յոչէութեան. բայց կամեցեալ ստեղծանել զմեզ՝ ոչ կարգեաց առ այլ վախճան։ Ոչ ոք ստեղծաւ զի մեծասցի ճոխութեամբ, փառօք և հեշտալեօք. և ոչ զի ստասցի բարեկամս, լցցի զիտութեամբ, և մեծահամբաւ հռչակեսցի յերկրի, այլ զի ծառայեսցէ Աստուծոյ. «Զի այս է մարդն ամենեին». (Դող. ԺԲ. 13.) այս է, ամենայնիւ կատարեալ ծառայ Աստուծոյ։

Բ. Ծառայել Աստուծոյ է միայնակ վախճան և միայնակ գործ մարդոյ։ Եթէ մեծահանճար իմաստութեամբ 'ի գլուխ տարեալ իցէ զգործս աշխարհի ողջոյն. եթէ և զամենայն թագաւորութիւնս 'ի կարգ մուծեալ իցէ, եթէ և ամենայն իշխանաց և աշխարհակալաց խորհրդատու, ուղեցոյց գտեալ իցէ, հարստութեամբ պերճացեալ, 'ի դեղեցիկ բարձ պատուոյ ամբարձեալ, աշխարհաց բազմաց տիրապետեալ. բայց

եթէ 'ի պարտուպատաշաճ ծառայութեան Աստուծոյ չիցէ կացեալ, յոտենի երկնից ինքն է ոչինչ, և յաշխարհի բեռն առ ոչ ինչ պիտանացու։ Եւ ընդ հակառակն դարձեալ եթէ ուրուք ոչ ինչ վասն աշխարհի վաստակեալ և զաւուրս կենաց իւրոց յանկողնի ծախեալ յանարդութեան, յանծանօթ անկեան ծածկեալ, անոք, անարգեալ յամենեցունց. այլ եթէ ծառայեալ իցէ Աստուծոյ, շատ իսկ զործեալ համարեսցի. զի վաստակեալ է 'ի կեանս իւր 'ի շահ օգտի, որոյ վասն ընկալեալ է զկեանս։

Գ. Ծառայել Աստուծոյ է վախճան մեր՝ յոր հանգիցէ ամենայն. զայս եթէ 'ի զլուխս հանեալ ըստ արժանւոյն, խաղաղանայ սիրտ մեր, որով կշտապինդ յագեալս զըատանեմք զհոգիս մեր. քանզի ժամանեալ մեր յայս վախճան, յաջողութեամբ 'ի զլուխս տարեալ զսոյն զործ ծառայութեան, թէպէտ և զրկեալ յայլ ամենայն վայելից կենաց, թէպէտ և անտես արարեալ զայլովքն առ հասարակ. այլ 'ի խաղաղ անզորրութեան զացուք զանձինս մեր։ Բայց եթէ զայս միայն չիցէ բերեալ 'ի ձեռս, եթէ այսմ միայն չիցեմք լեալ մտադիր, թէպէտ և այլովն ամենայնիւ ճոխացեալ իցեմք, թէպէտ և յայլն ամենայն քրտնաջան վաստակեալ, այլ յար 'ի ծուխս և 'ի հոգս մաշեցուք։ Ցանկութիւնք սրտից մերոց բուռն ձգեն զմեզ և անձկով բերին առ մեծամեծս. վասն զի քարն չև ժամանեալ

առ կենդրոնն ոչ կարէ զդարեալ կալ. այս-
պէս ևս մարդ երբէք ոչ հանդիպէ մինչև
հատեալ առ Աստուած և լցեալ նովաւ, ո-
րոյ է օթևան սիրտ իւր։

Դ. Ծառայել Աստուծոյ է վախճան և
ամենամեծ գործ մարդոյ, զի այս միայն է
ուղին ընդ որ հնար իցէ անցանել առ յա-
վիտենական երանութիւն. յայսմ վրիպա-
կըն է անդարման, յորմէ խոտորումն ած-
ցէ կորուստ անվախճան։ Կատեալ երկիր-
զին պակասելոյ յայսմիկ՝ տաղնապէ գէռ-
զիս 'ի ժամու մահուան. այս միայն է որ
զառնացուցանէ մեզ զմահ։ Զինչ ևս յա-
ւելից ասել. սիրտ ամենեցուն բողոք յեր-
կինս կարդայ ընդդէմ անձին. մի արկա-
նել 'ի յուշոյ զճշմարտութիւնս զայս. ծա-
ռայել Աստուծոյ է վախճան մարդոյ և գործ
ամենամեծ, միայնակ, կատարեալ և յոր
հանդիպէ ամենայն։ Վասն որոյ պարտ է
զամենայն ուշ մուցն յայն 'ի գործ արկա-
նել հաստատութեամբ կամաց։ Ստեղծաւ
մարդ յԱստուծոյ և վասն Աստուծոյ. ապա
և մարդն պարտի ծառայել Աստուծոյ։ Այս
այսպէս է. արդ դու որ ընթեռնուս զսոյն՝
պարտիս ծառայել Աստուծոյ։ Թող բար-
բանջեսցէ աշխարհ, անկուշեսցէ մարմին,
զայրագնեսցին զկիր. այլ դու պարտիս ծա-
ռայել Աստուծոյ։ Զսոյն փոդն մեծաբար-
բառ երկինք և երկիր և սանդարամետք։

Մասն Գ.

Պարտ է ծառայել Աստուծոյ գնալով զհետ կամաց նորա։ Աստ ինչ են զանգանգանքդ. զինչ են այդոքիկ երկմիտ խորհուրդք. ոչ ոք 'ի տերանց թոյլ առնէ երբէք ծառայից իւրոց վաստակել արտաքոյ հրամանին եղելոյ առ նոսա. և ընդէր միայն Աստուած հանդուրժեսցէ զայդ։ Ոչ ոք առնուցու յանձն հատուցանել վարձս ծառայութեան որ չիցէ կատարեալ ըստ հրամանին. և հիմ Աստուած վարձատրեսցէ զայնպիսին։ Ընդ բարերարութիւն անդամ, եթէ չիցէ ըստ մերոցս ախորժակաց, դժկամակիսք. ոչչափ առաւել ընդ ծառայութիւնս. և զորձք իսկ ամենաբարիք՝ եթէ չիցեն լեալ ըստ կամացն Աստուծոյ, են նանիրք և զրեսցին յոչ ինչ։ Ասէր Աստուած առ Իսրայելացիս. «Ոչ են կամք իմ 'ի ձեզ»։ և ընդէր. քանզի «Ցաւուրս պահոց ձերոց զտանին կամք ձեր կատարեալ»։ Ասնէին որպէս ինքեանց թուէր բարւոք, և ոչ որպէս կամէրն Աստուած. և Աստուած անարդէր զպատարագս նոցա։

Ցայսմ յայտնապէս տեսանի լինել կամացն Աստուծոյ՝ զի զհետ երթիցուք մեք կամաց իւրոց, և ծառայեսցուք նմա՝ ոչ որպէս մեքս կամիմք, այլ ըստ իւրոց կամաց։ Պարտ է մեզ քաջ յուշի կալել զսոյն ճշմարտութիւն հիմնական, և զրոշմել 'ի խորս

որոնց մերոց։ Այդ Աստուած ամենագէտ ե-
թէ կամիցի զի ծառայեցես նմա յարհամար-
հանս և յանգիտութիւն, 'ի հիւանդութեան.
'ի վիշտս և 'ի հալածանս. և զու հակառակ
նորայն կամաց, յամառեալ 'ի միտս կամի-
ցիս ծառայել նմա 'ի ճոխութեան և 'ի քաջ-
ողջութեան, 'ի յաջողութեան և 'ի փառս,
իրաւամբք համարեսցիս ամբարիշտ ապ-
ստամբ։ Վասն որոյ պարտ է քեզ լինել
անխտիր առ ամենայն ազգ պաշտամանց
ըստ սահմանելոյ Աբրշին քում՝ ծառայել
քեզ ինքեան. այս ինքն յոր և է ազգս վի-
ճակի կենաց, կամ՝ յայդմ զոր ընտրեալ
իսկ իցես յառաջագոյն. յոր և է ստոյգեան
կատարելութեան՝ զոր կարդեալ իցէ ինքն
վասն քո առ 'ի ծառայել։ Այս անխտիր
համակամութիւն, և կատարումն գործով,
է պտուղ վաստակոց այսր խոկման, զոր
պարտ է ամենայն ճգամբ ջանալ 'ի ձեռս
բերել։ Այսմ օգտեսցէ մեծապէս, ա. Ա-
նուլ 'ի միտ զյայտնի և զանաղօտ ծանօ-
թութիւն այսր ճշմարտութեան, թէ՝ ստեղ-
ծեալ ես յԱստուծոյ և վասն Աստուծոյ.
բ. Եւ 'ի կամն առնել հաստատուն և ան-
դարձ որոշումն՝ կամելոյ յամենայնի ծա-
ռայել Աստուծոյ՝ զնալով զհետ կամաց նո-
րա, զոր հաճեսցի յայտնել քեզ յայսմ կր-
թութեան։

ԻՂՁԲ

Պարտ է զարթուցանել 'ի սրտի զոյ-
սոսիկ իղձս.

Ա. Զօրացուցանել զհաւատսն, որով
հաստատութեամբ հաւատասցես թէ վախ-
ճան քո է ծառայել Ա.բարձին քում, յոր
հանդիցէ ամենայն, այս է միայնակ գործ
քո և ամենամեծ և կատարեալ. և զի այլ
ամենայն արարածք են միջնորդք առ այս
վախճան տնօրինեալք։

Բ. Իղձ անխտիր համակամութեան 'ի
գործս ծառայութեան Ա.ստուծոյ 'ի չորս
աղդս։ ա. Ի փառս կամ յանարդանս։
բ. Յաղքատութեան և կամ 'ի ճոխութեան։
գ. Ի քաջողջութեան և կամ 'ի հիւանդու-
թեան։ դ. Յերկար կամ 'ի սուղ կեանս,
համառօտեալս յանդուլ վաստակոյ։ Միան-
դամայն պատրաստ, ինքնամատոյց՝ միտ
դիր մերժելոյ յանձնէ, և 'ի բաց հեռանա-
լոյ յայնմ ամենայնէ որք օտարացուցանեն
զքեզ 'ի վախճանէդ, և տանելոյ մտադիր
կամ առնելոյ զայն ամենայն որք լաւ ևս
առաջնորդեն 'ի լրումն առաջադրութեանցդ.
այսինքն՝ առ 'ի ժամանել յայն աստիճան
կատարելութեան, յոր կամք իցեն Ա.ստու-
ծոյ հասանել մեզ յայսոսիկ աւուրս կրթու-
թեան 'ի ճգունս ջանից։

Ա.ռ ևս քան զևս յորդորագոյն առնե-
լոյ զսիրտս մեր առ այս՝ օգնեսցէ մեծապէս

հաստատել հաւատովք 'ի բան Աստուծոյ։ «Լաւ իցէ քեզ միաձեռանի կամ կաղ կամ միականի մտանել 'ի կեանս, քան թէ երկուս ձեռս և երկուս ոտս և երկուս աչս ունել, և անկանել 'ի գեհեն հրոյն»։ Լաւ ևս է վասն քո կորուսանել զմի յանդամոց, քան թէ ողջ մարմնով երթալ 'ի հուրն անշէջ։ Դարձեալ խորհուրդ զննել դաւորդ զայն բան. «Զինչ օգուտ իցէ մարդոյ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր կորուսցէ. կամ զինչ տացէ փրկանս ընդ անձին իւրոյ»։ Եւ արդարև. Առ ինչ օգտեսցեն փառք, ճոխութիւնք, երջանկութիւն, եթէ նոքօք կայցէ մեզ դատապարտիլ. և զինչ վնաս մեզ կեալ 'ի թշուառութեան, յաղքատութեան, 'ի նախատինս. եթէ այնպէս հասցուք փրկութեան։ — Դրոշմեա զսոսին 'ի միտդ. Զինչ օգուտ. Զինչ վնաս։

Գ. Դարձեալ մարթ է զարթուցանել զիդձրս, ա. Երախտագիտութեան ընդ բարեբարութիւն ստեղծման։ բ. Յաւոյ՝ ընդ ապախոս բարեացն, ընդ վարելն յանդէպս զզայարանօք և կարողութեամբք հոգւոյն։ գ. Սիրոյ առ Արարիչն բարերար՝ ուխտ ընդ անձին եղեալ ուղղելոյ առ բարին յաժենայնի զդիտումն մեր։ դ. Յաւոյ և փափաքանաց ժառանգելոյ զԱստուած զվախճան մեր ցյաւիտեանս ժամանակաց։

Այլ և այնպէս ոչ է պարտ յամել ընդերկար յայսոսիկ չորեսին իդձս, վասն

զի, ըստ ասելոյ կանոնագրոց, վախճան և պտուղ այսր խոկման է միայն համակամութիւն անխտիր ծառայելոյ Աստուծոյ յոր և է աղջս պաշտամանց՝ յոր կոչիցիմք 'ի նմանէ։

Վասն որոյ պարտ է ծախել զմեծ մասն ժամուս 'ի ճիգն հասանելոյ առ այս համակամութիւն։ Այս որ եթէ անբաւական զանձնդ վարկանիս, զոնեա զարթո 'ի քեզ զփափաք, և աղաչեա զԱստուած եռանդեամբ տալոյ քեզ կար։ Եւ զգոյշ լեր, մի վհատիցիս ընդ ծանրութիւնն. զի եթէ Աստուած անքնին իմաստութեամբ իւրով ժրխտէ տալ քեզ զնոյն առ ժամս, գուցէ յետ սակաւուց տացէ քեզ լիով վայելել 'ի նոյն։ Փոյթ կալ դու առ այժմ չարկանել քեզէն խափան, և զիր ջան՝ լինելոյ արժանի ընդունելութեան շնորհիս։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՕՐԻՆ

Ա. Ստեղծար դու յԱստուծոյ. խորհեաց քաջ՞. ուսա՞. զի՞նչ. և զչափ սիրոյն 'ի ստեղծանելն։ Ո՞. – Աստուած. ստեղծ զքեզ ինքն Աստուած։ Ուսա՞ եհան զքեզ. – Յոչնչէ, 'ի գործ արկեալ զանբաւ զօրութիւն իւր։ Զի՞նչ արար զքեզ. – Բանական 'ի պատկեր իւր։ Որո՞վ սիրով սիրեաց զքեզ. – Յաւիտենական և անչափ սիրով. կատարեալ սիրով, ընտրեալ զքեզ 'ի բիւրուց։ Զի՞նչ այսոցիկ զչեռ բերել արժան իցէ. – Զայս՝ եթէ պարտ է և քեզ կալ 'ի ծառայութեան նորա ա-

մենայնիւ. և զամենայն պարգևս նորա ծախել 'ի ծառայութիւն նորա։

Բ. Սահեղծար դու Աստուծոյ առ 'ի ճանաչել զնա, առ 'ի սիրել զնա, և առ 'ի ծառայել նմա 'ի կեանս այս, և առ ժառանգել զնա 'ի հանդերձեալն։ Ապա, Ա. Կատարեալ վախճան քո է ծառայել Աստուծոյ։ Ոչ ստեղծ զքեզ Աստուած առ ժողովելոյ զինչս. ոչ առ զբաղելոյ 'ի հեշտալիս և ոչ վասն փառաց. այլ զի ծառայեսցես նմին։ Բ. Ծառայել Աստուծոյ է միայնակ վախճան քո. եթէ զսքանչելիս մեծամեծս գործեսցես յերկրի, այլ ոչ վասն Աստուծոյ, առ ինչ օգտեսցեն քեզ. առ ոչինչ։ Գ. Ծառայել Աստուծոյ է վախճան քո յոր հանդիցէ ամենայն. վասն որոյ միշտ 'ի յոյզս կացցէ սիրտ քո, եթէ ոչ նուիրեսցես զանձն քո 'ի ծառայութիւն Աստուծոյ։

Դ. Այս է վախճան քո ամենամեծ. վասն զի այսու միայն հանդերձեսցի քեզ երանութիւն յաւիտենական, յորմէ խոտորումն՝ ածցէ քեզ թշուառութիւն անզերծ։

Դ. Պարտ է քեզ ծառայել Աստուծոյ գնալով զհետ կամաց նորա. վասն զի ոչ ոք հաճեսցի ընդ ծառայութիւնս լեալ ընդդէմ կամաց իւրոց։ Արդ պարտ է քեզ լինել համակամ առ 'ի ծառայել նմին 'ի ճոխութեան կամ 'ի անանկութեան, լսմամբ հաճոյից քոց կամ 'ի ցաւս, 'ի փառս կամ յանարգանս, յերկար կամ 'ի սուղ կեանս, յայս ինչ վիճակ կենաց, կամ թէ 'ի կոչմանն յորում կաս. յայն սահմանն կատարելութեան յորում ինքն կամի կոչել զքեզ։

ՊԱՐԱՊՈՒՄՆ

Ի խոկումն առաջին, որ կոչի Հիմն.

Ա.

Ոչ վայրապար խորհրդով եղաւ հիմն կրթութեանս, Վախճան մարդոյ որ վասն ստեղծեալ եմք։ Վասն զի և յամենայն իսկ գործս յառաջ քան զամենայն խոկալ ըզվախճանէն օրէնք են անաղարտելիք. այնպէս զի և ոչ մի ինչ գործ առանց վախճանի կարէ կալ. զի և ամենայն գործք բերին առ վախճան իւրեանց իբրև յիւրեանց նըպատակ։ Արդ՝ի կամելն հոգեւորական կըրթութեամբ ուղղել զվարս մեր, հարկ է յառաջ քան զամենայն քաջ՝ի միտ առնուլ զվախճանն մեր, զի կարասցուք ճանաչել և զգործս կարեւորս մեզ, որովք հնար լցէ հասանել առ այն վախճան. և այն ամենայն գործք կարեւորք վախճանին կոչին և են ուղղութիւնք. զի նոքօք միայն կարելիք՝ի ձեռս բերել զվախճան մեր, և այլ ամենայն գործք արտաքոյ նոցուն են վրիպակք, զի ոչ են կարգեալք առ վախճան մեր, և վրիպեցուցանեն և զրկեն զմեզ՝ի ցանկալի վախճանէն մերմէ որ է անեղծութիւն։ Եւ զի կրթութիւնն է առ ընտրել զգործս կարգեալս առ վախճանն, ապա՝ի

ծանօթութեան վախճանին հիմնեալ է ընթացք կրթութեանս ողջոյն, նոյնպէս և ընտրութիւն կոչման և վիճակի կենաց. զի ընտրութիւնն պարտի լինել ըստ վախճանին: Եւ զի ծանեալք եթէ վախճան մարդոյ է ծառայել Աստուծոյ. ապա և ճշմարիտ ուղղութիւն կենաց և վարուց է 'ի յանձնառութեան ծառայելոյ Աստուծոյ, որպէս ինքն կամիցի և հրամայեսցէ. և այս ոչ երբէք լինի կատարեալ և արտի մտօք, առանց կատարեալ համակամութեան յամենայն գործս: Եւ այս համակամութիւն զօրանայ 'ի սրտին 'ի պարապելն ուղղապատութեամբ յայս առաջին խոկումն: Ամենայն որ որ միտս ունի, տեսանէ յայտնապէս զի 'ի խոկմանէ ատի իբրև յարմատոյ՝ կրթութիւնս ողջոյն բարգաւաճ շառաւիղաք առաքինութեանց պտղաբեր լինի, և զի անհնարին է առանց այսորիկ քաղել ինչ շահ 'ի կրթութենէս:

Ապա որչափ առաւել արդեամբք և մտադիր Ջանիք յայս խոկումն պարապեսցի որ, այնչափ առաւել արդիւնաչատ պտղովք 'ի զլուխ հանցէ և զայլսն. որչափ առաւել հաստատուն և անդրդուելի 'ի խորս արկցի այս հիմն, այնչափ առաւել հաստատուն կանգնեսցի շինուածն ողջոյն: Ապա որպիսի մտադրութեան պէտք իցեն և որչափ Ջանից, առ 'ի յորդորագոյնս մատչիլ 'ի խոկումն այսր ճշմարտութեան: Դիտէ դեն չարանենդ, զի եթէ մեք խորա-

մուխ լիցուք 'ի սոյն, կորուստ մեծ է ինքեան, և մեզ շահք անտի մեծամեծք, վասն որոյ զամենայն հնարս հնարի զի զբաղեալ մտօք և ցրուեալ խորհրդովք կացցուք, և զի վեր 'ի վերոյ տեսութեամբ ակնարկեսցուք 'ի սոյն, իբրև առ ճշմարտութիւն ինն յայտնի, պարզ և անընդդիմակ, յոր ակնարկել ևեթ շատ իսկ 'ի տեսանել ակն յանդիման. և թելադիր լինի մեզ յաւելուլ յեռանդն 'ի վաղիւն, իբր զի 'ի խոկման աւուրս չիք ինչ նոր զարթուցիչ եռանդան. և այսպէս սաստ արկանել յաւաղի զհինն շինուածոյն:

Նախատես այսր խաբկանաց զիւին, առ յայտ առնելոյ զմեծ պէտս այսր խոկման, ոչ ժամանակաւ սահմանեմք զայն, և ոչ 'ի միում ժամու աւարտել հրամայեմք, որպէս կարգեալ են ժամքն վասն այլ ամենայն խոկմանց, այլ չթողուլ 'ի բաց զսոյն՝ մինչ չև հիմնեալ 'ի խորս սրտից և մտաց մերոց ճշմարտութեանս: Վասն որոյ հարկ է կրկնել զսոյն և յերեկոյին, առ յաւելուլ յեռանդն չև բորբոքեալ, և կամ առ կրկնապատկել զնոյն:

Բ

Զվախճանէ մարդոյն պարտ է խորհուրդ քննել զերկուս զայսոսիկ. ա. Աստուած ստեղծ զմարդն, զի զնա օրհնեսցէ, մեծացուսցէ և ծառայեսցէ նմա, զի և յետ

այնորիկ ժառանգեսցէ զնա։ Բ. Այլն ամենայն՝ որք են յաշխարհի, արարան վասն մարդոյ, զի լինիցին նմա ձեռնտուք առ 'ի հասուցանել զնա 'ի վախճանն այր վասն ստեղծաւ։ Արդ որպէս մարդն ստեղծեալ է վասն Աստուծոյ, սապէս ևս այլն ամենայն 'ի զոյ ածան վասն մարդոյ. վասն որոյ որպէս է վախճան մարդոյ Աստուած, այսպէս ևս վախճան ամենայն արարածոց է մարդն։ Առաջին խոկումն էր առ 'ի ցուցանել եթէ ծառայելն Աստուծոյ՝ է միայնակ ամենամեծ և կատարեալ վախճան մարդոյ. երկրորդ խոկումն լիցի այն՝ թէ ամենայն արարածք աշխարհի են միջնորդք ձեռնտուք մարդկան առ 'ի հասուցանել զնա յայս միակ վախճան։

Զհետ բերեալք այսոցիկ երկուց սկզբանց կրկին ճշմարտութիւնս անժխտելիս և կարևորս յոյժ։ Առաջին այն՝ եթէ պարտ է վարել զարարածս 'ի գործ ցորչափ կարեն ձեռն տալ մեզ ժամանելոյ առ մեր վախճան, և 'ի միաստակարացն և 'ի խափանարարաց կալ 'ի բացեայ։ Երկրորդ, — և վասն այնորիկ ոչ խորել ընդ այս կամ՝ ընդ այն 'ի վարել զնոսին 'ի գործս մեր, այլ յամենայնէն ընտրել առնուլ զայնոսիկ միայն՝ որք առաւել հեշտեաւ հասուցանեն զմեզ 'ի մերն վախճան. որով ոչ ինչ խոտիր առնեմք ընդ քաջողջութիւն և ընդ հիւանդութիւն. և ոչ զեր 'ի վերոյ համարիմք աղքատութեան՝ զճոխութիւն, և ոչ անարդա-

նայ՝ զիտաս, և ոչ զերկար կեանս սուզ կենայ։ Առաջինն 'ի ճշմարտութեանցս է հրաման վարելոյ զարարածս 'ի գործ. երկրորդն չափ գնել բերման ըղձից առ այնոսիկ։ Եւ յերկոսին միանգամայն է զաղտ իմն զօրութիւն հասուցանելոյ զմեզ 'ի բարձրագոյն աստիճանս կատարելութեան 'ի սուզ ժամու. երկնաւոր իմաստութեամբ համեմեալ են բանքս։ — Մարտինոս Ոլաւէ անաղօտ ջահն սորբոնեան խոստովանէր անկեղծութեամբ՝ զի 'ի միում ժամու խոկմանս այսորիկ, որ է հիմն, առաւել ուսաւ, քան յայնչափ ամս պարապեալ 'ի վարդապետութիւնս տեսական աստուածաբանութեան զտիւ և զգիշեր յուսանել և յուսուցանել։ — Ի Հռոմ 'ի կուսաստանին որ 'ի Թոռ տի Սփէքիո էր կոյս ոմն անուն Պոնավէնթուրա մեծազգի և մեծահանճար, տեղեակ չափականին, և զարդարեալ ճրիւք, որ կրէր զանուն ևեթ և զքեմ՝ կուսանի, անձնատուր զլիովին յունայնութիւնս և 'ի զբաղմունս աշխարհի։ Երանելին Հ. Լանկինոս զնացեալ 'ի կուսաստան անդր պարապեցուցանել 'ի կրթութիւն զկուսանսն, նա զառաջինն ոչ առնոյր յանձն մատչել 'ի լուր բանից նորա. բայց ապա խոնարհեալ 'ի թախանձանս ընկերացն այն ինչ մատեաւ յունկնդրութիւն, և լուաւ զխոկումն վախճանին, խորամուխ լեալ յայն՝ դառնայր 'ի սենեակն, խորտակէր և հարկանէր զգետնի զամենայն որ ինչ էր

'ի սենեկին ունայն հոսրտանք. և հատեալ զաղաբեցուցանէր զերթեկս բարեկամաց, և մերժէր յանձնէ զունայն բանից զրօսաս-սիրութիւն, հանեալ 'ի նուէր զամենայն Ա.բարշին իւրում. և պատրաստէր զանձն յանխոտիր համակամութիւն առ ամենայն, ուշ եղեալ հասանելոյ առ այն բարձրու-թիւն կատարելութեան յոր կոչեսցի յԱ.ստուծոյ։ Եւ ասէ առ Լանկինոս. Հայր, ոչ է մարթ 'ի վեղ զալ ընդ Ա.ստուծոյ. ծանեայ զոր պահանջէ յինէն. կամիմ բովանդակ նուիրել զանձն իմ Ա.ստուծոյ, վատակել ամենայն զօրութեամբ իմով առ 'ի ժամա-նել 'ի սրբութիւն, և անյապաղ, և 'ի մեծ սրբութիւն։ Եւ եկաց 'ի խոստման իւրում, զի 'ի սակաւ յայնոսիկ ամիսս յորս եկաց յայնմհետէ, էր նախանձաւոր սրբութեան Կատարիննայ Ա.ենացւոյն։ Ա.յսպէս հզօր է ճշմարտութիւն և 'ի սիրտ աշխարհասիրի։

Ոչ ինչ են զարմանք. զի որ հաւաս-տեալ զիտաց եթէ ոչ կեամք մեք առ 'ի վայելս ճոխութեան, փառաց և հաճոյից, այլ զի այս ամենայն ստեղծեալ են առ 'ի լինել մեզ միջնորդք փրկութեան մերոյ, զի ըստ պիտոյիցն 'ի վար արկցուք զնոսա կամ անարգեսցուք, յայտ է զի այնուհետև և կամաքն յօժարի մտադիր զհետ զնալ այ-սորիկ ճշմարտութեան, ընտրել և ցանկալ 'ի ձեռս բերել զայնոսիկ եթէ՝ որոյք հնար իցէ հասանել 'ի վախճանն։

Եւ ո՞ երկմտեսցի երբէք ընդ այն՝ զի

որ ոչ ունի հասանել առ վախճան ինչ ցանկալի՝ 'ի բազում իրաց ընարէ առնու զայնոսիկ եթէ զոր համարի ձեռնտու իւրումն վախճանին։ Արդ փառք աշխարհի, ճոխութիւնք, հաճոյք, քաջողջութիւն, երկար կեանք, այսոքիկ ամենայն են գործիք շնորհեալք մեզ յԱստուծոյ առ ձեռն տալ փրկութեան մերոյ, վասն որոյ յայնժամ եթէ են բարիք և ցանկալիք, յորժամ իցեն պատշաճականք առ փրկութիւն մեր։ Եւ են չարք և արժանիք ոտնհարութեան՝ յորժամ կայցեն խոչընդոտն փրկութեան. և վասն այսորիկ ոչ պարտիմք առնել խտիր 'ի կամել զայս կամ զայն՝ ըստ յօժարութեան բազձանաց։

Արուեստաւորն ոչ զամենայն հաճոյականս աշաց առնու ինքեան 'ի գործիս, այլ միայն զպատկանեալսն 'ի գործս արուեստին, անտեսեալ զայլսովն ամենայնիւ։ Ծաղու իրք են՝ եթէ ոք մատուցեալ 'ի գրել, ի բաց արկեալ զդրիչ, կամիցի 'ի վար արկանել զդաւազան ոսկի։ Եւ զիմաստ չիցէ ծաղրական՝ եթէ կոչեցեալն յԱստուծոյ 'ի փրկութիւն 'ի ձեռն աղքատութեան, անարգանաց և վշտաց, արհամարհեսցէ զնոսին և կամիցի հասանել յայն հեշտականաց, ճոխութեամբ և պատուասիրութեամբ։

Արդարև զինչ օգուտ 'ի քաջողջութենէ, 'ի պատուոյ և 'ի բարեբաղդութենէ, եթէ նոքիմբք հասանիցէ մեզ կորնչել. և ոչ վնաս յաղքատութենէ, յարհամարհա-

նաց և 'ի հիւանդութենէ եթէ սոքօք զատ-
նիցեմք զփրկութիւն։ Զինչ վասն եղև Ղա-
զարու զի եկաց աղքատ և վիրալից իբրև
զշուն առ դրան մեծատանն, և որ օգուտ
մեծատանն յզմիացումն իւր 'ի ճոխութեան
և 'ի հեշտախառութեան. զի արդ նա մխի-
թարի 'ի գոգն Աբրահամու, և մեծատունն
թաղեալ կայ 'ի դժոխս։

Եւ զի խորագոյնս զրոշմեսցի ճշմար-
տութիւնս այս 'ի միտս քո, եկ, ով ընթեր-
ցող, մերձեա 'ի դրունս դժոխոց, բայց և զո-
չեա 'ի ներքս. Ո՛վ զատապարտեալք, առ
ինչ օգտեցին ձեզ բարիք աշխարհիս. ձայն
տուր նոցա, ասա. Զինչ շահ եղև ձեզ
հպարտութիւնն, և զինչ մեծութիւն ամ-
բարտաւանութեանն իցէ ձեզ նպաստա-
ւոր։ Զինչ շահ եղև. առ ինչ օգտեաց։

Աւա՜ղ. ահա պատասխանեն քեզ
բարձրակամն և 'ի կրճումն ատամանց.
Մոլորեցաք 'ի ճշմարտութեան ճանապար-
հէն. մեք յիմարք զրկեցաք 'ի վախճանէն
մերմէ։ Գոչէ հեշտասէրն. Ճաշակելով ճա-
շակեցի սակաւ ինչ մեղր. վայրկենական
եղև բերկրութիւնն այն, և անվախճան լի-
նիցին տանջանքս այսոքիկ։ Աղաղակէ ա-
գահն. Ունէի բազում բարութիւնս համբա-
րեալ ամաց բազմաց, և ասէին հիւծեալ
ծախիմ 'ի սովու։ Աւաղէ ամբարտաւանն.
Ազանէի բեհեղս և ծիրանիս, քանի՞ անար-
գանօք լի եմ արդ։ Այսոքիկ են ձայնք ոդ-
բոց զատապարտելոցն, որք զառիթս փրկու-

թեան՝ զգատճառսն՝ կարծեցին իւրեանց վախճան, և վայելեցին յայնս, զորս պարտ էր նոցա վարել եթէ 'ի զորձ առ հասանել նոքօք 'ի վայելս վախճանին իւրեանց։

Դարձեալ արդ միանգամ զաչս յերկինս, յառեաց յաքքայութիւնն. ասա՛ աղաչեմ, զինչ վնաս եղև երանելեացն այնոցիկ 'ի բաղում՝ նեղութեանց, որովք կարացին մոռանել յայն հանդիսա։ Ո՛վ, քանի՛ բեր-կրանօք, ո՛րչափ քաղցրութեամբ լի են, զի կեցին յայսմ աշխարհի «Կարօտեալք, նե-ղեալք չարչարեալք. զի առաքինանակիք եղեն ամենայն աշխարհի, ամենեցուն փարելի»։ Եւ արդ ձայնեն բերկրանօք. Ո՛՝ քաղցր չուառութիւնք, ո՛՝ բերկրական վիշք, ո՛՝ բարեկամք մեր հաղածմունք. զուք կացէք մեզ սանդուխք յերկինս, յերանութիւն, և 'ի փառս յայսոսիկ։ Ա՛ռ այսոսիկ ձայնս ոչ յորդորիցիս թողուլ 'ի բաց զկամս. ընդէ՞ր յամառեալ կաս. ասա՛. ոչ լաւ ևս իցէ հասանել յերկինս աղքատ, արհամար-հեալ, չարչարեալ, քան զկալն 'ի մեծու-թեան, 'ի պատուի և յերջանկութեան, և հոսել զահավէժ յանդունդս. զինչ օգուտ 'ի վայելից լիութեան բարեաց՝ եթէ կայցէ քեզ զատապարտել. և ո՞ր վնաս 'ի կրելոյ զամենայն ազգի չարիս, եթէ նոքօք փրկու-թեան հասանիցես։ Սուղ, բայց ահաբեկ բանք. Զինչ օգուտ. ո՞ր վնաս։

Ի խորհել անդ զսոյն Քաւերիոսի, ան-դէն սկսաւ ասել յանձն իւր. Զինչ օգուտ

իցէ մարդոյ շահել զաշխարհ ամենայն, եթէ այնու հասցէ նմա կորուսանել զանձն իւր. և զարձեալ որ մնաս 'ի կորուսանելոյ զամենայն՝ եթէ այնու կարասցէ զնել զերկինս։ Յաղթահարեալ 'ի ճշմարտութենէ ասաի, քաջութեան խորհրդով առ ոսն հաբեալ զպերճութիւն մեծութեանց, թիկունս զարձոյց աշխարհի, և ետ զանձն զլիսովին 'ի ծառայութիւն Աստուծոյ. այնպէս զի ընկերութիւնն Յիսուսեան զիտէ զատայումն Քաւերիոսի լեալ պտուղ առաջին այսր խոկման։ Ի խոկմանէ ասաի Քաւերիոս եղև սուրբ. և Հնդկաստան եմուտ 'ի ճանապարհ փրկութեան։ Եւ արդարև որ ոք 'ի խորհել զճշմարտութիւնս զայս ոչ հատանէ զիրգս իւր յաղցաւորացս, եթէ ոչ ուրանայ զկամս իւր և ոչ յորդորի առ այն երկնային համակամութիւն, 'ի թանձր խաւար պատեալ կան միտք նորա, և կամք նորա թմբրեալ 'ի ցրտութենէ հնորհաց։

Եթէ դու ևս ըստ զիպաց իցես 'ի համարի զոցա, զոնեա զարթո 'ի քեզ զփափաք առ այս սուրբ համակամութիւն, և առ 'ի բերան զերկուս զայսոսիկ բռնադատ ճշմարտութիւնս. ա. Զարարածս Աստուծոյ պարտ է մեզ առնուլ 'ի զործ ցորվայր օգնեն մեզ առ 'ի սոյն, և թողուլ հեռանալ 'ի նոցունց, յորժամ՝ լինելոց իցեն 'ի մնաս։ Եւ առ 'ի կարող լինել առնելոյ զսոյն ընարութիւն, պարտիմք լինել անխտիր առ ամենայն արարածս. և այնպէս ընտրել

մեզ 'ի նոցունց զայնոսիկ որք լաւ ես կա-
րեն առաջնորդել մեզ առ մերն վախճան.
որով ոչ ինչ խտիր առնեմք ընդ քաջողջու-
թիւն և ընդ հիւանդութիւն, և ոչ զեր 'ի
վերոյ համարիմք աղքատութեան զճոխու-
թիւն, և ոչ անարգանաց զփառս, և ոչ զեր-
կար կեանս սուղ կենաց։

Յածեցո յանձս զայսոսիկ ընդ միտս
քո, միանգամայն ած զմտաւ զերանութիւն
և զբարձրութիւն անձին՝ որ յանձն առեալ
իցէ կեալ անխտիր 'ի նուաստութեան, յաղ-
քատութիւն և 'ի չարչարանս. կամ 'ի բեր-
կրութեան, 'ի ճոխութեան և 'ի փառս՝ յոր
առաջնորդեսցէ ինքեան Աստուած յայսմ
կրթութեան։

Այս համակամութիւն արդարև պար-
տի լինել պատուղ այսր առաջնոյ խոկման.
քանզի ստեղծեալ մեր յԱստուծոյ և վասն
Աստուծոյ, պարտիմք ծառայել Աստուծոյ
ըստ առաջնորդելոյ մեզ կամաց իւրոց,
պատրաստք ամենայնիւ առ ամենայն աղդ
ծառայութեան յոր կոչեսցէ զմեզ բարեհա-
ճութիւն կամաց մեծին Աստուծոյ, ոչինչ
խտիր ընդ մէջ արկանելով եթէ 'ի ճոխու-
թիւն կոչիցէ կամ յաղքատութիւն, եթէ 'ի
պատիւ կամ յանարգանս, եթէ 'ի հիւան-
դութիւն կամ 'ի քաջողջութիւն, եթէ 'ի
կեալ և կամ 'ի մահ. շատ է զի ծառայես-
ցուք Աբարչին մերում ըստ ընտրութեան
կամաց իւրոց։

Գ.

Վասն երկուց պատճառաց յիշեմք յանուանէ զայսոսիկ չորեսին. ա. Զաղքատութիւն և զճոխութիւն. բ. Զպատիւ և զանարգանս. գ. Զառողջութիւն և զհիւանդութիւն. դ. Զկեանս սուղ և զերկար։

Առաջին պատճառ է այն՝ զի յայսոսիկ զլխաւորաբար պակասին մարդիկ՝ի համակամութեան, ոչ կամելով ընտրել անճանց զյոսին։ Երկրորդ այն՝ զի և ամենայն պատճառք խափանարարք վախճանին մերոյ ամփոփին յայսոսիկ ըստ հաւաստելոյ մեզ սրբոյն Յովհաննու. «Ամենայն որ ինչ յաշխարհի է, ցանկութիւն է մարմնոյ, ցանկութիւն աչաց, և ամբարտաւանութիւն աստի կենաց»։

Անոտի բաղբաղայք են ասել՝ եթէ քանզի առողջութիւն և կեանք՝ի բնութեան մերում են բարիք կրկին, վասն որոյ իրաւամբք իցէ մարթ փափաքել նոցուն, մանաւանդ թէ և պարտ իցէ մեզ հսկել պահպանութեան նոցա, և վասն այնորիկ անմարթ իսկ իցէ չառնել ընտրութիւն յայսոսիկ։ Առ այս մեծախոհն Աստուածդ տայ քեզ պատասխանի, թէ թէպէտ այսորիկ բարիք պատշաճականք են բնութեան, և ցանկալիք, և արժանաւորք հսկելոյ՝ի պահպանութիւն նոցին, բայց քանզի սովոր են մարդիկ առնուլ զնոսին պատճառս մեզաց,

և ոչ զարդանալոյ յառաքինութիւնս, վասն որոյ լաւ ևս է ցանկալ նոցուն այնչափ ևեթ՝ որչափ կարեորքը իցեն առ ձեռն տալ կատարելութեան մերոյ։ Նա՝ պարտ իսկ է արհամարհել զնոյնս առ զարգացումն յառաքինութեան, և վասն հանդիպից կատարելութեան հանեալ 'ի նուէր Աստուծոյ։ Եւ վասն այնորիկ պարտ է կալ անխախիր և յայտնիկ, զի ըստ բերել զիպացն, ըստ կամացն Աստուծոյ, պատրաստք իցեմք հրաժարել և 'ի նոցունց։

Թէպէտ կրօնաւորաց չէ անկ անխախիր կալ յայտնիկ. զի Աստուած 'ի ձեռն կոչմանն յայտնեալ է նոցա զկամս իւր՝ եթէ զոր ազգ կենաց ունիցին վարել 'ի ծառայութեան իւրում. մանաւանդ թէ պարտ է նոցա յամենայն երկմտութեան կարծեաց 'ի բաց խուսափել երբև 'ի վնասակար փորձութենէ։ Արդ հիմնեալ մեր յայս ճշմարտութիւն թէ կամի Աստուած զի ծառայեսցուք նմա 'ի սուրբ կրօնիս յայսմիկ յոր կոչեցաքն, այն ևեթ մնայ մեզ զի իցեմք անխախիր պատրաստք առ եղանակ ծառայութեան մերոյ ըստ չափու շնորհացն զոր ետ մեզ։

Դարձեալ քանզի ըստ պայմանի կոչմանս մերոյ ոչ կարեմք զոյ անխախիրք ընդ աղքատութիւն և ընդ ճոխութիւն և ընդ պատիւս աշխարհի, հրաժարեալ զոլով մեր ուխտիւք յայնցանէ, վասն որոյ հարկ 'ի վերայ կայ մեզ յայլ ինչ իրս ցուցանել

դհամակամութիւնս մեր։ ա. Ա.ռ պաշտա-
մունս պատուոյ և սնարդանաց, առ աս-
տիճանս պաշտօնէի և օգնականի, առ վար-
ժապետութիւնս ստորին և մեծագոյն դպ-
րոցաց։ բ. Ա.ռ աղքատին և ճոխ դպրոցս,
առ բնակարանս անպատրաստս և յարգա-
բեալս, առ մեծաւորս խիստս և համբոյրս,
առ ընկերս հաճոյս և դառնացուցիչս։ գ. Ա.ռ
քաջողջութիւն և հիւանդութիւնս որք մար-
թին 'ի վերայ գալ 'ի պաշտամանէ, 'ի կե-
բակրոց և 'ի բնակարանէ, յապականեալ
օդոց, և յայլ ինչ պատճառաց։ դ. Ա.ռ եր-
կար կեանս կամ համառօտեալս 'ի ձեռն
պաշտաման յանձնելոյ 'ի հնազանդութենէ,
կամ 'ի վաստակոց և կամ 'ի տաղտկութե-
նէ և կամ դարձեալ 'ի ճանապարհորդու-
թենէ։ Եթէ ծանր ումեք թուիցին այսոքիկ
և ոչ 'ի դէպ հանդամանաց վիճակի իւրոյ՝
յորում գտանի, ընծայեսցէ զանձն պատ-
բաստական համակամ անխտիր 'ի խորշել
և յընդունել, 'ի լքանել և 'ի վար արկանել
զայն ամենայն զոր 'ի միտ առնու 'ի կրթու-
թեան ատ՝ եթէ պահանջէ յինքենէ Ա.ս-
տուած, առանց չափ դնելոյ ազդեցութեանն
Աստուծոյ, առանց ընդունելոյ կամ հաս-
տատելոյ զդաշն ինչ բնութեան ընդ շնոր-
հաց, և ոչ չափ իմն սահմանելով անձին 'ի
ճանապարհին առաքինութեան. այլ յանձն
եղեալ յամենայնի 'ի կամս ստեղծողին,
պատրաստ իցէ առ ամենայն. համառօտ
ասել, առ բարձրանալ յայն աստիճան կա-

տարելութեան, յոր կամիցի Աստուած բարձրացուցանել զնա յայսմ կրթութեան։

Եւ զի ասա առ կրօնաւորս են բանք մեր՝ զառաջին չորեսին առաքինութիւնսն ամփոփեմք յերիս, որք են. լինել համակամ անխախտիր, ա. Առ ամենայն պաշտամունս. բ. Առ ամենայն վայրս. գ. Առ ամենայն ազգ կենդանութեան. յաւելեալ ընդ չորրորդին զԱնխախտիր համակամութիւն 'ի կոչման մերում ժառանգելոյ զայն աստիճան կատարելութեան՝ առ որ կամիցի Աստուած բարձրացուցանել զմեզ, կամ զպատրաստականութիւն իմն դիւրանալոյ առ զզուշանալ և առ ընդդրկել, առ լքանել կամ առ 'ի գործ մատուցանել զայն ամենայն զոր պահանջեսցէ Աստուած 'ի մէնջ յայսմ կրթութեան։ Եւ զսոյն չորրորդ առաքինութիւն 'ի դէպ դատիմք անուանել Աստիճան կատարելութեան։

Ոչ ժխտեմ լինել այսմ դժուարին 'ի գործ, այլ յայտ իսկ է զի վասն այնորիկ է արժանի արիասիրտ առն։ Այլ որ զինչ և է, պարտ է քեզ անձկալ առ այս յամենայն զօրութենէ, եթէ կամիս լինել կրօնաւոր կատարեալ, որպէս տեսցես յառաջիկայ խոկման, 'ի կշռելն զայն ուշով մտաց, որ է զվախճանէ կրօնաւորի։

Դանօրդրիւն

Աշխարհիկք փոխանակ այսր երկրորդի խոկման, առնուցուն 'ի խոկալ զերկրորդ մասն Պաբայմանս։ Իսկ այլ քահանայք կարգեալք 'ի փրկութիւն հոգւոց ընդ հնազանդութեամբ Եպիսկոպոսի՝ գացեն զսոյն պատշաճագոյն յոյժ և ինքեանց՝ առեալ 'ի խոկումն զգործս պաշտամանց իւրեանց փոխանակ նշանակելոյն ասէն։

ԽՈԿՈՒՄՆ Բ

ՎԱԽՃԱՆ ԱՌՆ ՈՒԽՏԻՒՐ ԿԱՊԵԼՈՅ

Մասն Ա.

Վախճան կրօնաւորի և պաշտօնէի եկեղեցւոյ որ պարապի 'ի փրկութիւն անձին և այլոց, է միտ դնել ընդ փրկութեան հոգւոյ նաև կատարելութեան և փրկութեան հոգւոյ ընկերին ամենայն ճգամբ։ Ապա և վախճան անձանց Ուխտիս մերոյ է կատարելութիւն և փրկութիւն անձանց և այլոց։ Յոյժ գերազանց, լի օգտութեամբ և երջանիկ վախճան։

Ա. Գերազանց է. քանզի, ըստ աստուածաբանից, այս իսկ էր արտաքին պատճառ գործոցն Աստուծոյ, արարչագործութեանն, փրկագործութեանն և առաքման Հոգւոյն

սրբոյ, կենաց, վաստակոց և մահուան Քրիստոսի Տեառն մերոյ, կարգեալ առ կատարելութիւն և առ փրկութիւն ազգի մարդկան։ Դարձեալ զի՝ ըստ վկայելոյ սրբոյն Դիոնեսիոսի, յաստուածային զործս աստուածայնազոյն է լինել զործակից երկնից 'ի փրկութիւն հոգւոց։ Երրորդ անգամ՝ վասն զի նախանձաւորն փրկութեան այլոց, սքանչելեօք իմն զեր 'ի վերոյ երկրաւորացս ամբառնոյ, և քան զդաստս հրեշտակաց զերազանցէ, լեալ միջնորդ Աստուծոյ ընդ մարդկան, և իբրև այլ զբ փրկիչ մարդկան։

Բ. Մեծ է օգտութիւնն յառաջ եկեալ 'ի վախճանէ աստի, վասն արդեանցն ժողովելոց, շնորհացն արժանաւորելոց, և փառացն՝ որովք պսակեսցին վաստակաւորքն։ Եւ արդարև զինչ այլ առաւել հաշտարար արդարութեանն Աստուծոյ, քան զառաջադրութիւն հոգւոց փրկելոց ընդ ձեռն մեր յանդիման ողորմութեանն Աստուծոյ։

Գ. Բանի՞ երանական ևս է վախճանդ. վասն զի որք վաստակին 'ի կատարելութիւն, կեան 'ի խաղաղական կեանս, 'ի քուն քաղցր ննջեն 'ի մահուն, և լի լինին միխիթարութեամբ։ «Օրհնեալ է Աստուած, որով կոչեցաք 'ի հաղորդութիւն Որդւոյ իւրոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ»։ Յորում՝ 'ի ձեռն կոչման մերոյ պարտիմք վաստակել յայս զերազանց, լի օգտութեամբ և յերջանիկ վախճան։

Սակայն և զայս յուշի կապել արժան է, եթէ ոչ պարտի իւրաքանչիւր ոք 'ի մէնք ըստ ընտրութեան կամաց իւրոց վաստակել առ ժամանելոյ վախճանին իւրում, այսինքն փրկութեան անձին և այլոց. այլ ըստ ընտրութեան կամացն Աստուծոյ, յոր գործ ինքն կարգեսցէ զմեզ, և որով չափով կամիցի զի վաստակեսցուք։ Վասն որոյ ոչ պարտիմք զակն դնել հասանելոյ յայլ ինն աստիճան առաքինութեան, կամ վաստակելոյ այլազգ օրինակաւ քան զոր Աստուած սահմանեսցէ վասն մեր առ 'ի ժամանել 'ի վախճանն՝ առ որ նուիրեալս եմք։ Պարտիմք մեալ հրամանին Աստուծոյ և հպատակել կամաց նորա. ինքն ցուցցէ մեզ զժամանակն, զզիարդն, զչափն, զտեղին և զանձինս, յորոց 'ի փրկութիւն վաստակելոց իցեմք։ Իսկ եթէ մեք յեռանդն հարեալ խաբէութեամբ մտաց ախորժիցեմք վաստակել ըստ կամս մեր 'ի մեծամեծս, կամ զտկարութիւն պատճառեալ՝ չափ դնիցեմք վաստակոցս, յայնժամ յետնեալք դտանիցիմք 'ի ծառայելոյ Աստուծոյ, և զԱստուծոյսն ոչ 'ի զէպ 'ի վար արկեալ 'ի փրկութիւն մեր։ Ամենայն ցանկութեան սրտից մերոց և ամենայն գործոց մերոց զեակ և ուղղիչ պարտին լինել կամքն Աստուծոյ. ապա թէ ոչ՝ դտանիցիմք զառաջեալք 'ի վրէպ խորհուրդս և 'ի չափս կորստեան։

Արդ զրոշմեսցուք 'ի խորս սրտից մե-

բոց զայս հիմնական ճշմարտութիւն՝ եթէ վախճան կրօնաւորի և պաշտօնէին եկեղեցւոյ կարգելոյ 'ի փրկութիւն հոգւոց՝ է ծառայել Աստուծոյ 'ի փրկութիւն և 'ի կատարելութիւն անձին և հոգւոց, վաստակելով 'ի գործն յոր կոչեսցէ զնա Աստուած. 'ի վայրն, 'ի ժամանակին և ըստ չափուն զոր ցուցցէ ինքն Աստուած։ Ո՛վ տէր Յիսուս, դու ուսուցեր մեզ զայն արդեամբք և բանիւք, հաղորդս արա և զմեզ այսմ շնորհիդ, զի յոր միտք մեր հասանեն՝ և կամք մեր վաստակեսցին։

Մասն Բ

Առ հասանելոյ յայս վախճան՝ հնարք առաջինք են յաճախել 'ի խորհուրդս, պարապել աղօթից և խոկման, ճնշումն զգայութեանց և կրից, և պահպանութիւն կանոնաց։ Եւ որք զհետ զան սոցուն երկրորդքքն՝ են անխտիր համակամութիւն վայրաց, աստիճանաց, պաշտամանց, և վաստակոց ըստ աստիճանի կարողութեան հոգւոյ և մարմնոյ։ Կրօնաւոր որ նուիրեալ 'ի փրկութիւն անձին և այլոց, կարէ սոքօք ժամանել 'ի վախճանն պատակաւոր։*

Երեք ինչ իրք են յոյժ կարևորք 'ի զիտութիւն. ա. Զի 'ի կրօնի՝ աստիճանացն զանազանութիւն, տեղեաց փոփոխումն, պաշտամանցն աղգք և առողջութեան կամ տկարութեան պատահարք՝ են սատարք կամ

միջնորդք 'ի հայթայթել զփրկութիւն անձին և զայլոց. և զարձեալ այնչափ ցանկալիք են և կամ խուսելիք, որչափ օգտակարք իցեն և կամ վնասակարք 'ի ժամանումն վախճանին. զի սատարողին բարութիւն այն ևթէ զի ածցէ առ վախճանն։ Բայց թէ վատաղեսցէ զք նոցուն՝ ոչ զի են ձեռնտուք առ վախճանն, այլ զի ինքն ցանկայ 'ի ձեռս բերել զնոսին վասն իւրոց հաճոյից, ոչ զորձէ ուղղութեամբ. զի յայնժամ իբրև 'ի վախճան բերի յայնոսիկ, և 'ի նոսին խնդրէ զհանդիստ և զլրումն կամաց իւրոց, որք ոչ են վախճանք, այլ ձեռնտուք ևթէ առ վախճանն. և այս է երթալ յետս ընդդէմ, և զձեռնտուսն փրկութեան առնել պատճառս կորստեան։

Վասն որոյ պարտ է գիտել. Բ. Զի որ և է աստիճանք, պաշտօնք, վայրք, սահմանք առողջութեան՝ են դիպողազոյնք վասն կրօնաւորի առ 'ի ձեռս բերել զվախճանն փրկութեան զանձին և զայլոց. 'ի քարոզել առ տգէտս և առ իմաստունս, 'ի գիւղօրէս կամ 'ի քաղաքս, 'ի դաստիարակութեան մանկանց, և կամ յայլ պաշտամունս զործոց, 'ի տկարութեան, 'ի քաջողջութեան, յայսմ ամենայնի զմի և զնոյն օգուտ փրկութեան զործեսցէ կրօնաւորն։ Բայց ասիցես՝ ևթէ արդիւնք զործոցն ոչ այդպէս ցուցանեն։ Այլ խաբիս 'ի դատել ըստ երևութին. զի բովանդակ ընկերութիւն ուխտիս է մի մարմին առաջնորդեալ յԱս-

տուծոյ. և այդ խորհուրդ թեզադրութիւն է կամաց մարմնոյ. վասն որոյ

Պարտ է գիտել. գ. Եւ զայս, եթէ պատշաճագոյնն մեզ գործ 'ի կրօնիս առ ժամանել 'ի վախճանն մեր է աստիճանն այն, պաշտօնն, վայրն, և ողջութիւնն, զոր Աստուած տնօրինէ մեզ ինքնին կամ ընդ ձեռն մեծաւորին. յայնմ ևեթ կարեմք 'ի սուղ ժամու մեծամեծ գործս փրկութեան 'ի զլուխ հանել, առ որ և զկարևոր շնորհս առատաձեռնեսցէ մեզ Աստուած, և յանզգաստից մեծամեծ արդեանց զտանիցիմք ժառանգորդք. վասն որոյ և մեծապէս վրիպեալ զտցուք եթէ մեզէն կամիցիմք ընտրել և առնուլ յոր վաստակել իցէ մեզ պարտ։

Վասն որոյ առ հասանել յայս վախճան, Աստուած 'ի յաւիտենից խորհեալ, ընտրեալ և սահմանեալ է վասն մեր անհուն սիրով իւրով զպատշաճականն մեզ զգործս, չափեալ և կշռեալ կարողութեան մերում, որք մեծապէս ձեռնտու լինիցին 'ի փրկութիւն մեզ և այլոց. որք են ահա այնոքիկ անարգանքն, վիշտքն, տառապանքն, թշնամութիւնքն ընդդէմ մեր, և ընդդիմակրութիւնք մեծաւորաց, և այլք որք սոցին սակի՝ համայն տնօրինեալք մեզ յԱստուծոյ առ սէր մեր։

Եւ է իսկ ամենայնիւ աներկբայ՝ եթէ Աստուած անհուն իմաստութեամբ և նախախնամութեամբ իւրով ընտրէ առնու և 'ի գործ մատուցանէ զհնարս ամենայնիւ

ձեռնտուս 'ի լրումն գործոց։ Այս 'ի կամել նորա զի մեք վաստակեսցուք 'ի սոսին առ հասանել մեզ և հասուցանել զընկերս 'ի կատարելութիւն և 'ի փրկութիւն, յայտ իսկ է զի նորին են պատշաճագոյնքն մեզ հնարք ձեռնտուք առ ժամանելոյ 'ի վախճանն մեր։ Ո՛վ Տէր ամենակալ, խոնարհեցո՛ 'ի լուծ քո զընդվզեալ կամս մեր, զի ածցէ 'ի հաւանութիւն ճշմարտութեանս այսորիկ զմիտս մեր, կռելով ուիտ ընդ անձին չմոռանալոյ երբէք, և զի կամքն ևս անփոփոխ 'ի նոյն առաջնորդեսցէ։

Մասն Գ.

Յայսմ ամենայնէ զհետ բերել արժան է՝ թէ պարտ է կրօնաւորի ծառայել Աստուծոյ 'ի կրօնի յաստիճանի անդ և 'ի պաշտման, 'ի տեղւոջ, և 'ի տկարութեան կամ 'ի քաջողջութեան յոր և կոչեսցի։ Աստուծոյ և կամ 'ի մեծաւորէն որոյ հրամանք են յանուն Աստուծոյ։ Վասն որոյ պարտ է նմա կալ անխտիր համակամ առ այս ամենայն. քանզի պարտի ծառայել Աստուծոյ 'ի վիճակի՝ յոր զնա կոչեսցէ ինքն Աստուած, որպէս ցուցաւ յառաջին մասին։

Այս պարտ է մեզ հնազանդել մեծաւորին անխտիր համակամութեամբ 'ի գործս մեր, և նախախնամութեանն Աստուծոյ՝ 'ի տալ մեզ քաջողջութիւն կամ ոչ. զի 'ի հա-

ատոց է՝ թէ բաց 'ի մեղաց այլն ամենայն տնօրինի 'ի նախախնամութենէն Աստուծոյ։ Նոյնպէս և այն թէ 'ի հնազանդել մեր մեծաւորաց՝ հնազանդիմք կամացն Աստուծոյ, որ ասաց. Որ ձեզ լսէ ինձ լսէ։ Եւ այսպէս կարեմք ասել ընդ Բարուքայ. Երանի՛ է մեզ, կրօնաւորք, զի ('ի ձեռն կանոնաց) հաճոյքն Աստուծոյ ծանօթք մեր են։

Ապա պարտ է մեզ լինել անխտիր համակամ առ ամենայն։ Ապա որեմն որ խարէ, ոչ ծառայէ Աստուծոյ ըստ կամաց նորա, և 'ի վախճանէն իւրմէ խոտորեալ հեռացեալ է։ Քանզի որպէս ամենայն մարդոյ առ հասանել 'ի վախճան իւր կարևոր է լինել անխտիր համակամ առ հասարակ առ ամենայն վիճակ կենաց պատուոյ և անարգանաց, ճոխութեան և աղքատութեան, որպէս ցուցաւ յառաջին խոկման, այսպէս ևս կարևոր է առն կրօնաւորի առանձին 'ի վիճակի կենաց իւրոց այս անխտրութիւն աստիճանի, պաշտաման, վայրաց և տակաւութեան և քաջողջութեան մարմնոյ։ Եւ որպէս աշխարհիկ ոք, ոչ կամեցեալ կեալ 'ի կոչմանն յոր կոչեսցէ զնա Աստուած, հեռանայ 'ի վախճանէն իւրմէ, սմին հանդոյն և կրօնաւորն արտաքս անկեալ զոցի 'ի լուսաւոր ճանապարհէն՝ յոր մտեալն է, եթէ ոչ հաստատութեամբ ուխտ ընդ անձին զիցէ ծառայելոյ Աստուծոյ յամենայնի հպատակելով կամաց նորա, և կամիցի ըստ յօժարութեան բաղձանաց իւրոց ընդունել

զհրաման կալոյ յայն աստիճան, յայն պաշտօն, յայն վայր զորս ինքն'ի զէպ զատեսցէ անձին իւրոյ։ Ստացումն այսր համակամութեան և հաստատութիւն'ի ամին, լինիցի կէտ նպատակի առաջիկայ խոկմանս։

Այս անխտիր համակամութիւն է յանչափս կարևոր, զոր և պարտ է զհետ լինել ստանալոյ ամենայն ճգամբք. զի հիմն է սա այլոցն ամենայնի խոկմանց, զորով յանտեսելն՝ կրթութեանն վաստակ ողջոյն ծախեսցի ընդվայր, նաև բովանդակ իսկ երանական կեանք կրօնաւորութեանն փոխեսցի'ի թշուառութիւն կորստական. քանզի առանց սորա երբէք ոչ կարասցէ կրօնաւորն ժամանել'ի ծայրագոյն կատարելութիւն, որ է վախճան այսր կրթութեան և կրօնաւորական կենաց։

ԻՂՁԲ

Ա. Պարտ է զարթուցանել'ի սրտի ներզործութիւն՝ ա. Գոհութեան ընդ երախտիս կոչմանդ՝ որում արժանացեալ ես... քան զարժանաւորսն քան զքեզ... անտեսութեամբ մեղաց քոց... կոչեցեալ'ի կրօն ուխտիս հոչակելոյ բազմադէմ բարեմասնութեամբ։ բ. Ցաւոց՝ վասն զտանելոյդ ցայս վայր անփոյթ կանոնաց, վասն ուխտաղանցութեանցդ, վասն ապախտաւորութեանդ թեակոխելոյ'ի կատարելութիւնս, միանգամայն ասել՝ վասն պակա-

սելոյ քո 'ի պարտուց սրբոյ կոչմանդ, և վասն ոչ վաստակելոյ քո եռանդագին 'ի փրկութիւն հոգւոց։ գ. Սիրոյ և փառաբանութեան ընդ մեծահրաշ նախախնամութիւնն Աստուծոյ որ զքեզ զթութեամբ պահպանեաց ցայսօր 'ի նաւահանգստի ուխտիս պատսպարեալ զքեզ 'ի վտանգաց յամենայն ճանապարհս քո, նա ևս յորժամ ընդդէմ դարձեալ դու նմա ապարթանէիր։ դ. Ուխտ եղեալ անձին ծառայելոյ նմա յայսմ հետէ առաջնորդեալ 'ի կամաց նորա. այս է՝ յայն աստիճան առաքինութեան զոր ուսուցէ քեզ յայսոսիկ աւուրս կրթութեան։

Բ. Բայց ոչ է պարտ յամել ընդ երկար յայսոսիկ չորեսին ներգործութիւնս, այլ զամենայն ջան պարտ է 'ի գործ արկանել 'ի ստացումն անխտիր համակամութեան առ ամենայն վայրս, առ ամենայն աստիճանս, առ ամենայն պաշտամունս և առ տկարութիւն և քաջողջութիւն առ հատարակ, զգուշացեալ առ ժամն ի՛ջանելոյ յառաձին դէպս մանունս, որ զժուարին իսկ է յոյժ և մեծապէս ներհակակիր անձնասիրութեան։ Քանզի 'ի սկզբան տկար է կամքն և անկարող 'ի գործ. վասն որոյ պարտ է երանել ընդ աստիճան, մինչև զօրասցի շնորհօք օր ըստ օրէ և այնպէս սպառազինեալ քաջասցի ընդհարկանել սոցուն միայն ընդ միայն և յաղթանակել։

Գ. Պարտ է երկարել և 'ի խոկումն ճըշ-

մարտութեան հաւատոյ, որով հաւատամք աներ կբայ՝ եթէ որ ինչ դէպք պատահին մեզ, եթէ 'ի հրամանէ մեծաւորաց և եթէ 'ի պատահարաց արտաքնոց, 'ի կամացն Աստուծոյ են տնօրինեալք յօդուտ մեր, և վասն այնորիկ են նոքին գործք յոյժ պատշաճականք առ հանել ածել զմեզ առ մերն վախճան. քանզի Աստուած որ ասաց. Այս է մարմին իմ, ասաց դարձեալ. Որ ձեզ լսէ, ինձ լսէ։ Արդ եթէ հաւատամք առաջնոյն, էր երկմտիցիմք ընդ ճշմարտութիւն երկրորդին։

Աներ կբայ հաստատութեամբ հաւատամք ևս վարդապետութեանցս այսոցիկ. ա. Եթէ Աստուած է ամենագէտ. ապա գիտէ եթէ ո՞ր տեղի, որ պաշտօն, որ աստիճան, որ ազգ առողջութեան կենաց իցէ մեզ պատշաճական։ բ. Եթէ է ամենազօր. ապա կարէ տալ մեզ զանկաւորն։ գ. Եթէ սիրէ զմեզ յանչափս, ապա հաւաստի իմն է եթէ տացէ մեզ զկարևորսն, զի հասցուք 'ի վախճանն առ որ կարգեալ է զմեզ։ Կենդանի հաւատք 'ի վերայ ճշմարտութեանցս այսոցիկ խրախուսեսցէ զմեզ յանխտիր համակամութիւն. միայն եթէ խնդրեսցուք ջերմեռանդն աղօթիւք յԱստուծոյ մեզ զսոյն։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ա. Վախճան կրօնաւորի՝ որ պարտպէ ի փըրկութիւն անձին և այլոց, է միա դնել ընդ փրկութեան հոգւոյ իւրոյ, նա և կատարելութեան և փրկութեան հոգւոյ ընկերին։ Յոյժ դերազանց, լի օգտութեամբ և երջանիկ վախճան։ Ա. Գերազանց է, զի այս իսկ էր արտաքին պատճառ գործոցն Աստուծոյ. եթէ և մեք ի նոյն բերիցիմք, լիցուք գործակիցք փրկութեան մարդկան։ Բ. Լի է օգտութեամբ վասն արդեանցն, շնորհացն և փառացն յորս վայելեսցուք։ Գ. Երանական, զի վայելեմք ի խաղաղ կեանս և մեռանիմք գոհք։ Բայց արժան է գիտել և զայն՝ եթէ պարտ է վաստակել ըստ Աստուծոյ կամացն, այսինքն ըստ յեղանակին և ըստ չափուն զոր հաճեսցի և սահմանեսցէ ինքն Աստուած։

Բ. Պատշաճականքն ձեռնտուք առ այս վախճան են այլ և այլ. սերդին, ասպիճանք, պաշտօնք, և կարողութիւնք հոգւոյ և մարմնոյ. որովք հնար է հոգալ զփրկութիւն անձին և այլոց։ Գիտելիք. Ա. Զի գոլով սոցա պատճառք ձեռնտուք փրկութեան, պարտ է փափաքել նոցուն ցորվայր օգնեն մեզ. և խորշել յորոց ինքեանն։ Բ. Զի այսոքիկ վայրք, պաշտամունք, ասպիճանք, են, են առիթք փրկութեան, քանզի սոքօք կարեմք կատարել զկամս Աստուծոյ։ Գ. Քանզի սոքին են առիթք պատշաճականք, ի սոցանէ այն է պատշաճագոյն, զոր կամիցի Աստուած զի արկցուք ի կիր։

Գ. Յայտմ ամենայնէ արժան է զհետ բերել՝ եթէ պարտ է կրօնաւորի ծառայել Աստուծոյ 'ի կրօնի՝ յասպիտանի անդ, 'ի պաշտաման, 'ի տեզուոջ, 'ի տկարութեան կամ 'ի քաջողջութեան, յոր կոչեսցի յԱստուծոյ և 'ի մեծաւորէն, որոյ հրամանք են յանուն Աստուծոյ: Եւ զի առանց այսր անխտիր համակամութեան առ ամենայն գործ՝ ոչ է հնար հասանել 'ի կատարելութիւն, և ոչ այլոց առաջնորդել:

Ընկերցիր

Թովմ. Գեմբ. Գիրք Գ. Գլ. 10:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Անխտիր համակամութեան տեղոյ, պաշտաման, ատիճանի և տկարութեան և առողջութեան.

Քանզի զէտք այսր անխտիր համակամութեան է անհրաժեշտ՝ իբրև զհիմն հաստատութեան շինուածոյ, զորով զանց արարեալ՝ լինիցի անկանգնելի շինուածն կրթութեան, և զի է ևս յոյժ զժուարակիր, որում ընդդէմ դիմեալ է սէր անձին ամենայն զօրութեամբ չտալոյ բնաւ տեղի, և զի վաստակի ամենայն ճգամբք 'ի տապալել զնոյն, վասն որոյ եղի 'ի մտի յառաջ բերել զայլ և այլ համոզկեր պատճառս, որ-

պէս զի զօրութեան բախմանն տեղի տը-
ւեալ կամացն, յանձն առնուցու զպար-
տութիւն։ Քանզի կամիմք ծախել զայս ա-
ռաջին օր լրիւ յայս խոկումն։

Ա. Առաջին պատճառ՝ որ այսպէս զը-
ժուարին ցուցանէ մեզ զայս ոսկեղինիկ
համակամութիւն, է երկիւղն վաստակոց
և վշտաց և անարգանաց և հիւանդութեանց,
որոց հասանէ մեզ տանել յայնմ տեղւոջ,
'ի պաշտաման, և յաստիճան առաքինու-
թեան, և այնպէս մատնիլ յաղէտս։ Ա.րդ 'ի
բառնալ զայս երկիւղ 'ի սրտից, անհետաս-
ցին և ամենայն խոչքն համակամութեան։

Ա.րդ զառաջինն բուռն հարեալ 'ի փա-
րատել զերկիւղն հիւանդութեան, կար-
ծիցես թերևս թէ Աստուած ոչ կարասցէ
պատժել զքեզ հիւանդութեամբ նաև 'ի տե-
ղւոջ և 'ի պաշտաման անդ՝ որում փափա-
քեսն, և պահել զքեզ քաջառողջ և յու-
ժի 'ի տեղւոջ անդ և 'ի պաշտաման՝ յորմէ
խուսափես։ Եւ ոչ անկանի 'ի միտս քո
կասկած երկիւղի՝ եթէ մի գուցէ պատժե-
ցէ Աստուած զքո զայդ հեստութիւն։ Եւ
իբր չիցէ արժան յուսալ առ Աստուած վար-
ձատրելոյ զհամակամութիւն քո պահելով
զքեզ 'ի քաջողջութեան։...

Եւ զարձեալ եթէ Աստուած տէրն կե-
նաց և մահու կամի կալ քեզ 'ի հիւանդու-
թեան, իբր կարասցես զու հակառակ ելա-
նել ամենաղօր կամաց նորա։ Ո՞չ լաւ ևս
իցէ կալ 'ի հիւանդութեան ըստ կամաց նո-

բա, քան 'ի քաջողջութեան ընդդէմ կամաց նորա։ Ապա այսոքիկ հրապոյրք են անձնասիրութեան, որ բաղբաղէ զհիւանդութիւն։ Սակայն և այնպէս չէ քեզ արգելեալ առաջի առնել մեծաւորացդ զկասկած երկիւղի հիւանդութեան, կալով յամենայնի պատրաստ 'ի լրումն հրամանաց նոցա՝ յետ լուծանելոյ զքո զերկմտութիւն։

բ. Եւ եթէ խուսափիցես 'ի վաստակոց, 'ի վշտաց, 'ի տառապանաց, 'ի տաղտկալեաց, և 'ի հոգոց ծանունց, կարծիցես եթէ Աստուած ոչ կարասցէ փոխարինել նոցուն լիով երկնաւոր միխիթարութեամբք, լիութեամբ շնորհաց, յաջողութեամբ գործոց, զերծուցեալ զքեզ յես մեծագոյն վրշտաց և յանձկութենէ զորս մնայր քեզ կրել այլուր։

Եւ միթէ Աստուած չիցէ՞ կարող 'ի պատուհաս քեզ 'ի զառնագոյն վիշտս քան յորոց խուսափեսն տաղնապել զքեզ 'ի տեղոջ և 'ի պաշտաման՝ առ որ բերիս անձկով։ . . . Եւ զիաւրդ ոչ երկնչիս իրաւամբք եթէ մատնեսցիս 'ի նոսին։ Արդ անձին զդաստլեր, և հանդիր յամենախնամ կամս Աստուծոյ համակամութեամբ։

գ. Որ ինչ ասացաւ զվաստակոց, իմա և զանարգանաց յորոց երկնչիս. եթէ զու տանիցիս զնոսին զոհութեամբ, ընկալցիս յԱստուծոյ 'ի փոխարէն զլիութիւն շնորհաց, զքաջողջութիւն, զմխիթարութիւն սրտի և զսփոփումն մտաց։ Ո՜վ, քանիք

կարծեալ ճեմել պսակաղարդ յայն ինչ պաշտաման, լցան նախատանօք և անարգանօք. քանզի որք յընկերութեան էին սիրեցեալք և պատուեալք, 'ի մեծաւորութեան եղեն նախատ ամենեցունց։

Ամենեքին սոքա 'ի պատուհաս արդար, մատնին յԱստուծոյ 'ի նախատինս, յախտս տկարութեան և 'ի ծանր վաստակս՝ ուր կարծէին հանդիպել փառաց, և կեալ 'ի հանգստի և 'ի քաջողջութեան։ Այսպէս Համան 'ի ցանկութեան զերաստիճան փառաց՝ եղ 'ի կախաղան։ Սապէս Ղոմտ ընտրեաց զյուութի հովիտան Սոդոմայ, յորմէ եթէ ոչ աճապարէր 'ի փախուստ, ճարակ լինէր և ինքն տեղացելոյ հրոյն։ Նոյնպէս և Ոքոզիա, 'ի խուսափելն 'ի ձեռաց Աստուծոյ և 'ի հիւանդութենէ, ընթացաւ 'ի մահ, և ընկալաւ զդառն զատակնիք իւրոյ մահուանն յԵզրիայէ. Մահու մեռցիս։

Եւ զինչ, միթէ ոչ պատահէ յանախ, յետ տագնապելոյ և տառապելոյ առ 'ի զերծանել 'ի պարտուց հնազանդութեան, տեղի տալ բռնադատութեան հարկին և առնել ակամայ զայն ինչ, զոր ոչ կամիս առնել մտադիւր յօժարակամ։ Վասն զի եթէ կամիցիս և եթէ ոչ, պարտ է յամենայնի կատարել կամացն Աստուծոյ։ Հրամանն Աստուծոյ եղև առ Յովնան երթալոյ 'ի Նինուէ և քարոզելոյ. նա երկուցեալ զի 'ի ներել նոցա Աստուծոյ, ինքն կրէր զանարգանս, չէառ յանձն, և փախեաւ 'ի տե-

զոջէն։ Եւ իսկ՝ հնար ծածկիլ յաչաց Աստուծոյ. կալաւ զնա 'ի ծովուն, ընկղմեաց, ետ զնա կլանել ձկան, և յետ բազում տառապանաց, փրկեաց զնա, և երկրորդեաց առ նա զհրամանն. «Եղև բան Տեառն առ Յովնան երկրորդ անգամ», որ պատուէր տայր նմա երթալ 'ի Նինուէ։ Հնազանդեցաւ, զնաց. բայց յետ այնչափ տուգանաց վչտաց, յորոց մնայր զերծ, եթէ հնազանդեալ էր առաջնոյ հրամանին։

Բ. Յաղթեալ մեծի խափանացն, առ և ևս յորդորագոյնս առնել զմեզ 'ի սոյն, տեսցուք և զվայելս երջանկութեանն՝ յոր հանդչի անձն համակամ։ Եւ քանզի ոչ ցանկութեան փափաքանօք բերի առ իմն, և ոչ երկուցեալ հրաժեշտ տայ յիմէ, վասն որոյ վայելէ յերկնային իմն խաղաղութեան, զերծ կալով յերկուց հակառակ կրից՝ տագնապին և երկիւղի, որք են աղբիւրք ամենայն ալեկոծ յուզմանց ծփանաց մտաց. տագնապն առ 'ի ձեռս բերել որում փափաքէ, և երկիւղն կորուսանելոյ զորս 'ի ձեռին ունի։

Որ ոչ մի ինչ իրաց ցանկայ, նա է մեծատուն քան զամենայն մարդ յաշխարհի. զի յինքն բարձեալ բերէ զհոխութիւն, և է ինքնիշխան տէր անձին։ Այս է մեծաւորագոյն մեծաւորաց իւրոց. զի է անխախիր համակամ առ ամենայն ինչ, և չունի պէտս նը-պաստից յումեքէ։ Լի է բերկրանօք 'ի հաւատս՝ եթէ կայ 'ի վայրն և 'ի պաշտաման

յոր կարդեալ է զնա Աստուծոյ. և վստահ յօդնականութիւնն Աստուծոյ, զիմէ առ նա յամենայն դժուարինս, յամենայն վաստակս և յամենայն յաղէտս վշտաց։ Անվրդով հանդուցեալ 'ի զիրկս նախախնամութեանն Աստուծոյ, ասէ ընդ մարգարէին. «Ցէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցի»։

Կայ յերկրի 'ի դասս երկնայնոց՝ զհրեշտակացն բերելով զնմանութիւն. զի որպէս հրեշտակքն Աստուծոյ կան միշտ պատրաստք 'ի լսել ձայնի պատգամաց նորա, յօժարակամք յամենայնի հսկելոյ անխտիր 'ի պահպանութիւն ազգատի և մեծատան, քրիստոնէի և անհաւատի, և 'ի մատուցանել յերկինս զաղօթս ամենայն սրբոց առաջի աթոռոյն, և առ 'ի հեղուլ յերկիր զեօթն սկաւառակսն ցասմանն Աստուծոյ. այսպէս և սա ինքն անձն երանելի կայ պատրաստ յամենայնի իբրև զհրեշտակ Աստուծոյ 'ի լնուլ զակնարկութիւն կամաց Աբարչին իւրոյ, որ է միայնակ վախճան ամենայն գործոց իւրոց։ Եւ ո՞ կարասցէ չափ զնել երանութեանն յոր վայելէ նա և յերկրի աստ։

Իսկ զրկեալն 'ի ցանկալի առաքինութենէ աստի նման է մրրկալից ծովու՝ յուզեալ հանապազ յանթիւ հոգս և 'ի բաղմադէմ ալեկոծութիւնս խորհրդոց։ Պարտի խոնարհիլ, նուաստանալ, վաստութեամբ շողոմել զանձինս, զի ձեռն տայցեն իւրոցն

անձնահաճ բաղձանաց, և կամ զի մի խա-
փան լինիցին։ Եթէ ձախողակաց ինչ հան-
դիպեսցի, հարեալ 'ի խղճին՝ ոչ ժամ կար-
դալ զԱստուած յօդնութիւն, քանզի զիտէ
եթէ ինքն ակնկալութեամբ բարեաց հան-
դիպելոյ՝ հնարիւք եհաս յայն պաշտօն, ո-
րով մատնեցաւ յայնչափ տառապանս վըշ-
տաց։ Եւ վկայեն միտք իւր եթէ Աստուած
առ 'ի պատուհաս փոխէ նմա զայն 'ի դատ-
նութիւն, յոր առ 'ի վայելել, ոչ առ յանձն
գնալ զհետ կամաց նորա։ Թերևս և դու 'ի
սոյն կիրս կաս . . . և դեռ ևս ոչ ածէ զքեզ
այդ 'ի զգաստութիւն։ . . .

Ցեռասամիտ դու, զիարդ ոչ երկնչիս
յանկանելոյ 'ի փորձութիւնս՝ թոյլ տալովն
Աստուծոյ, յայդ քո ցանկացեալ պաշտա-
մանդ, եթէ զուցէ անկցիս և 'ի ծանր ինչ
յանցանս. այն զի 'ի հպատակել քո կա-
մաց նորա, ոչ թողոյր քեզ անկանել. ոչ
երկնչիս եթէ յայդ պաշտօն, որում զհետ
մտեալ ես հասանել, բարձցէ 'ի քէն զշը-
նորհսն կարևորս առ բարւոք 'ի զլուխ հա-
նել զնոյն։ Իսկ յանդգնիս կեալ 'ի տեղւոջ
անդ և կամ 'ի պաշտաման՝ յոր ոչ ես կո-
չեցեալ յԱստուծոյ։ Ոսկր ինն ես խախ-
տեալ 'ի յօդուածոյն, կացցես միշտ 'ի ցաւս։
Ասա, աղաչեմ, իցեն զոհ զի հասեր միշտ
առ որ ցանկայիրն. զի զհետ կամաց քոց
գնացեր հանապազ։ Եղո՛ւկ, առ ինչ օգ-
տեսցեն քեզ դոքին։ Որոց վարձուց մեաս-
ցես յԱստուծոյ զի լցուցեր՝ ոչ զկամս Աս-

տուծոյ, այլ զքոյդ։ Երկիր, զի «Անիծեալ լիցի մարդ, որ ապաստան լինիցի 'ի մարմին բազկի իւրոյ»։

Ապա արիացեալք 'ի հոգիս նորոգեսցուք զհիմնական զուխտ սրտից մերոց՝ զոր ցայսվայր յեղ յեղեցաք այսօր։ Ծառայելոյ յայսմհետէ Աստուծոյ յայն վիճակ կենաց ընդ որ հաճեսցի ինքն, կամ՝ զոր ընտրեալ իսկ իցեմք. յայն աստիճան կատարելութեան, յայն պաշտաման, յայնմ վայրի յառողջութեան կամ 'ի հիւանդութեան, յոր առաջնորդեսցէ մեզ. եղեալ հաստատութեամբ 'ի մտի, զի զոր յայսմ կրթութեան պահանջեսցէ 'ի մէնջ Աստուած, զայն արասցուք, և զորս ոչ կամիցի՝ զայնոսիկ յանձանց 'ի բաց մերժեսցուք. զոր կամի զործել՝ զործեսցուք, և զորովք անտես առնել, անտես արասցուք։

Գ. Եւ առ 'ի հաստատութիւն ուխտիդ, զիր քաջ 'ի մտի՝ զի մասն է հաւատոյ՝ ոչ իմիք պատահել յաչխարհի ըստ զիպաց, այլ զի 'ի տնօրէնութենէն Աստուծոյ ամենայն ինչ հանդերձի, որ յանհունս սիրէ զմեզ, և աստուածային իմաստութեամբ իւրով «Դարմանէ զամենայն քաղցրութեամբ». միա զիր, «Զամենայն քաղցրութեամբ»։ Եւ վասն այնորիկ յԱստուծոյ քեզ սահմանեցաւ 'ի ձեռն մեծարուրաց և այս հիւանդութիւն. և այսոքիկ տառապանք վչտաց հասանեն քեզ 'ի ձեռաց նորա։ Լեր հաւատի եթէ Աստուած, նա ինքն Ա-

տուած միայն է՝ որ կամի զի կացցես 'ի տեղւոջ անդ, զի յանձն լիցի քեզ այն պաշտօն, զի խոշտանգեսցիս յայնմ՝ հիւանդութեան և յանձկութեան, զի դուն զիցես հասանել յայն աստիճան կատարելութեան։ Եւ դու երկմտիս տակաւին. և ասես թէ այդոքիկ եկին հասին 'ի գլուխ քո 'ի չարաբուեստ նախանձու, 'ի գժկամակ մեծաւորաց, 'ի թշնամեաց հակառակորդաց, 'ի վրէժխնդրութեան քինու, և յատելութենէ այլոց։ Այլ գուցէ 'ի խաբս կայցես 'ի կոյր դատաստան մտաց քոց. և չիք երկմտել ընդ այն զի խաբիս յաճախ։ Բայց շնորհեալ քեզ ճշմարիտ զոլ զորոյ զանգատիսն, և զի լցեն նոքին պատճառք վշտացդ։ Եւ զինչ այտի. վկայեմ՝ քեզ զի թշնամիք քո ծանունս մեղանչեն, և անկցին 'ի ներքոյ դատաստանացն Աստուծոյ։ Սակայն և այնպէս լեր հաւաստի, զի թէպէտ Աստուած ատեայ զմեզս, բայց կամի զորս զհետն զան 'ի մեզաց. վասն որոյ վայրն այն, և պաշտօնն, և չարակրութիւնքն են 'ի կամացն Աստուծոյ տնօրինեալք քեզ, թէպէտ և պատճառեալք 'ի մեզաց այլոց։

Ասէր Աստուած զգործ վաճառողացն Յովսեփայ, բայց հաճ էր ընդ կալ մնալ Նորա յԵգիպտոս և ընդ բարձրանալ Նորա 'ի փառս։ Վասն որոյ ասէր Յովսէփ ցեղբարսն. «Ի փրկութիւն առաքեաց զիս Աստուած առաջի ձեր»։ Մի՞ զիր, ոչ նախանձ եղբարցն, այլ Աստուած։ Սատա-

տուծոյ, այլ գթոյդ։ Երկիր, զի «Անիծեալ լիցի մարդ, որ ապաստան լինիցի 'ի մարմին բազկի իւրոյ»։

Ապա արիացեալք 'ի հոգիս նորոգեսցուք զհիմնական զուիտ սրտից մերոց՝ զոր ցայսվայր յեղյեղեցաք այսօր։ Ծառայելոյ յայսմհետէ Աստուծոյ յայն վիճակ կենաց ընդ որ հաճեսցի ինքն, կամ զոր ընտրեալ իսկ իցեմք. յայն աստիճան կատարելութեան, յայն պաշտաման, յայնմ վայրի յառողջութեան կամ 'ի հիւանդութեան, յոր առաջնորդեսցէ մեզ. եղեալ հաստատութեամբ 'ի մտի, զի զոր յայսմ կրթութեան պահանջեսցէ 'ի մէնջ Աստուած, զայն արասցուք, և զորս ոչ կամիցի՝ զայնոսիկ յանձանց 'ի բաց մերժեսցուք. զոր կամի զործել՝ զործեսցուք, և զորովք անտես առնել, անտես արասցուք։

Գ. Եւ առ 'ի հաստատութիւն ուխտիդ, զիր քաջ 'ի մտի՝ զի մասն է հաւատոյ՝ ոչ իմիք պատահել յաշխարհի ըստ զիպաց, այլ զի 'ի տնօրէնութենէն Աստուծոյ ամենայն ինչ հանդերձի, որ յանհունս սիրէ զմեզ, և աստուածային իմաստութեամբ իւրով «Դարմանէ զամենայն քաղցրութեամբ». միտ զիր, «Զամենայն քաղցրութեամբ»։ Եւ վասն այնորիկ յԱստուծոյ քեզ սահմանեցաւ 'ի ձեռն մեծաւորաց և այս հիւանդութիւն. և այսոքիկ տառապանք վշտաց հասանեն քեզ 'ի ձեռաց նորա։ Լեր հաւատի եթէ Աստուած, նա ինքն Ա-

տուած միայն է՝ որ կամի զի կացցես 'ի տեղւոջ անդ, զի յանձն լիցի քեզ այն պաշտօն, զի խոշտանգեսցիս յայնմ հիւանդութեան և յանձկութեան, զի դուն զիցես հասանել յայն աստիճան կատարելութեան։ Եւ դու երկմտիս տակաւին. և ասես թէ այդքիկ եկին հասին 'ի գլուխ քո 'ի չարաբուեստ նախանձու, 'ի դժկամակ մեծաւորաց, 'ի թշնամեաց հակառակորդաց, 'ի վրէժխնդրութեան քինու, և յատելութենէ այլոց։ Այլ դուցէ 'ի խաբս կայցես 'ի կայր դատաստան մտաց քոց. և չիք երկմտել ընդ այն զի խաբիս յաճախ։ Բայց շնորհեալ քեզ ճշմարիտ զոլ զորոց զանդատիսն, և զի իցեն նոքին պատճառք վշտացդ։ Եւ զինչ այսի. վկայեմ քեզ զի թշնամիք քո ծանուցեալ մեղանչեն, և անկցին 'ի ներքոյ դատաստանացն Աստուծոյ։ Սակայն և այնպէս լեր հաւաստի, զի թէպէտ Աստուած ատեայ զմեզս, բայց կամի զորս զհետն զան 'ի մեզաց. վասն որոյ վայրն այն, և պաշտօնն, և չարակրութիւնքն են 'ի կամացն Աստուծոյ տնօրինեալք քեզ, թէպէտ և պատճառեալք 'ի մեզաց այլոց։

Աստէր Աստուած զզործ վաճառողացն Յովսեփայ, բայց հաճ էր ընդ կալ մնալ նորա յԵգիպտոս և ընդ բարձրանալ նորա 'ի փառս։ Վասն որոյ ասէր Յովսէփ ցեղբարսն. «Ի փրկութիւն առաքեաց զիս Աստուած առաջի ձեր»։ Միտ դիր, ոչ նախանձ եղբարցն, այլ Աստուած։ Սատա-

նայն չարչարէ զՅովբ'ի վիշտս, և Յովբ ա-
զաղակէ. «Տէր ետ և Տէր էառ», և ոչ սա-
տանայ։ Թէպէտ և անդոսնէր Աստուած
զկատաղութիւն Հրէից, բայց զատակընդ-
քեալ էր զմահ որդւոյն. և ինքն Յիսուս ա-
սէր ցՊետրոս. «Զբաժակն զոր ետ ինձ
Հայր ո՞չ ըմպիցեմ»։ Ոչ ասէ, զբաժակն 'ի
Հրէից ընկալեալ, այլ 'ի Հօրէն։

Արդ թէպէտ և անարդէ Աստուած
զատելութիւն միաբանիցն և զանխորհուրդ
դնացս մեծաւորաց, և զմախանս նախան-
ձայուզից. բայց կամի զի տարցես դու զբր-
կանացն այնոցիկ և անձկութեանց, որք
հասանեն քեզ 'ի նոցանէ։ Թող զոր կամի
ասասցէ աշխարհ, թող քրթմնջեսցէ անձ-
նասիրութիւն, բայց կատարեսցին 'ի քեզ
կամքն Աստուծոյ, կալով խոչտանգեսցիս
յայնմ հիւանդութեան. այս են կամքն Ա-
ստուծոյ։

Եւ կամի այսպէս, (ով հրեշտակք
սուրբք, օրհնեցէք զանբաւ բարութիւն նո-
րա), այսպէս կամի՝ զի քեզ բարի լինիցի.
և որպիսի՞ բարութիւն. եթէ կարէիր մտա-
նել 'ի խորս նախախնամ զթոյ նորա, դու
ինքնին զնոյն խնդրէիր վասն քո, և ոչ
ինչ այլ։ Լուր և զպատճառսն։ Կատարե-
լութիւն մտաց նորա անչափ է, զիտէ որ
ինչ իցէ քեզ կարեւոր. «Զի ամենայն ինչ
մերկասլարանոց կայ առաջի աչաց նորա»։
Եւ ինքն կարէ տալ քեզ զոր առաւել ան-
կաւոր ճանաչէ քեզ. և կարէ, քանզի «Մօտ

է առնես յորժամ կամիցի կարող լինել »։ Ապա և քեզ տացէ առաւել զանկաւորն քեզ, զի սիրէ զքեզ «Իբրև զբիբ աչաց իւրոց, և որպէս մայր զմանուկ իւր». արդ որ ինչ անցք անցանեն ընդ քեզ, են 'ի նպաստ քեզ այնոքիկ մեծապէս։ Այս այսպէս է. «Աստուած զօրութեանց զամենայն չափով և թուով և կշռով կարդէ»։ Եւ ոչ այսչափ միայն. այլ ևս «Բազում քաղցրութեամբ զարմանէ զմեզ»։ Զչարն 'ի բարին փոխեալ, «Առնելով ընդ փորձութեան և զելսն»։ Ապա արկ զքեզ 'ի զիրկս ամենազութ խնամոցն Աստուծոյ անխտիր համակամութեամբ յամենայնի։ Հանգիր անդէն 'ի զրկին ասելով ընդ Նախահօրս մերում. Ցէր, արա ընդ իս որպէս զիտես և որպէս կամիս. զի ճանաչեմ թէ մարդասէր ես։

ԲՆՆՈՒԹԻՒՆ

Խոյից խափանչաց անխտիր համակամութեան

Քանզի սահմանեցաք ծախել զօրս զայս ողջոյն 'ի խոկմունս այսր աստուածապարգև անխտիր համակամութեան, կարևոր դատիմ առնուլ 'ի քնին առանձինն զխոչս ընդդիմակս, զորս 'ի բաց արարեալ՝ կարեմք զիւրաւ յանձինս բերել զայս հիմնա-

կան առաքինութիւն։ Արդ 'ի վերջին քա-
ռորդ խորհրդակցութեան կամ ընթերցման
քննեա ուշիւ մտաց,

Ա. Ո՞ր ինչ յարարածականաց զքեզ ա-
ռաւել յինքն յանկուցանէ։ Ո՞ր այն ախ-
տաւոր բերումն առաւել անկակից է 'ի քեզ։
Ո՞րք են դժնդակքն որք առաւել քան զայլս
զանգիտեցուցանեն զմիտս քո։ Ո՞րք իցեն
մեծապէս խոչընդակ կամացդ 'ի մուտս կա-
տարելագոյն վարուց և ծառայութեանն
Աստուծոյ՝ հպատակելով յամենայնի կա-
մաց նորա. այսինքն 'ի մտանել յայն վի-
ճակ կենաց յոր զքեզ կոչէ. կամ յայդմ
կոչմանդ զոր ընտրեալ ես անձինդ, ելա-
նելոյ յայն աստիճան առաքինութեան, յո-
րում կամի զի ամբարձցիս եռանդագին
ջանիւ։

Բ. Ո՞ր այն ինչ է որ զքեզ առաւել բուռն
յետս ընկրկէ յայնմ ոսկեղինիկ անխտիր
համակամութենէ։ Եթէ ցանկութիւն մար-
մնոյ, կամ ցանկութիւն աչաց և կամ ամ-
բարտաւանութիւն աստի կենաց. այսինքն
իղձ պատուոյ, կամ հետամտութիւն հեշտա-
կանաց և անդորրութեան, կամ թէ սէր
ճոխութեան։ Գուցէ աւելազանց խորհրդմն
'ի վաստակոց, 'ի ճախողակաց և յանար-
զանաց։ Ծանեաւ արդեօք զյարդ պիտոյիցն
և զզերազանցութիւն աստուածայնոյս այ-
սորիկ անխտիր համակամութեան։ Գտնեա
փափաքիցես յամենայն յանձնէ առաքի-
նանալ 'ի նոյն։

Գ. Գիտնեա եթէ ուստի՞ իցէ 'ի քեզ այդ խորշումն կամ բերումն առ այն տեղի կամ առ այն պաշտօն. թերևս յինքնահաճ վիսութենէ, կամ 'ի զգայական ինն բերմանէ, և կամ 'ի սիրոյ աւելորդաց, կամ 'ի փութոյ պահելոյ զքաջողջութիւն, և կամ առ 'ի հաստատել 'ի նոյն, և կամ դարձեալ յերկիւղէ կորուսանելոյ զայն։ Եւ ես զուցէ երկիւղն համառօտելոյ զկեանս քո պատճառս տայցէ քեզ խուսափելոյ յայս և յայն վաստակոց կարգելոյ 'ի փրկութիւն հոգւոյ, և 'ի գործոյ որք մեծացուցանեն զփառս Աստուծոյ։

Դ. Իցեն արդեօք պատրաստ առ այն ամենայն զոր ծանիցես թէ պահանջէ 'ի քէն Աստուած, յետս կալ յայսմանէ, բուռն հարկանել զայնմանէ, լքանել կամ 'ի գործ դնել զայս և զայն, որպիսի ինչ հաճոյ թուեսցի յաչս նորա։ Կամ թէ կամիցիս թերևս չափ դնել շնորհացն Աստուծոյ, և յամառեալ 'ի միտս քո՝ չառնուցուս յանձն լուսաւորիլ առաւելսն և յառաջ ևս անցանել։

Եթէ զուցես ինչ զժուարակնճիռն 'ի միտս քո 'ի գնոութիւնս յայսոսիկ, զմտաւած զի ստեղծեալ ես յԱստուծոյ և վասն Աստուծոյ, և վասն այնորիկ պարտիս ծառայել նմա գնալով զհետ կամաց նորա։ Եւ ո՞ իցես դու, զի արտաքս ոստուցեալ 'ի միայնակ յանխոտոր ուղղոյն ոչ յանձն առնուցուս դնել 'ի գործ զայն՝ զոր պահանջեսցէ 'ի քէն կարողութիւնն Աստուծոյ։

Ծանիր. Երբ չիցես ընթերցեալ երեկ զազդ-մուելս չորրորդի յօդուածոյն, զոր պարտիս 'ի գործ դնել յընթացս կրօնբերեալս, ընթերցուր զնոսին այսօր.

ԽՈԿՈՒՄՆ Գ.

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ԵՐԿՈՒՑ ԱՌԱՋՆՈՅ ԽՈԿՄԱՆՑ

Ազդ

Այսպէս 'ի վեր և 'ի վայր յեղյեղելոյ զայսոսիկ նախնական խոկմունս կրկին պատճառք են, ա. Զի ճշմարտութիւնք այնչափ առաւել 'ի խորս տպաւորին 'ի միտս, որչափ առաւել՝ ոք խոկասցէ զայնցանէ։ բ. Զի կամքն զարձադարձ բուռն ձգեալ առ ընդդրկել զնոսին, դամ՝ քան զդամ՝ հաստատեսցի յառաջին ուխտ մը-տացն։ Իբր զի 'ի կրկնելն զխոկումն՝ կաբասցէ ոք ժողովել զարդիւնսն՝ զոր տկաբանայր 'ի սկզբան։

Յայսոսիկ կրկնութիւնս, որք իբրև զոբոճումն են առաջնոց խորհելոցն, երկուք այսոքիկ զոն արժանի մտադրութեան. ա. Պարտ է նորոգ յակն արկանել զմասունս առաջնոց խոկմանցն, մանաւանդ

զայնոսիկ՝ որք լոյս իմն եառուն մտաց մերոց կամ՝ զարթուցին զմեզ յեռանդն. զարձեալ և զայնոսիկ որք եղեն մեզ՝ի մխիթարութիւն, կամ՝ ի վհատութիւն, և կամ զայլ իմն ազդումն պատճառեցին՝ի մեզ։ Դարձեալ և զայնոսիկ մասունս, որք անճաշակք՝ի մէնջ մնացին ամենեին. հնարելով իմն տալոյ ազդումն սրտին. քանզի հնար իսկ է յառնուլն՝ի խորհել երկրորդ անգամ առաւել ևս լուսաւորիլ մտացն և լնուլ մխիթարութեամբ։ բ. Առաւել պարտ է յամել՝ի զարթուցանել զյօժարամտութիւն քան՝ի զրոյցս. զի այն իսկ պարտի լինել պըտուղ այսր կրկնութեան։ Զայս խրատ տայ մեզ կանոնագիրն յասելն. Յերկրորդելն զսոսին, զզուշացեալ յերկար զրուցաց՝ պարտիմք յիշատակել ևեթ իբրև յակն արկանելով զայն ամենայն, զորս խոկացեալ իսկ եմք յառաջագոյն, և յամել՝ի նոսին, ոչ այնչափ՝ի խոկալ միտ եղեալ, այլ առաւել՝ի զարթուցանել զկամս և զյօժարամտութիւն։

Ծանիր. Առանձանիչքն ցուցցեն քեզ զվայրապն, յորս առաւել յամել՝ի խոկումն ամենի իցէ. բոլոր զվերոյգրեալ տեղիս, յորս կարեւ յամել.

Մասն Ա.

Գոլով մեր ստեղծեալ յԱստուծոյ և վասն Աստուծոյ, բանն ինքնին ցուցանէ թէ պարտիմք ծառայել Աստուծոյ, և ծառայել զհետ գնալով կամաց նորա, զի այլն ամենայն որք ոչն զտանին զուղաձայնք աստուածային կամաց նորա, ոչ կարեն լինել նմին հաճոյական։

Ո՛վ Տէր Աստուած արարիչ ամենայնի, խոստովանիմ զի պարտական եմ ծառայելոյ քեզ իբրև ծառայ և իբրև քրիստոնեայ. Տէր Աստուած Փրկիչ իմ, դաւանիմ և ես, զի այս է միայնակ, կատարեալ, վերջին և դերագոյն զորձ և վախճան մարդոյ *։

Բայց որ զժոխըմբերն թուի և պատերազմող մտաց այս է, զի պարտ է առնել զայն ըստ քոց հաճոյից, և զի պարտ է ինձ լինել անխափեր համակամ ընդ ուղին՝ ընդ որ հրամայիցես գնալ առ հասանելոյ յիմ վախճան։ «Պատմեցից ինձէն զմեղս իմ», զի հակառակ կայ այսմ մարմին, անձնասիրութիւն և բնութիւնն զլխովին ապստամբ։ Որչափ առաւել պայծառ տեսանեն միտք, այնչափ առաւել 'ի տկարութեան տաղնապին կամք։ Ճանաչեմ զերանութիւն այսր երկնային անխտիր համակամութեան առ ամենայն ինչ, զգամ յանձին զաղղու տպաւորութիւն զարթուցիչ հնորհացն *. բայց ես «Այր տառապեալ. տե-

սանեմ զայլ օրէնս յանդամս իմ զինեալ հակառակ օրինաց մտաց իմոց *», որ բուռն առնէ ինձ խուսափել 'ի բարւոյն որում ցանկամ։ Զգամ յանձն զիարախոյս ազգա-կան՝ որ զիս բուռն ձգէ առ այս առաքի-նութիւն. զի զսոյն պահանջէ նախ զերա-կչիռ ուղղութիւն. քանզի և տէր որ չառ-նու երբէք յանձն ծառայել ինքեան իւրումն հպատակին այլազգ քան զոր ինքն հրա-մայեսցէ. և մեք իսկ տեսանիմք ընդ բարե-բարութիւնս անդամ՝ որ չիցեն լեալ ըստ ըղ-ձից մերոց։ Երկրորդ՝ դարձեալ յայտնի տե-սանեմ և քաջ 'ի միտ առնում՝ զի և օգուտ անձինս զսոյն պահանջէ. քանզի ամենայն գործք իմ բարիք և վաստակք, եթէ չիցեն ըստ կամացն Աստուծոյ, զրեսցին յոչ ինչ։ Երրորդ անդամ՝ ճանաչեմ ես զայն զի նա միայն կարէ վարել երջանիկ կեանս յաշ-խարհի, որ յամենայնի զԱստուածային ևեթ կամի կատարել զկամս։

Ա՛հ. հնչէ յունկն իմ զոչումն այն դա-տապարտելոց. «Զինչ շահ եղև մեզ հպար-տութիւնն, և զինչ մեծութիւն ամբարտա-ւանութեանն իցէ մեզ նպաստաւոր»։ Զինչ շահ մեծութիւն ամբարտաւանութեանն, և-թէ այնու կայ ինձ դատապարտել. և զինչ վնաս 'ի թշուառութեանց կրելոց, եթէ նո-քօք զոմից զփրկութիւն. այս ճշմարտութիւն է փուչ ինն սուր՝ որ հարկանէ զմիտս իմ *։ Այլ և այնպէս, (ո՛ յեսին իմոյ տկարու-թեան), խոյս տամ յայսմ երկնային հա-

մակամութենէ, առ որ բուռն ձգեն զիս ուղղադատութիւն, չահ, և երջանկութիւն իմ։ Հա՜պա, Տէր իմ, մի յամենար. զարթո զանձն իմ 'ի թմբրութենէ աստի իմէ. «Այրա զօրութիւն բազկաւ քով»։ Դու որ հողմոց և ծովու հրաման տաս, նուաճեա ընդ կամօք քովք և զայս զիմ կամս ապստամբ։

Այդ լուարուք երկինք զուխտն իմ զոր դնեմ ընդ անձին իմում հաստատութեամբ. «Լուիցէ երկիր զպատգամս բերանոյ իմոյ»։ Քանզի Տէր իմ և Աստուած իմ ես դու, յայսմ հետէ ծառայեցից ես քեզ, և ծառայեցից այնպէս՝ որպէս դու կամիս, յայն վիճակ կենաց՝ զոր սահմանեալ ես վասն իմ, կամ 'ի կոչմանն՝ յոր մտեալ իսկ եմ, յայն աստիճան կատարելութեան՝ զոր կամիցիս, պատրաստ առ 'ի մերժել յանձնէ և կամ բուռն հարկանել, լքանել կամ ունել 'ի զործ զայն ամենայն զոր ծանեայց յայսմ կրթութեան եթէ կամիցիս։ Դու Տէր ամենակալ, ձեռն ինձ տուր. զի ես ինձէն և ոչ քայլ մի ոտին կարեմ փոխել։

Յետ այսորիկ զարթո 'ի քեզ (բայց աառաել եռանդեամբ), զառաքինութիւնս զայնոսիկ և զիրձս՝ զոր և առաջի արարի յառաջին խոկման։

Մասն Բ

Այս անխտիր համակամութիւն եթէ կարեւոր է առ վախճան ամենայն մարդոյ, եւ առաւել առ վախճան առն կրօնաւորելոյ, զոր պարտի 'ի գործ դնել 'ի կատարեալ աստիճանի։ Այս այսպէս է, ով Տէր իմ Յիսուս Քրիստոս, կացուցիչ և օրինակ առաքելական կենաց։ Այո ոչ մի ինչ օգտեսցեն ինձ գերազանցութիւն, օգտակարութիւն, և երջանկութիւն վախճանիս այսորիկ, (որ է կատարելութիւն և փրկութիւն իմ և այլոց), եթէ ես ոչ կարդեցիցս զայն ըստ կարգաւորելոյ քո. այսինքն՝ այսու կամ այնու օրինակաւ, այսու կամ այնու չափով, յորս և որչափ կամիցիս վաստակել ինձ *։

Դարձեալ զի 'ի լուսաւորել մտացս յաստուածային լուսոյդ, ծանեայ քաջ եթէ 'ի կրօնի ամենայն վայրք, պաշտամունք և աստիճանք են առիթք, և առիթք պատշաճականք առ հասանելոյ յայս վախճան *։ Մանաւանդ՝ քանզի ըստ ամենիմաստ և ամենախնամ տնտեսութեանդ զիտես ընտրել միշտ զառիթս զիպողազոյնս առ հասանել 'ի վախճանն. վասն որոյ քաջ 'ի միտ առնում՝ թէ տեղին այն, պաշտօնն և աստիճան և տկարութիւն յորում կամ, կարդեալ 'ի հնազանդութենէ և 'ի կանխատես խնամոյդ, է առիթ պատշաճազոյն

առ 'ի ձեռս բերել զնոյն * ։ Ա.րդ քան զպայծառութիւն լուսոյ արեգականն առաւել փայլէ 'ի միտս իմ այս ճշմարտութիւն՝ եթէ պարտիմ լինել անխոտիր առ այս ամենայն * ։

Ա.յլ և այնպէս, ահա, « Դու զիտես զնախատինս իմ, զամօթ իմ և զպատկառանս իմ» ։ Ա.յլ և այնպէս՝ տակաւին ոչ տեսանեմ յիս զստուեր անդամ այսր երկնային առաքինութեան։ Կապեալ կաշկանդեալ կայ սիրտ իմ 'ի բռնակալաց փափկասիրութեան, պատուասիրութեան և հեշտալեաց և ատելութեան վաստակոց, անարգանաց և ցաւոց, որք տան ինձ խորհել և գործել ըստ ընտրութեան իւրեանց ։

Եւ մինչև ցերբ կրեսցես, անձն իմ, զլուծս դայս. երբ լինիցի քեզ 'ի բաց յանձնէ թօթափել զնոյն։ Եւ միթէ վասն այսորիկ առ ոտն հարեր զփառս աշխարհի, զի 'ի զպրոցի սատ խոնարհութեան անյաղ տենչանօք խնդրեսցես զիրկս արկանել զծխով պատուոյ. միթէ վասն այսորիկ մերկացար 'ի ճոխութեանց, 'ի մեծամեծ ակնկալութեանց, 'ի սփոփանաց հայրենական զերդաստանին, զի 'ի կրկիսի ասպաշխարութեան հառաչեսցես զհետ անարդ խծբծից. արդեօք այս էր պատճառ հաստանելոյ քո զկապանս մարմնոյդ, զի մեռեալ աշխարհի՝ 'ի փայփայել զմորթդ զկեանդ ծախեսցես, և զերի մտամոլար 'ի խնամն քաջողջութեանդ տաղնապեսցիս։

«Լոյս տուր, Տէր, աչաց իմոց, զի մի երբէք ննջեցից 'ի մահ». Ի մահն յայն ուրնայնաւաստակ կենաց, որ առեալ ածէ զիս 'ի զրունս կորստական անդերծ մահուն։ Զօրացո, Տէր, զհաւատս իմ, զի զիտացից աներկբայ՝ եթէ խնամք զթութեան քո տնօրինեն զամենայն ինչ յաշխարհի, և եթէ տեղիս այս և պաշտօն յանձն եղև ինձ 'ի քոց հրամանաց, և զի յայս հիւանդութիւն ըմբռնեալ կամ կամօք քովք *։ Զօրացո զիս, Տէր, զի ընկալայց անխտիր համակամութեամբ 'ի ձեռաց քոց զայս ամենայն իբրև զպատշաճաւորսն առ ժամանելոյ 'ի վախճանն իմ։ —

Ցետ այսորիկ եռանդագին հոգւով զարթո՛ի քեզ զիրձս զայնոսիկ զորս առաջի աբարի յերկրորդ խոկման։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ա. Ո՞վ Տէր իմ և Աստուած, խոստովանիմ զի իբրև մարդ պարտիմ ծառայել քեզ. և զի այս է իմ վախճան միայնակ, կատարեալ, վերջին և ամենամեծ։ — Բայց որչափ դժուարին է կատարել զնոյն գործով, առնել զամենայն ըստ հաճոյից քոց, այսինքն՝ լինել անխտիր համակամ առ ճոխութիւն և առ աղքատութիւն, հաճոյից և ցաւոց, պատուոյ և անարգանաց, առ ամենայն վեճակ և առ ամենայն ասպիճան կատարելութեան. որչափ դժուարին իմն է, ո՞վ Տէր։ Այլ

սակայն զոյն պահանջէն յինէն ուղղութիւն, օգուտ և երջանկութիւն իմ։ Ա՛ռ այս ինձ լինին 'ի յորդոր աղաղակք դատապարտելոց ահագնալուր գոչմամբ, զինչ շահ զի կալաք զառիթսն փոխանակ վախճանի. որ օգուտ անտի։

Ա՛հ. ես ինձէն առ ոչ ինչ եմ կարող. դուք լեր ինձ ձեռնտու շնորհօք քո, և ես այժմէն խոստանամ և ուխտեմ գնել 'ի գործ ամենայնիւ զամենայն։

Բ. Ո՛վ Արարիչ իմ և Տէր, իմ վախճան կրօնաւորական կենացս է հոգալ զկատարելութիւն և զբրկութիւն անձին և այլոց, և պատշաճականքն առ այս են ասպիճանքն, պաշտամունք և վայրք, և այլն։ Ա՛հ. բայց եմ հաւատի, զի առ ոչ ինչ օգնեսցեն ինձ գերազանցութիւն, օգուտ և երջանկութիւն վախճանիս, մինչև եղէց անխախիր համակամ առ այս ամենայն։ Լուսաւորեա զմիտս իմ, տուր ինձ քաջ 'ի միտ առնուլ, զի այս ամենայն թէպէտ իցեն պատշաճականք առաջնորդելոյ առ իմս վախճան, բայց վասն իմ ամենապատշաճք են այնոքիկ ևեթ, զորս հրամայեսցես ինձ գնել 'ի գործ 'ի ձեռն հնազանդութեան։

Ա. ՁՈ

Կրթութիւնն վաղուեան երկարագոյն է, զի յեանեալքն 'ի հոգևորս դեգերեսցին 'ի նոսին ընդ երկար առ 'ի լալ ըստ արժանւոյն զմեղս իւրեանց, և զի քաջ 'ի միտ առնուցուն զդարշութիւն նոցին, և զդուշասցին 'ի նոցունց. վասն որոյ պարտին յերկուս աւուրս բաժանել զնոյն, և այնպէս զառաջին մասն կրթութեանս աւարտեսցեն 'ի չորս աւուրս։ Իսկ որք կամիցին աւարտել 'ի միում աւուր, և եթէ թուիցի նոցա երկար, կարեն խորհել զմի կամ զերկուս մասունս, և զայլսն ընթեռնուլ զկնի ժամու աղօթից, կամ յայլ ժամս, որպէս դատեսցին 'ի դէպ։

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

ԽՈԿՈՒՄՆ Ա.

Ի ՎԵՐԱՑ ՊԱՏԺՈՑ ՄԵՂԱՑՆ ՀՐԵՇՏԱԿԱՑ ԵՒ ԱԴԱՄԱՑ

Մասն Ա.

Զմտաւ ած զպատուհաս մեղացն հրեշտակաց, որոց պակասեալ յանխտիր համակամութենէ, և ընդվզեալ հպարտութեամբ՝ հեռացեալք 'ի վախճանէ իւրեանց, ոչ առնուին յանձն զպարտուպատշաճ ծառայութիւն մատուցանել Աստուծոյ գնալով զհետ կամաց նորա. և վասն այնորիկ անդէն իբրև զփայլակն թօթափին թաւալելոր 'ի դժոխս։ Ընդարմացեալ 'ի զարհուրանացդ քննեա

Ա. Ո՞է, որ դատապարտէ զնոսա յայն պատուհաս. Ո՞. — Աստուած, որոյ արդարութիւն ոչ կարէ անցանել քան զմէտն 'ի հատուցումն չարեացն. որոյ ողորմութիւնն բերի 'ի պատժել նուազ քան զարժանն, ո-

բոյ իմաստութիւնն ոչ ինչ սահմանէ յանխորհուրդս. և որոյ սրբութիւն ոչ կարէ երբէք իւիք գնալ զհետ թելադրութեան կրից։ Եւ սակայն սա ինքն Աստուած արդար և սուրբ, իմաստուն և բազումողորմ, այսպէս խստիւ պատուհաս ած 'ի վերայ երկնաւորացն անմահից՝ որ միով ևեթ մեղուչափ յանցանօք խոտորէին 'ի վախճանէն իւրեանց։

Բ. Զմտաւ ած, զո՞ դատապարտեաց այսպէս խստիւ. ա՜հ. զէսն զերազոյնս, զիշխանութիւնս երկնից, զաբանչելիս Աստուծոյ ամենակարողութեանն, զզերաձայրեալսն ամենայն ազգի ազգի զերազանց պարգևօք բնութեան և շնորհաց. որոց թիւ համարոյ բիւրք բիւրոց. որոց եթէ շնորհեալ էր ժամանակ դարձի, մարթ էր նոցա յապաշաւ դալ, և անչափ ցաւովք առնել զհատուցումն նախատանացն որ առ Աստուած, սիրել զնա ինքն 'ի սէր կատարեալ։

Գ. Եւ ո՞րպէս դատապարտեաց. չափ պատժոյն էր անչափ, այնպէս զի ամենակարող զօրութեանն Աստուծոյ չէր հնար առաւել խստագոյն ածել պատուհաս, և այն՝ յաւիտենական։ Որք և չունէին յանդիման զօրինակս արդար վրէժխնդրութեանն Աստուծոյ. մեղան և անդէն դատակնքեցան 'ի կորուստ յաւիտենական։

Ծանիր զմեծութիւն չարեաց մեղացն՝ որ բերի յարհամարհութիւն մեծութեանն Աստուծոյ։ Հրեշտակք կարդեալք 'ի ծա-

ռայութիւն նորա, յամբարտաւանութեան խորհուրդս՝ անարդեալ զսէրն Աստուծոյ առ մի նուազ, և յանչափական սիրոյ նորա հեռացեալք, կրեցին զտուգանս անչափ ատելութեան նորա։ Նոյն Աստուած է որ և զքեզ ստեղծ և սիրեաց. և զու, խորհեաց և սարսիր. և զու համարիս կեալ 'ի մեզս, յատելութեանն Աստուծոյ՝ անկասկած 'ի չարեաց։ Ստեղծեալ քո յԱստուծոյ և վասն Աստուծոյ, և յօժարիս կեալ առանց Աստուծոյ, նա մանաւանդ թշնամի Աստուծոյ։ Ո՜ահագին պատկեր սիրոյ և ատելութեան Աստուծոյ 'ի դատապարտութեան հրեշտակաց. որք սիրեցեալ էին անհուն սիրով, յորժամ առ մի նուազ ևեթ ամբարտաւանեալ զերեսս 'ի բաց դարձուցին 'ի սիրոյն Աստուծոյ, անդէն մատնեցան արդար դատաստանաւ 'ի ձեռս սատակապահանջ վրէժխնդրութեանն Աստուծոյ, ատեցեալք 'ի նմանէ անչափ և անվախճան ատելութեամբ։ Եւ զու նոյնպէս սիրեցեալդ յԱստուծոյ՝ զթիկունս առ նա դարձուցեալ՝ կեաս 'ի մեզս յատելութեանն Աստուծոյ աներկիւղ և աներկեան։

ա. Պարտ է ապա խուսափել 'ի մեզաց դարձելով խորշելով 'ի նմանէ։ Մինթէ ժխտիցես զայս. «Եթէ 'ի հրեշտակսն յանցուցեալս Աստուած ոչ խնայեաց, այլ խաւարին կապանօք արկեալ 'ի տարտարոսն՝ ետ պահել 'ի դատաստան», զու հող և մոխիր, յո՞ր ինչ վստահացեալ ակն ունիցիս

թողութեան. զու՝ որ պարտաւոր ես ոչ միոյ եթէ յանցուածոյ՝ այլ բազմաց, և մեզ ապարտ յետ բազում անգամ հանդիսելոյ թողութեան, յետ ունելոյ առաջի աչաց օրինակս յոլովս ահաւոր վրէժխնդրութեան արդարութեանն Աստուծոյ։ Այլ զարհուրեալ սոսկացեալ յանչափութենէ պատուհասին, երկիր և «Փախիր 'ի մեզաց որպէս յերեսաց օձի»։

Եւ քանզի դժոխք յոր զատապարտեցան հոգիքն ապստամբք, տակաւին բորբոքեալ տոչորին, և վասն զո... այո և վասն զո բորբոքեալ պատրաստեալ կան. և Աստուած՝ որ ոչ խնայեաց 'ի հրեշտակս, նոյն ինքն կայ և մնայ, և է արդար, սուրբ և հզօր որպէս յայնժամ. զի է և է Աստուած. ահ, եղուկ քեզ. եթէ 'ի մեղս զոցէ զքեզ մահ։ Եթէ ոչ ներէր բազմաթիւ հրեշտակաց ազնուագունից, 'ի քեզ խնայիցէ՞ իւրով վրէժխնդիր արդարութեամբ. 'ի քեզ, մարդ նուաստ և խոտան։ Երկիր, փախիր, զզոյշ կաց. ահ. խորշեսջիր 'ի մեզաց։

բ. Քանզի Աստուած ստեղծ զքեզ անհուն սիրով առ 'ի կալ և քեզ 'ի սէր իւր միացեալ ընդ Աստուծոյ, ամենայն գործք յորս չգուցեն սէր Աստուծոյ՝ են արհամարհութիւն սիրոյ նորա և են մեղք. վասն որոյ և յանչափս բորբոքեն զդատումն Աստուծոյ, և զանբաւ սէր նորա փոխեն յանչափ ատելութիւն։ Ապա պարտ է քեզ լալ 'ի վերայ մեղաց դառնակսկիծ ցաւովք։ Ոչ

ծանեալ զսէրն Աստուծոյ, արհամարհեցեր զանչափ սէր նորա զործովքդ, մեղայ յանչափս, եղկելի թշուառական. և խիղճ քո ստգտանէ զքեզ. ո՞ւրեմն դու, և զո՞ արհամարհեցեր. անկար 'ի սիրոյն Աստուծոյ, 'ի զժոխս է բնակութիւն քո։ Ի պահուն յորում մեղայ եթէ անդէն հասանէր քեզ մահ, ո՞ւր էիր այժմ. ա՜հ. «Ի հուրն բորբոքեալ». անդ թաղեալ մնայիր յաւիտեան։

Մի՞ն դիր. Աստուած զհրեշտակսն կոչոյս և քեզ եթող. զնոսա խաւարին կապանօք արկեալ 'ի տարտարոսն ետ պահել 'ի դատաստան, և քեզ զթացեալ եթող ժամանակ ապաշաւանաց։ Մեղայ մի անգամ, երկրորդ և երրորդ անգամ. և եթող քեզ Աստուած. մեղայ չորրորդ անգամ, դարձեալ եթող քեզ Աստուած։ Մեղայ տասնիցս, նաև քսանիցս. և Աստուած եթող քեզ և քսաներորդ անգամ։ Դու ոչ դադարեցայր 'ի մեղանչելոյ, և Աստուած ոչ կասեցաւ 'ի թողլոյ։ Հրեշտակք մեզան մի անգամ և անդէն մատնեցան 'ի յաւիտենական կորուստ. և դու ապաշնորհ, եղկելի թշուառական, մեղայ բիւրիցս, և յերկայնամտութենէ նորա զնեղումն ընկալար։

Եւ զիա՞րդ ոչ ճանաչես 'ի քեզ զանչափ բարութիւն ողորմութեանն Աստուծոյ. ոչ զարմանաս ընդ անչափ զթութիւն նորա ընդ քեզ առ այլովքն։ Ա՜հ. եթէ ընդ այս յիշատակ սիրոյ, և ներողամտութեանն Աստուծոյ առ քեզ չխանդաղատեսցիս, և

ոչ բորբոքեալ 'ի սէր նորա ընկղմեսցիս 'ի բոց սիրոյն Աստուծոյ, և ընդ անխորհուրդ ապսխատաւորութիւն քո ոչ հեղձամղձուկ լեալ փղձկիցիս յարտասուս, չէ՞ 'ի քեզ սիրտ մարդոյ։ Հա՜պա, զարթո՛ 'ի քեզ զքաւ և զզարշումն սրտատոչոր, ցաւելով ընդ անցեալ մեղսդ դառնապէս, և խորշելով յապազայից արիապէս։

Պտուղ այսր խոկման լինիցի ցաւ վասն անցելոց, և զարշումն յապազայից։

Մասն Բ

Խորհեաց զդատապարտութիւն նսխահարցն, որք ապախտ արարեալ զսիրովն Աստուծոյ, ոչ կացին յանխտիր համակամութեան, և օտարացեալք 'ի նմանէ կամէին լինել ինքնաբաւք՝ իբրև զԱստուածս գիտել զբարի և զչար։ Կարծէին զտանել ինչ այլ մեծ քան զսէրն Աստուծոյ. և զի հովացան 'ի սիրոյ նորա, քաղցրացաւ 'ի քիմս նոցա պտուղն արդելեալ. և անդէն զերեսս զարձոյց 'ի նոցանէ Աստուած։ Եւ զի վայելեալք 'ի սէր նորա, ոչ կարացին մտանել 'ի խորս սիրոյ նորա, և օտարացան յԱստուծոյ. յայնժամ արդարութիւնն Աստուծոյ գտեալ զնոսա անարժանս աստուածային սիրոյ, անդէն մերկացոյց զնոսա 'ի շնորհաց սիրոյն, և եթող ելիք անմխիթար յայս վայր արտասուաց, հատեալ ամենեին և զյոյս վերադարձի 'ի նոյն յա-

ռաջին փառս 'ի սէր իւր։ Եւ զի անհնարին էր մարդոյ ստեղծուածոյ հասանել մտաք 'ի կչիռ անչափութեան սիրոյն Աստուծոյ՝ և փոխարինել անարգանացն՝ զոր առնէր սիրոյն Աստուծոյ 'ի տգիտութեան իւրում՝ վասն որոյ արդարութիւնն Աստուծոյ անարդեաց և արկ ընդ նոսին դատապարտութեամբ և զճետ նորա յաւիտեան։

Արդ ամենայն աղէտք աշխարհի, թշուառութիւնք, մահք, սովք, սրածութիւնք, և այլ աղգի աղգի հիւանդութիւնք, խեղութիւնք, կոծք և դառնութիւնք, սարսուռք և խորշակահարութիւնք, հրկիզութիւնք և նաւաբեկութիւնք, այս ամենայն են արդասիք մի միայն մեղաց արհամարհութեան սիրոյն Աստուծոյ։

Այլ սակայն ոչ վասն այսոցիկ ստեղծաւ մարդ յԱստուծոյ, այլ զի բորբոքեալ 'ի բոց անչափական սիրոյ իւրոյ՝ յանբաւ երանութեան վայելեսցէ։ Եւ մարդն յանգիտութեան իւրում՝ արհամարհեալ զանչափական սէրն Աստուծոյ՝ արժանի զտաւ անչափ ատելութեանն Աստուծոյ։ Առաջի արդարութեանն Աստուծոյ անքաւելի էին յանցանքն. այլ անչափութիւն մարդասիրութեան նորա հնարս հնարեցաւ և յաղթեաց արդարութեան իւրոյ, և ած ելհան դարձեալ զմարդ 'ի սէր իւր։ Առ այս ազէտք եղեն անլուր և անպատում աքանչելեաց, այս է մտանել որդւոյն Աստուծոյ 'ի կերպարան Ադամայ, և ըստ անչափութեան

արհամարհանացն՝ որով անարգեաց մարդն զսէրն Աստուծոյ, փոխարինել անչափ սէր առ անչափ սէրն Աստուծոյ։ Եւ ահա Աստուած մարդացեալ, զմարդն աստուածացոյց, և մարդն աստուածացեալ էջ յանչափ անարգութիւն, մինչև ընդ աւազակս դատապարտեալ 'ի մահ՝ մեռանի զմահ չարագործաց 'ի խաչի. և այսպէս մարդացեալն Աստուած անչափ անարգանաց սիրոյն Աստուծոյ անչափ աստուածային սիրով փոխարինեալ ասէր առ Հայրն Աստուած. Ահա ես ինքն մարդ և հաւասարակից ընդ քեզ յէութեան, փոխանակեմ անչափ անարգանաց մարդոյն զանչափ սէր առ անչափ սէր քո, Աստուած իմ. որպէս Աղամաւ յարհամարհել նորա զսէր քո անարգեցեր զամենեսին զծնունդս նորա արդար դատաստանաւ, արդ 'ի կշռել իմում սէր սիրոյդ, անչափ ողորմութեամբդ ընկալ զիմ պատարագ սիրոյս փոխանակ անարգանացն Աղամայ. և 'ի ընուլ արդարութեան դատաստանին, զօրասցի ողորմութիւն քո՝ փոխանակ սիրոյս իմոյ կշռել սէր առ մարդիկ, և հանել զսոսա յառաջին պատիւն . . . : Ո՞չ ապշեալ յիմարին միտք քո 'ի խոկալ զայս ամենայն։ Ո՞ իմոյց զորդին Աստուծոյ յայս անարգութիւն. ոչ ապաքէն մեղքն, այն ինքն է՝ արհամարհութիւն սիրոյն Աստուծոյ. և զու թեթև ինչ համարիցիս զմեղանչելն, այսինքն զարհամարհութիւն սիրոյն Աստուծոյ։ Արդ լեր

'ի միտս, և զարձ առ սէրն Աստուծոյ. և
ահա առաջի քո երթայ մարդացեալն Աս-
տուած Յիսուս, յանձն լեր 'ի սէր նորա,
և որչափ 'ի ձեռս քո է՝ ապաւինեալ 'ի շը-
նորհս Աստուծոյ, ցոյց զսէր քո առ նա, և
սրբեսցիս։

Եւ զի քաջ 'ի վերայ հասցես մեղայն
ծանրութեան, որ է արհամարհութիւն սի-
րոյն Աստուծոյ, զիտա, զի վիշտք և առա-
քինութիւնք ամենայն երանելեաց չեն բա-
ւական փոխարինել արհամարհանաց ան-
չափութեան սիրոյն Աստուծոյ. մանաւանդ
զի եթէ բիւրք բիւրուց մարդկան զերածայ-
բեալք 'ի սրբութեան, որպէս զթագուհին
երկնից, ընդ բիւր մի ամս յանձն առեալ
էին զխոշտանգանս սաստիկ ևս քան զդժո-
խոցն կիրս, ոչ կարէին փոխարինել ար-
համարհութեան անչափ սիրոյն Աստուծոյ։
Եւ եթէ տիեզերք ողջոյն թաթաւէին յա-
րիւն զոհից, եթէ չէր մարդացեալ և պատա-
րագեալ երկրորդ անձին Երրորդութեան,
ըստ սրբոց հարց՝ ընդ վայր լինէր ամե-
նայն։ Եւ զինչ յայսմ ամենայնէ արժան
իցէ բերել զհետ։

Ա. Եթէ ամենայն աղէտք, թշուառու-
թիւնք և մահք են պատճառեալք 'ի միոյ
անտի մեղայ Ադամայ՝ որ է արհամարհու-
թիւն սիրոյն Աստուծոյ, ապա արժան է
յանձն առնուլ զամենայն վիշտս, զան-
ձկութիւնս, նախատինս, տանջանս առ 'ի
չմեղանչել, որով արհամարհի սէրն Աս-
տուծոյ։

Բ. Աստուած մեռանի 'ի խաչի վասն մեղաց Ադամայ. (սուտ 'ի կշիռ զբառսն մի առ մի). Աստուած.. մեռանի.. 'ի խաչի.. վասն մեղաց Ադամայ։ Միայն արիւն Աստուծոյ մարդացելոյ կարաց սրբել զայն արատ. ապա մեղքն, որ է արհամարհութիւն սիրոյն Աստուծոյ, է եղեռն անհնարին և սոսկալի. զի եթէ փոքր ինչ էին չարիք մեղայն, վասն փոքու չարի Աստուած ոչ մեռանէր յայնչափ դառն տանջանս։

Գ. Եթէ որդին Աստուծոյ առ սէր մեր, առ 'ի քաւել զմեզ մեր, առ 'ի հաշտեցուցանել զմեզ ընդ Հօր, յանձն առ զանարգանս լինելոյ մարդ, և զնախատիսն 'ի մարդկանէ և զտանջանս և զմահ դառն. ապա զինչ պարտ իցէ առնել մեզ հայեցեալ 'ի մեր անարգ նուաստութիւն, և 'ի նպաստիցն Աստուծոյ առ մեզ արտաքոյ քան զմիտս և զբան զերազանցութիւն.

ԻՂՁԲ

ա. Արդ ցաւեսցուք 'ի վերայ մեղաց անցելոց՝ որք են արհամարհանք սիրոյն Աստուծոյ, և զզուշացուք յապագայից. այսինքն յետ ճանաչելոյ զմեծութիւն չարեաց արհամարհանաց սիրոյն Աստուծոյ, մի ևս յանգգնեսցուք պիտութեամբ բերել յարհամարհութիւն անչափական սիրոյն Աստուծոյ ամենակալի։ բ. Խոնարհեսցուք ընդ ամենաղօր ձեռամբ նորա, խոկալով

զմեր վրիպանս յարհամարհութեան սիրոյ իւրոյ, և ընդ միտ բերեալ զօտարանալ մեր 'ի սիրոյ անտի Աստուծոյ, յորմէ որչափ առաւել ցրտացեալ զմեզ զտանեմք, այնչափ ևս առաւել 'ի մեզս թաղեալ տանջիմք. հրաժարեսցուք 'ի ցանկութենէ երևելոյ զերազանց քան զայլս։ գ. Յանձին բերցուք զսուրբ ատելութիւն մարմնոյ մերոյ, ոչ մատուցեալ ունկն հրապուրանաց նորա երբէք, ծանուցեալ զնոյն սկզբնապատճառ ցրտանալոյ մերոյ 'ի սիրոյն Աստուծոյ, և ամենայն գործոց՝ որք բերին յարհամարհութիւն սիրոյ նորա, որ են մեղքն։ Բայց ոչ է արժան յերկարել յայսոսիկ խղճս, զի վախճան այսր խոկման է ցաւ սրտատրոր անցելոցն մեղաց, և աչալուրջ զգուշութիւն յապագայից։ Եւ զի սոքին լինիցին ազդականք, պարտ է հսկել 'ի պահպանութիւն այսոցիկ՝ ա. Մտադիր և եռանդագին բուռն հարկանել զայսմանէ։ բ. Ի զարշելն 'ի մեղաց՝ ջանալ խլել և զարմատս նոցա 'ի սրտէ, զամբարտաւանութիւն, և զհրապոյրս զգայութեանց. զի սոքին են արմատք, հիմունք և աղբիւրք ամենայն չարեաց։ գ. Ի ծանոնունց մեղաց առնել ոտնտրոխ առ փոքունս։

Եւ իցէ՞ ինչ այլ արժանի առաւել սարսափման և ընդարմացման քան զարհամարհութիւն սիրոյն Աստուծոյ՝ որ են մեղքն։ Եւ զինչ այլ կարասցէ առաւել համակել զմարդ 'ի ցաւս քան զտեսանելն զորդին Աստուծոյ մեռեալ վասն իւր բնեռեալ 'ի

խաչի։ Ո՛ տեսիլ սահատոր. վասն արհամարհանաց սիրոյն Աստուծոյ, որդին Աստուծոյ հրամանաւ Հօր մեռանի 'ի խաչի. յայս տեսիլ սոսկալի տագնապին և զժոխք, և տիեզերք՝ ոչ կարացեալ հանդուրժել տեսլեանն՝ լուծեալ հալին։ Աստուած մեռանի 'ի խաչին վասն արհամարհելոյ մարդոյն զսէրն Աստուծոյ. վասն մեղաց... Աստուած։ Հաւատամ. սակայն և այնպէս ոչ ապաշաւեմ ընդ յանցանս իմ որովք արհամարհեցի զսէրն Աստուծոյ, և ոչ զգուշանամ յապագայից... Այլ մանաւանդ մեղանչեմ, արհամարհեմ զսէրն առ 'ի «Վերտին 'ի խաչ հանել զորդին Աստուծոյ, և դարձեալ խայտառակել»։ Ո՛ որոտընդոստ կայծակունք, ո՞ր ձեռն զձեզ արդելու, ո՞ր ամպք զձեզ խափանեն։

Ա՛հ. ով անձն իմ, ահա Յիսուս մեռանի 'ի խաչին... ոչ միայն վասն արհամարհելոյն Աղամայ զսիրովն Աստուծոյ, այլ մեռանի և վասն արհամարհանաց քոց 'ի մեղանչելդ... մանաւանդ զի դու արիւնաշաղախ ձեռամբ հանես զնա 'ի խաչ... տեսանես զՅիսուս 'ի խաչի, և ոչ լուծանիս յարտասուս։ Այսմ տեսլեան չհանդուրժէ բնութիւն. խաւարի արեգակն, շարժի երկիր, պատռին քարինք, և հեթանոսք բաղխելով զկուրծս դառնան. և դու կաս անզգայեալ. միայն դու։ Գերեզմանք բանին, վարազոյր տաճարին ցելու, բնութիւն ամենայն կայ յահի և 'ի մեծի պա-

կուցման. միայն զու արհամարհող պետու-
թեանն Աստուծոյ ոչ խանդաղատիս'ի զութ.
միայն զու սպացեալ անտեղիտալի հա-
բուածոց ակնարկես 'ի փրկիչ. քո անթաց
աչօք, որ կախեալ զփայտէ 'ի դառնութեան
ցաւոց, շնչասպառ լինի... մանաւանդ ե-
թէ յանդգնիս յաւակնիս նորոգել բիւրիցս
զայս աղետալի տեսարան։

Ա՛հ. բղխեսցեն արտասուք, կալցին
զսիրտս հեկեկանք. համակեցայց 'ի խորս
տխրութեան, զի կարացից լալ որպէս
պարան է զծանրութիւն նախատանացն
առ Աստուած, զոր կարի իսկ ճանաչեմ 'ի
մահն Տեառն մերոյ Յիսուսի։ Ո՛վասն իմ
խաչեալ, թոյլ արա ինձ զի անկայց յոտս
քո և յարտասուս լուծեալ՝ ցուցից զցաւս
սրտիս. և առ ատել զչարութիւն մեղացն
դառնութեան՝ ոչ դադարեցայց 'ի ցաւոց և
'ի զարհուրանաց անձինս, չև բաժանեալ
հոգւոյս 'ի մարմնոյս։

«Կենդանի է Տէր՝ որ այսպէս զատե-
ցաւ զիս... եթէ տակաւին իցէ յիս շունչ
իմ, և հոգի աստուածեղէն շուրջ զինև
յոնգունս, ոչ խօսեսցին շրթունք իմ անօ-
րէնութիւն և ոչ անձն իմ խորհեսցի անի-
բաւութիւն»։ Կենդանի է Տէր, առեցից և
անարդեցից զմեզս, և ոչ սիրտ իմ գնասցէ
զհետ նոցա։ Չրկեցայց յամենայն բարու-
թենէ, տարայց ամենայն վշտաց. և երբէք
չառիս յանձն յայսմհետէ վշտացուցանել
զքեզ թէ և փոքրումբք։ Արդարև և ոչ փո-

քումբք։ Զի և յանցանք փոքունք՝ են պատ-
ճառք չարչարանաց և մահուն Քրիստոսի,
զի են յարհամարհութիւն սիրոյն Աստու-
ծոյ։ Եւ ես գարշիմ մերժիմ 'ի նոցանէ. և
մանաւանդ (յայս ինչ մեղաց) և 'ի թիւնա-
լից յարմատոյ նոցա, որք են ամբարտա-
ւանութիւն և ցանկութիւնք մարմնոյ։

Աղաղակեցից ընդ Դաւթացւոյն. «Ո-
րոտաս յիս Տէր զդատաստանս քո, և ա-
հիւ և զոգութեամբ սատանեցուցանես զա-
մենայն ոսկերս իմ։ Ո՛վ, որպէս պարտ է
ինձ խոնարհ և արհամարհ լինել յաչս ան-
ձին, ես և յերեսել բարեաց յանձին իմում։
Եւ երկինք ոչ են սուրբ առաջի քոյ. 'ի դատ-
նել զթիւրութիւն և 'ի հրեշտակս իսկ ոչ
խնայեցեր. արդ ընդ իս զինչ լինիցի, ընդ
իս ընդ հողս տղմապին»։ Ո՛վ, որպիսի
բռնութեամբ պարտ է մերժել յանձնէ զիրեն
պատուոյ և հաճոյից, որք են ապրիլք անի-
ծաբերք ամենայն չարեաց։ Այո. և ես ընդ
Պօղոսի «ձնչեմ զմարմին իմ և ծառայե-
ցուցանեմ». զմարմին իմ՝ որ քեզ, ո՛վ վասն
իմ խաչեալ, եղև պատճառ այնչափ ցա-
ւոց և զառն մահուան։ Եւ ծառայեցից քեզ,
ո՛վ Աստուած իմ և Տէր, ծառայեցից քեզ
այնպէս, որպէս դու կամիս. անխտիր հա-
մակամ յամենայնի։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ.

Ա. Զմտաւ ած զպատուհաս մեղացն հրեշտակաց. Ո՞ դատապարտեաց զնոսա. Աստուած, արդարութիւն... ողորմութիւն... և խնամատութիւն անսահման: Զիրս դատապարտէ այսպէս խստիւ. Զիշխանութիւնս երկնից, զպահապանս ամենայն իւրոյ, զընտիրսն և զնմանանագոյնս յարարածոց, զբազմութիւս և զպատուհասս 'ի դէւագոյն գահ: Եւ զինչ պատճառ դատապարտութեանն. Մի միայն մեղք, մի միայն արհամարհութիւն սիրոյն Աստուծոյ: Եւ դատապարտութեանն յեղանակ որպիսի՞. 'ի ամենայնս խիստս յաւիտենականս և անվախճանս: Այս որպիսի՞ անհնարին չարիք իցեն արհամարհել զսէրն Աստուծոյ: Եւ զինչ այսոցիկ զհետ բերել արժան իցէ. Ա. Խուսափել 'ի մեղաց՝ դարձելով մերժելով յայնցանէ, զի են արհամարհութիւնք սիրոյն Աստուծոյ... զի գերժոիք՝ յոր դատապարտեցան հոգիքն ապստամբք, տակաւին բորբոքեալ տոչորի և վասն քո... և Աստուած, որ 'ի խոր խոցն ընդ արհամարհութիւն սիրոյն, կայ և մնայ. վայ քեզ եթէ մեռանիցես 'ի մեղս: Բ. Զինչ ապա. եթէ Աստուած այնպէս վշտանայ ընդ արհամարհութիւն սիրոյ իւրոյ, պարտ է լալ զանցեալ մեղս դառնակսկիծ ցաւովք, և խորշել յապագայից խնամով մեծաւ:

Բ. Խորհեաց զմեղս և զդատապարտութիւն նախահարցն, որք այն ինչ մերձեցեալ 'ի պտուղն արգելեալ դատակնքեցան 'ի մահ, և արտաքսե-

ցան յերկրաւոր դրախտէն, երկիր անկաւ ընդ անիծիւք, և արտան և դատապարտութիւն այնր յանցանաց էանց յամենայն սերունդս նոցա։ Բ. Ամենայն աղէտք և չարիք աշխարհի բնականքն և բարոյականք համանգամայն, անցեալքն և ապագայք, բովանդակ են պատուհասք այնր մեղաց։ Եւ մեղքն այն ոչ այլ ինչ է բայց եթէ արհամարհութիւն սիրոյն Աստուծոյ։ Գ. Յեսու զՅիսուս զորդին Աստուծոյ եղեալ մարդ, չարչարեալ և անշնչացեալ 'ի վերայ խաչին, միայն առ 'ի ընուլ զարդարութիւնն Աստուծոյ՝ փոխարինելով սեր 'ի մեր կուսէ ընդ արհամարհանաց սիրոյ նորա, զոր անարգեցաք։ Զի առ 'ի փոխարինել միոյ և եթ արհամարհանաց սիրոյն Աստուծոյ ոչ բաւէին, ոչ ամենայն առաքինութիւնք արքոյն ամենեցուն և ոչ ամենայն զօրութիւնք անմահիցն հոգւոց. վասն որոյ Աստուածն մարդացեալ հարկ համարեցաւ հեղուլ զամենասուրբ արիւն իւր վասն մարդոյ, զի դարձեալ մերձեցուցցէ զնա 'ի սէրն Աստուծոյ. որով ևս յայանեցի մարդոյ սահման անչափութեան սիրոյն Աստուծոյ առ մարդ։

Ապա պարտ է հաստատութեամբ գրոչմել 'ի մտի ՝. Եթէ քանզի արհամարհութիւն սիրոյն Աստուծոյ է մեծ քան զամենայն չարիս աշխարհի, վասն որոյ պարտ է առաւել յանձն առնուլ տանել ամենայն չարեաց, քան գործել ինչ յարհամարհութիւն սիրոյն Աստուծոյ։

Բ. Եթէ միայն Յիսուս կարաց փոխարինել այնմ, ապա գործ ինչ արհամարհութեամբ սիրոյն Աստուծոյ է մեծ քան զամենայն չարիս, և

ամենայն հնարիւք պարտ է խուսափել 'ի պատ-
ճառաց զի մի հասցէ վասնզ գործելոյ ինչ այն-
պիսի, այսինքն զմեզ։

Ճ. Եթէ որդին Աստուծոյ ամենակալն առ սէր
մեր յանձն առ զմարդն լինել և զմահ դառն, ա-
պա զի՞նչ պարտ իցէ առնել մեզ փոխարէն առ
սէրն Աստուծոյ, գոլով մեր որդն և երբ և ոչ ինչ։

Ընթերցիր

Թովմ. Գեմբ. Գիրք Գ. Գլ. 14։

ՊԱՐԱՊՈՒՄՆ

Ցաւ և գարշուն 'ի մեղաց.

Ա.

Ա. Արկեալ զհիմունս հոգևոր շինուա-
ծոյս, որ է ծառայել Աստուծոյ զհետ գնա-
լով կամաց նորա. այսինքն յայնմ վիճակի
կենաց՝ զոր կամիցի քեզ, և կամ 'ի կո-
չմանդ յառաջադոյն ընտրելոյ, 'ի պաշտա-
ման, 'ի տեղւոջ, 'ի քաջողջութեան կամ
'ի տկարութեան, և յայնմ աստիճանի կա-
տարելութեան՝ յորս կամիցի կեալ քեզ.
վասն որոյ և լինել անխտիր համակամ
առ այս ամենայն։ Արկեալ, ասեմ, զայս
հիմն անդրդուելի, պարտ է 'ի բաց առնուլ
զխոչն և զխութս անխտիր համակամու-

թեան, այս է ասել՝ ուղղոյն վերջին վախ-
ճանին մերոյ։

Եւ խոչբս այսոքիկ են ցանկութիւնք
փառաց, հաճոյից, ճոխութեան, քաջող-
ջութեան, ազատ ընտրութեան կամաց. և
խուսափումն 'ի ներհականաց սոցին՝ 'ի նա-
խատանաց, յաղքատութենէ, 'ի վշտաց,
'ի հիւանդութեանց և 'ի կատարելութենէ
կենաց։ Լաւ ևս ասել՝ անչափ սէր հաճոյից
և առաւելութեանց, և փախուստ անդէպ
յանարգանաց և 'ի վշտակրութեանց։ Քան-
զի յերկուս յայսոսիկ իբր յաղբերակունս
ամենեքին այլքն ամենեքին. զի բերեալք
'ի սէր և յատելութիւն այսոցիկ երկոցունց՝
մոռանամք կալ յանխտիր համակամութեան
'ի սէրն Աստուծոյ, և զտանիմք մեղուցեալք
յարհամարհութեան սիրոյն Աստուծոյ։ Զի
ըստ բանից Քրիստոսի, ծառ չար պտուղ
չար առնէ, մանաւանդ զի ծառ չար ոչ
կարէ պտուղ բարի առնել. ապա և ամե-
նայն գործք յառաջ եկեալք ոչ 'ի սիրոյն
Աստուծոյ, այլ յանիծաբեր սիրոյ և յատե-
լութենէ, են արտաքոյ անխտիր համակա-
մութեան և յարհամարհութիւն սիրոյն Ա-
տուծոյ, որք ըստ պատճառին՝ թեթև կամ
ծանր, կամ ամենայնիւ և կամ ըստ մասին
օտարացուցանեն զմեզ յանխտիր համա-
կամութենէ և յԱստուծոյ։

Բ. Արդ առ 'ի խորշեցուցանել զկոյր
կամս մեր 'ի մահահրաւէր ցանկութենէ
աստի պատուոյ, հաճոյից, ճոխութեանց, և

առ 'ի բանալոյ 'ի մէնջ զխափանարարն անխտիր համակամութեան, զդժկամակութիւնն ասեմ՝ ընդ անարդանս, ընդ ագքաութիւն և ընդ ցաւս, առաջի առնեմք զչարիս և զմեծ զանօրէնութիւն և զբազմազիմի ՀԼեսակարութիւնս մեղայ, զի 'ի մեր առեալ թէ յոր խորս չարեաց արկանեն զմեզ այնոքիկ՝ խորշեցուք մերժեսցուք յաղերականց անտի մահաբեր թիւնից։ Ա.զրերակունս մահաբեր թիւնից կոչեցի զմեղս. զի յայսոսիկ խոկմունս մեղայ 'ի ցաւել մեր 'ի վերայ մեղայն զործելոց առ 'ի մէնջ, պարտիմք միանդամայն զարշել և 'ի խոտորնակ սիրոյ անտի փառաց և հաճոյից, որպէս և յանխորհուրդ արհամարհութենէ կամ յատելութենէ անարդանաց և վշտաց, որք են արմատք չարք ամենայն մեղայ։

Եւ զի առաւել ուժգին ներզործեսցի 'ի մեզ ցաւ և զարշումն 'ի մեղայ, ջան 'ի զործ արկանեմք ազգու կենդանազրել զծանրութիւն չարեաց միոյ միայնոյ մեղայ 'ի դատապարտութեան անդ հրեշտակաց և նախահօր մերոյ, զի 'ի դառնութեան պատուհասին երևեսցի մեծութիւն չարեացն։ Ա.բ զարև այսգոյն պատկեր ահագնատեսիլ և զսարսեալ սիրտս կակղեալ յերկիւղ և 'ի սասանումն կալցի։

Եւ զի պատահարք այլոց ոչ այնչափ հարկանեն զմիտս մեր իբրև զմերսն, վասն այնորիկ յառաջիկայ խոկման առաջի առնեմք զյոլովութիւն և զծանրութիւն մեղայ

մերոց, զորս տեսեալ մեր 'ի մօտոյ՝ ոչ կա-
բասցուք պակաս առնել զյաւս, զի այն-
պէս եկեսցուք 'ի զեղջ՝ վառեալք յանհնա-
բին ատելութիւն ընդդէմ նոցա։

Եւ զի զարձեալ՝ են ոմանք որք յերկիւ-
ղէ տանջանաց յորդորին յառաւել 'ի զեղջ
և 'ի զգուշութիւն 'ի մեղաց, վասն որոյ
ցուցցուք նոցա զդառնութիւն տանջանացն
զժոխոց՝ յոր մասնին մեղաւորք անդերծ։

Պատուք սերկեան մտածութեանց են
ցաւ ազէկէզ 'ի վերայ մեղաց, և դառն ար-
տասուք։ Զի և զկիանս մեր պարտիմք ծա-
խել յապաշխարութեան և յարտասուս ընդ
արհամարհութիւն սիրոյն Աստուծոյ, յոր
բերեալ եմք մեք անծանօթք մեծութեանն
Աստուծոյ և սիրոյ իւրոյ առ մեզ ապիկարքս
և յոչէս։ Եւ զի ուղղեսցուք զընթացս մեր
ընդ հետս հետոց նորա, զաչս մեր 'ի խաչն,
յարդասիս անդր սիրոյ նորա յառեալ բեռ-
ռեսցուք, անարդեալ զպատիրս աշխարհի,
որք հնարին 'ի բաց անջատել զմեզ յԱս-
տուծոյ մերմէ։

Արդ ցաւել և զարշիլ, այսոքիկ երկոքին
են վաստակք այսր աւուր. բայց ցաւել
դառնապէս ընդ արհամարհութիւն սիրոյն
Աստուծոյ, յոր յանզգոյշս ածաք, և զար-
շիլ մղձկաւ յապագայ անօրէնութեանց,
անարդելով ընդ զործոցն և զարմատս նո-
ցա՝ զամբարտաւանութիւն և զցանկութիւն
հաճոյից։ Այս զուն զիցուք ամենայն ճը-
զամքք առ ստանալոյ զսոսին՝ զյաւ և զզար-

չումն. քանզի երէկ վաստակեցաք առ ստա-
նալ զանխտիր համակամութիւն առ ամե-
նայն կամս Աստուծոյ, ընդ որ հաճեսցի ա-
ռաջնորդել մեզ առ վախճան մեր, և վա-
ղիւ խոկացուք զկատարեալ ծանօթութե-
նէ անձին, զի խոնարհեսցուք և ատեսցուք
զանձինս մեր։ Իսկ արդասիք այսր աւուր
լիցի սրբել զհոգիս մեր յարատոց՝ անար-
զելով զմեզս և զաղբիւրս մեզաց։ Այլ յա-
նարատ սրբութիւն հոգւոց մերոց կարևորք
են ապաշաւ և խոստովանութիւն։

Բ

Ա. Ապաշաւ և զղջումն է ցաւ և մերժումն
'ի վերայ մեղաց զործեցելոց, ուխտիւ մի
ևս մեղանչելոյ։ Ցաւ կրկնակի՝ ատելութեան
մեղաց անցելոց, և զարշելոյ յապագայից։
Ա. բարւոք յանձին բերել զայս ցաւ, պարտ
է մերժել յանձնէ ոչ միայն զծաղր և զժը-
պիտ և զբանս ծաղու, այլ և զզուշանալ 'ի
բերկրական բարեպարիշտ խորհրդոց. հա-
մակել 'ի սուրբ ինն տխրութիւն, և յաւե-
լուլ ինչ 'ի մեռուցումն մարմնոյն։ Պատ-
ճառ առաջնոյն է՝ զի խորհուրդք օտարք
խափանիչք են արտասուաց և ցաւոց մե-
զացն՝ որում 'ի խնդիր ելեալ կամք։ Պատ-
ճառ երկրորդին է՝ զի կամիմք ընկղմիլ 'ի
ճշմարիտ ապաշաւ մեղաց և 'ի ծով արտա-
սուաց։ Ա. ևս քան զևս յորդել զարտա-
սուս, 'ի վախճան առաջնոյ խոկման յան-

դիման բեր զՅիսուս Քրիստոս զՏէրն մեր աւանդելով զհոգին 'ի խաչին. իսկ յերկրորդին և յերրորդին զանհուն ողորմութիւնն Աստուծոյ որ ներէ մեզ ընդ այնչափ ժամանակս և 'ի նուազս անթիւս, մինչդեռ այլք սակաւամեղք թերևս քան զմեզ դատապարտեալ կորնչին։

Բ. Այլ 'ի պատճառաց որք յորդոր լինին մեզ 'ի փոյթ եռանդագին ապաշաւանաց, են. ա. Զի ըստ յաճախութեան զոչման առաւելուցուն 'ի մեզ շնորհք։ բ. Զի այնու թեթեւացին տուգանք պատժոցն, զորս կամ՝ատէն յաչխարհի և կամ՝ 'ի հանդերձեալն պարտիք տուգանել։ գ. Այնչափ առաւել հաստատուն կացցուք 'ի բարին. քանզի պատճառ յաճախ անկանելոյ մերոյ է ապաշաւանաց մերոց թուլութիւն։ դ. Այնչափ առաւել յանդգնիլ խաղաղութեան վայելեսցէ հոգին յեցեալ 'ի քաղցր յոյս փրկութեան և յանվրդով յապահովութեան մտաց, լեալ հաւատի ընդ դարձ մեր 'ի բարեկամութիւն Աստուծոյ։ Այլ ընդ հակառակն ապաշաւ մեղկախորհուրդ թողու յերկբայս զյոյս փրկութեանն, առնէ յոգդոդ զբարեկամութիւնն Աստուծոյ, զերեսդարձութիւնն զիւրին, զհատուցումն տուգանացն նուազ, և զառաւելութիւն շնորհացն անբաւական։

Սատարքն այսր կատարեալ ցաւոյ մեղաց են աղօթք, մեռուցումն մարմնոյ, և նկարել 'ի միտս զբովանդակ ընթացս կե-

նաց մերոց, և դնել առաջի իբրև զկոյտս զիրոյ զամենայն զմեղս մեր։ Քանզի անՐերկրայ զարթուցէ 'ի մեզ երկիւղ և սարսափ տեսանել մեր 'ի մի զումար զամենայն մեղս մեր և զանօրէնութիւնս, եղեալ 'ի կշիռ զնոսին ընդ մեզաց հրեշտակացն և նախահօր մերոյ։

Գ։ Ա.յլ զլիսաւորագոյնն 'ի սատարուց առ 'ի լուծանել 'ի յորդ արտասուս՝ է տեսիլն Յիսուսի Քրիստոսի խաչելոյ, և անհուն բարութեան և ողորմութեանն Աստուծոյ։ Սուրբն Փրանկիսկոս նախանձաւորն սրբութեան Սերովբէից, 'ի խոկալն զՅիսուս յաւանդումն հոգւոյն 'ի խաչին, այնպիսի իմն ազազակ բառնայր, զի յանցանել ընդ այն ըստ դիպաց ապատի ումեմն՝ կարծեաց հարեալ զնա յաւազակաց։ Ա.յլ և այնպէս համարեալ սրբոյն զանձն յոյժ թերացեալ յապաշաւանան, հրաւիրէր զժայռս և զփայտս արտասուակցորդ իւր լինել։ Ո՜ խիստ և սոլացեալ սիրտք մահկանացուաց. յաւանդել հոգւոյ Յիսուսի 'ի խաչի՝ վէմք պատառին, երկիր շարժի, տիեզերք ամենայն սասանին. և դուք քան զբնութիւն արարածոց անողոք դատնիք. և իբր քան զանդղայս անդղայագոյնք եղէք. ստեղծեալքդ 'ի սիրոյն Աստուծոյ հիմ այդպէս ատեցողք երկիր. կարդեալքդ 'ի սիրել զԱստուած, ուր կորուսէք զդորով սիրոյն զոր տնկեաց 'ի ձեզ Աստուած։ Ո՜վ Մայր Տեառն իմոյ խաչելոյ, ահ. պաղա-

տիմ առ բազմագութ սէր քո, շնորհեա ինձ անարժան որդեգրելոյս քեզ զդառն և զյորդահոս արտասուս զղջման ընդ այնչափ արհամարհանս՝ որովք անարգեցի զսէր Աստուծոյն իմոյ։

Ի Սպանիա լուեալ մեղաւորի ուրումն 'ի սրբոյն Վինկենտեայ Ֆէրրարեան զերկայնամտութենէ զթութեանն Աստուծոյ առ մեղաւորս, այնպիսի իմն ցաւ դառն յանձին եբեր ընդ մեղս իւր, զի անդէն անկաւ կիսամահ։ Եւ մեր առեալ զնոյն 'ի խորհել՝ կամք մնամք ցամաքեալք անարտասուք իբրև զաւազակոյսս անջրդիս հողմակոծեալս. յորմէ արժան է զհետ բերել՝ զի կամ թերահաւատք եմք, և կամ ոչ կշռեմք զմեծութիւն չարեաց արհամարհութեան սիրոյն Աստուծոյ։

Սուրբքն և սիրեցեալք յԱստուծոյ ընդ թեթև իմն թերութեան և ընդ չնչենոյ՝ ցմահ իւրեանց յարտասուս և յողբս կային. և մեք փոխանակ այնչափ մեղաց մերոց հաղիւ թէ չիթս իմն արտասուաց իջուցանիցեմք. որպիսի՞ սիրտք են 'ի մեզ։ Թերևս ասիցես՝ եթէ այդպիսի ցաւք և արտասուք սրբոց միայն են տուեալ։ — Մանաւանդ թէ այսպէս պարտ է ցաւիլ և արտասուել առ 'ի լինել սուրբ։

Իցեն յաշխարհի մեղաւորք յոլովք քան զմեզ արդարադոյնք, սրբեալք առաւելութեամբ ցաւոցն և արտասուաց՝ այն ինչ 'ի վերայ հասեալք զթութեան և մարդասի-

բութեանն Աստուծոյ, և իւրեանց մեղացն դառնութեան։ Եւ մեք եղկելիք, ծախեալ զկեանս մեր 'ի վարժարանի սիրոյն Աստուծոյ, տակաւին ոչ ուսաք և զաթութայս անդամ սիրոյ նորա, և կամք այնպէս անծանօթք և ազէտք, զի և ոչ կարեմք առնուլ 'ի միտ զմեծութիւն չարեաց արհամարհանաց սիրոյ նորա, զի կարիցեմք լալ ըստ արժանւոյն զմեղս մեր։ Ո՛վ Աստուած իմ, յայտնեա ինձ զամենակալ զօրութիւն քո 'ի թողուլ զմեղս իմ և յողորմել. որ «Ողորմիս ամենեցուն զի յամենայնի կարող ես. և անտես առնես զմեղս մարդկան ապաշխարութեամբ»։ Հեղ 'ի սիրտս մեր զթութեամբ զշնորհս Հոգւոյդ սրբոյ, զի բղխեցուցէ 'ի վիմարդեան սրտից մերոց զհառաչանս և զարտասուս առ 'ի սրբել զարտասս հոգւոց մերոց. իջուցեն աչք մեր աղբիւրս արտասուաց 'ի շիջուցանել զբոց հրոյն զոր բորբոքեցաք արհամարհելով զանչափ սէր քո։

Գ.

Եթէ իցէ ցաւ մեղացն անցելոց կատարեալ և սրտահառաչ, աներկբայ զոցի յարակից այնմ և խորշումն յապաղայից։ Զի չէ և չէ հնար ցաւել ումեք ընդ զործեալ մեղս սրտի մտօք, և ոչ զգուշանալ յապագայիցն։ Եւ զի լաւ ևս 'ի միտ առնուցուս զայս խորշումն կարևոր և զզօրութիւն նո-

բա անասան, նկարեա յանդիման աչացդ 'ի կողմն մի զրոնաւորն Անտիոքոս, և 'ի հանդիպոյ զհնոցն Նաբուզոդոնոսորայ։ Հայեաց 'ի սա՝ որ չարամահ կորուսեալ զվեցեսին որդիս Շամունեայ և կամի զարհուրեցուցանել զկրսերաղոյնն 'ի սպառնալիս տանջանաց. տես ահա յառաջ բերեն զմահահոտ զործիս սպանութեանն, բորբոքեն զհուրն, չանթեն զերկաթեան, մերկացուցանեն զսուսերսն. ցրուեալ անգէն ընդ զետին զլուխքն հատեալք, ձեռք և ոտք անդամատեալք, մարմինքն մորթազերծք։

Դարձո զաչս քո 'ի հնոցն կոյս. զի Նաբուզոդոնոսոր լի սրտմտութեամբ հրամայեաց ջեռուցանել զհնոցն եօթնապատիկ առաւել յոյժ, զի մինչև 'ի վախճան այրեսցի։ Ահաւոր պատկեր տեսլեանն. հայեաց, թէպէտ վառեալ իսկ էր հնոցն, այլ պաշտօնեայք ոչ դադարեն 'ի բորբոքելոյ ևս քան զևս, մինչև բարձրանալ բոցոյն քառասուն կանգուն 'ի վեր։

Արդ զի՞ զործեսցէ մանուկն Շամունեայ 'ի տեսիլ դառն տանջանարանացն. ճաշակեսցէ՞ զմիսն արդելեալ, և կամ յանձին կալցի մեռանել 'ի դառն տանջանս։ Եւ մանկունքն Բաբելոնի կրկնեսցեն ծունր առաջի պատկերին Նաբուզոդոնոսորայ, թէ յանձն առնուցուն ծախել 'ի բոցոյն։ Այսա, և դու զի՞ զործէիր եթէ կայր քեզ կամ մեռանիլ և կամ մեռանել. ահա մանուկն աղաղակէ առ բռնակալն. «Զեմ

ինչ լսելոյ հրամանի թագաւորիդ, այլ հրամանաց եմ հնազանդեալ օրինաց հարցն մերոց»։ Նոյնպէս և Անանիա ընդ ընկերսն բարձրացուցանէ ձայնն. «Այս քեզ յայտնի լիցի, արքայ, զի զդիս քո մեք ոչ պաշտեմք և պատկերիդ ոսկւոյ երկիր ոչ պագանեմք»։ Իսկ դու զինչ խորհիցես, զի զորձեսցես։ Ո՛չ ամօթ մեծ իցէ զի չորեքին մանկունք Եբրայեցիք առաւել խորշիցին 'ի մեղայ քան զբրիստոնեայ զք, քան զկրօնաւոր, քան զքահանայ՝ Քրիստոսի սեղանոյն պաշտօնեայ։ Ցանդիմանեսցէ զքեզ յայտուր միում Եղիազար՝ որ զմահ յանձն առեալ և զկեղծիս անդամ ուտելոյ զխոզենի ոչ առնոյր յանձն, և ասացակէր. «Զայս խստութեան տանջանս մարմնոյ ընկալեալ համբերեմ, այլ հոգւով քաջ քաղցրութեամբ վասն ահի սաստիցն Տեառն ընդունիմ»։ Նա առ ահի Տեառն այսպէս և զկեղծաւորելն չառնոյր յանձն. և դու ընդ ահին և զսէր նորա զանչափ արհամարհեալ մի՞ մեծ ինչ զրես։

Ո՛վ Աստուած իմ և Տէր. այսոցիկ ելրիոց ախոյանաց զոր պատասխանի տացին նոքա, որք ոչ երկնչին արհամարհել զսէրն Աստուծոյ, զրդուել 'ի զայրոյթ զանհաւն զթութիւն նորա, զարդարութիւն նորա տահաւոր և զամենակալ մեծութիւն նորա, ոչ 'ի բռնաւորաց սպառնացեալ, և կամ 'ի մահուանէ ինչ երկուցեալ, այլ վասն սնոտի շահու անձին, և կամ 'ի լրումն հաճոյից

ինչ։ Ա.Հ. սրբոյն խորհուրդք այս էին՝ թէ առաւել զժոխքմբեր է Աստուծոյ մեղք իմն թեթև, քան Սատանայի նոյն ինքն զժոխք։ Եւ զու անդսկէս թեթևութեամբ մեղանչիցես. անսպէս յաճախ. անսպէս առ ոչ ինչ զրեսցես զարհամարհութիւն սիրոյն Աստուծոյ։ Եթէ սիրես զԱստուած, եթէ երկնչիս 'ի յաւիտենական զատապարտութենէ, եթէ ոչ կամիս կալ յատելութեանն Աստուծոյ յաւիտեան, փախիր 'ի մեղայ. ահ, փախիր, ոչ միայն 'ի ծանունց, այլ և 'ի մանունց. այո 'ի մանունց իսկ, քանզի և այնոքիկ բերին յարհամարհութիւն սիրոյն Աստուծոյ, որ է մեծ քան զամենայն չարիս որք կարիցեն երբէք պատահել քեզ յաշխարհի։

Դ.

Զխոստովանութիւնն, որ է այլ իմն սատար սրբելոյ զսիրոս, թէպէտ պարտ է առնել յաւարտ առաջին մասին կրթութեանն, բայց պարտ է 'ի սկզբանէ կրթութեանն սկսանել առնել, քննութիւն իմն խղճի ընդհանուր, կարեւոր առ խոստովանութիւն և առ սրբելոյ զսիրտ։ Զայս մարթ է առնել յաղատ ժամուն, զզուշացեալ չպակասեցուցանել ինչ 'ի սահմանադրեալ կարգայ։ Եւ թէպէտ հարկ իցէ զգոյշ կալ ամենայնիւ յայսմ՝ քննութեան յաւելորդ անձկութենէ մտայ, որ մարթի պատճա-

ռել յուզումն և տագնապ և զխիղճ 'ի միտս, սակայն և պարտ է այնպէս խնամով հետամուտ լինել ուղղութեան, զի տացէ առ յապայ աներկեան խաղաղութիւն մտաց, մանաւանդ 'ի ժամու անդ մահուան։ Ա.ՐԴ փոյթ խնամոցն պարտ է լինել, ա. Զատիոյ ժամանակի, որ պարտի սկսանել 'ի յետին արդարակշիռ խոստովանութենէ։ բ. Ի քննութեան թուոյ և ծանրութեան մեղաց։ գ. Ի վերայ զործոց՝ յորս ծախեալ է կեանքն։ դ. Ի վերայ պաշտամանցն վարելոց։

Բայց թէ պարտ իցէ քննել զբովանդակ կեանս կամ զմի եթէ շրջան ամաց, կամ զես նուազ ժամանակ, այս ամենայն թողեալ է յընտրութիւն խոստովանահօր։ Ա.յլ յամենայնի եթէ ընդհանրական իցէ խոստովանութիւնն և եթէ մասնական, պարտ է փոյթ 'ի մէջ առնուլ խոստովանելոյ զմեղսն զայնոսիկ, յորս զուցեն երկմտութիւնք չլինելոյ պարզեալ ուղղադատութեամբ, և որք առաւել քան զայլսն 'ի տագնապի զսիրտս ունիցին և կամ հարկանիցեն զմիտս, և կամ յորոց կասկածիցեմք եթէ վշտացնեսցեն զմեզ 'ի ժամու մահուան։ Ա.ռաւել քան զառաւել պարտ է հետամուտ լինել զործեցելոցն յանխորհուրդս և զաղտնեաց. զանզգուշութիւնս բարեաց, և զմոռացութիւնս և զթերատեսութիւնս պարտուց անձին. և բովանդակ իսկ ճիգն իցէ խոստովանել զմեզս հնարիմացութեամբ այնպէս՝ որպէս զեն չարա-

նենդ պատրաստի ամբաստան լինել զմէնջ առաջի Աստուծոյ։

Միանգամայն ասել՝ պարտ է առնել զայս խոստովանութիւն այնպէս զզոյշ մտադրութեամբ, իբրև եթէ այն ինչ աւարտեալ խոստովանութեանն՝ կայցէ մեզ յանդիման լինել առաջի աստենին Քրիստոսի. մինչև լինել մեզ հաւատի վկայելով մտացն խղճի՝ եթէ լցուցաք անթերի զամենայն պէտս հոգւոյն յայսոսիկ աւուրս կրթութեան, ոչ ինչ թողեալ արտաքոյ 'ի նորոգ քննութիւն։ — Աւարտեալ ուրուք զկրթութիւնս առանց յանձին բերելոյ զայս վստահութիւն, զուրկ 'ի կարևոր քաջալերութենէ մնասցէ և յարդիւնական պտղոց զորս կարէր ժողովել։

Այսմ սրբոյ գործոյ, որ լին է օգտութեամբ, կան խոչք երկու այսոքիկ. Զանձիր 'ի վաստակել 'ի քննութիւն մեղացն, և Աստծոյ 'ի խոստովանել։ Թէթևասցին վաստակքն 'ի միտ բերեալ զմեծամեծ օգտութիւնսն, որք են, ա. Յանդիմանութիւն անպատրուակ չարութեան մեղացն։ բ. Յաւ սրտաշոչոր վասն այնպէս 'ի վրէպ խորհուրդս զառածանելոյն։ գ. Անվրդով իմն ուխտ զգուշութեան, և երկնաւոր օգնութեանն յաճախութիւն։ դ. Լաւագոյն իմն պատրաստութիւն 'ի հաղորդել սրբոյ խորհրդոյն։ և. Հաստատուն յոյս փրկութեան և քաջալեր իմն մխիթարութիւն յաւանդել հոգւոյն։

Իսկ առ յաղթել ամենայ, զմտաւ ած՝ ա. Զի խոստովանահայրն կայ անդէն փոխանակ Աստուծոյ, և նա լուեալ անդէն մոռանայ. և զի որչափ առաւել ծանուցս լուիցէ 'ի քէն, այնչափ առաւել զովէ զքեզ 'ի միտս իւր, զի տեսանէ զքեզ առաւել խոնարհեալ, յաղթեալ անձնասիրութեան. զ։ բ. Եթէ 'ի մեղանչելն ոչ երկեար յԱստուծոյ, և ոչ 'ի վնասելոյ անձինդ, որ կամաւ թշնամի երևեցար Աստուծոյ սիրողին. զո յանչափս, 'ի խոստովան լինելդ՝ առ իմէ երկիցես և զամենայն հարկանիցիս. զի ոչ չար ինչ է զոր զործես, այլ 'ի զեղջ եկեալ ընդ զործն արհամարհանաց սիրոյն Աստուծոյ, կամիս հաչտել ընդ նմա։ Այլ զի մեծապէս յանցուցեալ ես ընդդէմ Աստուծոյ, նմա պարտ և արժան էր զերեսս 'ի քէն 'ի բաց դարձուցանել և չածել զքեզ յապաշխարութիւն. այլ եթէ Աստուած անչափ զթութեամբ իւրով կոչէ զքեզ «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք», առ ինչ ամաչել քեզ։ գ. Զի և խոստովանահայր զո մարդ է տկար իւրև զքեզ. նա ևս կայ 'ի վտանգի. զիտէ՝ զի եթէ շնորհն Աստուծոյ ոչ օգնեսցէ, և ինքեան հնար է յեւս մեծամեծ չարիս անկզիտանալ. և զի շնորհն այն Աստուծոյ ձեռն տուեալ քեզ հրաւիրեալ է յապաշխարութիւն. և արդ լուեալ նորա զմեղս զո օրհնեսցէ զշնորհն Աստուծոյ՝ որ զքեզ առաջնորդէ, և սիրեսցէ զքեզ զի ունկնդիր զտեալ

ես չնորհայն։ Յաւել առ այս ամենայն զայն եւ՝ զի եթէ ոչ կամիցիս այժմ յայտնել զմեզս քո միոյ ուրուք առանձին, յայտնեսցին ապա 'ի հրապարակի առաջի ատենին Աստուծոյ. արդ կայ քեզ կամ ապաշխարել այժմէն և լինել սիրելի Աստուծոյ, և կամ՝ կալ մնալ թշնամի Աստուծոյ և զատապարտիլ յատենի նորա հրապարակաւ։ Յայսմ՝ ամենայնի ամենեքեան իրք ոչ են, այլ սիրոյն Աստուծոյ և ատելութեան, որք առաւել տարանջատք են 'ի միմեանց քան զչափ միոյ վայրկենի ժամու՝ 'ի յաւիտենական նութենէ. և զու յատելութենէն 'ի սէրն Աստուծոյ անցանել զանզգուշիցես։ Հապա, առ սէր Աստուծոյ, առ սէր երկնից, առ սէր անձին քո մի՛ երկմտիր ասել զճշմարիտն՝ 'ի բաց զանտուտ զամենն եղեալ։

Ի ձեռն այսոցիկ երկուց զարմանոց զղջման և խոստովանութեան սրբեսցի հողին, որ է երկրորդ պատուղ առաջին մասին կրթութեան, որոյ առաջինն էր երիկեանս անխտիր համակամութիւն։ Զի մինչ չեն արմատախիլ արարեալ զախտսն, որք են ամբարտաւանութիւն և հաճոյք մարմնոյ, ոչ է հնար սրբիլ սրտին. վասն որոյ պարտ է զարշիլ և մերժիլ 'ի նոցունց, և զամենայն հնարս հնարել առ քեզել զնոսին յարմատոյ։

Ա. և ես սատակացուցանելոյ զդաւ և զդարշումն 'ի մեզայ՝ առցուք յանդիման մասայ մերոյ յառաջիկայ խոկման զմեր իսկ յանցանս, զորս 'ի խորհել առեալ զգու-

չեաւ՝ յահի կալեալ զմիշտ սարսուռ ընդ ոսկերս ընթացուսցեն։ Բայց ասասէն պարտ է զիտել զի քննութիւնս այս ոչ մասնական իցէ, այլ առհասարակ. զի ոչ է առ խոստովանութիւն, այլ միայն առ'ի ցուցանել զվատթարութիւն մեղացն որ արտաքոյ է մտաց վասն երից. մի՝ առ ծանրութեան և յաճախութեան անարգանացն. երկրորդ՝ վասն վանաքութեան և ապաշնորհութեան անսարգչին. և երրորդ՝ վասն մեծ վայելչութեան և զթութեան անարգելոյն։

Ծանիր. Որք մի օր ևեր ծախեն'ի խոկմռեևս դժոխոց և մեղաց, մարթ է նոցա խոկալ յերկրորդ և յերրորդ մասռեևս միայն ապաչիկայ խոկմանեն. բողոով զառաչիեն առ ընթևռելոյ'ի դիպող իմն պահռ.

ԽՈԿՈՒՄՆ Բ

ՑԱՂԱԳՍ ՄԵՂԱՑ ԱՆՁԻՆ ԱՌԱՆՁԻՆ

Մասն Ա.

Ի վեր է քան զբան ծանրութիւն և չարութիւն մեղաց վասն վատթարութեանն իւրոյ և վասն յաճախութեան։ Աւուրեալ թիւն վատթարութեան միոյ միայնոյ մեղաց յայտ անտի է, զի մեղքն է այն ինքն արհամարհութիւն անչափական սիրոյ մեծ վայելչութեանն Աստուծոյ. մինչ զի անհնարին էր մարդոյ փոխարէն տուղանաք, միով արհամարհութեամբ զրգռեալ զատելութիւնն Աստուծոյ՝ յառաջին սէր դարձուցանել։ Ոչ ջրհեղեղք, ոչ հրայրեացք, ոչ անթիւ զոհք և պատարագք, և ոչ բիւրք բիւրուց մարտիրոսաց զուարթք բաւական լինէին այդմ։ Ըստ սրբոյն Թովմայի՝ ի մեղանչել անդ օտարանամք զլխովին յԱստուծոյ։

Սակայն և այնպէս, ուր դու անձն եղկելի, քանիցս ցայսմայր ժառեցար ընդդէմ ելանել Աստուծոյ, և զպատկերն Աստուծոյ որ 'ի քեզ՝ աններելի թշնամի կացուցեր նմին իսկ Աստուծոյ. զմեծութիւն չարեացն ոչ բանիւ հնար է պարզել և ոչ մարդկային

տկար խորհրդով՝ի միտ առնուլ։ Ո՛վ Աստուած անքնին։ Հրեշտակք հզօրք արհամարհեալ միանգամ զսէրն Աստուծոյ ամբարտաւանութեան խորհրդով յոր դեղեցկութենէ յորպիսի իջին յանարգութիւն յաւիտենական. ապա զինչ լեալ էր ինձ բաղմամեղիս, որ ընդ խաղս, անխեղճ համարձակ բերեալ եմ յարհամարհութիւն սիրոյն Աստուծոյ զօր ամենայն, եթէ արդարութեամբ կամեցեալ էր դատել զիս, եթէ ոչ Յիսուս որդին Աստուծոյ արեամբ իւրով քաւիչ կացեալ էր ինձ։

Ա՛հ. եթէ դատիցիմ ըստ թուոյ յաճախութեան յանցանաց իմոց, առաւել յոյժ մեղապարտ զտայց քան զդևսն դժոխայինս։ Ո՛վ Աստուած իմ, յամենայնի մեղուցեալ եմ՝ խորհրդով, բանիւ և գործով. և ինձ արդ ընդ Անտիոքոսի յուշ եղեն չարիքն՝ զոր գործեցի յԵրուսաղէմ յեկեղեցին Քրիստոսի. եղո՛ւկ զիս. զերեսին կարողութիւնս հողոյս իմոյ, որոյ իբրև՝ի հայելւոջ պարտ էր յանդիման ցուցանել զԱստուած, լեալ տաճար սրբութեան ամենասուրբ Երրորդութեան, պատրաստեալ եմ օթեան խաւարասէր բանակի թշնամեացն Աստուծոյ. տեսանեմ լցեալ՝ի յիս բանիցն Քրիստոսի՝ պղծութեան աւերածոյն կացեալ՝ի տեղւոջ սրբութեան. զիարդ ոչ երկնչիմ և՝ի սպառնալեացն Աստուծոյ՝ի մահուանէ և՝ի կորստենէ և՝ի կրճատելոյ ատամանց՝ի հուրն անշէջ։

Եւ փոխանակ Աստուծոյ առեալ էի 'ի պաշտօն զկամս իմ. ընդ Աստուծոյ փառացն զիմ փառս խնդրէի, և զանգի հաճոյիցն Աստուծոյ ունէին հաճոյք մարմնոյ իմոյ զօրացեալք 'ի յիս. յոյս իմ էր 'ի սնոտի պերճանս. սէր իմ զհետ պնդեալ կորստականաց, և հաւատք իմ յանդուգն ապերասան. յոր միտք իմ առաջնորդէին այնոցիկ զհետ զակատեալ, կարծէի անձամբ անձին դատ վարել և յաղթանակել, և 'ի ժպիրհ ամբարհաւաճութիւն յեցեալ՝ կարծէի առանց Աստուծոյ թագաւորել։ Յո՞ր խորս չարեաց սուզեալ արդ զանձն իմ զտանեմ. տեսանեմ արդ 'ի յիս զպատկերն Աստուծոյ փոխեալ 'ի խանձող թանձրամուխս պատրաստեալ 'ի Նիւթ յաւիտենական անշէջ հրոյն։ Դաչեցիս և ես ընդ Եղրի. «Տէր, ամաչեմ և զոզամ առաջի երեսաց քոց. քանզի մեղք իմ բազմացան առաւել քան զգլուխ իմ, և անօրէնութիւնք իմ բարձրացան առաւել 'ի վերոյ քան զերկինս, . . . և եմ 'ի մեղս մեծամեծս»։

Մասն Բ

Առաւել քան զառաւել լինին զառն և զժոխսըմբեր նախատինքն, որչափ առաւել անարգ և ապաշնորհ ոք իցէ նախատիչն։ Ապա զինչ այլ անարգ կայցէ քան զմարդ ոք լոկ, ինքն ինքնին ոչ ինչ, և 'ի զորձ անկար, և վախճան իւր մահ և ապականու-

թիւն։ Իսկ այր մեղաւոր, թշնամի Աստուծոյ, ոչ ինչ է առ այլովք 'ի մարդկանէ, ևս առաւել առ դերամաքուր հրեշտակօք, զինչ ապա առաջի մեծվայելչութեանն Աստուծոյ։

Զահի եղեալ սասանին երկինք, մարդ փանաքի «Աստուած ճեռս ընդդէմ Տեառն, և առաջի Տեառն ամենակալի ընդվզեցաւ. ընթացաւ առաջի նորա հպարտութեամբ... զի ծածկեաց զերեսս ճարպով իւրով, և արար երկայրի յազդեր իւրում»։ Ասելով ընդ Փարաւոնի. «Ո՞վ է նա, որում լուայց ձայնի նորա. ոչ գիտեմ զՏէրն». «Որդն և երբ անարդ մոռացաւ զԱստուած, և ընկեաց զնա զկնի մարմնոյ իւրոյ»։ Ո՜ աստեղք երկնից չիջուցէք զփայլմունս ձեր. Աստուած... 'ի ստոր քան զմարմինն կալեալ... զհաճոյս մարմնոյն քան զսուրբ կամս Աստուծոյ պատուեալ։ Ո՜ զօրութիւնք երկնից ընդ որ առաւել կայք զարմացեալ, ընդ հեստութիւն մարդոյն՝ որ այնպէս ապառում յանդգնութեամբ ասպարթանէ ընդդէմ Աստուծոյ, թէ ընդ երկայնամիտ համբերութիւնն Աստուծոյ՝ որ այսպէս զթութեամբ հանդուրժեալ տանի մեղմեխանաց զառանցելոյն 'ի յիմարութեան։

Անարգն լինել և ապաշնորհ այս ևս քան զևս ծանրացուցանէ զմեղսն։ Աստուած իբրև զքեզ մեղաւորի եցոյց զանթիւ երախտիս մեծամեծս և արդիւնականս յոյժ, որք են անկշռելիք, առ մեծվայել-

չութեան պարգևատուին և առ գերազան-
ցութեան պարգևացն և առ անարգութեան
պարգևառուին։ Եւ արար քեզ զայսոսիկ
բարերարութիւնս առանձին իմն Շնորհիւ,
սիրելով զքեզ 'ի յաւիտենից 'ի սկսանել
անդ սիրելոյ զէութիւն իւր, և անչափական
սիրով որով սիրէ զանձն իւր, և ձրիատուր
իմն սիրով չունելով նորա պէտս քեզ և
քումդ սիրոյ։

Զայսպիսի և զայսչափ սէր առատա-
ձեռնեաց քեզ Աստուած... Աստուած...
նա որ ինքն ինքնին անկարօտն է, և ինքն
ինքնին ամենեարանեալն է... բարերարեաց
քեզ՝ զերի ապերասան, քեզ՝ որ իբրև զկաթ
մի ես առաւօտի ցօղոյ. իբրև զտերև շար-
ժուն 'ի հողմոյ, և իբրև զփոշի զոր հոսէ
հողմն, և նոյն ինքն ոչ ինչ՝ վարակեալ
յախտս և 'ի թշուառութիւնս. բարերա-
րեաց քեզ առանց երևելոյ 'ի քեզ արժա-
նեաց, զոլով կանխագէտ և յանցանացդ,
ընտրեալ զքեզ յայլոց բազմաց, որք թեր-
ևս առաւել եռանդեամբ ծառայեալ էին
նմա։ Եւ զու այսպէս ապաշնորհ երևեցար
Աստուծոյ, մինչև արհամարհել և զսէր նո-
րա. «Խորտակեցեր զլուծ նորա, խզեցեր
զկապանս նորա և ասացեր՝ թէ ոչ ծառայե-
ցից»։ Եւ այսպէս յարհամարհութիւն սի-
րոյ նորա արկեր 'ի զործ զամենայն զօրու-
թիւնս հոգւոյդ և զզգայութիւնս մարմնոյդ,
զձիրս բնութեան քո և զբաջողջութիւնդ։

Ով Աստուած իմ և Տէր, ապախտա-

ւոր եմ Հնորհացդ քոց քան զդաղանս, յո-
րոց ոչ ինչ արհամարհանս կրես, և քան
զամենայն մարդկի խուժ և դուժ աղանց և
վայրենեաց, որոց ոչ որպէս առ իսն առա-
ռաձեան երևեցար 'ի բարերարել. առաւել
ապաշնորհ քան զդևսն չարանենդս, որոց
վասն ոչ եռուր 'ի մահ զորդիդ քո զՔրանն
Աստուած։ Վկայեմ ես իսկ զանձնէս. զի
այս իմ ապաշնորհ բարք յապիկարութեան
իմում առաւել քան զառաւել ծանրացու-
ցանեն զմեզս իմ. բայց ողորմեա ինձ ցա-
ւելոյս 'ի բեկեալ սրտէ. թող ինձ որ խոս-
տանամ դառնալ 'ի սրտէ։

Մասն Գ.

Անչափ է ծանրութիւն մեղացն ըստ
առաւելութեան մեծվայելչութեան և դթու-
թեան նախատելոյն։ Մեծվայելչութիւն
վառացն Աստուծոյ 'ի վեր է յոյժ և քան
զմիտս քերովբէիցն դերագունից. նորա
անկեալ երկիր պագանեն նմա թեւովքն պա-
ռածածկելովք։ Արժան և իրաւ, քանզի
նա ինքն է տէր տերանց և թագաւոր թա-
գաւորաց, սուրբ և ահեղ է անուն նորա,
որ նստի 'ի քրովբէս և հայի յանդունդս.
և դու հող և մոխիր յանդգնիս, յաւակնիս
արհամարհել զսէր նորա առ քեզ. խոր-
հեաց միանգամ, որդն աղկաղկ, զո՞ անար-
գեցեր. տես զամենակալ զօրութիւն նորա.
կարող էր անդէն 'ի մեզանչել քո զահավի-

ժել զքեզ 'ի զժոխս։ Իմաստութիւն է նա անբաւ, զանզորձս քո զամենայն տեսանեն աչք նորա. 'ի զնալ քո զհետ կամացդ և հաճոյիցդ, արհամարհեալ զսէր նորա, տեսանէր նա զքեզ և լռէր։ Ինքն է սուրբն սրբոց. առաւել եղև զժկամակութիւն նորա ընդ մի միայն մեղս քո, քան զբարեհաճութիւնն որով ընդունէր զամենայն ապրիական ճգունս սրբոց իւրոց։ Եւ զու յաճախեցեր 'ի մեղս անխտիր աներկբայ, ոչ ինչ երկիւղ յահաւոր ցասմանէ նորա կրելովք։

Եւ զու որչափ յաւելուիր 'ի քո անզուսպ զնացս, Աստուած այնչափ առաւել զթութեամբ մնայր զարձին քում. առաջի առնէր քեզ զէպս բարեյաջող զգաստանալոյ, զալոյ 'ի միտս, և զու սպասացեալ սրտիւ անլսող եղեր նմա. կարծէիր եթէ 'ի չնուլ զբաղձանս հաճոյից կամաց քոց վայելեսցես 'ի հանդիստ, և ոչ յիշէիր եթէ ստեղծեալ քո առ 'ի սիրել զԱստուած, և յարհամարհել քո զսէր նորա, ոչ այլ ինչ մնայ քեզ բաժին՝ բայց եթէ կրճումն ատամանց և հուր զեհենոյն. այլ զու զառաջեալ մտոք զմեծութիւն քաղցրութեանն Աստուծոյ ոչ յիշեցեր, որ իբրև զբիբ ական իւրոյ պահպանեաց զքեզ, և 'ի զիրկս իւր ընկալաւ զքեզ, իբրև զդայեակ որ զմանուկ իւր զգուիցէ՝ այնպէս խնամէ զքեզ։ Սիրեաց զքեզ եթէ ոչ իբրև բարեկամ, զի ատեցեր զու զսէր նորա, այլ իբրև բարերար մնալով քեզ աւուրն ապաշխարութեան, զի

անտես արասցէ զմեղս քո։ Այլ մնայ քեզ խորհել զարժանն։

ԻՂՋԻ

Ա. Բորբոք ցաւոց. Ով Աստուած իմ, վշտացուցի զքեզ. ես... զքեզ... ոչ ինչ և անարդ, զԼիզ ամենաբարի. որդս անպիտան, զՊետրոս ամենիշխան. ծառայս զՏէրդ. ստեղծուածս զԱրարիչդ. մարդս զԱստուածդ... և 'ի վերայ անչափ բարութեանցդ, արհամարհանօք և ապերախտութեամբ... վասն չնչենից, վասն առերևոյթ շահու անձին, վասն անարդ հաճոյից, առ վիսութեան և առ չարութեան... վշտացուցի զքեզ, ով Տէր իմ ամենասուրբ, յանդիման աչաց քոց. առ ոչ ինչ զրեալ զտանջանս զժոխոց և զվայելս արքայութեան. անարդեալ զզեղումն շնորհացդ... մինչդեռ 'ի սէր զգուէիր զիս... ես 'ի նուազս անթիւս վշտացուցի զքեզ... յաճախ հանդիպեալ և թողութեան... Ահ. ամաչեմ... ապաշաւեմ... ցաւիմ... և ցանկալի է ինձ պատառել սրտի իմոյ առ անհնարին ցաւոց։

Բ. Հաստատորդիւն ոխտի. Այլ մի ևս մեղայց, Տէր իմ Տէր, մի ևս այլ։ Ուխտեմ հաստատութեամբ յանդիման ամենայն երկնից և առաջի մեծվայելչութեան փառաց քոց, ամենայն յօժարութեամբ և զօրութեամբ կամաց իմոց ընտրեմ և յանձն առ-

նում զրկիլ յամենայն բարեաց, անկանել յամենայն փառաց և պատուոյ, տանել ամենայն ազգի ազգի վշտաց, և 'ի դառն տանջանս ճաշակել զմահ, քան երբէք իւիք վշտացուցանել զքեզ նա և թեթև ինչ յանցուածով։ Ոչ ես երբէք, ոչ ես այլ վշտացուցից զքեզ. մանաւանդ (յայսմ կամ յայնմ, և այլն)։

Գ. Լուսանդն խոնարհութեան. Աւաղ զիս. «Ամթ երեսաց իմոց ծածկեաց զիս». վիրաւորք յանցանաց լցեալ է սիրտ իմ. ահ, արդարև այր մի զարշ եմ և անսուրբ, որ ըմպեմ զանօրէնութիւնս հանդոյն ըմպելւոյ. զի «Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ»։ Ո՜ անիծապարտ ամբարտաւանութիւն. այն եղև սկիզբն չարեաց և իմոյ կորստեան. խորշիմ մերժիմ 'ի քէն յամենայն սրտէ։ Յայսմ հետէ և առյաջպայ մի ազանիցի 'ի սրտի իմում խորհուրդ ամբարտաւանութեան. 'ի բաց լիցի նա յամենայն խորհրդոց իմոց և 'ի բանից և 'ի գործոց։ Լցայց ես նախատանօք և դրպարտութեամբ. նոքին յարձակեսցին յիմ վերայ, խնդրեսցեն յինէն վրէժս արհամարհանացն զոր արարի Աստուծոյ։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՕՐԻՆ

Ա. Մեծ է ծանրութիւն և չարութիւն մեղաց առ վատթարութեան իւրոյ և յաճախութեան։ Վատթարութիւն նորա յայտ է 'ի գործոցն որ է արհամարհութիւն սիրոյն Աստուծոյ, որում ամենայն չարիք աշխարհի ոչ կարեն առնել զհատուցումն. և դու ժառեցար նովաւ զպատկերն Աստուծոյ որ 'ի քեզ՝ կացուցանել թշնամի նմին ինքեան Աստուծոյ. և դու զոր ամենայն անխիղճ բերեալ ես 'ի նոյն. եթէ ոչ արեամբ իւրով քաւիչ լեալ էր քեզ Քրիստոս, զի՞նչ լինէր քեզ։

Բ. Որչափ առաւել անարգ ոք և ապաշնորհ լիցէ նախասիրէն, այնչափ առաւելու դառնութիւն նախատանացն։ Մարդն ինքնին ոչ ինչ է, և ապիկար 'ի գործ, և վախճան նորա մահ. և դու մարդ փանաքի ընդդէմ Ցեառն ձեռն ամբարձեր։

Անարգն լինել և ապաշնորհ՝ այս առաւել ծանրացուցանէ զմեղս։ Աստուած այնչափ բարերարեաց մարդոյն. այլ նա ապաշնորհ երևեցաւ Աստուծոյ և բարերարին իւրոյ։

Գ. Եւ ևս ծանրացուցանէ զմեղս մեծվայելչութիւն նախատելոյն և գթութիւն։ Մեծվայելչութեան նորա ոչ է հնար հասու լինել մաց մահկանացուի. և քերոբէք անգամ 'ի խոնարհ ունելով զդէմս և պարփակեալ զահեղ փառս նորա թևովք, աղաղակեն ոմն է իբրև զԱստուած մեր։ Եւ գթութիւն նորա անյաղթելի՝ որով ոչ դադարեր 'ի բարերարելոյ քեզ, սիրեր զքեզ և

մեայր դարձին քում։ Ա՛հ. նախատեցեր դու զԱստուած զմեծն և զամենաբարին, և կեանս տա-կաւին. և 'ի ցաւոց ոչ պատառի սիրտ քո, և ոչ շեթս ինչ արտասուաց իջուցանեն աչք քո, և ոչ մի հառաչանս արձակէ սիրտ քո։

Ընթերցիր

Թովմ. Գեմբ. Գիրք Գ. Գլ. 7. Հատ. 2։

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Ի վերայ կրկին արմատոց մեղաց.

Ոչ է շատ ճշմարիտ ցաւն և զարշումն 'ի մեղաց, այլ պարտ է ուղղել զուշ մտաց առ արմատս նոցա. ապա թէ ոչ՝ ոչ լինի-ցի 'ի սրտի անարատ սրբութիւն. զի մինչև աղբիւրակն ախտից ոչ խցցի, այն ցան-կացեալ ոսկեղինիկ անխտիր համակամու-թիւն ոչ ստացանի, և ոչ ուղղութեամբ առ վախճանն կարդեսցին գործք մեր։ Վասն այնորիկ ասացաք 'ի վեր անդր եթէ ցաւ և զարշումն պարտի լինել այնպէս զի ընդ մեղացն և զարմատս նոցա կորդեալ անհե-տացուսցէ. և այս պարտի լինել պտուղ սերկեան խոկմանց։

Այսոքիկ կրկին արմատքս ըստ զլխաւոր մասին են. ա. Ցանկութիւն զերազանց երևելոյ է ամբարտաւանութիւն. և եր-

կրորդ՝ Ա.նյագութիւն ընոյ զհաճոյս՝ որ է ցանկութիւն մարմնոյ։ Ի սոցունց ընձիւղեալ շառաւիղեն ամենայն մեղք ծանուցք և թեթևք՝ նաև ծնունդքն ազահութեան. զի պատճառ 'ի խնդիր ելանելոյ ճոխութեանցն են իղձք պերճանաց և հաճոյից։ Ա.մբարտաւանութիւն ոչ կամի ճանաչել զԱ.ստուած զհայր. այլ թէ և խոստովանեսցի բերանով, սակայն համարի զանձն ելեալ յիշխանութենէ նորա. զբարիսն զորս առնէ՝ կարծէ զործեալ ինքնին առանձին, չունելով պէտս օգնականութեանն Ա.ստուծոյ։ Պարծի 'ի խորհուրդս իւր, և արհամարհէ 'ի միտս իւր զամենեսին, ընդ նոսա և զԱ.ստուած. թէպէտ ինքն ոչ կարէ յուրաստ զալ 'ի մեծութենէ Ա.ստուծոյ, այլ ոչ հաւատայ եթէ կամիցի Ա.ստուած 'ի ձեռն այլոց հրամայել ինքեան. զի եղեալ է 'ի մտի եթէ հրամանք Ա.ստուծոյ յայտնեալ են մեզ իւրոց. վասն որոյ և կամի զի և առաջնորդք անդամ յինքենէ լուիցեն զոր պարտիցէ հրամայել ինքեան։ Եթէ քննեալ՝ զտցես զքեզ յեցեալ 'ի խորհուրդս ամբարտաւանութեան ցայսօր, զիտասցես անկերկբայ եթէ ամենայն խորհուրդք և զործք քո զրէին քեզ 'ի մեղս, զի այն ամենայն կարդեալ էր յարհամարհութիւն սիրոյն Ա.ստուծոյ, յորոյ 'ի հրամանէն տնօրինի յաշխարհի ամենայն ինչ։ Զոր թէ և բերանով խոստովանեսցի անձն ամբարտաւան, այլ 'ի քննել զսիրտն՝ զտցէ զանձն ոչ միայն

պակասեալ 'ի կրօնաւորական կարգաց, այլ և արտաքոյ եկեղեցւոյ 'ի խումբս վայրենեաց, որք ոչ ճանաչեն թէ գոյկ Աստուած։

Ո՛վ քանի՛ խորարմատ է այս ամբարտաւանութեան ախտ 'ի սիրտ մարդոյ, և որչափ դժուարին 'ի քեզել. քանզի այնպէս անօսրունք են, զի և 'ի սրահայեաց աչաց ծածկին. և 'ի կարծել առն արմատախիլ արարեալ 'ի սրտէն, եթէ չիցէ խորագոնին խուզարկու մտեալ 'ի խորս սրտին, պատրեսցի անշուշտ, և յանցանել ժամանակի զարձեալ զտցէ զնոյն ընձիւղեալ աճիւնաճիւղ, և զինքն զարձեալ ընդ ստուերսամած ոստովք նորա հանգուցեալ, ոչ կարելով տեսանել զլոյս արեգականն արդարութեան։

Արդ զի մի ընդ վայր ծախեսցին վաստակք քո, պարտ է քեզ անվստահ լեալ յանձն, և յԱստուած հաստատեալ զյոյս քո, կալ միշտ 'ի խոյզ արմատոցն, և ծախել զամենայն ժամանակս կենաց քոց 'ի խլել զնոսին։ Այպա թէ ոչ՝ անհնարին է հաստատել զհիմն կրթութեանս յանխտիր համակամութեան կամացն Աստուծոյ 'ի վերայ արմատոցս. քանզի տապալեալ զհիմունսն 'ի սրտիդ, կարծեցուցէ քեզ թէ կայցես յանվրդով հաստատութեան։

Այլ այն է չար քան զամենայն, զի 'ի սրտի անդ՝ յորում իցեն արմատք ամբարտաւանութեան, ոչ բնակէ Աստուած. որով հարկ լինիցի քեզ կալ միշտ յարհա-

մարհութեանն Աստուծոյ։ Արդ տես եթէ իցէ՞ թիւ մեղաց առն որոյ կեանք ողջոյն հիմնեալ կայցէ 'ի վերայ ամբարտաւանութեան։ Ապա դու ինքնին 'ի միտ առնուս, զի 'ի ցաւել 'ի վերայ մեղաց՝ ոչ կարասցես հաշտ առնել ընդ քեզ զԱստուած, մինչ չև կորզեալ 'ի սրտէդ զարմատս դայս. և զի ընդ վայր լինիցին ամենայն վաստակք քո՝ եթէ ոչ զամենայն ուշս մտաց քոց յայս ուղղեսցես։

Միւս ևս աղդոյ դարման առ 'ի խոնարհիլ և առ 'ի ցամաքեցուցանել զարմատս ամբարտաւանութեան՝ է յիշատակն դժոխոց, որում արժանի դտար յարհամարհել քո զսէրն Աստուծոյ ամբարտաւանութեան խորհրդովք։ Քանզի տաճեալ քո զարմատս ախտից զամբարտաւանութիւն, վիճակակից եղեր դիւաց 'ի յաւիտենական դատապարտութեան։ Քանիք քան զքեզ սակաւամեղք ոչ կարացեալ զալ 'ի միտս, և ծնդեալք յայս խորհուրդ ամբարտաւանութեան, կան մատնեալ 'ի հուր դեհենոյն, յորում անվախճան լայցեն։ Ապա և քեզ եթէ հասանէր մահ և ըմբռնէր զքեզ յամբարտաւանութեան քում, պարտ էր և քեզ այժմէն սկսանել տանջիլ 'ի նոյն կոտանս 'ի դատապարտութեան. արդ խորհեաց յանձին քում. որ ոք արժանի է դժոխոց, անկ է նմա կրել և յայսմ աշխարհի զամենայն դանարդանս և զցաւս։ Զի որ արժանաւորն է այնմ պատժոյ՝ որ դեր 'ի վերոյ

անցանէ սատանայութեամբն, ևս առաւել ի-
բաւամբք կրեսցէ զայն՝ որ նուազ է տան-
ջանաց։ Եւ զի պատուհասաց դժոխոցն ա-
ռաւելուն յոյժ յոյժ քան զամենայն դառն
նախատինս և զցաւս զտեալս յաշխարհի
ասա, ապա՝ի զէպ է քեզ կրել զդառնա-
զոյնս՝ի վշտաց աշխարհի։ Եւ այսպէս
զտեալ քո արժանի դժոխոց, չիք յաշխար-
հի չափ նախատանաց, չիք ցաւ դառնակս-
կիծ արդարակշիռ քումդ արժանեաց. յա-
մենայնի արդար լիցէ ասել՝ եթէ զու վասն
յանցուածոց քոց արժանի ես առաւել խա-
տիւ նախատ լինելոյ և առաւել մեծաց պատ-
ժոց պատժապարտ։ Ապա որչափ և խոն-
արհեսցիս և վշտասցիս, միշտ նուազ գտցի
քան որչափ արժան էր քեզ վշտանալ և
խոնարհել վասն միոյ եթէ մեղայ քոց։

Զայս ամենայն համարիս ասացեալ ի-
բաւամբ, և զու զարձեալ ամբարտաւանիս։
Հաւատս ընծայեսս այսմ՝ ամենայնի, և զար-
ձեալ զգուեսս զմարմինդ զամբարն ամե-
նայն ախտից և մոլութեանց։ Ո՛վ մեղաւոր
զու, եթէ և ամենայն նախատինք մար-
դկան՝ի քեզ յարձակեալ էին, եթէ ծաղր և
ծանակ լեալ էիր յամենեցունց, և՝ի ծով
վշտաց ընկղմեալ, և յամենայն հիւանդու-
թիւնս տագնապեալ չարատանջ, այն ամե-
նայն նուազք էին քումդ արժանեաց։ Գի-
տես և զու. և սակայն ընդ ստուեր իմն նա-
խատանաց և վշտաց ցասնուս, տխրիս, և
՝ի տրտունջ լուծանիս։ Ցիշեա զի արժանի

ես յաւիտենական պատժոց դժոխոց, և զի փոխանակ այնոցիկ՝ անբաւ բարութիւնն Աստուծոյ կամի քեզ տանել այնր փոքու նախատանաց, նուազ այնմ՝ ցաւոյ. և դու անհամբեր զտեալ քրթմնջես և զայրա-գնիս։ Եւ ես ամբարտաւանեալ շողոմես զանձնդ։ Ո՛ դժոխք, և յիշատակ քո ոչ կա-ցէ ցածուցանել զընդվզեալ բարձրութիւն սորա և հրաժարեցուցանել զայր 'ի կամաց մարմնոյն։

Երրորդ դարման զիջանելոյ 'ի բար-ձրամտութենէ՝ է յիշել զդիւրազայթն լինել բնութեան մերոյ 'ի մեղս։ Ո՛վ դու որ ընթեռնուդ, կաս 'ի վտանգի սայթաքելոյ ծանուիսկ յանցանօք. մի ինչ երկմտիցիս, ով անձն եղկելի. ցորչափ շնչես զոդ՝ հնար է քեզ անկանել և 'ի ծանր յանցուածս բե-ռիլ 'ի մեծ ես արհամարհութիւն սիրոյն Աստուծոյ։ Թէ և զորձեսցես աքանչելիս մեծամեծս, և ընդ Պօղոսի յերրորդ յերկինս ելցես, դարձեալ 'ի լքանել զքեզ չնորհացն Աստուծոյ՝ կարես յորում՝ և է ժամու զթել և անկանել։ Ա՛հ սարսեսջիր զոդալով։ Մին 'ի քառասուն մանկանցն Սեբաստիոյ զրեթէ զդիչերն ողջոյն տագնապէր և հանդուրժէր 'ի սառուցեալ լճին, և այն ինչ մերձ յառնուլ զպսակն՝ կասեցաւ, և ածեալ 'ի ջերմ բաղանիս փչեաց զոդին։ Եւ այսորիկ օրինակք անթիւք են։ «Ողբասցին սարոյք զի մայրք զլորեցան»։ Ծանիր զքեզ առաւել զիւրաբեկ քան զանօթս խեցեղէնս, և երկիր՝ զի և քեզ հնար է անկանել։

Եւ զոլով քո մահկանացու, հնար է քեզ 'ի պահու անդ յանցուածոյդ մեռանել և յանդիման լինել առենին Աստուծոյ, և անդէն մատնիլ 'ի տանջանս դժոխոց. ո՜ ճշմարտութիւն ահաւոր, պատճառ անընդդիմակ խոնարհեցուցիչ մտաց։ Զատեալ եմ ես արժանի դժոխոց, կարեմ զարձեալ մեղանչել և մեռանել 'ի մեղս և իջանել 'ի դժոխս. և ես տակաւին ամբարտաւանեմ, և պարարել զմարմին իմ խնդրեմ։ Եթէ լինէր հնար դառնալ 'ի դժոխոց զատապարտելոյ ուրուք և ապաշխարութեամբ հաշտ առնել զերեսս Աստուծոյ ընդ իւր, ո՜րչափ և որպիսի՜ պատժովք յանձն առնոյր խոշտանգել զմարմին իւր առ չանկանելոյ նորոգ 'ի մեղս, առ հաճելոյ զԱստուած, առ փոխարինելոյ նախատանացն որովք վիրաւորեաց զդրունս զթութեանն Աստուծոյ առ ինքն։ Եւ դու հիմ զանդաղիս ցարդ զնոյն առնել. միթէ փոքրագոյն իցէ բարերարութեանն շնորհ՝ արժանի զոլով դժոխոց՝ կալ մնալ ազատ, քան զդառնալն յետ իջանելոյ անդր։ Հա՜պա, խոնարհեցո զքեզ առաջի Աստուծոյ, և վշտացնեա զմարմինդ այնպէս, որպէս ոք մտադիր յանձն առնոյր առնել՝ այն ինչ զարձեալ 'ի դժոխոց։

Սրդ դիր ուխտ ընդ անձինդ յետս կալոյ յայսմհետէ յայն ամենայն մեղաց ես և 'ի մանուանց, զորս ետուն քեզ զործել ամբարտաւանութիւն և ցանկութիւնք մարմնոյ։ ա. Զխորհել, չխօսել և չգործել ինչ

որ քեզ 'ի փառս և այլոց զամբի և զանարգանս ածցէ. (էջ զու 'ի միտս քո 'ի մանունս)։ բ. Առնել զզոյշ պահպանութիւն զզայութեանցդ զի մի յախտաւոր ինչ բերմունս ածցին, մանաւանդ աչք քո և ականջք և ճաշակելիք. (ած 'ի միտ զդէպս յորս 'ի սովորութենէ բերեալ, և 'ի մեղս անգամ ոչ համարիս. և մինչ չէ զրեալ զայսոսիկ ուխտս սրտիդ մի թողուր զդրիչն 'ի ձեռանէ քումմէ)։ Եւ զի վախճան այսոցիկ խոկմանց է զաղարել 'ի մեղայ և առնել զարժանի հատուցումն, վասն որոյ պարտ և պատշաճ է առնել և ապաշխարանս ինչ արտաքինս 'ի կերակուրս, յանկողինն և 'ի քուն, ևս և 'ի մարմինն, խոշտանկելով զնա, քրճաղդած լինելով, կամ բաղկատարած կալով յաղօթս 'ի յիշատակ խաչելութեանն Քրիստոսի։ Եւ զայսոսիկ ոչ միայն յաւուրս կրթութեան, այլ սահմանել 'ի միտս առնելոյ և արտաքոյ կրթութեան յետ այնորիկ. զի արտաքին մեռուցումն մարմնոյ զերիս զայսոսիկ արդիւնս պտղաբերէ. ա. Ոչ սակաւ հատուցումն առնէ անցելոյ մեղայ։ բ. Այնու յաղթէ մարդ զզայական մասին։ հնազանդեցուցեալ զայն ի մայցականին։ գ. Հեշտեաւ մարթ է բերել 'ի ձեռս զպարգևս շնորհացն Աստուծոյ՝ որում ցանկամբ և զոր խնդրեմք։ Եւ ևս առաւել զի զթիւնալից զերկոսին արմատս մեղայ կորզեալ՝ ընդէ զՀպարտութիւն և զՀաճոյս մարմնոյ։

Ծանիր. Զառաջիկայ բնեռբիւնն մարդ է առնել 'ի ժամու հոգեւորական ընթերցմանն, կամ շայլ իմն ժամ պարապոյ յորում չգոյցէ ահմանեալ գործ կրթութեան.

ՔՆՆՈՒԹԻՒՆ

Թերութեանց որ յամբարտաւանութենէ և 'ի հաճոյից մարմնոյ.

Այսօր ատեցեալ զարշելեացք 'ի չարութենէ մեղաց և յարմատոյ նոցին. արդ առ ընչելոյ զայնոսիկ 'ի սպառ 'ի սրտից, և առ լաւ ևս ճանաչելոյ զանձինս մեր, յայսմ քննութեան նկատեսցուք թէ քանի՞ չարեաց մայր է դա բաղմաբեղուն։

Ա. Ամբարտաւանութիւնն, որ է անկարգ բաղձանք գերազանցութեան անձին, ոչ միայն է ինքնին գլխովին արհամարհութիւն մեծ յոյժ սիրոյն Աստուծոյ, այլ և է աղբիւր և ծագումն այլոցն ամենայնի։ Ծնունդք նորա են անապարծութիւն, պատուասիրութիւն, կեղծաւորութիւն, զայրոյթ, նախանձ, ստղիւտ, ատելութիւն, յանդգնութիւն, արհամարհութիւն այլոց, անապարծութիւն, յաւակնութիւն, կանխակալ դատումն, կամակորութիւն, ապերախտութիւն, անհնազանդութիւն և ապստամբութիւն։ Քանզի ամբարտաւանու-

թիւն վասն չնչենոց ամբարհաւաճէ, 'ի խնդիր է պատուոյ, կեղծէ յանձին զառաքինութիւն, ընդ անարգանս ցասնու, քրթմնջէ զառաջնորդէն, լի է մախանօք, ատեայ զարհամարհիչս իւր, յանձին խմատութիւն պանծայ, անձնագով է, անարգու այլոց, յաւակնեալ՝ կարծէ զանձն ամենայնի կարող, և է կամակոր, ապաշնորհ, անհլու և ապստամբ։

Մատիր արդ 'ի քննութիւն անձինդ և տես՝ ա. Յամենայն գործս քո ունիցիս զիտումն ուղիղ ծառայելոյ փառացն Աստուծոյ, թէ 'ի խնդիր փառաց անձինդ յածիցիս։ բ. Եթէ պանծանայցիս 'ի միտս քո ընդ անձնդ և ընդ գործս քո։ գ. Եթէ սնապարծիցիս և սիգայցես առաջի այլոց։ դ. Եթէ առնուցուս 'ի գովութիւն զառաքինութիւնս քո, զի գովութիւն ընկալցիս։

Բ. Արկ 'ի քնին միանգամ եթէ խնդրիցես զառաջին բարձս, և խրոխտայցես 'ի վերայ այլոց։ Եթէ կեղծեալ զխոնարհութիւն և անփառութիւն, և ողջամտութիւն, շրջիցես 'ի խնդիր աստիճանաց բարձունց և պաշտամանց փառաց. եթէ համարեալ զքեզ արժանաւոր քան զայլս, տհաճիցիս կալ 'ի ստորին պաշտամունս. զգայցիս յանձին կիրս իմն նախանձու՝ զի այլք ունին զառաւել բարձրագոյն տեղին. եթէ ցասնուցուս զի չիցես պատուեալ, և զի 'ի նախատինս կոյցես. և կրիցես ատելութիւն 'ի սրտի ընդդէմ նախատչին։

Գ. Հարց ցանձնդ՝ միթէ ոչ պանծանայցես և դու ընդ իմաստութիւն քո՝ գիտել դամենայն, ոչ արհամարհիցես զայսն միայն զքեզ և զքոյդ բարձրացուցեալ. չիցես 'ի թուոյ նոցա որք համարին զանձինս արժանիս ամենայն պատուոյ, և որք զանձինս ետթ կարծեն կարող ժամանելոց առ մեծամեծս. ոչ իցես յայնցանէ՝ որք յամառեալք 'ի կարծիս, չառնուն յանձն հնազանդել, և ըստ արդեանց իւրեանց յիրաւունս զրեն վայելել յարտունութիւն։ Չիցես արդեօք 'ի նոցանէ որք քրթմնջեն զառաջնորդաց, որք սերմանիչք են որոմանց 'ի միաբանութեան և ապստամբ, քանզի համարին զանձինս զրկեալս յարժանաւոր իւրեանց պատուոյն։

Ա. յսու համառօտ քննութեամբ մարթ է քեզ ճանաչել թէ որչափ խորարմատ իցէ 'ի քեզ ամբարտաւանութիւն, զոր ամենայն զօրութեամբ քով փոյթ կալցիս 'ի խլել. «Վասն զի յամբարտաւանութենէ կորուստ և խռովութիւն յոյժ»։

Երկրորդ ժանան թիւնաւորիչ սրտից է ցանկութիւն մարմնոյ՝ որ է մայր յոլովազոյն մեղաց. որ է ախորժ զգայական բերկրանաց, որոյ ծնունդք են որկրամոլութիւն, արբեցութիւն, ծուլութիւն, զեղխութիւն, դատարկութիւն, հեռաքննութիւն, նախանձ և զայրացումն, և այլն։

Քննեա արդ եթէ յամիցես և դու 'ի ցանկութիւնս ուտելոյ և ըմպելոյ 'ի յաղուրդ

ախորժանացդ, եթէ զզուիցես զմարմինդ բարակման զգեստուք, կակուղ անկողնովք, և յերկար ժամս 'ի քուն լինելով. խուսափիցես 'ի վաստակոց, իցես 'ի խնդիր անկարդ հաճոյից, յածիցես զհետ վայելից հանգստեան. սիրիցես զդատարկութիւն, ածիցես զաչդ զվայրօք. մախայցես ընդ անդորր կեանս և ընդ հանգիստ այլոց. տաՀիցես 'ի սրտիդ առանձին սէր և բարեկամութիւն, իցէ 'ի քեզ անկարդ բաղձանք աղդականաց։ Մատիր 'ի խնդիր եթէ առմր յախտիցս այսոցիկ իցես հետամուտ, և յամենայն զօրութենէ քումմէ Ջանա կորզել հանել 'ի սրտէդ, յիշելով զբանն եթէ մեք զմեզ խաբեմք անկարդ սիրով զոր առմարմին ունիմք։

Ծանիր. Առաջիկայ խոկման զառաջին մասն մարդ է ընթեռնուդ 'ի պատրաստութեան ժամուն առ խոկումն. իսկ զյորրորդն յաւարտել խոկմանն։ Իսկ որ ծախէ զերկուս առուրս յայսոսիկ խոկմունս, կարէ խոկալ այսօր զերկուս զառաջին մասունս և վաղիւ զայլ զերկուսն.

ԽՈԿՈՒՄՆ Գ

ՅԱՂԱԳՍ ԴԺՈԽՈՅ

Մասն Ա.

Ա. Պատիժք մարմնոյն. Դատապարտեալն կրեսցէ 'ի մարմնի իւրում զամենայն ցաւս՝ զորս կարիցէ երբէք տանել մարմին, և զամենայն միանգամայն. ոչ միայն զայնոսիկ զոր մեքն ճանաչեմք, այլ որ ինչ հնար իցէ երբէք պատահել։ Գլուխն, աչք և ականջք և ամենայն անդամք նորա առանձին անհնարին ցաւովք ըմբռնեալք՝ յանհնարին խոշտանգանս ցաւոց տագնապեսցի չուառականն։

Բ. Եւ այս ամենայն զառիւնք իցեն յոյժ, թէպէտ ըստ յանցանացն չափաւորեալք։ Սուրբն Թովմաս հաւաստէ եթէ թեթեւզոյն աստիճան ցաւոցն զժոխոց առաւելու յոյժ քան զամենայն աղգս խոշտանգանաց մարտիրոսաց, քան զամենայն ցաւս աղգի աղգի հիւանդութեանց մարմնոյ, և քան զամենայն աղգս պատուհասից չարագործաց. զամենայնն առեալ միանգամայն 'ի միասին։ Ա. Հ. Է երբէք զի ցաւ իմն ատամանց 'ի ցնորումն և 'ի կատաղութիւն զմեզ ածէ. ապա զի՞նչ լինիցի 'ի կալն 'ի ներքոյ տարա-

փոյ ազգի ազգի անթիւ տանջանաց, և այն 'ի զառն սատիճանի յոյժ քան զյոյժ։

Գ. Եւ այն անվախճան. Յահի մեծի կամ. անվախճա՜ն, առանց հանդիստ ընդ մէջ արկանելոյ, առանց կասելոյ, առանց փոխելոյ, առանց սփոփանս իմն 'ի վերայ ածելոյ. միշտ, անդադար, առանց թեթևանալոյ, առանց ողորմութեան։ Ի կեանս յայս ամենայն ցաւք և հեծութիւնք առնուն զդադար. 'ի խորս անդ անդնդոց պատժոց չիք դուլ և զդադար երբէք. չիք երբէք։ Ա՜հ. անհանդուրժելի է մեզ պատուհաս՝ անցուցանել զմի ևեթ դիշեր 'ի փափուկ անկողնի առանց փոխելոյ զդիրս. զի՞նչ լինիցի ապա յայն զառն տանջանս 'ի դեհենին. բեռեալ կալ անշարժ, և խոշտանգիլ 'ի մի և 'ի նոյն զառնադառն տանջանս յեռ բիւրուց զարուց. յորում այն խստութիւն տանջանաց՝ որ 'ի մտանել անդ փարատեաց զաղիս, նոյն ոչ ժամանակացն հոլովմամբ և ոչ սովորելովն 'ի տանջանս երբէք թեթևասցի։

Մասն Բ

Ցանչանք հոգւոյն. Զբնակիչս դժոխոց 'ի մեծ յոյժ խոշտանգանս ածդէ այս խորհուրդ. Աստուած մեռեալ 'ի խաչի առ 'ի փրկել զիս, և ես զատապարտեցայ. Քրիստոս եհեղ զարիւն իւր առ զերծուցանելոյ զիս 'ի դժոխոց, այլ ես պատժեալ կամ. Սուրբ Հոգին զամենայն հնարս հնարեցաւ

առ՝ի հանել զիս յերկինս, և ես դատապարտեալ կամ։ Ես քրիստոնեայ... Կրօնաւոր... Քահանայ... ուսեալ՝ի վարժարանի եկեղեցւոյն Քրիստոսի, ապրեալ՝ի նաւահանգստի կրօնին, ճաշակեալ յաճախ՝ի կենաց հայէն... Ա.Հ. ես ստեղծեալ վասն երկնից. ՝ի բաղում՝ նուազս ընդ միտ ածեալ զտանջանս դժոխոց. ուսուցի բաղմաց զճանապարհն փրկութեան. և ես... աւաղ. ես դատապարտեալ կամ։

Ես կացի պատճառ կորստեան իմոյ. Ա.Հ. կարէի, հնար էր ինձ փրկիլ հեշտաւ. յոլովս ունէի սատարս փրկութեան. շնորհք առատութեամբ տուան ինձ. ՝ի խրախոյս ինձ ունէի յանդիման և զօրինակս։ Ա.Հա պատրաստեալ կային և ինձ պակն այն և պատմուճանն փառաց, որովք արդ պճնեալ փայլէ ընկերն իմ՝ այն ամենայն էին պատրաստեալք և վասն իմ։ Եթէ կացեալ էր իմ անյողդողդ՝ի բարին զորմէ բուռն հարեալ էի, և ես արդ... Բայց, աւաղ տուգանացս, փոփոխամիտ գտեալ ոչ կացի յուխտս. կորեայ արդ, քանզի այնպէս կամեցայ։

Կամեցայ զսոյն վասն չնչենոյ, «Վասն ափոյ միոյ գարւոյ և կոտորոյ միոյ հացի»։ Վասն պատառ մի մեղու, վասն ոսպնաթանի։ Ա.Հ, վասն վայրկենական հաճոյից արդ կրեմ՝ զյաւիտենական խոշտանգանս դժոխոց... Զբովանդակն իսկ ասել. ես պատապարեալ՝ի շնորհաց բաղմաց. վասն ի-

մոց յանցանաց, առ չարութեան, վասն չնչենոյ յայս անդունդս զլորեալ անկայ։

Եւ կամ ասա զահավիժեալ ընդ դժուարակոխս առասպարս, տարեալ բաղում աղետից, և առաւել տաղտկութիւնս կրեալ և վաստակեալ 'ի ճանապարհի անօրէնութեան և կորստեան՝ քան զայն ամենայն զոր ունէի կրել յընթանալ անդ 'ի չափիս փրկութեան։ Եղուկ ինձ թշուառացեալս. առաւել եղեն իմ վաստակք 'ի ճանապարհի ասա դժոխոց, քան զարդարոցն յարքայութիւն. և առաւել մեծաց տառապանաց և վշտաց տարայ առ 'ի մատնիլ 'ի հուրն յաւիտենական, քան որոց տարան արդարք վասն յաւիտենական վայելից։ Ա.յսպէս հառաչեն 'ի դժոխս որք «Ա.ռաքինութեան նշանակ ոչ կարացին ցուցանել, բայց 'ի չարիս իւրեանց մաշեցան»։

Ա.յսոքիկ դժոխքքեր խորհուրդք, այս բոլոր խղճի հանապազ յածեալ 'ի միտսն վշտաշնեսցէ զդատապարտեալն յանչափս. տաշնապեսցէ զմիտսն ունայնութիւն անցելոցն, զառնութիւն ցաւոց այնր ժամու, և ապապայիցն յաւիտենականութիւն։ Եւ կամացն ընկղմեալ 'ի խորս տխրութեան և անյուսութեան, և 'ի կատաղութենէ սրտմտութեան իւրոյ կերիցէ զկէս անձին իւրոյ, և ընդ անձին ողորեսցի և հայհոյեսցէ անհնարին լուտանաք. կամեսցի զայն՝ որ երբէք չկատարեսցի. և զոր ոչն կամի՝ այն միշտ կատարեսցի. զոր կամին ոչ երբէք

ընկալցի, և զոր ոչն կամի, զայն միշտ ընկալցի։ Ո՞ր բան, ո՞ր գրիչ կարասցէ առաջի առնել զայսր տանջանացն զահագնութիւն. քանզի 'ի վեր է քան զմիտս և զբան զառնութիւն ցաւոցն պատրաստելոց յԱստուծոյ վասն արհամարհողացն զնա։ Վա՛յ այնոցիկ որոց վիճակեսցի անկանել 'ի լիճ հրոյ և ծծմբոյ։

Մասն Գ.

Տանջանք դատապարտութեանն. Այս ամենայն խաստութիւնք խոշտանգանաց են ոչ ինչ առ պատժովք դատապարտութեանն, որ է ոչ կարել տեսանել զԱստուած և սիրել։ Յաւել 'ի տանջանս դժոխոց նոյնչափ ևս, և այնպէս ոչ կարէ հաւասարել այսմ զառնութեան կեղեքելոյ սրտին։ Ասէ սուրբն Յովհան Ոսկեբերան. «Եթէ հազար դժոխք յօդեսցին 'ի մի՝ ոչ 'ի հաւասարութիւն գայցեն ընդ սոսկ պատժոյ դատապարտութեան»։ Որպիսի՞ սոսկումն ածէ մտաց և լսելն անգամ զզառնութիւն ցաւոցս. զի անհուն և անչափ են խոշտանգանքն ըստ անբաւութեան և անչափութեան բարւոյն զոր կորուցս. զի հոգին ստեղծեալ առ 'ի սիրել զանբաւն Աստուած, և առ 'ի վայելել 'ի տեսութիւն նորա, կորուսեալ մարդոյն զանբաւ զայն բարին՝ յորոյ 'ի ժառանգութիւն կարդեալ էր, որչափ է ինքն Աստուած՝ այնչափ է և ցաւ դատա-

պարտելոյն 'ի կորուսանել զբարին Ա.ստուած։

Մինչդեռ եմք աստ 'ի մարմնի, հոգիք մեր արգելեալ 'ի բանդի մարմնոյս՝ կան իբր 'ի թմբրութեան քնոյ. խոկան և գործեն զամենայն ընդ ձեռն գործարանաց մարմնոյ. 'ի խնդիր յածին սիրելւոյն իւրեանց, այլ ոչ ճանաչեն. քանզի եթէ էր հնար ճանաչել որպէս պարտն է զԱ.ստուած, 'ի բորբոքեալ տենչանացն և ոչ օր մի կարէին կեալ 'ի մարմնի առանց տեսանելոյ զԱ.ստուած։ Բայց 'ի մերկանալ 'ի մարմնոյ և 'ի բանալ աչացն հոգւոց, անդէն լցցին փափաքանօք տեսանելոյ զԱ.ստուած որպէս և էն. զի առ այն ստեղծեալ են 'ի տեսանել և 'ի սիրել զԱ.ստուած. և չափ փափաքանաց հոգւոց 'ի տեսանել և 'ի սիրել զԱ.ստուած՝ է անչափութիւնն Ա.ստուծոյ և զեղոյ նորա. ապա և այնպիսի իմն հրով սիրոյ վառեալ բորբոքեսցի 'ի ժառանգել զԱ.ստուած, զի և մի ևեթ վայրկեան ժամու կալ նորա զրկեալ 'ի տեսանելոյ զԱ.ստուած՝ լինիցի նմա քան զամենայն խոշտանգանս տանջանաց դժոխոց սաստկագոյն. սիրելին իւր Ա.ստուած անչափ, և զեղեցկութիւն նորա անչափ, և սէր հոգւոյն տեսանելոյ զնա անչափ։ Ա.յլ Ա.ստուած զերեսս 'ի բաց դարձուցեալ է 'ի նմանէ. ատէ զնա յանչափս. ապա իբր իցէ հնար և զտանջանաց այսր դառնակսկիծ ցաւոց սահմանել զչափ։

Աստ զարձեալ և այլ ինն պատճառ սաստկութեան ցաւոցն զրկելոյ 'ի տեսութենէն Աստուծոյ ընդ առաջ լինի մտացն, որ անհնարին խոշտանգանս ածէ 'ի վերայ։ Եւ է՝ զի յաշխարհի ասա ոչ կամեցաւ առնուլ յանձն զքաղցր լուծ Յիսուսի. ոչ կամեցաւ հրաժարիլ 'ի կամացն, զի առաւել քան զրնութիւն իւր յանձնապատան եկաց յաշխարհի. և զի խրատեալ՝ ծաղուիրս համարեցաւ։ Վայ 'ի վայի վերայ. լալումն և ողբումն և կրճել ատամանց առցեն զնա. և հնարք զարմանոյ ցաւոցս և ոչ մի։

Ո՜, քանի՜ երջանիկ եմք մեք զի տակաւին կամք յաշխարհի. և այժմէն մինչդեռ 'ի խոկալն զայսպիսիս՝ տաղնապ թշուառութեանցն կամի պաշարել զմիտս մեր, զտանեմք զանձինս մեր տակաւին զերծս յաղետից աստի, և զիւրին մեզ հեռի առնել 'ի մէնջ զվտանգն այդպիսի չարեաց, և հաշտել ընդ Աստուծոյ. յանձն լինել 'ի կամս նորա մինչդեռ տակաւին շունչ յանզուն մեր է, մտանել 'ի շաւիղս երանութեան։ Ահա տակաւին հաշտ ակնարկէ առ մեզ Աստուած. տակաւին առ մեզ ուղղեալ են բանքս. Առէք զխաչ ձեր և եկայք զկնի իմ. տակաւին առ մեզ բարբառի՝ Թողէք և Թողցի ձեզ. Ոչ եկի կոչել զարդարս այլ զմեղաւորս. Եկայք առիս. Թողէք մեռելոց Թաղել զմեռեալս իւրեանց։ Ի վախճան ամենայնի, տակաւին առ մեզ հնչեն բանքս. Որպէս սիրեաց զիս հայր իմ, և ես սիրեցի

զձեզ. կացէք 'ի սէր իմ։ Խորհեաց քաջ, յոր երանութեան սահման կաս այժմ. 'ի ձեռս քո են կեանք և մահ. զուռն երկնաւոր անմահական դրախտին 'ի բաց կայ առաջի քո՝ եթէ կամիցիս մտանել. մնայ քեզ Աստուած հեղուլ 'ի քեզ զսէր իւր. ընտրեսա զոր կամիս, զի մի և զու ապաշաւեսցես զկնի վայրապար։

Մասն Դ

Յաւիտենական լինիլ պատժոյն. Քան զամենայն սասանեցուցիչ է մտաց այս յաւիտենականութիւն կորստեան. անվախճան լինել տանջանացն։ Եկեսցէ հասցէ օրն դատաստանի, և երկիր կործանեսցի. յետ այնորիկ բոլորեսցին բիւրք բիւրուց ամաց. դարձեալ զկնի այնորիկ անցցեն և բիւրք բիւրուց հազարաց ամաց, և 'ի յաւիտենականութեան չրջանսն և ոչ մի օր բոլորեալ է։ Եւ դարձեալ չրջեսցին նոյնչափ ևս հազարք հազարաց դարք որչափ են աւազք 'ի ծովափունս, տերևք ծառոց, աստեղք երկնից, և տանջանք դատապարտելոցն այն ինչ նորոգ սկսեալ համարեսցին։ Եւ ոչ այսչափ միայն. անցեալ գնացեալ այնչափ անթիւ չրջանաց դարուց, սկսցին այլ դարք որչափ իցեն մանրամասունք յօդս և փոշիք 'ի հողս և չիթք 'ի ծովս. և դատապարտեալքն դարձեալ կացցեն մնասցեն դատապարտեալք և թշուառք

զի «Ծանիցէ ամենայն մարմին թէ Տէր մերկացաւ զվաղակաւորն իւր 'ի պատենից իւրոց և անդրէն ոչ ևս դարձցի»։

«Անդ եղիցի մահ առանց ածելոյ զմահ. վախճան անվախճան. կորուստ անկորուստ. զի մահն կեայ, և վախճանն միշտ 'ի սկսանել է, և կորուստ կորնչել ոչ գիտէ». (Ս. Գրիգոր)։ Զէ մարթ ասել՝ եթէ իցէ այս ամբաստանել զԱստուած յանդգնութիւն. քանզի յանցանքն որ ոչ կարէ սրբել, կայ մնայ ընդ պատուհասիւ։ Եւ զի յանցանքն է արհամարհութիւն անչափ և անբաւ սիրոյն Աստուծոյ, ապա և պատուհաս յանցանացն պարտի լինել անչափ և անբաւ, զոնեա ըստ տեղութեանն անվախճան. ապա թէ ոչ չլինէր հաւասարութիւն արդար։ Մեք մարդիկ տկարք և անզօրք և կոչեցեալք յԱստուծոյ յանքննին իմաստութենէ նորա առ մեծամեծս, առ աստուածանալ, միանալ սիրով ընդ Աստուած, և անմահանալ 'ի յաւիտենական յանհուն երանութեան, պարտիմք մոռանալ զնուաստութիւն մեր ընկղմեալք 'ի սէրն Աստուծոյ, և կամ անլսող գտեալք Աստուծոյ մեծութեանն և սիրոյն՝ պարտիմք ընկղմիլ 'ի մեծ տանջանս յաւիտենական թշուառութեան։ Ի ծագման մերում՝ ոչ ինչ եմք և անբաւականք. այլ յԱստուծոյ կոչեցեալ եմք առ մեծամեծս, առ յաւիտենականութիւն, առ յանհուն փառս, յօրհնութիւնն Աստուծոյ անլռելի. զորով եթէ արհամար-

հիցեմք, մեծ լիցի և յանցուած արհամարհանացն, մեծ և անքաւելի. վասն որոյ ըստ չափու արհամարհանացն և պատուհասն կշռեսցի մեծ և աններելի։

Ո՛վ յաւիտենականութիւն... ո՛ բան հակիրճ. այլ յայտարար ամենամեծ և ամենանախիստ հարուածոյ. ա՛հ. եթէ խայթուած մեղուի կամ մեծ կայր մեայր ցյաւիտեանս ժամանակաց, համարէր այն անհանդուրժելի։ Արդ ո՞րպէս տոկալ տեսել կարասցես համազումար ամենայն ազգի ազգի դառնութեան ցաւոց միանգամայն 'ի միասին 'ի վերայ հասելոց, և այն անդադար և անվախճան... ո՛ զարհուրանաց մտաց. «Վա՜յ. որոց յառաջ քան զհաւատս ընծայել հասանիցէ փորձել». (Եւսեբ. Եմես.)։

ԻՂՁԲ

Զօրացուցցուն հաւատոյ. Ո՛ ամենագէտ և ճշմարիտ Աստուած, հաւատամ լինել դժոխոց... և զի մի միայն զորձ արհամարհանաց սիրոյ քո արժանի է դժոխոց... և եթէ վասն այնորիկ բազումք յոյժ 'ի հոգւոց ստեղծեալք վասն երկնից մատնին 'ի հուր դժոխոց. և զի դու ես նոցայն դատաւոր՝ որ ածես զպատուհասն ըստ արդեանց գործոցն, և զի զթութիւն քո ներելով ածէ զպատուհասն. ապա և մեղքն ծանրագոյն է քան զպատուհասն, և վասն այնորիկ ամենայնի պարտ է դարշիլ 'ի մեղաց։ Եւ ես

իսկ յամենայն զօրութենէ իմմէ խոյս տաց յայնմ ամենայնէ, որք առաջնորդեն առ մեզ. և առանձինն'ի թեթևագունից յայսցանէ (ա. ա.) 'ի պատճառացն (ա.) 'ի թեր-ութեանց (ա.) 'ի կրից (ա)։ Եւ յամենայն զօրութենէ մտացս բուռն հարից զայնցա-նէ, որք զիս 'ի մեզաց սուրբ պահեն. ևս առաւել (զա. և զա.) որք մերձեցուցանեն զիս առ Աստուած. զի լաւ իցէ միաձեռա-նի կամ կաղ մտանել 'ի կեանս, քան թէ երկուս ձեռս և երկուս ոտս ունել և անկա-նել 'ի հուրն յաւիտենից։

Խորշումն 'ի մեղաց. Առաջի ամենասուրբ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ընտրեմ իջանել այսուհետև 'ի դժ-խոյս քան արատել զհոգիս միով ծանու յան-ցուածով։ Այո. կամիմ առանց արհամար-հելոյ զԱստուած, անմեղութեամբ կալ 'ի հուրն դժոխոց, քան 'ի մեղս յաւիտեան վայելել զարքայութիւնն երկնից։ Աստեամ ոչ միայն զյանցանս ծանունս, այլ և զթե-թևս՝ որք կարեն առաջնորդել ինձ 'ի չարն. և քան զամենայն մերժեմ յանձնէս զար-մատս նոցուն զԱմբարտաւանութիւն և զՉդայական բաղձանս։

Զկորումն բղձից խոնարհութեան. Ո՛վ Աս-տուած վրէժխնդիր, մեզայ և արժանի դժ-խոց յայտնեցայ. եթէ արդարութեամբ վա-րեալ էր քո ընդ իս՝ 'ի բազում ամաց հետէ լեալ էր բնակութիւն իմ 'ի դժոխս... խան-ձող ծխեալ եմ դժոխոց, արժանի ամենայն

նախատանաց և անարդանաց. և դեռևս ամբարհաւաճիմ։ Հնար է ինձ ծանունս մեղանչել. մեռանել 'ի մեղս. չէ ինչ ընդդէմ. ո՛վ Աստուած իմ. հնար է ինձ դատապարտիլ. և տակաւին ամբարհաւաճիմ։ Թերևս լիցի ինձ մեղանչել. մեռանել 'ի մեղս. դատապարտիլ... Եւ ես ամբարհաւաճեմ.։ Խոստովան լինիմ ճշմարտութեամբ զի արժանի եմ ամենայն նախատանաց և անարդանաց, զի վասն իմոց անօրէնութեանց արժանի դատայ զժոխոց և յաւիտենական հրոյն։

Զարթուցումն ատկոտրեան անձին. Ո՛վ Աստուած իմ և Տէր. ա՛հ. մեծարեցի զմարմին իմ. քան զքեզ, և առ սէր նորա վչտացուցի զքեզ, բարութիւն անհուն։ Վասն վայրկենական հաճոյից արկի զիս 'ի վրատանգ յաւիտենական դատապարտութեան։ Ահաւասիկ լի ամօթով խոստովանիմ զանմտութիւն իմ. բայց արդ երդուայ առաջի քո. զվրէժ զանձնէս խնդրեցից։ Կորիցէ մարմին իմ, զի կեցցէ հոգիս. զդայութիւնք իմ առ սակաւ ինչ ժամանակ վչտացնեսցին, զի մի հոգի իմ յաւիտեան խոչտանգեսցի։ Ո՛վ. եթէ լինէր հնար դատապարտելոյ ուրուք դառնալ 'ի կեանս, զինչ ոչ առնէր մարմնոյն։ Երախտեաց պարտիք յորդոր լինին ինձ առնել զնոյն. քանզի մեծ ևս բարերարութիւն այն է կալ մեալ զերծ 'ի դժոխոց, քան զանկանելն և ապա դարձեալ ելանել։ Ապա ճնչեցից զմարմինս իմ

յայս և յայն ինչ... մեռուցից զնա այս-
պէս և այնպէս...:

Հաստատութիւն անխտիր համակամու-
թեան. Ո՛վ սկիզբն և վախճան իմ, որ ստեղ-
ծեր զիս 'ի ծառայել քեզ՝ զհետ զնալով հա-
ճոյից կամաց քոց. ահա որպէս կաս 'ի ձեռս
բրտի, այնպէս և ես 'ի ձեռս քո. շրջեա և
յածեցո. պատրաստ կամ առ ամենայն:
Ա.Հ. յայն վիճակ կենաց յոր կոչես զիս,
կամ 'ի կոչմանս ընտրելոց, յայն աստիճան
կատարելութեան յոր հրաւիրես՝ ոչ է զժոխք.
պաշտօնն այն և վայրն, վիճակն այն տկա-
րութեան ոչ է զժոխք: Ապա մատուցա-
նեմ զիս անխտիր առ ամենայն ինչ: Քան-
զի զինչ օգուտ վայելել յամենայն զիւրու-
թիւնս, յամենայն փառս, եթէ նոքին լի-
նիցին ինձ 'ի դատապարտութիւն. և զինչ
վնաս 'ի լինելոյ թշուառ և անարգեալ, եթէ
այնոքիկ իցեն ինձ 'ի փրկութիւն: Ճշմար-
տութիւնքս այսոքիկ ոչ հարկանին աչաց
մինչև ոչ լուսաւորեսցին նոքին 'ի բոցոյ
զժոխոց:

Զարթուցումն երախտագիտութեան և ցա-
ւոյ. Ո՛վ Աստուած տէր կենաց և մահու,
զոհանամ զքէն զի ոչ եատուր զիս 'ի մահ
ընդ մեղանչելն իմ յաւաջնումն նուազի
ընդդէմ քո, այլ եատուր ինձ ժամանակ և
շնորհս զղջման: Ա.Հ. եթէ 'ի պահու անդ
յանկարծ հասանէր ինձ մահ, ('ի խորհել
անդ սասանին սակերք իմ), արդ 'ի զժոխս
էր տուն իմ: Դատապարտեցեր զայլս և ինձ

ՀՆՈՐՀԵՑԵՐ. ԶԻ ՍԻՐԵՑԵՐ ԶԻՍ ԱՌԱՒԵԼ ՔԱՆ ԶՍՅԼՍ, ՈՐ ԱՆԱՐԺԱՆՍ ԵՄ՝ ՔԱՆ ԶԱՄԵՆԵՍԻՆ: Ո՞ՐՊԷՍ ՅԱՆՁԻՆ ԿԱՂՍՅ ԹՇՆԱՄԱՆԵԼ ԶԱՍՏՈՒԱԾ ՈՐ ԱՅՍՊԷՍ ԶԹՈՒԹԵԱՄԻ ԱԿՆԱՐԿԷ ԱՌԻՍ... ՅԱՒԻՄ ԱՐԴՅՈՒ ԲԵԿԵԼ ՍՐՏԷ, ԵՎ ԴԱՌՆԱՊԷՍ ՅԱՄԵՆԱՅԻՆ ԶՕՐՈՒԹԵՆԷ ՄՈՍՑ... ՈՒՏԱՒՔ ԽՆԴՐԵՄ ԲԻՒՐԻՑՍ ԶՄԱՀ, ՔԱՆ ՅԱՆՁՆ ԱՌՆՈՒԼ ՄԵՂԱՆՇԵԼ ԱՅԼ ԵՒ ԵՐԲԷՔ. ԱՅՈ ՄԵՌԱՅՍ ՔԱՆ ՄԵՂԱՅՍ:

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ա. ԴԱՍԱՍԱՐԱԿԵԱՆ 'Ի ԳԺՈՒՈՒ ԷՐԷՍԷ 'Ի ՄԱՐՄԻՆ ԶԱՄԵՆԱՅԻՆ ԽՈՇՏԱՆԳԱՆՍ ՅԱՒՍՍ ՄԻԱՆԳԱՄՍՅՆ: ԵՒ ՅԱՆԷՆԱՐԻՆ ՍԱՍՏԿՈՒԹԵԱՆ. ԶԻ ՆՈՒԱԶԱԳՈՅՆՆ 'Ի ՅԱՒՍՍ ԳԺՈՒՈՒՍՍ ՍԱՍԱԿԱԳՈՅՆ Է ՔԱՆ ԶԱՄԵՆԱՅԻՆ ՅԱՒՍ ՍԱՍԱԿԻՍ ԱՇԽԱՐՀԻ: ԵՒ ԿՐԵՍՅԷ ԶՆՈՈՒՆ ՅՅԱՒԻՍԵԱՆ, ԱՌԱՆՑ ԿԱՐԵԼՈՅ ՁՈԳԻ ԱՌՆՈՒԼ, ԱՌԱՆՑ ԹԵԹԱՆԱԼՈՅ ԵՐԲԷՔ, ԵՎ ԱՌԱՆՑ ՄԻԵԹԱՐՈՒԹԵԱՆ:

Բ. ՊՈՊԷՅԻ ՀՈԳՈՅՆ. ԴԱՍԱՍԱՐԱԿԵԼՈՅ ՔԱՆ ԶԱՄԵՆԱՅԻՆ ԳԱՌԻՆՍ ԳԱՌՆԱԳՈՅՆ ԼԻՑԻ ԽՈԿԱԼ ԹԷ ԱՍՏՈՒԱԾ ՄԵՌԱԼ 'Ի ԽԱՂԻ ԱՌ 'Ի ՓՐԿԵԼ ԶԻՍ, ԵՎ ԵՍ ԴԱՍԱՍԱՐԱԿԵԱԼ ԿԱՄ. ԵՍ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ.. ՔԱՀԱՆԱՅ.. ԿՐՕՆԱՒՈՐ.. ԱՅԼՈՅ ՈՒՍՈՒՑԻ ԶՃԱՆԱՊԱՐՀՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ, ԵՎ ԵՍ ԴԱՍԱՍԱՐԱԿԵԱԼ ԿԱՄ: ԵՒ ԴԱՍԱՍԱՐԱԿԵԱԼ ԿԱՄ ԽՄՈՎ ԻՍԿ ՅԱՆՑՈՒԱԾՈՎ, ՄԻՆՉԴԵՌ ԴԻՒՐԻՆ ԻՄԻՆ ԷՐ ԼԻՆԱԾ ՓՐԿԻԼ: ԴԱՍԱՍԱՐԱԿԵԱԼ ԿԱՄ ՎԱՆԻ ՀԻՇԵՆՈՅ, ՎԱՆԻ ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՀԱՃՈՅԻՑ: ԱՌԱՒԵԼ ՎԷՍԱՑ ՍԱՐԱՅ ԱՌ 'Ի ԴԱՍԱՍԱՐԱԿԻԼ, ԵՎ ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ԵՍ ՎԷՍՈՔ ԿԱՐԷԻ ՓՐԿԻԼ:

Գ. ՊապիՃ դասապարտութիւն. Զրկումն 'ի տեսութենէն և 'ի սիրելոյ զԱստուած մեծ է քան զայլ ամենայն խոշտանգանս դժոխոց, այնպէս զի հազար այլ դժոխք միանգամայն ոչ կարեն հաւասարել դառնութեան այսր ցաւոց ընդ կորուստ անչափ սիրոյն և անչափ գեղեցկութեանն Աստուծոյ. զի անչափ բարեաց կորստեան ցաւն ևս է անչափ։

Դ. Յաւիտենականութիւն պապիՃոյն։ Եւ կորուստս այս մեծ՝ է յաւիտենական. և այս ամենայն խոշտանգանք կացցեն, մնասցեն ց յաւիտեանս ժամանակաց։ Անցցեն դարք բիւրք բիւրուց, և դարձեալ նոյնչափ ևս, և դատապարտեալքն կացցեն 'ի նոյն, իբրև ոչ ինչ ժամանակաց 'ի վերայ անցեալ։ "Զի ծանիցէ ամենայն մարմին՝ թէ Տէր մերկացաւ զվաղակաւորն իւր 'ի պատենից իւրոց, և անդրէն ոչ ևս դարձցի,,։

Ընթերցիր

Թովմ. Գեմբ. Գիրք Ա. Գլ. 24. Յոգ. 3. 4. 6. 7։

ՕՐ ԵՐՐՈՐԴ

ԽՈԿՈՒՄՆ Ա.

ՄԱՀ

Մասն Ա.

Մահն խրատ տայ մեզ արհամարհել զբարիս աշխարհի, որք են զլխաւոր խոչք կատարեալ անխտիր համակամութեան և ժամանելոյ 'ի վերջին վախճան մեր։ Վճիռն հնչեցեալ իսկ է. «Մահու մեռցիս». մեռցիս զու, և ոչ այլ որ փոխանակ քո. մեռցիս զու ինքն. և մի անգամ եթէ. «Քանզի կայ ինայ մարդկան միանգամ մեռանել»։ Յաւել 'ի սոյն եթէ մեռցիս յաւուր՝ յորում ոչ ակնունիցիս, և 'ի ժամու՝ յորում ոչ զիտիցես. անստոյգ ժամանակն, յեղանակն և տեղի մահուանդ... անյոյս 'ի զառնալոյ յետս և ուղղելոյ զվրիպակն։ Եթէ կանուխ կամ անագան, մերկեալ յամենայն ճոխութեանց, և յամենեցունց անտեսեալ, զնասցես 'ի տուն յաւիտենից. և զնասցես միայն ընդ միայն, զի իւրաքանչիւր որ 'ի

մինչ ընդ անձին համարս տացէ Աստուծոյ։ Եւ գնասցես մերկ, զի ոչ բերաք ինչ յաշխարհս և ոչ տանել ինչ կարասցուք. միայնակ... և մերկ։

Ո՛վ Տէր. հաստատեա այսմ ամենայնի, այլ այնպէս կապեալ ունիմք զսիրտս մեր յերկրաւորս, զի՝ ի պատճառս այնոցիկ օտարանամք՝ ի վախճանէն մերմէ. և պատրեալք՝ ի քաղցրութենէ նոցա՝ կորուսանեմք զայն ոսկեղինիկ զանխտիր համակամութիւն, որ յոյժ կարեւոր է մեզ, և կասիմք յերանելոյ յայն կատարելութիւն յոր մարդասիրեալ կոչէ զմեզ Տէր։ Ո՛վ ծնունդ հոգածնի. «Ի ներքոյ քո մէջս տարածեսցեն, և՝ ի վերայ քո որդն յարկցի»։ Այս է ահա բաժին քո մէջք և որդունք։ Յամենայնէ յորոց ժառանգեան, արկցեն՝ ի վերայ քո զաղտեղի ինն զրպլեակ, զայն ամենայն լքեալ թողցես։ «Ոչ թէ մարդ՝ ի մեռանել իւրում առցէ ընդ իւր զամենայն», այլ ոչ ինչ և ոչ մի ինչ։ «Որպէս ել յորովայնէ մօր իւրոյ մերկ, դառնայ երթալ որպէս և եկեալն էր, և ոչ ինչ առցէ՝ ի վաստակոյ իւրմէ»։

Լ՝ուար արդեօք. ոչ ինչ յիւրոցն առցէ ընդ իւր, ոչ զինչս, ոչ զստացուածս, ոչ զկալուածս. ոչ ինչ ամենեին. ո՛դու կոչեցեալդ կրօնաւոր, ոչ ինչ՝ ի քոյոց հատանացդ զորս սիրեսն, զորս ընդ քեզ առեալ յածեցուցանես ոչ սակաւ նեղութեամբ, որոց և հպել անդամ այլոց չնե-

բես։ Բարձ այժմ, տար ընդ քեզ եթէ կա-
ցիցես։ Եւ սակայն հոգի քո, որ այնպէս
յանխորհուրդս զհետ պնդեցաւ նոցուն և
սիրեաց, այրեսցի 'ի սատակակիր հուր
քաւարանին ձեռնթափ յամենեցունց. և
նոքին իսկ վայելողք 'ի քոյոյ լքցին զքեզ։
Եւ չիցէ՞ անմտութիւն մեծ չթողուլ մտա-
զիւր և չնուիրել Աստուծոյ զայն ամենայն,
զոր յաւուր միում պարտիս թողուլ հար-
կաւ և ակամայ։ Զիցէ՞ ամբարշտութիւն ան-
տեսել զայնչափ ասպիճանս շնորհաց, ո-
րով և զառ 'ի նոցանէ ամբարեալ վարձ-
սն՝ վասն ոչ զրկելոյ 'ի շնչենոցն, և վասն
այսպիսի նանրութեանց հրաժարեալ կա-
սիլ 'ի ճանապարհէ մեծի կատարելութեան։

Բարէ. և մ ոչ արտասուեսցէ 'ի վե-
րայ կուրութեան այնոցիկ 'ի կրօնաւորաց՝
որոց յետ թիկունս դարձուցանելոյ ճոխու-
թեանց մեծազանձ զերդաստանին իւրեանց
և յետ կապելոյ զանձինս ուխտին աղքա-
տութեան, սկսանին ցանկալ 'ի ձեռս բե-
րել սփոփեցուցիչս ինչ մանունս, զոչէս, և
բաղում այն է զի սոցա առաւել է ցանկու-
թիւն և սէր առ մանունսն այնոսիկ քան
զսէր աշխարհայնոց առ բազմագանձ ճո-
խութիւնս։ Եղուկ այնպիսեացն. որպէս
յապուշ ընդարմացին 'ի ժամու մահուան
նկատեալ զՅիսուս 'ի խաչի աղքատ և մերկ,
որ յերեսս հարկանիցէ նոցա զհեշտական
և զբազմատենչ աղքատութիւն իւրեանց.
հապա, զօրացիր, քաջ լեր. յաղթեա ան-

ձին քում և նուիրեա այժմէն առ ոտս խաչին զայն ամենայն, զորս 'ի մահուդ յոչ կամս բքեալ՝ 'ի բաց ելանելոց ես։ Քրիստոս Մեայ ընդունել 'ի քէն զայս խայրիս սիրոյ. «Ա՜հ, յոյժ և յոյժ է ազատ՝ որում չիցէ շատ Աստուած». (Զգոս.)։

Մասն Բ

Մահն խրատ տայ մեզ արհամարհել զպատիւ աշխարհի, որ է այլ իմն խոչ անխտիր համակամութեան և կատարելութեան։ Յառաջ մատիր, ո՜ ուռուցեալ սնապարծութեան աշակերտ, զու որ թողեալ ես աչացդ կուրանալ 'ի ծխոյ աստի և խոտորել 'ի վախճանէդ. անց յառաջ, մերձեաց առ շիրիմդ այդ. ակնարկեա յայդ դիակն անշնչացեալ, հաստատեա զաչդ յայդ մարմին փտեալ։ Ա՜հա եթէ կամիս և թէ ոչ, «Յայդ վայր եկեսցես, և այտի անդր ոչ անցանիցես. ասա խորտակեսցին ալիք քո»։ Այն ամենայն անուանք պերճանաց՝ որովք փառաւորեալ ես, այն ամենայն փայլմունք պաշտամանց՝ որովք ճոխանաս, կորիցեն իբրև ստուերք 'ի մահուան. 'ի շինանել անդ ջահիցն և կերոնաց հանդիսի թաղման քո՝ շիջցի և համբաւ քո. 'ի լռել ձայնից զանգակացն հնչեցելոց՝ լռեսցէ և անուն քո։ Յայսմ հետէ լինիցիս իբրև զչեղեալ։ Որոյ անուն հնչէր մինչև 'ի ծայս երկրի, 'ի մեռանելն ոչ իջցեն փառք

նորա ընդ նմա։ Գիտես իսկ զայս ամենայն, այլ և տարածեալ ես անյաղ տեսչմամբ զբազուկդ ընդդրկել զծուխս զայս և զտուեր և զոչինչ։

Ո՜ բարձրամիտդ բարձրայօն, առցէ զքեզ մահ յորժամ ոչն կարծես. թերևս յամենամիջի ասա մերկացուցէ զքեզ յամենայն մեծութենէ զարդուց քոց, և արկցէ զքեզ մերկ 'ի միումն 'ի գերեզմանաց. չգուցեն անդէն մեծութիւնք, փառք, պերճութիւնք. այլ լիցիս կեր որդանց և կոյտ իմն փտութեան, բուռն մի հող և ոչ ինչ։ Ա՜ռ ինչ օգտեսցեն քեզ յայնժամ անուանել քո իմաստուն, բազմել քո յայդ դահ, բարձրանալ քո յայն բարձ, բերել քո 'ի ձեռս զայդոսիկ պատիւս. եթէ վասն այսր ամենայնի առչորիցիս 'ի քաւարանի. զի ասասցես ընդ Թագաւորին այնմիկ. «Եղէ ամենայն, որք ոչ ինչ օգտեցին ինձ, այլ միայն զի 'ի մահուն իմում տանջեցայց»։

Կրօնաւոր ոմն զկնի աւուրց մահուան իւրոյ երևեալ այլում. և հոգւոյ հանելով 'ի խորոց սրտէ՝ ասէ. «Եղէ աստուածաբան, և էր ոչ ինչ. եղէ բեմբասաց, և էր ոչ ինչ. կացի առաջնորդ, և էր ոչ ինչ. եղէ կրօնաւոր, և այս արժէ ինչ». ասաց և եղև անհերևոյթ։ Ցնա եթէ սրպէս անարդ և ոչ ինչ է զրեալ 'ի հանդերձեալ կեանս այն ամենայն՝ որ յաշխարհի 'ի մեծ յարգանս է. ապա «Ունայնութիւն է զհետ լինել պատուոյ և ամբառնալ զանձն 'ի բարձրութիւն».

(Գեմ. Ա. 1.)։ Այս յիմարութիւն մեծ է ցանկութեամբ անոտի պատուոյ կարուսանել զոսկեղինիին զայն անխտիր համակամութիւն և զճանապարհն փրկութեան։ Ո՛վ մահ. որպիսի՛ քաջ դաստիարակ ես դու իջանելոյ՝ ի նուաստութիւն։

Մասն Գ.

Մահն խրատէ զմեզ խոյս տալ՝ ի հաճոյից մարմնոյ, որք են երրորդ խոչք այնր երանական համակամութեան և կատարելութեան կենաց։ Ո՛վ այր դու, եկ զի տեսցես. եկ կաց առ շիրմաւ և տես զքո դիակնացեալ մարմին. արկ՝ ի գնին զինչ իցէ մարմինն, յորոյ՝ ի սէր արկանես զքեզ՝ ի փառանդ դատապարտութեան, և կասիս՝ ի զիմելոյ առ կատարելութիւն։ Ցես զի այդ երկու խոչք որդանց՝ էին աչք քո, որք եղեն թերեւս զարահոս ժայռք անմեղութեանդ։ Այսոքիկ փտեալ անդամք էին բերան քո և լեզու՝ ժանտարեր զործիք որկորոյդ։ Այդ տարածեալ բոյն որդանց՝ ոբովայն քո, որում իբրև Աստուծոյ սաշտոն մատուցանէիր։ Այդ կոյտ փտութեանց էր մարմին քո, կուռքն այն անձնասիրութեան, որում զոհէիր յաճախ զխիղճ մըտացդ։

Մատիր, կալ զդանկդ զայդ, մերձիր յոսկերսդ, խառնեա զանիւնացեալ մարմնոյն. տես զդեռալ որդանցն։ Այա՛. չի-

ցէ՞ յիմարութիւն մեծ հեռանալ 'ի վախճանէն վասն այդր նեխոյդ։ Զիցէ՞ ցնորումն մոռաց ծախել 'ի կեանս զամենայն վաստակս, զամենայն հոգս, և զամենայն փոյթ 'ի մէջ առնուլ, առ հանգուցանելոյ ընդ ժամանակս ինչ զպարկդ զայդ զարշահոտ փտութեանց, որպէս զի առաւել հանգիստ 'ի քուն մոցէ, զի փափկասցի, զի 'ի համաղամն սնանիցի. և թողուլ անտես առնել զփրկութենէ հոգւոյն։ Ո՛վ երկիր, սնոտիք սնոտեաց, երկիր, լուր զպատգամս Տեառն. ոչ զք կարէ երկուց տերանց ծառայել. ոչ է հնար Աստուծոյ և մարմնոյ միանգամայն բարւոք ծառայել։

Պտուղ այսր խոկման է ատելութիւն և անյողդողդ մերժումն այսոցիկ երից խոչից՝ որք մերժեալ հանեն 'ի մէնջ զսուրբ անխափիր համակամութիւն առ ամենայն ինչ, և ծածկեն 'ի մերոց աչաց զվախճան մեր վերջին. զորս անուանէ սուրբն Յովհաննէս «Յանկութիւն մարմնոյ, յանկութիւն աչաց և ամբարտաւանութիւն աստի կենաց»։

ԻՂՁԲ

Ո՛վ Աստուած, տէր կենաց և մահու. հաւատամ՝ զի մեռանելոց եմ. զի ըստ հրամանաց քոց մահու մեռցուք, և «Իբրև զՄուր հեղեալ յերկիր ոչ ամփոփեսցուք»։ Այ մեռցուք առանց զիտելոյ զժամն. ըստ բանիցն

Քրիստոսի Տեառն մերոյ. «Յորում ժամու ոչ կարծիցէք զայ որդի մարդոյ»։ Հաւատամ զի մեռեալ միանգամ 'ի չարիս, անդարման լիցին չարիքն։ Հաւատամ, զի յաշխարհէ աստի անցիլ 'ի հանգերձեալն մերկեալ յամենայն ստացուածոց և յամենայն պատուոյ. և զի այս իմ մարմին դարձցի 'ի հող, ըստ բանից Հողոյն սրբոյ՝ «Հող էիր և 'ի հող դարձցիս»։

Ո՛վ Տէր իմ. խոստովանիմ հաւատալ այսմ ամենայնի, այլ կեամ որպէս թէ չիցեմ երբէք մեռանելոց։ Կեամ իբրև թէ ունիցիմ քաղաք՝ որ աստէն մնալոց իցէ. պատաղեալ յերկրաւորս, անմիտ ցանկութեամբ փառաց սնոտեաց։ Կեամ, ա՜հ, կեամ զերի վատ եղեալ մարմնոյ. և այնպէս խանդակաթ եմ 'ի սէր այնորիկ, որ ճարակն է որդանց, զի ոչ ինչ ամօթ համարիմ 'ի նուէր հանել հաճոյից նորա զբազմադէմ աստիճանս առաքինութեանց և փառաց. և կեամ ամենեին 'ի մոռացօնս ածեալ զհոգի, և զվիճակն յոր կայ նմա մտանել, այնպէս՝ որպէս եթէ ոչ ինչ առաւելութիւն իցէ մարդոյ քան զանասնոյ. «Որպէս մահ սորա, նոյնպէս և մահ նորա». (Ժող. Գ. 19)։

Ո՛վ Տէր իմ և Աստուած. ես եմ կերակուր ցեցոյ և ապականութիւն, և ինքս համարձակեցայ բարձրաւիզ գոռոզութեամբ զլուխս տիրառնալ ընդդէմ քո։ Աստուած ամենակալ, սիրեցի զմարմին իմ

քան զքեզ. և փոխանակ զհետ զնալոյ կամոց քոց, չոքայ զհետ ամբարտաւանութեան, ագահութեան, հաճոյից մարմնոյ։ Ո՛վ երկինք, վկայք անօրէնութեանց իմոց, 'ի պատճառս մարմնոյ թշնամի երևեցայ Աստուծոյ, արատեցի զիմիզհ մտաց իմոց և անկայ 'ի շնորհացն Աստուծոյ։ Եղո՛ւկ զիս. սասանին ամենայն ոսկերք իմ յաձել անդ զմտաւ՝ թէ որպէս կամաւ հեռացայ յԱստուծոյն իմոյ։

Բայց արդ ցաւիմ, Տէր, ընդ վրիպանս իմ, ամաչեմ ընդ յիմարութիւն մտաց իմոց. կեղեքեացի սիրտ իմ 'ի լալոյ։ Արդ եղի 'ի մտի հաստատութեամբ յայսմ հետէ և առ յաղայ պատերազմել զպատերազմն Աստուծոյ ընդդէմ ագահութեան, ամբարտաւանութեան, և հաճոյից մարմնոյ։ Կայծակնահար սատակեցայց եթէ յօժարիցիմ այլ ևս անարգել զսէր ստեղծողին իմոյ։ Արդ ուսուցէ ինձ մահ զունայնութիւն երկրաւոր բարեաց. լուծեալ արդ յերից այսոցիկ կապանաց, յորոց կայի կաշկանդեալ 'ի գերութեան ախտից, խառնեա զիս Տէր 'ի զունդս որդւոցն Աստուծոյ, հանեալ զիս յաղատութիւն. շնորհեա ինձ զանխտիր համակամութիւն լինել որպէս զաւազան 'ի ձեռին քում, զոր շարժեսցես որպէս քեզն հաճոյ թուեսցի, և իբրև զնաւ՝ որ ընդ ամենի ալիս կոհակացն կռուեալ, շրջի յոր կոյս և միտք ուղղչին կամիցի։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ա. Մահն խրատ տայ մեզ արհամարհել զերկրաւոր բարիս. «Մահու մեացիս,,. մահն է հաւատով, բայց անատոյգ ժամանակ նորա՝ տեղին և յեղանակն... Մերկացեալ յամենայնէ, գնասցիս 'ի տունն յաւիտենից միայնակ... և մերկ..: Հաւատամ այսմ ամենայնի, և սակայն այդպէս յարեալ ես զհետ երկրաւորացն բարեաց, և 'ի խնդիր ես նոցուն, և 'ի պատճառս նոցունց հեռանաս 'ի վախճանէդ:

Բ. Մահն խրատ տայ մեզ արհամարհել զպատիւս աշխարհի: Մաաիր հայեաց 'ի զին անշնչացեալ. մերկեալ յամենայն պատուոյ, և ոչ մի ինչ փառաց անուանս կրէ, այլ գարշ ելեն ճարակ որդանց. դեղ ելեն փտութեանց. բուռն մի հողոյ է դարձեալ, յորմէ նոզկանօք զերեսս 'ի բաց դարձուցանեն ամենեքին: Հապա, երթ պանծա ընդ այդ փտութիւն:

Գ. Մահն թելադիր լինի մեզ խուսափել 'ի հաճոյից մարմնոյ: Ի վերայ գիոդ այդորիկ առ 'ի խոկալ՝ թէ զինչ մարմինն ելցէ, յորոյ 'ի սէր առնուս յանձն զվանդգ գատապարտութեան: Եթէ կալ զայն գագաթն, մերձեաց յոսկերդ, խառնեա զաճիւնացեալ մարմնդ, տես զեռալ որդանցդ: Ասա. ելցէ՞ մեծ յիմարութիւն վասն այդոցիկ փտութեանց այնչափ 'ի հոգս մտանել, այնչափ խնամոց փոյթ 'ի մէջ առնուլ, և զփրկութենէ հոգւոյն ոչ ինչ փոյթ առնել:

Ընթերցիր

Թովմ. Գեմբ. Գիրք Ա. Գլ. 23:

ՊԱՐԱՊՈՒՄՆ

Ի ծանօթութիւն Անձին.

Ա.

Ա. Ճանապարհն Մաքրական կարդեալ է առ երիս վախճանս. առաջին է Գարշումն 'ի մեղաց. երկրորդն է Արմատոց նոցա 'ի բաց կորզումն. և երրորդ Ծանօթութիւն անձին։ Զարեաց անյայտից չէ հնար մատուցանել զարմանս պատշաճականս. ապա կարեւոր է ծանօթութիւն անձին։ Արեցեալ չարեաց ոչ խնդրի դարման բժշկութեան. ապա կարեւոր է զարշումն 'ի մեղաց։ Եթէ ոչ հատցին պատճառքն ախտին, երբէք ոչ ստացի առողջութիւն. ապա հարկ է խլել զարմատս ախտիցն։ Արդ քանզի սոքիմբք մաքրեալ յարգարի հոգին առ ընձիւղելոյ զշառաւիղս սուրբ պտղոցն առաքինութեանց, քաջ իսկ յայտնի լինի զի յոյժ կարեւոր է ձեռն 'ի գործ արկանել, և մի՛ կասել՝ մինչ չև 'ի ձեռս բերեալ որում ցանկամբն։ Երէկ պարապեալ 'ի խոկումն չարութեան և պատժոյ մեղացն, զգեցաք քաջալերս մեծ գարշելոյ 'ի նոցունց։ Եւ զամենայն ջան 'ի գործ արկաք յարմատախիլ առնել 'ի սրտից մերոց զամբարտաւանութիւն և զհաճոյս մարմնոյ, զարմատս ամե-

նայն մոլութեանց։ Այդ զուն դիցուք հաստանել 'ի քաջ ծանօթութիւն անձին, որ է երրորդ նպատակ Աստուածութեան ճանապարհին։ Յերկրորդի երեկեան խոկման, որ էր 'ի վերայ մեղաց առանձին, և 'ի խորհրդակցութեան և 'ի քննութեան՝ որք դիտեալ զայնմ խոկմանն՝ ոչ սակաւ եկաք 'ի ծանօթութիւն անձին. բայց այսօր պարապեսցուք յայս ուսումն զրեա թէ զօրն ողջոյն. քանզի ըստ չափու առաւելութեան ծանօթութեան ոչնչութեանս մերոյ՝ ունիցիմք առաւել պատճառս խոնարհելոյ և վշտանելոյ զանձինս մեր, և ջանալոյ 'ի քանցումն յարմատոց զամբարտաւանութիւն և զհաճոյս մարմնոյ, որք են կրկին մեծամեծ խոչք 'ի ստացումն այնր սրբոյ անխտիր համակամութեան 'ի ծառայել Աստուծոյ, զհետ զնալով կամաց նորա։ Քանզի և անտեղի իմն է ճանաչել քաջ զաղէտս թշուառութեան մարմնոյն և զչարիս՝ յոր վարանեալ է հոգին, և ոչ ատել զանձն։

Բ. Այս ներքին ճանաչումն և ծանօթութիւն անձին է երրորդ պատուղ կրթութեանս, յոր պարտիմք ջանալ ամենայն ճգամբ և պարապել 'ի ստացումն նորին։ Այս ծանօթութիւն օգնեն Աղօթք, Քննութիւն խղճի մտաց, մեղացն խոստովանութիւն ընդհանրական։ Առաջին ազգն աղօթք են ընդ անձին խորհրդաբանել 'ի վերայ պատուիրանացն Աստուծոյ, եկեղեցւոյ, 'ի վերայ եօթն մահուշափ մեղաց,

'ի վերայ երից զօրութեանց հոգւոյն և հնգից զգայարանաց, միտ եդեալ և քննեալ ըստ կարգի, եթէ պակասեալ իցէ 'ի պահպանութիւն առաջնոցն, եթէ անկղիտացեալ յերկրորդսն, և թէ ո՞րպէս վարեալ իցէ զվերջինսն 'ի բարին թէ 'ի չարն։ Եւ է այս մտանել 'ի խորս սրտին, և զներքին թաղուցեալ զաղտնիս զվեհասակարան կորզեալ հանել, և մնալ սուրբ սրտիւ։

Յայտ է ապաքէն զի ազգոյ զարմանք են կրկին քննութիւնքն խղճի մտաց ընդհանուրն և օրբստօրեայն, զորս արժան է առնել յառաջ քան զխոստովանութիւնն, զի բացցին աչք մտացն առ ճանաչելոյ զմեղս կենացն անցելոց, և զառաջիկայ վիճակ կենացն. և է այս լոյս որ լուսաւոր առնէ զգաղտնիս խաւարին։ Վասն այնորիկ և երկոցուն պարտ է սկիզբն առնել յառաջնմէ օրէ կրթութեանն. և զքննութիւնն հանապազօրեայ պարտ է առնել զօր ամենայն 'ի մի քառորդ ժամու, զոլով այնր սատար խմն մեծ մտանելոյ 'ի խորս զաղտնեաց հոգւոյն և զծածուկսն խաւարինս ածելոյ 'ի լոյս։

Եւ զի խոստովանութիւնն հանրական՝ կենացն ողջոյն և կամ՝ մեծի մասին՝ օժանդակէ մեծապէս 'ի ծանօթութիւն անձին, յայտնեալ է 'ի փորձոյ. քանզի բազումք օգտեալ են յայնմանէ զալով 'ի ծանօթութիւն անձանց և յուղղութիւն վարուց։ Եւ ոչ ինչ են զարմանք. զի բերեալ 'ի միտ

ղյանցուածս զորձեալս 'ի կեանս, զիւրաւ մարթ է ճանաչել և զարմանաս նոցա. ևս առաւել 'ի քննելն զզուշեաւ՝ թէ որ այն ինչ է պատճառ և հրապուրող այնոցիկ յանցուածոց՝ որք մերոց խոստովանութեանց նիւթք լեալ են յաճախ. 'ի յուսոյ բերիցիմք յայնս եթէ յերկիւղէ, յակնածելոյ եթէ 'ի յանդգնութենէ. 'ի փափաքանաց եթէ 'ի խորշելոյ. 'ի սիրոյ եթէ յատելութենէ: Եւ զի հնար լիցի լաւ ևս հասանել յայս ծանօթութիւն անձին՝ արժան է ծախել զաւուրս քանի մի յայս քննութիւն, և յետ այնորիկ մատչել 'ի խոստովանութիւն:

Գ. Եւ զի ճանաչումնս այս մի լիցի հայեցումն ևեթ տեսական, այլ զորձնական՝ կարգեալ յուղղութիւն անձին, յատելութիւն մեղաց և արմատոց նոցուն. վասն այնորիկ կարեւոր է քննութիւն մասնական, յորում՝ 'ի խոյզ և 'ի խնդիր մատչի զբ առանձին իմն թերութեան, և պատերազմեալ ընդ նմա հանապազ և ոչ հանգչի՝ մինչ չև արմատախիլ հանեալ զայն 'ի սրտէ, և կամ՝ այնպէս նկուն արարեալ, մինչ ոչ ևս կարել այնմ՝ զօրանալ և իշխել՝ 'ի վերայ իւր:

Բ

Երից այսոցիկ զարմանոց՝ 'ի վերայ յաւելումք և զկրկին խոկմունս մահուան և դատաստանի, որոյք քաջ իսկ յայտնի ելին խակութիւնք մարմնոյն և վնասաւորաց

տութիւնք հոգւոց մերոց։ Ի խոկալն զմահուանէ և զդատաստանէ՝ լիով 'ի միտ առնումք զլինել մեր ոչ ինչ և ամբար մեղաց, վասն որոյ և արժանիք անձնանախատ ապրելութեան։

Եւ արդարև թշուառութիւն մարմնոյն և ոչնչութիւն քաջ տեսանի զկնի աւուրց ինչ թաղման։ Ա՛դէ, որպիսի՛ զարշ և նողկալի քան զայն տեսարան կայցէ. մատիր յառաջ և քննեսցուք։ Ի սկզբանն նշմարին 'ի գիակն զարշ և զաղիր բիծք ինչ ցրիւ, որք յետ սակաւուց փոխին 'ի սեաւ գունատեալ, 'ի գիմացն, 'ի կրծոց, և 'ի վայր կոյս մինչև ցոտունսն արտաքերէ քրտունս իմն վրվրացեալ զաղրալից և բորբոս իմն զարշահոտ նախացուցակ փտութեանն, որ 'ի պատատոտել մարթոյն արտաքս հոսհոսէ յամենայն կողմանց, յորում իբրև թաղեալ լուղին անդամքն։ Ի փտութեան ատ ծաւալելոյ 'ի ներքս և արտաքոյ սկսանին եռալ որդունք, որոց ճարակ է մարմինն փտեալ. նողկալի՛ զարշ կերպարան. եռան զեռան որդունք 'ի ներքոյ և արտաքոյ. զալարին, խաղապատին, յաչացն արտաքս սորսորեն, թոթափին 'ի ռնգացն և 'ի բերանոյն, իբր 'ի լոդ դան ընկղմին և ելանեն 'ի տղմի անդ փտութեան։ Ո՜ զաղրութեան տեսիլ, անհանդուրժելի մտաց նա և 'ի սոսկ նկարել յանդիման աչաց մտացն։

Ե՞կ մերձեաց, ո՛վ մահկանացուդ, հայեաց 'ի զուբն տառապանաց 'ի կաւն և 'ի

տիզմն. լեր մոսխոհ 'ի վերայ զազիր դիա-
կանդ. ծանիր զքեզ, ո՞ւրեմն։ Այս ծրար որ-
զանց՝ էր մարմին քո, որում պաշտօն տա-
նէիր անձնասիրութեամբ, զոր փայփայեալ
սնուցանէիր, զոր 'ի սփոփանս հանգու-
ցանէիր։ Այնոքիկ զարշ խորշք զազաթան
էին աչկունք քո, ունգունք և բերան, զոր-
ծարանք և զրունք մոլութեանց։ Ցե՜ս զքո
պատկեր պաշտեցեալ՝ յո՞ր սահման անար-
գութեան իջեալ կայ. մերձիր 'ի զէզ ոսկե-
բացդ. փչեա 'ի մոխիրն. տես եթէ ո՞ւրեմն.
հող ես մոխիր. պարկ իմն ազբեսց. զե-
ռեզման բռեալ. ազբանոց ծածկեալ ընդ
ձեամբ. այս սահման քոյին զերամբար-
ձութեան, յորում՝ զքեզ վարկանիս։ Ո՜վ,
որչափ մեծապէս ձեռն տայ 'ի ծանօթու-
թիւն թշուառութեան և ոչնչութեան մերոյ
խոկումն մահուան։

Ոչ նուազ օգնեսցէ մեզ առ 'ի ճանա-
չել զանձինս մեր և խոկումն զատաստանի,
առ որ յանգիման լիցուք զկնի մահուան.
այս լիցի երկրորդ խոկումն աւուրս, որ իբ-
րև 'ի հայելւոջ նկարեսցէ առաջի մեր զչա-
րութիւն և զոչինչն լինել հոգւոց մերոց.
յայտնի կացուցանելով, ա. Չյետամտու-
թիւն նորա. բ. Չյաժարամտութիւն նորա
առ ամենայն չարիս. գ. Ցամենայնի զան-
կարութիւն նորա 'ի բարեգործութիւն։

Ա. Ըստ յետամտութեան մասին նկա-
տեալ՝ պարտ էր հոգւոյն լինել պատկեր
ամենասուրբ Երրորդութեան, կենդանի

տաճար Աստուծոյ, հայելի սրբութեան, յորում անդրադարձեալ ճառագայթիք իւրեանց պարտ էին արտափայլել ամենայն առաքինութիւնք։ Այլ նմին հակառակ, (ո՛վ, որպիսի՛ փոփոխութիւն), յիշողութիւն նորա լճակ ինն է անարժան և պիղծ դաղափարաց, և 'ի նմա դեռահասեալ ունայնութեանց, որք յար ալեկոծեալ յուզին 'ի դիւաց և 'ի կրից։ Միտքն յահուր խորհրդոց շտեմարան 'ի խաւարի և 'ի կուրութեան, լի տգիտութեամբ, վրիպակ դատմամբ, պատրութեամբ և թիւր սկզբամբք. 'ի կամն թագաւորէ չարահնար նենգ որ զնա դերեալ ծառայեցուցանէ ամենայն անկարգ բերմանց, որով «Ոչ զոր կամի զբարին զայն գործէ, այլ զոր ատեայն զչարն»։

Բ. Դարձեալ իշխէ 'ի հոգին յօժարամտութիւն ինն առ ամենայն չարիս, որ բուռն ձգէ զնա միշտ առ ախտաւորութիւն. այնպէս զի եթէ բարերար ձեռն Աստուծոյ զթութեամբ իւրով ոչ կառեալ կասեցուցէ զնա, ինքնին թաւալգլոր կործանէր 'ի խորս ամենայն չարեաց։ Նկարեա յանդիման մտացդ՝ ձեռն մի յաշտարակէ բարձուէ 'ի դուրս կարկառեալ՝ ունելով զհերաց զայր 'ի վեր, և կալով 'ի ներքոյ առ ոտս աշտարակին հնոց վառեալ ձիթոյ և ծծմբոյ։ Ահա ստուերական ինն պատկեր յօժարամտութեան մերոյ առ ամենայն չարիս, և ողորմութեանն Աստուծոյ որ 'ի վեր ունի զմեզ։

Գ. Ոչ միայն այս յօժարամտութիւն առ չարն է 'ի մեզ, այլ և անկարութիւն իմն ընդհանուր առ բարեգործութիւն։ Վասն որոյ առանց նախաժամանն շնորհաց և զերբնական օգնութեանն Աստուծոյ ոչ կարէ ինքնին առնել ինչ գործ զերբնական. նա և ոչ բնական առանց բնական ձեռնտուութեանն Աստուծոյ. և այսպէս ինքն է ամենեին ոչ ինչ։ Ոչ ինչ յէութեանն, զի զէութիւն իւր առեալ է յԱրարչէն իւրմէ, և այնպէս՝ զի եթէ ընդ մի ակն վայրկեան դադարեալ էր 'ի պահպանութենէն, անդէն դառնայր յոչէութիւն իւր առաջին։ Ոչ ինչ 'ի գործս իւր, զի առանց օգնութեանն Աստուծոյ ոչ կարէ և ոչ զոտն 'ի վեր ամբառնալ, կամ՝ շարժել զմի մատն։ Ոչ ինչ յերախտիսն, զի առ 'ի գործել զգործ ինչ բարի արժանի յաւիտենական կենաց՝ կարօտի զերբնական շնորհաց, և ոչ ազդչին միայն այլ գործադրականին. այնպէս զի է իսկ նախատեսն Աստուած 'ի յաւիտենից՝ եթէ համաձայնելոց իցէ հոգին շնորհացն։ Եւ զայս շնորհ ոչ պարտի ունիք ըստ արդարութեան, մանաւանդ զի ոչ ոք կարէ արժանաւորութեամբ և հաւասարակշիռ վաստակովք ժառանգ այնմ լինել։

Ապա յայտ է զի այսոքիկ երկոքին խոկմունք մահուան և դատաստանի են հզօր սատարք 'ի ծանօթութիւն անձին. ասեմ՝ ոչնչութեան մերոյ, առաջի առնելով մեզ զաղէտս մարմնոյն և զչարիս հոգւոյն։

Գ.

Այսոքիկ խոկմունք են ես կարևորք յոյժ, առ կասեցուցանելոյ զմեզ յանկարդ սիրոյ երկրաւորաց. որ և է այլ իմն պտուղ, զոր առ 'ի ժողովել պարտ է վաստակել ամենայն ճգամբք։ Այսմ զհետ եղաք փութով պնդութեան յառաջին խոկման՝ ջանացեալ կորզել 'ի սրտէ զցանկութիւն ճոխութեան, հաճոյից՝և պատուոյ, բերեալ յանդիման աչաց զողորմ սահմանն՝ յորում զտանի մարմին մեր։ Ճշմարտութեամբ եթէ յայդ սահման կայցէ մարմին մեր՝ որպէս նկարեցի քեզ, ապա Զի՞ հպարտանաս հող և մոխիր. եթէ դու ծրար իմն ես աղբևաց, կերակուր որդանց։ Ընդէ՞ր յանդգնեցաւ սիրտ քո. «Զի՞ թափեցեր զսրտմտութիւն առաջի տեառն»։ Եթէ դու հող ես և ոչինչ, առ ինչ է քեզ բարկանալ, եթէ անարդի կաւն, եթէ առ ոչ ինչ համարի ոչինչն։ Եթէ դու իցես տիզմ ախտից և թերութեանց, հիմ կամիցիս զովիլ. առ իմ՞ խորշիցիս և չկամիցիս նախատ և ոտնակոխ լինել։ Եթէ դու իցես նողկացուցիչ փտութիւն, և զարշահոտ զաղրութիւն, առ ինչ է քեզ մեծ իմն համարել զանձնդ և քան զայլսն դերամբարձ։ Եթէ 'ի փակել չիրմին և ամենայն փայլմունքդ անյայտին ընդ քեզ, էր այդչափ 'ի խնդիր փառաց ելեալ ես։

Ի խոկման դատաստանին զտցես զհոգի քո լի խռովայոյզ և ապստամբ կրիւք, յորոց անձն ընդ անձին ոգորեալ 'ի բաղում՝ ազգս փոփոխի. երբեմն ընկղմեալ 'ի խորս տկարութեանց. այլ երբէք վերուոյց բարձրանայ ցաստեղս. է զի զտանի 'ի զայրոյթ կատաղութեան, երբէք յօրանայ 'ի զեղխութիւն շռայլութեան, և երբէք տառապի 'ի տաղտկութեան, և է զարձեալ զի մաշի նախանձու. երբէք չգաղարէ, այլ հանապազորդ բախեալ կոծի յալիս անսանձ ցանկութեանց։ Ա՛ խմէ՛ ապա զհոգի քո զայս զհեստ և զխեռ ցայդվայր մեծարիցես. մանաւանդ զի հիմ՝ ոչ անարգես, և ոչ վառիս 'ի սուրբ ատելութիւն ընդդէմ անձին քո։

Ա՛սացի ատելութիւն ընդդէմ անձին քում։ Եւ զինչ. ոչ կարիցես ատել զմարմին քո զկայսրանն ախտից, զաղբիւրն թշուառութեան աղետից. ոչ ածես 'ի միտ զի զու ինքն ես մանկիչ հոգւոյդ, զարան ամենայն մեղաց, տածիչ զեղխութեան, թշնամի առաքինութեան, ծով յարակոծ։ Եւ զու ոչ կարիցես ատել զճիւաղաբարոյդ զայդ։ Եւ վասն այսոցիկ պատճառաց ոչ կարիցես ատել և զհոգի քո, զապստամբն յԱստուծոյ, զատեցեալն երկնից, զդատապարտն յերկրի, զզերին ցանկութեանց, զմայր մոլորութեանց, զբոյնն ախտից, զստրուկն վատչուէր մարմնոյն։ Հապա, զդա՞ստ լեր, մինթէ ցայդվայր մեղկիցիս.

զրահաւորեաց, յիշեա, զի եթէ որ 'ի փափ-
կութեան զծառայն սնուցանէ, յետոյ մոր-
մոքեսցի յանձն իւր. արդ ճնշեա զմարմին
քո և հնազանդեցո։ Մերժեա 'ի քէն զհա-
պատանս, զցանկալիսդ չնչինս, զոր կարէ
իսկ մահն 'ի պահուն յորում՝ ոչ կարծիցես՝
զողանալ 'ի քէն, ընդ որ 'ի դատաստանին
զղջասցիս զի այդպէս սիրեցեր, և որոց
ցանկացար։ — Աստանօր զիր ուխտ ընդ
անձին քում՝, քննեալ զոր ինչ պարտիս
հատանել 'ի քէն և քեցել։ —

Ընդ ձեռն այսոցիկ խոկմանց ոչ միայն
անջատի հոգին 'ի սիրոյ երկրաւորաց, այլ
և ստանայ յանձին զսուրբ զերկիւղն Աս-
տուծոյ, զի զզեցցի զհոգին փրկութեան,
և բերիցի յատելութիւն և 'ի զարշումն 'ի
մեղաց։ Որ է երրորդ պտուղ այսորիկ խոր-
հրդակցութեան։

Արդարև որ ուղղութեամբ մտաց պա-
բապեսցի 'ի խոկումս յայս եթէ 'ի մեղան-
չել անդ հնար է ինձ յափշտակիլ 'ի մա-
հուանէ և ձգիլ 'ի դատաստան վասն այնր
մեղաց առաջի ամենազէտ արդար և անա-
չառ դատաւորին, որ կարէ զհոգի և զմար-
մին կորուսանել 'ի գեհենի. որ զայսոսիկ
զմտաւ ածէ, անշուշտ աղաղակեսցէ ընդ
Յովսեփայ. «Եւ զիարդ առնիցեմ զբանդ
զայդ զչար և զմեծ, և մեղանչիցեմ առաջի
Աստուծոյ»։ Եւ ընտրեսցէ բիւրիցս մեռա-
նել, և տանել դառն տանջանաց, քան թէ
մեղանչել և դարձեալ թշնամանել զմեծվայ-

ելչութիւնն Աստուծոյ, ըստ բանից Դաւդ-
վոդին. «Ցիշեա զվախճան քո և յաւիտեան
ոչ մեղիցես»։

Այսոքիկ են երեքին պատուղք խո-
կմանց մահուան և դատաստանի, և առա-
ջին այսր մասին կրթութեան. այսինքն զար-
շումն 'ի մեղաց, ծանօթութիւն անձին, և
կորզումն արմատոց մեղացն, մերկացու-
ցեալ զհոգին յերկրաւորաց, և առանձինն
'ի ցանկութենէ հաճոյից մարմնոյ և պա-
տուոյ, որք են ապրիլք ախտից, և ածել
զնա 'ի ճանապարհն փրկութեան և կատա-
րելութեան։ Ա՛ռ այս մեծապէս ձեռնտու
լինիցի խոկումն առակի Անառակ որդւոյն
պատշաճեցուցեալ զնա 'ի վերայ անձին։

Ի խոկման ասա նկատեալ մարդոյ
զթշուառութիւն շռայլելոյն, զայ 'ի ծանօ-
թութիւն անձին. Էս ասա սովամահ կորն-
չիմ։ Անտի անցանէ 'ի զարշումն մեղաց.
Հայր, մեղայ։ Եւ զխոչն 'ի բաց սրբէ, խոր-
տակէ զչղթայսն, և զարմատսն քեցէ զմե-
ղաց իւրոց. Գնացից առ հայր իմ։ Յայսմ
ամենայնէ յայտ է զի այս վերջին խոկումն
առաջնոյ մասին՝ է վերջին խթանն զար-
թուցիչ հոգւոյն, որպէս զի 'ի բաց արա-
րեալ զվախանարար խոչն, յանձին կալ-
ցի աներկմիտ՝ դառնալ ուղղիլ առ վերջին
վախճանն, յորմէ խոտորեալն էր մեղօք,
և ծառայել Աստուծոյ զհետ զնալով կամաց
նորա ամենեին անխտիր համակամութեամբ
առ ամենայն ինչ։

ԽՈԿՈՒՄՆ Բ

ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆ

Մասն Ա.

«Ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի»։ Ամենեցուն։ Ապա դու ևս յանդիման լիցիս առաջի այնր ատենի. իւրաքանչիւր ոք զիւր բեռն բառնալոց է։ Անդանօր, և ընդ մեզս քո մեծապէս զայրացեալ, դատեսցէ և զքեզ դատաւորն արդար, անաչառ և խիստ։ Նա յանդիմանեսցէ և կացուսցէ զայն ամենայն առաջի քո, որովք մեղար յընթացս կենաց քոց 'ի ձեռն հինգ զգայութեանցդ և երից կարողութեանցդ հոգւոյ՝ խորհրդով, բանիւ և գործով. վասն զի զամենայն՝ որք լինին ընդ արեգակամբ՝ ածցէ Աստուած 'ի դատաստան. զի վասն ամենայն դատարկ բանի զոր խօսիցին մարդիկ, համարս տալոց են յաւուրն դատաստանի։ Եւ այսպէս գործք քո անկցին ընդ խիստ քննութեամբ. ամենայն... բովանդակ...։

Ամենայն մեղք գործեալք ընդդէմ տասնաբանեայ պատուիրանի և Եկեղեցւոյ, և որք իցեն յեօթն մահուշափ մեղսն, և զանցառութիւնք ուխտիցն որ առ Աստուած, առ ընկերն և առ անձն. և զաղտ-

նիքն, և այլոցն, և մոռացեալքն։ Եղո՛ւկ քեզ. քանի՛ յոլովութիւն մեղաց յայտնեսցին 'ի քեզ աղքի աղքիք, ծանունք և անթիւք զործեալք չարամտութեամբ։

Պահանջեսցին և անտեսութիւնք բարեաց զործոց։ Ո՛վ, ո՞րպէս զարհուրեալ զողասցիս, յորժամ յանդիման ցուցցեն քեզ զթիւ չնորհացն՝ զորս յընթացս ողջոյն կենաց քոց ընկալար. ո՛վ Տէր. ո՞ր չափ անթիւք լեալ են, որոց մէն մի անկշռելիք և անչափ. քննեսցի որչափ ինչ 'ի բարին 'ի զործ արկեալ իցես, և որչափ ինչ յանօգուտս ծախեալ. և իբր անհամեմատ առաւելու այս քան զայն։ Ա՛հա յանդիման առնին քեզ անթիւ պարտք վիճակի կենաց և պաշտամանդ անտեսեալք, յոլով սատարք փրկութեան արհամարհեալք, և առիթքն բարեզործութեան ոչ 'ի զործ մատուցեալք։

Ո՛վ անձն եղկելի. ո՞րպէս կարասցես ունել զողիդ 'ի քեզ և կալ, յորժամ դատաւորն անաչառ որոտընդոստ զոչեսցէ առ քեզ. Տուր զհամար ժամանակիդ ապաշխարութեան, զաճման չնորհաց և արդեանց՝ որ անինայ առատաձեռնեցաւ քեզ, զժամանակին՝ զոր չռայլեցեր կամ յանզործութեան, կամ 'ի զործս անպատկանաւորս քեզ, և կամ 'ի չարիս զործել։ Տուր զհամար քանքարացն քեզ յանձնելոց, զորս է զի ծուլութեամբ թաղեցեր, և է զի յանպատշաճան ծախեցեր։ Տուր զհա-

մար այնչափ խոստովանութեանց, հաղորդութեանց, խոկմանց, կրթութեանց, զոր-ովք երբէք անտեսցեր, և այլ երբէք վեր 'ի վերոյ 'ի շտապ և անպտուղ 'ի գործ արկեր։ Ցուր զհամար անթիւ մեղացն՝ զոր-ս կարէիր խափանել, այնչափ հոգւոյ՝ զոր-ս կարէիր փրկել, այնչափ առաքինութեանց յոր-ս կարէիր կրթել զմարդիկ։ Ո՜վ Տէր, լացից այժմէն զեղեռն չարութեան իմոյ զոր-ս իբրև յանզիտութեան գործեալ եմ ցայսօր. քանզի անպատասխանի եմ. և զիտեմ զի յայնժամ արկցես 'ի վերայ իմ զբարկութիւն քո. «Արտմտութիւն բարկութեան քո հասցէ 'ի վերայ իմ»։

Եւ եթէ քննեսցէ յատենի անդ և զբարիս գործեալս իբր յակամայս, «Զի քննեսցի Երուսաղէմ ճարպաւ»։ Ա.Հ. յորժամ յաւիտենականն քննեսցէ զմեր գործս բարիս. գոցէ «Իբրև զհանգերձս ապահարիցս զամենայն արդարութիւն մեր»։ Ա.սէ և սուրբն Գրիգոր. Ա.րդարութիւնք մեր ածեալք 'ի դատաստան արդարութեանն Ա.ստուծոյ, անիրաւութիւն զրեսցի, և մթանեսցի յանաչառ դատաստանին՝ որ լուսափայլն թուէր 'ի կարծիս գործողին։

Յայնժամ և նոքին իսկ գործքն բարիք յայտնեսցին լինել գործք չարք, պակասեալք կամ 'ի յեղանակն գործոյն, կամ 'ի պատճառն և կամ 'ի վախճանն, որ վասն գործեալք իցեն։ Եւ այսպէս նա որ ինքնապանծ կարծէ զանձն ճոխ և լիացեալ բա-

բեաք, յայնժամ յապուշ ընդարմացեալ, զայէ զանձն ողորմելի և հեզգ և աղքատ, մերկ և կոյր։ Ապա այժմէն ծանիր զքեզ...։ Խոկումն զատաստանին քաջադեղ է յոյժ առ 'ի ցուցանել անպատրուակ զիակութիւնս հոգւոյն։ Եւ այսորիկ ծանօթութիւն բուռն ածէ զմարդ 'ի խորին խոնարհութիւն, յատելութիւն մեղաց և անձին։

Մասն Բ

Եւ այսոքիկ ամենայն ածցին քեզ յանդիման պարզ և յայտնի. քանզի որ քննէ զսիրտս և զերիկամունս Աստուած, և լուսաւորէ զդաղտնիս խաւարին, և յայտնի առնէ զխորհուրդս սրտից, ակն այն ծածկատես մտաց և խորհրդոց, արասցէ խիստ ինն քննութիւն հոգւոյն, և ցուցցէ յայտնապէս զլինել նորա հակամէտ 'ի չարն, և զժկամակ 'ի զործել զբարիս։ Անդ ճշդիւ հաշիւք լինիցին թուոց, տեսակացն և ծանրութեան մեղաց և չարութեան նոցին։ Աստուած ամենակալ քննեսցէ զերերումն հոգւոյն յամենայնի, զարմատս և զաղբիւրս բերմանցն և ախտից։ Անդանօր 'ի միտ առցես զունայնութիւն մարդկային խորհրդոց, զանբաւականութիւն բաղբաղեալ պատճառացն, զմոլար դատմունս խղճի։ Ամենայն իսկ միանգամայն նկարեսցի յանդիման աչացդ երբ 'ի պատկերի մանրազնին և պարզ նկարագիր կենացդ բովանդակ, զէպքն

յորս կարէիր զարդանալ 'ի կատարելու-թիւնս, 'ի բարեպաշտութեան, և ամենայն նպաստքն և դարմանք և շնորհացն յաճա-խութիւն զորս ընդ վայր հարեր։ Ի լինել այսոցիկ այսպէս՝ ա. Զո՞ր կարծիս բերցես յայնժամ զչարութենէ մեղաց, զցանկու-թենէ պատուոյ և հաճոյից զսիրոյդ որ առ հստպտանագ։ բ. Յո՞ր կոչումն կենաց՝ ցան-կացիս՝ թէ զտեալ էր քո, կամ որպէս ծառայեալ Աստուծոյ 'ի կոչմանն յորում զտար։ գ. Ո՞րպէս մեծարեացես յայնժամ զյեղյեղեալն 'ի մէնջ զանխտիր համակա-մութիւն առ որ և է տեղի, առ որ և է պաշ-տօն, առ առողջութիւն և առ հիւանդու-թիւն։ Ա՛հ, որպէս և որչափ այլազգ դա-տեացիս յայնժամ։ «Քանզի յայնժամ մեծ քաջալերութիւն զդեցցի ազքատն և խո-նարհն, և զարհուրեալ զողացցի ամբար-տաւանն։ Յայնժամ առաւել ցնծացցէ մար-մին վշտահար քան զզրգեալն 'ի փափկու-թիւնս։ Յայնժամ առաւել յարդեցցի ար-համարհութիւն ընչից քան զամենայն գան-ձս երկրածնաց։ Լեր արդ 'ի հոգս և 'ի ցաւս վասն մեղաց քոց, զի յոր դատաստանին անհոգ լիցիս ընդ երանելեաց»։ (Գ.եմ. Ա. ԻԴ)։ Արդ խոնարհեաց յանձն քո, սան-ձեա զմարմինդ, և արա զայն ամենայն, զոր յայնժամ ցանկացիս տեսանել 'ի քեզ, և յորոց տեսեալ զքեզ զուրկ 'ի զեղջ և ա-պաշաւ ողբացցես։

Մասն Գ.

Յաւուր յայնմիկ արդարութեան և ցասման ոչ միայն խիստ համար պահանջեսցի ամենայն գործոց, այլ և առանց լսելի լինելոյ պատճառաց, առանց կարելոյ անբասիր դանձն առնել, առանց ողորմութեան։ Զի եթէ դանդիտութիւն յառաջ բերցես, 'ի սուտ հանցէ զքեզ վարդապետութիւնն հաւատոյ՝ զոր դաւանեցար. եթէ զտկարութիւն, յանդիմանեսցեն զքեզ օգնութիւնքն՝ զորս անարդեցեր. և եթէ առաքինութեանցն դժուարակիրն լինել, պատրեալ զքեզ ցուցցեն բանք Քրիստոսի ասացեալ առ քեզ՝թէ «Լուած իմ քաղցր է և բեռն իմ փոքրոգի»։ Եթէ դհասակդ'ի մէջ բերցես և դխառնուած բնութեանդ, եթէ զվիճակ կենացդ, ընդդէմ կացցեն քեզ սուրբքն ժողովեալք յարևելից և յարևմտից, 'ի քո հասակ, 'ի քո խառնուած և'ի քո վիճակ կենաց, և վարուք իւրեանց դատապարտ կացուսցեն զքեզ։

Նոյն ինքն հրեշտակն քո պահապան դատախազ ելցէ ընդդէմ քո. կարէիր եթէ կամեցեալ էր քո. կորուստ քո 'ի քէն է։ Դևն ինքնին զհաւատս քո ընդ կենացդ 'ի բաղդատութիւն ածեալ անդոսնեսցէ զքեզ։

Յայնժամ ընդվայր արտասուքդ լինիցին և թախանձանք, զի չէ ժամանակ թողութեան։ Յայնժամ առ ոչ ինչ օգտեսցեն

քեզ ցաւք 'ի վերայ անցելոցն, և խորշումն յապաղայից. զի ոչ ևս է ժամանակ ուղղութեան։ Ցայնժամ ոչ կարասցես ապաւինել և 'ի զթութիւն Տիրամօրն, զի յայն ամպրոպային թուխ զիշերին և լուսին ոչ տացէ զլոյս իւր. այլ անդէն հուսկ ընդ հուսկ ողոտասցի անդարձ և անողոքելի վճիռ դատաստանին զկենաց քոց յոր կացցես մնասցես ցյաւիտեանս ժամանակաց։ Ո՜ ահեղ դատաստան. Ո՜ վճիռ ահաւոր։

ԻԴ. ՁԻՖ

Ա. Կորանաց. Եղո՛ւկ զիս յաւուրն դատաստանի 'ի բանալ մատենի խղճի մտաց. յորժամ ասասցեն Ա.հա այր և գործք իւր. զի՞ գործիցեմ, Տէր, յայնժամ, յորժամ երկինք յայտնեսցեն զանօրէնութիւնս իմ, և երկիր դատախազ զարթիցէ հակառակ ինձ։ Ա.հ. ես եղէց անպատասխանի, այլ յամօթոյ կորանաց զերկիր նշմարեալ, զարհուրեալ և դողացեալ կացից յանդիման երեսաց քոց (Սուրբ Օգ. Մա.)։

Բ. Երկիւղի. Ո՜վ ժամ ահաւոր. և թերևս ոչ կարիցեմ կալ զերծ, թերևս ոչ յամենայն կամ։ Ա.նդանօր մեղքն դատախազք, և դատաստանն ահաւոր, և բացեալ ընդ ոտիւք սանդարամետն անկնդակոր, և 'ի հանդիպոյ դատաւորն ահեղ. և 'ի ներքս յիս խիղճ մտաց խայթող։ Ա.հ. չիք ուրեք թագուստ,

և երևել յանդիման դիմաց իցէ հնարաւոր. ծածկիլն անհնարին, և կալն յանդիման ա-
հաբեկ։ Ո՞է որ ոչ յարիցէ և ոչ զարհու-
րեսցի առ ձայնն Աւրիա մեռեալք, եկայք
'ի դամ։ Ա՛հ. «Երկնչիմ 'ի քէն Տէր,
և զարհուրեալ է անձն իմ յոյժ. ահիւ և
զողութեամբ սասանեցուցանես զամենայն
ոսկերս իմ, յորժամ որոտաս յիս զդա-
տաստանս քո»։

Գ. Յաւոց. Եղա՛ւկ. որք են վնասակար-
տութիւնք մեզաց իմոց. Նախատեցի զնա
ինքն, որում հաւատայի թէ զատելոց է
զիս վասն այնր իմոց յանցուածոյս. բայց
արդ ապաշաւեմ։ Ողորմեա ինձ Աստուած
ըստ մեծի ողորմութեան քում, և ըստ բա-
զում գթութեան քում քաւեա զանօրէնու-
թիւնս իմ. զի 'ի ծով ցաւոց ընկղմեալ արդ
զարշիմ և մերժիմ 'ի նոցունց, զի նոքիմբ
վշտացուցի զքեզ իմս բարութիւն. անդարձ
ուխտիւք խոստանամ զողջ կալ յայսմ
հետէ և առյապայ 'ի մեղաց, և արմատա-
խիլ առնել զնոսին, և ևս առաւել (զա. ա.)։

Դ. Ծանօրութեան և առնդութեան անձին.
Ծանեայ, Տէր իմ, զի այր մեղաւոր եմ ընդ
մեղօք վարձառեալ, և թաղեալ 'ի խոհերս
ամենայն ախտից, նախատինք մարդկան և
արհամարհանք ժողովրդոց։ Ծանեայ զի
եմ ոչ ինչ, և ծնեալ իսկ 'ի մեղս. դժկա-
մակ առ բարիս և հակամէտ առ չարս. բա-
զում են մեղք իմ քան զհերս գլխոյ իմոյ,
և կարծեցեալ առաքինութիւնք իմ են ախ-

տաւորութիւնք։ Նախատեմ զանձն իմ ի-ջեալ 'ի խորս անարգութեան իմոյ։ Ո՜տայր ինձ իջանել 'ի նուաստութիւն առաջի մարդ-կան ըստ արժանեաց ախտաւորութեան ի-մոյ։ Ո՜վ մարմին ողորմելի, 'ի սէր քո 'ի նուազս անթիւս զայրացուցի զդատաւորն ահաւոր, ահա երդնում լինել քեզ յայսմ հետէ թշնամի անողոքելի։ Ո՜վ ոսկեղինիկ անխտիր համակամութիւն առ ամենայն դէպս, առ ամենայն տեղիս, առ ամենայն պաշտօն և առ հիւանդութիւն և առողջու-թիւն. ես քոյովդ առաջնորդութեամբ ուխտ ընդ անձին հաստատեմ. ծառայելոյ Աս-տուծոյ յայսմհետէ զհետ գնալով կամաց նորա, զի արժանացայց լսել յաւուր միում 'ի Յիսուսէ դատաւորէն զայն երանական բան. «Եկայք օրհնեալք»։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ա. Ամենեքին մնանելոց եմք 'ի դատաստան, յորում խիստ քննութիւն լինիցի ամենայն գործոց մերոց, ամենայն։ Բ. Ամենայն յանցուածոց։ Գ. Անտեսութեանց բարեաց գործոց, ապախտաւորութեանց շնորհաց, արհամարհութեան սատարաց, ժամանակաց կորուսելոց, քանքարաց թագուցելոց։ Դ. Բարեաց վեր 'ի վերոյ գործելոց կամ յեղանակն, կամ վասն պատճառն կամ վասն վախճանին։

Բ. Այսոքիկ ամենայն յանդիման եկեսցեն

յայտնի և պարզ։ Ըստ թուոյ, ըստ տեսակի և ըստ ծաներուեթեան 'ի քննութիւն առցին։ Նոյնպէս և բերու�հոգւոյն և արմատքն ախտից. տեսցուք զընթացս կենաց ողջոյն 'ի պատկերի եբրև 'ի հայելւոջ։

Գ. Զգուշեալ տեղի ապաստանի և թագստեան, և ոչ անբասիր կարող իցես առնել զանձն՝ պատճառեալ զոգիտութիւն կամ զակարութիւն, կամ զդժուարութիւն և կամ զհասակ կամ զնատնուած բնութեան. զի յոլով սուրբք յայտնեսցին, որոց 'ի մերում վիճակի յաղթող եղեալ ընդ սուրբս դատեցան։ Նոյն ինքն հրեշտակ մեր պահպան դատախազ մեզ կացցէ, և գեն ամբաստան. և ոչ առ Տիրամայրն պատսպարութիւն գտցուք։ Զիցէ ողորմութեան ժամ։ Ո՞վ ահեղ դատաստան։

Ընթերցիր

Թուվ. Գեմբ. Գիրք Ա. Գլ. 24. Յոգ. 1. 2. 4. 5։

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Ի վերայ պատրաստուրեան մահուան.

Ի համար պաղոց այսր սրբոյ առանձնութեան արժան է կարդել զերանական պատրաստականութիւն հոգւոյն, որով զբ առանց յուզելոյ մտացն և կամ յահ ըմբռնելոյ սրտին, զտանէ զանձն յամենայն

ժամու պատրաստ առ 'ի մահ։ Քանզի արդարև որ ոչ պատրաստի 'ի մահ յաւուրս կրթութեան, երբ կարասցէ պատրաստել զանձն։ Եթէ ոք այժմ չեղիս ժամանակ պատրաստելոյ զանձն, երբ այլ կարասցէ դառնել։ Եւ ոչ իսկ կարասցէ ոք անմեղադիր զանձն ցուցանել՝ որ զկնի աւուրցս այսոցիկ փրկութեան չիցէ պատրաստ առ 'ի մահ։ Ով ընթերցող, ես առաջի արարիչ քեզ զյեղանակ առ լաւ ևս պատրաստելոյ զքեզ. կալ զսոյն խոհական մտաք, և զտես զքեզ շատացեալ և զոհ։

Ա.

Յեղանակ ընդունելոյ քրիստոնեաբար զառաջին շուր մահուն առ դուռս հասելոյ.

Խոնարհեալ 'ի ծունր յաղօթարանի քում, և կալեալ 'ի ձեռին զխաչն, նկարեա յանդիման մտացդ զհրեշտակ քո զպահպան՝ որ հասեալ կայ ազդ առնել քեզ զմերձենալ մահուդ, և ասէ. «Այսպէս ասէ Տէր, հրաման տուր վասն տան քո զի մեռանիս և ոչ կեաս»։ Ընդ այս լուր, զոչեա զուարթամիտ. Ահաւասիկ, Տէր իմ, պատրաստ կամ ծառայ քո. և յաւել ասել. Ո՜վ Տէր իմ և Աստուած, Տէր կենաց և մահու, որ 'ի պատուհաս մեղաց դատակնքեցեր զմարդ 'ի մահ, ահա հնազանդիմ

ես օրինաց քոց այսմիկ, զարշելով յամենայն սրտէ 'ի մեղաց իմոց. և զմահն, որում բազում անգամ եղէ արժանի մեղօք իմովք, արդ առնում յանձն մտադիւր 'ի հատուցումն այնչափ մեղաց իմոց. զի հասից 'ի վայրն՝ յորում անհնար լիցի ինձ մեղանչել այլ ևս։

Ա.յո՛, Տէր. մեռայց ուր և ուրպէս և յորում ժամու կամք քո սահմանեսցեն, ամենեին անխտիր առ ամենայն ինչ։ Եթէ կամիցիս մեռանել ինձ շարատանջ մահու տաղնապեալ 'ի ցաւս զառինս՝ համբուրեցից զալ քո հայրախնամ, եղիցին ամենասուրբ կամք քո։ Զեն այսոքիկ տանջանք զժոխոց՝ որում ես արժանացայ բազում անգամ մեղուցեալ. մեռայց առ ատելութեան մարմնոյս, զի կերակուր լիցի որդանց այս մարմին բազմամեղ։ Մեռայց առ խոնարհութեան, զի դարձայց 'ի հող և յոչէութիւն, զի աչխարհ սրբեսցի 'ի չարեացապարտ մեղաւորէ աստի, որ անարդեալ զբաղցր լուծն Ա.բարչին իւրոյ՝ տաբաձիգ հեռացաւ 'ի վախճանէն իւրմէ։

Բ

Քննութիւն 'ի վերայ անցեալ և այժմեան վիճակի կենաց հոգւոյն.

Յառնուլ անդ զլուր մահուան՝ առաջին պատկեր որ անդէն հարկանիցի մտացն՝ է յիշատակ անցեալ կենացն, և յորում զտա՞նի։ Յաջողուած իմն է քեզ այս բազդի, եթէ այժմէն 'ի քնին մատուցես զայն։ Վասն որոյ քննեա մտադիր

Ա. Որպիսի՞ իցէ վիճակ այժմեան կենացդ։ Եթէ արդ հասցէ քեզ մահ, իցես պատրաստ... հարցանեմ՝ խղճի մտացդ, ասա՛, իցես պատրաստ։ Պահեցեր անբիծ զպատմուճանն անմեղութեան՝ որ տուաւ քեզ 'ի մկրտութեան։ Եւ եթէ արատեցեր մեղօք, լուացեր զարձեալ 'ի ճեռն ուղիղ խոստովանութեան։ Եղեր խոստովան զամենայն զմեղս քո. և ուղղութեամբ։ Ցես եթէ իցես զղեցեալ զզգեստ հարսանեաց, և զարդարեալ հաստատուն շնորհօք։ Կամիցիս մեռանել 'ի վիճակին՝ յորում կաս այժմդ։ Եթէ յանկարծ այժմ կալցի զքեզ մահ, չունիցիս ինչ որ վրդովեսցէ զքեզ, և զհոգիդ 'ի տագնապի կացուսցէ...։ Ա.ա ինչ յերկմիտ խորհուրդս տատանիս... և շրջին զոյնք երեսացդ...։ Ա.հ. որպիսի՞ յանդգնութիւն իցէ այդ, և զմի ևեթ

ժամ կալ 'ի վիճակիդ՝ յորում մեռանել ոչ կամիս։

Բ. Ո՞րպէս էին անցեալ կեանքդ։ Որոց իրաց յածէիր 'ի խնդիր այնչափ հոգովք և վաստակովք։ Ո՞ւմ նուիրեալ էին ժամանակք քո և զորձք և զօրութիւն ուժոյ քո. թերևս յաւիտենականութեան, հոգւոյդ, և Աստուծոյ... կամ թէ ունայնութեան, դատարկութեան, և դիւայ։ Ընդ այնչափ ամս զորս կացեր, եղիր քեզ և մի ամիս առանց ներելի մեղաց. և ընդէր է լինէ ասել մի ամիս, և մի օր։ Նուիրեցեր երբէք 'ի ծառայութիւն Աստուծոյ ժամ մի անխառն 'ի թերութեանց ինչ։ Ցինչ զորձ վաստակեցար վասն Յիսուսի փրկչին։ Որոց տարար վասն երկնից։ Զորձեցեր երբէք մեծ ինչ արժանի վարձուց։ Ի հասանել 'ի դուռն մահուան՝ որ ինչ 'ի զորձոցդ և անտեսութեանց տագնապեսցեն զքեզ։ Ի հարցանել Աստուծոյ զպատճառս այսր և այնր զորձոց, զինչ տացես պատասխանի։

Գ. Ո՞րպէս ցանկալիր եթէ կացեալ էր քո. զոր դիտումն և կատարելութիւն ցանկալիր գտանել 'ի հանապազօրեայ զորձս քո. յորում վիճակի գտանել զքեզ. կամ 'ի կոչմանդ ընտրելոյ՝ որպէս՝ կամէիր թէ նուիրեալ էր զկեանս քո Աւրարչին քում։ Դառնանայր արդեօք քեզ յայնժամ, եթէ գտանէիր զկեանս քո մեծաւ մասամբ ծախեալս 'ի զորձս բարեպաշտութեան։ Իցես արդեօք հաճ ընդ զնացս անցելոց կենացդ։

Այս ինչ օգտեսցեն քեզ արդ կատարումն հաճոյից զգայարանաց և մարմնոյ, ունել առաւելութեամբ զամենայն պիտոյս կենաց առ ձեռն, և մեծ քան զայլսն երևել։... Եւ զինչ վնաս արդ քեզ եթէ կեցեալ էիր 'ի հիւանդութեան, 'ի կարօտութեան, յանծանօթս և յանարգութեան։ Ահ. 'ի մահուն ցաւ մեծ կրեսցես ընդ զաղջութիւն աւուրց կենացդ. և խնդութեամբ լցցիս ընդ վաստակել քո անզուլ, ընդ տանել քո ամենայն վշտաց առ սէր հոգւոյդ և Աստուծոյ։

Դ. Ո՞րպէս լինիցի մահ քո։ Թերևս այդ քո յողողդութիւն մտաց 'ի չարն և 'ի բարին, 'ի զաղջութեան և յեռանդան, յուսացուցանէ զքեզ աներկբայ ստանալոյ 'ի վախճանի զհաստատութիւն։ Մահն արձաղանգ է կենաց։ Ի հրաշս զրեսցի եթէ զք կեանս վարեսցէ զաղջս, և մեռանիցի 'ի սրբութեան։ Եւ զինչ պատճառք իցեն ակն ունելոյ յաղթել փորձողին 'ի կատարածի կենացն, յորում փաղանգք դիւացն 'ի վերայ յարձակեսցին առ 'ի ծանակել զհոգին, մանաւանդ յաւանդման հոգւոյն։ Եւ թէր ոչ զանգիտես եթէ ոչ այժմէն յաղթեսցես կրիցդ որք իշխեսցեն մտաց քոց. այնոքիկ լինիցին զորձի դաւանաց դիւին յելս կենաց քոց։ Գործեցեր երբէք բարիս ինչ։ Արարեր զհատուցումն պատժոցն մեղայ զորձովք ապաշխարութեան։ Կարիցես խուսափել 'ի բոցոյ քաւարանին։... Խորհեաց քաջ զայս ամենայն, զիր ուխտ ընդ ան-

ձին քում, և նշանակեա՛ի թղթի մի առ մի զամենայն։ Ա՛հ. առացից ընդ Գեմբացւոյն. «Քանի՛ երջանիկ է և իմաստուն, որ արդ ջանայ այնպէս վարել կեանս, որպէս ցանկայ զտանել զանձն՝ ի մահուն»։

Գ.

Հոգևորական ընդունելութիւն վերջին թոշակին և օծման.

Ապաշաւեալ քո՛ի բեկեալ սրտէ՛ի վերայ մեղայ քոց, և ուրա ընդ անձինդ հաստատեալ բիւրիցս յանձն առնուլ զմահ քան մեղանչել այլ ևս, պատկերեա՛ի միտս քո ածեալ առ քեզ զյետին թոշակն սուրբ, և ամենախոնարհ երկրպագութեամբ ընկալ զնոյն հոգևոր ազգմամբ՝ի սիրտ քո։ Ապա կնքեալ խաչիւ զհինգ զդայարանաց, զորս սովոր են օծանել իւղով սրբով, առա և ռանդեամբ. ի ձեռն սուրբ օծմանս և իւրով ողորմութեամբն թողցէ ինձ Տէր զոր ինչ տեսանելեօք ✠, լսելեօք ✠, հոտոտելեօք ✠, ճաշակելեօք և բանիւ ✠, շօշափելեօք և ոտիւք ✠, յանցեայ. յանուն Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն. Ամէն։

Յաւեաց միանգամայն՝ի խորոց սրտիդ՝ի վերայ մեղացդ զործելոց՝ի ձեռն այսոցիկ զդայութեանց, նուիրելով Տեառն՝ զդայսն՝ զորս կրեաց՝ի նոսին զդայարանս

Յիսուս փրկիչ մեր 'ի քաւութիւն մերոցն։ Ապա նկատեալ զքեզ ինքն 'ի միջոցին երկուց յաւիտենականութեանց, երանականին և աղետաւորին, անդէտ առ որ կայցէ քեզ մտանել՝ զարհուրեալ դողա։

Այլ ... ընդէ՞ր տրտում ես անձն իմ և ընդէ՞ր խռովես զիս. յուսա առ Աստուած, որ կարող է և գիտէ և կամի փրկել զքեզ. զի որչափ և ծանունք իցեն մեղք քո՝ այլ ոչ հասանեն 'ի չափ անհուն ողորմութեան նորա։ Հայր է նա վշտակից հիւանդութեան որդւոց իւրոց, ճանաչէ զմինելն մեր զիւրազայթ, և զթութիւն նորա 'ի վերայ ամենայն արարածոց իւրոց։ Որ ետ մեզ զորդին, ժխտեսցէ՞ տալ զերկինս։ Շլացեալ ունի զաչս՝ որ երկմտի ընդ զթութիւնն Աստուծոյ։ Ի միտ առ և զայս՝ ունիմք բարեխօս առ Հայր զՅիսուս Քրիստոս զարդարն. ունիս քեզ ջատագով զվէրս նորա. քեզ է 'ի պարգև արիւն նորա և արդիւնք զործոց նորա։ Զայսոսիկ մատուցեալ 'ի կշիռ արդարութեանն Աստուծոյ, առաւել քան զարժանն լինիցի հատուցումն պարտուցդ։ Ահա տես զՍէր քո 'ի խաչի, որ խոնարհեցուցանէ զգլուխ իւր քեզ 'ի համբոյր, տարածէ զձեռսն 'ի փարիլ զքեզ, բանայ զկողն զի 'ի նմա պատսպարեսցիս։ Արդ զյոյս քո 'ի նա հաստատեա։ Ապա յառեալ 'ի խաչն զաչս քո, խանդաղատեալ ըղձիւք ասա.

Հաւատամ քեզ, ճշմարտութիւն զերա-

բուն, խոնարհիմ առաջի քո զի եմ ոչ ինչ. ցաւիմ զի զառնացուցի զքեզ բարութիւն անհուն. ուխտիւք խոստանամ յանձն առնուլ զմեռանելն, և ոչ 'ի թեթև յանցանս զտանել. ակն ունիմ հանդիպել յողորմութենէ քումմէ ներողութեան շնորհաց և փառաց. սիրեմ զքեզ 'ի վեր քան զամենայն, Սէր իմ խաչեալ. զոհանամ զխնամոց զթութեան քո զորս ցուցեր ինձ յամենայն կեանս իմ. զքեզ միայն խնդրեմ իմ միակ վախճան. զամ առ քեզ, ընկալ ցիս. ահա հոգի իմ 'ի ձեռս ձեր Յիսուս, Մարիամ և Յովսէփ։

Դ.

Իղձք հոգւոյն զկնի մահուան.

Աւարտեալ զայսոսիկ ըղձական հառաչանաց, մեռեալ զքեզ կալ 'ի մտի, և լքեալ զաշխարհ, անցեալ զնացեալ 'ի տուն քո յաւիտենից, և մտեալ 'ի դատաստան, և դատապարտեալ 'ի հուր քաւարանին։ Աւդ քննեա հակիրճ բանիւ

Ա. Յորժամ հոգի քո մեկնեալ 'ի մարմնոյդ, լքեալ զամենայն զգոյսդ՝ ժամանեսցէ 'ի հանդերձեալ աշխարհն, որոմ աչք ակնարկեսցէ առ դիակնացեալ մարմին և առ այնչափ սիրեցեալսն յիւրմէ 'ի հոպտանս նորա. զիարդ ցանկայր թէ վարեալ էր զմար-

մինն՝ և որպէս վայելեալ 'ի հոգւոյն նո-
բա։ Զոր դատաստան արասցէ զպատուոյ
փառաց, և զոր դանխտիր համակամութենէ
առ ամենայն ինչ։

Բ. Ի մտանել անդ յայն բոց զինչ դա-
տաստան արասցէ զչարութենէ մանուանց
մեզաց, և զկամաւոր ապաշխարութենէ, և
զջանից կատարելութեան. ասա արդ զինչ
օգուտ 'ի վայելից ամենայն սիրելեանց 'ի
կեանս աստ, 'ի փառսն, 'ի բերկրութիւնս,
որովք յաւելուցուն խոշտանգանք քաւա-
բանին։ Դարձեալ որ վնաս յաղքատութե-
նէ, 'ի նախատանաց, 'ի չարակրութեանց,
որովք զերծանէիր, կամ զոնեա նուազ
կրէիր զայդ դառն տանջանս։

Գ. Եթէ զկնի մահուն չնորհէր քեզ դառ-
նալ 'ի կեանս, և հրեշտակ քո պահապան
ազգէր յունկն քո՝ թէ յետ ամսոյ դարձեալ
մեռանիցիս, որպիսի վարէիր կեանս յամ-
սեանն յայնմիկ, որպիսի կեանս... Յա-
ծեցո սուղ ինչ զմիտս քո յայսոսիկ, և նո-
րոգեա զուխտս սրտիդ զոր եղեր ցայս վայր.
և վարեա կեանս յետ այսորիկ որպէս նո-
րոգ դարձելոյ 'ի մարմինն, դարձելոյ 'ի դա-
տաստանէն, և որ մեռանելոց իցէ դարձեալ
զկնի լրանալոյ ամսոյն. «Երանի իցէ ծա-
ուային այնմիկ, զոր եկեալ տէրն զտանիցէ
արարեալ այնպէս. ամէն ասեմ ձեզ, 'ի վե-
րայ ամենայն ընչից իւրոց կացուցցէ զնա»։

ԹՈԿՈՒՄՆ Գ.

Ի ՎԵՐԱՑ ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՈՑՆ

Մասն Ա.

Զմտաւ ած զզործս անառակ որդւոյն, որ առեալ զմասն իւր երթայ 'ի հեռաւոր աշխարհ. են յայսմ զէպք երեք արժանիք մտախոհութեան. ա. Վայրն յորմէ մեկնի. բ. Ցոր ուղղեալն է. գ. Պատճառ չուոյն։ Առաջին՝ մեկնեալ հեռանայ յամենաբարի հօրէն, որ սիրէր զնա զթով. 'ի հայրենի տանէ, յորում առատութիւն էր ամենայնի. յընտանեացն և 'ի բարեկամաց, որք յարգէին զնա և սիրէին։ Եւ երթայ յաշխարհ հեռի անծանօթ ինքեան, 'ի հայրենացն յոյժ բացակայ։ Իսկ պատճառ չուոյն՝ ստահակութիւն, յիմարութիւն և խեռութիւն. քանզի ոչ յանձն առնոյր կալ յայն վայր, յայն պաշտօն և յայն գործ, զորս հայր նորա սահմանէր վասն նորա. այս է 'ի տան հօրն, առ եղբօր իւրոյ՝ որ ամենայնիւ էր հլու և զբաղեալ 'ի գործս տանն։ Բայց քանի՜ աղետից եղև նմա այս պատճառ։

Զայս առակ կշռեա ընդ կենաց քոց, և տեսցես լեալ պատմութիւն. քանզի մեզանչել ծանուցեալ ընդդէմ Աստուծոյ՝ է հե-

ռանալ 'ի նմանէ, արհամարհեալ զսէր նոր բա։ Ա.պա յամենայն նուազս 'ի մեղանչել քո ծանր, զերեսս 'ի բաց դարձուցեալ լքանէիր զԱ.ստուած. ահ. զԱ.ստուած, զհայր քո զորովական, զամենասիրելին, զամենախնամն, զառատաձեռնն, զլրումն երջանկութեան և փառաց. զաղբիւրն քաղցրութեան և անդորր խաղաղութեան. և երթայիր, եղո՛ւկ քեզ թշուառացելոյդ, 'ի զորձ մեղաց, քան զոր հեռադոյն յերկնից չիք այլ ինն վայր բնակութեան. դնայիր առ աղբիւրն խառվայոյզ ամբոխութեանց, 'ի ծաղ աղետալի թշուառութեանց։ Եւ զայս առնէիր, առ... ահ. ամօթն հատանէ զբանս իմ։ Եւ այսպէս մեկնեալ հեռանայիր յԱ.բարչէն քումմէ յայն ամենայն նուազս՝ յորս յեռանդանէ անկանէիր 'ի դաղջութիւն. յայն ամենայն նուազս՝ յորս պակասեալ յոսկեղինիկ անխարութենէ, կամէիր կալ յայլ տեղի, յայլ պաշտօն և յայլ զորձ, արհամարհեալ զոր սահմանէր քեզ Ա.ստուած ՏԷր քո։ Եւ քանի՛ անձկութեանց և ո՞րչափ աղետից այս եղև քեզ պատճառ։

Ա.հ. Հայր զթութեանց, և ես երկնչիմ՝ իրաւամբք, մի և ինձ ասասցես զոր առ Իսրայելացիսն բան. «Դուք թողէք զիս, և ես թողից զձեզ»։ Բայց յիշեա, զի թէպէտ ես ուրացայ կոչիլ քեզ որդի, բայց դու ոչ կասեցար 'ի լինելոյ ինձ հայր։ Ա.ՐԴ ողորմեա ինձ, և 'ի կապանս սիրոյ քո դարձո զիս զփախստականս, 'ի զերկս սիրոյ քո։

Մասն Բ

Կայ 'ի գնին գործոց անառակ որ-
գւոյն. արաժէ նա զխողս. ա. Աղքատ և
մերկ. «Ակաս չքաւորել». բ. Մեռանի 'ի
սովոյ. «Սովամահ կորնչիմ». գ. Լքեալ և 'ի
նոցունց, որոց վասն ծախեալ էր զամենայն
ինչս իւր. «Յարեցաւ 'ի մի ոմն 'ի քաղաքա-
ցւոց». դ. Եւ տէր նորա անզութ աչօք 'ի
նա ակնարկէր. «Ցղեաց զնա յաղարակ իւր
սրածել խոզս»։ Այս է գործ հոգւոյն որ մա-
հուչափ մեղուցեալ լքանէ զարարիչ իւր.
կամ 'ի ձեռն թեթև յանցուածոց յեռան-
զանէն 'ի զաղջութիւն անկեալ հեռանայ
յԱստուծոյ։

Քանզի և հոգին վասանէ զիւր ստա-
ցուածսն, զչնորհսն, զժամանակն, զկա-
րողութիւնս իւր, և զյաջողութիւն մտայն,
թէ և ոչ 'ի շռայլ զեղխութեան, այլ և ոչ
ըստ կրօնաւորական կարգաց։ Որով և ինքն
է՝ ա. Աղքատ և մերկ. մերկ, զի է մեր-
կացեալ յանձնէ զպատմուճանն շնորհաց.
աղքատ, զի է զրկեալ 'ի լուսոյ և յօգնա-
կանութենէն Աստուծոյ, և յաւելուածով
զի է վիրաւորեալ յաւազակացն դժոխոց։
բ. Եւ ինքն մեռանի 'ի սովոյ. զի տաղտ-
կացեալ է յերկնաւոր մանանայէ, այս է
'ի խոկմանց, 'ի հայեցն հրեշտակաց, որ է
հաղորդութիւնն սուրբ. խորշի յառաքինա-
կան գործոց, որք զօրացուցիչ են հոգւոյն.

և փոխանակ՝ ցանկայ ինքն լնուլ զորովայն իւր եղջերաց, այս ինքն խնդրէ զհաճոյս մարմնոյ և զկատարումն կամացն։ գ. Եւ ինքն անտեսեալ է, ծաղրեալ, և՝ի կալանս մատնեալ՝ի նոցունց իսկ, յորոց՝ի սէր զառնացուցեալ էր զՏէրն, յարգար պատուհաս ըստ համեմատի օրինաց, որ ելիք՝ի սէր արարածոց զԱրարիչն, նովին համեմատի զժրանաց լիցի և ինքն՝ի նոցունց։ դ. Եւ՝ի կրից իսկ յայնցանէ՝ որոց ծառայէ կուրութեամբ մտացն, յանողորմ զատի։ Մանաւանդ զի՝որպէս անառակ որդին ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն՝ զոր խոզքն ուտէին, և ոչ ոք տայր նմա, այսպէս և հոգին զրկի՝՝ի հաճոյիցն յայնցանէ որոց ակնկալութեամբ մերժեաց յանձնէ զզերազոյն բարին, զի կամ ժխտին նմա, կամ բառնին՝ի նմանէ, և կամ զառնանան նմին առ տաղտկութեան և կամ՝ի խղճէ մտացն հարեալ։ Ո՜ աչխարելի և ողորմ կենացն։

Իսկ եղբայր ցոփ վատնչին որպիսի՜ խաղաղաւէտ վարէր կեանս՝ի տան հօրն։ Եթէ և ինքն ապաշնորհն կացեալ էր անդէն և ծառայեալ հօր իւրոյ, յոյժ նուազ լեալ էին վիշտքն քան զայնոսիկ՝ որոց տարաւ ցանկութեամբ վարելոյ կեանս իմն բերկրական, և զհետ դնալոյ հաճոյից կամացն։ Այնպէս ևս հոգեսէրքն յոյժ նուազ կրեն անձկութիւնս՝՝ի ճանապարհի առաքինութեանց հնազանդեալք չնորհաց, քան

զթերատեսան զհետ գնալով բնութեան և վարելով զմեղկ կեանս։ Զի «Ասաքեսցէ՛ի վերայ նոցա զարամութիւն բարկութեան, արկցէ զնոքօք ցաւս, և մի ապրեսցին՝ի ձեռանէ երկաթոյ. խոցոտեսցէ զնա աղեղն պղնձի. անցցէ ընդ մարմինս նորա նետ»։

Մասն Գ.

Տես զանառակ որդին զարձեալ առ հայրն. յորզոր եղեն նմա առ այս երեք պատճառք. ա. Ցիշատակ անցելոց երանութեանց և առատութիւն տան հօր իւրոյ. «Քանի՛ վարձկանք են՝ի տան հօր իմոյ հացալիցք»։ բ. Աղէտքն՝ յոր պաշարեալ կայր». «Եւ ես ասա սովամահ կորնչիմ»։ գ. Ցիշատակ զթութեան ամենաբարի հօրն. «Գնացից առ հայր իմ»։

Խորախորհուրդ զննեալ զերեսին պատճառս զայսոսիկ, նոքին և քեզ լինիցին համոզկեր՝ ուղղութեամբ սրտի դառնալոյ առ Աստուած, ուղղեալ ընդ շաւիղն որ հանէ առ վերջին վախճան քո։ Պատճառքս այսոքիկ են, ա. Ցիշատակ մխիթարութեան ամացն այնոցիկ, յորս ծառայելով եռանդակն Աբարին քում՝ վայելէիր յերկնային ինն սփոփանս և յանդորրութեան։ բ. Բաղդատութիւն հիզութեան կենացդ որ արդ՝ի մեղկութեանդ, ընդ երանութեան նախնոյն եռանդան ժամանակին։ գ. Ցիշատակ բա-

բութեանն Աստուծոյ, որ բարեգթութեամբ կոչէ 'ի շաւիղն ուղղութեան զմեղուցեալն մոլորեալ։ Եւ 'ի տատամսել նորին՝ երկայնամտէ, հուսկ յետոյ 'ի դառնալ նորա՝ Գրկախառն սիրով փարի զնովաւ, և ազուցանէ նմա զառաջին պատմուճանն և զարդարէ զնա։

Ընթերցիր զբան աւետարանին, և զարմացիս ընդ զթութիւն զորովական հօրս։ «Եւ մինչդեռ հեռագոյն էր, ընթացաւ ընդ առաջ»։ Այս է առ ձեռն պատրաստութիւն ողորմութեան։ «Անկաւ զպարանոցաւ նորա, և համբուրեաց զնա». Այս խանդաղատանք զթոյն։ «Ասէ. վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին և ազուցէք նմա, և տուք զմատանին 'ի ձեռս նորա». Այս է լիութիւն շնորհացն։ «Եւ ածէք զեղն պարարակ, զենէք, կերիցուք և ուրախ լիցուք». Այս խնդութեանն անչափութիւն։ Ահա այսպէս առ ձեռն պատրաստ, խանդաղական լիութեամբ խնդալից և հնչեալ հանդիպումն թողութեանն յամենարարի հօրէ, լիցի աղաղոյ զրգիռ դառնալոյ զղջացեալ 'ի զթալից զիրկս ողորմութեան նորա։

ԻՂՁԲ

Պարտ է հարկանիլ 'ի նոյն խանդաղատական կիրս ցաւոց, որով հարաւ թշուառացեալս այս որդի առաջի արհամարհեալ

խրոյ հօր։ ա. Յառոց. 'ի բեկեալ սրտէ 'ի վերայ յանցուածոց. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո։ Եւ արժանացայ բիւրեցս մատնելոյ 'ի տանջանս դժոխոց. և դու ոչ միայն թողուս ինձ, այլ և յօժարակամ հրաւիրես զիս դառնալ 'ի զիրկս քո։ Դու, ամենարարի հայր, յառաջես առ 'ի փարիլ զամենաչար որդւովդ, տարածես զբազուկդ առ ընդգրկել զիս. խոնարհիս 'ի համբոյր ինձ, զարձեալ ազուցանես ինձ զպատմուճանն շնորհաց, զոր ամբարշտութեամբս կորուսի. զարդարես զիս մատանեաւդ սիրոյ, զոր անլուր զրժանօք 'ի բաց արկեալ էի. այս չէ շատ. այլ և պատրաստես սեղան հրեշտակային հացիւ, կազդուրես 'ի սուրբ հաղորդութեան զսիրտ իմ հիւծեալ։

Ո՜ անբաւ զթութիւն. ա՜հ. յիմարին միտք իմ. ոչ ես կարեմ անլսող լինել այնչափ բարութեանց քոց։ Ա՜հա դառնամ առ քեզ. ոչ մերժեսցես զդարձեալն և զդնացեալ, որ այնպիսի համբերութեամբ անտես արարեր զփախուստ նորա և զմեղսն, և այնպէս զթալից կոչեցեր առ քեզ։ Բա՜ի՜է. բա՜ի՜է. ես զքեզ զայրացուցի, զհայրդ իմ... և զորպիսի՜ հայր... և քանի՜ արհամարհանօք. ա՜ղէ, ո՜ տայր ինձ ապաշաւ իմն սրտի անչափ և անվախճան։

Ր. Զգուշութեան յապաղայս. Ուստ անդարձ ընդ անեծին խմոյ հատատուեցի։ Ելից և ես ընդ անառակին և զնացից առ հայր իմ. ելից խոցս թաւալեալ 'ի տիղմ. խոր-

տակեցից զշղթայս ախտից, զարձայց առ հայր իմ։ Վկայ կոչեմ զերկինս և զերկիր. զարձայց, ո՛վ Աստուած իմ, հաստատութեամբ ծառայելոյ քեզ յայսմ հետէ. ա՛մենայնիւ անխտիր համակամ յամենայնի կամաց քոց։

գ. Խոնարհուրեան. Ատելով զամբարտաւանութիւն՝ զարմանն ամենայն չարեաց. Զեմ արժանի կոչել որդի քո։ Աղաղակեցից ընդ սրբոյն Բեռնարդոսի. «Որո՛վ դիմաք ամբարձից զաչս իմ յերեսս ամենաբարի հօր որդիս ամենաչար»։ Մեղաւոր եմ ոչ միայն անարժան պատուոյ, զովութեան, մեծայարգ տեղւոյ և պաշտաման, այլ և արժանի անարգանաց և նախատակոծ լինելոյ։

դ. Ողորմութեան անձին. Արհամարհելով զհաճոյս մարմնոյ, որ է երկրորդ արմատ մեղաց։ Արա զիս իբրև զմի 'ի վարձկանաց քոց։ Խորշիմ և մերժիմ 'ի սիրոյ անձին, որ ետ ինձ լքանել թողուլ զամենասիրելին զհայր, և ած եհան զիս յաշխարհ հեռի՝ զի վատնեցից զամենայն ինչ իմ։ Ատեամ և զանձն իմ, զի և ես կամակցեալ 'ի մեղսն՝ եղէ արժանի յաւիտենական ատելութեան Արարչին իմոյ։ Եղի հաստատութեամբ 'ի միտս իմ, վրէժ խնդրեցից յանձնէս, ածից պատուհաս անձին իմոյ. և 'ի հատուցումն արդարութեան նորա մատղիւր յանձն ածից զամենայն վատակս, ցաւս, անձկութիւնս, թշուառութիւնս զորս մատուցէ ինձ։

և. Ցաւեօրոշրեան անձին. Ո՜ՏԷր, ես ինքն եմ որդին այն անառակ, որ ելիք եթող զքեզ. ես տեսանեմ զիս նկարեալ յառաջին քում, և է պատկեր ճշգրիտ հոգւոյ իմոյ հեռացելոյ 'ի քէն և զրկելոյ 'ի շնորհացդ՝ փախուստն այն, ախտաւորութիւնքն այնոքիկ, աղքատութիւնն, անտուաղութիւնն և վատնումն։ Բայց արդ դառնամ առ քեզ, հայր ընկալ զիս, և զարման տար չարեաց իմոց մեծամեծաց։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՄՈՒԴ

Ա. Անառակ որդին առեալ զբաժին իւր, երթայ յաշխարհ հեռի։ Ած 'ի յիշատակ. Ուստի մեկնի.—'ի գորովալից հօրէ։ Ո՞ւր երթայ.—յաշխարհ հեռի և անծանօթ։ Առ ի՞նչ.—միայն առ ստահակութեան և խակութեան։ Հան 'ի քեզ զառակդ, և տեսցես զայն լեալ պատմութիւն. թողեր զԱստուած զաղբիւրն ամենայն բարութեանց։ Դարձար 'ի մեղս յաղբիւրն ամենայն չարեաց։ Առ ի՞նչ այս ամենայն. ամաչեմ և 'ի խորհել անգամ։

Բ. Ած 'ի յիշատակ զանառակ որդին որ արարածէր զնոսա. Աղքատ և մերկ։ Մեռանի 'ի սովու։ Լքեալ և 'ի նոցանից, որոց վասն ծախեալ էր զամենայն ինչս իւր։ Եւ տէր իսկ նորա, որուն ծառայէին, անողորմ դատէր զնա։ Այս է գործ հոգւոյն հեռացելոյ մեղաք յԱստուծոյ, որ կորուսանէ զշնորհս։ Ցաղտուկ են նմա առաքինա-

կան գործք, և զրկեալ յօգնականութենէ նոցին հիւծի։ Նոքին իսկ, որոց հաճոյանալ կամելով մեղուցեալ է, լքանեն զնա։ Եւ նոքին իսկ կիրքն որոց ծառայէ, տագնապեն զնա։ Այլ որպիսի՞ երջանիկ վարէր կեանս որդին հնազանդ 'ի տան հօր իւրոյ։

Գ. Եթ 'ի յիշատակ զանառակ որդին՝ որ դառնայ առ հայրն։ Եթեալ ընդ միտ զյիշատակ առաջին երջանիկ կենացն։ Նկատեալ զթշուառութիւնն՝ յորում կայր։ Եւ զգորովական սիրտ հօրն։ Այսոքիկ և քեզ լինիցին 'ի գրգիռ։ Յիշատակ երջանիկ կենաց քոց, մինչդեռ վառեալ էիր յեռանդն։ Պատկեր այժմեան աղետից 'ի մեղուութեան քոյ։ Եւ յիշատակ բարութեանն Աստուծոյ։

Ընթերցիր

Թոմ. Գեմբ. Գիրք Դ. Գլ. 9. Յօդ. 2. 3. 6։

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

ԱՋԴ

Աստեղեալ զմեզս և ընդ որդւոյն անուառակի դարձեալք ի գիրկս հօր, խոստացաք ծառայել նմին յամենայն կամս իւր։ Այլ քանզի ոչ գիտեմք զՀանապարհն ընդ որ պարտիմք գնալ, և անծանօթք յեզանակին գնալոյ զՀետ կամայ նորա, պէտս ունիմք առաջնորդի զի ուղղիցիմք ընդ հետս նորա, և օրինակի՝ զի կրթեսցուք ի նմանութիւն նորա։

Սա ինքն է Յիսուս Քրիստոս Տէր մեր, յորոյ ի նմանութիւն յորդորիմք յառաջիկայ խոկմանս։ Եւ պատուէն՝ զոր պարտիմք ժողովել, է հաստատուն ինն ուխտ ծառայելոյ Աստուծոյ յայսմ հետէ, թեւակոխեալ ի նմանութիւն Յիսուսի այնու օրինակաւ, զոր մեզ ցուցցէ յայսոսիկ աւուրս կրթութեան։

ԽՈԿՈՒՄՆ Ա.

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Զկոչցուցմն

Զոր օրինակ եթէ թագաւոր ոք երկրաւոր ընտրեալ յԱստուծոյ, քաջայաղթ և մեծանձն, սիրեցեալ և մեծարեալ յոյժ 'ի քրիստոնէից, հրաւէր կարդայցէ ամենեցուն ելանել զհետ իւր՝ ասելով. Կամք են ինձ աշխարհակալել զերկիրս անհաւատից. որ ոք հաճեսցի գալ ընդ իս՝ հարկ է զի իմով պարենիւս շատասցի և զդեստու, ընդ իս վաստակեսցի և հսկեսցէ, բայց և ընդ իս ապա փառաց յաղթութեանն խմոյ լիցի կցորդ՝ որպէս վաստակոցն եղև։ Որպիսի՛ ոք իցէ զօրական անարի, կամ՝ ապետ վատ, որ ոչ խրախուսեսցէ երթալ զհետ այնպիսւոյ սիրեցելոյ քաջի արքայի և վեհափառ թագաւորի, և թիկնադարձոյց առ հրաւէրն հրաժարեսցէ 'ի բաց։

Հանդոյն ամենեին և Քրիստոս տէրն մեր թագաւոր երկնաւոր հրաւէր կարդայ առ ամենեսեան ասելով. «Կամք են ինձ աշ-

խարհակալել զսիեղերս, և հնազանդեցու-
ցանել զամենայն զթշնամիս իմ՝, և այնպէս
մտանել 'ի փառս յարիսենական Հօր իմոյ։
Որ գայ զհետ իմ՝ 'ի չարակրութիւնս, մոցէ
ընդ իս և 'ի փառս»։ — Արդարև որ միտս ու-
նի պարտի ընդունել զայսպիսի վսեմական
առաջարկութիւն. իսկ որ առաւել առա-
տամիտ զտանի և ջերմագոյն 'ի սէր Թագա-
ւորին մերոյ Յիսուսի, ոչ շատ զրելով ան-
ձին ընթանալ զհետ նորա ընդ այլոցն ա-
մենեցուն առ հասարակ *, մատուցանէ

* Աւետարանիկ բանք առաւել ևս ցուցանեն քան
զանխախիր համակամութիւն գնալոյ զհետ Յիսու-
սի. քանզի որ այսպէս կամի կոտրել 'ի սէր Քրիս-
տոսի, ոչ միայն պարտի պատերազմել ընդ մար-
մնոյ և ընդ արեան զգուշացեալ յանպատշաճիցն,
այլ պարտի հրաժարեալ տալ և 'ի պատշաճից իւ-
րումն վերնակն։ Եւ է այս արդարև բորբոքումն 'ի
սէր Քրիստոսի, և մեզ իսկ կարի 'ի գէպ յամե-
նայնի կամել վերատաց տանել 'ի սէր Յիսուսի. ու-
նել զոյն նպատակ 'ի միտն հաստատուն, և յա-
մենայնի որչափ 'ի ձեռս մեր է ընտրել առնուլ
յերկուց գործոց զվերատաբերան։ Եւ մեր ծանու-
ցեալ միանգամ՝ զսէրն Քրիստոսի Թագաւորին
մերոյ առ մեզ, թէր հանգուրժեսցէ առաւելու-
թիւն սիրոյ մերոյ առ նա կալ անխախիր և 'ի հա-
ճոյականս մեր, 'ի կարողանալն և յայնմ՝ կրել
վիշտս ինչ առ սէր նորա. և չհամարեսցի այդ
նուազութիւն սիրոյ մերոյ առ Քրիստոս։ Հաստա
եղբարք, զինուորեալքս 'ի սէր նորա, ջանասցուք
առ սէր նորա ամենայնիւ գնալ զհետ սիրոյ նորա.

զանձն նմին առաւելուն, խոստացեալ զործել և ընդդէմ հաճոյից մարմնոյ իւրոյ և աշխարհի, ցանկալով՝ վառեալ 'ի հուր սիրոյ նորա, նմանիլ նմին ինքեան, (եթէ այսպէս հաճոյ իցէ նմա և առաւել 'ի փառս), տանել ամենայն նախատանաց և անարգանաց և աղքատութեանց։

Զայսոսիկ այսպէս նախածանօթ արարեալ մատիցուք յերիս մասունս խոկմանցն։

Մասն Ա.

Պարտ և արժան է մեզ զնալ զհետ Քրիստոսի Տեառն մերոյ՝ ա. Վասն իշխա-

և Հնորհն Աստուծոյ զօրացուսցէ զմեզ 'ի սոյն։ Ձերկարեմ 'ի բանս. զի որ սկսանի սիրել, առնու զՀաճակ սիրոյն. ինքենին վառի թեւակոխել 'ի սոյն. և թէ կամիցիս կապեալ կացուցանել զնա յանխափար համակամութեան, նա 'ի կշիռ սիրոյն թերի զոյն գտեալ, խզեսցէ զկապան, յամօթ անձին գրեալ զմէտ կշռոյ սիրոյն Յիսուսի ունել այդպէս սակաստեալ յիւր կողմն՝ 'ի կշիռ սիրոյ նորա. գիտելով հաւատի զի եթէ և 'ի կտտանս տանջանաց զօրեսցէ կալ ընդ բիւր դարս առ սէր Յիսուսի, ոչ կարասցէ հաւասարել նորա սիրոյն առ ինքն։ Զայս 'ի համառօտն նշանակեցի, զի իւրաքանչիւր ոք գիտասցէ կշռել զսէր իւր առ սէրն Քրիստոսի ամենայն զօրութեամբ ըստ տանելոյ տկարութեան իւրոյ. զի մի 'ի զլենուորութեան յոր գրեցաք, հեռի 'ի բանակէն Քրիստոսի շրջեսցուք պատրեալք։

նութեանն զոր ունի 'ի վերայ մեր. նախ՝ ըստ իրաւանց պատերազմի. զի ժողովուրդ եմք մեք նորա սեպհականք, նուաճեալք 'ի նմանէ, յորժամ կործանեաց մահուամբ իւրով զթագաւորութիւնն զժողոց։ Երկրորդ՝ իբրև զնեալք. զի զին եմք արեան որդւոյն Աստուծոյ։ Երրորդ՝ իբրև տուեալք նմին 'ի պարգև և թողեալք 'ի ժառանգութիւն. «Զի զամենայն ինչ ետ հայր 'ի ձեռս նորա, և զնա կացոյց ժառանգ ամենայնի»։ Չորրորդ՝ իբրև ընտրեալք առ 'ի նմանէ. զի նա ընտրեաց զմեզ 'ի ծառայս իւր և 'ի հպատակս, և մեք ընտրեալ կալաք զնա մեզ 'ի թագաւոր և յիշխան, հրաժարեալք յաւազանին մկրտութեան 'ի սատանայէ, 'ի մարմնոյ և յաշխարհէ. և 'ի կրօնաւորական կեանս կապեալ զմեզ ուխտիւք ընդ նմա. այնպէս զի առ մէն մի 'ի մէնջ մարթ է ասել զայն՝ զոր ասէր Մովսէս առ Իսրայէլ. «Դու ընտրեցեր զՏէր, լինել քեզ Աստուած. զի զնացես 'ի ճանապարհս նորա. և Տէր ընտրեաց զքեզ, զի լինիցես նմա ժողովուրդ սեպհական, ժողովուրդ սուրբ»։ Եւ մեր ածեալ զմտաւ զայս ամենայն, և զարձեալ երկմտիցիմք եթէ արդեօք զհետ զնայցեմք հետոց Տեառն, ընդ որում՝ ցայս վայր կապեցաք։...

Բ. Պարտ և արժան է զարձեալ զինուորիլ մեզ ընդ այսու զօրաղլխաւ վասն պայմանայն առաջարկելոց մեզ. զի յամենայն վաստակս պատերազմին հասարակորդ լի-

ցուք ընդ նմա, 'ի կերակուրս, 'ի զգեստս և 'ի հակմունս. 'ի պատերազմունս և 'ի վէրս։ Մանաւանդ զի ինքն նախ 'ի զիմի հարկանիցի 'ի փանդոն, ինքն նախ հարթեսցէ զընդզիմակ խոչն, առաջին յարձակմանցն ինքն զդէմ ունիցի։ Անելիրայ է յաղթութիւնն, մեծափառ է յաղթանակն, անանց է փառքն։ Եւ իցէ՞ ինչ այլ զիպոզաղոյն. և ո՞ր այլ փաստ հզօրագոյն, համոզկեր եւանելոյ զհետ։...

գ. Պարտ և արժան է եւանել զհետ թագաւորիս վասն վախճանին առ որ բերի, որք են կրկին. ա. Փառքն Աստուծոյ զոր պարտ է հռչակել վաստակելով 'ի կորուստ ախտից, և արկանելով 'ի գործ զառաքինութիւնս, զի փառաւորեսցի Հայր յՈրդի։ Եւ զի այս փառք է միայնակ վախճան ամենայն գործոց սրբոյ Երրորդութեան, վասն որոյ զերազանցութեամբն յաղթէ ամենայնի որ չիցէ Աստուած։ բ. Երանութիւն մարդոյ. զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն։ Երանութիւնս այս է անդին և անհասանելի մտաց, զի է յինքեան նոյն ընդ երանութեանն Աստուծոյ, այսինքն յաւիտենական և անչափ։ Այն յանգիման տեսանի 'ի ամին, չլինել հնարաւոր առաջի առնել այլ ինն վախճան օգտակարագոյն և զերազանց քան զայս։ Ո՞ արդ երկմտեսցի ընդ պատճառս յառաջքերեալս, և ոչ խոստովանեսցի լինել պարտ և արժան զնալ զհետ Յիսուսի Քրիստոսի

Տեառն մերոյ։ Այժ, անժխտելի պարտք են, որ Տէր, և ես ելից զհետ քո յանձին կա-լեալ զամենայն։ «Կենդանի է Տէր և կեն-դանի է տէր իմ արքայ, զի 'ի տեղւոջ ուր տէր իմ արքայ լցէ, և 'ի մահու և 'ի կեանս անդ եղիցի և ծառայ քո»։

Մասն Բ

Ծառայել Յիսուսի Քրիստոսի 'ի փառս է մեզ. ա. Վասն վեհափառութեան առա-ջնորդին, քանզի ինքն է տէր իշխանու-թեանց և պետութեանց. թագաւոր փա-ռաց, պատկեր Աստուծոյ և նկարագիր էութեան նորա, յորում ծածկեալ կան ա-մենայն գանձք իմաստութեան և գիտու-թեան, յորում բնակէ լրումն աստուածու-թեանն մարմնապէս, որում տուաւ ամե-նայն իշխանութիւն յերկինս, և յանուն նո-րա կրկնեսցի ծունր յերկնաւորաց և յեր-կրաւորաց և 'ի սանդարամետականաց. և դու չառնուցուս յանձն զնալ զհետ առա-ջնորդիս այսորիկ, և աղաղակեսցես ընդ ապաստամբսն. ոչ կամիմք թագաւորել զմա 'ի վերայ մեր։ Քաւ լինիցի, Տէր իմ Յի-սուս, զրժանք այսպիսի. դու Տէր իմ և Աստուած իմ ես. լինել քեզ ընթացակից 'ի մեծ փառս է ինձ։

բ. Վասն գերադանցութեան ծառայու-թեանն. քանզի որք ծառայեն Աստուծոյ, թագաւորեն. զի ծառայել նմա է թագաւ-

բել։ Մանաւանդ թէ լինին Աստուածք՝ ըստ
սաղմոսին. «Ես ասացի թէ Աստուածք ի-
ցէք»։ Լինին բարեկամք, որդիք և ժա-
ռանգք. «Դուք բարեկամք իմ էք և որդիք
բարձրելոյն ամենեքին». զուք ժառանգք
քայութեան, զոր խոստացաւ Աստուած
սիրելեաց իւրոց։ Եւ զինչ այլ առաւել մե-
ծափառ ասել իցէ հնար։

Արդարև իսկ ամենայն վեհափառու-
թիւնք թագաւորաց աշխարհի, առաջի այ-
սորիկ դերասանիճան ծառայութեան, են
նուաստութիւն, մթագնութիւն և անարգու-
թիւն։ «Զիք այլ քաղցր քան զհայել 'ի
պատուիրանս Աստուծոյ»։ Աստուծոյ են
բանքս. և Աստուած ոչ ասէ։ Հանպա «Ոչ
խառնեսցուք զանուն վատութեան մերոյ
ընդ արութիւնս քաջութեան»։ Խուսափե-
լով 'ի խաչէ, որ է գրօշ Քրիստոսի։

Մասն Գ.

Զհետ զնալ Քրիստոսի՝ հեշտին է և
քաղցր. ա. Վասն ուղւոյն ընթացից, յորում
ինքն յառաջոյ երթայ։ բ. Վասն օգնութեանն
մատուցելոց մեզ։ գ. Եւ վասն ընկերացն՝ զորս
մեզ ուղեկից։ Զի որք մատղիւք զհետ զնան
հեստոց նորա ընդ շաւիղն առաքինութեան,
սքանչելի ինն փոխանակութեամբ զժուա-
բինքն լինին 'ի դիւրինս և առապարքն 'ի
հարթ ճանապարհս։ Օգնեալք 'ի շնորհացն
Աստուծոյ, ոչ եթէ ընթանան, այլ թռա-

նին ընդ անհարթ և ընդ անկոխ շաւիղս, և արիացեալք ևս յօրինակէ ուղեկցայն, յորում տեսանեն զբաղումս դիմեալս 'ի մի սիրտ և միով ոգւով արութեան վառեալք։

Ուսեալք 'ի փորձոյ՝ աներկբայ ճանապարհն լինել առաւել զժուարակոխ ճանապարհ զաշխարհին քան զՔրիստոսին, և զի ընդ ճանապարհն մեղկութեան առաւել անձկութիւնք են՝ քան թէ յեռանդեանն։ Նպաստն շնորհաց հարթէ զամենայն զբժուարինս, քաղցրացուցանէ զամենայն դառինս. այս միայն խորհուրդ՝ եթէ այս ոք և այն յաջողեցան 'ի նոյն, հեշտին զորձէ, բարձեալ զամենայն խոչն։ Ո՛վ, որպէս քաղցունք են ճանապարհք Յիսուսի. «Ճանապարհք նորա ճանապարհք բարեաց, և ամենայն շաւիղք նորա խաղաղութեամբ», քաղցրութեամբ առաքինութեանն։ Լուծ նորա քաղցր, զի օծեալ է շնորհօք. և բեռն նորա փոքրոգի՝ ընկերութեամբ ուղեկցայն։ Եւ զու պղերգացեալ չկամիցիս զնալ ընդ այն ուղի, առնուլ զլուծն զայն և տանիլ զբեռն. հրաժարեալ յընկերութենէ անտի, յորում բաղմութիւն քաջաց հեղմամբ խակ արեան իւրեանց վկայեցին դիւրին և քաղցր զղնալն զհետ Քրիստոսի։ Հաստա, լեր 'ի միտս, վասն խորհուրդ զու և անարժան անուանելոյ Քրիստոնեայ։ Համարեաց լինել քեզ առաջի մեծաղօր թագաւորի, որ արդարակոչումն է և անյաղթ, զօրաւոր 'ի մարտի, բա-

բերարոյ. որ հրաւէր կարդայ քեզ սիրա-
յորդոր, գնալ ընդ իւր յաշխարհակալու-
թիւն՝ զոր կամի առնել, եղեալ քեզ առաջի
պայմանս թեթեւս և քեզ 'ի պատիւ. եր-
դուեալ քեզ զի ինքն յամենայնի նախա-
մարտիկ յարձակեսցի 'ի պատերազմել, և
զի բաժանորդ լինիցիս որպէս վաստակոցն
նոյնպէս և փառացն. ժոիցէս զու չկամիլ
ընկերել նմա, և չհամարիցիս անմիտ ա-
պախտաւոր։

Այլ եթէ հրաւիրանաց 'ի պատերազմ
յաջակցութիւն երկրաւոր թագաւորի ար-
ժան իցէ լինել յանձնառու և մտադիր, ո՞ր-
չափ առաւել Քրիստոսի Ցեառն մերոյ,
վասն իշխանութեանն՝ զոր ունի 'ի վերայ
մեր, վասն պայմանացն՝ զորս առաջի առ-
նէ մեզ, և վասն վախճանին՝ յոր բերի։
Ո՞րչափ առաւել չիցէ՞ մեզ 'ի պատիւ ընկե-
րել առաջնորդիս այսմիկ վասն վեհափա-
ռութեան անձին իւրոյ, վասն զերազան-
ցութեան ծառայութեանն, վասն լինելոյ
զիւրին գնալ զհետ նորա, և վասն զիւրա-
գնաց ճանապարհին։ Եւ յիրաւի չգտանիցի
ոք այր մտացի որ ոչ ցանկասցի բովանդակ
նուիրել զանձն Քրիստոսի, և ոչ զոչեսցէ
ըզձիւք 'ի սրտէ.

ԻԳ Զ Բ

Ահա, ո՜վ հզօր թագաւոր և Տէր ամե-
նայն երկրաց, ես թէպէտ յամենայնի ան-

արժան, նուիրեմ քեզ զանձն իմ բովանդակ, ապաւինեալ 'ի շնորհս քո և յոգնականութիւն ձեռին քո, և յանձն առնեմ ամենասուրբ կամաց քոց զամենայն ինչ զիմ. վկայ կոչեմ զանհուն բարութիւն քո, և զոգոստափառ զսուրբ կոյս Մարիամ զԱստուածածինն զմայր քո, և զամենայն բնակիչս երկնից՝ խորհրդոց մտաց իմոց և ցանկութեան սրտիս և անդարձ հաստատութեան մտացս, զի 'ի փառս քո և յոգուտ հոգւոյ իմոյ, ընտրեցի զալ զհետ քո, կալով մօտ առ քեզ ըստ կարի, տանել նախատանաց և ամենայն հակառակաց ճշմարիտ հոգւով ազքատութեան յամենայնի, եթէ այս իցեն կամք քո՝ ուղղել ինձ առ քեզ ընդ այս ճանապարհ կրօնաւորական կենաց։

Եւ արդարև զինչ այլ առաւել պարտուպատշաճ գործ քան զծառայելն քեզ, որոյ եմն բովանդակ, յորմէ ընկալեալ եմ զամենայն. և զարձեալ 'ի քէն երկնչիմ և յուսամ ընդունել զամենայն, և առանց քո ոչ ինչ կարեմ։ Եւ ո՞ր ինչ այլ առաւել մեծապատիւ կայցէ և առաւել բերկրական քան զծառայելն քեզ, որ հրամայել իսկ է և ոչ թէ ծառայել. և լուծ քո քաղցր է քան զամենայն քաղցրութիւն։ Այլ քանի՞ցս ապացեալ է իմ թէ ոչ ծառայեցից. Քանի՞ցս ապստամբ երևեալ եմ և ապառում, և ըզքաղցր զայս լուծ խորտակեալ և ընդոտնեալ։

Ա՛Հ. խոստովան լինիմ զմեղս իմ. մոլորեցայ իբրև զոչխար կորուսեալ։ Արդ ինքնակամ արկանեմ զձեռս իմ 'ի շղթայս, և զպարանոց իմ ընդ լծով։ Եկից զկնի քո ուր և երթիցես։ Հրաժարեցայց 'ի գործոց խաւարին, և եկից զկնի քո, ո՛վ լոյսդ կեանց. միայն դու ուսո՛ ինձ առնել զկամս քո, զյեղանակն որով կամիս դի նմանեցայց քեզ. և ահա ես պատրաստ կամ՝ զալ զկնի քո, պատրաստ և անխափեր առ ամենայն ինչ։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ա. Պարտ և արժան է մեզ գնալ զհետ Փրկչոսոսի Տեառն մերոյ. Ա՛. Վասն իշխանութեանն՝ զոր ունի նա 'ի վերայ մեր. եթէ ըստ իրաւանց պատերազմի, եթէ իբրև գնեալք 'ի նմանէ, և եթէ իբրև պարգեւեալք և 'ի ժառանգութիւն եւ լեալք նմա, եթէ իբրև ընտրեալք մեք 'ի նմանէ և նա 'ի մէնջ, զոր ընտրեալ ընկալաք 'ի միրտութեան մեզ 'ի Տէր։

Բ՛. Վասն պայմանացն զոր մեզ առաջն առնէ. քանզի ամենայն վճռաց և օգտութեանց պատերազմին 'ի մասն հաւասար բաժանորդ լիցուք նմին, այսինքն 'ի պարէնս, 'ի զգեստս, և 'ի վաստակս. ոչ միայն 'ի պատերազմունս և 'ի հարուածս վերացն, այլ և 'ի յաղթութիւնս, 'ի յաղթանակն և 'ի փառսն։

Գ՛. Վասն վախճանին առ որ բերի, որք են կրկին. առաջին է փառքն Աստուծոյ որ է 'ի Քանս

գագարեցուցանելոյ զմխաս և պայծառանալոյ յառաքինութիւնս. և երկրորդն է երանութիւն մարդոյ. զի ելն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն։

Բ. Գնալ զհետ Քրիստոսի է մեզ 'ի փառս։ Ա. Վասն վերափառութեան առաջնորդին, որ է Տէր տերանց և որում կրկնեն ծունր երկինք երկիր և սանդարամեռք։ Բ. Վասն գերազանցութեան ծառայութեանն. զի ծառայել նմա է թագաւորել, և ծառայք նորա լինին որդիք և բարեկամք և ժառանգք. Մեծ փառք են ծառայել Աստուծոյ։

Գ. Գնալ զհետ Քրիստոսի հեշտին է և բերկրական. Առաջին վասն Ճանապարհին, յորում ինքն յառաջոյ երթայ հարթելով շնորհօք իւրովք զամենայն առապարս, և քաջայրացուցեալ զամենայն գառնութիւն։ Երկրորդ, վասն օգնութեանն՝ զոր մատուցանէ մեզ։ Երրորդ, վասն ընկերացն՝ զորս շնորհէ մեզ։

Եթէ թագաւոր ոք երկրաւոր հրաւիրեալ էր զմեզ առ 'ի պատերազմիցն լինել այսպիսի վեհ պայմանօք, ո՞ այն վատատոհվին՝ որ ոչ առնոյր յանձն երթալ ընդ նմա։ Եւ Աստուծոյ որ անչափութեամբ առաւելեալ է յառատաձեռն պայմանն, ո՞չ կամիցիմք երթալ զկնի։

Ընկերցիր

Թովմ. Գեմբ. Գիրք Ա. Գլ. Ա.

ԱՐԱՊՈՒՄՆ

Յաղագս նմանող լինելոյ Քրիստոսի.

Ա.

Հրաժարեալք յառաջադոյն 'ի մեղաց, ուխտ եդաք առաջի Աստուծոյ՝ զնալ զհետ Քրիստոսի Տեառն մերոյ անխտիր համակամութեամբ առնել զամենայն որպէս ինքն հրամայեսցէ։ Այս ոչ այլ ինչ է, բայց եթէ լինել նմանող Քրիստոսի. քանզի առ այս կոչեցեալ եմք, որպէս ասէ առաքեալն Պետրոս, «Զի զհետ գնասցուք հետոց նորա»։ Արդար իրաւամբք. զի ինքն է օրինակ զոր հայր ետ մարդկան, զի օրինակաւ նորա նորոգեսցուք, և զապականեալ վարս մեր սրբեսցուք, և զգնացս մեր ուղղեսցուք 'ի ճանապարհն խաղաղութեան։ Վասն որոյ 'ի նմանութեան Քրիստոսի է այն բոլորանուէր յանձնառութիւնն, որով կամի Աստուած Տէր մեր զի ծառայեսցուք նմա։

Քանզի կամի Աստուած ծառայել մեզ նմա այնպէս, որպէս անկ իցէ և կարևոր առն իւրաքանչիւր առ փրկութիւն իւր. և այս իսկ է վասն քրիստոնէիցս նմանութիւնն Քրիստոսի։ Եւ որպէս միակ և առանձին վախճան մարդոյ է ծառայել Արարչին իւրոյ, այսպէս ևս միակ և առանձին վախճան քրիստոնէի է նմանող լինել Քրիստո-

սի. վասն որոյ ասէր սուրբ Գրիգոր Նա-
զիանզացի, թէ «Քրիստոնեայն է այլ ոմն
Քրիստոս». այսինքն այր՝ որ 'ի կեանս և 'ի
զնացս իւր առաջի առնէ զնոյն ինքն Քրիս-
տոս. և զայս՝ անհնար է առնել առանց նմա-
նելոյ նմին։ Ապա և առն քրիստոնէի միակ
և առանձին պարտք են լինել նմանող Քրիս-
տոսի Ցեառն մերոյ։

Եւ կարևոր իսկ է յոյժ առ ժամանել
'ի վերջին վախճանն. զի որպէս ոչ կարէ
ժառանգել զարքայութիւնն Աստուծոյ որ
ոչ ուղղութեամբ սրտի ծառայեսցէ նմա,
այսպէս ևս ոչ կարասցէ ժառանգել զնոյն
որ ոչ նմանի Քրիստոսի Յիսուսի։ Նա ինքն
ուսոյց մեզ զսոյն յասելն. «Ոչ որ զայ առ
Հայր՝ եթէ ոչ ինձ». այսինքն, որպէս պար-
զաբանէ Կուռնելիոս, եթէ ոչ նմանելով
ինձ։ Եւ զի ինքն միայն է ճանապարհ՝ որ
ածէ 'ի կեանս. որ ցանկայ հասանել այնմ,
պարտի գնալ որպէս և նայն գնաց։ Դար-
ձեալ՝ «Զոր յառաջն ճանաչէր, յառաջա-
զոյն հրաւիրեաց կերպարանակից լինել
պատկերի որդւոյն իւրոյ»։ Ապա ոչ որ
դասեսցի ընդ ընտրեալսն, եթէ ոչ կերպա-
բանակից լիցի Յիսուսի Քրիստոսի. և ոչ
որ կարասցէ կերպարանակից նմին լինել,
առանց զհետ գնալոյ հետոց նորա։ Ահա
օրինակն՝ որով կամի Աստուած զի ծառայ-
եսցուք նմա։

Այս երկրորդ մասն կրթութեանս է
տարացոյց Լուսաւորիչ ճանապարհին. զի

վախճան այսր մասին է առնուլ յօրինակ ինքեան զՔրիստոս Տէրն մեր իբրև ճշմարիտ ճանապարհ. զի ինքն Քրիստոս է արեգակն արդարութեան, որ լուսաւորէ զամենայն մարդ որ գալոց է յաշխարհ։ Եւ ինքն իսկ ասէ զանձնէ. «Ես եմ ճանապարհ. ես եմ լոյս աշխարհի. որ գայ զկնի իմ ընդ խաւար մի գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց»։ Նախընթաց խոկումն առաջնորդեաց մեզ յայս ճանապարհ և յայս լոյս. իսկ առաջիկայս ուսուցանէ մեզ գնալ զհետ Քրիստոսի առանց իջանելոյ 'ի գործնականս. թողեալ զնոյն այլոց խոկմանց՝ որ զհետն գան։

Բ

Նախընթաց խոկումն կոչի խոկումն թագաւորութեանն Քրիստոսի. վասն զի առաջի առնէ զՔրիստոս Տէրն մեր իբրև նորոգիչ արքայութեան Հօր իւրոյ երկնաւորի, զոր կործանեալ էր Ադամ և սերեալքն 'ի նմանէ։ Դարձեալ որպէս մարդոյ է հիմն և հաստատութիւն բովանդակ կրթութեանս, նոյնպէս և սա է իբրև հիմն ամենայն հետագայ խոկմանց. զի այնոքիկ ամենայն այսմ զհետ գան, մանաւանդ յընտրել անդ զյեղանակ նմանելոյ Քրիստոսի Տեառն մերոյ։ Վասն որոյ հարկ է միտ դնել այնմ ուշի ուշով, զի և որ զհետգան խոկմունք՝ բազմարդիւնք լինիցին։

Ցաւել և զայն զի խոկումնս այս է աղ-

գոյ 'ի սիրտ ընդմտատար, զի է համառօ-
տութիւն իմն կենաց և գործոց Քրիստոսի
Տեառն մերոյ 'ի վաստակսն յանձնեալս
նմա 'ի Հօրէն. այս ինքն 'ի յաւելուած փա-
ռացն Աստուծոյ և 'ի փրկութիւն մարդկան։

Եւ զիւրաւ ևս հարկանի մտաց նմա-
նութեամբ երկրաւոր թագաւորի, որ հրա-
փիրէ զհպատակսն 'ի մարտ։ Վասն զի եթէ
վատաբաղդ կոչի այր՝ որ անկսող զտանի
թագաւորին իւրոյ ընդ այսպիսի մարդասի-
րական դաշն, որպէս ոչ անուանեսցի վատ
և յիմար նա որ չառնուցու յանձն ելանել
զհետ Քրիստոսի, որ պայմանս առաջի առ-
նէ նմա անչափ առաւելեալս առատու-
թեամբ փոխարինացն։

Այլ ամենայն մարդ՝ որ առողջ միտս
ունիցի, 'ի նմանութենէ աստի վառեալ 'ի
սիրտ՝ զգենու քաջալերս, զօրացեալ 'ի
գործ այսպիսի աստուածահաճոյ, որպէս
զօրավարն Ուրիա 'ի բաղդատել զանձն ընդ
զօրաղլխոյն իւրոյ Յովաբայ, յասելն առա-
ջի Դաւթի մեծանձնութեամբ. «Տէր իմ
Յովաբ և ծառայք Տեառն իմոյ բնակեալ են
'ի բացի, և ես մտանիցեմ 'ի տուն իմ ու-
տել և ըմպել և ննջել ընդ կնոջ իմում. կեն-
դանի է անձն քո թէ արարից զբանդ զայդ»։
Այս և մեր լինիցի խորհուրդ. Տէր իմ Յի-
սուս՝ զօրավարն մեր, է աղքատ, անար-
դեալ, ցաւալից. և ես կամիցեմ լինել մե-
ծատուն, պատուեալ, և 'ի սփոփանս. կեն-
դանի է անձն քո թէ արարից զբանդ զայդ։

Պտուղ խոկմանս այսորիկ է զարթուցանել 'ի մեզ վառեալ ինն փափաք նմանելոյ զօրավարին մերոյ Աստուծոյ մարդացելոյ, և զործակից լինելոյ նմա առ այն մեծ վախճան 'ի փառաւորել զյաւիտենական Հայր իւր, և 'ի փրկել զկորուսեալ հոգիս մարդկան։ Եւ զի չկք զտանել այլ ինն վախճան հրաշափառազոյն կարևոր և աստուածահաճոյ իբրև զսա, ապա և պտուղ մտածութեանս է զերազանց յոյժ, և արժանի հարկանելոյ յեռանդն մեծ 'ի խոկումն սորին։ Ցայս խոկումն հիմնեալ է սկիզբն կրօնաւորական կենաց, յորում՝ իբրև յարմն ամենայն կատարելութիւնք մեր ամփոփեալ են։

Գ.

Այլ Փրկիչ մեր հրաւէր կարդայ ամենեցուն զալ յաջակցութիւն յայս զործ վեհափառ. այսինքն առ ընդարձակել զհոգևորական թագաւորութիւն իւր, մեծացուցանելով զփառսն Աստուծոյ 'ի նմանութեան Քրիստոսի Տեառն մերոյ, հոգալով զփրկութիւն անձին և զայլոց։ Ասացի եթէ կոչէ զմեզ զամենեսին. զի « Եւ Աստուած զամենեսին զմեզ 'ի փրկութիւն կենդանութեան 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ». զի մեք իրաքանչիւր զհետ ընթացուք նմա, յոր կոչումն կոչեցաք կալով 'ի նմին. այս է ասել. որպէս 'ի դէպ պատ-

չաճիցի կոչման իւրաքանչիւրոց։ Ամենեքին ունին կոչումն իմն առանձին կարգեալ յԱստուծոյ, որպէս ասէ առաքեալն. «Ոմն այսպէս և ոմն այնպէս»։ Սա 'ի կուսութիւն, նա յամուսնութիւն, մին յեկեղեցական կարգ և միւսն 'ի կրօնաւորական. և ամենեքին պարտիմք նմանող լինել Քրիստոսի ըստ տանելոյ կոչման մերոյ։

Բայց երեի զանազանութիւն աստիճանաց 'ի նմանութեան Քրիստոսի։ Աստիճանքս այսոքիկ են զանազանք 'ի կատարելութեան. որք և առնուցուն զպսակն, մեծ կամ փոքր ըստ աստիճանի կատարելութեանն յորում պատերազմեալ իցէ ուրուք 'ի մարտի աստ ընդ թշնամեաց փրկութեան մերոյ։ Եւ պարտ է մտաղիր լինել 'ի խոկումն այսոցիկ աստիճանաց։ Առաջինն է մարտ ընդդէմ ապստամբութեան մարմնոյ, զգայարանաց, անձնասիրութեան և աշխարհի։ Երկրորդն է յանձնառութիւն վասնակոց։ Երրորդն՝ աղքատութիւն հոգւոյ։ Չորրորդն՝ աղքատութիւն ստացուածոց։ Հինգերորդն՝ զօրութիւն 'ի տանել անիրաւութեանց և ընդդիմակաց։ Երկու յեսինքս են կրկին վերնագոյն և զերամբարձ աստիճանք, առ որս բերին նոքա՝ որք կամիցին անձնամատոյց լինել 'ի ծառայութիւն Աստուծոյ։

Բայց որպէս առ ամենայն վիճակ կենաց, տեղւոյ, պաշտաման՝ պարտ է լինել անխտիր համակամ կամացն Աստուծոյ,

սապէս և յայսոսիկ աստիճանս։ Քանզի որպէս սկզբնական վախճան առաջնոյ մասին է ծառայել Աստուծոյ՝ զհետ դնալով կամաց նորա, այսպէս ևս վախճան այսորիկ է ծառայել Աստուծոյ նմանելով Քրիստոսի յայնմ՝ կոչման՝ զոր ընտրեալն է որ և կամ ընտրեսցէ, յայն աստիճան կատարելութեան՝ յոր հաճեսցի կոչել զնա Տէր յաւուրս յայսոսիկ կրթութեան. զի յայսմ ոչ է այլ ճանապարհ ապահով քան զիւր աստուածային կամն։ Ցոյր սակս զայս անխտիր համակամութիւն հաստատել պարտ է 'ի չորս իրս, որպէս 'ի չորս հիմունս, որք են ուխտ կամ խոստումն նմանելոյ Քրիստոսի յԱղքատութեան կամ 'ի լիութեան, 'ի Պատիւ կամ 'ի նախատինս, յԱռողջութեան կամ 'ի հիւանդութեան, յԵրկար կամ 'ի սուղ կեանս, հրաժարելով 'ի վարելոյ զամենայն արարածս յորժամ չիցեն 'ի պատիւ Թագաւորին մերոյ, և խոստանալով հաստատութեամբ ուտել և ագանիլ զայն, զորս ինքն զգենոյր և ուտէր. և վաստակել և հսկել և պարապել 'ի գործս, յորս տեսանեմք զնա առաջնորդ և օրինակ։

Դ

Այլ այս արիական անխտրութիւն ոչ պարտի լինել մեզ պատճառ իմն անկանելոյ 'ի թմբիր և 'ի յիմարական իմն անգործութիւն, շինուցիչ աշխուժից եռանդան

հոգւոյ՝ որոյ ակն եղեալ իցէ առ գերագոյն կատարելութիւն։ Այլ պարտի լինել այն-պէս, զի՝ ի կալն պատրաստ խաղաղական հոգւով՝ի լնուլ զկամս Աստուծոյ յամենայն ժամու, յամենայն գործս և յամենայն տեղիս և յամենայն աստիճանի, ձգեսցի միշտ ազատակամ բերմամբ գնալ զհետ Քրիստոսի մերձ ընդ մերձ ըստ կարի, և ցանկասցի և ուխտ հաստատուն ընդ անձին կնքեսցէ չկասելոյ երբէք մինչև ոչ հասցէ՝ի գերագոյն կատարելութիւն, մինչև ոչ տեսցէ զանձն՝ի ձեռս բերեալ զվախճանն գերագոյն մեծացուցանելոյ զփառս Աստուծոյ՝՝ի հոգալ զփրկութիւն անձին և այլոց։ Վասն որոյ որ կամիցի պարապել՝ի կրթութիւն, պարտի յառաջագոյն հաստատել՝ի մտի զյօժարակամ յանձնառութիւն զիմելոյ՝ի կատարելագոյն աստիճան ըստ իւրումն կարի ամենայն զօրութեամբ որչափ իցէ՝ի ձեռին իւրում, և որչափ ինչ յաւելուցու Տէր՝ի նմա զշնորհս իւր և զկար։

Աստանօր սկսանի հոգին պատրաստիլ յընտրութիւն կոչմանն։ Ասացի պատրաստիլ. քանզի մինչդեռ յանձն առնու զանխտիր համակամութիւն գործելոյ զայն ամենայն զոր ծանիցէ հաճոյական Աստուծոյ, ՝ի բաց եղեալ զանկարգ բաղձանս առ արարածս, սկսանի ևս յանձին դգալ վառեալ ինն ցանկութիւն բուռն հարկանելոյ զկատարելագոյն գործոց. և այսպէս յայտ է զի պատրաստի հոգին ընտրել զկատարե-

լաղոյն աստիճան կենաց, յորում ճանաչէ թէ կամք Աստուծոյ են զի ծառայեսցէ նմա. և կամք Քրիստոսի Տեառն մերոյ, զի յայնմ հաստատեալ նմանեսցի ինքեան։

Եւ զի յաջողեսցի գործն, պարսպեալքն 'ի կրթութիւն այսր երկրորդի մասին՝ պարտին բերել յանձինս զեռանդն և զփափաք մեծ յառաջելոյ յընտրութիւն կոչման կենաց իւրեանց, կամ 'ի յառաջագոյն ընտրեալ կոչմանն՝ ելանելոյ յառաւել բարձրագոյն աստիճան կատարելութեան։ Ասացի եռանդն և փափաք. զի այս գործ եթէ մերձ ոչ ունիցի զեռանդն հոգւոյ, ոչ յաջողեսցի։ Ապա յայտ իսկ է թէ մեծապէս սխալեն որք համարին պատշաճ յայս մասն կրթութեան խուն ինչ զիջանել յառաջնոյ եռանդանէ։

Ի նախընթաց խոկման ուխտ եղեալ նմանելոյ յամենայնի Քրիստոսի Տեառն մերոյ 'ի ճանապարհն կատարելութեան, 'ի հետագայ խոկմունս մարդեղութեան, ծննդեան և այլոց տնօրէնութեանց նորա պարապի հոգին 'ի խնդիր կատարելութեանց՝ առանձինն կարևորաց ինքեան, արկեալ 'ի ճիշդ քննութիւն թէ որպէս և կամ յորս պարտ իցէ ինքեան նմանել իւրումն զօրավարի։ Բայց քանզի Քրիստոս յամենայն գործս կենաց իւրոց ոչ այլ ինչ արար բաց 'ի պատերազմելոյ ընդդէմ երից զօրացեալ կրից աշխարհի, ագահութեան, մարմնոյ հաճոյից և ամբարտաւանութեան, ընդդէմ

արկեալ նոցա ուղղակի զաղքատութիւն, զցաւս՝ ամենայն աղետիցն հանդիսիւք, զանծանօթն լինել և զխոնարհութիւն։ Ա-պա և մեք կամեցեալ նմին զհետ դնալ, պարտիմք միշտ կրել յանդիման աչաց զե-բեսին զայսոսիկ զհզօր թշնամիս կատարե-լութեան և փրկութեան մերոյ, առ 'ի պա-տերազմել զօրութեամբ, և ոչ տալ երբէք դուլ և դադար, մինչև հարեալ ցրեալ զնո-սա, ժառանգեացուք զերիս առաքինու-թիւնս ընդդիմակս նոցուն՝ զսէր Աղքատու-թեան և Վշտաց և Խոնարհութեան՝ երկար փորձով 'ի զործ նոցին լեալ կիրթք։

Արդ պատուղ խոկմանս այսորիկ զոր արարաք՝ է փառեալ փափաք և հաստա-տուն ուխտ դնալոյ զհետ Քրիստոսի 'ի ստա-ցումն առաքինութեանցն այնոցիկ։ Որ զիւ-րին ևս լիցի եթէ զօրս զայս ողջոյն պարա-պիցիմք 'ի խոկումն ճշմարտութեանս այսո-րիկ, և զհոգևոր ընթերցմունսն ևս ընտրեալ՝ զի իցեն պատկանեալք յայս խորհուրդ. և զի այսօր ամենայն խորհուրդք մտաց մե-րոց յածիցին յեւ քան զեւս 'ի հաստատու-թիւն ուխտի մտաց մերոց, պարտիմք հե-ռացուցանել 'ի մէնջ զայլ ամենայն խոր-հուրդս, զբարիս իսկ՝ որք 'ի բաց տարեալ հեռացուցանեն զմիտս մեր յառաջադիր խոկմանէս։

ԽՈԿՈՒՄՆ Բ

ՅԱՂԱԴՍ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ

Մասն Ա.

Երկրորդ անձն սրբոյ Երրորդութեան՝ որ մարմին զգեցաւ, խարսխ զմեզ յարդել, սիրել և ցանկալ խոնարհութեան, այս ինքն անարգանաց. «Ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ»։ Արդարև իսկ խորհուրդքն մարդեղութեան են սքանչելիք նուաստութեան վասն երից այսոցիկ պատճառաց։ ա. Վասն միութեան բանին ընդ մարմնոյ. քանզի այսու, Աստուած անմահ, անչարչարելի, հզօր, կարող և թագաւոր փառաց, կոչեցաւ չարչարելի, այր 'ի տանջանս, արհամարհանք ժողովրդեան։ Սովին միութեամբ՝ Էն անսկիզբն միացաւ ընդ ոչէութեան մերում յաւիտենական յօդիւ, այնպէս՝ զի մի և նոյն Քրիստոս է մարդ և Աստուած։ Ո՛ խոնարհութիւն, այնչափ առաւել անճառահրաշ, որչափ առաւել անբաւութեամբ տարանջատ կայ մարդկայինս բնութիւն յաստուածայնոյն։ Ո՛վ Տէր իմ Յիսուս, և ես չկամիցիմ յանձն առնուլ կոչիլ յայլոց վատատոհմիկ, տգէտ, անխոհեմ, ախտաւոր, մինչդեռ Աստուած 'ի

սէր իմ կոչի աղքատ, տկար, խաբեբայ, որդն և նախատինք մարդկան։

Բ. Խորհուրդքն մարդեղութեան են սքանչելիք խոնարհութեան 'ի պատճառս մարմնոյն, զոր ընկալաւ բանն Աստուծոյ։ Քանզի հոգին Քրիստոսի, 'ի պահու անդ յորում ստեղծաւ, վայելէր յերանական տեսութեան. և զի պէտք էին և մարմնոյն լինել հաւասարապատիւ, մարթ էր Քրիստոսի միանալ ընդ փառաւորեալ մարմնոյն զարդարելոյ չորիւք երանելեացն ծրիւք, լինել անմահ, անչարչարելի, անկիւռ և յաղեթից զերծ։ Կարէր, որպէս զԱդամն արար, առնուլ մարմին զօրացեալ, հասեալ 'ի չափ, կատարեալ։ Կարէր ևս մարմին ինչ կերպարանել առ աչս, որպէս հրամայեաց առնել Ռափայէլի և Գաբրիէլի։ Այլ նա, ո՞ հրաշալի նուաստութեանն, առնու մարմին 'ի ներքոյ անկեալ ամենայն թշուառութեան աղետից, տկար, փափկիկ մանկիկ, կաբօտ խնամոց։ Այսինքն՝ առ նմանելոյ ամենայնիւ եղբարց իւրոց՝ եկն 'ի նմանութիւն մարմնոյ մեզաց. հրաժարեալ յիրաւանց զարդուց փառաց իւրոց, և յայլոց արտունութեանց, միայն առ 'ի քակտումն մարմնոյ հպարտութեան քո 'ի մարմին խոնարհութեան իւրոյ։ Հաւասաս այսոցիկ ամենայնի, և սակայն ամբարհաւաճիս, հոգ և մոխիր։

Գ. Խորհուրդն մարդեղութեան է սքանչելիք խոնարհութեան 'ի պատճառս տե-

զոյն յորում ամփոփեցաւ Քրիստոս Տէրն մեր։ Քանզի յարգանդի կուսին Մարիամու եկաց հպատակեալ օրինաց բնութեան յաճումն մարմնոյն։ Լեր արդ մտախոհ. ո՛վ, ո՛ւր, և ո՞ր չափ ժամանակ եկաց ծածկեալ։ Անբաւն կայ փակեալ ընդ ինն ամիսս 'ի մթին բանտի յարգանդի մօրն, յորում կապեալ իբրև յանցաւոր մատուցանէ զանձն արդարութեանն Աստուծոյ, պատրաստեալ առ անարգանաց մահ վասն մեր։

Եւ առնէ զայս, զի մեք որդունք աղկաղկք խրատեալք յօրինակէն՝ կալցուք 'ի չափու զգրկիւ սրտից մերոց 'ի բարձրութիւն, զի ուսանիցիմք կալ մտաղիւր զոհ ծածկեալ յանկեան ուրեք երկրի, յանարգ պաշտաման, 'ի ստորին աստիճանի, յորս կարծեմք եթէ ոչ ճանաչիցեն զկար զօրութեան մերոյ, և յարհամարհութեան կայցեմք։

Ունայնամիտդու, սնապարծութիւն քո է որ քեզ թելադրէ. «Ցայտնեա զանձն քո աշխարհի. յայլ վիճակ կենաց, յայլում վայրի, յայլում պաշտաման, յայլում աստիճանի կարէիր բաղում օգտութեանց լինել պատճառ, են 'ի քեզ ձիրք կարևոր առ այս»։ Եղկելի՛ անձն. այս է սուրումն սանդարամետական օձին, որ հաւատացուցանէ քեզ թէ որ ինչ նուիրեալ է Աստուծոյ, այն ծախի 'ի սնոտիս։ Դու ստեղծար յԱստուծոյ և վասն Աստուծոյ, առ ծառայելոյ նմին, և նմանելոյ Քրիստոսի 'ի զործ յոր

կարդեսցէ զքեզ։ Այլ եթէ նա կամի զի ծառայեսցես նմա գնալով զկնի Քրիստոսի Տեառն մերոյ յանծանօթս, յարհամարհութեան, 'ի զործս անարգս և 'ի չնչին, եթէ առաւել 'ի պատիւ անձին զրէ զանարգութիւն քոյոց կարողութեանցդ, և ոչ զմեծապանծ մատակարարութիւն նոցուն, և ո՞ իցես դու զի յաւակնեսցիս հարցանել. ընդէր այսպէս արարեր։ «Միթէ ասիցէ ստեղծուածն ցստեղծիչն՝ թէ ընդէ՞ր այդպէս արարեր զիս. եթէ ո՞չ ունիցի իշխանութիւն բրուտն կաւոյն՝ 'ի նմին զանգուածոյ առնել անօթ, զոմն 'ի պատիւ և զոմն յանարգանս»։

ԻՂՁԲ

Ո՛վ Տէր իմ և Աստուած. զու իջանես յերկիր կամեցեալ ծածկիլ յանարգ ծածկոյթս մարմնոյ մերոյ, և ես ընդ սաղայէլի ելանեմ յերկինս 'ի վերոյ քան զաստեղսն Աստուծոյ, և 'ի վեր քան զամպս, և ցանկամ լինել նմանող բարձրելոյն։ Դու սրբութիւն սրբոց՝ երևիս 'ի նմանութիւն մարմնոյ մեզաց. և ես որ 'ի մեզս իսկ ծնեալ եմ ամենեին, կամիմ ընդ սրբոցն ունել յերկրի զբաժին։ Դու որ ես 'ի պատկեր Աստուծոյ՝ ոչ ինչ ամօթ համարեցար առնուլ զպատկեր ծառայի. և ես հողս և մոխիր, կաւ և արհամարհանք աշխարհի, ուռուցեալ ամբարտաւանիմ համարեալ զիս լինել ինչ, և չեմ։

Ի պակուցումն եղէ երկնից. Աստուած նուաստացաւ յանարգութիւն, զի ամբարտաւանութիւն ազգի մարդկան ոչ համարեսցի ամօթ զհետ գնալ հետոցն Աստուծոյ. և ես այնպէս ամբարտաւանեալ կամ։ Ո՛վ զուք երբեմն երկնաւոր հոգիք, և արդ առ ամբարհաւաճութեան լեալ խանձողք զեհենոյն, զձեզ կոչեմ ինձ՝ի դատախազ. ասացէք, չիցէ՞ այս անբերելի անամօթութիւն, զի յետ այսպէս խոնարհելոյ յոչնչութիւն մեծվայելչութեանն Աստուծոյ, ուռուցեալ փքասցի որդն և երբ։ Ո՛վ մեծդ Աստուած, սիրող խոնարհութեան, շնորհեա ինձ զի և ես լեալ անխտիր համակամառ ամենայն տեղիս, պաշտամունս և աստիճանս անարգս, անխարդախ սրտիւ յարգելոց, սիրեցից և ցանկացայց առաքինութեանն այնմիկ, որ ի՞նոյց զբանն Աստուծոյ՝ի յարգանդ Մարիամու Կուսին. և Աստուծոյ հաճեցեալ ընդ այն, և յառաքինութիւնս կուսին քան զամենայն զխոնարհութիւնն պատուեալ բարձրացոյց։

Մասն Բ

Բանն մարմին՝ եղեալ՝ ուսուցանէ մեզ յարգել, սիրել և փափաքել խստամբերութեան և վշտագնութեան կենաց, այսինքն մեռելութեան։ «Ցնանկ և վաստակաւոր եմ ես՝ի մանկութենէ իմմէ»։ Կեանք Յիսուսի յառնուլ անդ զմարմին մարդկային՝ի սկզ-

բանէ անտի մինչև ցօր անարգական մա-
հուն էին վշտահար և լի ցաւովք. զի զիտէր
որ ինչ անցք անցանելոց էին ընդ ինքն։
Յառաջնմէ ժամէ անտի կենացն յայտ յան-
դիման տեսանէր առաջի իւր զամենայն
զվիշտս, զցաւս, զանիրաւ զրպարտու-
թիւնս, զնախատինս, զխոշտանգանս, որոց
տանելոց էր ցմահ. և տեսանէր ոչ վեր 'ի
վերոյ իբր 'ի ստուերի, այլ ակն յայտնի
պարզ տեսութեամբ, մի առ մի ամենայն
մասամբքն, 'ի միտ առեալ և զգառնու-
թիւնս ցաւոցն և զհամար և զչափ նոցուն,
իբրև անդստին կրելով զնոսին։ Եւ զայն
ամենայն յանձն առնոյր Յիսուս յօժարա-
կամ, մատուցեալ զզլուխն 'ի պատկն փշեայ,
զաչսն յարտասուս, զերեսսն առ ապտակս,
զդէմսն առ նախատինս, զշրթունսն առ
լեղին և առ քացախն, զբովանդակ մար-
մինն առ վէրս և առ հարուածս դանիցն,
և առ զառն մահ։ Ո՛ անհուն սէր Յիսուսի
առ մարդ և առ մահ։ Ո՛վ վատասիրտ ըն-
կերք Յիսուսի, յորպիսի՛ ամօթ մեծ պար-
տիմք ըմբռնեալ կալ՝ հայեցեալ յօրինակ
վարուց առաջնորդին մերոյ։

Պատուղ այսր խոկմանս է ոչ միայն
արհամարհութիւն պատուոյ, և ատելու-
թիւն հաճոյից և անզորրութեան մարմնոյ,
այլ և սէր և յարգանք անարգանաց և վշ-
տաց (զոնեա զարթուցումն իմն մտաց), և
փափաք ճանաչելոյ զպէտս փափաքանաց
ստանալոյ զայսոսիկ առաքինութիւնս։

ԻՂՁԲ

Ո՛վ Տէր իմ Յիսուս, զու այն ինչ մտեալ յաշխարհ՝ սկսար առնուլ զճաշակ ցաւոց և տառապանաց 'ի սէր իմ, և զամենայն զգայարանս քո ընկղմեալ 'ի յիշատակ չարչարանաց ցաւոց քոց, երբէք ոչ ճաշակեցեր զքաղցրութիւն հանգստեան և սփոփանաց կենաց, այլ ամենայն փափաք քո էին բորբոքել զհուր սիրոյ քո՝ զոր ելիր արկանել յերկիր, և զմկրտութիւն քո ցանկայիր, փութայիր կատարել. և յայսոսիկ իղձս համբերատար երկայնմտութեամբ տանջեալ 'ի կամս Հօր քո երկնաւորի բերկրէիր։ Բաժակն այն զոր ետ քեզ Հայր՝ այն էր մխիթարութիւն սրտի քո, 'ի ծննդենէ մինչև ցոր քամելոյ քո զայն 'ի սպառ, ումպ առ ումպ արբեալ. և 'ի տեսանելդ դիս, զի հեռի 'ի քէն կացեալ՝ ոչ ինչ հոգամ զսիրոյդ և զվշտացդ որ վասն իմ, այլ զհետ հաճոյից անձին իմոյ 'ի խնդիր յածիմ փառաց և հանգստեան և լրման ըղձիցս, զողբս Երուսաղեմի 'ի վերայ անձին իմոյ կարդայիր։ Եղո՛ւկ դիս. արդ ծանեայ զի յանզիտութեան շրջէի. քոյ անձնասիրութեան, ամբարտաւանութեան և հաճոյից մարմնոյ ճգեալ կայր յաչս իմ. արդ զեղումն շնորհաց քոց պատառեաց զայն, և բաց զաչս իմ, արդ յամօթ մեծ ընկնեալ կամ. ցաւիմ զի խուսափէի յառաքինու-

թեանց այտի, զորս յանչափս սիրեցեր, և առանց այնոցիկ և ոչ մի ևեթ վայրկեան ոչ կամեցար կալ, հրաւիրելով և զիս՝ յաջելոյ՝ «Ա՛ռ զխաչ քո և ելի զկնի իմ»։ Վառեա աղաչեմ 'ի սրտի իմում զատելութիւն անձին, շիջո՛ յիս զսէր անձնասիրութեան, զի առաւել ևս բորբոքեսցի հուր սիրոյն քո յանձին իմում։

Յաւել յայսոսիկ զդաւանութիւն հաստատ մարդեղութեանն, երկրպագութեան անձին Յիսուսի Քրիստոսի, զոհութեան ընդ այս աքանչելի խորհուրդ, և ընդ հրաշաղան օրինակ խոնարհութեան Յիսուսի։ Դարձեալ խնդրեա զնորհս առելութեան և նուաստութեան անձին, և կատարեալ անխտիր համակամութեան ընդ կամացն Աստուծոյ։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ա. Յիսուս Քրիստոս իւրով մարդեղութեամբ խրատ տայ մեզ յարգել, սիրել և ցանկալ խոնարհութեան. Ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ։ Վասն երից պատճառաց խոնարհութիւնն Քրիստոսի Տեառն մերոյ է սքանչելահրաշ յայս խորհուրդ. Ա. Վասն մեծութեանն՝ որ եղև բանին ընդ մարդկային բնութեան. քանզի սովին Աստուած ամենազօր եղև ամենատկար։

Բ. Վասն մարմնոյն զոր ընկալաւ բանն Աստուած. զի որովհետև հոգի նորա վայելէր յե-

բանական տեսութեան, արժան էր և մարմնոյն ունել զնոյն երանութիւն. բայց Յիսուս զգեցաւ մարմին 'ի նեբքոյ անկեալ ամենայն վշտաց:

Գ. Վասն տեղւոյն յորում Յիսուս ամփոփեցաւ: Անբաւելին երկնից եկաց զնոն ամիս փակեալ յարգանդի Կուսին: Զայս ամենայն արար Փրկիչն մեր ուսուցանելով մեզ զնոնարհութիւն. և մեք կամիմք զոր ամենայն առաւել բարձրամիտ:

Բ. Յիսուս'ի մարմնանալն ուսուցանէ մեզ յարգել և սիրել փափագանօք զմեռելութիւն անձին, զոր ինքն յանձին կալաւ՝ ոչ միայն տանելով վշտաց տկարութեան մարմնոյն, այլ և յայտնի և պարզ ծանօթութեամբ ապառնեացն. զի յորժ անտի ծնանելոյ մինչև ցարբու

բաժակի անարգ մահուան առ սէր մեր, առաջի աչաց ունէր զամենայն տառապանս վշտաց՝ զցաւս և զնախատինս և զտանջանս, որոց ունէր տանել ցմահ իւր:

Ընթերցիր

Թովմ. Գեմբ. Գիրք Բ. Գլ. 12. Յօդ. 5. 6:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

'Ի վերայ խոնարհութեան.

Նպատակ սերկեան խոկման է նմանութիւն Յիսուսի յառաքինութիւնսն յայտնոսիկ, որք փայլեալ ցուցան 'ի խորհուրդ մարդեղութեան և ծննդեան. և են խոնար-

հութիւն, Մեռուցումն և Աղքատութիւն։ Զի սոքին կացին ընկերք անանջատք 'ի մարոյն մինչև ցհաչն, 'ի խանձարրոյն մինչև ցգերեզմանն։ Այսօր բանս 'ի մէջ առցուք զխոնարհութենէն, և վաղիւ զերկուս զայլսն քննեսցուք։

Մեծապէս ձեռնտու լիցի խոկալ զգեղապազանցութիւն, զօգտութիւն և զարդարութիւն այսր երկնային առաքինութեան, 'ի յարգել ևս քան զևս, 'ի սիրել սերտիւ և 'ի ցանկալ նմին ուժգին։ Եւ այսոքիկ են երեք աստիճանք, առ որս պարտիմք եռանգագին դիմել յայսմ մասին կրթութեան։

Ա. Կամեցեալ յայտ առնել զգերազանցութիւն սորա, սուրբ Հարք յերկինս զնոյն բարձրացուցանեն. և սուրբն Օգոստինոս ամենեցուն բերան լեալ ասէ. «Եթէ խնդրեսցես որ իցէ կարևորագոյնն և գլխաւոր 'ի կրօնս և 'ի վարդապետութեան Քրիստոսի, իմ պատասխանի այս է. Առաջինն է խոնարհութիւն։ Զերկրորդն. խոնարհութիւն։ Եւ երրորդն. դարձեալ խոնարհութիւն»։ Եւ իցէ՞ ինչ այլ վասն՝ քան զբանս. և առ 'ի զարթուցանել 'ի մեզ զպարտուպատշաճ յարգանս զինչ այլ հնար էր ասել մեծավայելուչ բան։ Եւ սուրբն Օգոստինոս զայս այսպէս ճանաչէր, և ոչ անպատճառ. քանզի խոնարհութիւն է հիմն հաստատ, զի զվիտս մեր ածեալ 'ի ծանօթութիւն անձին՝ սանձէ ընդ լծով հաստատ, քակեալ զխորհուրդս՝ զերէ 'ի հնա-

զանդութիւն Քրիստոսի։ Ուր չգուցէ խոնարհութիւն, անդ և ոչ հաւատք։ Եւ զի հաւատքն է վէմ անկեան կրօնից, և հիմն բարոյականին, և սկիզբն փրկութեան յաւիտենից, ապա և խոնարհութիւն իբրև հիմն հաւատոյ մեծայարդ է յոյժ և զերազանց։

Ըստ սրբոյն Բեռնարդոսի սա այս է անդրդուելի հիմն այլոց ամենայնի առաքինութեանց. «Որպէս ամբարտաւանութիւնն է սկիզբն ամենայն մեղաց, այսպէս և խոնարհութիւնն է արմատ ամենայն առաքինութեանց»։ Սա զայլ ամենայն առաքինութիւնս ամփոփեալ ունի 'ի միտս, և ամրափակեալ պահէ. «Սա ինքն, ասէ սուրբն Հերոնիմոս, է մայր և դայեակ, սիւն և խարիսխ, հաստատութիւն և յօդակապ այլոցն ամենայնի»։ Իսկ որ թերացեալն է 'ի խոնարհութենէ, ամենայն գործք նորա բարիք յոչ ինչ գրեսցին։

Մ'անաւանդ զի առանց խոնարհութեան՝ ընտիրքն յայլոց առաքինութեանց փոխին 'ի մոլութիւնս. խստամբեր կեանք առանց այսորիկ է կեղծաւորութիւն, պարապումն 'ի խոկմունս՝ ցնորք մտաց, արհամարհութիւն մեծութեան՝ անապարծութիւն։ Առանց նորա անապատքն միայնակեցայ, տանջանք խոստովանողացն, խոշտանգանք մարտիրոսաց, նախանձ առաքելոց՝ իցեն 'ի ծաղր մարդկան և դժոխոց։ Բայց ուր խոնարհութիւն է, և թերութիւնք

անդամ փոխին յառաքինութիւնս. զի «Ա-ռաւել հաճի Աստուած ընդ խոնարհութիւն չարագործին, քան ընդ բարեգործութիւնս ամբարհաւաճին» (Ա. Օգոս.)։

Նա զի առանց խոնարհութեան և շնորհքն իսկ Աստուծոյ լինին վնասաբերք։ Վասն զի ասէ սուրբ Հայրն Ղեգոս, եթէ «Որպէս հողին յաջող ուռուցեալ գառա-դաստն եթէ վարեսցէ զնաւն ընդ ժայռս ծածկեալս 'ի ջուրսն՝ ածէ 'ի նաւաբեկու-թիւն, սապէս ևս փչումն երկնաւոր շնոր-հաց ածէ 'ի կորուստ զհոգին՝ որ տածէ զհպարտութիւն 'ի սրտի»։ Այս Հոգւոյն սրբոյ ոչ լուսաւորէ զհոգի ամբարտաւան, այլ կուրացուցանէ զաչս մտացն. դիտու-թիւնք Աստուծոյ ոչ ուղղեն զմիտս, այլ փքուցանեն. պարզկք աղօթից, մարգա-բէութեանց և լեզուաց են նմին թոյնք մա-հացուցիչք։ Այսոքիկ ամենայն յայտարարք գերազանցութեան խոնարհութեան։

Բ. Եւ օգտութիւնք նորա մեծք յորդո-րեսցեն զմեզ 'ի սէր. զի 'ի բնութենէ բե-բիւք յորդեռանդն 'ի սէր օգտակարին։ Արդ առաջին օգտութիւնն, որով հաճոյա-կան ընծայի մեզ խոնարհութիւն, է նմա-նակից լինել մեր ընդ Յիսուսի Քրիստոսի. քանզի անձն խոնարհ է ճշգրիտ պատկեր Քրիստոսի, զոլով Անարգութեանն կոչումն Յիսուսի 'ի վերայ երկրի՝ յոր ետ զանձն։ Այնու միանայ ընդ Յիսուսի անձն խոնարհ յիշգես իւր և 'ի դատմունս մտացն։ Սիրէ

ընդ նմա զանարգանս և զնախատինս. զի նա 'ի կեանս իւր միշտ յարգէր մեծապէս և սիրէր անձկանօք զլինելն 'ի ծաղր և 'ի կատականս։ « Առեալ յանձն զնախատինս նորա »։

Եւ ո՞ կարասցէ երբէք առնուլ 'ի նկարագիր այնպէս վսեմ և ճշգրիտ որպէս վայել իսկ է գերազանցութեան իրացն, թէ որպիսի՞ սքանչանաց իցէ գործ բերել յանձին զկենդանի պատկեր Յիսուսի Քրիստոսի. զգեստուք զարդու նորա զարդարիլ. զգալ զոր նոյն զգայ, կամել զոր նայն կամի, յարգել և անարգել, սիրել և ատել, նուաստանալ և խուսափել, 'ի նորին հոգւոյ յամենայնի առաջնորդիլ, իբր թէ զհոգի նորա կրել յանձին, և այսպէս 'ի նոյն վարս և 'ի նոյն իղձս հաղորդական զոլով, լինել 'ի խնդութիւն, 'ի բերկրանս և 'ի պսակ Յիսուսի Քրիստոսի։ Եւ արդ ո՞ ոչ սիրեսցէ զխոնարհութիւն, որով այսպէս նման որդւոյն Աստուծոյ լինիցի։

Եւ խաղաղութիւն սրտի է արգասիք խոնարհութեան, զի 'ի խոնարհ սիրտս անսասան թագաւորէ խաղաղութիւն։ Քանզի խոնարհն չէ 'ի խնդիր պատուոյ և ժառանգելոյ զանուն, այլ առաւել ցանկացող է նախատանաց և կատականաց, որովք ցամաքեալ են 'ի սրտին աղբիւրք յուզմանց կրից։ Եւ ո՞ կարասցէ վրդովել զխաղաղութիւն առն՝ որ բերկրի ընդ անարգանս և ընդ ծանակ. որ խնդալից ընդունի զապ-

տակ'ի ծնօտն, և բերկրանօք'ի սրտին դարձուցանէ զմիւսն հարկանողին. ո՞ երկմտեսցէ ընդ բնակել այնպիսւոյն այժմէն'ի դաւիթ երկնից, և ընդ լինել նորա հաղորդ խաղաղաւէտ երջանկութեան երանելեաց։ Սուրբն Կլիմաքոս ասէր. «Ի տեսանել քո զոք'ի խորին խաղաղութեան հոգւոյ, ծանիր զի կայ'ի խորին խոնարհութեան»։

Երրորդ բարութիւն խոնարհութեան է առեալ հանել զայր'ի սուղ ժամանակի'ի բարձրագոյն աստիճան սրբութեան։ Քանզի զխոնարհն անարգեն բարձրամիտք, և մեկուսի շրջին'ի նմանէ. և այսպէս'ի խուսափել աշխարհի'ի նմանէ, և ինքն խուսափէ յաշխարհէ, և մնացեալ անձին առանձին, տայ զանձն Աստուծոյ, կեայ միայն յԱստուած, զատուցեալ յամենայնէ, և մնայ յանարատ սրբութեան։ Եւ'ի հատուցումն այսորիկ սրբութեան հոգւոյ՝ ընդունի զսէրն Աստուծոյ, յորում՝ են ամենայն կատարելութիւնք անթերի. զի չէ լցեալ հոգւոյն սիրով Յիսուսի՝ ոչ կարէ լինել կատարեալ'ի խոնարհութեան. զի որչափ կատարեալ լինիցի'ի սէրն, այնչափ և'ի խոնարհութեան կատարեալ երևեսցի։

Ատի և չորրորդ օգտութիւն խոնարհութեանն երևի, որ է ներքին մտութիւն ընդ Աստուծոյ. զի սիրտ խոնարհի ազատ զոլով յամենայն ցանկութենէ պատուոյ, իշխէ նմին Աստուած ամենայնիւ, առանց իւիք հակառակելոյ նմին նախանձորդին

հպարտութեան։ Աստի սկսանի լինել հաղորդ երկնաւոր զանձուց, որով ճոխացուցանէ Հոգին սուրբ զհոգին երջանիկ՝ի սուղ ժամուհեղլով՝ի նախմացուած այնպիսի խորին խորհրդոց, առ որ երբէք իւիք ոչ կարացին ժամանել զերակշիռ հանճարաւորքն՝ի մարդկանէ։ Օրինակ մեզ կան առաջի Սրբուհին Թերեզա, Եր. Նիկողայոս Ռուփեան, Հռոտերկոս, Գրեսկենտիոս և այլք յոլովք, որոց բանալի՝ի մուտս աստուածային անհաս զիտութեանց էր խոնարհութիւն. վասն զի Աստուած զորս ծածկէ ի մասանոց, զնոսին յայտնէ տղայոց։

Եւ զի խոնարհքն զփառսն մեծամեծ գործոց դարձուցանեն՝ի պատճառն ամենայն բարեաց, և Աստուած նոցա միայն շնորհէ զպարգևս յայտնելոյ զաքանչելիս ողորմութեան իւրոյ, ածելով զմեղաւորս յապաշխարութիւն, և զայլ գործս մեծամեծս տարեալ՝ի զլուխ ընդ ձեռն նոցա։ Մինանգամայն ասել. Սիրէ Տէր զխոնարհն և սիրսիէ, հանդչի յանձն խոնարհ, լնու զխոնարհն մեծամեծ շնորհօք, յայտնէ խոնարհին զիւր զաղտնիս, և քաղցրութեամբ առ ինքն ձգէ և հրաւիրէ։

Եւ ո՞չ սիրեսցէ զառաքինութիւն այսպէս լի օգտութեամբ, որ ածէ զայր՝ի յարակից նմանութիւն Յիսուսի Քրիստոսի, առ անդորր խաղաղութիւն հոգւոյ, առ զերազոյն սրբութիւն, առ ներքին միաւորութիւն ընդ Աստուծոյ, և առ հաղորդութիւն

երկնաւոր դանձուց, և որ առնէ զմեզ զորձիս պատկանաւորս առ'ի մեծացուցանել զփառսն Աստուծոյ, և առ հրաւիրել'ի փրկութիւն զընկերս մեր զմարդիկ։

Գ. Արդարև առաքինութիւն ցանկալի ամենեցուն, գերազանցութեամբն վեհ երեսեալ, օգտութեամբն բաղձացեալ, և որում ցանկալ և զոր սիրել իրաւունք են. զոր Աստուած ինքնին լեալ մարդ սիրեաց յանչափս և ցանկացաւ նմին։ Եւ ո՞ չ ցանկացի'ի խորհել անդ եթէ ամենասուրբ մարդկութիւնն Յիսուսի, թէպէտ ոչ կարէր մեզանչել՝ ընկղմեալ յԱստուած և ամենայն կատարելութեանց ամբար զոլով, այլ և այնպէս (ըստ բնութեան իւրոյ) յիշեալ զոչընչութիւն իւր, յառաջնոյ ժամէ մարմնաւորութեան իւրոյ, մինչև ցկատարած կենաց իւրոց, իջանէր'ի խորս խոնարհութեան առաջի անչափ մեծվայելչութեանն Աստուծոյ։

Այս խորհուրդ մտաց պարտի խոնարհեցուցանել ոչ միայն զամբարտաւան որդիս Ադամայ, այլ և զհեստ դանդղային հրեշտակս։ Բա՞ր է՞'ի խորս նուաստութեան իջեալ խոնարհի առաջի ամենասուրբ Երրորդութեան սուրբն, արդարն, թագաւորն թագաւորաց, դատաւորն կենդանեաց և մեռելոց, այն՝ յորոյ անուն կրկնեն ծունր ամենայն արարածք, ճանաչելով ըստ մարդկային բնութեան զոչէութիւն իւր, և կոչի նուաղեալ քան զամենայն մարդ, մանա-

ւանդ դի որդն և ոչ մարդ. և մարդն յանդգնեսցի բարձրամտել ունայնութեամբ մըտաց, զովեստս խնդրել և զանձն զեր 'ի վերոյ զրել քան զայլս զամենեսին, մինչդեռ ինքն է չիթ իմն ցողոյ վաղորդայնի, և շամանդաղ ցնդեալ ընդ օդս, և իբրև զմէգ տարածեալ, տկար, անզօր և անարդ և 'ի չարիս միտեալ 'ի բնութենէ։ Ա.Հ. առ մըրով Յիսուսի հատցուք զամբարտաւանութեան զարմատն, աստէն սկսցուք յարդել, սիրել և ցանկալ այնմ առաքինութեան, զոր նա պատուեաց, սիրեաց, և խնդրեաց յամենայն կեանս իւր։

ԲՆՆՈՒԹԻՒՆ

Ի վերայ նորին առաքինութեան.

Ճշմարիտ խոնարհութիւնն կատարեալ հիմնեալ է 'ի ճշմարտութեան. որ սիրէ զճշմարտութիւն, որչափ առաւել մերձենայ առ նա, այնչափ առաւել զտանէ զանձն 'ի խորս խոնարհութեան։ Վասն որոյ և անհնարին իսկ է լինել ումեք ճշմարտասէր կատարեալ, և զտանել թերի 'ի խոնարհութեան, և ոչ սիրել զնախատինս և զարհամարհանս. ապա և ամենայն ոք կարէ ճանաչել զանձն այնչափ առաւել թերացեալ 'ի ճշմարտասէրն լինելոյ, որչափ առաւել

յետնեալ զանձն տեսանէ 'ի խոնարհութեան։ Եւ վասն այնորիկ անհնարին է լինել ումեք սիրելի Աստուծոյ մինչ չև հասեալ 'ի կատարեալ խոնարհութիւն։ Եւ եթէ կամիս իջանել 'ի խորս խոնարհութեան, եկ մերձեցիր առ ճշմարտութիւն, և զտցես զքեզ իջեալ 'ի խորս անդր և առ Աստուած ևս մերձեցեալ։ Քանզի զինչ է խոնարհութիւն, որպէս տեսաք ցայսմայր, այսչափ սիրեցեալ յԱստուծոյ. բայց զի ծանիցէ իւրաքանչիւր ոք որ զինչ և է ինքն, և մի ստութեամբ պարծեսցի առ ընկերսն. զի մեք մեզէն եմք ոչ ինչ. ճանաչումնս այս է առաջին մասն ճշմարտութեան և խոնարհութեան. ապա և բարին մեր է որ և է նախատինք. արդասիք, մեծագործութիւնք, բարեբաութիւնք ամենայն են Աստուծոյ, և մասն որ 'ի մեզ ընդ իշխանութեամբ մերով՝ է լինել մեր ոչ ինչ. և չիք ինչ առաւել արժանի նախատանաց և ծաղու քան զոչինչն. ապա եթէ իցեմք իմաստունք և բարեբաութեան մասամբք առաւելեալք, փառաւորեսցի Աստուած՝ որ ետ մեզ զնոսին. իսկ մեք 'ի գործել անդ զմեծամեծս զարձեալ կացցուք 'ի ծաղր և 'ի ծանակ յամենեցունց. այս լինիցի մերոյ ոչէութեան արդասեաց բաժին արդար։

Երկրորդ մասն խոնարհութեան և ճշմարտութեան է, զի Աստուած իւրովն անհուն բարութեամբ սիրեաց զմեզ և 'ի փառս զմեզ հրաւիրեաց, այլ ոչ յայսմ աշխարհի։

Ասպա այր ճշմարտասէր պարտի յայսմ աշխարհի առ ոտն հարկանել զփառս և խոստանալ 'ի նոցանէ, զի ոչ վասն այնոցիկ եմք ստեղծեալք, այլ պատրաստեալ է մեզ քաղաք յերկինս՝ յորում թագաւորելոց եմք ընդ որդիսն Աստուծոյ, հանդուցեալ 'ի սէրն Աստուծոյ։ Ասպա անձն ճշմարտութեան սիրող՝ յայսմ աշխարհի իջեալ 'ի խորս ոչնչութեան իւրոյ, անարդէ յանձն իւր զցանկութիւն փառաց և անուան. զի զիտէ եթէ այն է անարդել զճշմարտութիւն, կամել եղծանել զկարգաւորութիւնն Աստուծոյ, և մատուցանել պաշտօն ստութեան։ Արդ որ պատուէ զայս ճշմարտութիւն, ահա ինքնին զտանէ զանձն իջեալ 'ի խորս խոնարհութեան։ Ոչ ինչ եմ, մեղապարտ եմ, ապա արժանի եմ նախատանաց. զի առաջի ոչնչի գովեստ կամ նախատինք չարժէ ինչ. և զի թէպէտ փառք և պատիւ և մեծութիւն անուան են յաշխարհի, այլ ոչ վասն իմ, զի ես ստեղծեալ եմ վասն երկնից թագաւորութեան. և այդ ամենայն են խոչք ճանապարհին իմում. ապա ամենայն հոգւով պարտ է ինձ խուսափել 'ի նոցանէ և մի 'ի պատիրս ստութեան ըմբռնիլ և հեռանալ 'ի ճշմարտութենէ, յորում է կատարեալ խոնարհութիւն։ Աւաղ մեզ, որչափ տկար եմք մտաք առ իմանալ զայս ճշմարտութիւն և զհետ գնալ նմին, զի պարծիմք ընդ իմաստութիւն մեր և ընդ ճշմարտասիրութիւն։ Ո՞չ ապաքէն սովին տգի-

տութեամբ արհամարհեցաք զսէրն Աստուծոյ, և մատնեցաք յանհնարին աղէտս, մինչև յանչափ զթոյն Աստուծոյ առ մեզ առ 'ի մերձեցուցանել զմեզ զարձեալ առ ինքն, հարկ եղև յանձն առնուլ Որդւոյն Աստուծոյ զչարիս մերոց խակութեանց, և լինել մարդ, առ 'ի հաշտեցուցանել ընդ մեզ զերեսս Աստուծոյ. և օրինակաւ իւրով ուսուցանել մեզ պատուել զճշմարտութիւն։

Սուրբն Բեռնարդոս զայսոսիկ երկուս մասունս խոնարհութեան անուանէ մտաց և կամաց. առաջնումն ճանաչէ որ զոչնչութիւն իւր և խոնարհի. և երկրորդաւն ծանուցեալ զատութիւն փառաց և պատուոյ աշխարհի, և զի չեն այնոքիկ վասն իւր, հեռացուցանէ զկամս իւր 'ի նոցանց, և սիրէ զանարգանս, և կամի զի ծանիցեն և այլք՝ եթէ ինքն է ոչ ինչ։ Առաջինն է պատրաստականութիւն հոգւոյն առ խոնարհութիւն, և երկրորդն է նոյն ինքն կատարումն ճանաչման և մատուցումն 'ի գործ ճշմարտութեանն ծանուցելոյ՝ որ այն ինքն է լրումն առաքինութեանն խոնարհութեան։ Արդ եթէ սկսեալ է քո ճանաչել զոչչութիւն քո, և կարծես զքեզ զարգացեալ 'ի խոնարհութեան, քննեա եթէ միայն մտաւո՞ր իցէ և տեսական և անարդիւն, թէ մատուցեալ իցես 'ի գործ՝ խոնարհեցուցեալ զկամս քո։ Լաւ ես ասել, արդեաք 'ի բերանի՞ ունիցիս զխոնարհութիւն՝ թէ 'ի սրտի։ Զի այլ է ճանաչել, և այլ կամել ըստ ճա-

նաչմանն զանարգանս անձին։ Առաջինն սեպհական է և դիւաց անգամ. այլ երկրորդն է զորձ ճշմարիտ խոնարհի։

Հնարք առ'ի զարգանալ'ի խոնարհութեան են երկու այսոքիկ. առաջինն է յաճախ խոկալ զպատճառս խոնարհելոյ. երկրորդն է ստէպ կրթել զանձն'ի զորձս խոնարհութեան։ «Եթէ կամիս ստանալ զառաքինութիւն խոնարհութեան, մի խուսափեր 'ի ճանապարհէ խոնարհութեան» (Ս. Բեռն.)։ Ապա առ'ի միտ զպատճառսն՝ հաստատութեամբ յանձին կալեալ զխոնարհելն, եթէ կամիս բարձրանալ'ի ժամանակին։

Աստիճանք խոնարհութեան են՝ ա. Ճանաչել զնուաստութիւն անձին, և խորհել զանձնէ, և զորձել զզորձս անձին որպէս վարի որ ընդ առն անարգի։ բ. Եթէ անարգիցիմք յայլոց՝ տանել լռութեամբ։ գ. Յանկալ և յածիլ'ի խնդիր անարգանաց։ դ. Յանարգիլն յայլոց՝ խնդալ'ի սրտէ և զոհանալ զԱստուծոյ։ Քննեա արդ եթէ յո՞ր աստիճան իցես ժամանեալ, և յո՞ր հասանել ընդ անձին ուխտ դնել կամիցիս։

Սեփհական ցոյցք խոնարհութեան են երեք. ա. Կամաւորութիւն. զի յակամայս խոնարհին և աւազակք իսկ, և խոնարհութիւն տհաճ՝ չէ արժանի անուան առաքինութեան։ բ. Պարզ մտօք. զի խոնարհութիւն կեղծեալ՝ է առաւել քան զամբարտաւանութիւն։ Զի են որք խոնարհին անօրէ-

նութեամբ, որք 'ի խոնարհութեան 'ի խնդիր են զովութեան խոնարհութեան։ Այս է անապարծութիւն պատրուակ զխոնարհութիւնն առեալ։ գ. Զի իցէ զիպաւոր. ճանաչելով զչափն, զժամանակն, զտեղին, զպաշտօնն, զյեղանակն, զգործն, զվախճանն, զզգուշութիւնսն յորս պարտ է լինել մտադիր։

Այրկ 'ի քնին՝ ա. Զչափ մտադիւր յանձնառութեանդ անարգանաց. թերևս առ որ և է անարգանս մանուանս տխրիս, հառաչես, և 'ի տրտունջ լուծանիս։ բ. Կամիցես թերևս ընդ խոնարհութեան ատիճանս բարձրանալ 'ի պատիւ. 'ի նախատինս և յանարգութեան զանուն ժառանգել և հանդիպել զովութեան։ Խոնարհութեանն լինել զովելի խոստովանեալ է յամենեցունց. մինչև ամբարտաւանութեան իսկ հնարել ծածկելոյ ընդ վերարկուաւ նորուն։ գ. Իցես և դու 'ի նոցանէ զորմէ ասէ Սիրաք. «Եւ է խորամանկ խոնարհ, չրջի 'ի ծածուկ, և փոր նորա լի է նենգութեամբ»։ Առ հասանել 'ի պատիւ, և 'ի պաշտամանն նիւթէ զչարիս։ Կամ՝ թերևս իցես վատասիրտ, և կասկածիցես չյաջողել 'ի պաշտամանդ, և կեղծիցես զխոնարհութիւն։

Ճշմարիտ խոնարհն է առատամիտ, զի անվստահ յանձն, և ամենայնիւ յԱստուած զյոյսն հաստատեալ, արութեամբ մատչի 'ի գործ յոր կոչեցեալն է։ Որ 'ի տարտամ խորհուրդս երկնչի յաջողել 'ի

զործն, յայտ առնէ զանգիտել 'ի նախատանաց։ Բննեա զոր դուզ խորհիս, և յինչ միտս իցես։ Այլ «Որչափ մեծ իցես, խնարհ կալջիր զանձն քո, զի առաջի Տեառն զտցես շնորհս»։

ԽՈԿՈՒՄՆ Գ.

Ի ԾՆՈՒՆԴ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ

Մասն Ա.

Քրիստոս Տէրն մեր 'ի ծննդեան իւրում ուսուցանէ մեզ յարդել, սիրել և փափաքել աղքատութեան. վասն դի այն ինչ ծնեալ՝ կայր 'ի մեծի կարօտութեան. ա. Ըստ տեղւոյն. զի ծնաւ, ոչ միայն արտաքոյ պալատան, մերկեալ 'ի թագաւորութենէն, զոլով ինքն որդի Դաւթի և ժառանգ թագաւորութեանն Յուդայ. ծնաւ ոչ միայն պան զուխտ հեռի 'ի տանէն և 'ի հայրենեաց, ըստ հրամանին Օգոստեայ 'ի Նազարեթէ եկեալ 'ի Բեթղեհէմ, այլ ամենեին անտուն. «Զի ոչ զոյր նոցա տեղի յիջևանին»։ Եւ ծնաւ նա 'ի հանդրուանին հովուաց, և եղաւ 'ի մսուր. ծնաւ 'ի սուրբ և յաղնուական աղգէ, բայց աղքատին յոյժ. և յայց

եկին նման միայն հովիւք ոմանք ազքատք։ Ո՛ սքանչելի ազքատութիւն, յոր անկեալ կայ տէրն տիեզերաց. ո՛ Աստուած Հայր. ահա ազուեսուց որջք գոն, և թռչնոց երկնից բոյնք, և միածին Որդւոյ քո ոչ զոր ուր զիցէ զդլուխ իւր։

Մեծ եղև և ազքատութիւն հանդերձից նորա. «Եւ եղ զնա 'ի մսուր», 'ի վերայ խոտոյ. փետրալից բարձք օրոցին էին խարքն եզանց, և օրոցն արքայապատիւ՝ էր նոյն ինքն մսուրն։ Աստուած եկեալ յաշխարհ 'ի փրկել զմեզ, և աշխարհ զարգարեալ ամենայն կարևորօք պիտոյից մարմնոյ, և ինքն զրկեալ յամենայնէ. իբր թէ աշխարհ չիցէ գործ ձեռաց իւրոց, և չգիտիցէ պատրաստել զպէտս տան իւրոյ, ուր և զթռչունս գիտէ կերակրել. և զկարևոր իսկ վայելչականս մարդոյ պակաս առնէ ինքեան, անտուն, անծածկոյթ, անպատսպար։ Այսպիսի ազքատութիւն հարկաւ ընդ իւր առեալ բերէ զվիշտս և զարհամարհանս։ Ճշմարտութեամբ ասէր ընդ մարգարէին՝ «Ցնանկ և վաստակաւոր եմ՝ ես 'ի մանկութենէ իմմէ»։

Ո՛վ Տէր իմ Յիսուս. Երկինք ամբոխք են, և որ 'ի Քերովբէան բազմիս, արդ հանդչիս 'ի հանգրուանին հովուաց, 'ի մսրի, 'ի բնակարան անբանից։ Դու ես լոյս փառաց և պատկեր աներևութին Աստուծոյ, և ասա այժմ յայս անարդութիւն խոնարհեալ, մերկ և կողոպուտ և անօթեւան.

այժ, առնում 'ի միտ, ով Տէր իմ Յիսուս, զիտեմ առ ինչ առնես այսպէս. զի «Վասն մեր աղքատացար որ մեծատունդ էիր, զի մեք քոյով աղքատութեամբ մեծասցուք». զի ուսեալ 'ի քէն՝ յարգեսցուք, սիրեսցուք և ցանկասցուք աղքատութեան։

Մասն Բ

Բ՚բէ. Ո՛րչափ ճոխ և հանգիստ է մերս աղքատութիւն, եթէ յամախութեամբ աւելորդացն, և եթէ յոյժ սիրելով մեր զկարեւորսն, և չառնելով ինչ պակաս։ Ո՛ր-չափ այլազգ է իմս աղքատութիւն 'ի Քրիստոսի աղքատութենէն. նա յայր աղքատին, և ես յամենակալ սենեկի. նա պակասեալ յամենայն կարեւորաց, ես 'ի պակասել աւելորդացն անդամ 'ի տրտունջ լուծանիմ. նա տուայտեալ անտուն, անզգեստ. իսկ ես ցանկամ նրբաթել զգեստուց, համադամ ճաշոյ, և յարդարեալ բնակարանի։ Ա՛զէ. երբ նմանեցայց ո-րում երկրպագեմս. ցերբ այսպէս հեռի շրջեցայց 'ի նմանէ։

Եւ ո՞կարէր երբէք ածել զմտաւ, զի թագաւորն թագաւորաց և տէրն տերանց, գայցէ յաշխարհ 'ի փրկել զմեզ, և չիցէ նմա 'ի զէպ ծնանել յարքունիս կայսերաց, արբանեկեալ յիշխանաց, զգուեալ 'ի թագուհեաց, ծածկեալ 'ի շղաշատեռս, 'ի ծիրանիս ականակուռ զարդարեալս։ Ա՛յլ Հայրն

յաւիտենական փոխանակարքունեաց սահմանեաց նմա զգոմ, 'ի պալատականս նմա զպաճարս, յորրանս նմա զմուր։ Հայրն երկնաւոր զիւր սիրելի Որդին զսուրբն սրբոց այսպէս խնամէ, որպէս զի մեք կասեսցուք յունայնութենէ աշխարհի, ծանիցուք զյարդ աղքատութեան, և սիրեսցուք, և ցանկասցուք որ 'ի նմա ծածկեալ գանձուցն։

Ցաւել և զայն. Քրիստոս Տէրն մեր ընտրեաց զաղքատութիւն և զաղէտս աղքատութեան, թէպէտ և ակն յայտնի տեսանէր զի այսպէս ոչ լինէր ընդունելի Իւրոյն զՄեսիայն խոստացեալ, և առողջութեան կենացն լինէր այն վնասարեր. այլ ինքն մտադիւր հպատակեցաւ կամաց յաւիտենականի Հօրն, առ ծառայելոյ նմա զհետ զնալով կամաց նորա անխտիր համակամ, որպէս սահմանեալն էր 'ի յաւիտենից. և ծնաւ 'ի վայրն և 'ի նուաստութեան, որպէս տուեալ էր նմա հրաման 'ի յաւիտենից։

ԻՂՁԲ

Հաւատամ, Տէր, այնմ ամենայնի զոր վարդապետեցեր բանիւք և օրինակաւ. հաւատամ զի երանելիք են աղքատքն հոգւով. և զի նոցա է արքայութիւն երկնից։ Հաւատամ թէ աշխարհ զհետ զնալով ճոխութեան՝ պատուոյ և հաճոյից, խաբի. քան-

զի իմաստութիւնն Յիսուս որ ոչ խաբի և ոչ զխաբելն կամի, ուստից մեզ զընդդէմն այնորիկ։

Ո՛վ ամենեին աղքատիկդ Յիսուս, հանդերձք քո, մսուրն և գոմ՝ են ինձ նշանք, որպէս երբեմն հովուացն Բեթղեհէմի, զոլոյ քո որդի Աստուծոյ՝ յորում՝ բնակէ լրումն Աստուածութեանն մարմնապէս. ընդ նոսա և ես աղաչաւոր յոտս քո անկեալ՝ երկրպագեմ՝ քեզ, Տէր իմ և Աստուած իմ։ Յաւէ ինձ յոյժ, զի աւելորդ ցանկութեամբք հանդստեան կենաց, և երկրաւոր բարեաց, եղէ ես պատճառ արտասուացդ. այն ինչ ծնեալ յաշխարհ՝ լայիր զթալից հեկեկանօք զանմտութիւնս իմ և զիղձս առ ունայնութիւնս, և զանյագ ցանկութիւնս իմ ստացուածոց։

Խրատեալ արդ և 'ի միտս եկեալ օրինակաւ քով, այժմ տեսանեմ զմեծագանձ ճոխութիւն աղքատութեանն, և սկսանիմ սիրել զնոյն և ցանկալ նմին։ «Քոյ աղքատին հանդերձ է մեծայարդ քան զհարուստ ծիրանիս, և աղքատութիւն քո շքեղ քան զամենայն ճոխութիւն, և քան զամենայն մեծութիւնս աշխարհի» (Ս. Բեռ.)։ Եւ խոստումն քո այն բազմաղեղ առ աղքատս հարիւրապատիկ հատուցման և զարքայութիւնն երկնից ժառանգելոյ, յորոյ ինձ լինին սիրելոյ իբրև զմայր զառաքինութիւնս զայս, և քան զբիբս աչաց զդուչանալոյ նմին, և հսկելոյ 'ի պահպանութիւն նո-

րին իբրև նախապարսպի և պատնիշի կրօ-
նիս։

Եւ զարհուրեալ յահաւոր ձայնէ անտի՝ «Վա՛յ ձեզ մեծատանց», նորոգեմ զուխտ աղքատութեան իմոյ։ Յամենայն սրտէ զարշիմ և մերժիմ յամենայն անկարգ ըղձից երկրաւոր բարեաց։ Անդարձ է ուխտ սրտիս. ոչ կալայց առ իս զաւելորդս կոչման իմոյ, և զկարևորսն ոչ ընկալայց առանց հրամանի, ոչ կալեցայց և 'ի սէր իսկ այնց որք 'ի պէտս են ինձ։

Եղէց անխտիր առ տեղիս և առ կերակուր, որչափ և աղքատինք իցեն և անարդք. և մեծապէս հաճ եղէց ընդ կարօտութիւն և ընդ աղքատութիւն, որք ընդ առաջ լինիցին ինձ։ Շատ է ինձ զի զտայց 'ի վայրն, յոր հաճեսցիս ինձ բնականալ և ծառայել քեզ. հիւղն այն ինձ լիցի պալատ հոյակապ։ Դու, Տէր իմ Յիսուս, աղքատդ ամենակարօտ, զու ես իմ զանձ, յորում հանդիցէ յայսմհետէ սիրտ իմ. մերկացեալս ցանկամ զալ զկնի մերկացելոյդ, զի դու ես իմ վարձ հարիւրապատիկ, նա և ամենայն ինչ։ Ո՛վ Տէր, որ լսողդ ես աղօթից աղքատաց, շնորհեա ինձ՝ մերկեալ յամենայնէ, քեզ միայն ճոխանալ։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՄՈՒՂ

Ա. Քրիստոս ուսուցանէ մեզ 'ի ծննդեան իւրում յարգել, սիրել և ցանկալ աղքատութեան. զի այն ինչ ծնեալ տարաւ մեծի անձկութեան աղքատութեան. ըստ բնակութեանն, ծնաւ արտաքոյ տանն և հայրենեաց, 'ի գոմն անբանից: Մեծ եղև աղքատութիւն նորա 'ի զգեստս, բազմեալ 'ի մսրի, յարգք էին փեսարալից նորա բարձք:

Բ. Կշռեա զաղքատութիւն քո ընդ Քրիստոսի աղքատութեանն. և զոր նմանութիւն գտանել կարիցես: Նա 'ի գոմն 'ի մսրի, և դու զբարեկազմ և զյարդարեալ խնդրես քեզ օթևան. նա յաղքատին զգեստս, և դու կամիս զգենուլ հանդերձս վայելչահիւս. նա անտեսրունչ, անոք, յանարգութեան, ընդ աղքատին հովիւսն, ընդ պաշարս. դու կամիս ունել զամենայն կարևոր խնամս, հաճոյ լինել ամենեցուն, պատուեալ և սիրեցեալ:

Ընթերցիր

Թովմ. Գեմբ. Գիրք Գ. Գլ. 18:

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԽՈԿՈՒՄՆ Ա.

ՓԱԽՈՒՍՏ ՅԻՍՈՒՍԻ ՑԵԳԻՊՏՈՍ

Մասն Ա.

Զմտաւ ած՝ ո՞ է որ խուսափէ. յումմէ՞ փախչի. ուր փախչի, երբ և ո՞րպէս։ Ամ-տուած, անկեալ 'ի կարօտութիւն, յաղքա-տութեան, անծանօթ 'ի մարդկանէ, անարդեալ յամենեցունց։ Խուսափէ 'ի չարու-թենէ մարդկան 'ի յղփացելոց 'ի լիութեան բարեաց, առ որս եկեալ է յառաջնորդել նոցա 'ի յաւիտենական փառս, յորոց 'ի սէր յանչափ փառաց յանչափ անարգու-թիւն ելեալ։ Եւ փախչի Յեղիպտոս, յան-ծանօթ աշխարհս, անոք, անօգնական, երթայ 'ի տառապանս վշտաց, առ 'ի լինել 'ի նախատինս յօտար աշխարհի անծանօթ մարդկանն։ Անդէն նորոգ ծնեալ յաշխարհ, յորում պահու այլք 'ի մարդկանէ և 'ի տա-նէ իսկ ածել արտաքս վշտաբեր համարին

մանկան։ Եւ ընդ մանկամարդ մօր իւրոյ ընդ անկոխ առապարս, ընդ անապատս և բազմավտանգ զաղանաբնակ ճանապարհս՝ միայնակ ընդ սրբոյն Յովսեփայ, ընդ երկար ճանապարհ մինչև յԵգիպտոս, տարեալ ամենայն խստութեանց օդոյ. և զի՞ մի՞ ասիցեմ. խորհեաց եթէ դու լեալ էիր ընդ Յիսուսի և ընդ Մօր նորա, և առ քեզ էր լեալ այդ հրաման, և դու կարող զոլով 'ի մի քթթել ական կորուսանել զամենայն թշնամիս քո, առնուիր յանձն զայս չափ վիշտս, փոխանակ կորուսանելոյ զթշնամիսդ հոգալով զփրկութիւն բազմաց 'ի նոցանէ։ Արդ տես եթէ որքա՞ն վշտաց տանիս դու 'ի սէր Փրկչին քո։ Նա որդի Աստուծոյ, վասն քո և 'ի սէր քո մարդացեալ, և դու որդի դատապարտութեան 'ի փրկութիւն հրաւիրեալ. և ստուեր անգամ համարիցի՞ զոր դուդ առնես։ Ո՛վ Հայր յաւիտենական, և ո՞ր իրաւունք են իմ. մեղաւոր ծառայիս լուծանիլ 'ի տրտունջ, եթէ զայս սպահանջես 'ի սրբոյն սրբոց յԱրդւոյ քումմէ։

Մասն Բ

Այժ ընդ միտ և զյեղանակ հնազանդութեանն, որով հան 'ի զլուխ զհրամանն։ Անդէն և անդ. զի ասէ. «Յարուցեալ զկնոջի զնաց յԵգիպտոս»։ Ընդ առնուլ զհրամանն՝ և կատարեաց։

Հնազանդեցաւ անպատճառ, առանց մատուցանելոյ 'ի քննութիւն զհրամանն, առանց պարսաւելոյ, թէպէտ և էին պատճառք ծանուցեալք հակառակք. թէպէտ և այս հրաման թուէր իմն հակառակ լուսոյ ուղիղ բանի։ Եւ իսկ՝ արժան Աստուծոյ իջանել յայս տկարութիւն, յանձն առնուլ խուսափել 'ի ցասմանէ մարդոյ։ Եւ միթէ պակասէին առ Աստուծոյ հնարիք զիւրք զիջուցանելոյ զցասումն Հերովդի, առ 'ի թերծանել 'ի դատանաց նորա, առ 'ի թերև հանել զամբարիշտ ճիգն նորա։ Դա եթէ և էր իսկ հարկ խուսափելոյ, առ ինչ յԵգիպտոս և ոչ առ մոգսն։ Գոնեա ասացեալ էր զժամանակն մնալոյ յԵգիպտոս։ Բայց նա ոչ տայ տեղի այս ամենայն պատճառաց. հնազանդի անպատճառ և մտադիւր։

Ցիսուս որդի Մարիամու Կուսին յանձն լեալ 'ի կամս Հօրն՝ անկանի 'ի ճանապարհ։ Ահա օրինակ ճշմարիտ հնազանդութեան, զոր պարտի յանձին բերել որդեգիրն Մարիամու, եղբայր Ցիսուսի. մտադիւր պարտականն առ ամենայն հրաման երթալոյ ուր և առաջնորդեսցի։ Ո՛վ. որպէս յամօթ առնէ զմեզ այս օրինակ Ցիսուսի, 'ի տհաճիլ մեր, 'ի տաղնապիլ, յանկանիլ 'ի հոգս, 'ի խռովել և 'ի քրթմնջել վրդովեալ անձամբ, յորժամ հրամայէ մեզ երթալ ուր չիցէ հաճոյական մերոց ըղձից. զոլով մեր անվստահք ընդ բարութիւնն Աստուծոյ, և ոչ կամեցեալ յանձն լինել բարեբար խնամոյ նորա։

Մասն Գ.

Զմտաւ ած զպատճառս զհետ գնալոյ յայսմ օրինակի Քրիստոսի Տեառն մերոյ. որք թէպէտ յայտնիք իցեն, և յաճախ երկրորդեալք, բայց ոչ է պարտ դադարել յերկրորդելոյ՝ որ ինչ զօրաւորք են ազդել՝ի միտս։ Առաջին է զի — Հրամանք մեծաւորաց են կամք Աստուծոյ. — Թող վրիպեսցի առաջնորդն, կամ խաբեալ՝ի միտն, կամ ներհակեալ՝ի կամն. բայց առաքումն քո յայս կամ յայն վայր է կամքն Աստուծոյ։ ՑԱստուծոյ կարգեալ է ամենայն ինչ. առանց նորայն կամաց ոչ անկցի ճնճղուկ, և ոչ մազ մի՝ի հերացդ։ Ամենայն ինչ, ամենայն տնօրինի յԱստուծոյ բաց՝ի մեղաց։ Եւ զմեղս թէպէտ ոչ կամի, այլ միայն թողու. և որ ինչ զհետ զայ մեղացն, զայնոսիկ ևս կամի։ Ատելով ատէ և պատուհասէ զխոտորնակ գնացս չար կամաց քոց, և զդիւրահաւան բարս առաջնորդաց քոց, և զնոցա ընդդիմակ խորհուրդս, յորոց թերևս իցեն առաջնորդեալք՝ի սահմանելն վասն քո զայս կամ զայն վայր. ծակայն և այնպէս՝ են կամք Աստուծոյ զի դու զնացցես անմոռնչ, այո, սիրեսցեալդ, այն է կամքն Աստուծոյ հաւատի։

Երկրորդ պատճառ. — Վայրն այն սահմանեալ քեզ՝ի հնազանդութենէ քան զայլ ամենայն տեղիս՝ է քեզ դիպողազոյն.

վան զի Աստուած ամենազէտ քաջ ճա-
նաչէ զ'ի զէսն և զպատշաճ փրկութեան
հոգւոյ քո, առողջութեան մարմնոյդ, և
պատուոյ անձինդ։ Եւ զի ամենազօր է,
կարէ իսկ տալ քեզ, և կամի. զի սիրէ յոյժ
զքեզ։ Ա.Հ. Նա ինքն ասէ, եթէ սիրէ զքեզ
առաւել քան զհայր, և կրէ զքեզ 'ի զրկի
զթով՝ առաւել քան զայեակ զմանուկ իւր.
և զգուշանայ քեզ առաւել քան 'ի բիբս ա-
չաց իւրոց. ապա և տեղին այն, զոր քեզ
սահմանէ ամենախնամ Տէր քո 'ի ձեռն
հնազանդութեան, է քեզ պատշաճագոյն
քան զամենայն, և զիպողագոյն առ ստա-
նալոյ զկատարելութիւն և զյաւիտենական
փրկութիւն։ Ա.Հ. որ անխտահ լինի 'ի բա-
րութիւն նորա և 'ի հայրախնամ զորով սի-
րոյ նորա, 'ի սիրտ հարկանէ զնա։

Պտուղ այսր խոկման է հաստատուն
և անդարձ խոստումն ապաստան լինելոյ
հոգւով և մտօք 'ի զիրկս նախախնամու-
թեանն Աստուծոյ, ուխտ եղեալ չվանդրել
և ոչ հնարել վասն տեղւոյ իրիք,
այլ պահպանել իբրև զանգին և զցանկալի
ինն զոհար երկնաւոր զանխտիր համակա-
մութիւն առ ամենայն կողմանս աշխարհի,
և առ ամենայն տառապանս վայրաց և վա-
նատանց։

Եւ յայսմ անխտիր համակամութեան
պարտ է կալ և յամենայն մանուն։ ա. Ցայն
ինչ բնակարանի, յանձուկ և անճահ սե-
նեկի, յանյարդար մահճի, յանճաշակ կե-

բակուրս և յանհարթ զգեստս։ բ. Անխտիր համակամ անոսպայ ընկերաց, տաղտկացուցչաց, հակառակասիրաց զտելոց անդէն։ գ. Անխոհեմ և հակառակ առաջնորդաց անդ կացելոց։ դ. Զարամիտ և անշնորհակալու աշակերտաց, հպատակաց, անկիրթ, չար և ապերախտ մարդկան։ ե. Երկար անհանդիստ և բաղմավտանգ ճանապարհաց. նա և առ ամենայն ազգս զառնութեանց միանգամայն պատրաստ կալով։

ԻԴՁԲ

Ա. յո՞հաւատամ, Տէր իմ. խնամք զթութեան քո վարէ զամենայն, և ձգտի 'ի ծաղաց մինչ 'ի ծաղս օգտակար առողջութեամբ, և զարմանէ զամենայն քաղցրութեամբ։ Եւ ոչ ինչ ծածկի յաչաց քոց, և զիտես որ ինչ պատշաճական իցէ վասն իմ, և կարես իսկ տալ. «Քանզի մօտ է առ քեզ յորժամ կամիցիս կարող լինել»։ Ապա և ինձ տացես զանկատրն, եթէ ոչ ընդդէմ ելցէ չարութիւն իմ քումդ բարութեան։

Խոստովանիմ հաւատալ այսմ ամենայնի. այլ ես, Թշուառ և կոյր, կամեցայ խուսափել 'ի զրկաց քոց, և կալ արտաքոյ խնամոցդ. յայնոսիկ վայրս, յորս առաջնորդեցին ինձ անմիտ յօժարութիւնք բաղձանացս. ցաւէ ինձ մեծապէս... Երկնչիմ Տէր, զի Աստուած վրէժխնդիր ես. մի զուցէ 'ի վայրն, որում փափաքեմն, պաշա-

բեսցես զիս 'ի ցաւս, թողցես զիս անկանել 'ի փորձութիւնս, վտանգել 'ի վիշտս, և պարտեալ անկանել 'ի մեղս. և զի զիտեմ զի յորմէ ետն հրաժարիմ դժկամակեալ, անդանօր պահեսցես զիս զերծ յամենայն աղէտից։ Թող ինձ, ահա ուխտեմ հնազանդել ամենայնիւ։

Ահա, «Հայր զթութեան, ահա'ի ձեռս քո եմ. զու զիտես զամենայն և զմէն մի. առանց ակնարկութեան քո և խնամոց ոչ ինչ լինի յաշխարհի։ Զու զիտես որ ինչ պէտք իցեն առ կատարելութիւն իմ։ Զիր զիս ուր և կամիս, կամ 'ի ձեռս քո պատրաստ առ ամենայն ինչ» (Գեմբ.)։ Եթէ կամիս բնակել ինձ 'ի մթան և յանարգ վայրի, եղիցիս օրհնեալ. եթէ կամիս բնակել ինձ յանդորր վայրի հանգստեան, եղիցիս օրհնեալ. Ցէր ես, որ ինչ բարի է յաչս քո, արա։ Պատրաստ է սիրտ իմ, Աստուած, պատրաստ է սիրտ իմ, պատրաստ առ ձախողակս, և պատրաստ առ յաջողուածս։ Եւ յօժարամիտ բերիմ յայսոսիկ, ոչ միայն «Զի զու թաղաւոր զօրութեանց զամենայն չափով և թուով և կշռով կարգեցեր, այլ զի և բազում խնայութեամբ զարմանեաս զմեզ», կարգեալ զամենայն առ մեր բարութիւն, մանաւանդ և զչարն փոխելով մեզ 'ի բարիս։ Արդ արկանեմ զանձն իմ անձնանուէր բոլորովին 'ի զիրկս հայրական խնամոց զթութեան քո՝ ասելով. Արա ընդ իս որպէս զիտես և կամիս. քանզի զիտեմ զի սիրես զիս։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ա. Աչ զմտաւ զպատճառսն՝ որք գժուարին առնէին զփախուստն. Ո՞է որ խուսափէ, – Աստուած. Յումմէ՞ փախչի, – 'ի յարութենէ մարդկան. Ո՞ւր, – յանծանօթ յաշխարհ. Ե՞րբ, – նորոգ ծնեալ. Ո՞րպէս, – ընդ մոր իւրոյ, ընդ անտպատս, ընդ բազմավտանգ ճանապարհ:

Բ. Ո՞րպէս հնազանդեցաւ. անդէն և անդ, անպատճառ և մտադիւր:

Գ. Զմտաւ աչ զպատճառս զհետ գնալոյ Յիսուսի. ա. Հրաման առաջնորդաց գնալոյ յայս կամ յայն տեղի, է կամքն Աստուծոյ: Զի որ ինչ պատահէ յաշխարհի, բաց 'ի մեղաց, ամենայն անօրինի 'ի կամացն Աստուծոյ: Եւ զմեղս թէպէտ ոչ կամի, այլ թոյլ տայ, և որ ինչ զհետն գայ մեղայ՝ կամի և զնոսին: Բ. Վայրն այն ցուցեալ քեզ 'ի հնազանդութենէ, դիպողագոյն է վասն քո: Զի Աստուած ամենագէտ, ճանաչէ զօգտակարագոյնն բարւոյ քո. և զի է ամենազօր, կարէ տալ քեզ զնոյն. և զի սիրէ յոյժ զքեզ. կամի տալ քեզ: Վստահ լեր 'ի նա. արա ըստ կամացն նորա, և առցես զփարձ նորա:

Պտուղ խոկմանս է հաստատուն ուխտ ապաստան լինելոյ ամենայնիւ 'ի նախախնամութիւնն Աստուծոյ, և լինել անխտիր համակամ առ ամենայն տեղիս:

Ընթերցիր

Թուվ. Գ. մաս, Գիրք Գ. Գլ. 13:

ՊԱՐԱԳՈՒՄՆ

Պատրաստութիւն առ ձայն կոչմանն.

Ա.

Պարտ է նմանել Քրիստոսի Ցեռան մերոյ, առ 'ի կարող լինել ծառայել Աստուծոյ մերոյ՝ զհետ գնալով կամաց նորա։ ա. Ցայն աստիճան կատարելութեան, զոր ցուցցէ մեզ ինքն յայսմ կրթութեան։ բ. Կատարեալ անխտիր համակամութեամբ առ ամենայն ինչ, ոչ ինչ 'ի բաց առեալ, և ոչ սահման եդեալ շնորհաց նորա։ գ. Ոչ միայն 'ի բաց հեռացուցեալ զախտաւոր բերմունս առ աշխարհի իրս, այլ և տածելով 'ի սրտին յօժարամտութիւն իմն սուրբ առ լաւագոյնն, և բաղձալով կատարելագունին։ Բայց զրզիոք բնութեան վեցեքին ջանան ամենայն զօրութեամբ հեռացուցանել զմեզ յայսմ ոսկեղինիկ պատրաստականութենէ սրտի։ ա. Պատիւք աշխարհի, բ. Գրզիոք մարմնականք, գ. Վայելք ճոխութեանց, դ. Անչափաւոր սէր հայրենեաց, կամ տեղւոյ իրիք, և. Ունայն ցանկութիւն անուան առաջի աշխարհի, և ցուցանելոյ զհանճար մտաց, զ. Աւելորդ սէր ազգականաց, և կամ այլոց ինչ իրաց աշխարհի պատշաճելոց առ մարմին։ Այսո-

քիկ են խորհուրդք թիւնաբերք որք հնա-
րին ապականել զսիրտս և զրկել զմեզ 'ի
վախճանէն մերմէ։

Քրիստոս հրաւէր կարդայ մեզ յար-
քունիս կատարելութեան, 'ի խորհրդական
ընթրիս. բայց յաճախակի թողումք ասել
զմէնջ. իսկ նոքա յուլացեալ դնացին՝ ոմն
յայգարակ իւր, — այս հպարտութեան տա-
զտանք. և՝ ոմն 'ի վաճառ իւր, — այս է շա-
հասիրութիւն. Ա.յլ ոք կին էած, — այս հեշ-
տասիրութեան ցանկութիւն։ Ա.յսոքիկ ե-
րեքին խայծք, որք պատրեալ դանդգոյշս
կարթեն և ձգեն 'ի բաց 'ի ջինջ աւազանէ
առաքինութեան, 'ի ծառայութենէն Ա.ս-
տուծոյ, և 'ի գնալոյ զհետ Քրիստոսի. այս-
ինքն 'ի վախճանէ իւրեանց։

Ա.յլ բաց յայսոցիկ խայծից սովորա-
կանաց՝ այլս ևս առաւել զիւրախաբս և
քաղցունս 'ի վար արկանէ թշնամին. զի 'ի
մերժելն և 'ի խուսափել յառաջնոցն, 'ի
քաղցրութենէ վերջնոցս բերեալք խղճ ան-
նիցիմք առ 'ի կլանել զկարթն՝ կամ առ 'ի
պարանիլ յուռկանն։ Զի զյաղթողն ցան-
կութեանց պատուոյ, հաճոյից և ճոխու-
թեան, հնարի կապել 'ի սէր հայրենեաց
այնպէս, զի եթէ կամիցի Ա.ստուած զծա-
ռայութիւն նորա յայլ տեղիս, կամ մեր-
ժեսցէ յանձնէ ծառայել նմա, և կամ զժ-
կամակութեամբ վաստակեսցի։ Իսկ այլոց
որք մտադիր յանձն առնուցուն գնալ ընդ
Յիսուսի յամենայն վայրս, քաղցրացուցա-

նէ և նոցա թշնամին զայլ ինն զրգիռ մտաց, ծառայելոյ նմա յայնոսիկ ևեթ պաշտամունս՝ որք զաչս խատղեն փայլմամբք իւրեանց, և մեծահամբաւ հռչակեն զանուն նոցա առաջի բազմութեան մարդկան, տալով նոցա ասել ցանձինս. Զինչ ասա. Աստուած ետ ինձ յաջողամտութիւն, և յաջողակութիւն 'ի գործ, և ես կամիցիմ թաղել վատութեամբ զտաղանդն որ ինձ հաւատացաւ, և ապա լսել 'ի Քրիստոսէ զկշտամբանս քանզարաթապոյց ծառային. Յայտնեա զանձն քո աշխարհի։ Այսպէս և սոքա կուրացեալ մտօք, ոչ զնան զկնի լուսոյն, որ առաջնորդէ նոցա առ երկնաւոր լոյսն մեծ ևս կատարելութեանց։ Եւ զայլսն ևս առաւելութեամբ կապեալ թշնամին բնական յօդիւ սիրոյ ազգականաց, բարեկամաց, հասակից և աւելորդաց, անկուրս գործէ հրաւիրանացն Յիսուսի, որ է աղբիւր ամենայն սիրոյ։ Եւ այսպէս 'ի մին կամ 'ի միւսն 'ի հաղբից ըմբռնեալք յանզգուշից՝ կասին յայնմ ոսկեղինիկ առաքինութենէ, որ միայն կարէ առաջնորդել մեզ գնալոյ զհետ կամացն Աստուծոյ ամենայնիւ, այսինքն՝ վախճանին մերոյ։

Արդ հնարք հանճարիմացք, առ 'ի սրբել 'ի բաց զայսոսիկ խոչն, են՝ ունել յանդիման աչաց զօրինակ Փրկչին. յորում նկատեալ զխոնարհութիւն, զխստութիւն կենաց, և զծանր աղքատութիւն, որոց տարաւ ինքն 'ի մարդեղութեան և 'ի ծնն-

դեան իւրում, քաջալերիմք ոչ միայն արհամարհել զպատիս, զճոխութիւն և զհաճոյս, այլ և յորդորիմք յանթերի, յանխտիր համակամութիւն առ ամենայն վայրս, առ ամենայն պաշտամունս, առ ամենայն աստիճանս առաքինութեանց, 'ի խոկալն զփախուստ նորա յԵգիպտոս, զդաղանի կեանս նորա, և զկալ մնալ նորա 'ի տաճարին։ Յակնարկելն 'ի վախուստն Յիսուսի յԵգիպտոս, թօթափեմք յանձնէ զմեղկ յօժարամտութիւնն՝ որով է երբէք զի յաչս զնեմք զայս կամ զայն վայր, և լինիմք զուարթունք և պատրաստք 'ի բնակել ուր և հրամայիցիմք։ Դաղանի կեանքն Յիսուսի բթացուցանէ 'ի մեզ զապերասան ցանկութիւն ելանելոյ 'ի հոչակ, հրապարակելոյ զհանճար մեր։ Դարձեալ Յիսուս անտես առնէ զՄարբն և զՅովսեփաւ, զորս սիրէրն յոյժ, առ 'ի ծառայել երկնաւոր Հօր իւրոյ, յաղթէ յօժարամտութեան իւրոյ առ ազգականսն երանելոյս. սովին արիացուցանէ զմեզ խորտակել զյօդակապս արեան, և գնալ զկնի կոչմանն Աստուծոյ, յոր զմեզ կամիցի հրաւիրել, թէ և առ մեծ կատարելութիւն իցէ կոչումնս։

Յոյժ ճահոզական կարգօք շղթայացեալ են մասունք կրթութեանս. արդ յետ այլոցն ամենայնի յորդորիմք յօրինակէն յուզղութիւն. և արդարև չիք այնպէս զօրաւոր զրդիռ մտաց քան զազգումն օրինակի։ Եւ ըստ առաւելութեան յարգանաց

պաղափարին, առաւել լինիցի զրգիռ մտացն նմանելոյ գործոց նորա։ Ապա յայտ է՝ թէ որպէս անընդդիմակ համոզակեր լինիցի 'ի սիրտ պարապելոյն 'ի խոկումն, տեսանել զի աղքատաս այս՝ է Աստուած տէրն ամենայնի. վշտատարս այս 'ի ցաւս և 'ի վաստակս՝ է Աստուած աղբիւր երանութեան. խոնարհս այս անարգեալ և ծանակեալ՝ է Աստուած ամենազօր և ամենաբաւ։ Եւ ո՞ յանզգնեսցի յանդիման օրինակիս զգլուխն 'ի վեր ունել 'ի բարձրավիզ յոխորտանս, զգուել զմարմինն, խոյս տալ յաղքատութենէ։ Տեսեալ զՅիսուս փախստական յԵգիպտոս, ընդ երեսուն ամս ծածկեալ 'ի կրպակի, և զի հպատակեալ կամաց Հօրն երկնաւորի լքանէ երբեմն զաղտ և լի ցաւովք գիւր սիրելի զմայրն. և մեք չկամիցիմք զբնակութիւն անհանգիստ, զանարդ պաշտամունս. և խնուցումք զականջս առ ձայնն Աստուծոյ, որ զթովք սիրայորդոր կոչէ զմեզ առ ինքն 'ի ծառայութիւն կատարելագոյն աստիճանի։

Բ

Ի կրկին ազգս վիճակի կենաց Յիսուս նկաց մեզ օրինակ. առաջինն է պահպանութեան պատուիրանացն Աստուծոյ, որ է առաջին վիճակ, և է վիճակ հասարակաց մարդկան. առ որ պարտի ամենայն ոք

համաձայնիլ 'ի ծննդենէ մինչև ցմահ, եթէ կամիցի լինել որպի փրկութեան։ Եւ այսր զաքանչելի զօրինակ ետ մեզ Յիսուս կալով 'ի հնազանդութեան ծնողաց իւրոց. «Եւ էր նոցա հնազանդ»։ Իսկ երկրորդին զօրինակ ետ յորժամ զնաց 'ի տաճարն զաղտ 'ի ծնողաց, լքեալ անտեսեալ զմայրն, զի պարապեսցի 'ի պաշտօն երկնաւոր Հօրն. և այս է կոչումն աւետարանական կատարելութեան և հնազանդութեան. զի անդանօր հեռացեալ 'ի խնամոց տան իւրոց ծնողացն, և յարաւաքին մխիթարութեանց զորս կարէր ընդունել 'ի մօրէն և յընտանեացն, զուրկ յամենայնէ ետ զանձն բովանդակ 'ի ծառայութիւնն Աստուծոյ 'ի տաճարին։ Յորում եցոյց պատկեր իմն կրօնաւորական կոչման. և յայտնեաց ևս զի պարտիմք լինել անխտիր համակամ մնանելոյ և յայս կոչումն, եթէ Աստուած Տէր ամենայնի, սահմանեալ իցէ մեզ ծառայել ինքեան յայնմ կոչման։

Աւյսոցիկ երկուց կոչմանց զանազանութիւն յայտնապէս տեսանի յաւետարանն Մատթէոսի տուեալ 'ի Քրիստոսէ. 'ի հարցանել պատանւոյն. «Վարդապետ բարի, զինչ արարից զի զկեանս յաւիտենականս ժառանգեցից. ասէ ցնա Յիսուս. Եթէ կամիս մտանել 'ի կեանս պահեա զպատուիրանս»։ Այս է ահա առաջին կոչումն հասարակաց ամենեցուն մարդկան. առաջին՝ զի զայս պարտ է ընտրել այն ինչ

'ի զարթնուլ լուսոյ բանին. և է հասարա-
կաց, զի է կարեւոր ամենեցուն առ փրկու-
թիւն։ Բայց 'ի պատասխանել պատանւոյն։
«Զայդ ամենայն արարի 'ի մանկութենէ իմ-
մէ, արդ ի՞ւրիք պակաս իցեմ. ասէ ցնա
Յիսուս. Եթէ կամիս կատարեալ լինել,
երթ վաճառեա զինչս քո և տուր աղքա-
տաց, և ունիցիս գանձս յերկինս. և եկ
զկնի իմ»։ Ահա երկրորդ կոչումն, որ հա-
նէ յաւետարանական կատարելութիւն։
Զայս պարտ է ընտրել առանց յերկմիտ
խորհուրդս տատամնելոյ, յորժամ յայս
կոչիցիմք յԱստուծոյ. որ ոք կոչեցեալ՝ և
ոչ ընտրէ զսոյն, 'ի վտանգ զյաւիտենա-
կան փրկութիւն իւր արկանէ, զարհուրեա-
ցի յանձն. զի մերժէ յանձնէ զմիջնորդն
փրկութեան իւրոյ, զոր առաջի առնէ նմա
Աստուած։

Բայց արժան է զիտել զի քննութիւն
ընտրութեան կոչմանն սկսանի 'ի խոկմա-
նէ մեալոյ Յիսուսի 'ի տաճարն. յորում
ժամու եթող զտուն իւր առ 'ի պարապել 'ի
ծառայութիւն Հօր իւրոյ երկնաւորի։ Եւ
թէպէտ այն է ժամանակ կարգեալ առ 'ի
խորհել զկոչմանէն՝ զոր ընտրել ունիցի ոք,
բայց ոչ է պարտ արգելուլ ներքին բեր-
մանն՝ որ յօժարեսցի պարապել յընտրու-
թիւն այսր կամ այնր վիճակի կոչմանն.
միայն չատ է զի մի յոյժ ընդերկար 'ի նոյն
ղժամս ծախեսցուք։ Իսկ որք յառաջագոյն
յանքակ իմն կոչումն կապեալք իցեն, և

ճիղն նոցա պարտի լինել 'ի ժամանումն յեւ բարձրագոյն կատարելութիւն։

Գ.

Առ բարւոք ընտրութիւն երեք են զի-տելիք. ա. Պատրաստականութիւն հոգւոյ ընտրողին։ բ. Յեղանակն բարւոք ընտրութեան։ գ. Նիւթն, այսինքն՝ Մասունք ընտրութեանն։ Պատրաստականութիւն հոգւոյն է, ըստ կանոնագրոյն, ունել կատարեալ անխտիր համակամութիւն առ ամենայն ինչ. մերժել յանձնէ զանկարգ բաղձանս. զարթուցանել 'ի սրտի զյօժարամտութիւն մեծ առ մեծագոյն կատարելութիւն։ Եթէ այսոքիկ մերձ ոչ իցեն, սիրտն՝ է զի յամառեալ կայ զդէմ ունելով ազգման շնորհաց, և է զի տկարանայ կալ ընդդէմ յարձակման կրից, որք հնարին խոտորեցուցանել զնա 'ի վատթարն. և է զարձեալ զի մթագնեալ մտացն՝ ոչ կարէ ճանաչել զլոյս շնորհացն, որ յառաւել կատարելութիւնս առաջնորդէ նմին։

Զյեղանակէն բարւոք ընտրութեան ասասցուք զկնի վաղուեան խորհրդակցութեանն։ Զորմէ առ ժամս պարտ է զիտել զի երեք ժամանակք են ընտրութեան։ Առաջինն է անընդհատ յայտնութիւն կամացն Աստուծոյ, յորում՝ ոչ է երկբայութիւն. որպիսի էր կոչումն սրբոյն Մատթէի, և սրբոյն Պօղոսի. բայց այս է առանձին

իմն չնորհք Աստուծոյ, և է արտաքոյ բա-
նի մարդոյ, զոր ոչ է մարթ խնդրել, որում
և ոչ մնալ հրամայիմք։ Երկրորդ ժամա-
նակն է՝ յորժամ ներքին իմն ազդմամբ բե-
բի ուժգին, որպէս զի առանց խորհելոյ ան-
զամ զայ յընտրութիւն իրաց ինչ։ Երրորդ
ժամանակն է՝ յորժամ խորհելով ընդ միտս
ե՛ի քննութիւն ածեալ, և երկուստեք զպատ-
ճառսն կշռեալ, առաջնորդէ կամացն ըն-
տրել զայն՝ զոր լաւագոյն տեսանէ։ Այսո-
քիկ երեք ժամանակք զանազանեն՝ի պատ-
ճառսն՝ որովք լինին ընտրութիւնք։ Յա-
ռաջնումն՝ աներկմիտ հաստատութեամբ
ճանաչելով իմն զազդումն լեալ յԱստուծոյ,
կամքն բերի յընտրութիւնն։ Յերկրորդումն՝
կամքն յօժարի յընտրութիւնն ոչ աներ-
կրայ ստուգութեամբ, այլ զհաւանականու-
թիւն ունելով ինքեան առաջնորդ՝ լինել
այնր կամաց Աստուծոյ։ Յերրորդումն՝
միտքն իւրով հանճարով կշռեալ զպատ-
ճառսն երկուստեք հաւանելոյ կամ մեր-
ժելոյ, ՝ի հաւան ածէ զկամսն առ՝ի յըն-
տրել զմին կամ զմիւսն։ Այնպէս զի յա-
ռաջին յերկուս ժամանակսն՝ կամաց հա-
ւանութիւն յառաջէ քան զընտրութիւն
մտացն. իսկ յերրորդին՝ մտաց ընտրու-
թիւն յառաջէ քան զհաւանութիւն կա-
մացն։ Երկոքին առաջինքն են առաւել զե-
բաղանցք, իսկ երրորդն է զիւրազոյն, և
պատշաճական բնութեան մերոյ։ Այլ և
յերկրորդին ևս պակասելով աներկրայ

ստուգութեան լինելոյ կոչմանն յԱստուծոյ, ապահովագոյն է առնել քննութիւն, արկեալ զնոյն ընդ դատաստանաւ մտաց։

Այսօր ոչ է ժամանակ խոկալոյ 'ի վերայ մասանց ընտրութեանն, այլ միայն առաջի առնել և որոշել զկոչումն՝ զոր կամք են առնուլ 'ի քննութիւն. և այս որոշումն է 'ի վերայ երկուց այսոցիկ, թէ արդեօք շատասցի՞ ոք պահպանութեամբ պատուիրանաց, կամ թէ խրատուցն ևս կամիցի՞ զնալ զհետ։ Եւ եթէ առնուցու յանձն զխրատսն, արդեօք 'ի կրօնի՞ եթէ արտաքոյ կալով ընտրեսցէ զայն. եթէ 'ի կրօնի, յորո՞ւմ արդեօք, և երբ, և որպէս։ Այլ յընտրելն զկրօն, երկուց իրաց պարտ է զգոյշ կալ. մի՝ զի չիցէ կրօնն թուլացեալ յառաջին կարգացն. և երկրորդ՝ զի մի 'ի զօրութիւն և 'ի կամս իւր ևեթ հայեսցի, այլ և յայն՝ զի ունիցի՞ զկարևոր ձիրսն և զհանճար, որք խնդրին ըստ սահմանադրութեան կրօնին։ Եւ յետ ճանաչելոյ ուրուք լինել կոչմանն յԱստուծոյ, և հաստատելոյ 'ի նոյն, չէ պարտ նմա յապաղել 'ի գործ. զի մի գուցէ 'ի յապաղելն և չնորհն հեռասցի 'ի նմանէ։

Երկրորդ մասն ընտրութեան են հնարքն ձեռնտուք՝ որովք 'ի կոչմանն ընտրելոյ կարեմք ժամանել յառաւել բարձրագոյն աստիճան կատարելութեան և սրբութեան։ Հնարքս այսոքիկ են՝ մտադիր փոյթ 'ի լրումն հանապազորդեան պարտուց կոչ-

մանն, եւ անդադրն աղօթք, անդուլ զգաստութիւն խորհրդոց, յաճախել 'ի սուրբ խորհուրդս. անպակաս առնել զկրկին քննութիւնսն՝ զընդհանուրն և զառանձին, փութաջան ճիգն 'ի կրթութիւն առաքինութեանց, մանաւանդ խոնարհութեան, մեռուցման, աղքատութեան, և անխտիր լինելոյ առ ամենայն պաշտամունս գործոց, առ ամենայն տեղիս, անդադար մարտիս առ 'ի նուաճելոյ և արմատախիլ առնելոյ նա և զարմատս մանունս անկարգ յօժարութեանց սրտին։

Պարտ է ևս ճանաչել և սահմանել զյեղանակն, որովք հնար իցէ հանել 'ի կատարելութիւն զառօրեայ գործս՝ սրբելով 'ի սովորեալ թերութեանց, եթէ արժանն իցէ փոխել զյեղանակ աղօթիցն յայլ իմն կարգ օգտակարագոյն, և կամ զխոստովանութեանն, կամ զմերձենալոյ 'ի սուրբ խորհուրդն կամ պատարագելոյ, կամ եթէ իցէ՞ պէտք ժամանակաւոր ուխտիս հանառօտել զչափ քնոյն, կամ առնել հանապազորդ խոկումն ինչ կամ պարապումն հոգեւորական, և կամ ամիսոփումն մտաց ամիս յամսոյ, և այլ ինչ գործ այսպիսի։

Մարթ է ևս առնուլ 'ի քնին, ա. Ո՞ր ինչ պարտ իցէ նորոգել յաղքատութեան մասին. եթէ իցէ՞ արժան 'ի վայելից այսր կամ այնր հրաժարել ամենեին, և յաւելորդացն այնոցիկ։ բ. Ո՞րպէս իցէ հնար ելանել 'ի բարձրագոյն իմն աստիճան խոս-

նարհութեան. զոր անարգանս խնդրել և յորոց պատուոյ հրաժարել։ Եթէ կամ ի ցիմք արիական իմն լուութեամբ տանել նախատանաց ստորնադունից, ստգտանաց, զրպարտութեանց հասակակցաց, և հարստահարութեանց առաջնորդաց. կամ թէ արժան իցէ պատասխանել, պաշտպանել անձին, յայտնել զարդարութիւն, զրկել զանձն 'ի մեծագոյն վտխարինացն արդասեաց։ գ. Զոր զործս մեռուցման յանձն առնուլ հանապազօրեայ, զոր կանոն սահմանել մեռուցման ըստ կարի յամենայն զործս. ժուժկալել յուտելոյ և յըմպելոյ արտաքոյ քան զսահմանեալ ժամանակս. որպէս 'ի չափու ունել զկերակուրն հանապազորդ։ դ. Ի զէպ իցէ ինքնամատոյց նուիրել զանձն 'ի կամս առաջնորդաց անխտիր առ պաշտամունս, առ տեղիս, և յայնոսիկ՝ յորս կրէ որ մեծ զժկամակութիւն. և կամ՝ հաստատութեամբ զնել 'ի մտի և ուխտիւ կապել զանձն երբէք չտալոյ երկրորդել յիմիք զհրաման և զկարգաւորութիւն նոցուն։ և. Որպէս պարտ իցէ յաղթել անժոյժ ըղձից արենակցաց կամ բարեկամաց, ակնառութեան մարդկան, և բուռն կրից։

Երրորդ մասն ընտրութեան է յառանձին զործս. զոր օրինակ թէ արժան իցէ առնուլ յանձն կամ մերժել զպաշտօնն զայն կամ զպատիւ, և կամ զպարգևն մատուցեալ. որպէս վարել յայս կամ յայն

գործ. արժան իցէ խնդրել զառաքելութիւն
'ի Հայաստան կամ այլուր. կամ զպաշ-
տօն հիւանդապահի, կամ զվարժապետի
ստորին դասուց աշակերտաց։ Ի յանձնեալ
պաշտամանն զմի ուղղութիւն պարտ իցէ
ցուցանել, զմի հնարս մարթ իցէ և պարտ
'ի գործ արկանել յօգուտ և 'ի փրկու-
թիւն հոգւոց։ Եւ յայսմ ամենայնէ յայտ
է՝ զի զլխաւոր նպատակ նորոգելոյ զընտ-
րութիւնն է հաստատուն ուղղութիւն վա-
րուց, կամ նորոգութիւն՝ զոր պարտ է առ-
նել իւրաքանչիւր ումեք 'ի կոչման իւրում։
Արժան է գիտել, զի 'ի յիշատակեալ մա-
սունսդ ոչ է պարտ որոշեալ սահմանել զա-
մենայն, այլ զայս ինչ կամ զայն և կամ
զայլ նմանագոյն ինչ ըստ բերելոյ հարկին
պիտոյից իւրաքանչիւրոց։ Բայց զոր և կա-
միցիս խորհել և ընտրել, պարտ է ջանալ
զի իցէ ուղիղ և սուրբ մտաք. քանզի ստեղ-
ծեալ եմք յօրհնել զԱստուած և հոգալ զփր-
կութիւն մեր, և ոչ այլոյ իմիք պարտիմք
ցանկալ, այլ միայն որ ինչ իցէ 'ի պատիւ
Աստուծոյ և 'ի փրկութիւն մեր։

Իսկ դիպողագոյն ժամանակ կրթու-
թեան այսր ընտրութեան է ժամանակն
խաղաղութեան։ Եւ խաղաղութիւն է յոր-
ժամ սիրան անխռով ոչ յուղի 'ի զանա-
զան կրից։ Այս լաւ ևս առնուլ 'ի միտ, զի-
տայ զի սիրան կարէ յորդորիլ, ա. Միայն
'ի հոգւոյ բարւոյ ընդ ճանապարհ մխիթա-
րութեան։ բ. Միայն 'ի չար հոգւոյ՝ բռնա-

դատութեամբ անյուսութեան։ գ. Եւ յերկուցն միանգամայն, զզալով յանձին զընդդիմակ կիրս։—Պարտ է զզոյշ կալ չընտրել յայս յերկոսին վերջին ժամանակս յուզելոյ հոգւոյն. և յառաջինն ևս են ինչ ինչ արժանիք զննութեան, զորմէ լիցի բան 'ի վաղիւ։

Ա.յլ յամենայնի կացեալ յերկբայս՝ եթէ 'ի մեծ ինչ գործ և եթէ 'ի փոքր, պարտ է մատչիլ 'ի փորձ գործով ընտրութեանն. և այս է ապահով իմն շաւիղ առնելոյ ուղղութեամբ զընտրութիւնս և ըստ կամացն Աստուծոյ յաջողութեամբ 'ի զլուխ հանելոյ զայն։

ԽՈԿՈՒՄՆ Բ

Ի ՎԵՐԱՑ ԱՌԱՆՁԻՆ ԿԵՆԱՑ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ՅԻՍՈՒՍԻ

Մասն Ա.

Զմտաւ ած զզերաղանցութիւն խորհրդոյս։ Խորհուրդս այս առանձին կենացն Յիսուսի, է 'ի մխիթարութիւն մեծ խոնարհաց, և 'ի սաստիկ կորանս ամբարտաւանից. և է անդեղայ փրկարար փորձութեանցն՝ զորս զղամք երբեմն 'ի պերճանս աշխարհի, և անձնացոյց լինելոյ մեծու-

թեան հոգւոց մերոց։ Հապա, յառաջ մա-
տիր ջերմացեալդ յախտէս, ամբարձ զաչս
քո առ Յիսուս։ Ահա մարդացեալն Աս-
տուած, խմաստութիւնն անբաւ, զարդա-
բեալ աստուածատուր գիտութեամբ ամե-
նայն իրաց, հմուտ ամենայն լեզուաց, ճար-
տարութեամբ բանից գերահրաշ, առ յան-
կուցանել յինքն զսիրտս մահկանացուաց
քաջ ճարտար, թագաւոր փառաց, տէր
երկնի և երկրի, եկեալ յաշխարհս առ 'ի սր-
բել զախտս մոլեկանս, առ հալածելոյ զմո-
լորութիւնս, առ ուղղելոյ զվարս, առ 'ի
սրբել զերկիր. սա ինքն Աստուած մար-
դացեալ, (և ո՞ ոչ յապուշ հարեալ ընդար-
մասցի), կեայ յաղքատութեան յանարդ
ինն քաղաքաղեղջ, 'ի զործարանի ուրումն
արուեստաւորի, մանաւանդ զի ինքն իսկ
լեալ արուեստաւոր, կայ յաղքատին կեանս,
անտես յաչաց, և ծածկեալ ամենեին։

Զեռքն արարչագործք, մատունքն ա-
մենակարողք՝ որք զտիեզերս կանգուն ու-
նին, աւել ածեն 'ի տան, հատանեն, սղո-
ցեն, տաշեն, լուանան զկօշիկս. և այս-
պէս Աստուած մարդացեալ խոնարհ վարէ
կեանս և յաչս մարդկան անօգուտ, անզործ
և զատարկ, անծանօթ 'ի մարդկանէ, և 'ի
ծանօթից անզամ կարծեալ տգէտ և ար-
համարհ որ արուեստաւոր։ Սա նա ինքն է՝
որ կարէր քարոզել 'ի տաճարին Սողոմո-
նի, վիճել և տալ զօրէնս զերահրաշ խմաս-
տասիրութեան 'ի ճեմարանս և ժողովա-

բանս, սահմանել սքանչելի օրէնս քաղաքական վարչութեան յատեանս և յարքունիս պետաց, շրջել ընդ քաղաքս, գաւառս, թագաւորութիւնս բժշկելով զհիւանդս, ուսուցանելով զժողովուրդս, ածելով յապաշխարութիւն զմեղաւորս օրինակաւ իւրով, և զամենայն ազգս ձգելով զկնի իւր զօրութեամբ սքանչելեաց։ Իսկ սա ծածկեալ յանկեան ուրեք Պաղեստինացւոց աշխարհին անտես անոք ընդ ամս ոչ երիս կամ չորս, այլ երեսուն. ընդ ամս երեսուն. անճառ խոնարհութիւն յապշութիւն մտաց մերոց։

Եկայք արդ, որդիք մարդկան սուտք, որք մեղանչէք 'ի կշիռս ձեր. եկայք և առէք 'ի միտ. ո՞ է որ այսպէս ծածկեալ վարէ կեանս. ուր. և ցորվայր կայ մնայ ծածկեալ. և ուսարուք 'ի վարժարանի աստ գնել չափ ցանկութեան ձերոյ՝ զօրութիւնս գործելոյ, և գերազանցելոյ զայլովք, հանդէս առնելոյ մտաց ձերոց։ Ո՛վ Յիսուս. արդարև դու ես Աստուած ծածկեալ, և գնես զիսաւար 'ի ծածկոյթ քս. արդ արա՛ զի խաւար քո լինիցի և ինձ իբրև զմիջօրեայ, զի տեսից եթէ քանի՞ ընդունայնութեան խորհուրդք իցեն 'ի մեծապատիւ պաշտամունս։

Մասն Բ

Զմտաւ ած զճշմարտութիւնն ծածկեալ յայսմ խորհրդեան։ Ցիսուս այսպէս ծածկեալ, յաչս մարդկան անգործ թաղեալ զքանքարսն, և յանարդ կեանս, լեալ 'ի մուռացօնս յամենեցունց, այլ նա եկեաց որպէս պարսն էր, և արար զամենայն զհրամայեալսն. մանաւանդ զմեծամեծս։ Կեանքս այս զատարկ յաչս մարդկան, անօգուտ և անարդ. այլ յաչս Աստուծոյ Հօր էր բազմախաստակ, օգտութեամբ լի և փառօք. քանզի եկեաց որպէս կամէր Հայրն, արար զամենայն զոր կամէր Հայր, եղև անդ՝ ուր կամէր Հայր. այնպէս՝ զի եթէ Ցիսուս յայն ամենայն ժամանակս կենացն այլ ինչ զործեալ էր, այլազգ վարեալ էր կեանս, այլուր էր բնակեալ, ոչ լինէր բաւական բնակութիւնն, թերացեալ զտանէր 'ի զործն, և ոչ ինչ համարէր վաստակեալ, զի ոչ կատարէր զկամս Հօրն երկնաւորի։

Այս կատարելութիւն մեր ոչ է 'ի մեծամեծ զործս, (մեծ երևեալս յաչս մարդկան), զի ճարտարախօսութեամբ փառաւորեմք զքաղաքս, զհեմարանս լնումք զիտութեամբք, զհայրենիս մեծամեծ զործովք. զի զաստիարակեմք զվարժարանս, զդաւառս, և զիշխանաց զմտացն խիղճ, և զի անցանեմք 'ի համար արանց հաչակելոց. ոչ. կատարելութիւնք մեր չեն 'ի սոսին, այլ 'ի հպա-

տակութեան կամացն Աստուծոյ, կալ 'ի վայր, 'ի պաշտաման և յաստիճան՝ յոր կամի զի կացցուք ամենիշխան տէր մեր։ Այս է ճշմարտութիւնն այն անյաղթ և անպատում, զոր ուսոյց մեզ իմաստութիւնն մարդացեալ ընդ ամս երեսուն։ Բայց ասիցես. առ ինչ ապա ետ ինձ Աստուած զայսոսիկ քանքարս՝ եթէ ոչ կամի արկանել 'ի գործ. պատասխանեմ. առ ինչ ապա Հայրն Աստուած զարդարեաց այնչափ գերահրաշ պարգևօք զՅիսուս, և ապա արձել նմա ընդ ամս երեսուն արկանել զնոսին 'ի գործ։ Լուր, ով բարձրամիտ դու. վասն այնորիկ ետ քեզ Աստուած զայսոսիկ պարգևս բնութեան, զի ունիցիս ինչ առ 'ի նուիրել նմա. քանզի ոչ ընդ վայր կորնչին խունկքն մատուցեալք առաջի Աստուծոյ, և ոչ քանքարքն այնոքիկ ծախին ընդ վայր, որք և 'ի կալն իսկ անգործ ծառայեն կամացն Աստուծոյ։

Արդ եթէ կամի Աստուած կալ քեզ հարեալ ընդ փոչի ստորին դպրոցաց, յաստիճան օգնականի, 'ի հիւանդանոցի, և կամ յայլում ստորին պաշտաման, անտեսեալ յառաջնորդաց, անարգեալ յընկերաց, անծանօթ 'ի մարդկանէ. կեաց 'ի խաղաղութեան, աղաչեմ զքեզ, կեաց զոհացեալ 'ի վիճակիդ. դադարեաց 'ի դանդաստանացդ՝ իբր թէ իցես անօգուտ, անպիտան առ ամենայն ինչ և բեռն այլոց։ — Անպիտան առ ամենայն. Ոչ այդպէս. որ

լնու զհրաման յաւիտենականի Հօրն, շատ իսկ վաստակէ։ Այս ոսկեղինիկ բան, — Աստուած զայն կամի — լիցի քեզ 'ի վահան, որ բթացուցէ զամենայն հարուածս ամբարտաւանութեան և անձնասիրութեան և որ յերկիր կործանեսցէ զամենայն քանքարտանս պաշտաման, տեղւոյ և աստիճանի և հիւանդութեան։ Ո՞վ բան լի և հոծ իմաստիւք. — Աստուած զայն կամի —. Ո՞վ աքանչելի ծնունդ մտաց. բայց աքանչելի միայն աստուածասիրին և ոչ անձնասիրի և աշխարհասիրի։

Ընդ այս ճշմարտութիւն բախեալ խորտակին ամենայն տարապայման իղձք բարձրութեան և անուան, պայծառ պաշտամանց, գովութեան, և խրոխտ խիզախումն՝ որ է աղբիւր և արմատ մեծամեծ յուզմանց։ Քանզի 'ի սոցանէ բղխեն տրտունջ և զանգատ ընդդէմ առաջնորդաց՝ որք ոչ շղոմեն զկարծեցեալ իրաւունս. աստի նախանձք, ոխակալութիւնք. աստի քրթմնջիւն և բամբասանք։ Որ որ զերծ կացուցանէ զանձն 'ի ժանտէ աստի, 'ի քանի՜ խաղաղութեան վայելէ. 'ի սիրտ նորա իջանէ խաղաղ ցօղ դրախտին երկնից։ Վախճան խոկմանն առաւօտուս էր անխտիր համակամութիւն առ ամենայն տեղիս. իսկ պտուղ այսորիկ է անխտիր համակամութիւն առ ամենայն պաշտամունս և աստիճանս և հիւանդութիւնս. մանաւանդ զի առաւելեալն պարտ է զարթուցանել զիղձս

առ զործս խոնարհս, զժուարինս և հակառակս զզայութեանց և անձնասիրութեան, բորբոքեալ յօրինակէ Տեառն մերոյ Յիսուսի «Որ փոխանակ ուրախութեանն՝ որ նմա առաջի կայր, յանձն առ զխաչ, արհամարհեաց զամօթ»։

ԻՂՁԲ

Ո՛վ ամենախոնարհ Տէր իմ Յիսուս. զու լոյս աշխարհի, բորբոքեալ ջահ տանն Աստուծոյ, ընդ այնչափ ժամանակս կացեր ծածկեալ ընդ զրուանաւ, յանարգ ա-բուեստս պարապեալ. և իմ զոլով ոչ ինչ և մեղք, կամիցիմ լոյս ջահել յաշխարհի, փայլել 'ի մեծամեծ պաշտամունս։ Ի բաց, հեռի յինէն այսպիսի պատիր ունայնամտութիւնք։ Առաջի ամենայն երկնաւորացն անմահից անարգեալ զատապարտեմ զյիմարական զայս զրգիռ մոռց վեհ երևելոյ առ այլովք, ամբարտաւանելոյ 'ի բարձր պաշտամունս, և հաչակաւ մեծացուցանելոյ զյաջողամտութիւնս իմ պարգևեալս ինձ յԱստուծոյ։ Յայսմ՝ հետէ յօժարութիւն բաղձանաց իմոց լինիցի յանարգ պաշտամունս. փափաքեցայց կալ ծածկեալ և լինել անծանօթ 'ի մարդկանէ. կամք քո, Տէր իմ, լիցի կանոն ուղղիչ փափաքանաց սրտիս։

Երկինք և երկիր վկայ կացցեն ինձ. Յանկամ լինել որդն աղկաղկ 'ի կամս Ա-

տուծոյ, և առանց կամաց նորա չառնուամ յանձն լինել վեհագոյն քերովբէից։ Կամիմ ըստ կամացն Աստուծոյ կալ անդորձ, և ծախիլ 'ի դատարկութեան, և ոչ կամիմ առանց կամաց նորա զարձուցանել զաշխարհ 'ի հաւատս, և լինել վկայ վասն հաւատոյ։ Ցանկամ ըստ Աստուծոյ կամացն կալ մնալ ծածկեալ 'ի խաւարչտին ուրեք անկեան աշխարհի, և ոչ՝ առանց նորա փայլել յերկինս։ Շատ է ինձ զի կատարեսցին կամքն Աստուծոյ, և ես համարեցայց յայնժամ մեծ, ճոխ և շատ իսկ երջանիկ։

Պարտ է կրկնել ասասելն զիղձս խոկմանն առաւօտուն, և որ ինչ բանք ևն անդ զտեղոյդ, նոյն ասա կրկնեացի ասելով զպաշտամանն.

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ա. Գէորգանդուանիան խորհրդոյս։ Աստուած մարդացեալ, իմաստութիւն, զօրութիւն, մեծվայելչութիւնն անբաւ, եկեալ 'ի նորոգել զաշխարհ, կեայ ծածկեալ յամենեցունց 'ի գործարան արուեստաւորի. ձեռքն այնքիկ արարչագործք՝ արդ վաստակին ուրագաւ և քերչաւ. միաքն այն իմաստութիւն Հօր, արդ զբաղեալ է յարուեստս ինն անարգ, և այս ընդ ամս երեսուն։ Տես արդ որպէս առաջի օրինակիս խորտակի սնոտի քոյին փափաք վեհ երևելոյ։ Քաջ խոկա, ո՞ է՝ որ այսպէս ծածկեալ կեայ. ուր, և ցո՞ր վայր։

Բ. Ճշմարտութիւնն ծածկեալ 'ի խորհրդեանս։ Յիսուս այսպէս ծածկեալ, և առ աչս վարելով կեանս իմն անօգուտ և անարգ, եկեաց որպէս պարան էր, և գործեաց գործ գերազանց, վասն զի կատարեաց զկամս երկնաւոր Հօրն։ Ապա կատարելութիւն մեր ոչ է 'ի գործել մեծամեծս, այլ է 'ի կատարման կամացն Աստուծոյ։ Եթէ Տէր կամի կալ քեզ անծանօթ, արհամարհեալ, անտեսեալ, կեաց 'ի խաղաղութեան. զի դու ընկեցիս սիրեցեալ յոյժ յաչս Նորա, և դացիս պատրաստեալ 'ի մեծամեծ վաստակս. քանզի կամաց Նորա զկնի գնացեր։

Պատուղ խոկմանս է անխտիր համակամութիւն առ ամենայն պաշտամունս և աստուծեանս, մանաւանդ սուրբ իմն վիճակաք առ անարգ և խոնարհ գործս։

Ընթերցիր

Թովմ. Գեմբ. Գիրք Գ. Գլ. 13։

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Ի վերայ մեռուցման.

Մեռուցումն զառաջին տեղին ունի յամենայն գործս՝ ոչ միայն 'ի նմանութեանն Քրիստոսի, այլ և յանխտիր համակամութեան առ ամենայն տեղիս և պաշտամունս, զոր ցայս վայր յեղյեղեալ է 'ի խե-

լամտեցուցանել ճիգն 'ի մէջ առեալ եմք իբրև առանձին պտուղ սերկեան աւուրս։ Քանզի առանց այսր առաքինութեան ոչ կարացուք լինել հետևողք Քրիստոսի, և ոչ անխտիր պատարաստք առ ամենայն ինչ, և ոչ զատեալ 'ի սիրոյ մարմնոյ և արեան և յայլ ամենայն արարածոց։ Այլ ոչ միայն օգտակար լինիցի, այլ և հարկ իսկ է խօսել զայսմանէ 'ի տեղւոջս. զի յոյժ կապակցեալ է ընդ առաջարկեալ խնդրոյս։ Յառաջ բերից արդ յայսմ՝ խորհրդակցութեան յորդորս ազդոգականս առ 'ի յարդել զայն առաքինութիւն, և առաւել անձկով սիրեացուք, և ևս տենչմամբ ցանկացուք սմին։ Արդ յետ օրինակին Յիսուսի, որ ազդոյ է քան զամենայն, և զոր պարտիմք ունել միշտ յանդիման աչաց։ Առաջին յորդոր 'ի մեռուցումն՝ է Անուելութիւն նորա, զի բերէ զնմանութիւն մարտիրոսութեան. զի ըստ սրբոյն Բեռնարդոսի, «Է ազդ իմն մարտիրոսութեան՝ հոգւով մեռուցանել զմարմին. որոյ ցաւքն թեթեւք են, բայց ամացն յոլովութեամբ յոյժ տապնապեցուցիչք»։ Եւ արդարև մարտիրոսութիւն է այս անարիւն, սպանութիւն է առանց դահճի, ժուժկալել նքթեալ՝ ունելով առաջի զկերակուր, զսպել զախորժակն, չտալ զզայութեանցն զոր փափաքենն, բռնադատել յայն՝ յորմէ խորշին։

Թերևս ասցես և դու 'ի նոցանէ, որք խորհին և պատրեն զանձինս անարդիւն

ցանկութեամբ տալոյ զկեանս վասն հաւատոյ՝ի սուր զահճաց բարբարոս աղգաց անհաւատից։ Քաջ է. զու ինքն լեր անողորմ զահիճ բարեպաշտութեամբդ ընդդէմ անձին քո. նուաճեա զմարմինդ, սանձեա զորկորդ, և լինիցիս վկայ Քրիստոսի. ՝ի կարծիս մարդկանդ տկար, բայց ՝ի վաստակսն և՝ի բրսբիոնն զերազանց քան զնոցայն։ Այսպա՝ի միտ առ զառաւելութիւն մեռուցմանն։

Երկրորդ զրզիռ է Կարեորութիւն մեռուցման, զի պարտ յանձին կալեալ եմք արկանելոյ զնոյն՝ի զործ. ա. Զի եմք Քրիստոնեայ. զի անդստին յաւազանէն միրտութեան հրաժարեցաք հրապարակաւ՝ի մարմնոյ և յամենայն ցանկութեանց նորա։ Արդ որ զգուէ զմարմին, յանցանէ՝ ստեալ խոստմանն, և է անարժան սուրբ անուանն քրիստոնէի. ապա որ ոք իցէ քրիստոնեայ, մեռուսցէ զմարմինն։ բ. Պարտ յանձին կալեալ եմք մեռուցման մարմնոյ՝ զի եմք մեղաւորք։ Մեղաք, վկայեն մեզ խիղճք մտաց մերոց. պարտ է առնել զհատուցումն. զոյն մեզ առաջի առնէ ճշմարտութիւնն յաւիտենական. « Ոչ մտցէ անդ ամենայն չարակամ և պիղծ և ստութիւն »։ Խոստովանութեամբ սրբին յանցանք, բայց մնայ տուգանել և զհատուցումն պատժոյն. այս վնասապարտութիւն պատժոյն է արատ, արատաւոր ինչ ոչ մտցէ յերկինս, ապա և ոչ հոգին վնասապարտ. ապա պարտ է

որբել դնոյն կամ՝ ասասէն մեռուցմամբ, և կամ՝ անդանօր 'ի հուր. չիք տեղի փախստեան կամ թաղատեան։ Եթէ կամիս կալ զերծ 'ի բոցոյն, պարտ է քեզ յառաջագոյն կամաւոր մեռուցմամբ հասուցանել ասուէն. այս է պատճառ պարտուց մեռուցման մեղաւորաց։ գ. Մեռուցումն յոյժ ահաւելութեամբ կարեւոր է կրօնաւորաց և պարտք, քան այլոց քրիստոնէից։ Զինչ այլ ինչ է կոչումն կրօնաւորական, բայց մշանջենաւոր զրկումն 'ի հաճոյից զգայարանաց, և հանապազորդ մահ յօժարութեանց։ Եւ կանոնք իսկ կրօնաւորաց յոր ինչ առաջնորդեն նոցա, — առ իշխել անձին, կեալ միայն յԱստուած, մեռանել զօր ամենայն անձանց և աշխարհի։ Յոյժ կալ և Ընկալ, այս է հիմն կրօնաւորական կենաց։ Ապա կրօնաւորն է մարդ խաչեալ աշխարհի, որում և աշխարհ կայ 'ի խաչի. այսինքն թիկունս աշխարհի դարձուցեալ, յարզէ, ցանկայ, խնդրէ զայն ամենայն, զորս նա անարգէ և տաղտուկ և գարշելի համարի. և ախորժականքն մարմնոյն՝ զառնացուցիչք են նմա. և է անհաչտ ատեցող սիրոյ անձին։ Ահա այս է կրօնաւորութիւն, և յայսմ է պէտք մեռուցման։

Երրորդ յորդոր մեռուցման է Աղղար իրաւունք. քանզի և իրաւունք են՝ զի « Որպէս պատրաստեցէք զանդամս ձեր ծառայս պղծութեան և անօրէնութեան յանօրէնութիւն, նոյնպէս և այժմ պատրաստե-

ցէք զանդամս ձեր ծառայս արդարութեան 'ի սրբութիւն »։ Իրաւունք են՝ զի եթէ մարմինն եղև գործի անօրէնութեան, լիցի հաղորդ և պատժոյն՝ որում արժանի գտաւ։ Իրաւունք են դարձեալ՝ զի որ գործեաց զոչ օրինաւորսն, ջանասցէ ժուժկալել յօրինաւորացն։

Բայց ասիցես. և զիարդ հնար իցէ ատել զոր բնութիւնն ուսուցանէ սիրել։ Հարցից և ես զքեզ. զիարդ կարիցես սիրել զաւազակն՝ որ բազում անգամ մերկացոյց զքեզ 'ի շնորհաց. զբռնաւորն՝ որ 'ի նուազս յոլովս արկ զքեզ 'ի ստրկութիւն զիւաց. զեղբայրասպանն՝ որ ետ քեզ 'ի խաչ հանել զարդար եղբայր քո զՅիսուս։ Ասա ազաչեմ. ո՞րպէս սիրեսցես զու զնա։ Խորհեաց քաջ. իցէ՞ արդարութիւն զգուել քեզ ամենայն խնամովք, սեթևեթել, պարարել զմարմին քո զայս, զպատճառն ամենայն աղետից քոց, և կամել զի ոչ մի ինչ տարցի վշտաց, ծոմապահութեանց, ժուժկալութեանց, խարազնազգեցութեանց բազկատարածութեանց. և զհոգիդ քո զանմահ անտեսեալ լքանել մերկ 'ի շնորհաց, զուրկ յարժանեաց և յարդասեաց, զատապարտեալ, ո՞ զիտէ, ընդ քանի ամս 'ի բազմատուչոր հուր քաւարանին։

Չորրորդ յորդոր մեռուցման են կրկին Օգտութիւնք նորուն։ ա. Յ՝ վարդապետութիւն հաւատոյ, զի առ իւրաքանչիւր զերբնական գործ մեռուցման առն արդարոյ

կշռի աստիճան իմն անդարձ կամ սրբա-
բար շնորհաց, և առ մէն մի աստիճան այ-
սոցիկ շնորհաց հատուցանի աստիճան իմն
յաւիտենական փառաց յերկինս։ (Ժողովրդ. Գումարումն Զ. Գլ. 30)։ Արդ ան-
թիւ են և անդուլ զօրհանապազ դէպք յաղ-
թելոյ անձին և մեռուցման մարմնոյ. և որ
ոչ դանց առնէ և ոչ զմիոմն, պատրաստէ
անձին զանձ անբաւ անթիւ աստիճանաց
շնորհաց յայս կեանս, և ապա նոյնպէս
յաւիտենական փառաց 'ի հանդերձեալն։
Իսկ որ ոչ միտ դնէ, կորուսանէ զօր ամե-
նայն այնչափ աստիճանս անդին շնորհաց
և փառաց։ Հաւատաս այսմ ամենայնի, և
արհամարհես զայնչափ կորուստս։ Ո՛վ ան-
զութ վատնիչ զանձուց հոգւոյդ։ Գիտա՛ զի
մէն մի 'ի շնորհաց աստ զինք են արեանն
Յիսուսի, և ճառագայթք անճառք աստուա-
ծութեան. և սակայն դու քնէած և պղերդ,
զրիւրս բիւրուց 'ի սոցանէ կորուսեր ար-
համարհանօք, միայն 'ի սէր ապերախտ
մարմնոյդ։ Յիւրաքանչիւր աստիճան եր-
կնաւոր փառաց են անբաւ բերկրանք յա-
ւիտենականք, յորոց դու քանի՛ քանիս կո-
րուսեր։ Մանունք վաստակք սանձելոյ
զզայարանս՝ լի են արդեամբք, մինչ զե-
ղաղանցել քան զյարութիւն մեռելոյ, և
դու անտես արարեր զրիւրաւորօք. ահ.
կորուսեր զնոսին, ոչ ինչ հոգացար զայն-
ցանէ, միայն առ չկալոյ ընդդէմ մարմնոյդ։
Երկրորդ օգտութիւնն մեռուցման է,

զի այնու կամ շինանի և կամ մեծաւ մասամբ նուազի հուր քաւարանին։ Ասէ սուրբն Ամբրոսիոս. Դադարէ վրէժխնդրութիւնն աստուածային, եթէ գնացէ յաւանջոյ մարդկան զեղջ և հատուցումն։ Արդ եթէ դու ջան դիցես քաւել զյանցանս քո, լինիցիս զերծ 'ի պատժոց։ Գիտես զասացեալ կութիւն հրոյն. զգաստ լեր, եղբայր, քաջ միտ դիր. «Անդ զառնագոյն լինիցի պատուհաս միոյ ժամու, քան զհարիւրամեայ ծանրագոյն ապաշխարանս աստեաց»։ Ցինչ խորհուրդս յածիցին միտք քո։

Յաշխարհի ասա զլումայն չատ զրէ Աստուած 'ի հատուցումն. իսկ եթէ թողուցուս առ 'ի հատուցանել անդանօր, ստիպեսցիս արկանել 'ի հաշիւ և զյետին նաքարակիսն։ Բարէ. ասա աղաչեմ. եթէ կարասցես առնել հատուցումն պարտեաց հարիւր բիւր զահեկանաց միով դանկիւ՝ որ 'ի ձեռին քում, երկմտեալ տատամսիցիս. կամ ես չարագոյն, չկամիցիս առնել զբաղմաչահ տրիտուրն։ Քաջ իսկ յիմար կոչեսցիս։ Եւ արդ զի միով մեռուցմամբ կարես առնել հատուցումն, և ոչ առնես, և կարծիցես զքեզ լինել խմաստուն։

Թերևս պատճառս 'ի մէջ ածիցես դշկարել քո մաշել զմարմինդ յանմուաղութեան։ Իբր զի բնական կազմուած քո ոչ տանի։ Այլ ես ոչ պահանջեմ 'ի քէն զի նուաղեալ անկանիցիս 'ի սովոյ, այլ միայն զի իցես չափաւորեալ։ Հաւատա ինձ, զի

առաւել զարհուրեցուցանէ անուն ժուժկալութեան՝ քան նոյն ինքն գործն. զի առ ինչ ոչ կարասցես ժուժկալել 'ի համադամոց անտի, զոր յաղեալ՝ արհամարհես, և յորմէ 'ի հիւանդութեանդ տապակացեալ, մանաւանդ թէ զարշիս ես։ Ի՞նչ անհնարին կարծեսցի յառաքինութիւն, որ ինչ հարկ է լինել 'ի յաղուրդ և 'ի հիւանդութեան։

Դարձեալ եթէ հողիք մեղաւորաց զԸժուարին 'ի լուծանել զկապանս մեղաց, եթէ զու ոչ մեռուսցես զքեզ փոխանակ նոցա առաջի Աստուծոյ, ապա պարտական լիցես առաջի Աստուծոյ զի զգնեալսն արեամբն Աստուծոյ անտեսեալ թողուս զրկեալ 'ի փառաց նորա. «Մի վասն կերակրոյ քակեր զգործ Աստուծոյ. վասն որոյ Քրիստոսն մեռաւ», անարժան կացուցեալ զքեզ՝ որկորաստութեամբդ, լինելոյ զործի 'ի ձեռին Աստուծոյ 'ի փրկութիւն նոցա։ Ցաւել և զայն՝ զի որպէս պահոց պնդութիւն 'ի փախուստ զդեն դարձուցանէ, այսպէս և փոյթն սնուցանելոյ զմարմին հեռացուցանէ զԱստուած։ Նա ոչ հանդչի 'ի մարմնի պարարելոյ կերակրովք և թմբելոյ 'ի գոլոշեաց համադամիցն։ Որ ոչ է սակաւապէտ 'ի կերակուրս՝ անյոյս լիցի ժամանելոյ 'ի կատարելութիւն։

Եւ եթէ ոչ անհանդուրժելի թուի քեզ կեղեքումն մարմնոյդ 'ի ճաղկանաց, 'ի խորզոյ, և ցաւք ոսկերացդ 'ի բաղկատարա-

ծութենէ, 'ի խիստ անկողնոյ և 'ի պակասելոյ քնոյ, որք չափաւորապէս կարպին միշտ, դիմարդ տանել կարասցես տանջանաց հրոյ քաւարանին։ Վ. ճիւն է անդարձ. մեզք պարտին ընդունել զհատուցումն պատուհասին կամ 'ի վրէժխնդիրն յԱստուծոյ, և կամ 'ի նոյն ինքն յապաշխարողէ. կամ տուգանել յաշխարհի աստ, և կամ տուչորել 'ի հանդերձեալն. չիք այլ միջին ճանապարհ... զինչ է զոր խորհիսն... զի ասիցես առ այս...։

Համարեաց զքեզ մեռեալ և դատակնքեալ և հասեալ 'ի դուռն քաւարանին. ասա. յո՞ր կարծիս յածէիր անդէն 'ի մուտն 'ի հնոցն. զո՞ր դատաստան առնէիր զմեռուցմանէ և զուրանալոյ զանձն։ Ա.Հ. վայ քեզ եթէ չառնես այժմ զայն ինչ, զոր կամէիր յայնժամ թէ արարեալ էր քո։ Եւ եթէ լինէր քեզ հրաման դառնալոյ 'ի կեանս 'ի տանջանաց անտի, յորպիսի՞ ապաշխարութեան կեանս ծախէիր զաւուրս քո։ Թերևս նուազ բարերարութիւն իցէ այս քեզ, զի արժանի դատապարտութեան զոլով չև ևս դատակնքեալ ես, քան զդառնալն զարձեալ այսբէն. Ա.Հ. «Ա.ղաչեմ խաբեմք զանձինս առ անկարգ սիրոյ մարմնոյս՝ զոր կրեմք 'ի սրտի». (Գեմբ. Ա. 24)։

ՔՆՆՈՒԹԻՒՆ

Ի վերայ առաքինութեան մեծութեան.

Մեծութիւն է առաքինութիւն բարոյական, որ առաջնորդեալ 'ի բանէն ունի 'ի չափու զիրաց հոգւոյն և զզգայութիւնս մարմնոյն. և վասն այնորիկ բաժանի 'ի ներքին և յարտաքին. նա զկիրսն սանձէ և սա զզգայարանս։ Եւ պատուէրքն, զորս տայ զզգայարանացն՝ են ա. Մերժականք յարգելուլն զվտանգաւոր հաճոյս մարմնոյն. և բ. Հաւանականք 'ի հրամայելն յանձն առնուլ զկամաւոր խստութիւնս։ Ցներքին մեռուցմանէ խօսեցաք այլուր. այսօր քննութիւն մեր լիցի 'ի վերայ վշտակրութեան զզգայարանաց, և առանձինն շօշափելեաց և ճաշակելեաց։

Մարթ է առնուլ զսոյն յերիս աստիճանս. Գանդի ա. Որ զայս առաքինութիւն յանձին բերել կամի, ատէ զմարմինն խստիւ և զհանգիստ նորա, զփափկութիւն և զորկորստութիւն. վասն որոյ ճնշէ զմարմինն ճաղկանօք, խարազնաղեստ, 'ի բաղկատարածութիւն, 'ի խիստ անկողինս, և 'ի հսկումն, որչափ թոյլ լինի նմա 'ի հնազանդութենէ և 'ի խոհեմութենէ։ Մերձենայ առ կերակուր իբրև առ դարման դեղոց. թողեալ զանուշահամն՝ սիրէ զան-

ճաշական, խուսափէ 'ի ճաշկերութիւն և 'ի խնջոյից սեղանոյ. այնչափ ևեթ ուտէ՝ որչափ կարեւոր է 'ի պահպանութիւն կենացն։

Բ. Ի կերակուրս, 'ի զգեստս, 'ի բնակարանս, ըստ ներելոյ խոհեմութեան ընտրէ զանարգագոյնսն, զառաւելագոյնս արտարն, զխիստն և զընդդիմակսն անձնասիրութեան։ Միշտ և յամենայնի սանձէ զզգայարանս յամենայն տեղիս և յամենայն դէպս, մանաւանդ 'ի հետաքննութիւնս տեսանելոյ, լսելոյ, զիտելոյ, և 'ի պատմել զհետաքննիս. զամենայն հաճոյականս ժխտէ տալ նոցա, և զամենայն անհաճոյս առաջի առնէ նոցա. զարձեալ 'ի կալն, 'ի նստելն, 'ի ծունր դնելն և յընկողմանելն ընտրէ միշտ զանհանդիստ զիրս. և զոր և է դէպս մանուսն ոչ թողու անցանել առանց յաղթելոյ և մեռուցանելոյ զանձն։

Գ. Անխոնջ է 'ի վաստակս և անդուլ. ոչ կայ երբէք անգործ. և եթէ հրամայեսցէ հնազանդութիւնն, զայն ևս ժամանակ դադարման 'ի գործոց և 'ի վաստակոց, յորում՝ որպէս յայտ է, ընդունի զքաղցրութիւն և զմխիթարութիւն, նուիրեալ մտադիր Աստուծոյ։ Վասն որոյ երբէք ոչ հրաժարի 'ի պաշտամանց և 'ի գործոց հրամայելոց նմա յառաջնորդէն, յանձն առեալ ըստ տանելոյ զօրութեան իւրոյ. և ինքնին յածի միշտ 'ի խնդիր անարգաց և վշտալեաց։ Քննեսարդ եթէ իցես բուռն հարեալ զառաքինութենէս, և յոր աստիճան իցես ժամանեալ

ցայժմ. և ընդ որ շատիր յառաջեսցես ևս քան զեռ յայսմ հետէ։ Կամիցիս և դու ասել ընդ առաքելոյն. Հանապազ մեռանիմ։

Յեղանակն, զոր պարտ է ունել յայսմ կրթութեան, պարտի լինել Անխոտոր և խոհական։ Աւ'ի կալ անխոտոր բուռն հար զդիւրազունից, և ոտն առ ոտն հասցես առ դժուարինս։ Պատրեա զքեզ հաւատացուցեալ անձինդ՝ թէ ոչ կամիցիս զայս կամ զայն մեռուցումն անդր քան զվաղուեան օր և կամ ցերրորդ օր։ Յածեցո ընդ միտս քո յաճախ զյորդորն, զոր ընթերցար յանցեալ պարագրման։

Յանխոտորն լինել պարտ է յաւելուլ և զխոհականութիւն, եթէ կամիս զի մեռուցումն լիցի յօդուտ քեզ. և առ յաջողել քեզ 'ի սոյն՝ միտ զոր այսոցիկ կանոնաց։

Կանոն առաջին. Ըստ սրբոց հարց ոչ են ըստ կանոնի ապաշխարութիւնքն այնոքիկ, որք ինքնին 'ի բնութենէ իւրեանց, կամ վասն տկար կազմուածոց ապաշխարողին մահաբերք լինին նմա, և կամ նուաղեցուցեալ վնասաբերք լինին առողջութեան։

Կանոն երկրորդ. Ոչ են ըստ կանոնի ապաշխարութիւնքն այնոքիկ՝ որք խոչ լինին 'ի կրթութիւն այլոց առաքինութեանց, կամ անկարող առնեն զապաշխարողն 'ի լնուլ զպարտս կոչման իւրոյ։

Կանոն երրորդ. Խստութիւն ապաշխարութեանն պարտ է լինել ըստ տանելոյ ուժոյ մարմնոյն, և համեմատ թուոյ և ծան-

բութեան մեղացն, և աստուածային ազգմանն՝ որ յորդոր լինի նմա 'ի գործն։ Եւ զարձեալ պարտ է զգուշանալ զի ցաւն մի հասցէ յոսկերսն, այլ միայն զմարմինն խայթեսցէ։ Եւ քանզի դիւրաւ հնար է մեղանչել յայսմ կամ վրիպակաւ և կամ անցանելով ըստ չափ, պարտ է առնել զայսոսիկ խորհրդով հոգևոր դաստիարակի։ Ըստ սրբոյն Բեռնարդոսի. «Պարտ է զմարմինն խնամել իբրև գհիւանդ, որում ոչ է պարտ տալ զաւելորդս թէպէտ և յոյժ թախանձիցէ, իսկ զօգտակարսն թէ և ոչ կամիցի՝ պարտ է մատակարարել»։

Բնեալ արդ եթէ կացեալ իցես 'ի կանոնս յայսոսիկ. և սահմանեալ եթէ քանիցս և ցորչափ ժամանակ կամիցիս զգենուլ զխաբազն, կալ բազկատարած յաղօթս յաւուրն, 'ի խիստ յանկոզինսն ննջել, և սուղ քնով շատանալ. բայց 'ի կատարմանն լեր անփոփոխ յիշելով զասացեալն «Զի մի աչխատ լինիցիք անձամբ ձերով և լքանիցիք». «Զի մի կորուսանիցէք զոր վաստակեցէքն, այլ զի առնուցուք բովանդակ զվարձս»։

Այլ զայսմ ամենայնէ պարտ է 'ի միտ առնուլ ես և՝ ա. Զի արտաքին մեռուցումն է առ 'ի հասանել այնու ներքնոյն՝ որ է սանձել զբաղձանս։ բ. Զի վշտակրութիւնք մարմնոյ, եթէ չիցեն կարդեալ առ փախճանն զոր ասացաք, և եթէ չիցեն 'ի միասին ընդ մեռումն հոգւոյ, ոչ մեծ ինչ

արժեն, և ոչ մեծ ինչ լինիցի օգտութիւնն. մանաւանդ եթէ նորօր սնանին խարկանք և հպարտութիւն։ գ. Զի անխոտորն լինել մի փոխեսցի 'ի յամառութիւն, չկամելով առ վայր մի տեղի տալ, 'ի պահանջել հարկին, ոչ առ լրումն սիրոյ, ոչ առ հնազանդութեան, և ոչ առ ակնածութեան։ Բարեխառնութիւն և չափ՝ են համեմք ամենայն առաքինութեանց։

Ո՞ղորմէս լեալ են մեռուցմունքդ ցայսվայր. և որպիսիք են այժմ, և կամ լինիցին առ յապայ։ Քննեա... կշռեա... դիր ուխտ ընդ անձինդ... և ուղղեա։

ԽՈԿՈՒՄՆ Գ.

Ի ՎԵՐԱՑ ՄՆԱԼՈՑՆ ՅԻՍՈՒՍԻ Ի ՏԱՃԱՐՆ

Ա.գ.դ

Վախճան խոկմանս է հասանել յանձնէ առաքինական իմն Ճգամբ զամենայն անկարգ յօժարութիւն՝ որ նշմարիցի 'ի մեզ առ ազգականս, առ անձինս, առ գիւրութիւնս մարմնոյ, և առայլ ամենայն արարածս, ընդ որս կապեալ սրտից մերոց՝ ոչ կարեն հասանել 'ի կատարեալ համակամութիւն։ Այնպէս զի զերծ յամենայն կապանաց ելցուք անխաթիր յամենայնի, պա-

տրաստաք ընդունելոյ որ ինչ հաճոյ իցէ Աստուծոյ, և զվիճակն իսկ կրօնաւորական կենաց. կամ եթէ իցեմք ընտրեալ զկոչումն, եւանել յայն աստիճան գերագոյն կատարելութեան՝ յոր հաճեսցի Աստուած կոչել զմեզ, նուիրելով յօժարակամ նմա զայնոսիկ՝ որք ձգեն զյօժարութիւն մեր առ ինքեանս: Եւ երեք պատճառք լինիցին մեզ յորդորք առ 'ի սոյն: Օրինակն Քրիստոսի. Յոյսն վարձուց. Երկիւղն պատժոց:

Մասն Ա.

Օրինակ Քրիստոսի. Ոչ որ երկմտեսցի ընդ այն, զի ծնողք Յիսուսի թէ ըստ ձրիոց բնութեան և թէ ըստ շնորհաց լիութեան՝ արժանի էին մեծի սիրոյ նորա, և զի Յիսուս յոյժ սիրէր զնոսա, և զիտէր զի հեռանալ իւր 'ի նոցանէ մեծապէս վշտացնէր զնոսա, և զի ծանր էր ինքեան թողուլ զնոսա և ընդ մի ևեթ ժամ: Բայց ինքն ամենեին հնազանդ կամացն Հօր, իբրև զիտաց թէ այն էին կամք նորա՝ թողուլ զնոսա, ոչ ինչ երկմտեցաւ. և առանց իսկ ազդելոյ յառաջագոյն, աներևոյթ եղև 'ի միջոյ նոցա՝ թողեալ զնոսա յանհնարին վարանս և 'ի ցաւս: Եւ ո՞ երկբայեսցի ընդ պատրաստականութիւն Քրիստոսի առ ամենայն ազգս վշտաց 'ի յերկրի ասա. որո՞ց վշտալեաց կարէր տանել, և ոչ տարաւ. յամենայնի ցաւք և տագնապք և դառնութիւնք էին նմա սիրելի: Յասել նորա. «Ա-

ուէք զնաչ ձեր, և եկայք զկնի իմ, միթէ զմահուանէ խաչին խմանայցէ. մինչդեռ ունկնդիրքդ իւր և ոչ որպէս մեռանելոց իցէ զիտէին. ո՞չ ապաքէն և զաղջոյն իսկ զկենաց էին բանքն։ Ինքն հարստութեանց թաղաւոր, քաջ իսկ ճանաչէր զանզգրութեան վայելից զբաղցրութիւն, և ոչ իբրև զմեզ՝ զոր զանսեալս մեր ևեթ համարիմք ինչ, և զզրկելն 'ի նոցունց գժուարին համարիմք։ Այլ նա կարող յամենայնի, զամենայն ճանաչէր և զամենայն արհամարհէր. և ոչ զթշուառութիւն աղքատութեանն շատ անձին զբեալ, և զթագուցումն անդին քանքարացն ըստ հրամանի Հօր իւրոյ, որ մինչդեռ կարէր զաշխարհ ամենայն հիացուցեալ յինքն յանկուցանել, կայր լռին իբրև անզօր ոք և վատ. յաւելոյր 'ի վերայ և զայս վիշտս սրտի ծնողացն և իբ՝ խուսափելով յաչաց նոցա, այնպէս իմն ցուցեալ՝ թէ ոչ ինչ վոյթ էր ինքեան զնոցանէ. և ասէր իսկ համարձակ՝ թէ «Ո՞չ զիտէիք եթէ 'ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել»։ Իբր ասել. Ո՞չ զիտէք թէ պարտ է ինձ 'ի խորս դառնութեան ցաւոց ընկղմել զսիրտ իմ՝ հոգացեալ յամենայնի 'ի հնազանդութեան Հօր իմոյ լինել կատարեալ, ոչ ինչ վոյթ արարեալ զվիրաւորելոյ սրտից՝ իմ՝ և ծնողաց, և ոչ զայլոց վշտաց դառնութեան։ Ո՞չ ահա և 'ի տան տեսեալ զձեր տագնապս կարօտութեան, և կարող զոլով 'ի լուութեան ամենայն բարութեանց

հանդուցանել զձեզ, ոչ ինչ հոգամ, այլ և ես ընդ ձեզ տառապիմ, ընդ որ զարմացեալ իսկ էք. և ցաւեալք 'ի սրտի, հնազանդեալ կամացն Աստուծոյ համբերէք։ Եւ այդոքիկ խորհուրդք ձեր ծանօթ ինձ են, և մեծապէս ցաւ իմոյ սրտիս. այլ զիարդ ընուցուն զիրք. այս են կամք Հօր իմոյ յաշխարհի աստ կեալ 'ի խաչի՝ ինձ և որք զհետ իմ եկեսցեն։

Արդ համեմատեսցուք զիդեաս մեր ընդ ըզձիցն Յիսուսի. յորժամ պէտք լիցին հրաժարել, լքանել զսիրելի ինչ մեր, յորժամ մերձ լինիցիմք առ վշտալիս՝ որ զսիրտ մեր հարկանելոց իցեն, անհնարին զնայն մեզ կարծեմք, և սկսանիմք բաղբաղել պատճառս. քանզի կամիմք հրաժարել յամենայնէ, այլ առանց տալոյ վիշաս սրտից մերոց։ Եւ ՝ի՞նչ իցէ հնար լինել այդմ. դարձեալ զաչս քո առ Յիսուս, տես թէ ընդ որ ճանապարհ գնաց նա, և դու ընդ որ կամիս գնալ զհետ նորա. բաղդատեա զախտաւոր սէր անձինդ և զդիւրութեանց քոց՝ ընդ սուրբ սիրոյն, որով սիրէր զանձն Յիսուս, և զդիւրութիւնս արժանիս իւրոյ մարդեղութեանն. որչափ այլևայլ են 'ի միմեանց. նա հնազանդեցաւ Հօրն նուիրեալ նմա զամենայն, իսկ քեզ ծանր թուեսցի պատարագել նմա զայս վնասաբեր սէր անձինդ, ակնկալեալ յաւիտենական վարձուց զոր 'ի փոխարէն ընդունիցիս։

Ամօթ մեծ իցէ քեզ զի առ հանդու-

ցանել զմարմինդ, և վասն ախտաւոր սիրոյ անձինդ զարհուրեսցիս և դադարեսցիս 'ի գնալոյ զկնի Յիսուսի, 'ի մեծ ևս կատարելութիւն ժամանել թեակոխեալ։—Դադարեցայց, ո՛վ Տէր, կասեցայց յանիրաւ բաղբաղանացս ոչ կարելոյ գործել։ Ա.հաւասիկ կամ անխտիր համակամութեամբ առ ամենայն վիճակս, կամ՝ 'ի կոչմանս ընտրեալ իմ՝ յառաջադոյն՝ առ ամենայն ատտիճանս կատարելութեան։ Ուստ ընդ անձին իմոյ հաստատեցի, Ա.յն անկարդ յօժարութիւն, որ զսիրտ իմ՝ կապեալ ունի ընդ այս ինչ... այսօր մատուսցի քեզ 'ի պատարագ, և այս լինիցի սիղոն բարեբաղդ նոր իմն և առաւել սուրբ կենաց։

Մասն Բ.

Ակնկարտիւն վարձուց, յոր վայելեսցէ զոր և յաշխարհի ատ'ի մատուցանելն զանձն յողջակէզ։ Եւ վարձս այս է, ա. խաղաղութիւն իմն սրտի 'ի վեր քան զմիտս, որ է նախաշաւիղ երանութեան երկնաւորաց. զի ոչ մի ինչ յաշխարհի կարասցէ խռովել զայր՝ որ ցամաքեցուցեալ ունիցի զաղբիւրն յուզմանց կրից, որ է անձնասիրութիւն։ բ. Ներքին իմն ընտանութիւն և բարեկամական կենցաղ ընդ Աստուծոյ. զի որ խորտակեաց զյօժարութիւնն զայն՝ որ կանգնեալ կայր պատուար ընդ մէջ Աստուծոյ և սրտին իւրոյ, յայնմ հետէ աղատ վայե-

լէ 'ի ներքին միութեան ընդ Տեառն. և Աստուած հաճի առնել 'ի սրտի նորա զբնակութիւն իւր։ գ. Առանձին իմն խնամք, որովք Աստուած բարեգթութեամբ խնամէ, առաջնորդէ, պաշտպանէ և հովանի լինի զեղեցիկ հոգւոցս այսոցիկ, և «Յամենայնի գործակից լինի նոցա 'ի բարիս»։ Զի ամենեին մերկեալ նոցա 'ի սիրոյ անձին, զամենայն հոգս իւրեանց ընկենուն 'ի զիրկս զթութեան սիրոյ Տեառն իւրեանց. և նա որ երբէք յումեքէ ոչ յաղթի 'ի սիրապատար բերմունսն, հակէ 'ի վերայ նոցա առանձին աչօք խնամակալութեան, և վարձատրէ զնոսա մեծամեծ շնորհօք իմաստութեան, հաստատութեան, արիութեան խաղաղութեան և խնդութեան։

Այդ ած 'ի կշիռ զբարիս զայսոսիկ ընդ հաճոյից փաղաքշանաց քոյոցդ, և ընդ զիւրութեանց ինչ մարմնոյդ. և չիցէ՞ յիմարութիւն մեծ՝ ոչ 'ի բաց ընկենուլ զբեկորս ապակւոյ և ժողովել զականս ընդ այնոցիկ։ Եւ զինչ այլ ասցէ չկամել 'ի բաց կալ 'ի ստեղծուածոյ առ ժառանգելոյ զստեղծողն։ Ո՛վ Տէր, ըմբռնեալ կամ յամօթ մեծ. այո՛. առաջի քո ամենայն ինչ է ոչ ինչ, և ես բազում անգամ նախամեծար արարի զայնոսիկ քան զքեզ. բայց թող ինձ, կամիմ յայսմ հետէ խնամանանալ։

Մասն Գ.

Պատիժքն պատրաստեալք. ա. Կորուստ բազմապատիկ շնորհաց, յորոց զրկին ապաստամբեալքն յուղղութեանցս։ բ. Փորձութիւնք ծանունք, յորոց թշուառաբար զերին։ գ. Արմատացեալ հեղգութիւն, յորում ցմահ հիւծեալ մաշեսցին։ դ. Զարաբաղդութիւն, յորս տապնապին. զի ամենայն արարածք զարթնուն 'ի վրէժ քինու արհամարհանացն Աստուծոյ 'ի չկամելն ուրուք նուիրել նմա զայս ինչ կամ՝ զայն յերկրաւորացն վայելից։

Խստասիրտն այն զիմամարտ աստուածային կոչմանց, որ կամի ծառայել Աստուծոյ և մամոնայի, անարդեսցի յԱստուծոյ և յաղօթսն և 'ի բարեգործութիւնս իւր. զի Աղօթք նորա 'ի մեղս դարձցին, զրկեալ 'ի շնորհաց կալոյ յաղօթս ըստ արժանւոյն. Աստանայ կացցէ ընդ ամմէ նորա, պատրաստ 'ի վնասել նմա յամենայնի։ Եւ աւուրք նորա սակաւք եղիցին, եթէ ոչ ըստ թուոյն՝ այլ ըստ արժանաւոր արդեանցն. Եւ զկարդ նորա առցէ այլ. պաակն և պատմուճանն փառաց պատրաստեալ նմա յերկինս՝ մատուսցի այլում։ Ոչ կամեցաւ զօրհնութիւն՝ զոր ընդունելոց էր 'ի յաղթել անձին, Հեռի եղիցի 'ի նմանէ. Սիրեաց զանէծս՝ որ սպառնացեալ էր զերելոցն 'ի մարմնոյ, Եւ եղցէ նմա։ Ցաւք և նախատինք

լինիցին մասն ժառանգութեան իւրոյ. և ազգականքն իսկ իւր, յորոց 'ի սէր անուն կնդիր զտաւ աստուածային ազգմանց, 'ի դառնութիւն և 'ի նախատինս լինիցին նմա։ Եւ 'ի մահիճս մահու լուիցէ զայն ահեղա սաստ սպառնալիս Աստուծոյ՝ թէ «Կոչէի և ոչ լսէիք, յերկարէի զբանս իմ և ոչ անսայիք, այսուհետև ես ծիծաղեցայց զկորստեամբ ձերով և ոտնհար եղէց»։ Ո՜ահաւոր բանք և վրէժխնդիր բարկութիւն Աստուծոյ։

ԻՂՁԲ

Հաւատամ, Տէր իմ Յիսուս, զի որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զքեզ, չէ քեզ արժանի։ Հաւատամ, զի Ոչ որ կարէ երկուց տերանց ծառայել, Աստուծոյ և մամոնայի, մարմնոյ և շնորհաց։ Հաւատամ, զի Որ ոչ է ընդ քեզ, հակառակ քո է՝ և որ ոչ ժողովէ ընդ քեզ՝ ցրուէ։ Եւ զի որ զկէսն կամի տալ քեզ, և զկէսն զայն ոչ առնուս։ Երկնչիմ, Տէր, 'ի պատժոց զոր սպառնաս նոցա, որք խաստասրտեալք անուանկնդիր զտանին կոչմանդ. երկնչիմ 'ի սպառնալից զատակնքոյդ «Շարժեցից զաշտարակս քո 'ի տեղւոջէ իւրմէ»։ «Բարձցի 'ի ձէնջ արքայութիւն Աստուծոյ և տացի ազգի որ առնիցէ զպտուղս նորա»։ Երկնչիմ՝ լսել որոտաձայն 'ի պահպանիչ հրեշտակէն իմմէ. եթէ. «Զի արհամարհեցեր

զբանն Տեառն, (Հակառակ կացեալ կամաց նորա), և արհամարհեսցէ զքեզ Տէր։ Վայ ինձ. որ ինչ պատահեցաւ բազմաց, կարէ պատահել և ինձ։ Քանզի, ո՞ զիտէ եթէ չիցեմ՝ և ես՝ի թուոյ նոցուն՝ որք եթէ ոչ լինիցին սուրբք, անարգեսցին։ Բարեկամ սուրբ, կամ անարգեալ։ Կամ՝ի բարձունս երկնից, և կամ՝ի խորս դժոխոց։

Ո՜վ անիծեալ յօժարութիւն՝ առ... որ լինիս ինձ պատճառ այնչափ չարեաց. ՝ի բաց լեր. ել՝ի սրտէս. երթ. դարձիմ մերժիմ՝ ՝ի քէն. ոչ հանգեսցայ երբէք, մինչև ոչ սիրեսցես բիւրիցս առաւել զսիրոդն իմ Փրկիչ, և այսպէս գոնեա ըստ մասին փոխարինեսցես այնչափ անտեսութեանցն, որովք՝ ի պատճառս քո անկայ՝ի չնորհաց նորա։ Այո՛, Տէր իմ Յիսուս, քոյովդ օրինակիք, որ առ ոչ ինչ գրելով զսէր մօր առ սիրով երկնաւոր Հօրդ, ուսուցեր ինձ խղել զամենայն կապանս մարմնոյ և արեան, ահա զամ զհետ քո.—«Խօսեաց Տէր զի լուիցէ ծառայ քո»։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Վախճան խոկմանս է հատանել յանձնէ ամենայն Ճգամբ զայն ամենայն յօժարութիւնս՝ որք թուին խոտորել յուղղութենէ. առ աղգականս, առ անձինս, առ ամենայն արարածս։ Առ այս յորդոր լինի մեզ Օրինակն Քրիստոսի, Յոյս վարձուց, և Երկիւղ պատժոց։

Ա. Օրինակ Քրիստոսի՝ որ սիրէր զարժանաւորան սիրոյ զնոսա, և սիրելի էր նոցա յանչափայլ կայր մնայր ի հրամանս Հօր, թողուլ զնոսա ի վիշտս աղքատութեան, դիտելով և նոցա զի թէ կամէր՝ կարէր ունել զնոսա ի մեծի հանգստեան, և զի այնպէս թողուլ զնոսա թուէր ինն նշանակ նուաղութեան սիրոյ, և յանկարծ անեւրեւութեանայր յաչաց նոցա՝ յանպատում ցաւս մատնեալ զնոսա, որ և յինքն առնոյր զվէրան. այլ զայս ամենայն առնէր խնդութեամբ սրտի, զի էին կամք Հօր իւրոյ: Եւ դու զսէր աղգականաց, զդիւրութիւնս քո, և զսէր արարածոց ինչ դնես խափան տիրահրաւէր կոչմանդ:

Բ. Յոյս վարձուց. Որ արձակի յայսոցիկ կապանաց մարմնոյ և արեան՝ ա. Վայելէ յանպատում ինն խաղաղութեան սրտի: բ. Ի սեր ընտանեկան յոգի ընդ Աստուծոյ: գ. Բարեգթութեամբ ակնարկէ ի նա Աստուած, և ի գութս խնամոցն մնուցանէ:

Դ. Պարտականութեան անլռողաց կոչմանն. ա. Կորուստս մեծամեծ շնորհաց: բ. Մատանիլ ի վտանգս խիստ փորձութեանց: գ. Անկումն ի յուսահատ հեղգութիւն: դ. Զարաբաղդութիւն, մատնեալ ի հակառակամարտս կիրս:

Ընթերցիր

Թուոմ. Գ. մեմ. Գիրք Գ. Գլ. 32:

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

ԽՈԿՈՒՄՆ Ա.

ԿՐԿԻՆ ԴՐՕՇՔ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ Ա.ՐՈՒՍԵԿԻՆ

Զեկուցումն

Վասնզան կրթութեանս ոչ այն է՝ եթէ Քրիստոսի արդեօք արժան իցէ գնալ զհետ, թէ Ա.ռուսեկին. զորմէ 'ի խոկումն թագաւորութեան Քրիստոսի ծանեալք զհարկն և զպարտս գնալոյ զհետ Յիսուսի. այլ այս է իբրև կանխաբանութիւն իմն առ բարւոք առնելոյ զընտրութիւն կոչմանն։ Վասն այսորիկ ցուցանի աստէն դիտումն կամ շաւիղ զոր ունի Քրիստոս առ 'ի հաստատեալ զմարդիկ 'ի նպատակն. նոյնպէս և Ա.ռուսեկին առ ածելոյ զնոսին 'ի կորուստ։ Գործքն առաջարկեալք աստէն են անդաստանք. զի որ կամի առնել ընտրութիւն ուղիղ, պարտի բուռն հարկանել զոր և է

գործոց բարեաց, և մերժել յանձնէ զչար գործս։ Վասն որոյ յառաջ բերին աստէն զարանակալութիւնք Աբուսեկին, որում ոչ պատկանէր այս անուն՝ եթէ 'ի յայտնի չարիս յորդորեալ էր զմարդիկ։ Ցուշարարութիւնս այս զիտման Քրիստոսի և Աբուսեկին ընդդիմակ միմեանց, ուսուցանէ մեզ զպատրաստականութիւն, զյեղանակ և զհրահանգ, զոր պարտիմք ունել առ 'ի լինել կատարեալ յոր և է կոչման. եթէ աւետարանական խրատուց, և եթէ պատուիրանաց, որ է ամենայն մարդոյ առ հասարակ։ Եւ յոյժ կարևոր է ամենեցուն քաջ 'ի միտ առնուլ զայսոսիկ, և կալ 'ի փարդապետութեան այսոցիկ ազդարարութեանց, առ 'ի կարող լինել զզուշանալ 'ի խաբէական փորձութեանց Աբուսեկին, և կալ անթերի յառաքինութիւնս իւրաքանչիւր կոչման։ Եւ 'ի բաղդատելն զիսկումնս զայս երկուց դրօշից ընդ խոկման թագաւորութեանն Քրիստոսի, տեսանէ ամենայն որ թէ քանի պարզ և պատշաճական կարգաւ է ինանել յընդհանուր գործոց 'ի մասնաւորս, որով և ճանաչէ ամենայն որ յայտնապար զառաւելութիւն կատարելութեանց, և յորդորի առ 'ի բուռն հարկանել զայնմանէ իւրաքանչիւր որ յիւրում կոչման։

Մասն Ա.

Ա.ծ զմտաւ յառաջ քան զամենայն զվախճան պատերազմին, առ որ բերի մէն մի յերկուց զօրացլխաց զօրութեամբ ուժոյ իւրոյ։ Ա.րուսեակն 'ի զայրոյթ կատաղութեան, և հանապազ 'ի խնդիր թէ զո՞ կլանիցէ, ոչ զայ՝ բայց միայն զի սպանցէ և կորուսցէ, և 'ի ժանիս իւր արկեալ զլորեսցէ յանգունդս գժոխոց։ Քանզի ոչ կարէ լինել հաղորդ փառաց մերոց, կամի առնել զմեզ ընկեր իւրումն պատուհասի. և զի ինքն հալածական վարեալ է յերկնից, ոչ հանդուրժէ տեսանել զմեզ զհոգազանգուածս ընտրեալս 'ի դրաւել զաթոռս ապստամբաց։ Եւ այսպէս նա յանհնարին սրտմտութեան կրճտէ զատամունս 'ի կորուստ մարդկան ազգի. և անհանգիստ ջանիւք այնմ զհետ ընդեալ է, և զամենայն հնարս հնարի անձամբ և 'ի ձեռն իւրոցն յաջողել 'ի կամսն. ոչ կասի, երբէք ոչ դադարէ, զի կորզեալ 'ի յերկնից զերեսցէ 'ի շղթայս 'ի մշանջենաւոր զեհեան տարտարոսին։ Եւ կրկնակի ատելութեամբք բերի յայս առաջին՝ ընդդէմ Աստուծոյ, զոր կամի տեսանել կապտեալ 'ի պարտուսպատշաճ պատուոյն և 'ի յարգանաց ստեղծուածոց իւրոց. երկրորդ՝ ընդդէմ մարդոյ, յորում ատէ զպատկեր Ա.ստուծին, և մախայ ընդ ընտրութիւն նորա յերանութիւն երկնից։

Իսկ Յիսուս զիտէ զփառսն Աստուծոյ, և զհնարս փրկութեան մարդոյ. «Զի եկն խնդրել և կեցուցանել զկորուսեալն». եկն զի մարդիկ զկեանս ունիցին. եկն առ 'ի տալ զկեանս իւր 'ի փրկութիւն աղգի մարդկան. եկն առնելով մեզ խոստմունս մեծամեծս և անկշռելիս, որովք աստուածեղէն բնութեանն լիցուք հաղորդակիցք։ Այս է միայնակ էութ նպատակի ուխտին սրտի իւրոյ. այս վախճան ամենայն վաստակոց և ջանից իւրոց, սրբութիւն և փրկութիւն մեր։ Վասն այսորիկ խրատիմք և մեք ջանալ ամենայն զօրութեամբ, ոչ միայն 'ի կատարելութիւն մեր, այլ և 'ի հոգալ զփրկութիւն հոգւոց այլոց։

Առ այս յորդորիմք, ա. Ընդդէմ խրոխտանաց Արուսեկին, որ թափէ զամենայն զոյժ և զօրութիւն իւր 'ի կորուստ մահկանացուաց. զի վատութիւն մեծ լինէր մեզ, եթէ սատանայ իւրովքն հանդերձ առաւել հետամուտ երևէր 'ի կորուստ հոգւոց, քան զմեր ջանս 'ի փրկութիւն նոցուն։ բ. Օրինակ Յիսուսի զոյն 'ի մէնջ պահանջէ. որ առ 'ի կորզել զմեզ 'ի զժոխոց և մուծանել 'ի դրախտն՝ ընդ ամս երեսուն և երիս տարուս այնչափ թշուառութեանց, աղետից, նախատանաց, տանջանաց, մինչև ընդ չարաչարս դրեցաւ 'ի մահ դատապարտեալ։

Մեծի ամօթոյ իրք են մեզ՝ յուլացեալ կալ և տեսանել զկործանումն մարդկան, որոց վասն Աստուածն մարդացեալ յանձն

առ երանել 'ի խաչ և մեռանել 'ի խաչի 'ի մէջ երկուց աւազակաց։ գ. Յորդորէ զեռաղանցութիւն և օգուտն մեծ նախանձու փրկութեան այլոց, զորս լիով ցուցցուք 'ի մասին սարատման։

Ո՛վ Տէր իմ Յիսուս, ծառայել քեզ է թագաւորել. որպէս երբեմն յաւազանին մկրտութեան հրաժարեցայ 'ի սատանայէ և 'ի գործոց նորա, և արդ դարձեալ նորոգեմ զխոստումն ուղղութեանցն՝ զորս 'ի միտ առի 'ի խորհուրդն թագաւորութեանն Քրիստոսի։ Ահա ընտրեալ կալայ, եկից զկնի քո յոր վայր և երթիցես, ընդ գրչու քո պատերազմեցայց որպէս հաւատարիմ զինուոր քոյին. և ոչ միայն հոգացայց 'ի կատարելութիւն իմ, այլ և զփրկութիւն ընկերին, անխտիր առ ամենայն գործ, յորում յընտրութեան սահման յայտնեսցես ինձ զկամս քո։

Մասն Բ

Զմտաւ ած զզանազանութիւն զինուց երկոցունց զօրագլխացն յայսմ պատերազմի. զի որպէս ամբարտաւանն Գողիաթ սրով և գեղարդեամբ և ասպարաւ զինեալ երանէր յասպարէզ մարտին, այսպէս Աբրահամն երիւք լեգէոնօք զինելովք յարձակի 'ի մարտ, որք են ցանկութիւն մարմնոյ, ցանկութիւն աչաց և ամբարտաւանութիւն ասի կենաց։ Ճոխութեամբն

հրապուրէ, կոչէ և յաղթէ մնաց ազա-
հիցն. 'ի ձեռն փառաց զամբարտաւանն
նուաճէ. և զմարմնասէրսն հեշտութեամբ
զգայարանաց կորուսանէ։ Խայծք են նորա
ճոխութիւնք, փառք և հաճոյք, որով զան-
զգոյշս ձգէ 'ի հաղբս իւր որսորդն դժոխայ-
ին. այսոքիկ են նորա թակարդք՝ յորս ըմ-
բռնէ զնոսա. այսոքիկ նորին վարմք՝ յորս
պարանէ զնոսա. այսոքիկ նորա զէնք՝ ո-
րովք ընդդէմ երկնից մարտնչի, սպանանէ
զհոգիս, և հնարի աւարել և քանդել զթա-
գաւորութիւնն Աստուծոյ։

Ա.յլ ընդդէմ նորա, որպէս երբեմն
Դաւիթ պարսիւքն և քարիւն և ցպովն զո-
բացաւ քան զայլազգին, այսպէս և Քրիս-
տոս զինեալ աղքատութեամբ, նախատա-
նօք, և վշտօք իջանէ յասպարէզ առ 'ի յաղ-
թել թշնամւոյն։ Զայսոսիկ երեսին զէնս
առնու 'ի կիր իբր զորձիս զիպողազոյնս
յոյժ 'ի կործանումն դժոխոց։ Զօրութեամբ
զինուցս այսոցիկ սահմանեաց առնուլ
զվրէժ փառաց Աստուծոյ Հօր և փրկու-
թեան մարդկան։

Ա.րդ ո՞ որ 'ի քրիստոնէիցս ոչ ատեսցէ
զճոխութիւն զփառս և զհաճոյս. զի նոքին
են խայծքն, վարմքն և թակարթք, որովք
Ա.ռուսեակն մանէ զհոգիս 'ի կորուստ։ Եւ
ո՞ ոչ յարգեսցէ, սիրեսցէ և ցանկասցի ա-
նարգանաց, աղքատութեան և ցաւոց,
որք են հզօր ձեռնտուք ժամանելոյ 'ի յաւի-
տենական երանութիւնն երկնից։

Այսոքիկ երեքին ընկերք Յիսուսի են 'ի մի և 'ի նոյն պատիւ ընդ սրբոյ խաչին իւրոյ, և ունին զնոյն արդիւնս արժանեաց, զնոյն զինս. զի զճշմարտութիւն յանձինս առեալ բերեն։ Նոքօք լինիմք զերծք 'ի յախտից, անզգոսնիչք ունայնութեանց աշխարհի, նմանողք Փրկչին։ Մեծ է որ 'ի նոսա օծութիւնն և քաղցրութիւն, որք զմիտս խաղաղեն, 'ի վեր զսիրտս ամբառնան քան զարարածականս ամենայն, լնուն զմիտս երկնաւոր լուսով, և 'ի սանչելի ինն քաղցրութեան ծով ընկղմեն զկամս։

Ո՛վ Տէր իմ Յիսուս. հան արմատախիլ 'ի սրտից մերոց զանմիտ յօժարութիւնս ճոխութեան, պատուոյ և հաճոյից. և փոխանակ այնոցիկ տնկեա 'ի մեզ հաստատուն և անցողղողդ սէր աղքատութեան, վշտաց և նախատանաց։

Մասն Գ.

Զմտաւ ած զզանազանութիւն քաղաքավարութեան երկուց այսոցիկ զօրաղլխայս։ Աբրահամին բաղմեալ 'ի հրալից ծծմբախառն յաթոռ իւր՝ բարձրավիզ և բարձրայօն փորոտէ, փռնչէ, զոչէ 'ի մաղձ զառնութեան. «Եկայք լցցուք զտուն մեր աւարաւ. 'ի բաղմութիւն մեծութեան մերոյ պարծեսցուք. բոլորիւք վարդից պսակեսցուք։ Ելցուք յերկինս, 'ի վերոյ

քան զաստեղս երկնից արկցուք զաթոռ մեր. լիցուք նմանողք բարձրելոյն»։ Ա-հա յայտնիկ են զրգռութիւնք սատանայ-ին. յամբարտաւանութիւն, 'ի ճոխութիւն, 'ի զեղխութիւն։ Եւ ազգք ոչ ածիցէ. մինթէ յերանութիւն։ Ամենեին ոչ. այլ յամբոխումն մտաց, յանձկութիւն, յեր-կիւղ, 'ի հառաչանս, յանյուսութիւն. այ-սոքիկ են նորա բաղմաբաշխ զանձք, փո-խանակ խաղաղութեան, զոհութեան և խն-դութեան։

Իսկ Յիսուս.—Անուամբս Յիսուս ա-կնարկեմ 'ի հեղն և 'ի խոնարհ սրտիս, 'ի բարեզութն, 'ի ժուժկալն, յողջախոհն, յո-զորմածն, և յամենայն սրբութեամբ և բա-րեբաւութեամբ զերահրաշն. որոյ վարդա-պետութիւն սուրբ խրատ տայ քեզ։ Ուրա-ցիր զանձն քո. Թող զամենայն. Բաղմես-ջիր 'ի յետին տեղւոջ. Դոյժ կալ և ընկալ։ Նպատակ խորհրդոց իւրոց ակնարկեն 'ի խոնարհութիւն սրտի, 'ի մեռուցումն մար-մնոյ և յաղքատութիւն, որոց ուղեկից են խաղաղութիւն, անդորրութիւն, խնդու-թիւն, վստահութիւն և եռանդն։

Արդ որպէս առաջինքն են մռնչինք սանդարամետական առիւծուն, այսպէս և սոքին են ձայնք զառին խաղաղութեան։ Այսոքիկ են նշանք յորոշումն յընտրութեան անդ ամենակարեւորք. այսոքիկ են պատ-ճառքն հարկաղիրք լքանելոյ և խուսափե-լոյ 'ի դրօշէ զիւին, և պատսպարելոյ ընդ

հովանեաւ աջոյն Քրիստոսի. և անդէն պա-
տերազմելոյ արութեամբ առ 'ի բեկանել
զզօրութիւն թշնամւոյն, և առ զերծուցա-
նելոյ 'ի կապանաց նորա զհոգիս։

ԻՂՁԲ

Հաւատամ, ո՛վ Տէր իմ Յիսուս, զի
դու կացուցար 'ի յաւիտենական Հօրէն Թա-
գաւոր 'ի վերայ Սիոնի և Իշխան 'ի վերայ
Իսրայելի. և թէ չիք փրկութիւն բաց 'ի
քէն, և թէ պատերազմել ընդ դրօշու քո է
յաղթանակել։ Ասացից ընդ սրբոյն Կի-
պրիանու. Ես ուխտեմ քեզ զդինուորու-
թիւն. մտանեմ ընդ դրօշու քո, երդնում
յաւիտենական թշնամութիւն ընդդէմ դի-
ւին։ Մի կարծեսցէ թէ ես վասն անարգ
վարձուց եղէց դասալիք և զդեցայց զդրաս
բռնաւորին, յորոյ 'ի գերութենէն դու զիս
փրկեցեր արեամբ քով։ Այլ կամիմ զալ
ընդ քեզ յամենայն ճակատամարտս, յա-
մենայն վտանգս, յամենայն տառապանս
'ի փրկութիւն հոգւոց։

Հաւատամ Տէր, զի երանելիք են աղ-
քատք, երանելիք սգաւորք, երանելիք հա-
լածեալքն վասն անուան քո։ Եւ զարհու-
րեալ զոդամ 'ի վայից՝ զոր կարդաս ասել-
լով. Վա՛յ մեծատանց, վա՛յ յագելոց, վա՛յ
փառաւորելոցն 'ի մարդկանէ, զի ընկալան
զհատուցումն վարձուց իւրեանց, և եկես-

ցէ օր յորում լայցեն ցվախճան անմխի-
թար։ Վասն այնորիկ անարգեմ, ատեմ,
և խուսափեմ 'ի մեծութենից, 'ի հաճոյից
և 'ի փառաց. և յարգեմ, սիրեմ և ցանկամ
աղքատութեան, տանելոյ հակառակու-
թեանց և խոնարհութեան։ Քանզի առ ինչ
օգտեսցէ ինձ կալ 'ի մեծութեան, 'ի փառս
և յերջանկութեան 'ի վերայ երկրի, եթէ
'ի պատճառս այնոցիկ հեռացեալ 'ի վախ-
ճանէն իմմէ՝ եկանեմ 'ի զինուորութենէն
և դատապարտիմ ընդ ամբարիշտ Այրե-
սեկին։ Ահ. ամաչեմ զի ցայսօր յանհոգս
դաւուրս իմ ծախեցի. և խոստանամ ուխ-
տիւ փոխարինել յայսմ հետէ վրիպակաց
կուրութեան իմոյ։

Եւ զի որ ոչ սիրէ զընկեր իւր և ոչ հո-
գայ զփրկութիւն անձին, նա ոչ սիրէ և
զԱստուած, խոստանամ միտ դնել ամե-
նայն զօրութեամբ իմով 'ի կատարելութիւն
իմ և եղբարց իմոց միանգամայն, եթէ դու
Տէր իմ կամիցիս կոչել զիս յայն. նուի-
րեմ զիս 'ի փրկութիւն մերձաւորաց, ան-
խտիր համակամ առնել զայն ընդ որ և է
շափիլ կամիցիս։ Եթէ հաճեսցիս՝ յառա-
քելութեան ընդ քաղաքս և ընդ գիւղս, և
կամ զրուածովք 'ի հեռուստ՝ պատրաստ
կամ յամենայնի, եթէ ուսուցանելով ման-
կանց կամ ծառայելով հիւանդաց, ոչ խտ-
րեմ ամենեին։ Քեզ է անկ հրամայել և ինձ
հնազանդիլ։

Աղաչեա զՈրդին ընդ ձեռն Տիրամօրն,

և զՀայր ընդ ձեռն Որդւոյն, զի տացեն քեզ զշնորհս սկսանելոյ և մնալոյ ընդ դրօշիւ Քրիստոսի յաղթութեան և 'ի նախատինս։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ե. Զմտաւ ած զվախճան պատերազմին և երկոցուն զօրագլխոցն։ Արուսեակն վառեալ է ատելութեամբ ընդդէմ քո. և ամենայն ճիգն նորա ոչ այլ ինչ է, բայց եթէ զրկեալ զքեզ յերկնից՝ արկանել 'ի յաւիտենական դատապարտութիւն 'ի դժոխս. Եկն զի սպանցէ և կորուսցէ։

Իսկ Յիսուս գիտէ զփառս Աստուծոյ և զփրկութիւն մարդկան. Եկն խնդրել և կեցուցանել զկորուսեալն։ Ապա պարտիս գնալ զինի նորա, և ընդ քոյդ խնդրել և զայլոցն զկասարելութիւն և զփրկութիւն։ Զա այս գրգիռ քեզ լինիցին ա. Կասաղութիւն Արուսեակին՝ որ խնդրէ զկործանումն քո։ բ. Օրինակն Քրիստոսի՝ որ առ 'ի զերծուցանել զքեզ 'ի դժոխոց՝ յանձին կալաւ զմահ չարատանջ։ գ. Գերազանցութիւն և օգուտ նախանձուն փրկութեան հոգւոց։

Բ. Զմտաւ ած զզանազանութիւն զինուց՝ զոր 'ի կիր առնուն երկոքանչիւր զօրագլուխք։ Արուսեակն բաղխի ընդ մարդկան՝ զէն առեալ 'ի ձեռին զնաճոյս, զՃոխութիւն և զպատիս։ Եւ Յիսուս առ 'ի փրկել զնոսա՝ 'ի վար արկանէ զմեռուցումն, զաղքատութիւն և զխոնարհութիւն։ Եւ դու ոչ ասեցուս զառաջնոյն զզէնսն, զորս չարժէ ընդ-

գէմ քո առ 'ի դատապարտել զքեզ 'ի յափ-
տեան. և ոչ սպառազինեսցիս զինուքն Յիսուսի,
որք կարող են տալ քեզ զյաղթութիւն երկնից։

Գ. Զմտաւ ածէ զզանազանութիւն քաղաքավ-
րութեան երկուց այսոցիկ զօրագլխաց։ Արու-
սեակն բազմաալ 'ի վերայ ծծմբախառն հրաբոր-
բոք ահռոյ, յահագինս փորոտէ գոռոզու-
թեամբ. Հապա վայելեսցուք, լցցուք աւարաւ,
բարձրացուսցուք զդլուխս մեր 'ի վերայ ամենայն
աղգաց։ Իսկ Յիսուս նստեալ 'ի խոնարհ, քաղցր
և հեզ աչքք հրաւիրէ զքեզ գնալ զկնի իւր՝ ու-
լացեալ զանձնդ, առեալ զխաչ քո, բազմեալ 'ի
յետին տեղին։ Ո՞յր հրաւէրք են յերջանկութիւն։
Արուսեակն արկցէ 'ի սիրտ քո տագնապ, կատա-
ղութիւն, անյուսութիւն, որք զքեզ յաղէտս
թշուառութեան արկցեն ասա և 'ի հանդեր-
ձեալն։ Սակայն Յիսուս լցուսցէ զքեզ խաղաղու-
թեամբ, միսիթարութեամբ և խնդութեամբ։ Եւ
դու ոչ կամիս մտանել ընդ դրշիւ նորա։

Ընթերցիր

Թովմ. Գեմբ. Գիրք Գ. Գլ. 51։

ՊԱՐԱՊՈՒՄՆ

Թէ զինչ իցէ նպատակ կրրոբեան աւուրս.

Ա.

Օրինակաւ Քրիստոսի բարձեալ 'ի միջոց զվեցեսին խոչս անխտիր համակամութեան, և ծանուցեալ զպարտս մեր ծառայելոց Աստուծոյ ըստ նմանութեան Քրիստոսի՝ 'ի նախատինս, 'ի թշնամանս և յաղքատութեան, ուրպէս և յորում վայրի և իցէ, յորում պաշտաման և յաստիճանի առաքինութեան, յոր գործ և յոր կոչումն և կոչեսցէ. արդ առաջնորդիմք յայլ ևս բարձրագոյն առաքինութիւն օրինակաւ երկուց զրոշից՝ լինել անխտիր առ առաքելական կեանս, յորում ընդ անձին և այլոց փրկութեան սկսանիմք ունել խնամ, եթէ կոչեսցէ զմեզ Աստուած. կամ եթէ իցեմք կոչեցեալք՝ ընտրեմք զայն շափոյ ընդ որ կամիցի Աստուած հանել զմեզ յառաւել կատարեալ աստիճան այսր ազնուական կոչմանս։

Առ այս պարտ է վերադառնալ յերեսին յայնոսիկ յորդորս՝ յորս պարապեցաք 'ի խոկմանն, զի լաւ ևս զրոշմեալ 'ի միտս մեր առաւել քան զառաւել վառեսցուք ձեռն արկանել յեւս մեծամեծս։ Առաջին է

դայրոյթ ցասման սատանայի՝ որ մոլեգին վաստակի 'ի կորուստ հոգւոց մերոց. Ա.բու-սեակն յասպարիզին Բաբելոնի նստեալ 'ի հրաւորքաւ ծծմբախառն աթոռ, և 'ի ժողով զումարեալ զանթիւ զունդս դիւաց, առաքէ ընդ աշխարհ ամենայն առ 'ի վնասել. ոչ ումեք ակն առեալ, ոչ քաղաքի, ոչ տեղւոյ. և ոչ անձանց. և զզրգռեալ զնոսա կատաղութեան բանիւք՝ հրամայէ նոցա ընդ ամենայն վայրս ձգել վարմն և հաղրս և զարանս, և դաւս զործել, առ 'ի կարթել զմարդիկ և միահամուռ լնուլ զահավէժ ցնդմամբ յանդունդս։ Ա.նյապաղ ամենեքին միանդամայն յարձակեալ, ընդ ամենայն երկիր, ոչ զադարեն 'ի զառածեցուցանելոյ զմարդիկ։

Ա.հաղին է տեսիլն, զի «Լայնեցին զժոխք զանձինս իւրեանց, և բացին զբերանս իւրեանց», առ 'ի կլանել զբիւրս բիւրուց մարդկան։ Ա.ղտարն անհնարին ցաւ է սրտի տեսանել զդարանակալութիւնս զիւին բազմահնար և ամենապատիր լարեալ 'ի կորուստ մարդկան, և թէ որպէս խրոխտապանծ զուռզայեալ յոխորտալ՝ առաթուր հարեալ զյանձնապաստան մարդիկ՝ ծաղրելով զանմոռթիւն նոցա, որք ոչ առնուն յանձն մոռանել ընդ զրօչիւ Քրիստոսի անխտիր համակամութեամբ, այլ կարծեն պատերազմակից նմանլինել առանձին խումբ կազմեալ և ճակատ յարդարեալ ըստ ընտրութեան կամաց իւրեանց ընդդէմ չարա-

նենգ զաւանաց Աբուսեկին։ Աւաղ անզգամն տուգանացս։ Այս անհնարին լինելի մեզ տեսանելով զայսպիսի աղէտս տարակուսի՝ հանդարտել լռել և թողուլ զգինս արեանն Քրիստոսի, զտաճարս Հոգւոյն սրբոյ, յաւար թշնամւոյն խմբովին մատնեալ ի կորուստ։ Ահ. ամաչեսցուք, զի առաւել փութաջան է սատանայ ի դաւել զմարդիկ, քան թէ մեք ի փրկել զնոսին։ Զինչ տացուք պատասխանի Աստուծոյ, յորժամ պահանջեսցէ ի մէնջ զհամար։

Այլ յորդոր լինելի մեզ Օրինակն Քրիստոսի, որ ի փրկութիւն հոգւոց մարմնացաւ, չարչարեցաւ, եհեղ զարիւն իւր, և զդառն մահ ընկալաւ. և զմեզ կոչէ վաստակակից լինել ընդ իւր ի փրկութիւն մարդկանն. և առ ի քաջալերել զմեզ և ցուցանել մեզ զանչափութիւն սիրոյ իւրոյ առ մարդիկ՝ հաստատէր զխորհուրդ պատարագին, յայտ իմն արարեալ՝ զի եթէ զոյր հնար, վասն մէն մի մարդոյ զօր ամենայն կամէր կրել զնոյն կիրս չարչարանաց և խաչի. զոյն ի բերանոյ Քրիստոսի ասէ և ոմն ի սրբոց՝ թէ Պատրաստ է կրել նոյնչափ ևս առ ի փրկել զմին միայն ի կորուսելոց. ոչ և ինքն Քրիստոս յօրինակ հարիւր ոչխարացն զնոյն ցուցանէ։ Ահ. որպիսի՞ քարացեալ ունիցի սիրտ այր՝ որ առ այս օրինակ Յիսուսի ոչ վառի ի նախանձ փրկութեան հոգւոց։

Երրորդ յորդոր է Գերազանցութիւն և

Օգտութիւն առաքելական կոչմանն։ Գե-
ղազանցութիւն նորա է անչափ, զի այնու
լինիմք գործակից Աստուծոյ. «Գործակից
ենք Աստուծոյ» ասէ առաքեալ. վասն
այնորիկ աղաղակէ սուրբն Դիոնեսիոս.
«Յամենայն աստուածայինսն աստուածայ-
նագոյն է՝ լինել գործակից Աստուծոյ 'ի
փրկութիւն հոգւոց»։ Զի՞նչ զՕգտութենէն
ասել արժան իցէ. եթէ Աստուած վասն բա-
ժակի միոյ ջրոյ հատուցելոյ աղքատին խոս-
տանայ վարձս, զի՞նչ ապա տացէ վասն
արեան իւրոյ մատակարարելոյ այնչափ հո-
գւոց 'ի խորհուրդ պատարագի. զի՞նչ տա-
ցէ վասն այնչափ հոգւոց, զորս զերծու-
ցեալ 'ի գժոխոց ածեր 'ի սենեակ անհուն
սիրոյ սրտին Յիսուսի։

Բ

Յայսմ ամենայնէ կարես իսկ քաջ 'ի
միտ առնուլ, թէ քանի՞ իրաւամբք արժան
է քեզ մտանել յայս կոչումն առաքելական
կենաց եթէ կոչեցիս յայն. իսկ եթէ իցես
կոչեցեալ, ելանել յայնմ 'ի կատարելագոյն
աստիճան։ Պարտ է քեզ 'ի միտ առնուլ և
զայս՝ զի առ 'ի զրիլ 'ի զինուորութիւն
Քրիստոսի ոչ է շատ արկանել 'ի բաց զնչան
Աբուսեկին. զի զայն արարեալ իսկ համա-
րիս 'ի խոկման թագաւորութեանն Քրիս-
տոսի։ Այլ պարտ է քեզ զհետ գնալ Քրիս-
տոսի ըստ կարի և առաւել ևս քան զկար

մերձ առընթեր կալով նորա առաւելեալ յոյժ 'ի կատարելութեան, ազատ համարձակ, և զինուք և օրինակաւ նորուն իսկ զօրագլխիդ։ Ա.յս վախճան է ընկերութեան մերոյ, այս օրինակ վարուց մերոց զրելոյ յորդեղութիւն Ցիրամբն, զինեալք ընդ զրօշիւ Քրիստոսի. զի ընկերութիւն մեր հաստատեալ 'ի Հօրէն մերմէ, է կոչումն առաքելութեան, և է ճշգրիտ նմանութիւն Փրկչին մերոյ Ա.ստուծոյ։

Ա.յլ իմն երկրորդ պտուղ խոկմանս է Ցարդութիւն, սէր և ցանկութիւն մեծ նախատանաց, աղքատութեան և վշտաց. քանզի տեսեալ զի Ցիսուս խմաստութիւն անչափ զայսոսիկ արկ 'ի կիր, և սոքօք պարտեաց զատանայ, և մեք յորդորիմք յարգել զսոսին, և Ջանամք յանձինս բերել զվարս Ցիսուսի։

Երրորդ պտուղ է Ա.մենայարդար պատրաստութիւն հոգւոյն յընտրութիւն կոչմանն։ Ա.ռ բարոք ընտրութիւն պարտ է ճանաչել զհոգիս, և զերժմունս հոգւոյն, թէ ո՞ր յԱ.ստուծոյ իցէ և ո՞ր 'ի դիւաց. զայսոսիկ յայտնապէս առաջի առնեն մեզ երկոքին զրօշքս։ Ի խոկումն ընտրութեան իրիք եթէ նշմարես 'ի սրտիդ զծուխս ամբարտաւանութեան, զհուր բղջախոհութեան, զխաւարումն մտաց, զտաղնապ, զվատասրտութիւն, երկիւղ, տխրութիւն, անձկութիւն, զիտա աներկբայ, զի ներդործութիւն է Ա.ռուսեկին կատաղեալ և զայ-

բաղին։ Այլ եթէ է 'ի խորս սրտիդ չափա-
ւորութիւն Քրիստոսի զուարթացին, խո-
նարհութիւն նորա, զգաստութիւն, քաղցր
հրաւիրանաց ձայն, պարզութիւն զիմաց
նորա, հանդարտութիւն սրտի նորա, որով
կոչէ զքեզ 'ի հեզութիւն, 'ի խոնարհութիւն,
'ի խաղաղ և 'ի պարզ ըղձանս, մի երկմտիր
զի այս ձայն է հրաւիրանացն Քրիստոսի
առ քեզ։

Պարտ է միտ դնել և երկուց այլոց աղ-
մանց. ա. Որոց ինչ յօժարեալ լցեալք յընտ-
րութիւն։ բ. Ի յեղանակն կոչման մերոյ
յընտրութիւն։ Եթէ զզայցեալք 'ի մեզ զր-
զիւ յընտրութիւն չարի իմիք, կամ թէ-
պէտ անդանագան իրաց, բայց վտանգա-
ւորաց կամ հաճոյականաց անձնասիրու-
թեան և զգայութեան, կամ դամբարտա-
ւանութիւն տածողաց. և կամ դարձեալ
թէ և իրն ինքնին լցէ բարւոք, բայց եթէ
յայտ լիցի 'ի փորձոյ, զի ընդ այդ շարժումն
սրտին յուղին միտք մեր, և իմանամք փոր-
ձութիւնս, անձկութիւնս, անվստահու-
թիւն, մթութիւն մտաց, այսոքիկ են նշանք
յայտնիք եթէ զրգռութիւնն է 'ի չար ոգւոյ։

Ա. ռ լաւ ևս ճանաչելոյ զտոսին յոյժ
կարևոր է ճանաչել զդիւտս հնարից դիւին,
որովք 'ի վերայ յարձակի բախել ընդ մեզ
և զմեզ ընդ լծով արկանել։ Զի յաճախ ար-
կանէ զհիմն կործանման մերոյ՝ զրգռելով
'ի մեզ զցանկութիւն ճոխութեան, իբրև զի
կարևորք են կենաց և 'ի պահպանութիւն

զերդաստանին։ Յետ այսպէս թակարդելոյ զմեզ, արկանէ 'ի միտս իւրմ պատիւս 'ի ձեռս բերելոյ աւելորդաւն և զբարձրութիւն վիճակի։ Ասէն 'ի վերայ հասանէ ամբարտաւանութիւն, մոռացումն առաջին վիճակին, զեր 'ի վերոյ համարել զանձն քան զայլովք, պերճանալ մեծութեամբն, և յանարգս ունել զայլս։ Ա. յոցիկ անկարգ բաղձանաց ճոխութեան, պստուոյ, փառաց, և զերազանցելոյ զայլովք, ծնանին այլ ամենայն ախտք, ևս առաւել հաճոյից մարմնոյ և զեղխութեան։

Գ.

Իբրև զխոկումն երկուց զրօշից՝ կարևոր է ևս խոկումն երից կարգաց մարդկան։ Քանզի յետ գնելոյ ուստ ընդ անձին ծառայելոյ Աստուծոյ 'ի կոչմանն՝ յոր կոչեցեալ է, կամ՝ յաստիճանի կատարելութեան՝ յոր ելանել հրամայեսցէ, պարտ է ճանաչել և զչափսն ընդ որս հնար է հասանել յայն կոչումն և յայն աստիճան կատարելութեան. յայսմ՝ է ժայռն բաղմամտանդ՝ յոր հնարի դեռն հարկանել զուխտս սրտից մերոց և խորտակել։ Զի են որք 'ի ճանաչելիս բանց զկարևորութիւն զդաստութեան դարձի յուղղութիւն, շատ իսկ ուղղեալ համարին զանձինս, և ոչ ճանաչեն զխատիր՝ որ է ընդ մէջ փափաքելոյ 'ի փոխումն վարուց և փոխելոյ զայն ճշմարտութեամբ։

են որք զասեն զանձինս ընդ սուրբս, զի ծանեան զյարդ սրբութեան, և զի սիրեն զսրբութիւն. ոչ կարելով զանազանել զի այլ է մեծապէս յարգել զսրբութիւն, այլ անյողդողդ պարապել 'ի գործս սրբութեան. զի խտիր մեծ է ընդ ծանօթութիւն և ընդ կրթութիւն առաքինութեան։

Ի դարման այսոցիկ չարեաց յաւելեալ է աստուածային ազգմամբ այս խոկումն երից կարգաց մարդոց, առ 'ի համոզել զմեզ զի մի՛ չատ համարեսցուք զուխտն միայն յայսմ հետէ ծառայելոյ Աստուծոյ, նորոգելոյ զվարս, նմանելոյ Քրիստոսի, այլ զի թեակոխեսցուք ևս եռանդագին սրտիւ 'ի վաստակել և 'ի գնալ ընդ շաւիղս՝ որք ապահովութեամբ ածեն զմեզ 'ի կրթութիւն ուսանիցն այնոցիկ։

Յայնմ խոկման յառաջ բերին երեք կարգք մարդկան. Առաջինքն կամին փոխել զվարս, գնորոգ կենաց բուռն հարկանել, դիմել 'ի կատարելութիւն, բայց ոչ կամին գնել 'ի գործ որ ինչ պէտք են առ 'ի ժամանել յայս գերազոյն վախճան, և կամ ազետալի իմն յապաղմամբ յամեցուցանեն զայն ցմահ։ Սոքա այսոքիկ 'ի փափաքանս իւրեանց հիւծին, այլ երբէք ոչ մատչին 'ի գործ. ցանկան, այո՛, ստանալ զխոնարհութիւն, բայց մերժեն յանձանց զայն ամենայն՝ որք մարթին ածել զնոսա 'ի նոյն. խորշին յանարդ վայրաց, 'ի ստորին պաշտամանց և 'ի յետին աստիճանաց։

Այլ որ զարհուրեալ 'ի բանիցն՝ Վայ ձեզ մեծատանց, կամի բուռն հարկանել զաղքատութենէ և նմանել Քրիստոսի. բայց ոչ կարէ երբէք սահմանել անձին 'ի բաց արկանել զայնոսիկ հոպատանս, զիւրութիւնս, զարդս և զդրամս։ Միւս այլ որ ճանաչէ զհարկ մեռուցման, չափ դնելոյ զդայարանաց, սանձելոյ զանսանձ ախորժակսն, և ասէ միշտ. Արարիչ, այժ արարիչ. բայց զպարտիլն 'ի նոցունց առ ոչ ինչ զրէ. կորուսանէ զդէպսն, զժուարն ազանել զայն ինչ զգեստ, ոչ կարէ իւիք բուռն առնել անձին առ 'ի մատչել 'ի գործ։ Են և այնպիսիք որք բազում անգամ հաստատեալ 'ի սրտի մտանել 'ի չափոյ կոչման առաքելական կենաց, բայց հասեալ ժամուն մատչելոյ 'ի գործ, և խիճք փոքրիկք խոչք լինին նոցա և արգելուն։ Սոքա ամենեքին նման են առն ծուլի՝ որ կամի և ոչ կամի. և այնմ պատկերի քաջի զորականի, որ յարձակեալ և վերացուցեալ զսուր՝ կշռէ զհարուածն, այլ երբէք չիջանէ սուսերն։ Կամին ժամանել 'ի զագաթն լերին՝ նստեալ առ ստորոտովն. սոքա են կատարեալք առանց վաստակելոյ, և սուրբք առաստուերագիրք։

Երկրորդ կարգ մարդկանն գործեն ինչ առ հասանելոյ 'ի վախճան իւրեանց, բայց ոչ զայն զոր պարտ էր նոցա առնել։ Անոնն քայլս ինչ. այլ խարանօք զնան զհետ կամացն Աստուծոյ. յառնելն զմի

ինչ՝ ասեն. Զայս կամի Աստուած, քաջ է լիցին կամք նորա. այլ յայլ ինչ ևս զնան զհետ կամաց իւրեանց, ասելով. Մի՛թէ Աստուած այլաձեւ կամիցի, ոչ ինչ են իրքդ. և այս ևս զոր մեք արարաք բարւոք է և 'ի վառս նորա։ Ո՛ անմիտ վաճառականք, զոր ինքեանք կամին զայն վաճառեն, և ոչ զոր զնողն կամի. և զգնողն կամին ստգտանել, զի ոչ զբարին զոր ընտրեալ տան՝ կամի զնել։ Ոչ թուի նոցա գործ բարեմարդութեան ժխտել զամենայն Աստուծոյ, և կամին մտանել ընդ նմա 'ի դաշն ծառայել փոխանակաւ երբեմն Աստուծոյ, և այլ երբէք կամաց իւրեանց։ Ցաց այսչափ, եկիջ ցայս վայր. ահա յայտմանէ զրկեմ զիս, և զայն բոլորանուէր տամ քեզ. զայս պահեալ անձնասիրութեան իմոյ, իսկ այն ոչ է վասն իմ. և այսպէս կամին զԱստուած և զանձինս միանգամայն զոհ կացուցանել։ Շատ լիցի քեզ ցայսվայր, Տէր իմ, շատ իսկ է. մի՛ զառաւելն պահանջեսցես, զի ոչ կարեմ։ Եւ դու զի զթած ես, զիտեմ զի ներեսցես տկարութեան իմոյ. «Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար»։ — Քրիստոս ասաց, այլ դարձեալ հնազանդեցար. և սոքա ասեն, և յետ այնորիկ դադարին, և ոչ ևս այլ կամին լսել զկամս Աստուծոյ։

Երրորդ կարգ մարդկանն են նոքա, որք չառնուն յանձն զոր և է յապաղումն, և չթողուն զոր և է պատիւ յօգուտ 'ի վար արկանել, և անդուլ վաստակին առ հասա-

նելոյ 'ի սահմանեալն աստիճան կատարելութեան՝ զհետ գնալով յամենայնի կամաց Աբարչին և Ցեառն իւրեանց, այսինքն ընդ պատեհութիւնս՝ զորս ցուցցէ նոցա Աստուած։ Սրբազան առանց զանազանելոյ, արիական հոգւով, զամենայն ճգունս և զկարծիս իւրեանց ձօնեն Աբարչին, զի զանձանց և զամենայն գործոց իւրեանց այնպէս հրամայեսցէ, որով նմա լաւ ևս ծառայել կարասցեն ըստ բարեհաճութեան նորա, անդարձ վճռեալ 'ի սիրոս իւրեանց չգնելոյ սահման չնորհացն Աստուծոյ, պատրաստք մնալիւր տանելոյ ամենայն վշտաց 'ի հաճոյս կամացն Աստուծոյ։

Առաջնոյ կարգի անձինք են հիւանդք 'ի խնդիր ելեալք բժշկութեան, բայց ոչ ինչ հնարիւք կարեն առնուլ զդեղ զարմանոյ։ Անձինք երկրորդ կարգի կամին զտանել զառողջութիւն, բայց քաղցր և ախորժահամ դեղովք։ Իսկ զտեսակսն յերրորդին են հիւանդքն այնոքիկ՝ որք յոչ ինչ դեղոց հրաժարին եթէ իցեն քաղցունք կամ դառինք, շատ է զի բժշկեսցին։

Պատմութիւն Նեեմանայ ասորւոյն զեղեցիկ օրինակ ընծայէ մեզ գործոց սոցուն. որում իբրև հրամայէր Եղիսէ երթալ լուանալ եօթնիցս 'ի Յորդանան առ 'ի սրբել 'ի բորոտութենէն, ցասեաւ նա՝ զի ոչ սրբեաց զինքն անդէն բանիւ իւրով. և ասէր եթէ «Ո՞չ լաւ ևս իցեն ջուրքն Դամասկոսի քան զամենայն ջուրս Իսրայելի»։ Բայց ծառայք

նորա համոզկեր եղեն նմա՝ լսել ձայնի մարգարէին. գնաց լուացաւ 'ի Յորդանան, և սրբեցաւ։ Այլ որ կամի բժշկել՝ անցցէ 'ի թիւս երրորդացն. ապա թէ ոչ, կեղեք իւրոյ բորոյն ոչ անկցին երբէք 'ի նմանէ։

Դ.

Առ 'ի յաջողել 'ի սոյն պարտ է ունել, ըստ ասելոյ վերագոյն, սիրտ անխտիր համակամ առ ամենայն, զերծ 'ի կրից, զի միտքն պարզեալ 'ի մայլից կարասցէ ընտրել, և սիրտն պատրաստ լցէ 'ի զորձել. այնպէս զի եթէ ախտաւոր բերումն հոգւոյս մերոյ միտել 'ի չարն կամիցի, պարտիմք բուռն առնել անձին զառնալոյ առ առաքինութիւնն։ Եթէ անչափ ըղձիւք ելեալ եմք 'ի խնդիր մեծութեան, ոչ միայն պարտ է փոյթ 'ի մէջ առնուլ առ 'ի չափաւորել զիրձս, այլ և բռնադատութեամբ զարձուցանել զբերումն սրտին առ աղքատութիւն. առնել որպէս յորժամ ուղղել կամիցիս զծառ կորացեալ 'ի մի կողմն. զոր 'ի հակառակն կոյս բուռն ձգեալ և հակես, մինչև ապա կարէ կալ յուղղութեան։

Եւ թէպէտ յայսմ երկրորդի մասին կրթութեանս բովանդակ յորդորիմք միշտ բերիլ առ կատարելութիւն, այլ ոչ ուրեք այնպէս ուժգնագոյն և ջերմագոյն յորդորանաց ունիմք պէտս, որպէս 'ի կրթութեան երից աստիճանացն խոնարհու-

թեան, յորոց երրորդն այն է՝ զի և անդ իսկ՝ ուր ճոխութիւն և աղքատութիւն հաւասարապէս՝ի փառս իցեն Աստուծոյ, ըստ ձիւք ճշգրտատիպ նմանութեանն Յիսուսի ընտրեսցէ զոք աղքատ զոյ որպէս զնա, զնախատինս և զյիմարութիւն յանձն առնուլ մանաւանդ, քան թէ՝ի ճոխութեան լինել, պատուիլ և փառաւորիլ որպէս ի մատուն։ Եթէ արչափ օգտեսցէ խոկումս այս՝ի զարթուցանել զյօժարամտութիւն առանթերի կատարելութիւն, ինքնին տեսանի առանց այլոց ցուցմանց։ Յայսմ ցուցանի իմաստուն կարգաւորութիւն կրթութեանս՝ որ ոտն առ ոտն ածէ հանէ զմեզ յայս դեղբագոյն աստիճան կատարելութեան։

Զսոյն զայս դերագոյն աստիճան առաքինութեան, որ է կատարումն և վերջին նպատակ կրթութեանս, անուանեցաք երրորդ աստիճան խոնարհութեան. քանզի՝ի նմա է սերմն բովանդակութեան առաքինութեանց. և զի է սա յոյժ կարևոր, որպէս է իսկ հրաշական նմանութիւնն Քրիստոսի, վասն որոյ պարտ է զօրն ցերեկ ոչ բոճալ ընդ միտ զայսոսիկ երիս աստիճանս խոնարհութեան, և զիմել առ Տիրամայրն՝ խօսելով առ նա աղաչաւոր, զի բարեխօսեսցէ վասն մեր առ Որդին Հնորհել մեզ զայս երրորդ աստիճան խոնարհութեան. և առ Որդին, զի հաճեցուսցէ զկամս երկնաւոր Հօրն զիջանել՝ի խնդիրս մեր։ Պարտ է ևս աստէն բաղմապատկել զե-

ռանդն սրտին. զի եթէ յամենայն ընթացս կրթութեանն էր այն կարևոր, ևս առաւել արդ մերձ առ դուրս հասեալ ժողովելոյ զպտուղ կրթութեանն։

ԽՈԿՈՒՄՆ Բ

Ի ՎԵՐԱՑ ԵՐԻՑ ԿԱՐԳԱՑ ՄԱՐԴԿԱՆ

Մասն Ա.

Զմտաւ ած զչարութիւն առաջնոյ կարգի մարդկանն, որք լուսաւորեալ 'ի Հոգւոյն սրբոյ՝ ճանաչեն զոր պարտ է առնել, և յաժարեալ իսկ են 'ի նոյն, բայց ոչ երբէք ձեռն 'ի գործ արկանեն, յառիթսն ոչ մերձենան, ձեռն զգաւուով արկեալ օր յօրէ յամեցուցանեն մատչիլ 'ի գործ ցմահ։ Եւ զի՞նչ անիրաւ քան զայս. ճանաչել զպարտս իւր. զիտել զպատճառսն՝ որք անձին պարտ առնեն. ունել զամենայն դիւրութիւնս 'ի գործել, իմանալ յանձին և փափաք գործելոյ, սակայն և այնպէս ծնղիլ 'ի դատարկութեան, ննջել յանհոգս, և ձեռնպահ լինել յամենայն գործոց՝ որք կարեն ածել զայր յուղղութիւն. և իմ իմիք դուշակ իցէ այս, բայց չարակամութեան և պղերգութեան։

Բայց վա՛յ մարդոյն, որ զիտէ և ոչ առնէ. զի աւելի դատաստանս ընկալցի։ Զի եթէ Քրիստոս յայտնիկ կրթութիւնս չէր նոցա խօսեցեալ, մեղ ինչ ոչ զոյր նոցա. այլ յետ զմտաւ ածելոյ զամենայն զյաւիտենական ճշմարտութիւնս, յետ ճանաչելոյ զճանապարհն առաքինութեան, յետ այնչափ լուսոյ շնորհաց, յետ այնքան յորդորանաց՝ մնալ թաղեալ յառաջին կիրսն, այս սասանեցուցանէ և զմիտս յանձնապատանս, յահ և յերկիւղ ըմբռնէ և ըզմեղկս 'ի փրկութիւն իւրեանց։

Ո՜վ ամենաբարեգութ Տէր իմ Յիսուս, զինչ այս գործ է իմ. որպէս ոչ զարթնում առ այսպիսի ազգոյ կոչումն. լսեմ ահա զգոչումն յունկն իմ. «Ի բերանոյ քում մէ զատեցայց զքեզ ծառայ անհաւատ»։ Յամեցո՛, Տէր, զդատաստան քո ազատեմ. ահա բուռն արկանեմ 'ի գործ, և ոչ դադարեցայց մինչև ոչ հասից յայն աստիճան կատարելութեան զոր պահանջես յինէն։

Մասն Բ

Զմտաւ ած զչարաչար անխոհեմութիւն երկրորդի կարգի մարդկանն, որք առ 'ի զարդանալ յառաքինութեան՝ կամին 'ի գործ արկանել զառիթս հաճոյականս ևեթ մնայ իւրեանց, և ոչ զԱստուծոյն։ Տեսանեն զպէտս ուղղութեան վարուց, և խորշին յիւրեանց ներհակակիր սովորութեանց.

ընտրեալ են՝ի միտս իւրեանց ծառայել Ա-
ստուծոյ նմանելով Քրիստոսի. և վասն այնո-
րիկ պարտ անձանց զրեն՝ի զործ արկանել
զառաքինն կարևորս առ այն, բայց զայնո-
սիկ միայն որք անձնասիրութեան և ցան-
կալի իւրեանց զրզանացն չիցեն հակառակ։
Եւ որք այսպէսն զործեն՝ քանի՛ թիւնալից
պտղովք լնուն զդրդս իւրեանց. քանի՛ թիւ-
նալից պտղովք. քանզի ա. Կորուսանեն
զպատուղ այսոցիկ կրթութեանց, զայն զե-
բաղդն աստիճան առաքինութեան և զյա-
ւիտենական երանութիւն, առ որ կոչե-
ցեալք են. կորուսանեն զմեծամեծ շնորհս՝
որք պատրաստեալ են կատարեալ յաղթո-
ղաց, և զայնչափ հոգիս՝ զորս արիացելոցն
իւրոց զինուորաց տայ Աստուած զերծու-
ցանել՝ի զերութենէ։

բ. Որք այսպիսիք՝ի պատուհաս զժկա-
մակութեան իւրեանց մատնին՝ի փորձու-
թիւնս ծանուն, ՝ի բազում թերութիւնս,
՝ի մշանջենաւոր խմն քուն թմբրութեան, և
յաճախ՝ի մերձաւոր վտանգ զատապար-
տութեան. որպէս զպատանին զայն՝ որ
լնոյր զամենայն պատուիրանս, այլ զկատա-
ռեալն լինել չէառ յանձն, և լուաւ՝ի Քրիս-
տոսէ զլինելն զժուարին մատանել այնպի-
սեաց յարքայութիւն Աստուծոյ՝ որք զիւ-
րեանցն զիւրութիւնս առաւել սիրեն քան
զԱստուած. որ մերժեաց յանձնէ զկոչումն
Աստուծոյ և զնաց տխրեալ. ընտրեաց
հրաժեշտ տալ՝ի Քրիստոսէ և ոչ յաշխար-

հէ. եղուկ նմա. ո՞րպէս կարասցէ անպատ-
կառ յանդիման լինել ատենին Քրիստոսի,
խնդրել զարձս պատուիրանապահութեան
իւրոց, որ սիրեաց զինչս իւր քան զԱ-
ստուած։

գ. Ընդ այս ճանապարհ ոչ եթէ նուա-
զեն վաստակք, այլ բիւրապատիկ առաւե-
լուն. յորոց զարհուրեալք յուսակորոյսք,
յանձն առնուն լքանել զճանապարհն ա-
ռաքինութեան։ Քանզի կորուսանեն զօ-
ծումն զայն քաղցր ճանապարհին արդա-
րութեան, որ սովոր է թեթևացուցանել
զվաստակս. և զրկին 'ի չնորհաց անտի,
որ զօրացուցիչն է տկարաց, և ընդ ծան-
րութեան բեռին ածէ 'ի ձեռին զմրցանակն.
և յանչափս նուազ լինին վարձքն, որք թե-
թևացուցիչք են ծանրատաղտուկ վաստա-
կոց. և 'ի վերայ այսր ամենայնի 'ի վերայ
հաճոյից կամաց նոցա արկանէ Աստուած
զդառնութիւն, զճանապարհս նոցա փշա-
լիցս յարդարէ, մութ, զիշեր և ահ և դո-
ղումն ունի զնոսա յամենուստ։ Եթէ այդ-
պէս իցէ, ո՞ է այրն որ կամիցի խցանել
զականջս իւր առ ձայնն Աստուծոյ, որ ընդ
շաւիղն՝ զոր առաջի առնէ նմա, կոչէ զնա
'ի յափտենական յիւր երանութիւնն։

Մասն Գ.

Զմտաւ ած զերանութիւն երրորդ կար-
զի մարդկանն, որք յանձն առնուն զնալ

ընդ չափիդն յոր առաջնորդէ նոցա Աստուած, որ և է ապահովագոյն առ 'ի հաստատեալն 'ի վախճանն ցանկացեալ։ Արդ յուշի կալեալ միայն զծառայութիւնն Աստուծոյ, անխտիր համակամ յամենայնի, կան պատրաստք առ ամենայն ակնարկութիւնս Աստուծոյ, զոր 'ի նշմարել անդ՝ անյապաղ եռանդեամբ զօտի ածեալ մխին 'ի գործ։ Խորշին մերժին յամենայն ընտրութենէ խորհրդոց. ամենևին ոչ ինչ զդայցուցանեն մարմնոյ և արեան, և ոչ թողուն բնութեան խօսել ինչ. և արութեամբ քաջութեամբ յարձակին դիմեալք առ բարձրագոյն կատարելութիւն, սուրալով ընդ չափիդն անխոտոր՝ ընդ որ առաջնորդէ նոցա Աստուած։

Բայց որպիսի՞ երանութեանց զուսն լինի նոցա այս անխտիր համակամութիւն անդէն մինչդեռ կրեն զլուծն Քրիստոսի. ա. Յորդէ 'ի սիրտս նոցա մխիթարութիւն երկնաւոր շնորհաց, յանձինս բերելով ըստ մասին զչորս պարգևս վառաւորեալ մարմնոց. որք են՝ պայծառութիւն մտաց 'ի ճանաչել զճշմարտութիւնն յաւիտենական. թեթևութիւն 'ի թռանել 'ի գործս բարիս. նրբութիւն մտաց հանճարոյ 'ի կերպարանել 'ի միտս զպատկերս երկնաւորս. անչարչարութիւն իմն հոգւոյ՝ յառաջ եկեալ 'ի սանձելոյ զախորժական անդուլ։

բ. Լցեալ լիացեալ այսպիսի երկնաւոր մխիթարութեամբք, երբէք երբէք այնպէս

զեղուն, մինչև ընկղմել 'ի նոսին, և ան-
հանդուրժելի լեալ անձանց և զմայլեալք
սկսանին նուաղիլ 'ի սիրոյ, և իբր թէ ընկ-
ճեալք՝ սկսանին աղաղակել. Շատ իսկ է
Տէր իմ, շատ է արդ, մի այլ յաւելուլ։

գ. Զայսպիսի արիասիրտ ծառայս իւր
Տէր սկսանի տածել առանձին խնամովք
իբրև զփափկիկ մանկունս սիրոյ իւրոյ, և
իբրև զբիբս աչաց իւրոց, այնպէս զի ա-
մենայն ինչ լինի նոցա 'ի նպաստ։

Պտուղ խոկմանս է ոչ միայն անփո-
փոխ հաստատութիւն մտաց ծառայելոյ
Աստուծոյ, նմանող լինելով Քրիստոսի՝ 'ի
կոչմանն յոր կոչեսցէ զմեզ, այլ և ամե-
նայն զօրութեամբ բուռն առնել անձին կա-
տարել գործով զոր խոստանայն, պարա-
պեալ յայնոսիկ գործս՝ զորս ինքն Տէր
ցուցցէ մեզ, ամենեին ոչ գնելով չափ շնոր-
հաց նորա։

ԻՂՁԲ

Ո՛վ Աստուած, տէր իմ և դատաւոր.
երկնչիմ 'ի դատաստանաց քոց յոյժ։ Վա՜յ
ինձ, զինչ տաց պատասխանի, յորժամ
վկայ զերկինս և զերկիր կարդացեալ՝ ա-
սասցես ընդդէմ ինձ. «Դատ արարէք ընդ
իս և ընդ այդի իմ. զինչ առնել էր այգւոյ
իմոյ և ես ոչ արարի նմա. կոչեցի զնա»։ Կո-
չեցի զնա 'ի բարձր աստիճան կատարելու-
թեան, ուսուցի նմա զճանապարհն, առաջի

արարի նմա պատեհս, և ոչ կամեցար զայ. հրաժարեցար, 'ի բաց յինէն հեռացար, 'ի բարձրութեան կոչմանն արժան էր նմա լինել սուրբ. և զօրութեամբ կրթութեանցն կարէր լինել սուրբ. և ահա մնացի զի բերցէ խաղող, և եբեր փուչ։ Ա՛հ. Աստուած իմ, զինչ տաց առ այդ պատասխանի։

Երկնչիմ արդար իրաւամբք. կամ յահի մեծի, զմտաւ ածեալ զքո զայն բան արդարադատ. «Որում շատ տուաւ, շատ խնդրեսցի 'ի նմանէ, և որում բազում աւանդեցաւ, առաւել ևս պահանջեսցեն 'ի նմանէ»։ Բաբէ. որպիսի անհնարին ազէտք հասցեն 'ի վերայ իմ, եթէ զիրս այս կրթութեան որ պարտ էր լինել ինձ տանդուխք յերկինս՝ լինիցի զառ 'ի թափ կորստեան։ Ոչ, մի՛ Տէր. ահա կամ պատրաստ առ հրամանս քո, զոր ինչ և ցուցցես ինձ առնել, ընդ որ ուղղեսցես զիս գնալ։ Գտարչիմ 'ի չարամտութենէ առաջին կարգի մարդկանն, որ շատ զրեալ անձանց զփափաղ միայն փրկութեան, ոչ 'ի գործ արկանեն զառիթս առ հատանելոյ 'ի նոյն։ Անարգեմ զանմտութիւն երկրորդացն, որք ոչ առնուն յանձն զամենայն զառիթս մատուցանել 'ի գործ, այլ զոմանս ևեթ։ Յանկամ եռանդագին վիճակի երանութեան երրորդ կարգի մարդկանն, որք արութեան ոգւով նուիրեն զանձինս կամաց քոց, գնալ ընդ շաւիղն՝ զոր ցուցանես նոցա։

Աստանօր պարտ է խնդրել զՆորհս 'ի Տիրամօրէն, և ընդ ձեռն Նորա 'ի Յիսուսէ Քրիստոսէ, և ընդ ձեռն Յիսուսի Քրիստոսի 'ի յաւիտենական Հօրէն։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ա. Զմտաւ ած զչարամտութիւն առաջին կարգի մարդկանն, որք խրատեալք յԱստուծոյ հեռանալ 'ի մեղաց և դառնալ առ նա, խոստանան հնազանդել, բայց երբեք ոչ մատչին 'ի գործ։ Վասն նոցա. զի ասասցէ նոցա Աստուած. "Ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ, ծառայ անհաւատ,,. Ծանեար զպարտս դառնալոյ առ իս, և ոչ դարձար։ Մեծ են մեղք քո, մեծ ևս եղիցի դատապարտութիւն քո։

Բ. Անիսոհեմութիւն երկրորդ կարգի մարդկանն. որոց 'ի միտ առեալ զպէտս ուղղութեան վարուց, խոստանան դառնալ և ծառայել Աստուծոյ, բայց գնալով զհետ հաճոյից մտաց իւրեանց։ և այս՝ մեծամեծ չարեաց նոցա լինի պատճառ։ Գ. Կորուսանեն զպտուղս կրթութեանցն, նոյնպէս և զբաղմագէմ շնորհս։ Է. Սահեալ անկանին 'ի բազում թերութիւնս, 'ի մշտնջենաւոր գաղջութիւն, և երբեք ևս մատնին 'ի կորուստ։ Ճ. Զրկին յոգնականութենէ շնորհաց առ 'ի զօրանալ և հաստատիլ 'ի շաւիղս փրկութեան։

Դ. Երանութիւն գտելոցն յերրորդ կարգի, որոց ընդդրկեալ զամենայն առիթս՝ զորս առաջի առնէ նոցա Աստուած, առ Ժամանելոյ 'ի կատա-

բ. Լութիւն, Ա. Փուլթոյ Ժամանեն 'ի նոյն : Բ. Կան 'ի նոյն հաստատեալ : Գ. Լի լինին թաթաղսն ամենայն ազգի ազգի երկնաւոր նպաստիւք :

Ընթերցիր

Թուվմ. Գեմբ. Գիրք Գ. Գլ. 27 :

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

ի վերայ երից աստիճանաց խոնարհութեան.

Յառաջ քան զձեռնամուխս լինել յընտրութիւն կոչմանն, կարեւոր է պատրաստել զանձն յընդունելութիւն վարդապետութեանն Քրիստոսի պարապեալ մեծաւ խնամով 'ի խոկումն երից այսոցիկ կարգաց խոնարհութեան զորն ողջոյն : Քանզի առ բարւոք ընտրութիւն՝ ոչ միայն յամենայն մեղսականաց պարտ է զհոգին պահել սուրբ, այլ և յամենայն ներհական կրից, լեալ անխտիր համակամ առ ամենայն. և զայս անհնարին է 'ի գլուխ հանել վասն ապականութեան բնութեան մերոյ հակամիտելոյ 'ի չարիս, առանց յօժարեցուցանելոյ զկամն բուռն իմն զօրութեամբ առ կատարելագոյնս : Այլ առ զարթուցանելոյ 'ի սրտի զայս զերաստիճան բերումն, խոկասցուք հասուն խորհրդով զյիշատակեալ զերիս կարգս խոնարհութեան :

Առաջին աստիճան է յանձնառութիւն հպատակելոյ աստուածային օրինաց յամենայն անձնէ, այնպէս զի եթէ և զամենայն թագաւորութիւնս աշխարհի խոստանայցեն ինձ, կամ եթէ հասանիցեմ 'ի վտանգ կորուսանելոյ զկեանս, ոչ առիս յանձն զանցանել զմիով 'ի պատուիրանաց, եթէ աստուածայնոյն և եթէ մարդկայնոյն, որոց լուծումն իցէ մեզք մահուչափ։ Մինչև զի ընտրելի լինել ինձ կեալ ընդ Քրիստոսի անարգեալ, աղքատ և վշտալից, քան թէ արատաւորեալ մահուչափ մեղօք վայելել յամենայն ճոխութիւնս, 'ի փառս և 'ի քաղցրութիւնս աշխարհի։ Այս աստիճան է պատուղ առաջնոյ մասին, յորոյ 'ի վերելս ձեռն տան խոկումն ա. Ծանրութեան մեղաց՝ որ անչափ է առ անօրէնութեան նախատանացն, առ անարգութեան թշնամանոցին և առ մեծվայելչութեան նախատելոյն։ բ. Դառնութեան պատժոյն, յոր մատնեցան արուսեակն և նախահայր մեր։ գ. Յաւիտենականութեան և անչափութեան տանջանացն, որ պատրաստեալ կան մեղաւորաց։

Զի և ճշմարտութիւն և արդարութիւն պահանջեն զսոյն. քանզի ստեղծեալ եմք վասն Աստուծոյ և առ 'ի ծառայել Աստուծոյ և կեալ յաւիտեան յԱստուած. արդ 'ի մեղանչելն ընդդէմ Աստուծոյ՝ եղծանեմք զզործն Աստուծոյ. զի որ ստեղծ զմեզ 'ի փառս իւր, մեք մեղանչելով ընդդէմ նո-

բա, դարձուցանեմք զարարչագործութիւն նորա 'ի նախատինս իւր, ապստամբեալք յօրինեալ նորա, զոր ետ նիւթական և բանաւոր արարածոց, կարգեալ զմէն մի առ իւր վախճան։ Եւ զի արդարութիւն պահանջէ զլրումն օրինացս, ապա և պարտք են զզոյշ պահպանութիւն նոցուն, և է ևս յօգուտ մեզ, զի այնու ևեթ կարեմք հասանել 'ի վախճանն մեր։ Զսոյն ուսուցանէ և օրինակ արդարոց, ուղղատեսից, սրբոց մարտիրոսաց. որք առ 'ի չմեղանչել՝ փորձեցան, քարկոծեցան, սղոցեցան, սպանմամբ սրոյ մեռան։ Եւ հարկն ևս 'ի սոյն բռնադատէ զմեզ, զի կամակար մտօք յանցանողաց կայ ահեղ ակնկալութիւն դատաստանին և նախանձ հրոյն։

Արդ իցես դու հասեալ յայս աստիճան. իցես պատրաստ կորուսանելոյ զհամբաւ, զպատիւ, զառողջութիւն, զկեանս առ 'ի չմեղանչելոյ։ Եթէ հասեալ իցես յայս աստիճան, կալ զքեզ հաստատուն, զի ընդ աստիճանաւդ բերանաբացեալ կան դժոխք։ Իսկ եթէ չիցես տակաւին, դուն զործեա ելանել, զի որ ոչ ելանէ յայս աստիճան, դատապարտի։

Երկրորդ աստիճանն խոնարհութեան է առաւել կատարելոյ յառաքինութեան, յորում ճոխութիւն կամ աղքատութիւն, պատիւ կամ նախատինք, երկար կեանք կամ սուղ՝ եթէ իցեն և երկոքին սոքա կարգեալք 'ի փառս Աստուծոյ և 'ի փրկութիւն

մեր, լինիցիմք անխտիր համակամք ընդունելոյ զմին յերկուց յայսցանէ։ Եւ կամ յանձն առնուլ զզրկումն 'ի մեծամեծաց յերջանկութենէ, և զմահ, առ 'ի չմեղանչել և ոչ թեթև ինչ ներելի յանցանօք. այնպէս զի մնացուք յանձին կալցի կալ ընդ Քրիստոսի յաղքատին, յանարգ և 'ի վշտամբեր կեանս, և ոչ յօժարել 'ի թեթև ինչ մեղս, և այնու վայելել 'ի մեծամեծ փառս, 'ի ճոխութեան և յամենայն բերկրութիւնս աշխարհի։

Տեսաք յառաջին օր կրթութեանս, զի մեք առ 'ի ծառայել Աստուծոյ՝ պարտիմք լինել անխտիր համակամք առ այս ամենայն։ Իսկ եթէ զմի ներելի յանցուած պարտիցէ համարել առաւել մեծ 'ի չարիս քան զկորուստ ամենայն մեծամեծ բարեաց աշխարհի, և այս յայտ լինի 'ի խորհելն զանօրէնութիւն մեծ մեղացն թեթև և ներելի անուանելոց. զի բերի յանարգութիւն Աստուծոյ ամենակալի, վասն այնորիկ եղծանէ զգործս առաքինութեան, նուազեցուցանէ զեռանդն սիրոյն, առնէ զմարդ դիւրազայթ 'ի մեղս մահուշափս. և զի Աստուած պատուհաս սաստիկ ածէ 'ի վերայ։

Ասա աղաչեմ, զարշիցիս նողկանօք 'ի ներելի մեղաց. խորհեաց յանձն քո, հարց ցանձն քո. եթէ միով ներելի յանցուածով կարասցես զերծանել 'ի տառապանաց աղքատութեան, ելանել յանարգութենէ, հնազանդանել 'ի քէն զվիշաս,

զինչ գործէիր։ Եւ յինչ կարծիս կայցես զանխտիր համակամութենէ. զառատութիւն և զզրկումն յամենայնի կալցիս 'ի մի նժար. նոյն և զպատիւն և զզրօսանս ընդ անարգանաց և ընդ վշտաց։ Այսա զոր ինչ խիղճ քո վկայէ։—Եւ սակայն այս աքանչելի առաքինութիւն չէ 'ի զերագոյն կարգի, այլ 'ի բարձրագոյնն քան զայս հրաւիրեմ զքեզ։

Եւ է այն երրորդն ամենաբարձր աստիճան խոնարհութեան, որ բարձրաթռիչ սլանայ 'ի վեր քան զամենայն բարձունս, և պայծառութեամբն փայլէ իբրև զարեգակն 'ի մէջ ամենայն լուսաւորաց։ Եւ է զի եթէ կարիցեմ կալ 'ի ճոխութեան, 'ի փառս, որպէս յանարգութեան և յաղքատութեան, յամենայնի հպատակելով կամացն Աստուծոյ և վաստակելով 'ի փրկութիւն հոգւոյ իմոյ, այլ ես ընդ Քրիստոսի յանձին կալայց զաղքատութիւն, զանարգանս և զվիշտս, արհամարհեալ զճոխութիւն, զպատիւ և զանուն իմաստութեան. և այս միայն առ ես քան զես նմանող լինելոյ Քրիստոսի։

Աստիճանս այս է պտուղ երկրորդի մասին կրթութեանս, ես առաւել խոկմանց թագաւորութեանն Քրիստոսի և երկուց զրօշից։

Պատճառք համոզկերք դիմելոյ առ այս աստիճան՝ են ա. Օրինակն Յիսուսի Քրիստոսի, որ միայն առ սէր մեր ընտրեաց

գճանապարհ աղքատութեան, անարգութեան և ցաւոց. փոխանակ մխիթարութեանն որ նմա առաջի կայր՝ յանձն էառ դխաչ, արհամարհեաց զամօթ։ Զի և մեք վառեալք նոյնպէս 'ի սէր նորա ջան դիցուք գնալոյ զհետ նորա, նոյնօրինակ առընթեր մերձ կալով նմին, ոչ միայն անարգելով զճոխութիւն և զպատիւ 'ի լինել նոցա խոչ ճանապարհին մերում, այլ և յորժամ հաւասարապէս կարեն օգնել վախճանին մերոյ և ճոխութիւնքն և փառք իբրև զաղքատութիւնս և զնախատինս, դարձեալ մեք ընտրեալ կալցուք յանձին զանարգութիւն և զաղքատութիւն։

Զի եթէ Քրիստոս 'ի պատճառս քո, առ յաղեցուցանելոյ զսէր իւր որ առ քեզ, և առ 'ի յայտ առնել եթէ որպիսի անձկով կամի զփրկութիւն քո, այնչափ տանջանաց տարաւ, որ տէրն էր փառաց՝ եղև նախատինք մարդկան և արհամարհանք ժողովրդոց. և դու համարձակեսցիս ժխտել նմա զոր ցանկայ և կամի 'ի քէն, զի լինիցիս ընդ նմա 'ի փիլոս և յաղքատութեան և յանարգութեան։ Եթէ զօրական նաց տեսեալ զզօրագլուխ իւրեանց յառաջել սանդուխս 'ի ձեռին առ պարիսպն, արշաւեն զհետ նորա մի զմիով արիացեալք և զօրացեալք չլինել յետամնացք, և դու թոր ոլղերդասցիս ելանել զհետ թագաւորին քո՝ որ յանմահական յաղթանակ հրաւիրէ ըզքեզ. մինչդեռ խոստացար իսկ բիւրիցս 'ի

լինելն մասամբ զթագաւորութենէն Քրիս-
տոսի. և ասէիր. Ահաւասիկ կամ, թագաւոր
մեծազօր, եկից զկնի քո ուր և երթիցես։

բ. Պատճառ համոզկեր, օգուտն մեծ՝ յոր
վայելէ որ բուռն առնէ անձին հասանել
յայս բարձրութիւն երրորդ աստիճանի խո-
նարհութեան. զի որ կարող զոլով վայելել
'ի ճոխութեան, 'ի հանգստութեան, 'ի փառս
Աստուծոյ, ինքն անարգեալ զնոսին՝ ընտրէ
առ 'ի նմանող լինել Քրիստոսի զաղքա-
տութիւն և զնախատինս. այր այսպիսի իբր
առնուցու յանձն վասն աղցաւոր փառաց
և ընչից նախատել զՏէր իւր, ևս և թեթև
ինչ յանցանօք։

Հարկ է յաւելուլ և զպատճառս զայս
ոչ թեթև. որ ոչ բուռն առնէ անձին ժա-
մանել յայս երրորդ աստիճան խոնարհու-
թեան, ոչ կարէ կալ անսասան և յերկրորդին, և ոչ իսկ յառաջնումն. զի որ կամի
կալ 'ի ճոխութեան և 'ի վայելս հանգստեան,
և այնպէս զգուշանալ 'ի թեթևագունից ևս
մեղաց, անհնարին է ընդ երկար կալ մնալ
'ի հաստատութեան ուխտի սրտին. զի ա-
ռաքեալքն յաճախ ընդ առաջ լեալ նմին՝ 'ի
վայելս փափկութեան վրիպեցուցանեն. և
'ի սկսանելն յանհոգանալ 'ի նոսին, կայ 'ի
վտանգի անկանելոյ և 'ի ծանր յանցանս։

Ի վերայ այսր վերջին աստիճանի խո-
նարհութեան իբրև 'ի վերայ հիման բար-
ձրացեալ կայ կարգն կրօնաւորական, յո-
րում՝ է և մերն. որպէս և 'ի կանոնս սահ-

մանագրութեան մերոյ խրատիմք՝ խորչիլ յայնմ ամենայնէ՝ զոր սիրէ աշխարհ և մեծարէ. և այն ոչ ըստ մտին, այլ ամենայնիւ 'ի պատուոյ, 'ի համբաւոյ, 'ի հաշակեալոյ անուանն ընդ աշխարհ. և ամենայն ջանիւք յանձն առնուլ և ցանկալ այնմ ամենայնի, զոր Քրիստոս Տէրն մեր սիրեաց և յանձինս կալաւ, այսինքն զզրպարտութիւնս, զնախատինս և զսուտ վկայութիւնս։

Մանաւանդ զի յընդհանուր քննութեան նորամտից 'ի կրօն, պարտ է հարցանել՝ եթէ Զզայցեն յանձինս փափաք այսպիսեաց։ Եւ եթէ ոմանք առ տկարութեան ոչ զզայցեն 'ի սիրոս իւրեանց զայսպիսի վառեալ իղձս, հարցցի նոցա՝ թէ փափաքիցեն կրել 'ի սիրոս իւրեանց զայսպիսի իղձս։ Որք եթէ պատասխանիցեն զԱյոն, հարցցի զարձեալ՝ թէ Հաստատեալ իցեն 'ի մտի, և իցեն պատրաստք տանելոյ համբերութեամբ չնորհօքն Աստուծոյ անիրաւութեանց, զրպարտութեանց, նախատանաց՝ որք են նշանակեալք 'ի զրօչն Քրիստոսի։ Եւ եթէ նորամտից կարևոր համարիմք զայսոսիկ, որչափ առաւել պարտ է մեզ՝ 'ի սոյն միտս վառել, ուխտելոցս և հնացելոց 'ի կրօնի։

Այս է ահա աստիճանն ցանկացեալ յարիւասիրտ ըմբշացն Քրիստոսի. զերամբարձ աստիճան՝ յոր ոչ հասանէ տեսութիւն մտաց իմաստնոցն աշխարհի, որ միայն կարէ երանելիս առնել զիսոնարհս

ցեառն՝ առատութեամբ լուսոյ իւրոյ, որոյ վասն բերկրէր Քրիստոս յանձն իւր ասելով. «Դոհանամ զքէն, Հայր, Տէր երկնի և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի զիտնոց, և յայտնեցեր տղայոց»։ Այս է ահա լաւագոյն սպատրաստականութիւն առ ամենամեծ գործ ընտրութեան կոչման, զորմէ բուռն հարցուք ըստ օրինադրելոցս կարգաց աստ 'ի ստորև։

ՑԵՂԱՆԱԿ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԿՈՉՄԱՆ

Պատրաստութիւն. Ա. Կենդանի հաւատով կալ հաստատութեամբ 'ի մտի՝ թէ Աստուած կայ առ քեզ, տեսանէ և զխորհուրդս քո. և թէ դու ստեղծեալ ես առ ծառայելոյ նմա՝ զհետ դնալով կամաց նորա։

Բ. Դիր առաջի Աստուծոյ զայն՝ զորոյ ընտրութենէ բուռն հարեալ իցես. և խնդրեա շնորհս զի ցուցցէ քեզ զոր առնել և զոր ընտրել հաճի նա քեզ։

Գ. Ցոյց 'ի քեզ զանխտիր համակամութիւն յընդունել և 'ի մերժել զառաջարկութիւնն՝միտ եղեալ միայն վախճանին ստեղծման մերոյ, մեծաց փառացն Աստուծոյ և լրման կամաց նորա։

Ա.զ դ

Աստուցելոյն յընտրութիւն՝ պարտ է զմիասն յինքն Ժողովել, և ընդ ամենայն Ժամանակս ընտրութեան 'ի բաց հեռացուցանել յանձնէ և 'ի խորհրդոյն զայն ամենայն, և զերկնից միայն խորհել, լսել և տեսանել։

Ա.

Կրթութիւն կամաց, որ է երկրորդ ժամանակ.

Ի խոր խոնարհեալ սրտիւ, և ամենայորդոր փութով ճանաչելոյ և զհետ գնալոյ կամացն Աստուծոյ, անդադար մատ զանձնդ Աստուծոյ երբէք յայս ինչ և երբէք յայն ինչ. և ասա. Տէր, զինչ կամիս զի արարից։ Կամիս ինձ ընտրել զայս և առնել. կամ թէ Կամիս զի արարից զայն ինչ, խօսեաց Տէր... Եւ միանգամայն քննեա և տես 'ի դաղտնիս զներքին բերմունս սրտիդ յայս կամ յայն ինչ. անգործ պահելով ըստ կարի զերեսին կարողութիւնս հոգւոյն, զի 'ի խաղաղ լուութեան աստ մտաց դիւրաւ'ի յայտ գայցէ և ընդունելի լինիցի ազդումն ձայնին Աստուծոյ։

Դրանիր. Եթէ զգայցես յանձին զներքին բերումն՝ մանաւանդ եթէ բռնազատութիւն առաւել յայս կոյս քան յայն, զայս յօժա-

բամտութիւնն քննեա ըստ կանոնին ճանաչելոյ զեռանդն հոգւոյն, զոր ցուցից ստորև։ Իսկ եթէ ոչ ինչ ներքին բերումն յանձին զգայցես, կամ եթէ զգայցես ևս զյօժարութիւն առ իմն, յայնժամ բուռն հար

Բ

Զկրթութիւնէ մտաց, որ է երրորդ ժամանակ.

Ա. Քննեա աստանօր զպատճառսն, և արկ 'ի կշիռ, եթէ զնպաստաւորսն և եթէ զընդդիմակսն. այսինքն զօգուտսն և զտուգանսն, զօգնութիւնսն և զխոչս, որոց երկուստեք մարթ իցէ ակն ունել կամ զանգիտել։ Եւ կշռեա զայսոսիկ պատճառս առաջի Աստուծոյ 'ի կշիռն Սրբութեան. և մերկացեալ յամենայն յերկրաւոր ըղձից, մատո առ ամենասուրբ Երրորդութիւնն՝ որ ընկալցի կամ մերժեսցէ։

Բ. Զայս արարեալ, հարց ցանձն քո, ա. Ի խորհուրդ կոչեցեալ քո վասն այսր գործոյ 'ի բարեկամէդ, յինչ համոզեիր զնա, առնել կամ չառնել։ բ. Զինչ, եթէ էիր առ զրունս հասեալ մահուն։ գ. Զինչ, եթէ մատուցեալ էիր 'ի դատաստանն Աստուծոյ։ դ. Եւ զոր ինչ 'ի յաւիտենականութեան ցանկայիր թէ ընտրեալ էր քո։ Քանզի կշռեալ զայսոսիկ պատճառս, յանձին կալ զայն յոր կամէիր զայլս յորդորել և զոր 'ի մահուն քում ցանկայիր թէ գործեալ էր քո։

Գ. Բայց պարտ է մեծապէս ջանացեալ 'ի գործ արկանել, զի որ և է յօժարամտութիւն մեծ կամ փոքր յընտրութեան անդ իցեն յորդորեալ միայն 'ի սիրոյն Աստուծոյ և 'ի փութոյն որ առ նա, մերժելով զամենայն պատճառս զգայութեանն և զմարդկայինս և զաշխարհի, և զայնոսիկ՝ որք ոչ բերիցին ամենայնիւ յառաւել նմանութիւն Քրիստոսի, զոր տեսեր և ուխտ ընդ անձինդ հաստատեցեր յերրորդ աստիճանի խոնարհութեան։ Միայն զի մարթ է ընդ մէջ մտանել պատճառաց ինչ մարդկայնոց, իբր առ 'ի ձեռն տալ ըստ իմիք հաստատութեան ընտրութեանն. զոր օրինակ է՝ միտ դնել ներքին խաղաղութեան սրտի, և մխիթարութեան հոգւոյ։ Բայց կալցիս յամենայնի զփառսն Աստուծոյ 'ի պատճառ սկզբնական և 'զվերջաւոր յընտրութեան քում։

Դ. Կշռեալ արդ զպատճառսն հաստատն խորհրդով ամենայն ուստեք, և սրբեալ զաչս մտացդ յամենայն ձախողակ ըղձից, ընտրեա զոր կամիսն առնել կամ թողուլ, սահմանել կամ մերժել։

Գ.

Հաստատումն ընտրութեան.

Յետ հաստատելոյ զընտրութիւն կամացդ, մատիր առ աթոռն ամենասուրբ Երրորդութեան յանդիման ամենայն ատե-

նի երկնաւորաց. և խոստովան լեր նմա, որ զխորս ծածուկս սրտից քոց տեսանէ, զընտրութիւն քո զոր արարեր 'ի փառս իւր և քեզ 'ի փրկութիւն։ Նոյնպէս և առաջի Մօր մերոյ Տիրուհւոյն սրբոց, և Նորայն միջնորդութեամբ առաջի Քրիստոսի, զի օրհնեսցեն զընտրութիւն քո և հաստատեսցեն։ Եւ հրաւէր կարդա սրբոց ամենեցուն, զի զոհասցին ընդ քեզ զԱստուծոյ՝ որ յայտնեաց քեզ զկամս իւր. և կալ զնոսա քեզ 'ի բարեխօս, զի օգնականութեամբն Աստուծոյ կացցես հաստատուն յընտրութեան քում, և վասն այսորիկ ընտրեալ կալ քեզ զոք 'ի պաշտպան։

Ապա կաց յաղօթս 'ի բան և կամ 'ի մտաւոր, և միտ զկիր եթէ լուսաւորեալ և ես մտացդ հաստատի՞ սիրտ քո յընտրութեանն և կամ զեղեւէ։ Եթէ հաստատի, այն է ցոյց լինելոյ բարւոք ընտրութեանն. իսկ եթէ ոչ, պարտ է յայնժամ առնուլ 'ի քնին՝ թէ յորմէ՞ հոգւոյ յառաջ զայցէ այդ հակառակ խորհուրդ։ Եթէ 'ի չարէ, պարտ է կալ անվրդով յընտրութեանն. իսկ եթէ 'ի բարւոյ, պարտ է նորոգ մատչել 'ի քննութիւն։ Եւ եթէ յընտրութեանն ոչ ինչ նոր 'ի կարևորաց ցուցցի, այն իցէ նշան կամելոյ Աստուծոյ յայտնել քեզ զկամս իւր ազդմամբ 'ի միտս քո։

Եթէ զէպ լիցի ընտրել կամաց 'ի ժամանակն երկրորդ զայն ինչ, զոր ապա յերրորդ ժամանակին մտացն մերժեալ ընտ-

բեացէ զայլ իմն, կամ զհակառակն առա-
ջնոյն, յայնժամ եթէ պատճառք մտացն
իցեն ծանունք, պարտ է այնմ զհետ գնալ.
քանզի առաջինն կամացն է անտոյդ եթէ
իցէ յԱստուծոյ. այլ մտացն է ստուգագոյն
և դիպողագոյն բնութեան։ Բայց ոչ նոյն-
պէս՝ եթէ պատճառք մտացն իցեն թեթևք
և աներևոյթք. և կամացն բերումն իցէ հաս-
տատուն, և ունիցի անեղկբայ ցոյցս Ա-
ստուածային կոչմանն։

Դ.

Կանոն ընտրութեան հոգւոյ յորմէ առաչնորդիմքն.

Ա. Եթէ տեսանես զքեզ առաւել մէտ'ի
կողմն մի քան'ի միւսն, արկ'ի քնին ե-
թէ միտումն այն ածիցէ՞ քեզ խաղաղու-
թիւն և մխիթարութիւն, բորբոքիցէ՞'ի քեզ
սէր առաքինութեան, թէ յածեցուցանէ
զմիտս քո, և պատճառէ յոյզս կրից, տաղտ-
կութիւն, տխրութիւն, և նողկանս յառա-
քինութեան ջանից։ Առաջինն է ցոյց ա-
ռաջնորդութեան աստուածային հոգւոյն, և
երկրորդն ազգումն դժոխայնոյն փորձու-
թեան։

Քննեա դարձեալ զսկիզբն, զմէջն և
զվախճան յօժարակամութեան հոգւոյն։
ա. Ի վերայ սկզբանն միտ դիր եթէ եղեմ
սկիզբն նորա'ի ժամու եռանդեան, մխի-

թարութեան և խաղաղութեան, թէ յալեկոծութեան մտաց, 'ի տխրութեան և յանյուսութեան։ Կամ դարձեալ եթէ եկն քեզ այն 'ի միտս ընդ ճանապարհ դաղտագողի 'ի ցրուել մտացդ յաղօթս քո, կամ խոչ լինելով գործոյ հնազանդութեան՝ որ 'ի ձեռին քում։ Ցայտ է զի սոքին ոչ են աղդմունք առ յԱստուծոյ, որ Տէրն է կարգաց և խաղաղութեան։ բ. Ի վերայ միջին ժամանակին խորհեաց յանձն քո եթէ սիրտ քո կայցէ՞ հանդարտեալ 'ի խաղաղութեան, և միտք քո 'ի պարզ ուղղութեան, կամ թէ ընդ հակառակն այսոցիկ։ գ. Ցվախճանէն խորհեսջիր եթէ մնայցէ՞ 'ի սրտի քում փրկական ինն յորդոր լի մխիթարութեամբ զարգանալոյ 'ի հանդիսի կատարելութեան, կամ թէ պաշարեսցեն զսիրտ քո յանձկութեան, 'ի մեղկութեան և 'ի տաղնապող դառնութեան։ Առաջինքն են նշանք բարւոյ հոգւոյ, և երկրորդքն չարի։

Վասն այսր ամենայնի ապաստան լեր յաղօթս, յորում ընկալցիս լոյս 'ի ճանաչել և ոյժ 'ի գործել. այլ և զգոյշ կաց չհաստատել ուխտ 'ի ժամու քաղցրութեան խորհրդոց. նոյնպէս ևս չսահմանել ինչ 'ի պահու վհատութեան։ Մինչ ժամուն անդորրութեան, որ է մայր իմաստուն խորհրդոց։ — Դարձեալ փոյթ կալցիս յայտնել զխորհուրդս սրտիդ պարզութեամբ դաստիարակի հոգւոյդ, և հարց նմին խորհուրդ՝

ԽՈԿՈՒՄՆ Գ

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՔ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ

Մասն Ա.

Զմտաւ ած զառաւելութիւն զերազանցութեան սորուն. զի զինչ այլ արիական քան զայս. մինչդեռ 'ի ճոխութեան 'ի պատուի և յանզորրութեան կարիցէ որ կեալ 'ի փառս Աստուծոյ, կամել ընդ Քրիստոսի լինել 'ի նախատինս, յաղքատութեան և 'ի ցաւս։ Եւ զինչ քան զայս վսեմական, ընտրել առաւել զպատկիրն փշովք քան յոսկի և 'ի ծաղիկ, միայն առ ես քան զես նմանող լինելոյ Քրիստոսի։ Եւ իցէ՞ ինչ այլ վեհազոյն, որ կարասցէ հաւասարել այսմ. խորշիլ և մերժիլ յայնմ ամենայնէ, զոր աշխարհ այնպէս կուրօրէն և անյագ սիրէ և խնդրէ. և ընդդէմ դարձեալ սիրել և հետամուտ լինել այնմ ամենայնի, յորմէ նա այնպէս հեռի խուսափէ, և այնպիսի նողկանօք ատէ և զարշի։

Եթէ արդարն վշտացնեալ և յանձկութեան՝ տեսարան է հաճոյական Աստուծոյ, ապա որպիսի՞ ինչ լինիցի յաչս նորա այր, որ ոչ միայն զտանի համբերաւոր ընդ

Յովքայ կորստեան ընչից, կարօտութեան և կորստեան համբաւոյ, վշտաց մարմնոյ. այլ և ընդ Աւրաքելոյն քաջազօտի հրաւիրէ զնոսին առ ինքն։ Ո՛ Տէր, մի թողուր զիս օտարանալ յարիական խորհրդոց որդւոցն Աստուծոյ։

Մասն Բ

Զմտաւ ած զերանութիւն նորուն. հոգին Աստուծոյ բարձրացեալ յերրորդ աստիճան խոնարհութեան՝ լի լինի և յերկրի աստ երանելեացն խաղաղութեան բերկրանօք։ քանզի ո՞ կարասցէ համակել՝ի տխրութիւն զսիրտն արիական՝ որ յածի՝ի խնդիր աղքատութեան, սիրէ զվաստակ, անձկով բերի նախատանաց։ Եւ է մերձ առ բարիոն երանութեանց և փառաց՝ որ է ինքն Քրիստոս. զի ամենեին նման նմին ծածկեալ նորայն զգեստիւք, ուստէ զնոյն կերակուր զնորայն ցյաղուրդ, ՝ի հաւասար երանութեան վայելէ ընդ նմա, և զմի և զնոյն խնամս ընդունի ընդ նմա՝ի յաւիտենական Հօրէն։ Է բերկրանք և զմայլութիւն սրտին Յիսուսի, որ ընդ ստուերաւ ծառոյ խաչին վայելէ զմիջաւորբ՝ի քաղցր նուաղման՝ լցեալ զարարիանս աստուածային սիրոյն զեղեալ բերկրապատար մխիթարութեամբք։ Սա է ամենապատկան գործի՝ առ՝ի մեծացուցանել զփառս Աստուծոյ. զի զյիմարս և զտկարս աշխարհի ընտրեաց

Աստուած, զի յամօթ արասցէ զհզօրս։ Եւ զինչ այլ կայցէ յաչս աշխարհի առաւել անհեթեթ և յիմարական քան զերրորդ աստիճան խոնարհութեանն։ Ո՛հ. և ո՛չ յոյց հանեալ փափաքիցէ այսմ հրաշական երանութեան։ Ո՞...

Մասն Գ.

Զմտաւ ած զօգուտն որ անտի. քանզի երրորդս այս աստիճան է ճանապարհ ամենեին անստերիւր յաւիտենական փրկութեան, զերծ յամրի կացուցեալ զմեզ 'ի բազմադիմի վտանգաց՝ որք են 'ի բերկրութիւնս, 'ի ճոխութիւնս և 'ի փառս։ Եւ է ճանապարհ դիւրագնաց և սուղ առ ժամանելոյ 'ի կատարելութիւն. զի մերկացուցանէ զսիրտ յանպատչաճ ըղձից, և պճնէ զնա սխրալի առաքինութեամբք. և առեալ հանէ զնա 'ի նմանութիւնն Քրիստոսի, յորում ամենայնիւ հանգուցեալ կայ հանդէս ճշմարիտ սրբութեանն։ Է պարտէզ իմն առատաբեր պտղովք՝ յաճախութեամբ զիպացն վշտաց, որոց պատճառս տան նախատինք, աղքատութիւն և աղէտք. նոյնպէս և առիթքն մեծամեծք փայլելոյ 'ի զերաստիճան առաքինութիւնս, որք ստէպ ընդառաջ լինին յայս վիճակ կենաց։ Դարձեալ զի բարձրացեալն յայս խոնարհութիւն, յանձն եղեալ 'ի նախախնամութիւնն Աստուծոյ՝ կայ յանվրդով խաղաղութեան

սրտի, և վարէ կեանս յերկրի հրեշտակայ-
ինս գերազանցեալ յոյժ քան զամենայն
երկրաւորաց. և զի յամենայնի կամքն Աս-
տուծոյ հաճոյք իւր են, սովին ամենայն
ինչ յաջողէ ըստ ցանկութեան սրտի իւ-
րոյ, և այն առանց վրդովելոյ ինչ իւր։ Եւ
վստահ յամենայնի մնայ վայելել 'ի լրումն
խոստմանն Քրիստոսի. «Ամէն ասեմ ձեզ,
զի զուք որ թողիք զամենայն և եկիք զկնի
իմ, հարիւրապատիկ առջիք և զկեանս յա-
ւիտենականս ժառանգեսջիք»։ Եւ ո՞այլ քան
զխոնարհս զայսոսիկ առաւել մերկանայ
յամենայնէ, և ո՞ առաւել 'ի մօտոյ զկնի
երթայ Քրիստոսի։ Ապա որպիսի՞ ինչ հա-
տուցումն վարձուց նոցա լինիցի։

Ի Զ Ք

Հաւատամ, Տէր, զի երանեալ են աղ-
քատքն հոգւով, երանեալ հալածեալքն,
երանեալ անիծեալքն և նախատեալքն 'ի
մարդկանէ։ Հաւատամ այսոցիկ ամենայնի
աներկբայ, զի զու, ճշմարտութիւն և իմաս-
տութիւն անչափ, վկայեցեր այսմ։ Ո՜ան-
հուն զանձուց ծածկելոյ յայս յերրորդ աս-
տիճան խոնարհութեան. և որպիսի՜ զանձ։
Զոր զոհութիւնս մատուցից քեզ, Տէր, ընդ
այդ յայտնութիւն քո առ իս։

Յարգեմ և փարիմ անձկաւ զնախա-
տանօք, զվշտօք, զաղքատութեամբ, զի են
մասունք խաչին քո սրբելոյ անգին արեամբ

քով։ Եղո՛ւկ. ո՛րչափ անագան ծանեայ զյարգ նորուն։ Լա՛մ զիմս կուրութիւն՝ ո-
րով սիրեցի և յարգեցի զունայնութիւնս, բայց յայսմ հետէ իմաստնացայց. ոչ ա-
ռից յանձն հեռի՛ի քէն շրջիլ. դու Տէր իմ և վարդապետ, ի՛ մանկութենէ մինչև ցմահ
քո կացեր՝ի՛ Ջանս և՝ի վաստակս, ի՛ քաղց և՝ի ծարաւ, ի՛ ցուրտ և՝ի մերկութեան.
մեծ ամօթ լինէր ինձ աշակերտի քում՝ և ծառայի այլազգ վարել կեանս քան զքոյդ։
Ոչ այդպէս. աստի և անդր իմ՝ զանձ ան-
բաւ ճոխութեանց լինիցի ազքատութիւն.
զարհամարհանս կալայց ընդ մեծաց ար-
ժանապատութեանց, և զվիշտս ընդ զր-
գանաց։ Զայս այսպէս վճռեալ կնքեցի՝ի
սրտի իմում, և այսպէս արարից շնորհօք
քո ընդ կեանս իմ՝ ցմահ։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ա. Զմտաւ ածէ զառաւելութիւն գերապան-
ցութեան երրորդի ասաՀանիս։ Զիք ինչ վեհա-
գոյն և արիական քան զՀրաժարումն՝ի ճոխու-
թեանց, ի՛ հաճոյից և՝ի փառաց միանգամայն,
զՀետ պնդելով աղքատութեան, վշտաց և անար-
գանաց, միայն ցանկութեամբ առաւելեալն լինելոյ
Նմանող Քրիստոսի։

Բ. Երանութիւն նորուն։ Որ հասանէ յայս
երրորդ ասաՀան, կանուխ սկսանի վայելել՝ի
բերկրանս դրախտին։ Եւ մերձ առ աղբիւրն կայ

երանութեանց, որ է ինքն Քրիստոս. որում ամենայնիւ նմանելոյ ջան 'ի գործ արկանէ։ Եւ ինքն է ցնծութիւն սրտին Յիսուսի։ Եւ է գործի ամենապատկան կեցուցանելոյ զՀոգիս։

Գ. Օգտութիւնք նորա։ Այս է ճանապարհ անքոյթ կատարելութեան և յաւիտենական կենաց։ Է բովք բազմահամբար արդեանց բարեաց գործոց։ Այսու գտանի ոք ամենայնիւ համակամ կամացն Աստուծոյ։ Եւ խոստացեալ են նմա անհուն վարձք։

Ընթերցիր

Թովմ. Գեմբ. Գիրք Բ. Գլ. 11։

ՕՐ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԽՈԿՈՒՄՆ Ա.

ԶՈՐ ԻՆՉ ԿՐԵԱՑ ՅԻՍՈՒՍ ԸՆԴԴԷՄ ՊԱՏՈՒՈՑՆ · ԵՒ ՈՐՊԷՍ ՏԱՐԱՒ ԱՑՆՈՑԻԿ Ի ԽՐԱՏ ՄԵՋ

ԱԶԴ

Զխորհուրդս չարչարանաց Քրիստոսի պարտ է խոկալ Ա. Իբր անդէն առաջնիայ գոլով երեքեան տեսարանին : Բ. Իբր թէ չարչարեցեալ Քրիստոս միայն վասն քո, և վասն մեղաց դործելոց ՝ի քէն : Գ. Իբրև զի զամենայն զյաւս իւր յօժարակամ ընդՀիւք մատուցանէ Հօր Աստուծոյ վասն քո եղեթ :

Պտուղ խոկմանս այսորիկ է անվրդով հաստատութիւն յերբորդ ասպիՃանի խնարհութեան . այսինքն կամել կեալ աղքատ, անարդեալ և վշտացեալ, միայն առ և ևս մերձենալոյ ՝ի նմանութիւն Քրիստոսի :

Մասն Ա.

Հայեաց 'ի թշնամանն՝ որոց տարաւ Յիսուս. Նախ՝ Ընկալաւ ապտակ։ Ծանրութիւն թշնամանաց այսր ապտակի ցուցանի երիւք. ա. Ակնարկեա 'ի մեծվայելչութիւն փառաց ապտակելոյն։ բ. Հայեաց յանարգութիւն ապտակողին՝ որ էր սինլքոր ոք ծառայ։ գ. Ի սատկութիւն հարուածոյն, և լուր զվասն էրն, որ էր պատասխանին յերիւրեալ երկնաւոր խմաստութեամբ։ Ո՛վ Աստուած իմ. դու ապտակիցէ՞ս. 'ի մարդո՞ւ։ Զարհուրեալ սրբոց հարց, զարմանան եթէ ո՞րպէս անդէն ոչ բացաւ երկիր և եկուլ զայրն. և ոչ անդէն մթագնեցաւ արեգակն, և ոչ տիեզերք սասանեցան և կորեան ընդ տեսիլն։

Բ. Ծանակեցաւ Քրիստոս։ Ո՞. յորոց. և ո՞րպէս։— Որդին Աստուծոյ, փառքն յաւիտենական Հօր, թագաւորն երկնի և երկրի քամահի յանարգ մարդկանէ անպատմելի նախատանօք, կապեն զաչսն, թքանեն յերեսսն և ոչ ինչ պակաս առնեն առ 'ի ծաղր և 'ի ծանակ կացուցանել զնա։ Ոչ միայն խաղ առնէին զնովաւ ռամիկքն սինլքորք, այլ և Հերովդէս ընդ պալատականս իւր զզեցուցեալ զնա 'ի զգեստ ծաղու. խաղ առնէին զնովաւ զառնակակիծ բանիւք և քահանայք և փարիսեցիք և դպիրք և իշ-

խանք։ Ո՞ խանարհութիւն և համբերութիւն 'ի հիացումն կարդեալ։

Դ. Քրիստոս 'ի կշիռ ընդ Բարաբբայի եկեալ, 'ի զատաստանս նոցա ցուցաւ անարգ քան զնա։ Ո՞. ընդ որո՞մ, և յո՞ր դէպս։ — Մեծվայելչութիւնն Աստուծոյ, ընդ ապիւնարբու չարագործի. պարգևատուն ամենայն բարեաց, ընդ յափշտակող աւազակի. տէրն կենաց, ընդ անզութ մարդասպանի. 'ի դէպս մահապարտութեան 'ի խաչի՝ Քրիստոս քան զնա առաւել արժանաւոր ցուցաւ մահու. և առ ծանրացուցանելոյ ևս քան զևս դնախատինսն՝ ամենայն ժողովուրդն միաբան վճիռ տային լինելոյ Քրիստոսի առաւել պատժապարտ քան զԲարաբբա. 'ի նոյն կարծիս և իշխանքն լինէին, 'ի նոյն և օրինացն վարդապետք, 'ի նոյն և ամենայն քահանայք։ Եւ զարիւնն Քրիստոսի իբրև զչարաչուք և անարգ սրիկայի հայհոյեն, և կոչեն 'ի վերայ իւրեանց բազում՝ նշանակութեամբ։ «Արիւն նորա՝ 'ի վերայ մեր և 'ի վերայ որդւոց մերոց»։

Դ. Անմեղն Քրիստոս չարահամբաւեալ անհնարին զրպարտութեամբ. կոչեն զնա հայհոյիչ, գիւահար, աստուածամարտ, սամարացի, արբեցող, ագահ, փառամոլ, ապստամբ և ապստամբեցուցիչ ժողովրդեան։ Եւ ընդ այսոցիկ սուտ զրպարտութեանց, պարտ է ընդ միտ առնել և զապիրատութիւն ամբաստանողացն, զոճիրս վկայիցն ստոց, զեղեռն դատաւոր-

բացն. դարձեալ և դայտնի ճշմարտութիւն առաքինութեանցն Յիսուսի հակառակ վրկայութեան նոցա, յայտնեալ ընդ ամենայն աշխարհ։

Մասն Բ

Յապուշ լեալ ընդարմացեր ընդ լուութիւնն Յիսուսի, որով տարաւ այնչափ նախատանաց։ Եւ հնար ինչ էր կարծել՝ թէ արդարութիւնն Աստուծոյ ոչ ի վրէժխնդրութիւն զարթուսցէ զամենայն արարածս ընդդէմ այսպիսի ահագին անօրէնութեան. և կամ ինքն Յիսուս աստուածային բանիւն ոչ կացցէ ջատագով անմեղութեան անձին։ Ոչ ինչ գործի յայդպիսեաց։ Յիսուս ներէ. Յիսուս լռէ. «Եղէ ես որպէս մարդ՝ որ ոչ լսէ, և որպէս համբ՝ որ ոչ բանայ զբերան իւր, և ոչ զոն խօսք ի բերան նորա»։

Տէր իմ Յիսուս, լռե՞ս ցայդվայր։ Բայց ծանր և կարևոր պատճառք են որոց վասն պարտ է խօսել։ Քանզի, ա. Յայտնի է ստութիւն զրպարտութեանցն. «Խնդրէին սուտ վկայութիւն և ոչ գտանէին»։ բ. Տարաձայնութիւն վկայութեանցն ևս յանդիմանէ զնոսա. «Ոչ էին միաբան վկայութիւնք նոցա»։ գ. Եւ զատաւորն ինքնին վկայէ անմեղութեան քո. «Զգտանեմ ինչ վնաս յառնս յայսմիկ»։ դ. Մախանք Հրէից ծանօթք են նմա. «Գիտէր զի առ նախանձու մատնեցին զնա»։ ե. Պատճառս խնդրէ

և ինքն առ'ի փրկել զքեզ. «Խնդրէր Պիղատոս արձակել զնա»։ Ի վերայ այսր ամենայնի, ո՛ խոնարհութիւն հրաշակոն, սակայն և այնպէս «Ոչ ետ նմա պատասխանի, և ոչ բան մի»։

Ո՛վ սուրբ հրեշտակք. անմեղն Յիսուս ամբաստանի 'ի բազմաց չարագործաց, առաջի բազում դատաւորաց; յանդիմանն ժողովրդոց, կորուսանէ զհամբաւն. վասնզ մեծ առաջի կայ նմա. ձաղկումն, փուչքն, բևեռքն, խաչն՝ պատրաստեալ կան վասն նորա. և դարձեալ ինքն լռեալ կայ. լռէ ինքն. «Իսկ Յիսուս լուռ ևեթ կայր»։ Ա՛յլ պահանջեն իրաւունք պաշտպանել զհամբաւն, փրկել զկեանս։ Ստութիւնս ամբաստանութեանցն այնպէս յայտնիք են, և անմեղութիւն Յիսուսի այնպէս ծանուցեալ, զի առ յաղթանակելոյ 'ի վերայ թշնամեաց՝ չատ իսկ է բանեալ միայն զբերան։ Ա՛հ. Յիսուս նախատանօք խրոմք կամի փոխարինել հպարտութեան քում, վասն այն լռէ Յիսուս։ «Իսկ նա լուռ ևեթ կայր»։

Մասն Գ.

Ի պատահել և քեզ կրել ինչ յայսպիսեայ՝ ասեա զքո անժոյժ ընդդիմաբանութիւն։ Եւ՛կ. հայեաց 'ի Յիսուս, և ուսիր լռել։ Ա՛ծ 'ի կշիռ զանմեղութիւն քո ընդ Յիսուսին, նոյնպէս և զամբաստանութիւնս՝ որ զքեզ, ընդ ամբաստանութեանցն՝ որ

զՅիսուսէն. և զպատճառս զոր կարծես ունել անբասիր առնելոյ զքեզ, ընդ պատճառաց Յիսուսին։ Նոյնպէս և զվնասսն յորոց երկնչիս, համեմատեա ընդ չարեացն կրելոյ 'ի Յիսուսէ, որք առ զուրս հասեալ երևէին։ Դա լուեալ կայ. և զու։ Ա.Հ. ամաչեա ընդ անլուռ տրտունջս քո։

Ա.Ը ած ընդ միտ զօգուտն մեծ լուութեան. քանի՞ քանի վարձս չնորհայ հաստուցցէ քեզ Աստուած ընդ լուութեանդ աստ ևս 'ի յերկրի. մրչափ միխիթարութեամբ լցցիս 'ի մահուդ, և որպիսի՞ երանութեան առաջնորդ լիցի քեզ յերկինս։ Մի՞թէ արդ զղջացեա՞լք իցեն արդեօք սուրբքն այնոքիկ ամենեքին, որք տարան 'ի լուութեան զառն զրպարտութեանց։

Ծանիր զի տրտունջք քո և ջատագովութիւն անձինդ և ճիգն քո չարատելոյ զհամբաւ քո, յաճախ անպատիւ առնեն զքեզ. և ահա տակս այսր անհամբերութեան քո անարդեալ ես 'ի կարծիս այլոց, ոչ զրիս ընդ առաքինիս, կորուսանես զարգասիս լուութեանդ, զիսաղաղութիւն սրտիդ, և զաճումն փառացդ։

Փափեր 'ի պատուասէր ամբարտաւանութենէ այսի, որով այդպէս յաճիս 'ի խնդիր փառաց, և երկնչիս լինելոյ 'ի նախատինս։ Զի՞նչ լիցէ։ Յիսուս ապտակի, անպատուի և ծանակի ընդ անարգագոյնս 'ի մարդկանէ, և 'ի դատաստան մահու առաւել պատժապարտ համարի քան զմար-

դասպան որ զաւադակ. և մեք որդունք և դերիք մեզաց, և ոչ կարեմք հանդուրժել և ոչ միոյ ելեթ դկծեցուցիչ բանի. ընդ զոյգն նախատինս բրդիմք 'ի բարկութիւն և 'ի տրտունջ լուծանիմք, և ոչ 'ի փոքունս իսկ յանձն առնումք քան զայլ որ նուաստ ե- բեալ։ Ա.Հ. պատկառեսցուք ընդ այդչափ ամբարտաւանութիւն մեր, և խրատեալք յօրինակէն Քրիստոսի, ուսցուք տանել անդորրամիտ և լուին անիրաւութեանց և ծանականաց։

ԻՂՁԲ

Ո՜վ Տէր իմ Յիսուս. թէ և այսպէս ծանակեալ, լի լեալ նախատանօք, և յե- տին և անարգագոյն քան զամենայն մարդ երևեալ, այլ ես դաւանեմ զքեզ զի դու ես Տէր իմ և Աստուած իմ և թագաւոր իմ, և առաջնորդ իմ։ Ցուաստութիւն քո ցայդ- վայր ոչ միայն չէ անարդ յաչս իմ, այլ մա- նաւանդ առաւել պայծառ տեսանեմ 'ի դմին զաստուածութիւն քո, և առաւել 'ի խոր խոնարհեալ մեծացուցանեմ զքեզ, և առաւել անձկանօք սիրեմ զքո սուրբ մարդ- կութիւն։ Միայն վասն իմ ընկալար զայդ- պիսի կեղտ անուն և զայդչափ նախատինս. միայն վասն իմ ծաղր և ծանակ եղեր։ Ո՜ անհուն սէր. Ո՜ աստուածական սէր։

Հա՛յր երկնաւոր, առ ինչ յանձին կա- լար թողուլ զՈրդիդ քո ի՞նչանել յայս անար-

գութիւն. ինձ էին 'ի դէպ այդոքիկ նախատինք, ինձ մեղուցելոյս, որ խնամս բարձրավղութեամբ թշնամանեցի բաղում անդամ և ծանուցս զանչափ մեծվայելչութիւն քո։ Ա.պա յիս, Տէր իմ, ձգեսցին, յիմ վերայ թօթափեսցին այդոքիկ նախատինք, այդոքիկ ծանակութիւնք։ Զի զինչ չար արարեալ նա։ Ա.հ. Ծանեայ, Տէր իմ Յիսուս, դու կամեցար այդչափ զառնութեամբ ազատից ուսուցանել ինձ կոխել զհպարտութիւն իմ, և սիրել զխոնարհութիւն։

Ա.յո՛, սիրեմ և սիրեցից զնոյն։ Ա.յո՛, երանելիս համարեցայց զաղքատան հոգւով և զխոտեալսն։ Ա.յո՛, յունայնութիւն զրեմ զպատիւ, զհամբաւ և զփառս մեծութեան աշխարհի։ Ընկալ, ո՛վ Տէր իմ Յիսուս, զբողոք զդէման իմոյ. զի ցաւէ ինձ մեծապէս ընդ փքանալ ամբարտաւանել սրտի իմոյ, ընդ յածել իմ 'ի խնդիր փառաց, ընդ խորշել իմ 'ի խոնարհութենէ։

Յայսմ հետէ տարայց ամենայն անիրաւութեանց, զրպարտութեանց, նախատանաց, ոչ եթէ միայն 'ի լուութեան, այլ և լի բերկրական խնդութեամբ։ Եւ եղէց անպիտան յաչս աշխարհի։ Լցո՛ զիս շնորհօք քո, կալ ինձ հաստատուն յայս ուխտ սրտի իմոյ. յիշելով զանչափ տկարութիւն իմ, զօրացո զիս. և հեղ յիս աշխոյժս, զի յաղթեցից յարձակմանց ամբարտաւանութեան իմոյ։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ա. Զմտաւ ած զնախատինսն՝ որոց տարաւ Յիսուս. Ապտակ ընկալաւ. ո՞, .. յորմէ՞: .. Ծաղր եղև. ո՞ ... յումմէ՞ ... և որպիսի՞ օրինակաւ: .. Անարգագոյն քան զԲարաբբա համարեցաւ: Ո՞. — Աստուած. քան զմարդախոշոշ ոք սրիկայ, և այն 'ի դատաստանի մահու: Եղև անուանարկ անհնարին զսպարտութեամբք իբրև հայհոյիչ, գիւաբաղն և ապստամբեցուցիչ Ժողովրդեան:

Բ. Սքանչացիր ընդ լռութիւնն՝ որով տարաւ Յիսուս այնչափ նախատանաց. կարէր կալ ջատագով անձին. և էին նորա իրաւունք: Մի և եթ բան կարէր փրկել զնա, մանաւանդ թէ յաղթանակել 'ի վերայ թշնամեաց իւրոց, որով փոխանակ անուանարկ լինելոյ՝ փառս յանձն ձգէր: Սակայն և այնպէս Յիսուս լռէ. "Իսկ Յիսուս լռեաւ և եթ կայր,,:

Գ. Քննեա զքո վարս՝ թէ որչափ հակառակ նոքայն վարուց իցեն. Յիսուս լռէ, ունելով յոլով պատճառս առաջարկութեան. և դու խօսիս, եւ և յորժամ հարկ է քեզ լռել: Ած ընդ ժիտ և զգաստութիւնս՝ յորս վայելեսցես 'ի տանջն լռութեամբ անիրաւութեանց. և զինասն յառաջ եկեալս 'ի արանջանաց: Ասեա զհպարտութիւն, որ տայ քեզ ցանկալ պատուոյ և խուսափիլ յանարգանաց. և ուսիր յօրինակէն Քրիստոսի զմեծագոյնն յառաքինութեանց զխոնարհութիւն:

Ընթերցիր

Թովմ. Գեմբ. Գիրք Գ. Գլ. 19:

ՊԱՐԱԳՈՒՄՆ

Ի պատուոյ կրթուրեան այսր առուր.

Ա.

Յայսմ յերրորդի մասին կրթութեանս ընտրութիւն արարեալ լաւագոյն կենաց ևս քան զևս հաստատի, և կամքն զօրանայ ծառայելոյ Աստուծոյ յայսմ հետէ սրտի մաքր, առաջի ունելով աքանչելի օրինակ զկիրս չարչարանաց Փրկչին մերոյ։ Յայսոսիկ բանս յայտնին պատուղք կրթութեանս, և առիթքն՝ որովք մարթ իցէ ժողովել զնոսին։ Պտուղն լի է օգտութեամբ, և առիթքն առաջարկեալք ճահոդականք յոյժ։

Եւ զի չէր մարթ սահմանել զայլ իմն պտուղ ընտիր քան զհաստատութիւնն 'ի բարին, յայտ է 'ի դժուարութենէ ընտրելոյ զործոյն 'ի յեղյեղուկ բարուց ընտրողին, որք 'ի միասին ազդեն 'ի մեզ երկիւղ կասկածանաց, զի մի յեղաշրջեալ 'ի հաստատութենէ մնաց և զառնայցէ անդրէն յառաջին մեղկութիւնն։ Քանզի այլ ինչ է խոստումն տալ ուղղադատութեամբ բուռն հարկանելոյ զարիական զործոց առ յապայս, և այլ մատչելն 'ի զործ զէն 'ի ձեռին անցեալ յասպարէզ։ Յառաջնումն համարի

դիւրազործ ամենայն. իսկ յերկրորդին ա-
մենայն բախումն դղրդէ, և ամենայն հա-
ւուած վիրաւորէ, և վտանգն վերահաս
սասանեցուցանէ։ Զսոյն զայս է տեսանել
յայտնապէս յԱռաքեալս Տեառն, որք մե-
ծամեծս'ի հեռուստ խոստանային Յիսուսի
անվեհեր աներկիւղութեամբ. «Եւ եթէ մե-
ռանել հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ու-
րացայց». այլ յանձկութեան պահուն այն
ամենայն մեծաբանութիւնք անկանէին 'ի
զետին. Պետրոս ուրանայ դվարդապետն,
և այլք ամենեքին թողուն զնա և փախչին։

Այս պատահէ ոմանց յաճախ և'ի կր-
թութիւնս, որք թուին կաղմք և պատրաստք
'ի կերտուածս հոյակապ չինուածոց կատա-
րելութեանց. բայց յետ սակաւուց իբրև 'ի
վերայ աւազոյ ունելով զհիմունսն, ամե-
նայն արիական խոստմունք հաստատու-
թեան 'ի վայր կործանին. որոց տեսեալ
զանձինս'ի մեծէ բարձրութենէն փլուզեալ,
անկեալ, զամօթի հարկանին՝ լեալ առակ
նշանակի մարդկային յողդողդութեան մը-
տաց։ Եւ զի մի այս պատահեսցի, կրթու-
թիւնն սերկեան առաջի առնէ առիթս հզօրս
ամրացուցիչս յուխտի խոստմանց՝ զորս 'ի
պահու ընարութեան յանձին կալաք, և ևս
առաւել առ 'ի կալ անայլայլակ հիմնեալ
յերբորդ աստիճանի խոնարհութեան, որ
է միակ պտուղ կրթութեան։ Եւ յայսմ՝ ա-
ռաւել ապահովագոյն, զօրաւոր և բռնա-
դատիչ առիթ է՝ ունել յանդիման աչաց զօ-

րինակն չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի։

Եւ քանզի ցանկութիւն մարմնոյ և ամբարտաւանութիւն, այսինքն հաճոյք և փառք, են վասն մեր «Աստուծոյ'ի ճանապարհի և սպանողք'ի հրապարակս», յորոց զանզիտեալ կասիմք'ի ճանապարհէ առաքինութեան. ապա առ նուաճելոյ զայսոսիկ ճիզս զերկոսին՝ չիք ինչ այլ զօրաւորագոյն զէն քան զհանապազորդեան խոկումն ցաւոց և նախատանաց Տեառն մերոյ Յիսուսի։ Եւ որպէս յանցեալ մասին պատրաստեցաք զճանապարհն՝ ուղղեալ առ երրորդ աստիճանն խոնարհութեան, խոկալով զառաքինութիւնս առանձին կենացն Յիսուսի, այսպէս ևս արդ առ'ի կալ անյողդող'ի սոյն երրորդ աստիճան, և առ'ի մատչել'ի գործ անվեհեր արութեամբ յայնմ ամենայնի՝ զոր արիական հոգւով յանձին կալաք, առնումք մեզ յօրինակ զպատմութիւն չարչարանացն Յիսուսի, յորում լուսափայլ երևեցոյց զառաքինութիւնս արութեան, համբերութեան և խոնարհութեան։

Քանզի յայսմ զօրագլուխն մեր ընդ զխոստումն իւր զոր արար'ի խոկման թագաւորութեանն իւրոյ, գնալ յառաջագոյն մեր նախայարձակ'ի մարտս, 'ի վաստակել, 'ի հսկել անքուն, 'ի լինել'ի կատականս, 'ի կրել զաղքատութիւն և զվիշտս։ Յայսմ տեսանեմք զնա զիմեալ'ի պատերազմն, զոր

հրատարակեաց 'ի խոկման երկուց դրօշից, ընդդէմ աշխարհի, մարմնոյ և սատանայի. և ահա քաջութեամբ հարկանէ զթշնամին, և խորտակէ և նուաճէ զապստամբ զկիրս մեր զհաճոյից մարմնոյ և զսիրոյ անձին։ Եւ մեզ առաջի առնէ զօրինակ իմն անվկանդ հաստատութեան երրորդ աստիճանի մարդկան. զի ոչ միայն փափաքէ աղքատութեան, նախատանաց և ցաւոց, այլ և ըղձիւք ընդդրկէ զնոսին. և յաղթելով հակառակաց, իբրև յամրի կայ աներկիւղ յերրորդ աստիճան խոնարհութեան։ Եւ զայս ամենայն առնէ, զի և մեք արիացեալք՝ նախանձաւոր նմին վառեսցուք 'ի սիրոս մեր և 'ի միտս. և յիշատակ այնր ամենայնի, զոր կրեաց Յիսուս վասն մեր, լիցի մեզ խթան՝ ընթանալ զօրութեամբ զճանապարհն կատարելութեան։

Եւ արդարև ո՞ լիցէ այդչափ պղերդ և վատախորհուրդ, որոյ տեսեալ զՅիսուս 'ի նախատինս խաչի, արհամարհեալ զամօթ, և ինքն 'ի խնդիր փառաց յածիցի, և յանուանէ իսկ նախատանաց խուսափեսցէ։ Ո՞ ցայդվայր անմտասցի։ Սուրբք ամենայն 'ի հանապազորդ խոկումն չարչարանացն Քրիստոսի արիացեալք զօրանային 'ի մեծամեծ վաստակս, յայս յեսան սրէին զուսերս իւրեանց, յայս բոց բորբոքէին զշիջեալ հուր սրտի իւրեանց. յայսմ՝ թուլացեալքն զօրութիւն զգենուին, անկեալքն յառնէին, մերձ 'ի պարտութիւն նուա-

ճեալքն՝ քաջալերեալք քաջագործի պնդէին զանձինս 'ի պատերազմ, և յաղթանակէին 'ի վերայ թշնամւոյն։

Ապա յայս կնքեսցուք զբանս՝ թէ ոչ ինչ այլ այնպէս կարեւոր է մեզ յայսմ երրորդ մասին կրթութեանս, քան զհիզն հաստատութեան 'ի կատարելութիւն այսր երրորդ զերազոյն սահմանի խոնարհութեան յիշատակաւ չարչարանացն Քրիստոսի, ուրոյ զլխաւոր մասունք են՝ կարեւորք 'ի խոկալ, նախատինքն և տանջանք, որոց տարաւ 'ի խրախոյս մեզ առ իշխելոյ հաճոյից կամաց մարմնոյ և փառախնդիր բուսոյ բարուց մերոց։

Բ

Ա. 'ի կարող լինել քաղելոյ զցանկացեալ պտուղն 'ի խոկմանէս, պարտ է մտալոհ լեալ նկատել յամենայն խորհուրդս տնօրէնութեանն Քրիստոսի զվեց զոյսոսիկ մասունս։ ա. Զանձն որ կրէ։ բ. Զտանջանսն որոց տանի։ գ. և դ. Եթէ յորոց և վասն ոյր չարչարի։ և. Զպատճառս այդչափ զառնութեան ցաւոցն։ զ. Զյեղանակն, որով այդպէս չարաչանեալ խոշտանգի ամենասիրելին մեր Փրկիչ։

Ա. Զանձն Քրիստոսի, որ մատնի 'ի դառնութիւն վշտացն, պարտ է նկատել զմեծվայելչութիւն նորա որ է լոյս փառացն Աստուծոյ, և նկարագիր էութեան նորա։ թա-

զաւոր թագաւորաց և տէր հրեշտակաց և արարիչ ամենայն եղելոց։ Յաւել 'ի սոյն զանմեղութիւն նորա և զարքութիւն. արդ ասա, 'ի տեսանել քո զնա յայնպիսի տագնապ անձկութեան՝ ոչ 'ի զութ խանդաղատեսցիս։

Բ. Եւ զդառնութիւն տանջանացն ած ընդ միտ. նախ 'ի միտն՝ զի զիտէր որ ինչ կայր նմա կրել և ցաւ վայր, և զի կարող էր առնուլ զառաջս նոցա։ Իսկն երբէք ցաւք ըստ ցաւոցս լեալ։ Յետ այնորիկ տես և զդառնութիւն տանջանաց մարմնոյն. և զև զարձեալ անուանարկ, մինչև համարել որդն, և լինել յանէծս. կրեաց և 'ի սրտին՝ կշռեալ զապերախտութիւն մեր ընդ տանջանացն։

Գ. Հայեաց 'ի հալածիչսն. տես քանիք են և որչափ կատաղութեամբ յարձակեալ 'ի վերայ։ Արարածք ձեռին նորա, սիրեցեալքն 'ի նմանէ, զորս կամի հանել 'ի փառս և 'ի փրկութիւն։ Քահանայապետքն Աննա և Կայիափա յանդիմանեն զնա. փարիսեցիքն և օրինաց վարդապետք ամբաստան լինին զնմանէ. զինուորքն ծանակեն, զահիճքն ճաղկեն. Հերովդէս խաղ առնէ զնովաւ. Պիղատոս վկայէ զանմեղութենէ նորա, և տայ 'ի հարուածս տանջել զնա իբրև 'ի սիրոյ՝ որ առ նա, և ժողովուրդն կամին զնա տեսանել 'ի խաչին. և Պիղատոս զովելով իսկ զարդարութիւն նորա տայ հրաման խաչելոյ։

Դ. Յորոց 'ի փրկութիւն եկեալ էր, տես զնոցա զապերախտութիւն, զապերասանութիւն և զամբարշտութիւն. ապերախտք, ապստամբք յօրինաց, ապերասանք, որք զգին այնչափ արեան նորա առ ոսն հարկանեն. ամբարիշտք՝ որք մեղանչելով յաճախ, անարգեն զփրկիչն, և նորոգ 'ի խաչ հանեն զփրկիչն հեզ։

Ե. Պատճառ այդչափ վշտաց և ցաւոց, յոր մատոյց զանձն Յիսուս, ոչ վասն իւր ինչ, այլ վասն մեր. ոչ յօգուտ անձին, այլ մեր. այս է՝ կամեցեալ ունել զհատուցումն արդարութեանն Աստուծոյ վասն մեղաց մերոց։

Զ. Յեղանակն որով տարաւ Յիսուս այս ամենայն վշտաց 'ի վեր է քան զբան. քանզի կրեաց կամաւ. «Զի Տէր մատնեաց զնա առ մեզս մեր»։ Վառեալ ցանկութեամբ. «Մկրտութիւն մի ունիմ մկրտել, և զի՞նդ փութամ մինչև կատարեսցի»։ Իլուութեան. «Եւ նա լուա ևեթ կայր»։ Մեծաւ համբերութեամբ. զի «Այր մի 'ի հարուածս և զիտակ համբերել ցաւոց, զի զարձուցեալ զերեսս իւր անարգեցաւ և ոչ ինչ համարեցաւ»։

Յաւել յայսոսիկ և զայն, զի Յիսուս 'ի կրելն զայսոսիկ՝ եցոյց յանձին և զամենայն առաքինութիւնս 'ի գերազանց աստիճանի, զաղքատութիւն հոգւոյ, զխոնարհութիւն, զհեզութիւն, զարիութիւն, զհնազանդութիւն, զսէր և զանչիշաչարութիւն։ Ո՛վ Յիսուս աղբիւր սիրոյ. ո՞վ կարասցէ առ-

նուլ 'ի միտ զչափ լայնութեան և երկայնութեան և բարձրութեան և խորութեան ամենայն առաքինութեանց՝ զորս արկեր 'ի զործ, և զյաւուցդ և զդառնութեանց՝ որոց տարար 'ի ժամու չարչարանաց քոց։

Ի խոկալն խորախորհուրդ զայսոսիկ վեցեսին մասունս, իբրև յաղբերականց ըղձեն յորդութիւնք ըղձից, ա. Կարեկցութեան զթոյ առ Յիսուս, որ տանի այնչափ դառնութեան անհուն սիրով առ մեզ։ բ. Ամենութեան և զարշելոյ 'ի մեղաց, զոր առ 'ի սրբել 'ի մարդոյն՝ հարկ եղև Որդւոյն Աստուծոյ հեղուլ զարիւն իւր։ գ. Աքանչացման ընդ անհուն բարութիւն և իմաստութիւն Տեառն, որ եղիտ զհնարս միաբանելոյ հրաշապէս զողորմութիւն ընդ արդարութեան։ դ. Յուսոյ յաւիտենական փրկութեան։ «Զի մինչդեռ մեզաւորքն էաք, Քրիստոս վասն մեր մեռաւ. ոչչափ ևս առաւել յարդարանալս մերում այժմիկ՝ արեամբն նորա ապրեսցուք»։ ե. Սիրոյն Աստուծոյ, որ այնչափ սիրեաց զմեզ, մինչև զՈրդին իւր միածին ետ 'ի փրկութիւն մեր։ զ. Նախանձու փրկութեան հոգւոյ, զորս Աստուած այնպէս 'ի պատուի կալաւ և սիրեաց, մինչև զնել զնոսին 'ի զին արեան իւրոյ։

Բայց պարտ է զիտել, զի իղձքս այսոքիկ ոչ են կարևորք 'ի զարթուցումն յամենայն խոկմունս ողջոյն միանգամայն, և ոչ ամենեքին վասն ամենեցուն, այլ իւրա-

քանչիւր որ ընտրեալ կալցի զայնոսիկ ևեթ վասն անձին՝ զորս կարէոր համարեսցի և յօգուտ հոգւոյ իւրոյ, և 'ի հաստատութիւն կատարելութեան կենաց իւրոց 'ի նմանութեանն Քրիստոսի անսասան յերրորդ աստիճան խոնարհութեան։

Եւ զի միտքն ևս ընթացակից կամացն լեալ՝ պատճառ լինիցի օգտութեանց, արկցես 'ի կիր և զհնարս զոր առաջի արարից։

Ա. Պարտ է նկարել 'ի մտի զկիրս չարչարանացն Քրիստոսի այնպէս կենդանի, զի թուեսցի մեզ անդէն առաջիկայ զտանել խորհրդոյն կատարման՝ ակն յայտնի տեսանելով. իբր լսելով զչառաչիւն խաբաղանացն, զբախիւն զաւազանաց, զաղաղակ զահճացն, զբանս Փրկչին. և զզալ յանձին զցաւս վիրացն, զհարկանել փշոցն և զմխումն բևեռացն. զճաշակ քացախին և լեղւոյն, և զցաւս պրկելոյ չուանացն. և տեսանել զնուաղումն, զհատանել զունոյ զիմացն, զկապուտակութիւն հարուածոցն, և զյօշյօշ պատառումն մարմնոյն Յիսուսի. զթուքսն և զարիւնն զիզացեալ յերեսսն։ Համայն ասել՝ Ջանալ կրել յանձին, զոր կրեաց կիրս 'ի պահու չարչարանացն Յիսուս։

Իւրաքանչիւր որ 'ի մէնջ ասասցէ յանձն. Յիսուս արար զայս ամենայն վասն իմ, ընդ իմ. և մեռաւ վասն իմ միայն, որպէս վասն ամենեցուն. մանաւանդ 'ի պահու անդ մահուն, զինէն խորհէր, վասն

իմ աղօթէր, և զպատարագն զայն մատու-
ցանէր 'ի խաչին առ Հայր վասն իմ։ Որ-
պէս էջ յերկնից առ 'ի մեռանել վասն ա-
մենեցուն, եթէ ես միայն էի, և վասն իմ
եթէ իջանէր, մինչև կարել ասել ինձ ընդ
Առաքելոյն՝ Որոնեաց զանձն վասն իմ։
Զհետ զնալն իմ հաճոյից կամաց և կրից
այնպէս յանձուկս արկին զնա, մինչև հե-
զուլ զբրտունս արեան 'ի պարտիզին. վասն
իմ պատառոտեցին զմարմինն ընդ խարա-
զանօք, և հեղուսեալ զնա 'ի խաչին, պա-
տառեցին զկողն։

Մի հեռացուցես 'ի մտացդ զերրորդ
աստիճան խոնարհութեան, և զամենայն մա-
սունս խոկմանն միշտ ուղղեսցես յայն՝ յոր
ուղղել զքեզ յանձին կալար յերրորդումն
աստիճանի 'ի նմանութիւն Քրիստոսի։

Գ

Այսօր առաւելապէս պարտ է կալ 'ի
սուրբ իմն տխրութեան, ոչ միայն անձնա-
պահ լինելով 'ի բերկրական խորհրդոց ես
և հոգեորաց, այլ և տխուր իմն ցաւով լնուլ
զհողիդ 'ի լռութեան, և զնացուցանել սար-
սուռ ընդ ոսկերսդ ընդ տեսիլ արիւնարուշտ
կրից չարչարանաց և խաչելութեան Տեառն
մերոյ Յիսուսի։ Եւ երբէք երբէք որոճաս-
ցիս 'ի միտս քո զսրտառուչ հատուածս
բանից քաղեալս 'ի սաղմոսէն և 'ի մար-
գարէից։

Յաւելուցուս ինչ և յարտաքին մեռուցմունս, զի 'ի խոկալն զցաւս Քրիստոսի 'ի դէպ և պատշաճ խակ է և մեզ, զի Զմահն Քրիստոսի 'ի մարմինս մեր կրեսցուք։ Պակաս արա ինչ մի 'ի կերակրոց, կամ զրկեա զքեզ յախորժահամ ինչ ճաշակաց բոլորովին կամ ըստ մասին։ Լաւ խակ խորհուրդ է յառաջ քան զճաշն սահմանել անձին զչափ կերակրոյն՝ զոր առնուլն կամիս, և չանցանել ըստ չափն առանց ծանր իմն հարկի։ Եւ 'ի ժամ ճաշոյն կալ յանպիման մտացդ զՑիսուս յընթրիսն բազմեալ ընդ Առաքելոցն, և միտ զիր եթէ որպէս բերին յուտել և յըմպել։

Պտուղ խոկմանս այսորիկ է յօժարել առաւել կալ 'ի նախատինս ընդ Յիսուսի նախատելոյ, քան թէ 'ի փառս։ Իսկ պըտուղ յառաջակայ խոկմանս լինիցի կամել կալ 'ի վիշտս ընդ վշտացնելոյն Յիսուսի, և ոչ 'ի հանդստեան, առ ևս քան զևս նմանող լինելոյ նմա։

ԽՈԿՈՒՄՆ Բ

ՅԱՂԱԳՍ ԿՐԵԼՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՆՁԻՆ ԻԻՐՈՒՄ, ԵԹԷ ՈՐՊԷՍ ՏԱՐԱՒ ՅՕՐԻՆԱԿ ՄԵՋ

Մասն Ա.

Խոկա զցաւս Յիսուսի, զոր կրեաց 'ի չարչարանսն և 'ի խաչին։ Նախ զի յամենայն իսկ 'ի կեանս իւր վերացուցեալ զմեղս մեր և յանձին բերեալ, և բարձեալ զցաւս մեր, յանձն ժողովեալ, և զբաժակն զոր ետ նմա Հայր յընտրել պատրաստեալ՝ տեսանէր միշտ զապերախտութիւն մեր, տեսանէր և զդառն նախատինս և զչարչարանաց մահ իւր, և ցաւէր յանչափս. «Եւ իցեն երբէք ցաւք ըստ ցաւոցս լեալ»։ Եւ ո՞ր բան կարասցէ պարզել զանչափութիւն ցաւոցն Յիսուսի, զոր կրէր 'ի բովանդակ կեանս իւր. ըստ անչափ սիրոյն առ Հայրն՝ որ արհամարհեալն էր 'ի մարդոյն, և դարձեալ ևս ըստ անչափ սիրոյն որ առ մարդ՝ պատկեր Աստուածութեան իւրոյ, արարչազործեալ անհուն սիրով, անչափ էին և ցաւքն։ Եւ ո՞ կարասցէ առնուլ 'ի միտ։ Փրկեալդ զու 'ի ձեռն ցաւոց նորա, և աստուածացեալդ 'ի սէր Հօր մերոյ երկնաւորի, խոկա՛ զայս

զմեծ և զանճառ խորս ցաւոց Յիսուսի, եթէ կարեա. և փարեաց զՅիսուսիս զերծեալ 'ի դատակնքոյ մահուն՝ զոր որոտաց Հայրն 'ի դրախտին, անդարձ դատակնիք։ Ա.ոդ դարձեալ դու յառաջին սէր Հօրն երկնաւորի 'ի ձեռն անչափ ցաւոցն Յիսուսի, լեր ցաւակից 'ի սփոփանս սրտիդ ընդ Յիսուսի, եթէ կարես հասանել մոօք անչափութեան սիրոյ և ցաւոց Նորա։

Երկրորդ եթէ մոօք ոչ կարես մտանել 'ի խորս անչափութեան ցաւոցն Յիսուսի, տես արդ աչօքդ զարեան քրտունս Նորա՝ որ ոլոռն ոլոռն հեղանի 'ի ճակատուն. հայեաց 'ի գահիճսն՝ որք են սէր Նորա անչափ առ մարդիկ և ապերախտութիւն մեր առ սէրն Ա.ստուծոյ. այսոքիկ երկոքին ընդ հակառակս եղեալ միմեանց փեռեկեն զսիրտ Նորա, մինչև արեանցն յորդել և 'ի ճակատուն բղխել արտաքս։ Եւ դու մեկնեալ 'ի Յիսուսէ՝ յածիս 'ի խնդիր փառաց, հանդստեան, արհամարհեալ զսէր Նորա՝ որ պատառեաց զվճիռ դատակնքոյդ կորստեան. և դու մատնես դարձեալ զանձնդ ընդ դատակնքովն Ա.ստուծոյ, դառնացուցեալ և զցաւս սիրոզին քո Յիսուսի։

Երրորդ ցաւ Նորա 'ի խստութեան տանջանացն. զի ահաւորութիւն դատակնքոյն Ա.ստուծոյ՝ մեռանելոյ մեզ մահու՝ կատաղեցուցեալ էր զթշնամիսն Յիսուսի. որք ոչ որպէս ընդ այլոց մահապարտաց վարէին ընդ Յիսուսի, այլ ամենեքին Հրեայք և հե-

թանոաք զինեալք 'ի զառնացուցանել ըզ-
ցաւսն. եւանդն իմն էր 'ի նոսա, հուր ար-
ծարծեալ բորբոքէր 'ի նոսա 'ի կատակել,
'ի կուփահարել, յապտակել. և ոչ շատ հա-
մարեալ զգահիճս ոմանս առ 'ի զանել զՁի-
սուս, յառաջ կոչէին զգունդն։ «Եւ զի-
նուորքն կոչեն միանգամայն զամենայն ըզ-
գունդն». որք սկսանին հարուածս անհնա-
բինս ածել 'ի վերայ։

Վրէժխնդրութիւն արդարութեանն Աս-
տուծոյ ընդ արհամարհութիւն սիրոյ իւրոյ՝
արբեցոյց և զղինուորսն կատաղութեամբ.
մինչև ոչ կարացեալ յաղեցուցանել զբոր-
բոք ցասման իւրեանց հարուածովքն՝ զոր
տային նմա, յօրինէին և պսակ 'ի փշոց և
զնէին 'ի գլուխ նորա, և ձեռէին եղեգամբք,
զի մի զուցէ նուազք լինիցին ցաւք գլխոյն
'ի խայթուածոց փշոցն, այլ զի կատարեալ
լինիցին ցաւքն յոտից մինչև ցգլուխն։ Եւ
զինչ պէտք իցեն երկարագոյն բանից առ
պարզել զասատութիւն ցաւոցն, շատ իսկ
մարգարէն վկայէ թախծեալ. «Այր մի 'ի
հարուածս, և զիտէ համբերել ցաւոց»։ Եւ
անհնարին իսկ է ումեք մտանել 'ի խորս
խմացուածոյ բանիցն, և ոչ նուազեալ ան-
կանել 'ի ցաւոցն 'ի հիացման մտաց։ Մինթէ
չեղեն 'ի սրբոց՝ որ 'ի խորհել զչարչարանս
Քրիստոսի նուազեալ թալկացեալ անկա-
նէին, և միայն զօրութիւնն Աստուծոյ էր՝
որ պահէր զնոսա կենդանիս։ Եւ դու զինչ
խոկացես կացեալ հանդիսատես այսպիսի

և այսչափ ցաւոց փրկչիդ Յիսուսի սիրողին քում։ — Ո՛վ Տէր իմ Յիսուս. դու 'ի ցաւս համակեալ և փշոտք պսակեալ, և ես կամիմ պսակիլ բոլորիւք վարդից։ Դու ցաւս 'ի ցաւս յաւելուս, և ես խուսափեմ յամենայն վշտաց։ Ա՛հ. մի՞ ես, մի՞ ես կամեցայց, ընդ փշապսակ գլխով լինել անդամ փափկակեաց. ոչ միայն տարայց համբերութեամբ ցաւոցն՝ զորս առաքեսցես ինձ, այլ և ես ինքն կամովին սկսայց պատուհաս 'ի վերայ անձինս ածել։

Զորրորդ՝ Յիսուս զատապարտեալ 'ի մահ՝ ելանէ 'ի ճանապարհ, հիւծեալ 'ի խոշտանգանս զանից և տանջանաց, վիրալից արիւնազանգ յոտից մինչև ցգլուխ, առ 'ի սէր ևեթ քո. բարձեալ և զփայտ խաչին 'ի յուս իւր։ Անզթութիւն դահճացն 'ի ծայր հասեալ էր, այնուհետև ոչ իբրև 'ի մարդ հայէին 'ի Յիսուս, այլ իբրև 'ի գազան ինն անկեալ 'ի գառագեղ իւրեանց, զոր չարատանջ հնարէին սպանանել. և քանզի Յիսուս լռեալ հանդուրժէ ցաւոցն, և նոքա անխնայ յաւելուլ 'ի ցաւսն պարտ վարկանին. և կալ իսկ յոտին յետ այնչափ հարուածոցն քանի՞ դժուարին էր նմա. այլ Յիսուս բուռն առնէր անձին առ 'ի քամել զանապակն մրրոնն հանդերձ. տանջէր 'ի ցաւոցն, նուազէր թալկանայր 'ի դառնութենէ ցաւոցն և 'ի տաղնապէ խորհրդոցն 'ի յիշատակ ապերախտութեան մարդոյն. զի բազմաց 'ի նոցանէ արհամարհեալ զան-

չափ սէր նորա, դարձեալ 'ի դատապարտութիւն մատնելոց էին։ Ամենայր զփայտն 'ի յուս իւր, ոչ կարէր գնալ, հարկանէին, յառաջ վարէին, զլորեալ անկանէր, հարուածք զանից բռնադատէին զնա յառնել. այնոքիկ հարուածք էին ձեռն օգնականութեան մատուցեալ նմա 'ի դահճացն. այնչափ էր դառնութիւն ցաւոց և վշտաց ճանապարհին, զի կանայք եկեալք 'ի տեսանել, ոչ կարացեալ հանդուրժել, լային տեսեալ զչարատանջ տառապանս Յիսուսի. և կրէր նա զայս ամենայն առ սէր քո միայն. ահ... լացցուք 'ի վերայ մեր, զի տակաւին ոչ ծանեալք զչափ սիրոյ նորա և զգթոյն 'ի վերայ մեր։

Ո՛վ Տէր իմ Յիսուս, դու 'ի սէր իմ չարաչանեալ տանջիս, հեծես ընդ ծանուբեռամբ փայտի խաչին, և ես թօթափեալ զքաղցր լուծ օրինաց քոց 'ի պարանոցէ իմմէ, կամիմ ընթանալ անաշխատ, և վաստակք փոքունք ինձ թուին ծանունք, միայն զիւրութեանց յածիմ 'ի խնդիր. ամաչեմ ընդ վատութիւն իմ։ Ցայսմ հետէ վաստակեցայց յամենայն զօրութենէ իմմէ. տանջեցայց որչափ կամիցիս ինձ լինել 'ի տանջանս։ Ամրդ քաջալերեալ և իմ յօրինակէ քումմէ, բարձից զխաչ իմ արիական հոգւով և անդրդուութեամբ։

Մասն Բ.

Զմտաւ ած զյեղանակն, որով տանի Քրիստոս զդառն տանջանս զայսոսիկ. ա. Համբերատար լուութեամբ։ Զհարուածս զանիցն առաւելուն յոյժ քան զհրամայեալսն յօրինաց, և նա լռէ. պսակեն զնա փչովք միայն առ խեղութեան, և լռէ։ Զխաչն բառնան 'ի յուս նորա ըստ ոչ սովորութեան, նա դարձեալ լուռ ելթ կայ անտրտունջ ամենեին։

բ. Զարչարի մտադիր 'ի նոյն բերեալ ցանկութեամբ, զի այնու զմեզ փրկելոց է 'ի զատապարտութենէ. և մինչդեռ հարուածք զանիցն Թօթափէին 'ի վերայ նորա, ասէր. «Ես 'ի տանջանս պատրաստեմ»։ Եւ մինչդեռ կամէին պսակել զնա փչովքն, տայր զգլուխն սիրայորդոր, զի սրբեսցէ զմիտս մեր 'ի խորհել ուղիղ. և յոյժամ ետես զխաչն, փարեցաւ զխաչին, զի սիրտ մեր սրբեալ փարեսցի զիւրն։

գ. Զարչարի 'ի սէր անչափ առ Հայր իւր. քանզի տանելով խոշտանգանացս այսոցիկ՝ յայտնեաց զանչափութիւն սիրոյ Ա. ստուածութեանն առ մարդ, և մեծացոյց զարդարութիւն և զողորմութիւն նորա միանգամայն. յայտնեաց և առ մեզաւորս՝ զորոց զփրկութիւն զնեաց արեամբ իւրով. և առ քեզ, զոր առանձինն կրէր 'ի սրտին մինչև

ցաւանդումն հոգւոյն. և թէպէտ տեսանէր զքո ապախտաւորութիւն, և զառ 'ի քէն արհամարհութիւն սիրոյ իւրոյ 'ի սիրել քո առաւելութեամբ զաշխարհ և զմարմին, սակայն և այնպէս պատրաստեալ ունէր վասն քո զշնորհս զայսոսիկ, որովք հուսկ ուրեմն զարձուցէ զքեզ առ ինքն, հանգուցէ զքեզ 'ի սէր իւր։

Զմտաւ ած զպտուղ չարչարանացն, զոր արժան է քեզ քաղել։ Յառաջ մատիր, ամբարձ զաչս քո 'ի խաչն, հայեաց 'ի փուշն յայնոսիկ՝ որք չարաւանջ խոցոտեն զդէմսն Յիսուսի որ յոգիս ապաստան կայ։ Ակնարկեա 'ի սուրբ մարմինն յայն թալկացեալ, պատառոտեալ, յօշոտեալ. հայեաց 'ի ձեռսն և յոտսն բևեռեալս՝ յորոց մարմինն ծանրացեալ՝ կախեալ կայ, և զխոցս բևեռացն տես որպիսի՛ ցաւովք ճեղքեալ պատառէ. զի մարմինն ողջոյն 'ի ձեռսն և յոտսն 'ի բևեռսն 'ի վէրսն այնոսիկ յեցեալ կայ՝ փոխանակ փետրալից բարձից և փափուկ անկողնոց. և դու կամիցի՞ս զբօսեցուցանել զքո մարմինդ, կեալ 'ի փափկութեան, 'ի բարեհամ՝ ճաշակս. խուսափեա՛ 'ի վաստակոց և 'ի վշտաց։ Զիցե՞ս դու ինքն, որ խոստացար յամենայնի գնալ զկնի Յիսուսի, զինուորել ընդ զրօշու նորա, արկանել 'ի կիր զնորին զէնսն, ազատել զզղեստսն, և ուտել զկերակուր զնորայն։ Ա՜հ. եթէ Քրիստոս ոչ կայր 'ի խոստմանն, և փոխանակ մեռանելոյ 'ի դառն

խոչտանգանս, իջանէր 'ի խաչէն, զինչ լինէր քեզ։

Հա՛սպա, քաջալերեաց, եկ զհետ թա-
գաւորին քում և Տեառն, ուղղեա զանցեալ
կեանս քո, արիական խորհրդովք և խոս-
տմամբք կացո՛ յամրի զանձնդ առ ապա-
գայս. կացո՛ 'ի ծառայութեան զմարմնդ,
և զապստամբ իղձս նորա ապաշխարու-
թեամբ և եռանդեամբ։ Տա՛ր յօժարակամ
'ի սուրբ լուութեան՝ հիւանդութեանց և այ-
լոց վշտաց։ Վաստակեաց իբրև զբարւոք
զինուոր Քրիստոսի 'ի կատարելութիւն քո
և 'ի զարձ ընկերացդ։ Ընկեա՛ յԱ.ստուած
զամենայն զհոգս առողջութեան քո. և թող
նմա տալ քեզ կեանս առողջս կամ հիւանդս
երկարս կամ սուղ։ Հաւատա իմոց բանից,
զի ծառայել և վշտաց տանել 'ի սէր այսր
բաղմաղորով Տեառն, քաղցր է և բերկրա-
կան յոյժ, և քեզէն ծանիցես զսոյն յետ
սակաւուց 'ի փորձոյ։ Ասա՛ արդ արիական
հոգւով ընդ սրբոյն Թերեզիայ, կամ կրել
կամ մեռանել. կամ ընդ այլում սրբուհւոյ՝
կրել քան մեռանել։

ԻՂՁԲ

Կարեկցութեան. Ո՜վ, յո՛ր սահման տե-
սանեմ զքեզ, ամենասիրելիդ իմ Յիսուս.
յո՛ր սահման հասեալ. յոտից մինչև ցգլուխ
չիք 'ի քեզ առողջութիւն։ Ծածկեալ ես վի-
րօք, և պատկեր անդամ մարդոյ չէ 'ի քեզ.

ծածկեալ և աստուածային տեսիլդ, որով զարդարեալ էիր։ Յաւալից դու Յիսուս, և ես տեսանեմ զքեզ մատնեալ յայս աղէտս տարակուսի առ սէր իմ, և ոչ խանդաղատիմ՝ 'ի զութ։ Որպիսի՞ ինչ է այս սիրտ՝ զոր կրեմս, սիրտ խիստ, սիրտ վիմարդեան, սիրտ երկաթի։ Եւ աչք իմ ոչ քամեն և ոչ գչիթ մի արտասուաց։ . . Ա՜հ, Յիսուս. վասն ոյր կրես զտանջանսդ։

Յաւոյ. Զինչ զործէի 'ի զնալն իմ զհետ յօժարութեանց մարմնոյ. վա՜շ Յիսուս, եղո՛ւկ զիս. զքեզ ճաղկէի, զքեզ պատկէի փշովք, քեզ զլեղի արբուցանէի, զքեզ բեռէի 'ի խաչին։ Ա՜հ. ո՛վ սիրտ իմ, ստեղծեալդ միայն 'ի սիրել զԱստուած, արտասուեա աղիողորմ, և հառաչեա 'ի խիստ ցաւս . . . Ա՜յո՛, Յիսուս, ցաւիմ զի վշտացուցի զքեզ . . . Ո՜վ անիծեալ մեղք՝ որ եղեր դահիճ Ցեառն իմոյ . . . ատեամ զքեզ յատելութիւն յաւիտենական։

Սիրոյ. Ո՜վ Փրկիչ իմ ամենասուրբ, ես կատաղեալ յիմարիմ, և դու չարչարիս. և չարչարիս փոխանակ իմ, չարչարիս վասն իմ. վասն իմ որ եմ որդն և հող . . ։ Եւ 'ի ցաւս անդ քո 'ի սէր եռանդուն սիրես զիս. զթալից ակնարկես առ իս, և լուսաւորես անդին արեամբ քով. զինչ տաց տրիտուր առ այնչափ սէր քո. ա՜հ. դու ոչ զայլ ինչ կամիս յինէն բաց 'ի սիրոյ. խնդրես յինէն սէր։ Ա՜ռ իս, ո՛վ սերովբէք, արձակեցէք առ իս կայծ իմն 'ի հրոյ ձերմէ, որ բոցակէզ տո-

չորեսցէ զիս, և վառեալ բորբոքեսցէ ա-
մենակէզ, եռանդագին սիրով առ Փրկիչն
իմ Յիսուս առ սիրողն սրտիս։

Աղաղուբեան անձին. Ո՛վ Հայր յաւի-
տենական, ազաչեմ զքեզ, ձեռք քո ծանն-
բասցին 'ի վերայ իմ, ծանրասցին, և զիս
պրկեալ կաշկանդեսցին. յիս հեղցի բար-
կութիւն քո մեծ՝ զոր հեղեր յՈրդիդ քո
միածին. ես մեղայ, ես յանցեայ, և ոչ
նա։ Անմեղ է Յիսուս, նա է զառն անա-
բատ՝ որ մատնեցաւ 'ի ժանիս զայլոյս. առ
ինչ զնա ձաղկես և ոչ զիս. առ ինչ նմա
խաչն, և ոչ ինձ։

Ա.Հ. Ցէր իմ, եթէ ողորմութիւն քո
այսպէս զթութեամբ ակնարկէ յիս, ինձ
պարտ է ունել զկողմն արդարութեան քո,
և առնել զհատուցումն ըստ իմում կարի
ցորչափ ի՞նչ յիս չունչ։ Արդ սանձեցից
զզգայութիւնս իմ, մեռուցից զմարմին իմ,
ուրացայց զկամս իմ։ Հաճոյ եղիցին քեզ
պատարագք իմ. ահա 'ի ժամէս յայսմանէ
խոստումն անսուտ տամ քեզ, զի ապաւի-
նեալ 'ի շնորհս քո ելից զհետ Յիսուսի 'ի
վիշտս, 'ի խոնարհութեան, յաղքատու-
թեան, միայն առ ևս քան զևս նմանող լի-
նելոյ նմա, որ վասն իմ աղքատացաւ, խո-
նարհեցաւ և վշտաց տարաւ։ Ահա վճռեալ
կնքեցի. յամենայն զօրութենէ բուռն ան-
ձին արարից, և ջանացայց հասանել յեր-
որդ աստիճան խոնարհութեան. այս իմ
ուխտ սրտիս։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՕՈՒՂ.

Բ. Խոկա զյաւան Յիսուսի որոց տարաւ 'ի մարմին 'ի հոգի և 'ի խորհուրդսն, զյաւս վերջին չարչարանացն՝ զորս կրեաց 'ի Ծննդենէ ցմահ իւր: Յիշեա զանսովոր կատաղութիւն թշնամեացն, և զդառնութիւն մտաց դահճացն, և զսատկութիւն հարուածոցն:

Պատկեցաւ փշովք առ յագեցուցանել աւեթ զկատաղութիւն դահճացն, որք և հարկանէին փշոցն զի յաճախեսցեն զյաւսն. սատկութիւն, դառնութիւն ցաւոցն Յիսուսի բերկրութիւն էր սրտից նոցա, զի այդպարութիւն հօրն երկնաւորի զբաժակ վրիժուց մեղաց աշխարհի հեղոյր 'ի գլուխ Որդւոյ իւրոյ, զի զմեզ զերծուսցէ 'ի դատակնքեալ մահուանէ:

Եւ զնաչն տային 'ի յուս նորա ըստ ոչ սովորութեան մահապարտաց. յայսմ ամենայնի Յիսուս լռեալ հնազանդէր:

Բ. Զմտաւ ած զյեզանակն, որով հանդուրժեալ տանէր Յիսուս այսոցիկ չարչարանաց. 'ի լռութեան, յօժարակամ, պատրաստական հոգւով քամելոյ և զմրուր բաժակին. առ յաւիտենական սիրոյ հօր, և 'ի սէր մեղաւորաց:

Ծանիր և զպտուղն, զոր պարախս քաղէլ. Ա. Պատկառանք ընդ գգուեալ զմարմնիդ, մինչդեռ մարմինն Յիսուսի յօշ յօշ պատառի ընդ խալաղանաւ, 'ի փշոց և 'ի բեռեաց: Բ. Նախանձաւորութիւն լինելոյ չարչարակից Յիսուսի, և քաղ

ձանք նմանելոյ նմա յերրորդ աստիճան խոնարհութեան։

Ընթերցիր

Թովմ. Գեմբ. Գիրք Գ. Գլ. 10։

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Զկերանուէրեանէ և զփառաց հոգւոյ անարգելոյ և վշտագնելոյ.

Վասնզան կրթութեան այսր աւուր է հաստատութիւն ուխտի յերեկեան աւուր, որ է ժամանումն յերրորդ աստիճան խոնարհութեան՝ յանձն առեալ կալ ընդ Քրիստոսի 'ի նախատինս և 'ի վիշտս, յայնոսիկ դէպս իսկ՝ յորս հաւասար իցեն փառքն Աստուծոյ 'ի հանգստեան և 'ի վիշտս, և միայն առ 'ի լինել առաւել նմանող Յիսուսի։ Եւ զի ապականեալ բնութեան մերոյ դժուարին է սիրել զվիշտս և զնախատինս, վասն որոյ օգտակար յոյժ լինիցի նկարել յանդիման աչաց զերանութիւնն և զփառս մեծ զծածկեալսն ընդ նախատանաւք և վշտաւք։ Քանզի ո՞ր ինչ այլ առաւել 'ի յորդոր լինիցի մեզ 'ի սէր նախատանաց և վշտաց, քան զածելն զմտաւ զի 'ի նախատինս անդ չիք ամօթ, այլ փառք. և 'ի վիշտսն ոչ է թշուառութիւն, այլ երանութիւն։

Ա. Գերազանց և ծայրագոյն է փառք նա-

խատելոյն և վշտացնելոյն 'ի հակառակու-
թեանց, զի նոքօք հաւասարի մարտիրոսաց
և հրեշտակաց, և լինի սիրելի Քրիստոսի
և նմանող։ Աբրահամ համբերատարն ան-
արգանաց մեծարոյ է և առ մարդիկ, զոր
և հեթանոսք անգամ ծանեան. մինչև ա-
սել Եպիկտետոսի զվեհ զայն բան՝ թէ «Ի
տանելն հակառակաց՝ ցուցանիմք արք»։
Իբրև զի առանց փորձոյ վշտաց չիցեմք ար-
ժանիք անուան առն։ Յայս կարծիս յածին
և այլք յիմաստասիրաց։ Ասէ Ոսկեբերան.
«Ատուած այնպէս քաղաքավարի ընդ ի-
բրոցն սիրելեաց, որպէս զօրապլուխք ընդ
իւրեանց զօրականաց, որք զարիագոյնսն
առաւել 'ի գժուարինս յառաջ մատուցա-
նեն։ Այնպէս զի որչափ առաւել դժոխքմ-
բեր իցէ զորձն, այնչափ առաւել 'ի փառս
գրի առն՝ որ առ 'ի գլուխ հանել զնոյն ըն-
տրեալ իցէ»։ Զսոյն մեզ հաւաստեն Յովսէփ
Յեզիպտոս, և Դաւիթ յայրին Ենգադդայ։

Հակառակք մեզ անձկութիւնք հաւա-
սար առնեն զմեզ մարտիրոսաց և հրեշտա-
կաց. զսոյն հաւաստեն և մեծամեծք 'ի սբ-
բոց։ Եւ առնեն զմեզ սիրելի Քրիստոսի,
և նմանող նորին յոյժ. զսոյն փորձով իսկ
ցուցանէ մեզ սրբուհին Թերեզա յասելն.
«Քննութեամբ վկայեալ է յամենայնի, զի
մերձաւորագոյնքն և սիրելիք Քրիստոսի
Տեառն մերոյ՝ առաւել ծանր վաստակովք
տառապեցան, և առաւել զառն վշտաց
տարան»։

Վշտացեալքն ոչ միայն բարեկամք են Յիսուսի, այլ և նմանք նմին. «Զի զորս յառաջն ճանաչէր, յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյն իւրոյ»։ Ա. ի քանդակել 'ի փղոսկր զպատկեր Քրիստոսի խաչելոյ կիսամեռ, տապացեալ շրթամբք, թաղկացեալ, և քօղ մահուն 'ի վերայ աչացն սփռեալ, քանի՞ վաստակոց են պէտք, տաշելոյ, քերելոյ, փորելոյ, կտրելոյ մինչև առցէ զնմանութիւնն։ Յես արդ, որչափ առաւել վաստակոց իցեն պէտք, զի հոգիդ քո ածցի 'ի նմանութիւնն Քրիստոսի։ Իսկ զու այդպէս խուսափես 'ի հակառակաց, և այդչափ սասանեցուցանեն զքեզ ցաւք։

Բ. Անչափ է և երանութիւն անարգեալ և վշտացեալ անձին, զի վիշտք և անարգութիւն խողովակ իմն են առաւելութեանց և շնորհաց։ Առաւելութիւնք են, զի վիշտքն առիթք են կատարելութեան և նշան սիրելոյ զմեզ Աստուծոյ, և ցոյց նախասահմանութեան։ Եւ զի 'ի ձեռն վշտաց հասանէ ոք 'ի սրբութիւն, լուր մեծին Գրիգորի. «Ճշմարտութեամբ ասեմ', զի եթէ սակաւ հալածանաց տարցիս, սակաւ լինիցի և երանեղն սրբութեան 'ի քեզ»։ Վասն զի նախատինք, աղքատութիւն, ցաւք՝ տկարացուցանեն զմայթս հպարտութեան և զզրզիռս և զոյժ, նոյնպէս ևս զորկորստութեան և զանձնդիւրութեան։

Վիշտք են նշանք սիրոյն Աստուծոյ

առ մեզ. Աստուած ինքնին վկայէ 'ի սուրբ գիրս. Զոր սիրէ Տէր, տանջէ. զոր սիրէ Տէր, խրատէ։ Արդ եթէ Քրիստոս 'ի ցոյց սիրոյ իւրոյ տանջէ զմեզ, ապա և մեք 'ի տանելն խնդութեամբ դառնութեանցն՝ ցուցանեմք զսէր մեր առ նա. վասն որոյ ասէ ոմն 'ի սրբոց, «Որչափ առաւել սիրայորդոր բերիմք 'ի վիշտս, այնչափ առաւել յայտնեմք զսէր մեր առ Քրիստոս»։

Անձկութեանցն հոյլք են հաւաստիք նախատահմանութեանս մերոյ 'ի փրկութիւն, և հանգերձեալ երանութեան մերոյ նախաշաւիղք, և սիրոյն Աստուծոյ 'ի մեզ տիպք։ Եւ մեծամեծք 'ի սրբոց վկայեն այսմ. վասն այնորիկ և Քրիստոս երանէ զվշտացեալսն և զնախատեալս։ Եւ դու չերանիցես զանձն վշտացեալ, որ ժառանգաւոր է ամենայն բարութեանց, մեծութեանց և փառաց յաւիտենականին։

Այլ իմն պարգև մեծ առատութեան շնորհաց է 'ի վիշտս. զի ըստ սրբոյն Ոսկեբերանի. «Շնորհք մեծք են լինել արժանի տանելոյ վշտաց վասն Քրիստոսի. և է պսակ կատարեալ, և վարձք ոչ նուազ քան զհանդերձեալ հատուցումն»։ Յաւելու ևս ասել, «Եթէ չէին իսկ հատուցմունք ինչ վշտաց, այլ և այնպէս հատուցումն է բաւական չարչարիլ վասն սիրելւոյն»։

Լաւագոյն է տանել վշտաց քան զհրաշագործել. ասէ նա ինքն Ոսկեբերան. «Վասն հրաշիցն լինիցիս պարտապան Աստուծոյ,

իսկ վասն համբերութեան՝ զՔրիստոս ու-
նիցիս քեզ պարտապան »։ Երանուհի ոմն
սքանչացեալ ընդ վշտացն գերազանցու-
թիւն, զոչէր յաճախ. «Տէր իմ՝ մեծ ես
շնորհ այն է ինձ եթէ վշտաց տարայց յա-
նուն քո, քան հաղորդ զտանել ամենայն
զաղանեաց քաղցր սրտիդ »։

Տես թէ զորպիսի փառս և զերանու-
թիւն տեսանեն սուրբք 'ի վիշտս. տես յոր
խորհուրդս կան որդիքն Աստուծոյ. և զզոյշ
կաց չօտարանալ 'ի կորովեացն այնոցիկ;
և հաստատեա զքեզ անսասան յերրորդ աս-
տիճան խոնարհութեան։

ԲՆՆՈՒԹԻՒՆ

ի վերայ համբերութեան և հնազանդութեան.

Եւ քանզի առանց զինելոյ երկայնա-
միտ համբերութեամբ՝ անհնարին է ելանել
յերրորդ աստիճան խոնարհութեան, և կալ
անդրդուելի 'ի նմին, և զի հնազանդութիւնն
ևս պատճառս տայ յաճախ վշտաց, վասն
որոյ առ 'ի յառաջ խաղալ ըստ կարգի,
հարկ է առաջի առնել զնիւթս, զաստի-
ճանս և զյորդորս այսոցիկ երկոցուն ա-
ռաքինութեանց։

Համբերութիւնն է առաքինութիւն՝ որ
յօժարեցուցանէ զկամս տանել անխռով
ամենայն ընդդիմակաց։ Եւ պատճառք համ-

բերութեան են կորուստ բարեաց բաղդի ընդ ձեռն ապրատութեան. պատուոյ և համբաւոյ՝ ընդ ձեռն նախատանաց և անիրաւութեանց. առողջութեան և կենաց՝ ընդ ձեռն ցաւոց և մահուան. խաղաղութեան սրտի՝ ընդ ձեռն խղճմտութեան, տաղտկութեան և անձկութեան հոգւոյն։

Պարտ է տանել այսոցիկ, ա. Համբերատար լռութեամբ անտրտունջ առաջի այլոց, և անխռով 'ի սրտի, և ոչ բողոք առ Աստուած առնելով, այլ արութեամբ մտաց կնքելով զամենայն ընդ մոռացութեամբ։

բ. Բերկրալից. զի առաքեալքն ոչ միայն խնդային ընդ անարգութիւնն վասն Քրիստոսի, այլ և զոհանային իբրև մեծի բարերարութեան հանդիպեալ։

գ. Ցանկութեամբ կրելոյ զառաւելագոյնն եթէ փառքն Աստուծոյ զնոյն պահանջեսցեն, ըստ օրինակին Քրիստոսի որ ասէր՝ եթէ «Ցոտ մի ոչ անցցէ յօրինաց և 'ի մարգարէից մինչև ամենայն եղիցի». այսպէս և Պօղոս ցանկայր նմանող լինել Քրիստոսի յամենայն վիշտս տառապանաց. սապէս և այլք 'ի սրբոց՝ որք խնդրէին զյաւելումն վշտաց 'ի սէր Յիսուսի։

դ. Ամենայնիւ համոզեալ 'ի միտս թէ տառապանք վշտաց մերոց առ վշտօքն Քրիստոսի ոչ ինչ իսկ են, նոյնպէս և առ բազմաչարչար նահատակացն վշտաց, և առ տանջանօք քառարանին և դժոխոց։

Դարձեալ պարտ է տանել այսպէս ա-մենայն վշտաց, ա. խոնարհելով առաջի Աստուծոյ'ի ճանաչելն զկատարեալ իշխանութիւն նորա'ի վերայ մեր: բ. Ցանկալով առնել հատուցումն արդարութեանն Աստուծոյ, զոր 'ի վրէժխնդրութիւն զրգռեցաք: գ. Առ ապաշխարել: դ. Առ սէր ցիսուսի և յաւիտենական Հօր: — Արդ քննեա զքեզ և տես եթէ իցէ՞'ի քեզ Հմտութիւն այսպիսի երկայնամիտ և կատարեալ ըստ ամենայնի զորս յիշատակեցաք:

Հնազանդութիւնն է առաքինութիւն, որով ոք հպատակի այլում յանուն Աստուծոյ յամենայն օրինաւոր գործս: Նիւթք հնազանդութեան են անձինքն՝ որոց հնազանդի, և գործքն՝ յորս հնազանդի: Զի ճշմարիտ հնազանդն հպատակ կայ ամենայն մեծաւորաց, նա թէ և տգէտք իցեն և անառաքինիք և զայրացկոտք, և ոչ ըստ օրինի և խոհական մտաց զհրամանսն առաջի առնել զիտասցեն: Հնազանդի զարձեալ ստորնագունից քան զինքն, և ծառայից անգամ և աւելածուաց, եթէ զօրինաւոր ինչ պահանջեսցեն:

Հնազանդի ևս յամենայնի, նա թէ և վտանգ իսկ կայցէ կորուսանելոյ զառողջութիւն և զկեանս, զպատիւ և զհմբաւ, զգիտութիւն, և այլն: Թէպէտև խիստ ևս հրամանն թուեսցի անիրաւ և աչառանաց տուեալ, և կամ որպէս զիարդ և իցէ:

Հնազանդի կատարեալ կամաց. ա. Սիթամի

փութով հատանելով զբանս, թողեալ 'ի կէս զառն սկսեալ։ բ. Ի կատարեալ կամակցութեան ընդ մեծաւորին՝ ոչ քրթմնջելով 'ի միտսն և ոչ զանգատ առ այլս կալեալ։ գ. Հպատակեալ զմիտսն կուրօրէն՝ լուսազոյն դհրամանս մեծաւորին կալեալ։ Եւ եթէ անխոհեմ իցէ հրամանն, դժուարին և զառն, զոհանալով զՏեառնէ զի պատճառս ետ պատարագելոյ նմա զկամսն և զմիտս իւր։

Հնազանդի զարձեալ զօրութեամբ հաւատոց, յայտ արարեալ զի հաւատայ բանիցն Քրիստոսի որ ասէ. «Որ ձեզ լսէ, ինձ լսէ»։ Եւ յուսոց, վստահացեալ զի նախախնամութիւնն Աստուծոյ 'ի ձեռն հնազանդութեան առաջնորդէ մեզ և փրկէ զմեզ։ Եւ սիրոյ, որպէս զի 'ի ձեռն հնազանդութեան հանցէ 'ի պարգև Աստուծոյ որ ինչքան զամենայն սիրելի և մեծայարգ իցէ իւր, այսինքն զկամսն և զմիտս։ Քննեա զանձն քո եթէ յոր աստիճան հասեալ կայցես յայսմ առաքինութեան. եթէ իցեն մտադիւր և փոյթ 'ի հնազանդել, խնդամիտ հրաժարեալ զլեռվին 'ի դատաստանէ մրատոյդ։

Հնազանդութիւն և համբերութիւն, երկոքին այսոքիկ դիւրացուցանեն բազմաք զդժուարութիւնս երրորդ աստիճանի խոնարհութեան։ Բայց դժկամակութեանն՝ զոր զդամք յանձին ընդդէմ վնասողաց համբաւոյ մերոյ կամ անձանց և կամ իրաց

մերոց, և դարձեալ առ'ի հնազանդել հրամանաց զայրացուցչաց անձնասիրութեան և դժուարակրաց, լինիցի դեղ ազգու խոկումնս առաջիկայ, յորում Յիսուս բաղմեալ 'ի խաչի ուսուցէ սիրել զայնոսիկ և նպաստել թշնամեաց։

ԽՈԿՈՒՄՆ Գ

Ի ՎԵՐԱՑ ՄԱՀՈՒԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ Ի ԽԱՉԻՆ

Մասն Ա.

Զմտաւ ած զՅիսուս հասեալ 'ի լրումն մատուցման պատարագին։ Նա հրաւիրեաց զքեզ զկնի իւր, խոստանալով քեզ յամենայնի յառաջոյ ընթանալ 'ի վաստակսն, 'ի խոկմունս և յայլսն ամենայն. ահա կատարէ զխոստումն իւր լիով։ Նա ահա կայ բեռեալ 'ի խաչին, յորում քան զամենայն ինչ առաւել պայծառ փայլէ սքանչելեաք երրորդ աստիճան խոնարհութեան յօրինակ մեզ ընծայեալ. ահա ընտրեալ ունի զաղքատութիւն ընդ ճոխութեան, զնախատինս ընդ փառաց, ընդ բերկրականացն զթախծութիւն. ընդ քաջողջութեան և կենաց՝ զցաւս և զմահ։

Եւ այս ամենայն ոչ ըստ օրինաց հաստակաց. այլ աղքատութիւն նորա է այնչափ, քան զոր առաւել անհնար է ածել ընդ միտ. զի մերկ ամենեին կախեալ կայ յօդս, ոչ ունելով տեղի դնելոյ զգլուխն, և ոչ մասն զրպլեկի առ 'ի ծածկիլ նոմա։ Նախատինքն յառակ նշաւակի 'ի ծայր հասեալ ամօթոյ. թշնամանեալ յամենեցունց, յայսն և 'ի ծաղր լեալ զրպարտ ստգաւնոք։ Յաւքն և անձկութիւնք դառինք յոյժ յոտից մինչև ցգլուխ. շատ է զմտաւ ածել, զի 'ի վերս չորից բեւեռաց ոտիցն և ձեռացն մարմինն ողջոյն ծանրացեալ՝ յօդս բարձրացեալ հանգչի։

Մահն չարատանջ և նախատակոծ. 'ի ծաղկի հասակին, յաւուր մեծի պասեքին յանդիման ժողովրդեան, յայսն և 'ի կատականս ամենեցուն. անցաւորք հայհոյեն զնա. «Վա՜հ որ զտաճարն քակէիր, էջ 'ի խաչէդ», ծանօթքն հեռիք. լքեալ և ՅԱստուծոյ. «Աստուած իմ ընդէր թողեր զիս». Այսու մահուամբ մեռանի միածին Որդին Աստուծոյ. փրկիչն աշխարհի. լքեալ յամենեցունց, պատառոտեալ 'ի խարազանաց, խոցեալ 'ի փշոց, սեւեռեալ 'ի խաչի նախատական բեւեռաք, մերկ, ծաղր և ծանակ։

Հապա, զարմ անձն իմ, հայեաց յերեսս Քրիստոսին քո, որ այսպիսի օրինակ՝ որպէս խթանաւ մատչի քեզ 'ի յորդոր, և քաջալերէ զքեզ 'ի սէր աղքատու-

թեան, ցաւոց և նախատանաց. այսինքն յերրորդ աստիճան խոնարհութեան, յոր խոստացար ժամանել արութեամբ, և կալ անյողդողդ 'ի նմին յամենայն կեանս քո։ Ցնս զՑիսուս յայն ազէտս, և ասա՝ եթէ առնուցո՛ւս յանձն թիկնադարձոյց լինել և յետս կալ 'ի խոստմանէդ առ նա։ Քաջ կապեա 'ի մտի որ ինչ ասացաւ 'ի խորհրդակցութեան երից աստիճանաց, զի որ ոչն գուն զորձէ ամենայն ճգամբ հասանել յերրորդն աստիճան խոնարհութեան, մատնի 'ի վտանգ չկալոյ հաստատուն և յերկրորդին. և առաւել երկիւղագին այն է, զի և ոչ յառաջինն։ Ջանա՛ մտանել 'ի խորս այսր ճշմարտութեան, և ըստ առաւելութեան պիտոյիցն հան անտի պտուղ։ Խորհեաց և զայն թէ զինչ լինիցի քեզ, եթէ վրիպիս 'ի վորձոյ գործոյն, և հասցէ քեզ յանդիման լինել Քրիստոսի ցասուցելոյ՝ որ յերեսս հարկանիցէ քեզ զխաչ իւր, զբևեռսն, զլեղին, զմերկութիւնն և զփուշն։

Մասն Բ

Ի Ցիսուս կախեալ 'ի խաչին տեսանեմք զհնազանդութիւն կատարեալ. զի «Եղև հնազանդ մահու չափ և մահու խաչի»։ Հնազանդի Ցիսուս ամենեցուն. ոչ եթէ միայն Հօրն յաւիտենականի, այլ և Կայիափայ, Պիղատոսի, զինուորաց, և դահճաց՝ որոց չէր

իշխանութիւն 'ի վերայ նորա։ Հնազանդի յամենայնի, և 'ի յոյժ զժուարինս. պատրաստ առ ամենայն տանջանս, զիտելով զի այն է բաժակն տուեալ նմա 'ի Հօրէն. և զի ոչ անկանի ճնճղուկ 'ի գետին առանց կամաց նորա, վասն որոյ հնազանդի մտօքն կուրօրէն, կամօքն մտադիւր, և 'ի գործելն սթափ և փոյթ։

Եւ զայս ամենայն առաւել զառնացուցանեն երեք յարակից դէպք. ա. Զի զնա ոմանք իբրև զմարգարէ ունէին, և այլք Մեսիա զնա հաւատային, և արդ յանդիման ամենեցուն դատապարտի յանարդմահ իբրև պատրիչ չարագործ և ապստամբեցուցիչ ծանակեալ 'ի միտս ամենեցուն։ բ. Դատապարտի այնչափ վաստակս կրեալ վասն նոցա յառաքելութեան իւրում. այնչափ հրաշս ցուցեալ, և յամենայնի բարեբարեալ։ գ. Դատապարտի 'ի կատարեալ յաղթանակ թշնամեաց իւրոց, որք նախատակոծ առնէին զնա, և զարծէին ընկճեալ զնա և նկուն արարեալ, թէպէտև մեծ և յայտնի անիրաւ զատաստանաւ։

Այսոքիկ դէպք են, որք յոյժ զառնացուցանեն զխաչս կրօնաւորաց. կրել զամօթ առաջի աշխարհիկ մարդկան յետ բազում քրտանց և վաստակոց տանելոյ 'ի կրօնի, տեսեալ և զպարծանս հակառակորդաց և մախացողաց ընդ յաջողել անիրաւ զրդութեան մտաց իւրեանց։ Երբէք և 'ի մեծաւորաց ստգտեալք, և 'ի խոտոր-

նակ կարծիս դատափետեալք, և անիրաւ դատաստանաւ խրատեալք։

Բայց ոչ է արժան վասն այսոցիկ պատճառաց ի՛Ջանել՝ի խաչէ, և լքանել զերրորդ աստիճանն խոնարհութեան։ Գիտա՛ի քաջալերք քեզ, զի կարեւոր է տանել վշտաց, զի «Բաղում նեղութեամբք պարտ է մեզ մտանել յարքայութիւնն Աստուծոյ»։ Կարճամտութիւնն ոչ թեթեւացուցանէ և ոչ ջնջէ զանիրաւութիւն, այլ առաւել դառնացուցանէ զվիշտն և զարդասիս արդեանցն կորուսանէ։ Դարձեալ զի է այն սատար մեծ՝ի հատուցումն մեղաց մերոց։ Է. ևս նմանութիւն Քրիստոսի, որ վասն մեր տարաւ այնչափ դառնութեան վշտաց։ — Ո՛վ ՏԷր իմ Յիսուս ամենեին հնազանդ, արա և զիս արժանի շնորհացդ, զի քաջալերեալ յօրինակէ քումմէ՝ հնազանդեցայց միշտ, ամենեցուն, և յամենայնի։

Մասն Գ.

Ի Քրիստոս խաչեալ արտափայլէ վառեալ սէր թշնամեաց, որ է առաքինութիւն որչափ դժուարին, այնչափ ևս գերազանց։ Ապա համառօտիւ իմն լեր մտախոհ՝ թէ զորպիսի թշնամիս, և օրպէս սիրէ։ Թողուլ, և սիրել զթշնամիս՝ ոչ թէ միայն ոչ վնասեալս՝ի մէնջ, այլ և բարերարեալս մեծապէս, որք ոչ միայն ոչ խնդրեն թողութիւն՝ի մէնջ՝ այլ և ատեն զմեզ և՝ի

նախատել կան. և թողուլ նոցա՝ կարող զո-
լով հանել 'ի նոցանէ լիուլի զվրէժ. և ոչ
միայն բարեխօս կալ վասն նոցա՝ այլ և մե-
ռանել 'ի սէր նոցա մահու չարաւ և անար-
դականաւ, այս է զերօրինակ սէր, հասեալ
'ի ծայր ամենայն զերաստիճան առաքինու-
թեանց։

Յիսուս եթող և սիրեաց այսպէս զթշ-
նամիս զայնոսիկ, որք ելեալս զմիմեամբք
առնէին. 'ի չարութիւն մախանաց և կա-
տաղութեան կրից։ Եւ Յիսուս ոչ միայն
ոչ վնասեաց նոցա, այլ և յաղթեաց բա-
րեաւն չարին։ Ղոբա աղաղակէին 'ի խաչ
հան 'ի խաչ հան զդա. և ինքն մինչդեռ
յակնարկել անդ կարէր կորուսանել զամե-
նեսին, ոչ միայն թողու նոցա, այլ և մի-
ջնորդ կայ առ Հայր զի թողուցու նոցա և
ներեսցէ, 'ի չքմեղս առնելով զնոսա. «Հայր
թող զոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն»։
Ա.րդ քաջ յուշի կապեալ զայսոսիկ երկուս
մասունս թէ որոց եթող և որպէս եթող,
կայ մեզ զհետ բերել՝ թէ պարտ է և մեզ
սիրել զթշնամիս մեր, զչարախնդիրս, զհա-
լածիչս, մանաւանդ թէ պարտիմք լնուլ
զնոսա երախտեաւք. զայս մեզ ուսուցանէ
Ֆրիստոս. Զօրինակ մի ետու ձեզ։ Զսոյն
պատուիրէ մեզ Ա.ստուած. «Սիրեցէք զթշ-
նամիս ձեր. բարի արարէք ատելեաց ձե-
րոց»։ Ի յուշ ևս ածէ մեզ զի որ ատէ զթշ-
նամին, ոչ սիրէ զԱ.ստուած. «Զի որ ասի-
ցէ եթէ սիրէ զԱ.ստուած, և զեղբայր իւր

ատիցէ, սուտ է»։ Աղդ քննեսցուք զանձինս մեր, և հարցցուք ցանձինս մեր. Թողուցուս Թշնամոյդ. որով սիրով սիրես դու զնա. զոր բարերարութիւն մատուցանիցես նմա։

ԻՂՁԲ

Ցեղչ սիրոյ առ թշնամիս. Այո՛ Տէր իմ, ատէն առ ոսս խաչիդ, յանդիման խաչելոյդ, և 'ի վերայ Թշնամեաց քոց մեռելոյդ, հարկ առնեմ անձին իմոյ և երդմամբ հաստատեմ ներել չարարարաց իմոց, և սիրել ևս զնոսա, և առնել նոցա զայն ամենայն բարիս՝ որ իցէ 'ի ձեռին իմում։ Ատեմ և անարգեմ զոր և է քերումն հակառակութեան, Թշնամութեան, ատելութեան, ոխակալութեան և քինու։ Եւ եթէ իցէ 'ի սրտի իմում ծածկեալ կայծ իմն ատելութեան, պատառեսցի սիրտ իմ և հարուածեսցի, մինչև չիջցի կայծն այն չարին ատելութեան։ Դու, Տէր իմ Յիսուս, տուր ինձ շնորհս զի նմանող եղէց քեզ, և որչափ առաւել ճշմարտեսցեն ինձ Թշնամիք իմ, այնչափ առաւել սիրեցից զնոսա։

Բերումն առ հնազանդութիւն. Տէր իմ Յիսուս, քանզի դու հնազանդեցար մահու չափ և մահու խաչի, և ես խոստանամ քեզ շնորհօք քո հնազանդել ամենայն մեծաւորաց... յամենայնի 'ի յոյժ դժուարինս անդամ... միշտ, կատարեալ, մտաղիւր և կուրօրէն։

Յանկարծիւն նմանելոյ Քրիստոսի 'ի ձեռն երրորդ աստիճանի խոնարհութեան. Ո՛վ անձն իմ, հայեաց յերեսս Յիսուսի քո բնեռելոյ 'ի խաչի. տես թէ որպէս ել նա յերրորդ աստիճան խոնարհութեան. տես զի որում վայել էին ամենայն փառք, բերկրութիւնք և ճոխութիւնք աշխարհի, հասանեն 'ի վերայ ընդ հակառակն այնոցիկ ամենայն նախատինք, թշուառութիւնք և ցաւք։ Եւ պատճառ այսոցիկ այն՝ զի այսպէս կամի։ Տես զի նա՝ որ եթէ կամէր, կարէր 'ի չիթս ինչ արտասուաց փրկել զմեզ, կամի զի պատառեսցին երակքն, փեռեկեսցի սիրտն, և հեղցի յորդահոս ամենասուրբ արիւնն բովանդակ։

Ա՛հ. Ա՛ռ ինչ, Տէր իմ Յիսուս, այդչափ չարչարանքդ. հիմ այդքան աղքատութիւն, էր այդգունակ տանել նախատանաց։ Ա՛հ. Դու կամէիր կալ ինձ օրինակ պանծալի, որչափ ինչ պարտ է առնել ինձ առ 'ի նմանող լինել քեզ. արդ եթէ այդչափ արարեր առ 'ի նմանել ինձ քեզ, արա արդ աղաչեմ և զսակաւս զայս. տուր ինձ չնորհս նմանող լինելոյ քեզ յերրորդ աստիճանի խոնարհութեան, անարգելով զփառս, զճոխութիւն և զհաճոյս, և ընդզրկելով զցաւս, զաղքատութիւն և զնախատինս։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ա. Յիսուս 'ի խաչին է մեզ օրինակ դերագոյն երրորդ աստիճանի խոնարհութեան, զի անգամ նոր դերագոյն օրինակաւ ընտրեաց զաղքատութիւն փոխանակ ճոխութեան, զանարգանս ընդ պատուոյ, զվիշտս փոխանակ բերկրութեանց, և 'ի տեղի քաջողջութեան և կենաց զցաւս և զմահ։

Եւ տարաւ այսմ ամենայնի 'ի խիստ դառնութեան, թէ ըստ ժամանակին մահուանն եթէ ըստ տանջանացն, և եթէ ըստ հանգամանաց մահուն։

Բ. Յիսուս 'ի խաչին է օրինակ սքանչելի հնազանդութեան. քանզի հնազանդի ամենեցուն, յամենայնի նա և 'ի դժուարինս յոյժ, և կատարեալ. այսինքն անթերի, մտադիւր, կուրօրէն, որչափ և դառնացուցանէին նա յարակից դեպքն տանջանաց իւրոց զհնազանդութիւնն։

Գ. Յիսուս 'ի խաչին է օրինակ կատարեալ սիրոյ թշնամեաց. զի սիրէ զթշնամիս որոց ոչ եթէ ոչ ինչ չար արարեալ էր, այլ և բարերարեալ նոցա. մինչդեռ ոչ խնդրէին թողութիւն, այլ նա քան զնա յաւելուն 'ի չարիսն և 'ի նախատինս. և մինչդեռ կարէր առնուլ վրէժ 'ի նոցանէ. և ոչ միայն թողոյր նոցա, այլ և բարեխօսէր վասն նոցա, յանձն առեալ և զմահ առ 'ի փրկել զնոսա։

Ընթերցիր

Թովմ. Գ.եմբ. Գիրք Բ. Գլ. 12։

ՕՐ ՈՒԹԵՐՈՐԴ

ԽՈԿՈՒՄՆ Ա.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Մասն Ա.

Զմտաւ ած զերանութիւն Յիսուսի յայտուցելոյ։ Նա՛ի ժամանակի չարչարանացն կորուսեալ էր ամենեին, զքառասպատիկ բարիս պատշաճեալս մարդոյ, այսինքն զզգեստսն՝ մերկացեալ յամենայնէ, զպատիւն՝ լեալ 'ի նախատինս անարգանաց, զքաջողջութիւն՝ 'ի չարատանջ խոշտանգանս, և զանգին կեանս իւր՝ դառն մահուամբ։

Բայց արդ 'ի զերեզմանէն ընկալաւ զարձեալ հանդերձ բազմապատիկ շահիւն զամենայն զկորուսեալսն. զի որ յառաջ աղքատն էր, արդ ճոխ է և «Տէր ամենայն երկրի». որ աւուրքք յառաջ որդն էր և նախատինք մարդկան, արդ «Փառաւք և պատուով պսակեալ՝ նստի ընդ աջմէ մեծութեանն Հօր 'ի բարձունս». որ յառաջն էր

«Ա.յր'ի ցաւս», արդ նոր զօրութեամբ հզօրացեալ «Փշրեաց զդրունս պղնձիս, և զնիգս երկաթիս խորտակեաց։ Զոր խաչեցին կախեալ զփայտէ, արդ «Յարուցեալ է'ի մեռելոց առաջին պտուղ ննջեցելոց», և ամենասուրբ մարմին նորա ծագեսցէ իբրև զլուսաւորութիւն յաւիտեանս և ևս։

Ա.րդ զարթիր 'ի սէր և 'ի խնդակցութիւն, և բերկրեաց զի ընտրեցեր զնա քեզ 'ի թագաւոր և յառաջնորդ, և մտեր ընդ փառաւոր դրօշս նորա, յորում խոստացար զինուորիլ ընդ նմա յերրորդ աստիճան խոնարհութեան։ Ղորոգեա արդ զերդուեալ հաւատս քո, և խոստացիր նմա հաստատութիւն, և վկայ ուղղութեան սրտիդ ած զերկինս և զերկիր։

Մասն Բ

Զմտաւ ած զհաստատութիւն յուսոյն մերոյ 'ի յարութեանն Քրիստոսի. քանզի այժմեան երանութիւն յարութեան նորա է շաւիղ և դրաւ մերոյս ապագայ երանութեան։ Ա.ռաքեալն խոստացաւ մեզ զոյն. և 'ի ճառս անդ խոստմանն երդմամբ հաստատուն առնէ զբանն յասելն. «Հաւատարիմ է բանս. զի եթէ ընդ նմա մեռաք, ընդ նմին և կեցցուք. եթէ համբերեմք, ընդ նմին և թագաւորեսցուք։ Եթէ չարչարանացն կցորդ լինիցիմք, և փառացն հաղորդ լինելոց եմք»։ Եւ ո՞ երկմտեսցի ընդ ճշմարտու-

թիւն բանիցս, և ո՞ի ստութիւն զառաքեալն ամբաստանեսցէ, մինչդեռ նա հաւատարիմ ասէ զրանն լինել։

Դարձեալ զի և առաւելութիւն երանութեան մերոյ լինիցի ըստ առաւելութեան կատարելութեան նմանութեան մերոյ. և յայսմ՝ դարձեալ ունիմք վկայ զսուրբն Պօղոս, որ ասէ. «Բանդի զիտեմք՝ եթէ որպէս կցորդ եմք չարչարանացն, նոյնպէս և մխիթարութեանն»։ Այսինքն Ցիսուս զօրաշղթիս մեր լցուցէ անթերի զխոստումն իւր զոր ուսար՝ ի խոկման թագաւորութեան նորա, յասել անդ՝ եթէ իւրաքանչիւր զոր որչափ եղև հաղորդ վաստակոցն և վշտաց, նովին չափով լինիցի մասնակից և յաղթութեանն և երանութեան։ Այսպա որչափ առաւել հաստ մատչիցիս առ նա յերրորդ աստիճանի խոնարհութեան, այնչափ առաւել բարձրասցիս՝ ի փառս՝ զոր ժառանգելոց ես։

Այդ զօրացիր և քաջ լեր. վայելեաց՝ ի վաստակս քո, ընկալ զիաչ քո բերկրալից. զի որչափ առաւել խոնարհեսցիս յերկրի, այնչափ առաւել բարձրասցիս յերկինս։ Որչափ ծանր լիցի աղքատութիւն քո աստ, այնչափ բազմագանձ լիցի անդ ճոխութիւն քո։ Որչափ դառն լինիցին այժմ ցաւք քո, այնչափ բերկրական և անպատում լիցին յայնժամ սփոփանք քո։

Մասն Գ.

Զմտաւ ած զմեծութիւն փառացն յուսացելոց յերկինս։ Նախ զի մեծ են ուրախութիւնքն երկնաւորք, քանզի անչափ են. մի զի ամենեին անմասն են 'ի չարեաց, և երկրորդ զի և ամենայն բարիք համագումար են 'ի նմա։ Եւ այս իսկ մարմին քո, զորոյ արդ զբաղձանսն ունայնս նուաճեալ ունիս՝ սանձեալ 'ի ծառայութիւն մեռուցման, մարմին քո այս յաղթեսցէ պայծառութեամբն իւրով փայլման արեգական, թեթև քան զհողմն թռանիցի, և նուրբ և անշարշարելի իբրև զհրեշտակս լինիցի։

Իսկ հոգի քո, բա՛րէ, որպիսի՞ բերկրութեամբք լցցի. 'ի զուարճութեան ծով ընկղմեսցի 'ի յիշատակել զչնորհսն՝ որոց ունկնդիր եղև, զփորձութիւնսն՝ որոց յաղթեաց, զվտանգս մեղայ՝ յորոց զգուշացաւ, զառաքինութիւնս՝ զորս գործեաց, զպատնութիւնս՝ որոց տարաւ։ Ո՞վ Աստուած իմ, զոչեսցէ հոգի քո երանեալ, ո՞վ Աստուած իմ, մարթ էր ինձ զատապարտել, եթէ տեղի տուեալ էի փորձութեանն այնմիկ, եթէ ապախտ արարեալ էր իմ զայնու աղդմամբ, արդ ո՞ւր անկեալ զտանէի զանձն իմ։ Օգնականութեամբ չնորհաց քոց ընդդէմ կացի, պատերազմեցայ, յաղթեցի։ Ո՞վ սուրբ տխրութիւնք, ո՞վ երանական նախատինք, ո՞վ երջանիկ թշուառութիւնք, ո՞վ երրորդ

աստիճան խոնարհութեան, ո՛վ զանձարան ամենայն բարութեանց։

Եւ միտքն տեսցէ զԱստուած ոչ ընդ տեսակաւ, ոչ օրինակաւ, այլ զէմ յանդիման որպէս և էն, ընկղմեալ զլեռվին 'ի ծով անդր լուսոյ, որ խմացական լուսովն ճառագայթեալ լուսաւորէ զնա։ Եւ կամքն 'ի սերտ սէր ժառանգեսցէ զԱստուած, և զամենայն բարիս յԱստուած։ Որում ցանկայն՝ անդէն ընկալցի. զոր սկսանի փափաքել՝ անդէն կատարեսցի. մանաւանդ թէ ոչ միայն լցցին ամենայն ցանկութիւնք նորա, այլ և այնպիսի և այնչափ ցանկութեամբք յագեալ պարարեսցի, զի ոչ ինչ այլ կայցէ նմա ցանկալի։ Ահա յայս աստեալ կացուցանէ զայր երրորդ աստիճանն խոնարհութեան։

Երկրորդ՝ զարձեալ մեծ են բարութիւնք երկնից, զի են յաւիտենականք։ Ո՛վ մեծաղօր ձայն. ո՛վ յաւիտենականութիւն բերկրանաց, որպիսի՞ ինչ իցես։ Զուարճութիւնք երկնաւորք են անչափք և յաւիտենականք։ Հոգին ընկղմեսցի յանծայր ծով բարութեանց ցյաւիտեան։ Խնդութիւնքն այնոքիկ սուրբք, բերկրութիւնքն անապատամբ և արեգակն այն ամենափայլ լուսոյն անչափ քաղցրութեամբ զմայլեցուսցեն զհոգիս մեր միշտ և հանապազ։ Ո՛վ խորհուրդ բերկրապատար, երանելի եմ, երանելի՛ ցյաւիտեան։ Զդարձն «Ոչ ակն ետես, ոչ ունկն լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ ան-

կաւ զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց»։

Եթէ այդպէս իցէ, պարտ է վաստակել և տանել ամենայն վշտաց՝ առ 'ի կարող լինելոյ ժամանել առ այս անսխալեան և յաւիտենական ժառանգութիւն բարեաց. ապա պարտ է ծառայել Աստուծոյ նմանելով Քրիստոսի յերրորդ աստիճանի խոնարհութեան, և կալ 'ի նոյն հաստատուն ցմահ. քանզի «Ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոցն փառաց՝ որք յայտնելոց են 'ի մեզ»։ Եւ եթէ հաւատամք այսմ ամենայնի, չիցէ յիմարութիւն մեծ առնել անտես զյաւիտենական փառաւ, զյաւիտենական բերկրանաւ վասն անուտի ծիծաղ փառաց, վասն զիւրութեանց ինչ, վասն վայրկենական իմն սփոփանաց։ Եւ չիցեմք թշնամիք անձանց 'ի հրաժարելն 'ի ստորին պաշտամանէ անտի, 'ի նուաստ բնակարանէ, եթէ ոչ մարտնչիցիմք զօրութեամբ ընդ բաղձանս մեր, եթէ ոչ նուաճիցեմք դամբարտաւանութիւն մտաց մերոց, զիտելով զի այսոքիկ ամենայն զոզանան 'ի մէնջ դանձ մեծ և անպատում։ Ո՛վ, որպէս մորմոքեսցի սիրտ մեր ընդ տխուր յիշատակ չկամութեան մերոյ ելանել յերրորդ աստիճան խոնարհութեան. Եղո՛ւկ 'ի դառն խայթ սրտին. զի ոչ ևս է ժամանակ, զի ունայն է զեղջ անժամ։

ԻՂՋԻ

Ցառաց. Ա՛յրարիչ իմ և Տէր, զիաՀրդ վրիպեցայ. որպէս ունայնացայ. Ի՞նչ արարդ զայնոսիկ. զանց արարի զայնու առաքինութեամբ, խոյս ետու յանարդանաց, յետս կացի 'ի վշտաց անտի։ Ա՛հ. արդ քաջ իսկ 'ի վերայ հասի զի անմոռութեամբ հրաժարեալ եմ յայնպիսի մեծաց յաւիտենական երանութեանց։ Կորուսի անդարձ, ո՛վ յաւիտենական աղբիւր սիրոյ, զպատճառս տեսանելոյ զքեզ առաւել պայծառ լուսով, և սիրելոյ զքեզ առաւել եռանդագին 'ի սերտ սրտէ, և կորուսի վասն չնչենոց, վասն անոտի փառաց և վասն վայրկենական իմն հաճոյից։ Կորո՛ւստ անդարման։

Հաստատութեան ոգեաւ. Բայց արդ զդաստացեալ 'ի միտս, ուխտեմ՝ քեզ, և կամիմ՝ չնորհօք քո կալ անդրդուելի յայս սուրբ խոստումն՝ յոր հաստատեցայ 'ի խոկման թագաւորութեան քո, հետեւելոյ քեզ՝ մերձ առ քեզ կալով անմեկին, համբերելով նախատանաց, աղքատութեան և վշտագնութեանց յերրորդ աստիճանի խոնարհութեան. և այսպէս հասանել յերկինս առ քեզ 'ի ժառանգել զքեզ յաւիտեան։

Ցառաց. Այո՛, Տէր իմ, յոյս հաստատուն ունիմ 'ի սրտիս, և զօրանամ 'ի խոկալն զի՝ 'ի զառնութենէ այսր կենաց ունիմ

փոխիլ 'ի քաղցրութիւն կենաց սրբոց, 'ի վշտաց 'ի բերկրութիւն. 'ի պատերազմաց 'ի յաղթանակ, 'ի խաչէ 'ի փառս։ Ա՛հ. երբ իցէ զի տեսից զքեզ, թագաւոր իմ, առաջնորդ իմ. երբ ընկալայց 'ի ձեռաց քոց զպատակն պայծառ՝ զոր խոստացար քաջամարտիկ քոյոց զինուորաց։ Ե՞րբ տեսից զճառագայթարձակ փայլումն զրօշի քո ընդ որով պատսպարեալ կամ, յորոյ 'ի շողումն փայլակնացայտ լուսոյն օթևանք երկնից լուսազարդեալ նշողեն։ Ե՞րբ, Տէր, երբ և կեսցէ ժամն այն երանական ցանկալի, յորում՝ լիցիս ինձ ամենայն յամենայնի։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ա. Զմտաւ ած զերանութիւն Յիսուսի յարուցելոյ։ Կորոյս 'ի խաչին զինչ, զպատիւ, զառողջութիւն և զկեանս. և արդ յարուցեալ 'ի գերեզմանէն, աղքատն և մերկ՝ եղև Ճոխ և տէր ամենայն երկրի. նախատինքն և ծանականք փոխեցան 'ի պսակ փառաց և պատուոյ. 'ի տուայտանաց և 'ի լուծանելոյ մարմնոյն եղ 'ի քաջողջութիւն և 'ի զօրութիւն։ Որ մեռեալ դներ, արդ յառնեմ 'ի նոր կեանս լուսալիր փայլմամբ։ Սիրեա, գովեա և պատուեա զթագաւոր քո, և ինդակից լերՅաղթանակի Նորա։

Բ. Զմտաւ ած զհաւատս յուսոյ՝ յոր հաստատեցաք յարութեամբն Քրիստոսի. զի և սուրբն Պօղոս վկայէ, եթէ 'ի մեռանել մեր ընդ նմա,

կեցցուք և ընդ նմա. եթէ վշտացուք ընդ նմա, նոյն և փառաւորեսցուք ընդ նմին։ Կա և խոստա-նայ ևս մեզ զի ըստ չափոյ կատարեալ նմանութեան՝ առաւելուցու և չափ երանութեանս մե-ծոյ. "Որպէս կցորդ եղէք չարչարանաց նորա, նոյնպէս և փառաց նորա հաղորդ լինելոց եմք"։ Արդ զօրացեալ 'ի կրել, ակնկալ վարձուցն՝ որք ինան քեզ, և պատկին՝ որ պատրաստի քեզ։

Գ. Զմտաւ ած զմեծութիւն փառացն պատրաստելոց յերկինս. զերկնաւոր ուրախութիւնսն՝ որք են անչափք և յաւիտենականք։ Ընդէն պայծառացայ մարմին քո, երագաթռիչ լինիցի՝ նուրբ և անչարչարելի։ Հոգին երջանկացի 'ի միտսն, յիշատակեալ զշնորհսն՝ որոց ունկնդիր դառաւ, զփորձութիւնսն՝ որոց զգէմ կալաւ։ Մինքն տես-ցէ զԱստուած դէմ յանդիման։ Կամքն ժառանգեսցէ զԱստուած, և 'ի նմա զբարութիւնս ամենայն։ Եւ այսոքիկ ամենայն խնդութիւնք լինիցին անվախճանք։ Ո՛վ խորհուրդ մեծագանչ. լինիցին յաւիտենականք ամենայն։

Ընթերցիր

Թուխմ. Գեմբ. Գիրք Ա. Գլ. 49։

ՊԱՐԱՊՈՒՄՆ

Վասն վերջին առուր կրթութեան.

Ա.

Առաջին մասն կրթութեանս էր ճանապարհ մաքրութեան. երկրորդն և երրորդ էին ճանապարհք լուսաւորիչք. իսկ չորրորդ մասնն՝ որ է այսր աւուր, է ճանապարհ միութեան. զի 'ի սմա փափաքանօք երկնից և սիրոյն Քրիստոսի և Աստուծոյ, և միաբանելով զկամս մեր ընդ Աստուծոյ կամացն, միանամք ընդ վերջին վախճանն մեր, զոր առաք 'ի խորհել յառաջնում աւուր կրթութեան. զի որ 'ի խորհրդեան մերում եղև առաջին, 'ի մատուցանել զնոյն 'ի գործ՝ լինիցի վերջին. զի նկատեալ աստէն զերանութիւն վախճանին յոր դիմեմք, յորդորիցիմք թողուլ մոռադիւր զայն, յորմէ ջանամք խուսել հեռանալ՝ այն ինքն է մեղքն:

Տեսեր իսկ զընթացս կրթութեանս թէ որպէս յառաջ խաղայաք. նախ խոկացեալ 'ի ծանրութիւն թշնամանացն Աստուծոյ, և 'ի ծանօթութիւն անձին, որով յորդորեցաք արմատախիլ առնել զմեղս և մտանել 'ի ճանապարհն փրկութեան և առաքինութեան: Եւ առ դիւրաւ ընթանալ ընդ ճանապարհն

ուղղութեան՝ առաջնորդ մեզ կալաք զՅի-
սուս, առ'ի նմանող լինել նմա յաղքատու-
թեան, յարհամարհանսն, 'ի վիշտսն, ան-
արդելով զախտաւոր բերումն ճոխութեան,
պատուոյ և հաճոյից, յոր ձգի ապականեալ
բնութիւնս մեր։ Ապա յորդորեցաք ցան-
կալ ժամանել յերրորդ աստիճան խոնար-
հութեան, միայն ցանկութեամբ նմանող
լինելոյ Քրիստոսի. և վասն այսորիկ յիշե-
ցաք նախ զչարչարանս և ապա զյարու-
թիւնն Քրիստոսի, զի օրինակաւ խոնար-
հութեան և փառաց նորա զօրասցուք կալ
յայսմ երրորդ աստիճանի խոնարհութեան։

Արդ յայս մասն ճանապարհի միութեան
ցանկամբ միանալ ընդ Քրիստոսի փառե-
լով 'ի սէր նորա, փափաքելով հայրենեաց
երկնից, զկամս մեր միաբանելով ընդ կա-
մաց նորա, յաճախ խոկմամբ, և տածելով
'ի սրտի զյիշատակ փառաւորեալ մարդկու-
թեանն Քրիստոսի։

Պատուղ այսր մասին է, ա. Եւս քան
զևս հաստատիլ յերրորդ աստիճան խո-
նարհութեան, տեսեալ զհատուցումն ճո-
խութեանց, բերկրութեանց և փառաց 'ի
յարութեանն Քրիստոսի 'ի Հօրէ պարգևեալ
փոխանակ աղքատութեանն, ցաւոցն և նա-
խատանաց՝ որոց տարաւ։ Դարձեալ և ա-
ռանց այսր աստիճանի ոչ է հնար ժամա-
նել 'ի վախճան կրթութեանցն, որ է միա-
նալ ընդ Աստուծոյ քաղցր կապանօք սի-
րոյ, որ է միակ վախճան մարդոյ։ Քանզի

առ հասանել յայս անպատում՝ սէր՝ պարտ է 'ի բաց տանել զխոչն մեծ՝ որ է ախտաւոր բերումն առ ճոխութիւնս, առ հաճոյս և առ պատիւս. ասի յայտնապէս տեսանէ ամենայն ոք՝ զի առանց իրՁ լինելոյ առ երրորդ ասպիճանն խոնարհութեան, ոչ երբէք լիցի հնար նուաճելոյ զխոտվին զայսոսիկ բուռն զրգիռս յօժարութեանց։

Երկրորդ պատուղ է, յորդորագոյնս առնել զմեզ 'ի վարժս առաքինութեանցն այնոցիկ՝ որք առաւել վառեն և արծարծեն 'ի մեզ զսէրն Աստուծոյ, և խրախուսեն զմեզ 'ի նոյն՝ 'ի միակ վախճանն կրթութեանց։ Եւ առաքինութիւնքն այնոքիկ են ջերմեռանդն խոկումն օրբաստորեայ, ներանձնութիւն և ամփոփումն մտաց, և բոլորանուէր համակամութիւն ընդ Աստուծոյ կամաց։

Աստ զխաւորագոյնն 'ի պաղոց է յստակահայեաց բերումն և սէր սրտեռանդն առ Յիսուս, որ է միայնակ զբաղումն անձին ժամանելոյ 'ի ծայր միաւորչական ճանապարհին։ ԱՁցեն զմեզ առ այս սէր, որպէս և առ սէր Աստուծոյ առանձինն, երկոքին առաՁիկայ խոկմունքս, որք են երկոքին օգակքն յետինք շղթայի կրթութեանս, որոյ սկիզբն և մէՁն և վախճանն միայար կապեալ՝ առեալ ածէ զպարապոցն 'ի նոյն առ սէրն Աստուծոյ առ վախճան իւր, և հանգուցանէ։

Առ լաւ ևս վայելելոյ յարդիւնս խոկ-

մանցս միտ դիր և այսոցիկ ազդմանց։

ա. Զօրն ողջոյն այսօր պարտ է պարապել 'ի բերկրական խորհուրդս փառաւորութեանն Քրիստոսի։

բ. Բայց զպատուհանս, վայելեա 'ի լոյն երկնից, և եթէ իցէ քաղցր եղանակն, յաճեաց աչօքդ ընդ զեղս ծաղկանց, կանաչութեան, խոխոջանաց ջուրց, ընդ արտոյսս, և զարմացիր, և օրհնեա և փառաւորեա զԱրարիչն և զՓրկիչն մեր։

գ. Թեթեւացո սակաւուք զարտաքին ապաշխարանս, յամենայնի զգոյշ կալով 'ի պահպանութիւն ժամադրութեանց աւուրն և լուութեան. և մի ընթեռնուցուս, և մի զբեսցես արտաքոյ պատշաճից աւուրն։

Եւ առաւել քան զառաւել պարտ է զգուշանալ չխաբելոյ 'ի հրապուրանաց դիւին, որ կամի զբաղեցուցանել զսիրտ քո. և եթէ ոչ 'ի զգուշութեան կացցես, վտանգ է կորուսանելոյ զբովանդակ պտուղ կրթութեան։ Յոյժ զանազան իրք են և օտար 'ի միմեանց ցրումն մտաց և սուրբ խնդամտութիւն սրտի. սա է տածիչ եռանդան և սիրոյ, և միւսն շիջուցիչ և բռնակէզ իսկ սիրոյ, և քակտիչ հաստատութեան ուխտի սրտին։

Այլ պարտ է այսօր յորդել 'ի սիրտ զբերկրանս խնդութեանց, ընդ հրաշական յաղթանակն Քրիստոսի լեալ ուրախակից՝ զոր կանգնեաց 'ի վերայ թշնամեաց իւրոց, ընդ փառսն՝ որով պսակեցաւ, և ընդ ինչ-

խանութիւնն ամենազօր՝ զոր՝ի յաւիտենական Հօրէն ընկալաւ մեծապանծ զօրութեամբ։

Դարձեալ զյոյս և զփափաք վայելելոյ՝ի նոյն երանութիւն ընդ Քրիստոսի։ Բայց այսոքիկ յոյս և փափաք մի՛ իցեն ունայն և խրոխտ ինն բերումն հոգւոյ, այլ իցեն պատճառեալք՝ի գործոյ. այսինքն զի գործքն իցեն համեմատք յուսոյն և փափաքանաց, և ոչ՝ի մոլար խղճէ, այլ հանդուրժելով երկար և խիստ պատերազմաց, և բազմաքիրտն և արժանաւոր յաղթութեանց արդասիք։

Պարտ է ևս և յորդել՝ի սիրտ զսէր առ Յիսուս, վառեալ, հաստատուն և յամենայն դժուարինս ձեռներէց. պարզ, ողջական, յանկուցիչ, գործունեայ և անխոնջ, յաչս եղեալ արիական ոգւով և զվտանգս դժուարինս, արհամարհեալ զանկոխս զառապարս և զսեպացեալ տաժանական ուղիս. զի սէր ոչ՝ի բանս կայ՝ այլ՝ի գործսն պայծառ փայլէ. ուր սէր է, անդ և գործք արիականք։ Եւ առ՝ի կարող լինելոյ ժառանգել զմեծ զայս շնորհ մեծապէս օգտեսցէ մեզ խոկումն վերջին հոգևոր սիրոյ. զորոյ զյարակցութիւն ընդ այլոցն ամենայնի ցուցցուք յառաջիկայս։

Բ

Մարդն ստեղծաւ առ 'ի ճանաչել և սիրել զԱստուած. զոր տեսաք յառաջին անդ խոսման։ Գերագոյն երանութիւն մարդոյ է 'ի զմայլական սէր Աստուծոյ յերկինս, իսկ գերագոյն կատարելութիւն նորա է 'ի գործնական սէր Աստուծոյ յերկրի աստ. և այս սէր Աստուծոյ է 'ի համակամութեանն ընդ կամաց նորա որով 'ի միասին ընդ նմա կամիմք զամենայն և մերժեմք. մի և նոյն ցանկութիւն է մեր ընդ Աստուծոյ. զի ուր ոչ է միաբանութիւն կամաց, անդ ոչ է և սէր։ Այս համակամութիւն հաւաստէ մեզ զոլ ընտրութեանս մերում յաստուածային ազգմանէ. որով յանձն առնումք ծառայել Արարչին յայն կոչումն, և կամ յայն աստիճան կատարելութեան յոր ինքն կամի զի ծառայեսցուք նմա։ Եւ զի բարիոք և ըստ կարգի իցէ ընտրութիւնս մեր, կարևոր է համակամութիւնն այն անխտիր առ ճոխութիւն և առ աղքատութիւն, 'ի պատիւ և յանարգանս, յառողջութիւն և 'ի հիւանդութիւն, 'ի կեանս և 'ի մահ. քանզի եթէ զոր ոչ առնուցու յանձն ընտրել զայն՝ զոր կամի Աստուած, ոչ է համակամ ընդ Աստուծոյ, ապա և ոչ սիրող Աստուծոյ։

Եւ զի մեզքն քան զամենայն ինչ հակառակամարտ է աստուածային սիրոյն,

վասն որոյ յառաջին մասին զուն զործե-
ցաք սուրբ լինել 'ի մեզայ։ Բայց քանզի
կայր մնայր 'ի մեզ արդիւնք մեզայն ցան-
կութիւն ճոխութեան, հաճոյից և փառաց,
վասն որոյ առ ածել զսիրտ մեր յուղղու-
թիւն, հարկ եղև մեզ յանդիման ունել զօ-
րինակն Քրիստոսի, և խոնարհեցուցանել
զսիրտ մեր 'ի հակառակն կոյս յերրորդ աս-
տիճան խոնարհութեան, յարգել, սիրել և
ցանկալ այնմ ամենայնի՝ զոր ապականեալ
բնութիւն մեր անարգէ, խորշի և ատէ, որք
են նուաստութիւն, աղքատութիւն և թշուա-
ռութիւն։

Զերծեալք ուրեմն 'ի բազմադէմ խո-
չից, և լուծեալք 'ի կապանաց, յաղթեալ
ընդդիմակաց, ահա իշխեալ հնազանդեցու-
ցաք զյօժարամտութիւնս մեր խոտորնակս.
և սիրտ մեր ազատացեալ յանձնէ՝ սկսանի
արդ եռանդագին խնդրել զմի միայն զաղ-
բիւր երանութեան իւրոյ, որ է Աստուած։
Եւ զի յաղթեցաք և ազատացաք օրինակաւ
կենացն Քրիստոսի, ապա հարկ է մեզ ի-
բաւամբք՝ զի զարձուցուք առ նա զրոց
սիրոյ մերոյ. և զի մարդեղութիւն նորա լի-
նիցի վախճան վառեալ ըղձից մերոց յա-
մենայնի։ Առաջիկայ խոկումս բորբոքես-
ցէ զիղձս քո առաւելութեամբ յոյժ, և լի-
նիցի քեզ այս խթան սուր առ 'ի յորդորել
զքեզ 'ի սուրբ և 'ի ճշմարիտ և 'ի հզօր սէր
Յիսուսի, որ է Արարիչ քո և առաջին և
վերջին վախճան քո։

Եւ քանզի աղօթք են քան զայլն ամենայն առաւել հզօր զարթուցիչ սիրոյն Աստուծոյ, սնուցիչ և բորբոքիչ, և սակայն բազմաց անծանօթ յեղանակն աղօթից և խոկմանց, վասն որոյ կարեւոր է ասասէն նշանակել եղանակս ինչ աղօթելոյ զիւրաքանչիւրս առ ամենայն ազգ մարդկան և զիւրահնարս։

Առաջինն է առնուլ՝ի քննութիւն ոչ այնչափ՝ի միտս որչափ՝ի գործս, զպատուիրանս Աստուծոյ և Եկեղեցւոյ. զմահուչափ մեղս. զգործս երից կարողութեանց հոգւոյն, յիշողութեան, մտաց և կամաց. զհինգ զգայարանս մարմնոյն, մտեալ՝ի խորդ թէ յորս ընդդէմ առաջնոցն մեղաք, և որչափ՝ի ձեռն սոցուն յանցեաք, պարապելով՝ի մէն մի մասն վայրկենիս չափ։ Ի վերայ պատուիրանացն Աստուծոյ մարթ է խորհել և զայն թէ որպէս արդարք են, փրկաւէտք և սուրբ։ Իսկ՝ի վերայ մեղաց թէ որչափ առելիք են և վնասակարք յարհամարհութիւն սիրոյն Աստուծոյ, և պատճառք դատապարտութեան. և ընդհակառակն որչափ ցանկալիք են և օգտակարք առաքինութիւնք ներհականք նոցին։ Իսկ զկարողութեանց հոգւոյ և զզգայարանաց՝ խորհել զյարդ նոցա և զօգուտ, և թէ առ ինչ եւ մեզ զնոսին Աբարիչն։ Եւ վախճան առնել կրթութեանն զոհանալով զպարգևացն Աստուծոյ, խնդրելով զմեղաց թողութիւն, և խոստանալով ուղղել զվարս պարզ մտաք,

և մաղթելով շնորհս 'ի նմանէ առ 'ի յաջողել 'ի նոյն։

Երկրորդ եղանակ աղօթից է պարապումն 'ի խոկալ զիմաստս աղօթից ինչ, որպիսի են Ցէրունական և ողջունաւորութեան աղօթքն, սաղմոսքն, և այլն. և յամել 'ի խոկումնս այսոցիկ այնչափ, որչափ կարիցեմք հանել 'ի նոցունց զսուրբ ճշմարտութեան մասունս և զեռանդագին աղդմունս։ Վասն որոյ եթէ եռանդն սրտին և միտքն զտանիցեն 'ի բառս ինչ զեղումն ուղղադատութեան, պարտ է յամել 'ի նոսին խաղաղամիտ՝ թէ և ծախեսցի յայնմ ժամն ողջոյն. և ապա զայլ մասունսն ընթերցեալ վախճան առնել մտածութեանն։

Երրորդ եղանակ աղօթից նոյն է ընդ երկրորդին, այլ սղութեամբն միայն զանազանեալ անցանելով ընդ իմաստս բառիցն ազդոյ իմն մտադիր զննութեամբ, բայց ոչ ընդերկարեալ 'ի խոկումն, այլ որչափ միոյ և եթ շնչառութեան ժամանակ յամելով առ մէն մի բառս։

Ահա տեսեր զնիւթս աղօթիցն և զեղանակ աղօթելոյ. առաջինն է պարապումն 'ի քննութիւն. երկրորդն է երկար մտախոհութիւն, երրորդն առաւել պարզ՝ նուազ քննութեամբ և համառօտ մտախոհութեամբ, բայց յոյժ կարևոր առ 'ի սովորեցուցանել զմեզ եռանդեամբ և մտադրութեամբ առնելոյ զձայնաւոր աղօթս. վասն որոյ պարտին վարել նովաւ առաւել նոքա,

որք պարտս յանձին ունին պարապելոյ 'ի ժամերգութիւն։

Ծանուցեալ ցայսվայր զհինն կրթութեան, և զառիթն և զվախճան, պարտ է արդ ուսանել և զհնարս չկորուսանելոյ զպտուղս կրթութեանն, որոյ վասն արարան այնչափ խոկմունք, այնչափ ուխտաղիր խոստմունք՝ այնչափ փոյթ և ճիգն։

Հնարք կալոյ հաստատուն յուխտս ուղղութեանցն են, ա. Օրըստօրեայ եռանդաղին աղօթք։ բ. Հանապազորդ քննութիւն խղճի, և ևս առաւել առանձին զորձոց։ գ. Մաւչիլ յաճախ 'ի խոստովանութիւն և 'ի սուրբ Հաղորդութիւն։ դ. Ունել խոստովանահայր առանձին, և բանալ նմա զիսորհուրդս սրտի զծածկեալս։ ե. Սովորութիւն ընթեռնլոյ զհոգևոր գրեանս, և կենցաղավարելոյ ընդ բարեպաշտս, հեռի կալոյ 'ի չարագործաց, և ճիգն մեծ և փոյթ զզուշանալոյ 'ի փորձութեանց։ զ. Ամփոփումն մտաց՝ պարապ առեալ 'ի գործոց երբէք երբէք, և 'ի լռութեան ածեալ ընդ միտ զամենայն մասունս ուղղութեան հոգւոյ։

Ա. 'ի հաստատութիւն 'ի բարին՝ օգնեսցէ ևս մեծապէս, ա. Ունել անմոռաց զայն՝ յոր եղաք զհինն կրթութեանս շնորհօքն Աստուծոյ։ բ. Կալ յահի և 'ի զղջութեան, ընդ միտ ածեալ՝ զի եթէ ոչ կեցցուք յայսմ հետէ որպէս արժան իցէ կեալ, զոր ծանեաք լուսով Աստուծոյ, առաւել

խստիւ պատուհաս ընկալցուք։ գ. Ի միտ առնուլ զի ցայս վայր ամիսոփեցաք ևեթ 'ի հոգիս մեր զսերմանս՝ զորս հաճեցաւ Աստուած սերմանել, բայց յայսմ հետէ պարտ է մեզ ամենայն խնամով սնուցանել զնոսին, մշակել և պտղաբեր զործել։ Բայց զօրաւորագոյն 'ի հնարս, առ 'ի կալ անյողդողդ 'ի բարին, է սէրն Յիսուսի՝ յոր բորբոքիլ պարտիմք զլխաւորաբար յերից պատճառաց, զորս յառաջիկայ խոկմանս առցուք 'ի քնին. որք են, ա. Գերազանցութիւն մարդկութեան նորա։ բ. Գերազանցութիւն նորա ըստ աստուածութեանն։ գ. Սէր նորա առ մեզ։

ԽՈԿՈՒՄՆ Բ

Ի ՎԵՐԱՑ ՍԻՐՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Մասն Ա.

Զմտաւ ած զդերազանցութիւն մարդկութեան նորա։ Մարմինն Քրիստոսի է տաճար Աստուծոյ. «Զի 'ի նմա բնակէ ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս»։ Եւ է զործած Հոգւոյն սրբոյ. Զի Հոգին սուրբ եկն, և զօրութիւն բարձրելոյն հովանի եղև 'ի վերայ Մարիամու։ Նա ինքն

է սրբութիւն սրբոց, եթէ վասն անմեղանչական լինելոյ հոգւոյն, և եթէ վասն երանական տեսութեանն, և վասն ներքին զմայլական սիրոյն՝ որով է սրբութիւն սրբոց։ Եւ է արժանաւոր բնակարան բանին Աստուծոյ, յորում՝ Հայրն յաւիտենական 'ի գործ արկ զամենայն կարողութիւն իւր առ 'ի շքեղազարդել զնա, և Որդին զամենայն իմաստութիւն իւր, և Հոգին սուրբ զամենայն բարութիւն իւր։

Եւ զեղ մարմնոյն Քրիստոսի է զերազանց համեմատ մասամբքն, լուսալիր պայծառութեամբն, վայելչական քաղցրութեամբ զիմացն և աչաց, վեհափառ ճակատուն պարզութեամբ, ներդաշնակութեամբ ճայնին, և սուրբ ճառագայթիւք սիրոյն՝ յորում փայլէ հեզութիւն և մարդասիրութիւն։

Եթէ մարմինն Քրիստոսի ցեառն մեր է այսպէս զեղեցիկ, շնորհալի և քաղցր, որպիսի՞ ինչ ապա իցէ զեղ հոգւոյն. ամենայն հոգիք հրեշտակաց առ նովաւ են իբրև զկայծ ինն շիջեալ առ արեգակամբ. յիշողականութիւն նորա է կենդանի հայելի, յորում՝ ամենայն աստուածային կատարելութիւնք ցոլացեալ փայլեն։ Ի միտս նորա ամենայն զանձք իմաստութեան և զիտութեանն Աստուծոյ ծածկեալ կան. զի յառաջին ժամէ անտի ստեղծման իւրոյ՝ ետես զէմ յանդիման զէութիւնն Աստուծոյ ներքին և զերազոյն զիտութեամբ, և զանհուն

կատարելութիւնս նորա։ Կամք նորա ամենակատարեալ առաքինութեանց աղբիւր, և է ջահ վառեալ անշափական սիրոյն Աստուծոյ. և է զարդարեալ այլ ամենայն պարգևօք Հոգւոյն սրբոյ, և զերաձայրեալ բնական շնորհօք 'ի վեր քան զմիտս մարդկան և հրեշտակաց։ Եւ ո՞չ նուազեալ հիւծեցի 'ի քաղցր սիրոյ մարդկութեանն Յիսուսի, որոյ է այսպէս զեղաւոր չքնաղ հողի և մարմին։

Մասն Բ

Զմտաւ ած զգերազանցութիւնն Քրիստոսի ըստ աստուածութեան իւրոյ։ Առաւել քան զառաւել փառաւորի ամենասուրբ մարդկութիւնն Յիսուսի՝ միացեալ աստուածային բնութեանն ընդ մարդկութեան։ Ընդ սոյն այս զերազանց մեծվայելչութիւն Քրիստոսի սքանչացեալ երանեալ հոգիք երկնից՝ մտախոհք լինին։ Եւ զինչ այլ սքանչելի կայցէ քան զայս, զի մարդկային բնութիւնն 'ի ձեռն աստուածային անձին միացեալ կայ էապէս ընդ բանին, և լեալ մի ընդ աստուածային անձին՝ այնպէս զի կատարելութիւնքն Աստուծոյ պատշաճին մարդոյն՝ վասն միանալոյ նորա բնութեամբ ընդ մարդկութեան. և մարդկայինքն պատշաճին Աստուծոյ, մինչև կոչիլ Աստուծոյ տկար, վշտացեալ, 'ի մահ մերձեցեալ. և մարդոյ անուանիլ անչափ, ամենակալ, ան-

հուն։ Եւ ո՞ ոչ հիացեալ ընդարմացի զմը-
տաւ ածեալ զի աստուածութիւնն Քրիստո-
սի է առաւել ընդմտեալ 'ի մարդկութիւն
նորա, քան զհուրն յերկաթ հրաշէկ, և քան
զլոյս 'ի յօդս, և քան զճառագայթ ընդ ա-
պակի։

Եւ ևս Յիսուս է միածին որդի Աստու-
ծոյ բազմեալ յաջմէ նորա. 'ի նա է ամենայն
ինչ, և ամենայն ինչ նովաւ եղև և վասն
նորա, և առանց նորա ոչ ինչ են ամենայն
եղեալքս։ Նա եկաց հաշտարար ընդ Աս-
տուած և ընդ մարդ. նա է փաստարան մեր
յատենի արդարութեանն Աստուծոյ։ Նա
Ընկեցդձեռագիր մերոյ հակառակութեանն
հրամանաքն իւրովք. որ կայր մեզ հակա-
ռակ, եբարձ զայն 'ի միջոյ և բևեռեաց ընդ
խաչափայտին։ Եւ զիա՞րդ չիցէ պարտ մեզ
մեծարել և եռանդագին վառիլ 'ի սէր Յի-
սուսի, որ է սքանչելիք ամենակարողու-
թեանն Աստուծոյ, աղբիւր ամենայն բա-
րութեանց, սկիզբն և վախճան փրկութեան
մերոյ։ Եւ սակայն հաւատայցո՞ւ. և սա-
կայն առ 'ի սիրել մեզ զնա չեն շատ՝ ոչ այն-
չափ և այնպիսի զեղեցկութիւնք նորա, ոչ
անչափ զերազանցութիւն նորա, ոչ ան-
չափ սէր նորա։ — Ո՛վ Յիսուս, դու տոչո-
րեալ կաս 'ի սէր մեր, և մեք այսպէս ապա-
շնորհք, ոչ բորբոքիմք 'ի սէր քո։

Մասն Գ.

Սէրն Քրիստոսի առ մեզ։ Զմտաւածս ով է սիրողն, զով սիրէ, և որպէս սիրէ։ Որ սիրէն զքեզ, այր դու, է Որդին Աստուծոյ, Թագաւորն փառաց, տէր երկնի և երկրի։ Սիրեցեալն 'ի նմանէ է ոչ ինչ, հող և մոխիր, մեղօք շաղախեալ, ապաշնորհ սիրոյ նորուն և ապստամբ։ Եւ յեզանակ սիրոյն անչափ, անըմբռնելի և անպատում։ Ի սէր քո ետ զանձն իւր, յաստուածային փառաց իւրոյ էջ 'ի ստրկութիւն չուառացեալ մարդոյն, նախատինք եղև մարդկան և արհամարհանք ժողովրդոց, աղքատ և տնանկ, մատնեալ 'ի տանջանս և 'ի մահ զառն ցաւոց. զոր ոչն արար վասն հրեշտակաց՝ արար վասն քո, որով պատուեաց զբնութիւն քո քան զհրեշտակաց։

Եւ ես Յիսուս սիրէ զքեզ 'ի սէր յարատև. «Ի սէր յաւիտենական սիրեցի զքեզ»։ Ի սէր հաստատուն. «Սիրեաց զիւրան, 'ի սպառ սիրեաց զնոսա»։ Ի սէր անչափ բարերարութեան. «Զի մինչդեռ մեղաւորքն էաք, Քրիստոս վասն մեր մեռաւ»։ Զրի ինն շնորհիւ սիրոյ. զի զիտէր իսկ եթէ փոխարէն անչափ սիրոյ նորա՝ հատուցանելոց ենք զատելութիւն։ Եւ պատուիրեաց ես՝ զի և ամենեքին սիրեսցեն զքեզ, թէ և թշնամիք իցեն քո. «Սիրեցէք, ասէ, զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց»։

Գարձեալ ետ քեզ զանձն իւր բովանդակ 'ի սուրբ հաղորդութեան, պատրաստեաց զանձն իւր քեզ 'ի կերակուր, յըմպելի և 'ի զեղ բժշկութեան, կալով միշտ ընդ մեզ 'ի նախատինս, 'ի վիշտս և յաղքատութեան. զի որք անարժանութեամբ հաղորդին և հերետիկոսքն ամենեքին ոչ 'ի սէր ընդունին, այլ 'ի թշնամանս և 'ի վիշտս նմին. և յաղքատութեան՝ յորժամ զարժանին պատիւ և զյարգութիւն չմատուցանիցեն նմին։ Այլ նա հանդուրժեալ տանի ամենայնի, 'ի սէր ընտրելոց իւրոց, զի ընդ նոսա իցէ միշտ։ Եւ զիարդ ոչ պատասխանեսցես այսպիսի խանդակաթ զորովական սիրոյ. և իբր սիրեսցես զանարդ արարածս, և ոչ բորբոքեսցիս 'ի սէր Յիսուսի. այլ այդպէս սառուցեալ կայցես, և իբրև զպղինձ կամ իբրև զդամանդ անտեղիտալի։ Ա՜հ, զոչեսցուք ընդ առաքելոյն. «Եթէ ոք ոչ սիրէ զՏէր Յիսուս, նզովեալ լիցի»։

ԻՂՁԲ

Հաւատամ, Տէր իմ Յիսուս Քրիստոս, զի դու ես Աստուած և մարդ, կացուցեալ 'ի յաւիտենական Հօրէն ժառանգ ամենայնի, որով՝ և վասն որոյ եղեն ամենայն։ Հաւատամ զի իբրև Աստուած՝ ամենայն աստուածային կատարելութիւնք են 'ի քեզ, և իբրև մարդ՝ ամենայն շնորհք և գերասուրեան առաքինութիւնք, և իբրև փրկիչ՝

ամենայն ձիրք և պարգևք տիրականք։ Երկիր պագանեմ խորին խոնարհութեամբ մեծվայելչութեան քում, ով թագաւոր թագաւորաց և Տէր տերանց. դու ես իմ իշխան հրամանատար, և տարածանեմ ընդ ոտիւք քովք զեռանդն սրտիս պատրաստ ի ծառայել քեզ յամենայնի. և ցանկամ զի և ամենայն երկիր երկիր պագցեն քեզ և սաղմոս ասասցեն։

Խնդամ ցնծալից, ո՛վ Տէր, ընդ իմաստութիւն քո և սրբութիւն և զօրութիւն, և ընդ զեղ քո և ընդ փառս՝ որով ճոխացեալ ես և յաղթական լուսափայլեալ և պերճ։ Եւս և ընդ փառս մատուցեալս քեզ՝ի սրբոց մարտիրոսաց, խոստովանողաց և՝ի սրբոց կուսանաց հրեշտակակրօնից։ Ո՛վ, որպիսի ուխտիւք փափաքեմ զի և ես զհետ քո ելեալ, ո՛վ զօրագլուխ իմ և Տէր, յերբորդ աստիճան խոնարհութեան, զրեցայց ընդ փառաւորիչս քո, և դասեցայց՝ի պարս սիրելեաց քոց։ Ո՜ տայր, զի և աշխարհ ամենայն ծանուցեալ զքեզ զարարիչ իւրեանց, և սիրէին զքեզ զՀայր իւրեանց, և ունկն մատուցանէին քեզ ուսուցչի իւրեանց, փառաւորէին զքեզ զՏէր իւրեանց, և զնային զկնի քո առաջնորդի իւրեանց. և նմանող լինէին քեզ՝ի սէր աղքատութեան և ցաւոց և խոնարհութեան։

Ցոյս իմ՝ի քեզ է, ՝ի քեզ զանձդ ողորմութեան։ Եթէ հիւանդ իցեմ ես, դու բժիշկ ես. եթէ ծարաւի, դու ես աղբիւր

ջրոյ կենդանւոյ. եթէ մեղաւոր իցեմ, դու իմ ես հայր. եթէ տկար, դու զօրացուցիչ իմ. եթէ կայցեմ 'ի խաւարի, դու ես լոյս, ով Աստուած իմ և ամենայն ինչ. Ա՛հ։ Ե՞րբ լցուսցես զիս ուրախութեամբ երեսաց քոց։ Ե՞րբ իցէ զի արդարութեամբ երևեալ յաղեցայց յերևել փառաց քոց։ Ե՞րբ, Տէր իմ, երբ։

Սիրեմ զքեզ, Տէր իմ Յիսուս. սիրեմ զքեզ իբրև Աստուած, զի ես անհուն սէր, սրբութիւն, զթութիւն, քաղցրութիւն, անբաւ ողորմութիւն։ Սիրեմ զքեզ իբրև մարդ, զի լիութեամբ շնորհաց, և աստուածային իմաստութեան դանձուց զերաածայրեալ ես փառօք, և ամենաբարի։ Սիրեմ զքեզ իբրև Փրկիչ. զի դու ես զլուխ մեր, և մեք անդամք քո. դու ես փեսայ, և մեք ընտրեալք քո հարսունք. դու ես տէր, և մեք քո ծառայք. դու հովիւ, և մեք քո դառինք։

Սիրեմ զքեզ, զի դու նախ սիրեցեր զիս. և սիրեցեր զիս, մինչդեռ թշնամի էի քեզ. և սիրեցեր զիս յորպիսի՛ սէր. յանձն առեր իջանել յերկնից վասն մեր, զզեցար զմեր մարմին, կացեր 'ի ցաւս, յանարդանս, 'ի տանջանս, և 'ի դառն խաչտանդանս զմահ ընկալար։

Սիրեմ զքեզ, զի և զկեանս քո տալ վասն իմ ոչ զրեցեր շատ, այլ և կամեցար թողուլ մեզ 'ի պարգև զքեզ ինքն յամենասուրբ Հաղորդութեան ցվախճան դարուց։ Աղաչեմ զքեզ, Տէր իմ Յիսուս, տուր փայ-

լել սիրոյ խմոյ առաւելապէս ի նմանել քեզ յայնմ յերրորդ աստուծանի խոնարհութեան՝ զոր յանչափս սիրեցեր յայսմ աշխարհի։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ա. Զմտաւ ած զգեբրազանցութիւն մարդկութեանն Քրիստոսի։ Արդարն նորա է կենդանի տաճար ամենասուրբ Երրորդութեան, ամենակատարեալ գործ ձեռին Հոգւոյն սրբոյ, սրբութիւն սրբոց ամենայն առաքինութեանց։ զոր առի շքեղազարդել՝ Հայրն Եղոյգ զամենակարողութիւն իւր, Որդին զնմանութիւն իւր, և Հոգին սուրբ զբարութիւն իւր։

Եթէ մարմինն այսպէս, որպիսի՞ ինչ Հոգի նորա իցէ։ Ցիշողականութիւն իւր է հայելի աստուածային առաքինութեանց, միտքն դէմ յանդիման տեսանէ զէութիւնն Աստուծոյ, և կամքն սիրէ զնա անչափական խմն գէ բագոյն սիրով։ Եւ ո՞չ սիրեսցէ զամենասուրբ մարդկութիւնն Յիսուսի այսպէս գեղեցիկ և անճառահրաշ։

Բ. Գեբրազանցութիւն Քրիստոսի ըստ աստուածութեանն։ Քրիստոս է Աստուած և մարդ. աստուածութիւն և մարդկութիւն ի Քրիստոս միացեալ ի մի անձն աստուածային։ Ի Քրիստոս կոչի Աստուած ի ցաւս, մահկանացու և ակար. ի Քրիստոս մարդն անուանի անչափ, ամենակալ և անսահման. նովաւ եղև խաղաղութիւն ընդ Աստուած և ընդ մարդ, որ զամենասուրբ զարիւն իւր հեղեալ փրկեաց զնա։ Ո՞ սքանչելի միութիւն,

ով փրկարար գործ սիրոյն Յիսուսի. և թէր ոչ սի-
բեսցուք զնա։

Գ. Սէր Յիսուսի առ մեզ։ Զմտաւ ած մ'է որ
սիրէն. Որդին Աստուծոյ։ Զո՞ սիրէ. զանարդ մե-
զաւոր։ Ո՞ղպէս սիրէ. անսահման սիրով։ Եւ այս
անսահման սէր Նորա առ մեզ՝ է ձրի, յարակայ,
և հաստատուն։ Եւ ոչ շատացեալ Յիսուս մեռա-
նել առ սէր մեր, կամեցաւ տալ մեզ բովանդակ
զանձն իւր 'ի խորհուրդ հաղորդութեան՝ եղեալ
մեզ կերակուր և ըմպելի, և կալով ընդ մեզ 'ի վերջս
ցաւոց, 'ի նեղութինս, և յաղքատութեան։ Ո՜ ա-
ռաւելութեան սիրոյն. և մարդիկ չկամիցին փո-
խանակել։

Ընթերցիր

Թովմ. Գեմբ. Գիրք Ա. Գլ. 7. 8։

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Միաբանելոյ զկաւս մեր ընդ կամացն Աստուծոյ.

Քանզի վարձան մարդոյ և նպաստակ
կրթութեանն է միութիւն հոգւոյն ընդ Աս-
տուծոյ, որոյ վասն ամենայն արարածք
սահմանեալ կարգեալ կան, և զի այս միու-
թիւն է 'ի կատարեալ սէրն Աստուծոյ, և
սէրն 'ի միաբանութեան կամաց մերոյ ընդ
Աստուծոյ, ապա պարտ է քաջ ճանաչել

զայս երկնային առաքինութիւն, և առ 'ի զօրանալ 'ի նոյն պարտ է 'ի միտ առնուլ զգերազանցութիւն նորա, զարդարութիւն նորա, զօգտութիւնս նորա։ Այս կամակցութիւն սահմանի՝ ընդաբոյս իմն յօժարամտութիւն հոգւոյ, որով զբ պատրաստ կայ 'ի գործել 'ի կրել զայն ամենայն՝ զոր կամի Աստուած զի նա գործեսցէ և կրեսցէ։

Ա. Գերազանցութիւն առաքինութեանս այսորիկ. Մեծ քան զամենայն սքանչելիս ամենակարողութեանն Աստուծոյ 'ի վերայ երկրի է անճառահրաշ միաւորութիւն բանին ընդ մարդկային բնութեան 'ի Յիսուս Քրիստոս. և 'ի Մարիամ կոյս մայր նորա 'ի վեր քան զբան մայրութիւն ընդ անարատ կուսութեան։ Յետ այսոցիկ երկուց սքանչելեաց իմաստութեան կարողութեան և սիրոյ՝ երրորդն է քան զայլն ամենայն հաճոյական Աստուծոյ, և մեզ փրկական, այսինքն միակցութիւն կամաց մերոց ընդ կամացն Աստուծոյ. զի այս է յաղթանակն այն մեծ զոր չնորհքն կանգնեն 'ի վերայ կամաց մարդոյ, առանց խափան արկանելոյ ազատութեան նորա։ Ի ձեռն այսր առաքինութեան հոգին լինի զրախտ Հոգւոյն սրբոյ, տաճար Աստուծոյ, և խորան սրբոյ Երրորդութեան, յորում հաճի բնակել և հանդչել։

Ա. Այս միակամութիւն է քան զայլն ամենայն կատարեալ և ամենահաճոյական պատարագ Աստուծոյ. քանզի մարդն այ-

սու յողջակէզ մատուցանէ նմա քան զա-
մենայն ինչ զսիրելին և զցանկալին իւր
զկամն։ Զի՝ի մերկանալն՝ի ճոխութեանց,
յանարգելն զպատիւս, ՝ի հրաժարելն՝ի
հաճոյից անձին, մատուցանէ Աստուծոյ
զիւր ինչսն. բայց՝ի պատարագել զկամն,
հանէ՝ի պատարագ զանձն իւր։ Յայլն ա-
մենայն պատարագէ Աստուծոյ որ ինչ Ա-
ստուծոյն է. բայց յայսմ նուիրէ նմա և ըն-
ծայէ զպատուն իւր ազատ, որում ինքն
իշխէ իրաւամբք։ Յառաջինսն տայ զայն
ինչ, զոր ոչ կարէ ժխտել. այլ յայսմիկ
մերկանայ յիշխանութենէն, զոր ինքն Ա-
ստուած տուեալ է նմա. զմին միայն զգե-
րազոյն բարի անձին, որով պանծայրն քան
զամենայն արարածս աշխարհի զերազան-
ցեալ, զայն մերկացեալ յանձնէ մատու-
ցանէ Աստուծոյ, և ինքն մնայ անարդազոյն
քան զամենայն արարածական էակս, զի
մնայ յոչնչութեան իւրում։ Ընտիր նուէր
մեծագին և ողջակէզ հաճոյական Աստու-
ծոյ, և փոխանակութիւն սքանչելի կամաց
մարդոյն ընդ Աստուծոյ կամացն։

Որ զբ յայս առաքինութիւն թեակոխէ,
կապի ընդ Փրկչին հաստատուն և ներքին
կապանօք ազգակցութեան. զոր հաւաստէ
ինքն Փրիստոս յասելն. «Որ առնէ զկամս
Հօր իմոյ որ յերկինս է, նա է իմ եղբայր
և քոյր և մայր»։ Մանաւանդ եթէ ոչ միայն
ազգական լինի, այլ և միաւորի ընդ նմա՝ի
մի մարմին, աստուածանայ, ըստ ասելոյ

սրբոյն Բեռնարդոսի. «Լինելն այսպէս՝ է աստուածանալ. քանզի կամել զոր ինչ կամի Աստուած, է լինել նման Աստուծոյ. ոչ կարել կամել զայլ ինչ քան զոր Աստուած կամի, այս իսկ է լինել այն ինչ որ ինչ է Աստուած»։ Որպէս 'ի հալել երկուց մոմոց 'ի միասին, այնպէս խառնին ընդ միմեանս՝ մինչև լինել այնուհետև մի ինչ և զանզուած երկոցուն. այսպէս և մարդն 'ի ձեռն այսր համակամութեան միանայ ընդ Աստուծոյ ամենայնիւ։ Ո՞չ ապաքէն զսոյն հաստատեն և բանք Քրիստոսի. «Որպէս դու Հայր յիս, և ես 'ի քեզ, զի և նոքա 'ի մեզ իցեն։ Ես զփառսն, զոր ետուր ինձ, ետու նոցա, զի իցեն մի, որպէս և մեք մի եմք. ես 'ի նոսա, և դու յիս. զի եղիցին կատարեալք 'ի մի։ Սիրեցի զնոսա, որպէս դու զիս սիրեցեր. զի սէրն՝ զոր սիրեցեր զիս՝ 'ի նոսա իցէ, և ես 'ի նոսա»։ Յո՛ր անպատում փառս բարձրացուցանէ զայր համակամութիւն։

Յաւել և զայն, զի այր համակամ հաղորդ լինի երկուց աստուածային կատարելութեանց, որք են լինել անմեղանչական և անսխալ. քանզի 'ի լնուլ զկամս Աստուծոյ, առաջնորդի յիմաստութենէն Աստուծոյ, ապա և մնայ անսխալ. և զորձէ ըստ կանոնի անբաւ սրբութեան, և այնպէս ոչ կարէ մեղանչել։ Եւ թէր չիցէ այս լինել որ ինչ է Աստուած։

Դարձեալ համակցութիւն կամայ մի-

բոց ընդ Աստուծոյ՝ է առաքինութիւն պատշաճեալ ամենայն ժամանակի և ամենայն ումեք. այսինքն պատշաճեալ առ ամենայն մարդ, և 'ի յաւիտեանս ժամանակաց կայ և մնայ։ Քանզի ազգաստութիւն, գձճութիւն հանդերձից, խստութիւն կենաց ոչ 'ի զէպ զան յամենայնի և առ ամենայն մարդիկ միօրինակ. և խոնարհութիւն, համբերութիւն, մեռուցումն, և հաւատք անգամ և յոյս՝ զաղարեն ընդ կենաց։ Բայց կատարումն կամացն Աստուծոյ կարևոր է յամենայն ժամանակի և առ ամենայն ազգս մարդկան. զի չիք ոք որ անկարող զգցի 'ի ժամանակս ինչ և 'ի տեղւոջ ուրեք հպատակելոյ կամացն Աստուծոյ։ Այլ և զի յետ միաբանելոյ յողջոյն իսկ 'ի կեանս իւր կամացն Աստուծոյ, և յերկինս իսկ այն լինիցի երանական գմայլումն նորա ցյաւիտեան։

Է և այս առաւելութիւն առաքինութեանս զի յինքն բովանդակէ զայլ ամենայն առաքինութիւնս. զի յայսմ փայլէ հաւատք մեր, որով հաւատամք ոչ ինչ իրաց պատահել առանց կամացն Աստուծոյ. ասէ ծաղէ ապաւինութիւն մեր առ Աստուած, յանձնեալ զմեզ 'ի զիրկս բարութեանն Աստուծոյ. ասէն 'ի գործ արկանեմք զհամբերութիւն, զխոնարհութիւն, զապաշխարութիւն, հպատակելով սովաւ վրէժխնդրութեան ձեռին աստուածային արդարութեան։ Է ևս գործ բարեպաշտութեան ապահով քան զայլն ամենայն, զի ոչ կարէ

'ի սմա լինել վտանգ ինչ թեղադրութեան և պատրանաց դիւին։ Եւ զինչ այլ հրաշափառագոյնս ասել մարթ իցէ 'ի ծանօթութիւն զերազանցութեան այսր լուսաւոր առաքինութեան։

Բ. Արդարակշռութիւն այսր առաքինութեան. Բանն ինքնին ուսուցանէ եթէ իրաւունք են ուղղոյն առաջնորդել յուղղութիւն անուղղայից, և անփոփոխին և անախտին'ի կարգ ածել զփոփոխականն և զախտաւոր։ Արդ կամքն Աստուծոյ է ուղիղ, անփոփոխ և սուրբ ինքնաբուն. իսկ կամք մեր անուղղայ, յողղողդ և թիւր. նա է անսահման իմաստուն և արդար, իսկ քոյդ կոյր և աներիաւ։ Նա է կանոն ուղղութեան վարուց, և անխաբ շաւիղ ճշմարտութեան, և քոյդ վրիպական և մեղսալից։ «Ապա իրաւունք են, զհետ բերէ սուրբն Օգոստինոս, զի կամք քո ուղղեսցին 'ի կամացն Աստուծոյ, և ոչ եթէ կամքն Աստուծոյ խոտորեսցին զկնի քոյոյ կամացդ. զի խոտորնակ է քոյդ, և նորայն կանոն է. ապա կացցէ կանոնն, և խոտորնակն ուղղեսցի'ի ձեռն կանոնին»։

Կամքն Աստուծոյ է իշխեցող, զի Հնազանդեալ է նմա ամենայն։ Ապա և ամենայն կամք մարդկան իրաւամբք հնազանդեսցին նմա։ Եւ զի էութիւնն Աստուծոյ է զերազոյն և առաջին, ապա այլքն ամենեքին պարտին լինել'ի ներքոյ ձեռին առաջնոյն. զարձեալ՝ զի կամքն Աստուծոյ է առաջին և զերազոյն, ապա և ամենայն կամք

ստեղծեալք 'ի նմանէ պարտին հպատակել կամաց նորա։ Այս և կամիլ առաւել զհետ գնալ կամաց անձին քան Աստուծոյն՝ է ապստամբութիւն։

Եւ կամքն Աստուծոյ ըստ բանին Աստուծոյ սուրբք են և արդարք. որպէս ճշմարտութիւն է զոր խօսի բանն, նոյնպէս և արդարութիւն է զոր հրամայէ կամքն։ Եթէ 'ի խօսել ճշմարտութեան բանին՝ պարտ է հաւատալ, ապա և 'ի հրամայել կամացն՝ պարտ է հնազանդիլ։ Մի թէ չիցէ՞ արժան որդւոյ, ծառայի, աշակերտի, մտադիւր զհետ գնալ կամաց հօր, վարժապետի, տեառն, և թագաւորի։

Գ. Օգտութիւնք նորա. Եւ յայսմ աշխարհի կրկին օգտութիւնք են նորա մեծամեծք. կատարեալ սրբութիւն, և անթերի երանութիւն։ Աներկբայելի է զի կատարելութիւն մեր է 'ի լցուցանել անթերի զկամս Աստուծոյ. զի այնչափ առաւել կատարեալ զոյցուք, որչափ առաւել նմանող լիցուք նմին։ Որչափ առաւել ոք համաձայնիցի կանոնին սրբութեան, այնչափ առաւել իցէ սուրբ. և կանոնս այս է կամքն Աստուծոյ, որում որչափ առաւել համաձայնեսցուք, այնչափ ևս 'ի սրբութիւն ժամանեսցուք։ Եւ այնչափ ևս լինիցիմք սուրբք, որչափ առաւել նմանեսցուք Յիսուսի, որ եկաց օրինակ կերպարանն սրբութեան։ Այդ սրբութիւն Քրիստոսի է կամակցութիւն մարդկային կամացն ընդ Աստուծոյն. ապա և

մեք այնչափ առաւել նմանեսցուք նմին, որչափ առաւել համակամք լիցուք ընդ աստուածային կամացն։ — Կատարելութիւն մեր է ևս 'ի սէրն. զի «Լրումն օրինացն սէր է»։ Արդ սէրն է 'ի կատարման կամացն Աստուծոյ. «Որ ունի զպատուիրանս իմ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս»։ Ապա և մեր սրբութիւն է 'ի կատարման կամացն Աստուծոյ. և որչափ ճշդութեամբ կատարեսցուք, այնչափ յաւելուցու սրբութիւն մեր, որ է առաջին օգտութիւն այսր ցանկալի առաքինութեան։

Երկրորդն է երանութիւն կատարեալ և յաշխարհի ասա։ Քանզի առ 'ի լինել երանելի յայսմ աշխարհի, պահանջի լինել զերծ յամենայն չարեաց. և որ կապի ընդ Աստուծոյ կամացն, չարք առ նա ոչ մերձենան, ոչ բարոյականք՝ որք են մեզքն, և ոչ բնականք՝ որք են աղէտք թշուառութեանց։ Զի մեղքն է ապստամբութիւն կամաց մերոց 'ի կամացն Աստուծոյ. արդ որ կամակցի ընդ Աստուծոյ, երբէք ոչ կարէ մեղանչել։ Իսկ այլք 'ի չարեաց համարին չարիք 'ի հակառակել կամաց մերոց. յորժամ յօժարիմք մեք ընդ այն, ոչ ևս է չար։ Զոյն հաւաստէ և Ոսկեբերան. «Չարեաց իմիք պատահեցար. եթէ կամիցիս զնոյն քեզ, ոչ ևս է այն չար. զոհացիր զԱստուծոյ, և չարն այն փոխեսցի քեզ 'ի բարին»։ Ապա եթէ և մեք կամիցիմք զայն ամենայն՝ որ հաճոյ իցէ Աստուծոյ, յամե-

նայն չարեաց լինելիքն զերծք. քանզի ա-
մենայն թշուառութիւնք աշխարհի անօրի-
նին 'ի կամացն Աստուծոյ. և զի կամք մեր
միացեալ է ընդ Աստուծոյ կամացն, ոչ ինչ
պատահեսցի երբէք հակառակ կամաց մե-
րոց. զի մեք ցանկամք այնոցիկ ամենե-
ցուն՝ որ հաճոյականք իցեն Աստուծոյ. Այս
են կամք Աստուծոյ։ Ահա դեղ դարմանոյ
ամենայն չարեաց, մանաւանդ թէ փոխար-
կիչ չարեաց 'ի բարիս։

Կատարեալ տիրապետութիւն և աղատ
իշխանութիւն բանին 'ի վերայ բաղձանաց
զգայութեան, է մեծագոյնն յերանութեանց՝
զոր երբէք իցէ հնար ժառանգել յաշխար-
հի։ Այրդ որ յանձն լինի կամացն Աստու-
ծոյ, իշխէ ամենայն յօժարութեանց իւրոց.
զի յամենայնի միտ եղեալ ակնարկութեանն
Աստուծոյ, ոչ մի ինչ փորձութիւն հետա-
մտութեան պատուոյ ազդէ 'ի սրտին. զի է
անխատիր ընդ անարգանս և ընդ պատիւս,
և ոչ նախանձու բերի ընդ ումեք. ընդ ան-
արգութիւն իւր ոչ ինչ տհաճութիւն 'ի սր-
տին զգենու. և անխատիր առ ամենայն ինչ՝
ոչ զճոխութիւն համարի ինչ և ոչ զաղքա-
տութիւն արհամարհ զրէ. նա՝ սիրէ և ատէ
զայնոսիկ, զորս սիրէ և ատէ Աստուած։
Զայն միայն զործէ՝ զոր կամի Աստուած,
և որպէս կամի նա՝ այնպէս զործէ, այս-
ինքն 'ի կատարեալ ուղղութեան, և միայն
առ 'ի լնուլ զկամս Աստուծոյ՝ զհետ զնա-
լով ակնարկութեան կամաց նորա։ Եւ է

այս արդարև երանութիւն կատարեալ'ի վերայ երկրի՝ որ կցորդ է ընդ մեծի սրբութեան, և է պտուղ ցանկալի առաքինութեանն համակամութեան ընդ կամացն Աստուծոյ։

ԲՆՆՈՒԹԻՒՆ

Ամփոփման մտաց և աղօթից.

Զհոգևորական սիրոյն՝ յոր պարապել ունիմք յառաջիկայ խոկմանս, պարտ է գիտել զերիս զայսոսիկ։ ա. Ճշմարիտ սէրն առաւել'ի գործս քան'ի բանս ցուցանի։ Սիրոյն փորձ է յընծայմանն'ի գործ։ Արարաք զսոյն յելանելն յերրորդ աստիճան խոնարհութեան։ բ. Կատարեալ սէրն է'ի հաղորդել բարւոյն փոխանակաւ միմեանց. և զայս արարաք'ի համակամութեան կամաց մերոց ընդ Աստուծոյն, և նուիրելով Աստուծոյ զլաւագոյն մասն մեր, լաւ ևս ասել՝ զանձինս մեր բովանդակ։ գ. Սէրն ցանկայ ունել յանդիման զսիրեցեալն, խօսակից ընդ նմա լինել և միանալ ընդ նմա. և զայս ստացուք ամփոփմամբ մտաց և աղօթիւք։ Արդ առցուք'ի քնին եթէ յայսոսիկ երկուս առաքինութիւնս կայցեմք'ի կշիռն։

Ա. Ամփոփումն մտաց է կրթութիւն ինն

մտաց և կամաց՝ 'ի սովորութիւն ածեալ, և է հաւատալ զԱստուած յանդիման առաջի իւր միշտ, և սիրել զնա։ Ա.ռ 'ի ժամանել յայս կատարեալ առաքինութիւն՝ երկու այսոքիկ կարևոր գործանք են. Պահպանութիւն լուութեան ընդ Առանձնութեան սենեկին։ Քննեա արդ թէ որչափ զգուշացեր իցես 'ի պահպանութիւն առաջնոյն, և որչափ յարատև յերկրորդին։ Անձն աստուածասէր յայնժամ միայն ելանէ 'ի սենեկէն յորժամ հարկն, հնազանդութիւնն և սէր՝ տան հրաման։ Եւ զու առնիցես այսպէս, թէ աստանդական յածիս զվայրոք և ընդ քաղաքն։ Այսպիսեացն տատանելոց մտօք դուն ուրեմն ընդառաջլինի Աստուած։

Իսկ 'ի խօսս պարտ է ընդ միտ ածել զժամանակն, զյեղանակն և զնիւթ խօսից։ Այսինքն խօսել յորժամ իցէ 'ի դէպ, և որ ինչ իցէ պատշաճ, և որպէս իցէ արժան։ Քննեա եթէ պահպանիցես զլուութեան ժամն. և 'ի խօսելն արածիցես զհողմն ընդվայրաբանութեամբ, ծաղրածութեամբ, և զրուցիւք։ Եթէ մինչ չև յառաջ բերեալ զխօսսն որոճայցես երկիցս, և մինչ չև քաջ կշռեալ և ողորկեալ չյօդիցես զբանսն, զհետ զնալով խրատու իմաստնոյն, որ ասէ. «Բայց զբերան քո բանիւ Աստուծոյ». և սրբոյն Բեռնարդոսի. «Ի խօսելն բանք քո լիցին սակաւք, ճշմարիտք և զտեալք»։ Դիր սանձ 'ի բերան քո, և խնդրեա 'ի Հոգւոյն սրբոյ, զի ազա զիցէ բերանոյդ զա-

նափակօք, և զի բացցի միայն 'ի ժամուն և 'ի պատշաճն։

Երկրորդ զարման առ 'ի ստանալ և պահել զամփոփումն մտաց՝ է յաճախ յիշատակ ներկայութեանն Աստուծոյ. և զայս պարտ է առնել ատէպ ընդ մէջ աւուրն զարթուցանելով զհաւատս թէ կամք առաջի Աստուծոյ՝ նա և ներքին խորհրդով մտաց և յօժարութեամբ սրտից մերոց. նոյնպէս և զսէրն, սիրելով զնա անձկանօք՝ որ կայ 'ի սրտի մերում. և զայս զարտ է առնել սաքական աղդու սուղ բանիւք։ Եւ այսոքիկ սլաքական բանք իցեն 'ի սրտէ, և ոչ միայն 'ի մտաց. և մի իցեն երկար և բազմախօսհուրդ, զի մի միտքն հեռասցի. և զի ուղղեսցին առ Աստուած, ոչ որպէս յերկինս, այլ որպէս մօտ առ մեզ կացեալ։ Քննեա արդ եթէ սովորեալ իցես յայս սուրբ ընտանութիւն ընդ Աստուծոյ. և Ջան զիր կալոյ 'ի սմին, վասն զի է այս սքանչելի իմն յեղանակ առ 'ի կեալ յԱստուած և բորբոքիլ 'ի սէր նորա։

Բ. Աղօթքն, եթէ մտաւորք իցեն և թէ 'ի բան, զարթուցիչք են և տածիչք աստուածային սիրոյն և բորբոքիչք։ Այլ զի լինիցին օգտութեամբ, միտ զիր և քննեա, ա. Եթէ 'ի մտանելն 'ի մտաւորական աղօթս՝ առնիցես զպարտաւորատչաճ պատրաստութիւն։ բ. Եթէ առնիցես առանց պակասեցուցանելոյ 'ի ժամանակէն, յարդանօք, վայելուչ զրիւք մարմնոյդ, և եռանդեամբ

հոգւոյդ։ գ. Ծախիցես առաւել ժամանակ
'ի խոկալ քան 'ի կամել։ դ. Ուխտք մոռացդ
իցեն միշտ մասնականք և գործնականք։
և. Յաւարտել խոկմանն առնիցես համա-
ռօտ իմն քննութիւն՝ թէ որպէս արարեր
զխոկումն։ Քաջ մնա դիր 'ի սոսին և ուղ-
դեա զքեզ՝ եթէ երբէք պակասիցիս յիմիք.
զի մնասն որ աստի ծագէ՝ լինիցի մեծ։

Իսկ զաղօթից որ 'ի բան, ևս առաւել
դժամերգութեանց, քննեա ա. Եթէ աղօ-
թիցես 'ի պատշաճ վայրս։ բ. Ի դէպ ժա-
մու։ գ. Ի վայելուչ դիրս։ դ. Ի ձայն
յստակ։ և. Մտադիր։ զ. Ըստ սահմանելոյ
կարգին։ Եւ յորում զտանես զքեզ պակա-
սեալ՝ ուղղեա. զի ասէ Աստուած. «Անի-
ծեալ որ գործէ զգործ Տեառն հեղգու-
թեամբ»։

Եթէ հսկեսցես 'ի ճիշդ պահպանու-
թիւն այսոցիկ, ժամանեսցես 'ի ներքին միու-
թիւն ընդ Աստուծոյ, և զորովով սիրոյ կա-
պեսցիս ընդ նմա, յոր առ բորբոքիլ ևս քան
զեա՝ առաջիկայս խոկումն մեծապէս ձեռն
տայցէ, որոյ մասունք են սոքին։ Պարտ է
մեզ սիրել զԱստուած, ա. Վասն սիրոյն՝ ո-
րով ինքն սիրէ զմեզ։ բ. Վասն յեղանակի
սիրոյն՝ որով սիրէ զմեզ։ գ. Վասն կատա-
րելութեանցն իւրոց անչափութեան։

ԽՈԿՈՒՄՆ Գ.

ՀԱՍԻՐՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Մասն Ա.

Պարտ է մեզ սիրել զԱստուած վասն սիրոյն՝ որով սիրէ նա զմեզ։ Երեքին նշանք ճշմարիտ սիրոյ, որովք զատանի յանարժան սիրոյ, են 'ի սէրն Աստուծոյ առ մեզ զերօրինակ. զորժէ մեծամեծս, առատամիտ հասարակորդ առնէ զսիրելին ամենայն բարեաց իւրոց, կայ միշտ առ սիրելւոյն։

Ա. Գործէ մեծամեծս Աստուած առ սէր քո։ Քանզի ընտրեալ կալաւ զքեզ 'ի միջոյ անթիւ էակաց, և ստեղծ զքեզ յոչնչէ 'ի պատկեր իւր. և բարեհաճեցաւ տալ քեզ զերապանծ կարողութիւնս հոգւոյ, ազնիւ զործարանս զգայութեան, համաչափութիւն անդամոց մարմնոյդ, աքանչելի զարդս բնութեան։ Ի սէր քո ունի դաշխարհ 'ի կայի, բազմացուցանէ զկենդանիս, բուսուցանէ զտունկս, կանաչագեղէ զդաշտս, և լիացուցանէ զպարտէզս պտղովք։ Լուսաւորէ զքեզ արեգակամբ, սնուցանէ զքեզ կերակրովք, օդով և հրով և ջրով, և 'ի հոգոյ հանէ քեզ զամենայն պէտս քո, և խնամէ զկեանս քո։ Ցաւել 'ի սոսին և զմեծա-

մեծան 'ի գործոց, զփրկութիւն մարդկան, և զառաքումն Հոգւոյն սրբոյ, և զորդեղրելն զքեզ յորդիս Աստուծոյ և յեղբայր Քրիստոսի և 'ի ժառանգ երկնից. զշնորհսն մկրտութեան, բարի կրթութեան, կոչման 'ի հաւատս, 'ի քահանայութիւն և 'ի կրօնաւորութիւն։ Եւ չիցեն այսոքիկ մեծամեծ գործք սիրոյն Աստուծոյ առ քեզ։

Բ. Շնորհեաց քեզ Աստուած զամենայն բարութիւնս իւր, նա և զանձն իսկ զլխովին. քանզի ետ 'ի սէտս քո զամենայն բարիս մարմնաւորս, (ած 'ի համար մի առ մի.) զհրեշտակս քեզ 'ի պահապան, զշնորհս 'ի բարեգործել, զերկինս 'ի վարձ, յուսուցիչ քեզ զՅիսուս, յօրինակ քեզ զկեանս նորա, զհոգի և զմարմին նորա 'ի զին փրկանաց քոց, և զմարմին և զարիւն նորա 'ի սնունդ հոգւոյդ, զզեղումն սիրոյ նորա առատացոյց քեզ 'ի սուրբ հաղորդութեան. այնպէս զի անսահման իմաստութեամբ իւրով և ամենակալ զօրութեամբ իւրով ոչ կարէր առնել քեզ առաւելագոյն ինչ և լաւագոյն։

Այլ և գործեաց այլ ևս ինչ մեծ։ Քանզի սիրոյ երկու մասունք են, սէր բարերարութեան և սէր երախտագիտութեան. զառաջինն Աստուած եցոյց մեզ անչափութեամբ, և 'ի սէր իւր ընկղմեաց զմեզ. եթէ ոչ յաւելոյր և զերկրորդ մասն սիրոյն՝ 'ի սէրս յայս որ 'ի մէջ մեր և Աստուծոյ, յիրաւի վայելէաք 'ի սէրն Աստուծոյ, այլ

մնայր 'ի մեզ ծառայական իմն նուաստութիւն և թերութիւն սիրոյ 'ի մէնջ առ Աստուած, մինչդեռ Աստուծոյն առ մեզ էր անչափ և ամենակատարեալ։ Արդ զի և յայսմ գոցուք կատարեալք, և ամենայնիւ հաւասար ընդ Աստուծոյ 'ի սէրն լցեալ փայլեսցուք, խորհուրդս անճառս և յայսմ խորհեցար Աստուած, և գործեաց գարձեալ մեծամեծս, և բարձրացոյց զմեզ 'ի հաւասարութիւն ընդ իւր, և կոչեաց զմեզ բարեկամս և ոչ ծառայս։ Վասն այնորիկ յոր ինչ ինքն վաստակեցաւ վասն մեր առաւելութեամբ սիրոյն առ 'ի փրկել զմեզ 'ի զամակնքեալ մահուանէ, ետ զամենառս և մեզ՝ թողեալ զմեզ յազատ կամս մեր, զի վաստակեսցուք և մեք 'ի սէր նորա, ըստ առաւելութեան սիրոյ մերոյ առ նա։ Զի յընկղմել մեր 'ի սէր բարերարութեան նորա, և ինքն Աստուած ընկղմեսցի 'ի սէր երախտագիտութեան մերոյ, որով իրաւամբք լինիցիմք նմանք Աստուծոյ. «Զի նոքիմբք աստուածեղէն բնութեանն լինիցիմք հաղորդակիցք»։ Եւ ոչ կարասցէ հասանել մեծութեան գործոց սիրոյն Աստուծոյ. յոր բարձրութիւն առեալ եհան զբնութեան մերոյ զնուաստութիւն. կարիցեմք ինչ պարգել բանիւք, և ծայրիւ մատին ճաշակել յանհասութենէ խորհրդոց նորա, և ոչ նուազեալ անկանել։ Արդ յապուշ լեալ և ապիրերան երկրպագեսցուք անճառելեաց գործոց մեծութեան սիրոյն Աստուծոյ։

Գ.· Յայտնէ դարձեալ Աստուած զսէր իւր բնակելով միշտ առ քեզ 'ի սրտի քում, էութեամբ իւրով ըստ Առաքելոյն. «Նովաւ կեմք, շարժիմք և եմք». առաւել քան յօ-ղոց՝ յԱստուծոյ պարապակեալ կամք 'ի ներքուստ և արտաքուստ։ Կարողութեամբ իւրով, քանզի կենդանացուցիչ քո է. զի նովաւ սնանիս, իմանաս, լսես, տեսա-նես, խորհիս, յիշես, խօսիս. զի ինքն յա-մենայնի գործակից է քեզ։ Նախախնա-մութեամբ իւրով, զի իբրև զիւր որդի տա-նի զքեզ 'ի զիրկս, պաշտպանէ, խնամէ. խափանէ զչարիս, և առաջնորդէ քեզ 'ի բարիս, առնելով ընդ փորձութեան և զելան։ Համառօտ ասել. Աստուած 'ի հոգւոջ քում և 'ի մարմնիդ բնակէ միշտ իբրև 'ի տաճա-րի առ 'ի ցոյց սիրոյ իւրոյ. քանզի ոչ կա-րէ երբէք բաժանել 'ի սիրելւոյն։

Եւ արդ բանն ինքնին ուսուցանէ քեզ առնել զհատուցումն հաւասար. ապա պար-տիս և դու առնել ինչ մեծ վասն Աստու-ծոյ. անդադրդդ 'ի փորձ մատուցեալ այնր ամենայնի՝ զոր ուխտեցեր յայսոսիկ ա-ւուրս խոկման։ Եւ պարտիս մատուցանել նմա բովանդակ զքեզ ինքն և զամենայն զքոյսդ, յորոց զլխաւորագոյնք են պատիւ քո, անդորրութիւն, առողջութիւն և կեանք, կացեալ անվրդով յերրորդ աստիճանի խո-նարհութեան։ Եւ դու պարտիս կալ միշտ առաջի Աստուծոյ և միացեալ ընդ Աստուած ամփոփմամբ մտացդ, մտադիր և եռան-

դագին աղօթիւք, և 'ի ներկայութեան Աստուծոյ սովորեցուցեալ զանձն քո։ Ո՛վ սերովբէք, արկէ՛ք և յիմ սիրտ կայծ իմն զերկնաւոր սիրոյն, որ այնպէս քաղցրացոյց և հեշտին զործեաց սրբոց զկատարումն երից այսոցիկ մասանց։

Մասն Բ.

Պարտ է քեզ սիրել զԱստուած այնպէս, որպէս նա սիրէ զքեզ։ Դա սիրէ զքեզ 'ի սէր յաւիտենական. զի սկսաւ սիրել զքեզ 'ի յաւիտենից. «Ի սէր յաւիտենական սիրեցի զքեզ, վասն այնորիկ ձգեցի զքեզ 'ի զթութիւն». թէպէտ և տեսանէր դապերախտութիւնս քո և զմեզս։

Սիրէ զքեզ ձրի, և ոչ 'ի փոխարէն քումդ երախտեաց, կամ 'ի հատուցումն վաստակոցդ, ըստ բանից սրբոյն Յովհաննու. «Յայսմ է սէրն, ոչ զի մեք սիրեցաք զԱստուած», և արժանի եղաք սիրոյ նորա, «Այլ զի նա սիրեաց զմեզ»։ Եւ մեծ ևս այն է, զի «Մինչդեռ տակաւին թշնամիք էաք»։ Եւ այս թուիցի՞ քեզ փոքր։

Սիրէ զքեզ 'ի սէր անչափ. ըստ սիրոյն՝ որով սիրէ զանձն իւր, 'ի սէր կատարեալ, այնպիսի սիրով քան զոր մեծագոյն սէր չիք ուրեք երբէք. սիրէ 'ի սպառ։ Եւ 'ի սէր զորովական. բառնալով զքեզ 'ի յոյս իւր, և 'ի զիրկս իւր, որպէս դայեակ որ զմանուկ իւր զզուիցէ, և պահելով զքեզ իբ-

ին զբիբ աչաց իւրոց, պատրաստ՝ի բարերարել քեզ։ Լուար զոր ասէ. Ի բարերարել քեզ։ Իբրև թէ միայն իցես յաչխարհի. և միայնակ նպատակ անսահման սիրոյ իւրոյ։

Ա՛պա պարտ է և ինձ, ով սէր աստուածային, զի և ես նախամեծար արարիցս զքեզ՝ առ ոտն հարեալ զայլ ամենայն սէր։ Սիրեցից ձրի, ոչ առ երկիւղի պատժոյ, և կամ՝ յուսով վարձուց, այլ միայն վասն քո։ Ի սերտ սրտէ սիրեցից, և ոչ բանիւք և լեզուօք, այլ արդեամբք և ճշմարտութեամբ։ Հաստատուն ըղձիւք, զոչելով ընդ առաքելոյն. «Ո՞վ մեկնեսցէ զիս՝ի սիրոյ քումմէ. թէ անձկութիւն, թէ վիշտ, թէ հալածանք, թէ սուր... և ոչ մի ինչ. զի եմ՝ աներկբայ զի ոչ մահ, ոչ կեանք, ոչ հրեշտակք, ոչ իշխանութիւնք, և ոչ այլ ինչ արարած կարասցեն մեկնել զիս՝ի սիրոյ Աստուծոյն իմոյ»։

Մասն Գ.

Աստուած արժանի է սիրոյ վասն անհուն կատարելութեանց իւրոց. Անչափ է սիրելի. և որ միանգամ՝ սկսանի սիրել զԱստուած, անդէն փոխի յԱստուած, և առ սիրով նորա զայլն ամենայն համարի իբրև զչամանդաղ առ տիեզերօքս։ Գեղեցկութիւն նորա՝ի վեր է քան զմիտս և զբան. զի և երանելիքն յերկինս վայելել վայելեն՝ի սէրն Աստուծոյ զմայլեալ ընդ գեղեցկու-

թիւն նորա, այլ ոչ կարեն սահմանել մեծք դչափ զեղոյն։ Եւ իցէ՞ ինչ չափ բարութեան նորա, մինչև խնարհեալ 'ի յետին նուաստութիւն հանել զմեզ զթշնամիս իւր յաստուածական պատիւ և 'ի փառս։ Նոյնպէս և զարբութիւն և զմնաստութիւն նորա ո՞վ կարէ առնուլ 'ի միտ։ Եւ կարողութիւն նորա անբաւ. զի զոր կամի, 'ի կամել անդ կատարէ. և անհնարինքն հնարաւորք են նմա։

Է՛ ևս ճոխ. զի ամենայն մեծութիւնք աշխարհի իբրև հատ մի աւազոյ են առաջի հարստութեանն Աստուծոյ։ Եւ այնպէս նախատես և խնամակալ, «Զի իբրև զմէտ մի 'ի նժարից կշռոյ է ամենայն աշխարհս առաջի նորա, և իբրև զկաթ մի առաւօտի ցօղոյ»։ Եւ այնպէս յարակայ, յորում «Զիք փոփոխումն և կամ շրջելոյ ստուեր»։ Եւ ի՞ցէ՞ չափ զօրութեան նորա։ Եւ ո՞ կարասցէ պատմել զզօրութիւնս նորա, և զմեծութիւնս զործոց նորա։ Եւ սա ինքն Աստուած ամենազօր զմեզ զոչինչքս 'ի սէր իւր հրաւիրէ, և մեք դանդաղիցիմք սիրել զնա յամենայն սրտէ։ Ա՜հ. արա՛ սկիզբն սիրելոյ զնա, և առնուցուս դչափ անչափ քաղցրութեան նորա. սիրեա՛ զնա. բայց սէր քո իցէ ճշմարիտ, ջերմ և արդեամբք. այնպէս զի վախճան կրթութեանս լինիցի սկիզբն կատարելագունի կենաց, օր ըստ օրէ մինչև ցօր մահուն անդուլ առաւել դերազանցեսցէ 'ի կատարելութեան։

ԻՂՁԲ

Ո՛վ սերովբէք, վկայք ճշմարտութեան, յոր սահման եհաս անդիտութիւն և յողողութիւն մարդկան, մինչև պիտոյ լինել ազգոյ խթանի 'ի զարթուցանել զնա 'ի սէր գերազոյն բարւոյն։ Ո՛վ անձն յիմարեալ, Աստուած 'ի սէր քո, վասն քո մեծամեծս գործեաց. ճոխացոյց զքեզ անթիւ բարեբարութեամբք. մեծամեծ նպաստիւք, և միշտ մատ առ քեզ կայ 'ի սիրել, 'ի խնամել և յառաջնորդել քեզ, և դու ոչ ինչ փոյթ յանձին ունիս 'ի փոխարինել սիրոյ նորա։

Անձն եղկելի, Աստուած է որ սիրէ զքեզ... Աստուած. զքեզ... Ամենազօրն. զմարդ ոչինչ։ Եւ սիրէ 'ի սէր յաւիտենական, անչափ, ճրի, զորովական. և դու զնա չկամիցիս սիրել։ Ապերախտ դու, սիրես զայր՝ որ քեզ կամիցի բարիս. նա աւանիկ եթէ անասնիկ քո քծնիցի զքև, սիրես զնա։ Եւ Աստուած, որ զքեզ ընդզրկէ, պարգևաբաշխ լինի քեզ, խնամէ, զարդարէ, պահպանէ, յանչափս զքեզ սիրէ, չկամարիցիս զնա արժանի քումդ սիրոյ։ Եւ իցէ՞ հնար. և կայցես այսպէս ցուրտ, խիստ, անլուր, ատեցող փառաց նորա, վայրաքարշ։ Եւ իբր իցէ հնար քեզ աչօք բացօք զլոյսն խաւար ասել և զխաւարն լոյս։ Որպէ՞ս սէ՞ փոխանակութիւն սիրոյ անհաս մտաց

դնէ Քրիստոս 'ի մէջ իւր, Հօր, և քո. «Ես 'ի նոսա, ասէ առ Հայր, և դու յիս, և նոքա 'ի մեզ». յոր սէր, և յոր բարձրութիւն առեալ հանէ զքեզ. և դու անզգայեալ ոչ ինչ հոգաս զսիրոյն Աստուծոյ. և թողեալ զԱստուած, համարիս ինչ զսէր աշխարհի։

Ո՛վ Աստուած ողորմութեանց ճանաչեմ զապերախտութիւն իմ։ Ամաչեմ և ամօթապարտ գերկիր նշմարեմ առաջի քո։ Ա՜հ. զսէրն իմ ոչ սիրեցի. Աստուած, որ սիրէն զիս անչափապէս, և որ վասն անչափ բարութեանն իւրոյ և կատարելութեան յանչափս է սիրելի, ոչ ընկալաւ յինէն զսէր փոխադարձ. այլ ընդ սիրոյ թշնամանս։ Նա ինձ բարերար, ես նմին ապախտաւոր. նա սիրէ, ես ատեամ։ Բայց արդ լացից դառնապէս զիստութիւն սրտիս։ Յաղթեցցեր, ո՛վ սէր անչափ, յաղթեցեր. ձգեցեր առ քեզ զսալացեալ սիրտ իմ, հալիմ արդ իբրև զմոմ 'ի հուր սիրոյ քո. և բորբոքեալ ծախիմ ընկղմեալ 'ի սէր քո։ Յաղթեցեր, ո՛վ հուր սիրոյ, յաղթեցեր. ահա զսիրտ իմ ընդ սրտի Քրիստոսի քո 'ի մի հուր վառեալ բորբոքեալ տեսանեմ, Աստուած իմ. յորմէ խորոց թշուառութեանց յոր բարձրութիւն երանութեան առեալ հանես զիս, Աստուած իմ, ըստ ոչ արժանեաց իմոց։ Ո՜ բերկրութիւն անպատում, որով ընդ 'ի հանել զքեզ 'ի նուէր զսիրտ իմ։ Զքեզ միայն սիրեցից յայսմ հետէ. և զի անազան սկսայ սիրել, առաւելութեամբ սիրե-

լցուցից զթերին, և յայսմ հետէ բորբոքեցայց 'ի սէր քո անչէջ. զի մարմին և արիւն ոչ յայտնեցին ինձ զսէր քո, այլ դու, Հայր իմ, որ յերկինս ես։

Սիրեմ զքեզ, սիրեմ, ո՞վ սէր, ո՞վ բարութիւն, ո՞վ զեղեցկութիւն անչափ։ Սիրեմ զքեզ, ոչ ակնկալութեամբ վարձուց, և ոչ յերկիւղէ պատուհասին, այլ վասն քո, զի ես բարութիւն անհուն, և զի արժանի առնես զիս քումդ սիրոյ։ Եւ սիրեմ զքեզ յամենայն անձնէ, յամենայն սրտէ, յամենայն զօրութենէ և յամենայն մտաց իմոց, 'ի վեր քան զամենայն. և առ սիրով քով համարիմ կղկղանս զամենայն հաճոյս, զամենայն ճոխութիւնս և զամենայն փառս և զպատիւ և զկեանս իսկ զլիսովին։ Ցա՜ռայեցից քեզ յոր վայր և կամիցիս, յոր պաշտօն, յոր աստիճան, յոր կոչումն և կոչեսցես։ Նմանող եղէց Ցիսուսի յերրորդ աստիճանի խոնարհութեան, նման նմա եղէց ամենայնիւ, անփոփոխ 'ի սէր, անդարձ, ամենայն զօրութեամբ մտաց և կամաց, թեակոխեալ միշտ առ մեծ ևս կատարելութիւնս։ Ցուր հաստատութիւն ուխտից սրտի իմոյ. զի եթէ ցայս վայր կեցի 'ի մեզս, զոնեա մեռայց 'ի սէր։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ

Ե. Պարտ է մեզ սիրել զԱստուած վասն սիրոյն՝ որով նա սիրէ զմեզ։ Ի սէրն Աստուծոյ առ մեզ են երեքին նշանք ճշմարիտ սիրոյ գերօրինակք։ Զի գործէ մեծամեծս. Աստուած գործեաց վասն քո, ստեղծ զքեզ յոչնչէ, եւ զերիս սքանչելի կարողութիւնս հոգւոյդ, զզգայարանս անթերի մարմնոյդ, և անձինդ ողջոյն բնական հանգամանս ազնիւս։ Պահէ զաշխարհս վասն քո, ամենայն բարութեամբ ընու զնոյն վասն քո։ Դարձեալ՝ զի զքեզ փրկեաց, սրբեաց, յորդեգիրս ընկալաւ, լցոյց շնորհօք, և պատրաստեաց քեզ զդրախտն։

Ճշմարիտ սիրող զսիրելին հասարակորդ առնէ ամենայն բարեաց իւրոց։ Աստուած արար զսոյն գերազանց իմն օրինակաւ, զի ոչ շատ համարեալ զարարչագործութիւն անթիւ արարածոց վասն քո, եւ քեզ զԱստուածորդին զի փրկեսցէ զքեզ, և մանաւանդ 'ի սուրբ հաղորդութեան արար զնա ընդ քեզ 'ի մի մարմին, տալով զնա քեզ 'ի կերակուր. և 'ի տանջանս քեզ հաղորդ՝ մատնեալ 'ի ճաշակ անարժանից ատելեաց իւրոց բազմաց։

Սիրողն կայ միշտ առ սիրելւոյն։ Աստուած երբեք չթողու զքեզ միայնակ. կայ առ քեզ էութեամբ, կարողութեամբ և նախախնամութեամբ իւրով. և դու չկամիցիս փոխարինել անչափ սիրոյ նորա. չկամիցիս առնել մեծամեծս վասն նո-

բա. ջառնիցեմ զնա հաղորդ ամենայն բարեաց քոց, մանաւանդ թէ ջմատուցանիցեմ բովանդակ զանձնդ նմա. ջցանկանայցեմ կալոյ միշտ առ նմա:

Բ. Պարտ է քեզ սիրել զԱստուած այնպէս որ պէս նա սիրեաց զքեզ: Նա սիրէ զքեզ 'ի յաւիտենից, ձրի, առանց ինչ քոյոց արժանեաց, անհուն սիրով և անչափ գորովով:

Գ. Պարտ է սիրել զԱստուած վասն անչափ կատարելութեանց իւրոց: Յանչափս է սիրելի և գեղեցիկ և բարի, մինչև զն որ բոլորքի 'ի սէր Աստուծոյ՝ փոխի յԱստուած. և գու տակաւին գանդաղիցես միանալ յամենայնի ընդ Աստուծոյ, և պատարագել ողջակէզ 'ի սէր նորա:

Ընթերցիր

Թովմ. Գեմբ. Գիրք Դ. Գլ. 34:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/7 1922
Ա. ՍՅՈՒ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՅԱՆԿ

Հրաւէր 'ի սուրբ առանձնութիւն . . . 1

ՅՕԳՈՒԱԾՔ

Ա. Պատճառք խրախուսիչք 'ի մտադիր փոյթ հրահանգաց կրթութեան 2
Բ. Ազդումն նեբքին պատրաստութեան հոգւոյ 6
Գ. Պատրաստութիւն արտաքին իրաց կարևորաց 'ի կրթութիւն 9
Դ. Ազդմունք կարևորք 'ի կրթութեան պահու 10
Ե. Ընթացք կրթութեան 14

ՕՐ ԱՌԱՋԻՆ

ԽՈԿՈՒՄՆ Ա. Վախճան մարդոյ 21
ԻՂՁՔ 28
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ . . . 30
ՊԱՐԱՊՈՒՄՆ 'ի խոկումն առաջին, որ կոչի Հիմն 32
ԽՈԿՈՒՄՆ Բ. Վախճան առն ուխտիւք կապելոյ 47
ԻՂՁՔ 55
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ . . . 58
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ անխտիր համակամութեան տեղւոյ, պաշտաման,

ասոիՀանի և տկարութեան և
առողջութեան 59
ՔՆՆՈՒԹԻՒՆ խոչից խափանչաց անխախիտ հա-
մակամութեան 69
ԽՈԿՈՒՄՆ Գ. Երկրորդումն երկուց առաջ-
նոց խոկմանց 72
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 79

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

ԽՈԿՈՒՄՆ Ա. Ի վերայ պատժոյ մեղացն հրեշ-
տակաց և Ադամայ. . . . 82
ԻՂՁՔ 91
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 96
ՊԱՐԱՊՈՒՄՆ ցաւ և գարշումն 'ի մեղաց . . 98
ԽՈԿՈՒՄՆ Բ. Յաղագս մեղաց անձին ա-
ռանձին 115
ԻՂՁՔ 122
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 124
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ 'Ի վերայ կրկին արմա-
տոց մեղաց 125
ՔՆՆՈՒԹԻՒՆ թերութեանց որ յամբարտա-
ւանութենէ և 'Ի հաճոյից
մարմնոյ 133
ԽՈԿՈՒՄՆ Գ. Յաղագս դժոխոց 137
ԻՂՁՔ 146
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 150

ՕՐ ԵՐՐՈՐԴ

ԽՈԿՈՒՄՆ Ա. Մահ. 152
ԻՂՁՔ 158
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 161
ՊԱՐԱՊՈՒՄՆ 'Ի Ծանօթութիւն անձին . . 162
ԽՈԿՈՒՄՆ Բ. Առանձնական դատաստան . 174

ԻՂՁՔ 180
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 182
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ 'Ի վերայ պատրաստու-
թեան մահուան 183
Ա. Յեղանակ ընդունելոյ քրիստոնէաբար
զառաջին լուր մահուն առ դուրս
հասելոյ 184
Բ. Փնտուլթիւն 'Ի վերայ անցեալ և այժ-
մեան վիճակի կենաց հոգւոյն . . . 186
Գ. Հոգևորական ընդունելութիւն վերջին
թոշակին և օծման 189
Դ. Իրաք հոգւոյն զկնի մահուան . . . 191
ԽՈԿՈՒՄՆ Գ. Ի վերայ անառակ որդւոյն . 193
ԻՂՁՔ 198
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 201

ՕՐ ՁՈՐՐՈՐԴ

ԽՈԿՈՒՄՆ Ա. Թագաւորութիւն Քրիստոսի 204
ԻՂՁՔ 212
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 214
ՊԱՐԱՊՈՒՄՆ յաղագս նմանող լինելոյ Քրիս-
տոսի 216
ԽՈԿՈՒՄՆ Բ. Յաղագս մարդեղութեան . 226
ԻՂՁՔ 229
,, ... 232
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 233
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ 'Ի վերայ խոնարհութեան. 234
ՓՆՆՈՒԹԻՒՆ 'Ի վերայ նորին առաքինութեան . 242
ԽՈԿՈՒՄՆ Գ. Ի ծնունդ Տեառն մերոյ Յի-
սուսի 248
ԻՂՁՔ 251
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 254

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԽՈԿՈՒՄՆ Ա. Փախուստ Յիսուսի յԵգիպտոս 255
ԻՂՁՔ 260
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 262
ՊԱՐԱՊՈՒՄՆ պատարաստութիւն առ Ձայն կոչմանն 263
ԽՈԿՈՒՄՆ Բ. Ի վերայ առանձին կենաց Տեառըն մերոյ Յիսուսի . . . 276
ԻՂՁՔ 282
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 283
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ 'ի վերայ մեռուցման . 284
ԳՆՆՈՒԹԻՒՆ 'ի վերայ առաքինութեան մեռուցման 293
ԽՈԿՈՒՄՆ Գ. Ի վերայ մնալոյն Յիսուսի 'ի տաճարն. 297
ԻՂՁՔ 304
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 305

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

ԽՈԿՈՒՄՆ Ա. Կրկին դրօշք Քրիստոսի և Աբուսեռկին 307
ԻՂՁՔ 315
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 317
ՊԱՐԱՊՈՒՄՆ Թէ զինչ իցէ Նպատակ կրթութեան աւուրս 319
ԽՈԿՈՒՄՆ Բ. Ի վերայ երից կարգաց մարդկան 332
ԻՂՁՔ 337
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 339
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ 'ի վերայ երից սասիճանաց խոնարհութեան . . . 340

ՑԵՂԱՆԱԿ ԸՆԹԵՐՈՒԹԵԱՆ կոչման 348
Ա. ԿՐԹՈՒԹԻՒՆ կամաց, որ է երկրորդ ժամանակ 349
Բ. ՁԿՐԹՈՒԹԵՆԷ մասց, որ է երրորդ ժամանակ 350
Գ. ԿԱՏԱՐՈՒՄՆ ԸՆԹԵՐՈՒԹԵԱՆ 351
Դ. ԿԱՆՈՆ ԸՆԹԵՐՈՒԹԵԱՆ հոգւոյ յօրմէ առաջնորդիմքն 353
ԽՈԿՈՒՄՆ Գ. Առաւելութիւնքն երրորդ ասիճանի խոնարհութեան . 355
ԻՂՁՔ 358
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 359

ՕՐ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԽՈԿՈՒՄՆ Ա. Զոր ինչ կրեաց Յիսուս ընդ գէմ պատուոյն. և որպէս տարաւ այնոցիկ 'ի խրատ մեզ. 361
ԻՂՁՔ 367
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 369
ՊԱՐԱՊՈՒՄՆ 'ի պատուոյն կրթութեան այսր աւուր 370
ԽՈԿՈՒՄՆ Բ. Յաղագս կրեալոցն Քրիստոսի յանձին իւրում, եթէ որպէս տարաւ յօրինակ մեզ . . . 381
ԻՂՁՔ 388
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 391
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ զերանութենէ և զփառաց հոգւոյ անարգելոյ և վչտագնելոյ. 392
ՓՆՆՈՒԹԻՒՆ 'ի վերայ համբերութեան և հնազանդութեան 396
ԽՈԿՈՒՄՆ Գ. Ի վերայ մահուան Քրիստոսի 'ի խաչին. 400
ԻՂՁՔ 406
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 408

ՕՐ ՈՒԹԵՐՈՐԴ

ԽՈԿՈՒՄՆ Ա. Յարութիւն Քրիստոսի . . . 409
ԻՂՁՔ 415
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 416
ՊԱՐԱՊՈՒՄՆ վասն վերջին աւուր կրթութեան. 418
ԽՈԿՈՒՄՆ Բ. Ի վերայ սիրոյն Քրիստոսի . 428
ԻՂՁՔ 433
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 436
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ միաբանելոյ զկամս մեր ընդ կամսցն Աստուծոյ . . 437
ՔՆՆՈՒԹԻՒՆ ամփոփման մտաց և ալօթից . 446
ԽՈԿՈՒՄՆ Գ. Զսիրոյն Աստուծոյ . . . 450
ԻՂՁՔ 457
ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՍՈՒՂ. . . . 460

3209

3111